

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

6-58

Ա. Ա. ԵՍԱՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԴԱՍԸՆԹԱՑ

1971

Պրոֆ. Ա. Ա. ԵՍԱՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԴԱՍՐՆԹԱՑ

ԱՌՆՁԻՆ ՄԱՍ

~~2/06~~

Խմբագիր՝ Ս. Ա. ՕՍԻՊՅԱՆ

6-6-2  
39-71

Проф. Е С А Я П  
АГАСИ АРШАКОВИЧ

КУРС МЕЖДУНАРОДНОГО ПРАВА  
Часть I  
(На армянском языке)

Издательство Ереванского университета  
Ереван—1971

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Միջազգային իրավունքի առանձնահատկությունը նախ և առաջ այն է, որ նրա նորմերով կարգավորվում են գլխավորապես այնպիսի իրավահարաբերություններ, որոնց սուբյեկտները սովորեն պետություններ են: Նա ունի նաև այլ առանձնահատկություններ, որոնց մասին հանգամանորեն կխոսվի սույն գասընթացի երկրորդ գլխում:

Միջազգային իրավունքի դերն ու նշանակությունը գնալով մեծացել է միջազգային հասարակական, քաղաքական կյանքում և պետությունների փոխհարաբերություններում: Միջազգային հարաբերությունների բարդ բնույթը, այդ հարաբերությունների բազմապատկերվածությունը և պետությունների միջև ծագող այլազան վեճերի խորթին լինելը անհրաժեշտաբար հանգեցրել են միջազգային իրավունքի և նրա գիտության կատարելագործմանն ու զարգացմանը:

Միջազգային խաղաղության և ժողովուրդների անվտանգության համար մղվող պայքարում կարևոր տեղ են գրավում նաև պայքարի միջազգային-իրավական ձևերը: Այդ պատճառով էլ միջազգային իրավունքի հիմունքներին ու գիտությունը տիրապետելը գնալով առաջնակարգ նշանակություն է ձեռք բերում:

«Սովետական պետության արտաքին քաղաքականությունը նպատակ ունի սոցիալիստական մշտա պետությունների հետ միջազգային նպաստավոր պայմաններ ապահովել սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման համար: Ամրապնդել սոցիալիստական երկրների միասնությունն ու համախմբվածությունը, նրանց բարեկամությունն ու եղբայրությունը, պաշտպանել ազգային-ազատագրական շարժումները և բազմակողմանի համագործակցություն իրագործել երիտասարդ զարգացող պետությունների հետ. հետևողականորեն պաշտպանել սոցիալական տարբեր կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքը, վճռական հակահարված հասցնել իմպերիալիզմի ազդեցիվ ուժերին, մարդկությանը փրկել համաշխարհային նոր պատերազմից»<sup>1</sup>:

<sup>1</sup> «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», Երևան, 1967, էջ 295:

312

**Մովետական պետության պրակտիկայում միջազգային իրավունքը** ծառայում է արտաքին-քաղաքական խնդիրների իրականացմանը: Այլ նպատակին է ծառայում նաև միջազգային իրավունքի սովետական գիտությունը:

Միջպետական իրավական բնույթի հասարակական հարաբերությունները կարգավորվում են որոշակի սկզբունքներով ու նորմերով, որոնց առկա է ուսումնասիրությունն ու ընդհանրացումը կազմում են միջազգային իրավունքի գիտության առարկան: Միջազգային իրավունքի սովետական գիտության մեթոդը մարքս-լենինյան գիտելակտիկան է: Նա ուսումնասիրում է միջպետական փոփոխական հարաբերությունների զարգացման օրինաչափությունները պատմական ֆորմացիաներում, բացահայտում է շահագործողական տիպի պետությունների իրավական հարաբերությունների անտագոնիստական բնույթը և սոցիալիստական սիստեմի երկրների խաղաղասիրական քաղաքականության արտացոլումն ու ներգործությունը միջազգային իրավունքի գեմոկրատական սկզբունքների ձևավորման ասպարեկում:

Ուսանողությունը, ուսուցիչներին և ընթերցող լայն հասարակայնությանն առաջարկվող սույն աշխատությունը հայերեն լեզվով միջազգային իրավունքի առաջին ձեռնարկն է: Այն գրված է ՄՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության համապատասխան վարչության կողմից իրավաբանական բարձրագույն ուսումնական հաստատությունների համար 1967 թ. հաստատված ծրագրին համապատասխան: Նյութը շարադրված է միջազգային իրավունքի ազբյուր հանդիսացող պաշտոնական վավերագրերի հիման վրա: Օգտագործված են անհրաժեշտ մեկնաբանությունները, միջազգային իրավունքի ուսուցիչական դասընթացները և արտասահմանյան հեղինակների դասընթացների ուսուցիչական փարգմանությունները: Որպես ղեկավար դրականություն օգտագործված են մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները, կուսակցության համագումարների, կոնֆերանսների, պլենումների նյութերը և այլ վավերագրեր:

Հեղինակն աշխատել է հնարավորության սահմաններում այստեղ արտացոլել նաև հայ իրականությանը վերաբերող և միջազգային իրավունքին առնչակցվող համապատասխան նյութեր:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

§ 1. Միջազգային իրավունքի ծագումը: § 2. Ստրկատիրական հասարակարգի միջազգային իրավունքը: § 3. Ֆեոդալական հասարակարգի միջազգային իրավունքը: § 4. Ֆեոդալիզմի փայլալույսը և միջազգային իրավունքի բուրժուական սկզբունքների ու ինստիտուտների ձևավորումը: § 5. Բուրժուական միջազգային իրավունքը: § 6. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և ժամանակակից միջազգային իրավունքի ձևավորումը: § 7. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո միջազգային իրավունքում տեղի ունեցած հիմնական փոփոխությունները:

### § 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱԳՈՒՄԸ

Նախնադարյան համայնական հասարակարգում պետություն և իրավունք գոյություն չունեին: Այստեղ մարդիկ ապրում էին առանց հատուկ ապարատի ու իրավական հարկադրանքի՝ տոհմերով և ցեղերով: Ընդհանուր է, տոհմերն ու ցեղերը որոշակի հարաբերությունների մեջ էին գտնվում և այդ հարաբերությունների պրոցեսում էլ ձևավորվում էին միջտոհմային, միջցեղային գործերը կարգավորող սովորույթային նորմեր, որոնց իրականացումն ապահովվում էր հենց նույն սովորույթի ուժով: Ֆ. էնգելսը գրում է. «Տոհմային կազմակերպությունն իր ամբողջ մանկական պարզությամբ և միամտությամբ զարմանալի մի կազմակերպություն է: Ամեն բան գնում է իր կանոնավոր ընթացքով—առանց զինվորների, ժանդարմների ու ոստիկանների, առանց ազնվականության, թագավորների, փոխարքաների, պրեֆեկտների կամ դատավորների, առանց բանտերի, առանց դատավարությունների: Ամեն մի վեճ ու կոնֆլիկտում է այն

մարդկանց ամբողջությունը, որոնց փրարքերում է այն, այն է՝ տոհմը կամ ցեղը, կամ առանձին տոհմերն իրար մեջ...»<sup>2</sup>:

Ինչպես ուսուցանում է մարքսիզմ-լենինիզմը, պետությունն ու իրավունքը պատմական երևույթներ են՝ նրանք առաջանում են միաժամանակ և զարգացման պրոցեսում փոխում են իրենց դասակարգային էությունն ու ձևերը:

Նախագասակարգային հասարակարգում, մինչև պետության երևան գալը տոհմերի և ցեղերի միջև տեղի ունեցող հարաբերություններում առաջանում են յուրատեսակ միջտոհմային, միջցեղային հարաբերություններ, որոնք պետության ձևավորմանը ղուղընթաց փոխակերպվում են՝ աստիճանաբար ընդունելով միջպետական հարաբերությունների տեսք:

Միջազգային հարաբերությունների պատմությունը, ստրկատիրական հասարակարգից մեզ հասած նյութական ու կուլտուրական հուշարձանները կասկած չեն թողնում այն բանում, որ ձևավորված առաջին ստրկատիրական պետություններին արդեն հայտնի էր միջազգային իրավունքը, սակայն, հասկանալի է, ինչպես երևան եկած առաջին պետություններն էին պարզունակ իրենց ամբողջ էությունը, այնպես էլ նոր ձևավորվող միջազգային իրավունքը անհամեմատ պարզ էր, քան արդի միջազգային իրավունքը:

Տիրապետող ստրկատերերի իրավական հայացքների բնորոշ պիժն էր մարդկանց, ինչպես նաև պետությունների միջև հավասարության անթույլատրելիությունը՝ քաղաքական-տնտեսական և այլ հարաբերությունների ասպարեզում: «Հնագույն բնաձուն համայնքներում,— գրում է Ֆ. Էնգելսը,— ամենաշատը խոսք կարող էր լինել համայնքի անդամների փոխադարձ հավասարության մասին. կանանց, ստրուկների և օտարականների վերաբերմամբ այդ հավասարությունն ինքնին վերանում էր: Հույների և հռոմեացիների մոտ մարդկանց անհավասարությունները շատ ավելի մեծ դեր էին խաղում, քան որևէ հավասարություն: Հնադարյան մարդկանց անպայման խելացնորություն կիվար, եթե ասեին, թե հույներն ու բարբարոսները, ազատներն ու ստրուկները, պետության քաղաքացիները և նրա պաշտպանությանն ապավինածները, հռոմեական քաղաքացիները և հռոմեական հպատակները այս բառի լայնապարփակ արտահայտությամբ կարող են քաղաքական հավասար նշանակության ակնկալություն ունենալ»<sup>3</sup>:

<sup>2</sup> Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1936, էջ 99:

<sup>3</sup> Ֆ. Էնգելս, Անտի-Գյուրիեզ, Երևան, 1936, էջ 137:

Միջազգային իրավունքն ու նրա մասին գիտությունը չունեն իրենց հատուկ պատմությունը, նրանց ծագումը, գոյությունն ու զարգացումը պետք է ուսումնասիրել ընդհանուր քաղաքացիական պատմության լույսի տակ: Այդ պատճառով էլ, խոսելով միջազգային իրավունքի ու նրա գիտության պարբերացման մասին, պետք է նկատենք, որ այն նույնն է, ինչ որ համաշխարհային պատմության պարբերացումը:

## § 2. ՍՏՐԿԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԷՐԸ

Ստրկատիրական հասարակարգում ինչպես իրավունքն ընդհանրապես, այնպես էլ միջազգային իրավունքը արտահայտում և պաշտպանում էր տիրապետող ստրկատերերի դասակարգի կամքն ու շահերը: Չնայած միջպետական հարաբերությունների խիստ սահմանափակ լինելուն՝ քաղաքական և տնտեսական ասպարեզներում, այնուամենայնիվ այդպիսի հարաբերություններ առկա էին, և պետությունները գտնվում էին տարատեսակ կապերի մեջ: Սրբ Հունաստանն ու Հռոմը որպես պետություններ դեռևս գոյություն չունեին, Ասիայում և Արևելքում պետություններն իրենց փոխհարաբերություններում կիրառում էին միջազգային-իրավական տարբեր նորմեր, որոնք զլխավորապես ունեին սովորույթի բնույթ և մասամբ էլ՝ պայմանագրային: Չինական հնագույն հուշարձաններից երևում է, որ մեր թվականությունից 2,5 հազար տարի առաջ հայտնի էին օտարերկրյա պետությունների նկատմամբ «պարտականության» հասկացությունը, դատողություններ «առանց պատճանների» պատերազմների մասին, հիշատակումներ միջազգային կոնգրեսների վերաբերյալ և այլն: Մ. թ. ա. 681 թ. Չինաստանին արդեն հայտնի էին «իշխանների համերգ»-ը, այսինքն՝ կոնֆերանսը, դիվանագիտական ծառայության ինստիտուտը, «ճանապարհորդները» (ղեսպաններ), որոնք արտասահման էին ուղարկվում «թարգմանների» և տեխնիկական այլ անձնակազմի ուղևորությամբ: Չինական փիլիսոփաների (Լաո-Ցզի և ուրիշներ) աշխատություններում հանդիպում են դատողություններ պատերազմների վնասակարության, միջազգային սանկցիաների, պայմանագրերը պահպանելու, «ժողովուրդների մեծ միության» (Կոնֆուցիա) մասին:

Հին Հնդկաստանի միջազգային-իրավական պրակտիկայի և միջազգային-իրավական կոնցեպցիաների վերաբերյալ մենք տեղեկություններ ենք քաղում Մանուի օրենսգրքից (մ. թ. ա. 1000 թ.):

Այստեղ տեղեկություններ կան դիվանագիտական ունեցիկների, ներանց ֆունկցիաների մասին, այն մասին, որ դիվանագետը կոչված է «վարել բանակցություններ, կաշառել, սերմանել երկպառակություն», հավասար (սաման) և անհավասար (անսաման) միջազգային պայմանագրերի չեզոքության հասկացության մասին («Քաղաքները պետք է թշնամի համարի իր հարևանին և նրա դաշնակցին, բարեկամ՝ իր թշնամու հարևանին և չեզոք՝ ամեն մի թագավորի, որը չի գտնվում այդ երկու դրությունից մեկում կամ մյուսում»):

Հին Հունաստանին հայտնի էր պատերազմի արգելված միջոցների ցանկը (արգելվում էին թաքցրած և թունավոր զենքի, հետևակի դեմ մարտակառքի օգտագործումը, դաշտերի, ծառերի ոչնչացումը և այլն): «Մարտիկը չպետք է սպանի նրան, ով գթություն է խնդրում, ով աղերսելով մեկնում է ձեռքերը, ով ինքն է անձնատուր լինում նրա իշխանությանը, ասելով. «Ես քո գերին եմ», այնպես էլ ո՛չ անզենին, ո՛չ մերկին, ո՛չ վիրավորին, ո՛չ փախչողին»: Այսպիսին էին Հին Հունաստանում պատերազմի կանոնների վերաբերյալ պատկերացումն ու սրբակոթիկան: Հարուստ էր ստրկատիրական Բաբելոնի, Ասորեստանի, Հրեաստանի, Եգիպտոսի, Խեթերի, Ուրարտուի, հին Հայաստանի միջազգային-իրավական սրբակոթիկան, իհարկե, կոնկրետ պատմական դարաշրջանում: Ասորա-բաբելոնական սեպագիրը Հին Արևելքում անաչված էր որպես դիվանագիտական լեզու:

Հին հրեական դրական հիշատակարաններում տեղեկություններ կան մի ամբողջ շարք միջազգային պայմանագրերի վերաբերյալ, որոնցում տեղ են գտել Գամասկոսի, Ասորեստանի, Եգիպտոսի և այլ պետությունների հետ Հրեաստանի փոխհարաբերություններում կիրառվող միջազգային իրավական նորմեր, մասնավորապես, պատերազմի իրավունքի նորմեր՝ ընդհուպ մինչև վերջնագիր ներկայացնելու անհրաժեշտության, մրգատու ծառերը խնայելու և շաբաթօրյա զինադադարի մասին: XV—XIV դդ. (մ. թ. ա.) դիվանագիտական միջազգային-իրավական լայն կապեր ուներ Եգիպտոսը՝ Բաբելոնի, Միտանիի, Միքիայի, Պաղեստինի պետությունների հետ: Այդ մասին են վկայում Տել-Ամարնի աղյուսակները, որոնք հայտնագործվել են 1887 թ.: Այդ աղյուսակներում շոշափվում են ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղ ժամանակաշրջանի պորթլեմները: Բաբելոնի թագավորը եգիպտական փարավոնից խնդրում էր. «Ինձ ոսկի ուղարկիր, շատ ոսկի, ուղարկիր այն՝ շապասելով

դեսպանության ժամանմանը: Այն ուղարկիր հենց հիմա, որքան հնարավոր է շուտ, այս հունձքին, Տամուզ ամսին: Ինչ վերաբերում է Միտանիի թագավորին, ապա նա ոսկի է խնդրում այնքան մեծ քանակությամբ, որ հաշվել չիին...

Այդ ժամանակաշրջանում բավական զարգացած էին միջազգային պայմանագրային կապերը: Մեզ հասած հնագույն պայմանագրերից է 1278 թ. (մ. թ. ա.) խեթերի թագավոր Խաթուսի III-ի և Եգիպտոսի փարավոն Ռամզես II-ի միջև կնքված միջազգային պայմանագիրը, որը պայմանագրային հետագա պրակտիկայի համար օրինակ է ծառայել ոչ միայն Հին Արևելքի, այլև Հին Հունաստանի և Հին Հռոմի համար: Այդ պայմանագրի բովանդակությունից մենք իմանում ենք, որ տակավին այն ժամանակ տիրակալները համագործակցում էին շահագործվող դասակարգին հնազանդության մեջ պահելու համար: Հիշատակված պայմանագրում ասված է. «Եթե Ռամզեսը զայրանա իր ստրուկների վրա, երբ նրանք ապրատամբություն բարձրացնեն, և զնա նրանց խաղաղեցնելու, ապա նրա հետ համատեղ պետք է գործի նաև խեթերի թագավորը»: Խաթուսի III-ի և Ռամզես II-ի միջև կնքված այդ պայմանագիրը նախաբանից բացի կազմված էր երկու մասից: Նախաբանում նըշվում էր, որ «այս լինելու է լավագույն հաշտություն և եղբայրություն՝ աշխարհում երբևէ բոլոր եղածներից»: «Թող հիանալի խաղաղություն և եղբայրություն լինի խեթերի մեծ թագավորի և Ռամզեսի՝ Եգիպտոսի մեծ թագավորի երեսաների, որդիների միջև Եգիպտոսը և խեթերի երկիրը թող բոլոր ժամանակներում լինեն խաղաղության և եղբայրության մեջ՝ ինչպես մենք»: Պայմանագիրը պաշտպանական և հարձակողական դաշինքի բնույթ ուներ. «Եթե որեիցե թշնամի զնա Ռամզեսի տիրությունների վրա, ապա Ռամզեսը և խեթերի մեծ թագավորին թող ասի. քո բոլոր ուժերով արի ինձ հետ՝ ընդդեմ նրա»: Այն նախատեսում էր քաղաքական հանցագործների, փախստականների հանձնումը մեկ պետությունից մյուսին: Պայմանագրի կատարման երաշխիքը երգումն էր, որը տեքստի անկապտելի մասն է. «Խեթերի երկրի հազար աստվածներ և աստվածուհիներ պարտավորվում են Եգիպտոսի հազար աստվածների և աստվածուհիների հանդեպ կատարելու արժաթյա տախտակի վրա ամբողջ գրածը: Գրանք իմ խոսքերի վկաներն են»: Թող փտեն նրա տունը, հողը և ստրուկները, ով կխախտի այս խոսքերը:

<sup>4</sup> Ст. у проф. Е. А. Коровин, История международного права, М., 1946, выпуск I, էջ 7:

Թող առողջություն և կյանք լինի նրան, նրա հողերին ու ստրուկներին, ով այդ խոսքերը պահպանի»:

Ստրկատիրական հասարակարգի միջազգային իրավունքի վերաբերյալ մեզ որոշ նյութ է տալիս Ուրարտուի և հին Հայաստանի պատմությունը: Վանի արձանագրությունները (VIII դար, մ. թ. ա.) բավական մանրամասնորեն նկարագրում են պատերազմի սովորույթները: Ասորեստանի արշավանքներից մեկի վերաբերյալ սրտմական արձանագրությունը նշում է, որ ամենուրեք «շաշում էր երկաթյա կացինների որոտմունքը», կտրում էին այգիները և հըրկիղում պուզերը, ցանքսերը ոչնչացվում էին մինչև վերջին հասկը, խոկ մարգագետինները ոտնակոխ էր անում զորքը: Հին Հայաստանի և նրա հարևանների պրակտիկային հայտնի էին միջազգային իրավունքի այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են՝ ուղմատուգանքը, պատանդը, գրավը, դաշնագրությունը, փրկանքը, ապաստանի իրավունքը և այլն:

Դաժան էին պատերազմի կանոնները ոչ միայն հակառակորդի, այլև յուրայինների նկատմամբ: Ինչպես վկայում է Պլուտարքոսը, «Միհրդատը... հրամայեց սպանել պոնտական բանակի թույլ ու հիվանդ զինվորներին և խոր գիշերով անցավ իր զորքով... հոռմեական քնած պահակապոստերի շղթայի միջով»<sup>5</sup>:

Լայն կիրառում ունեին միջազգային պայմանագրերը՝ մասնավորապես դաշինքի կապեր հաստատելու ասպարեզում: Հայաստանի ու Պոնտոսի միջև կնքված դաշինքի համաձայն, որն ամրապնդել էին «Տիգրանի ամուսնությունը Միհրդատի աղջկա՝ Կլեոպատրայի հետ, երկու թագավորները պայմանավորվել էին, որ նվաճված քաղաքներն ու շրջանները պատկանելու են Միհրդատին, իսկ գերիներն ու շարժական գույքը՝ Տիգրանին»<sup>6</sup>:

Հին դարաշրջանի միջազգային իրավունքի վերաբերյալ հարուստ նյութ ենք քաղում Հունաստանի և Հռոմի միջազգային հարաբերությունների պատմությունից: Հունաստանի քաղաք-պետությունների պրակտիկայում լայն կիրառում ունեին կրոնական և ուղմա-քաղաքական բնույթի պայմանագրերը: Պայմանագրեր էին կնքվում օտարերկրացիների, առևտրի, չհարձակման, փոխադարձ օգնության, միջազգային միություններ ստեղծելու վերաբերյալ և այլն: Պայմանագրերը կնքվում էին հանդիսավոր արարողություններով՝ ներկաներին բաժանում էին զոհաբերած ոչխարի բուրդը, բաժակից զինին թափում էին զետին և որպես սպառնալիք պայ-

մանագրեր խախտողի հասցեին ասում. «Թող այսպես ցփնի նրա ուղիղը հողի վրա, ինչպես այս զինին», սեղմում էին միմյանց ձեռք և այլն: Ավելի ուշ, երբ պայմանագրերը գրվում էին հատուկ տախտակների վրա, պայմանագրից հրաժարվելը, հարաբերությունների խզումը արտահայտում էին այդ տախտակները ջարդելով: Պայմանագրերի կատարման երաշխիքը երդումն էր («պայմաններն ու պայմանագիրը կատարելու եմ առանց խաբույթյան և արդարամտորեն»), առանձին դեպքերում պայմանագրի խախտման համար նախատեսվում էր դրամական տուգանք:

Արտաքին հարաբերությունների ընդլայնման կապակցությամբ երևան է գալիս այդ գործերով զբաղվող հատուկ լիազորների անհրաժեշտությունը: Ծագում են «բանբերների» (անգելոս, կերկյուս), «ավագների» (50 տարեկանից ոչ պակաս), «պրոկոստոսի» (հյուրընկալություն) և «պրոկոստոսի» (հյուրընկալողների) ինստիտուտները: Վերջիններս պետք է պաշտպանեին օտարերկրացիների շահերը տվյալ քաղաք-պետությունում, այլ կերպ ասած՝ երեվան է գալիս ժամանակակից հյուպատոսական ծառայության նախատիպը: Դեռ այն ժամանակ հույները գաղափար ունեին արդարացի և անարդարացի պատերազմների մասին: Որպես կանոն, պատերազմ սկսելուց առաջ այն հայտարարվում էր, գերիների ճակատագիրն էր՝ մահ կամ ստրկություն, հակառակորդի ամբողջ դուշը հաղթողի ավարն էր, թունավոր զենքի կիրառումը դատապարտվում էր:

Հունական մտածողների (պատմաբաններ՝ Հերոդոտ, Թուկիդիդես, փիլիսոփաներ՝ Պլատոն, Արիստոտել) աշխատություններում կան դատողություններ միջազգային իրավունքի տարբեր հարցերի վերաբերյալ: Թուկիդիդեսը դատապարտում է անգեև և գթություն խնդրող թշնամուն սպանելը: Պլատոնը պատերազմը համարում էր ժողովուրդների բնականոն վիճակ, դատապարտում էր նվաճողական պատերազմները, Ատլանտիդայի վերաբերյալ առասպելում խոսում է իդեալական պետության, թագավորների միության, միջազգային դատարանի, զինաթափման, պատերազմների արգելման մասին և այլն:

Իրավունքի համընդհանուր պատմության մեջ մեծ ներդրում կատարած հին հռոմեական պետությունը շոշափելի հետք է թողել նաև միջազգային իրավունքի պատմության մեջ՝ հենց նրա անվանումից (jus gentium) սկսած: Հռոմում արտաքին գործերը վարում էին սենատը և քրմերի հատուկ կոլեգիան, 20 ֆեցիալներ զբաղվում էին միջազգային հարաբերությունների հարցերով, նը-

<sup>5</sup> 2. Մանեղյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 177.  
<sup>6</sup> Նույն տեղում, էջ 31:



րանց տարբերանշանն էր զխակապը՝ սրբազան հողի գնդով։ Ֆեցիալներն էին Հոռմի պահանջները ներկայացնում օտարերկրյա պետություններին։ Նրանք դիմում էին այսպես. «Լսի՛ր ինձ, Յուպիտեր, լսի՛ր ինձ այս սահմանի ժողովուրդ. ես հոռմեական ժողովրդի գեսպանն եմ, ես նրանից ստացել եմ բարեպաշտ և արդար մանգատ, թող հավատան իմ խոսքերին»։ Ֆեցիալը այնուհետև շարադրում էր Հոռմի պահանջները, իր ասածը ամրապնդելով երդումով. «Եթե ես խախտել եմ արդարության և աստվածային օրենքները, ապա թող, որ ես երբեք իմ հայրենիքը չտեսնեմ»<sup>7</sup>։

Հոռմի անունից պատերազմ հայտարարվում էր ֆեցիալների մասնակցությամբ, հատուկ հանդիսավորությամբ՝ այրված և արյունոտված տեղը թշնամու հողը նետելու ձևով։ Նրանց մասնակցությամբ էին կնքվում միջազգային պայմանագրերը, որն ուղեկցվում էր յուրատեսակ արարողությամբ. ջախջախում էին զոհաբերվող հորթի դուխը և դիմում Յուպիտերին, ասելով. պայմանագիրը խախտողին խոցիր «այնպես, ինչպես այժմ ես ջարդում եմ այս զոհաբերվող կենդանուն, բայց այնքան անգամ ուժեղ, ինչքան անգամ աստված ուժեղ է մարդուց»։ Պայմանագրերի խախտողները ենթակա էին արտաքսման կամ այն պետությանը հանձնելու, որը նրանց ուխտադրժության զոհն էր։ Այս հարցում իշխում էր այն համոզմունքը, որ «անգամ թշնամուն տված խոսքը պետք է կատարվի»։

Հին Հոռմի պայմանագրային պրակտիկայում օգտագործվում էին գաշինքի («սոցիետաս»), բարեկամության («ամինիցիա») պայմանագրեր, հավասար («ֆեդերա էկվա») և անհավասար («ամինուս էկվա») պայմանագրեր։ Վերջին տեսակի պայմանագրերով կոնտրազենտները պարտավորվում էին «հարգել հոռմեական ժողովրդի մեծությունը», ըստ որում, ստրկատիրական Հոռմի հզորության աճին համեմատ ավելանում էր այդ տեսակի պայմանագրերի բանակը։

Հոռմում ղգալի ուշադրություն էին դարձնում գեսպանական իրավունքին։ Այստեղ կիրառվում էին գեսպանների (չեգատների), հետտորների (օրատորների), բանբերների (նունցիանների) ինստիտուտները և սաղմնավորվում է ապագա «նազմական կցորդի» ինստիտուտը։ Իրավունքի հանրաճանաչ նորմ էր գեսպանի անձնանմխելիությունը։ Հոռմում հատուկ արարողություն էր սահ-

մանված բարեկամական պետությունների գեսպանների ընդունելության և առանձին, նվազ ճոխ արարողություն՝ թշնամի պետությունների գեսպանների համար։ Հունական «պրոկսենյան» հիշեցնող ինստիտուտ էր գործում Հոռմում՝ ի դեմս «պրեստոր պերեգրիտուս»-ի, պրեստոր, որը վարում էր օտարերկրացիների գործերը։ Հոռմում գործում էր «եկուպերատորես» կոչվող հիմնարկություն՝ խառն համաձայնեցուցիչ հանձնաժողով, որն զբաղվում էր Հոռմի և օտարերկրյա պետությունների միջև եղած վեճերի հարցերով։ Հոռմեացիների պատերազմական սովորույթները դաժան էին՝ ամբողջ քաղաքների ավերում, հակառակորդի քաղաքացիներին պատկանող գույքի զավթում, գերիների ստրկացում և այլն։ Հոռմեացիները դաժան ու անողոր էին նվաճված երկրների ու ժողովուրդների նկատմամբ։ Խոսելով Պոնտոսի դեմ մղած Հոռմի զավթողական պատերազմի մասին (70 թ., մ. թ. ա.), Լ. Մանանդյանը գրում է. «նվաճված երկիրը, մահավանդ նրա հելլենական հարուստ ու շքեղ քաղաքները մատնվեցին անխնա կողոպուտի։ Հոռմեական զորքերը հրդեհեցին և իսպառ ավերեցին փարթամ ու հույակապ Հերակլեա քաղաքը և հուշակավոր ու գեղեցիկ Ամիսոսը, որը համարվում էր Պոնտոսի Աթենքը... Հոռմեական ֆինանսիստները, որոնք դրամական փոխառություն էին ավել աղքատացած այս երկրին՝ իրենց ստանալիք տոկոսների դիմաց բռնագրավում էին այստեղ տները, վարելահողերը, այգիները, հասարակական շենքերը, հափշտակում ու իտալիա էին տանում արվեստի իրերը, արձանները, պատկերները, տնակահույժը, ոսկեղենն ու արծաթեղենը, և վերցնում էին, բացի այդ, նաև պարտապանների երեսաներին կամ հենց իրենց՝ պարտապաններին և՛ որպես ստրուկ ուղարկում նույնպես Իտալիա»<sup>8</sup>։ Մրա հետ մեկտեղ Հին Հոռմում ճանաչված էր այն սկզբունքը, որ պատերազմը պետք է մղվի «զենքով, այլ ոչ թե թուլնով» («արմիս նոն վենենո»)։ Պարտված կողմին զինադադար էին տալիս՝ սպանվածներին թաղելու համար, պատերազմին շմասնակցող պետություններից պահանջում էին թշնամուն շտալ զենք, նավեր, փող և այլն։

Միջազգային իրավունքի պրոբլեմները իրենց արտացոլումն են գտել Հին Հոռմի մտածողների աշխատություններում։ Պատերազմը համարելով նորմալ հարաբերություն Հոռմի և բարբարոսների միջև, Հոռմի տեսարանները դատապարտում էին առանց բավարար հիմքի («sine causa») և առանց «վիրավորանքի» (iniuria)

<sup>7</sup> Տե՛ս E. A. Коровин, История международного права, выпуск I, էջ 10:

<sup>8</sup> Լ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հոռմը, էջ 88—89:

սկսած պատերազմները: Ցիցերոնը մարդկությունը մեկնաբանում էր որպես «ընդհանուր քաղաք և մարդկանց ու աստվածների պետություն»: Փիլիսոփա Սենեկան, ելնելով «մարդը մարդու համար սրբազան առարկա է» թեզից, հանգում է ամբողջ մարդկության ցեղի պետության մասին գաղափարին (corpus magnum): Կայսր և փիլիսոփա Մարկոս Ավրելիոսն իր «Մտորումներում» ասում է. «Որպես Անտոնին՝ ևս Հռոմի քաղաքացի եմ», «Որպես մարդ՝ ևս տիեզերքի քաղաքացի եմ»: Բանաստեղծ Վիրգիլիոսը փառաբանում էր վերահաս ամբնդհանուր խաղաղության «ոսկի դարը»: Երկրի վրա: «Համընդհանուր պետության», «տիեզերքի քաղաքացու» և այլնի վերաբերյալ Հռոմում երևան եկած դատողությունները արտահայտում էին տնտեսության ստրկատիրական սիստեմի խոր նգնաժամը, որն ուղեկցվում էր ստրուկների մասսայական ապստամբություններով, և Հռոմի ստրկատիրական տիրության համաշխարհային տիրապետության ձգտումները: Հռոմեացի իրավաբան Ուլպիանը փորձում էր տալ միջազգային իրավունքին վերաբերող հարցերի շրջանակը: Նրա կարծիքով վայրերի գրավումը, կառուցումն ու ամրապնդումը, պատերազմները, գերությունը, ստրկությունը, հաշտության պայմանագրերը, դինազագարները, զեսպաններին չվիրավորելու սրբազան պարտականությունը, օտարների միջև ամուսնության արգելումը կազմում են «ժողովուրդների իրավունքի» (միջազգային իրավունքի) բովանդակությունը<sup>9</sup>:

Քրիստոնեության երևան գալու պահից նախկին պրոբլեմները ստանում են նոր մեկնաբանություն: Քրիստոնեությունը մերժում է տիրապետող դասակարգերի հեթանոսական պետությունը, դատապարտում է այն որպես սատանայի թագավորություն, հակաքրիստոնյա: Ընտրյալ ժողովրդի և նրա տիրապետող դասակարգի գաղափարախոսությունը հակադրվում է ազգային ու սոցիալական միջնորդումների լիակատար բացասումը: Մասնավոր սեփականությունը հակադրվում է սպառողական կոմունիզմը՝ գույքն ազգատներին բաժանելու պահանջով, բացասվում է զինվորական ծառայությունն ու ամեն մի պատերազմ և այլն:

Կրոնական այդ իդեալները շարժան և չէին էլ կարող իրականություն դառնալ: Քրիստոնեության ժամանակաշրջանի պատմությունն ընթացավ սպառողական կոմունիզմը խոշոր եկեղեցական սեփականության վերածելու ճանապարհով, հարուստների սեփականությունն ստանալու փոխարեն ազգատներին բաժին ըն-

կավ ողորմությունը, պետությունը բացասող եկեղեցին հասավ Հռոմի կայսրության տիրապետող դասակարգերի հետ իշխանությունը բաժանելուն: Պետության ու եկեղեցու բլուկի արդյունքը եղավ երևույթների, այդ թվում պատերազմի ու խաղաղության հարցերի վերաբերյալ պնդատականների վերանայումը: Բանալում թուլատրվում է ծառայել, սակայն, միայն քրիստոնյաներին, կայսրության «արգարացի պատերազմները» եկեղեցին արդարացնում է «անհրաժեշտության» երկաթյա օրենքով, դաշնակիցներին օղնելու բարբարոսներից պաշտպանվելու, ինչպես նաև հայրենիքը պաշտպանելու պարտականությամբ և այլն<sup>10</sup>:

### § 3. ՏԵՌՄԻՆՈՒԿԱՆ ՀԱՍՏՈՒՄԱՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐ

Չնավորվող ֆեոդալական պետությունների պայքարը միջին դարերի սկզբին ծավալվում էր իրենց տերիտորիաները ընդարձակելու, ժողովուրդներ նվաճելու և հարկազրկելու, ռազմական ավար զավթելու ուղղությամբ: Նրանք մղում էին պատերազմներ, կրնրում էին դաշինքներ, որոնք կայուն բնույթ չունեին: Այդ ժամանակվա խոշոր պետություններից էին Կառլոս Մեծի կայսրությունը Եվրոպայի արևմուտքում և «Ռյուրիկովիչների կայսրությունը» Եվրոպայի արևելքում:

Թագավորներն ու իշխանները իրենց դրոժինաներով մշտական բնակություն հաստատելով նվաճված հողերում և ապրելով նրանցից գանձվող տուրքերի հաշվին, բնակչությանը ճորտացնում էին, իսկ իրենք դառնում հողատերեր: Թագավորների և իշխանների իշխանությունը աստիճանաբար թուլանում էր և խոշոր պետությունները արոհվում էին բազմաթիվ մեկուսացված ֆեոդալական տիրությունների: Վրա է հասնում ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանը: Անվանապես կապված լինելով թագավորների, հերցոգների հետ, ֆեոդալները իրականում թաղավոր-կալվածատերեր էին և սեփականատիրական իրավունք էին իրականացնում իրենց տիրության նկատմամբ և իշխանություն՝ տիրության բնակչության նկատմամբ: Այս շրջանին բնորոշ էին, այսպես կոչված, «մասնավոր պատերազմները» և «մասնավոր դիվանագիտությունը», որ մղում ու վարում էին ֆեոդալները միմյանց միջև: Արևմտյան Եվրոպայի քառսում որոշ միավորող դեր էր խաղում հռոմեա-կաթոլիկական եկեղեցին, որը, Ֆ. Էնգել-

<sup>9</sup> Տե՛ս «Международное право», 1951, էջ 26:

<sup>10</sup> Տե՛ս E. A. Коровин, История международного права, 1946, էջ 12—13:

սի բնորոշմամբ, «Ֆեոդալական սիստեմի խոշոր ինտերնացիոնալ կենտրոն էր»<sup>11</sup>: Որպես այդպիսին, եկեղեցին որոշ շահով սահմանափակում էր ֆեոդալական կամայականությունը: Արևմտյան Եվրոպայում և Ռուսիայում եկեղեցին երբեմն միավորում էր ֆեոդալական պետությունը՝ ընդհանուր գործողությունների համար: Ֆեոդալական մասնատվածության պայմաններում էլ ժամանակ առ ժամանակ կնքվում էին միություններ Արևմտյան Եվրոպայում՝ մասնեղականների դեմ պայքարելու և Արևելքում հողեր նվաճելու, Ռուսիայում՝ քոչվորների արշավանքների դեմ պայքարելու նպատակով:

Ուժեղանում է քրիստոնեական կրոնի ներգործությունը պետության կյանքի ընթացքի վրա, մասնավորապես, միաբանություն հաստատելու և արտաքին թշնամիների դեմ պաշտպանություն կազմակերպելու ասպարեզում, ըստ որում, քրիստոնեական դավանանքին անշեղորեն հետևելը դիտվում էր որպես պետության հաջողությունների գրավական: Այդ մասին է խոսում նախարարական Հայաստանի պատմությունը: Հանդիմանելով Տիրան թագավորին, Դանիել քորեպիսկոպոսը ասում էր. «...տեղը ձեր թագավորությունը, քահանայապետությունը ձեզանից կվերցնի: Իուր կցրվեք ու կբաժանվեք, ձեր սահմաններն էլ Իսրայելի նման ցրվի կդան, օտար թշնամիների ձեռքը կմատնվեք իբրև գերի, նրանց ծառայության լծի տակ կընկնեք, և այս ծառայության լուծը երբեք ձեզանից չի վերանա, չի պակասի, ձեր պարանոցից երբեք չի պակասի ծառայության՝ շարաշար ստրկության լուծը ... Ինչպես Իսրայելը պատռվեց և այլևս չկարկատվեց, այնպես էլ դուք կըցրվեք ու կկործանվեք...»<sup>12</sup>:

Դեսպանների անձեռնմխելիության ինստիտուտը, որ ձևավորվել էր նախորդ հասարակարգում, պահպանվում և աստիճանաբար զարգանում է: Փավստոս Բյուզանդի «Հայոց պատմությունից» երևում է, որ Արշակ թագավորը հայոց կաթողիկոս Ներսեսի գլխավորությամբ դեսպանություն է ուղարկում Հունաց կայսեր Վաղեսի մոտ «իրենց միջև եղած համաձայնության ու խաղաղության դաշինքը» վերանորոգելու համար: Բանակցությունների ժամանակ Ներսեսը կշտամբում է Վաղեսին դավանամիտության համար և այդ հանդգնության պատճառով Վաղեսը կարգադրում է սպանել Ներսեսին:

Վաղեսի խորհրդականները համոզում են այդպիսի բան չա-

<sup>11</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. II, стр. 295.

<sup>12</sup> Փավստոս Բյուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1968, էջ 98—99.

նել, ասելով. «գրանց օտար և հեռավոր երկրից գործի համար ուղարկված են մի հզոր թագավորի կողմից... մեր կողմից նրանց վնաս չպիտի հասնի, եթե ոչ, մեծ պատերազմ կծագի մեր և Հայոց Ռեծ թագավորի միջև... Ոչ մի տեղ եղած բան չէ, ո՛չ թշնամիների և սլավոնացիների ժամանակ, որ թեկուզ մի հասարակ պատգամավոր կալանավորության, կալանքի և բանտի ենթարկվի, ուր մնաց թե մահվան. հին ժամանակներից ի վեր երբեք և ոչ մի տեղ այդպիսի բան չի եղել...» (էջ 141—142):

Ապրանք-գրամական հարաբերությունների զարգացմանը, քաղաքների աճին և նրանցում նոր դասի՝ բուրժուազիայի ձևավորմանը զուգընթաց ուժեղանում է թագավորական իշխանությունը, որն աստիճանաբար իրեն է ենթարկում կոտորակված ֆեոդալական տիրությունները և դառնում, ինչպես ասել է Ֆ. Էնգելսը, «կարգի ներկայացուցիչ անկարգության մեջ, ձևավորվող ազգի ներկայացուցիչը՝ ի հակադրություն ըմբոստացող վասալական պետությունների մասնատվածության»<sup>13</sup>: Խոշոր ֆեոդալների դեմ մղած պայքարում ձևավորվում են խոշոր ֆեոդալական դասային միապետություններ (Իսպանիա, Ֆրանսիա, Անգլիա, Մոսկովյան Ռուսիա): Այդ միապետությունների արտաքին քաղաքականության հիմնական խնդիրն էր. հաղթահարել ֆեոդալական մասնատվածությունը, միավորել և ընդլայնել պետական տերիտորիան, պայքարել քաղաքական ու առևտրական դերիշխանության հասնելու համար: Ընդլայնվում են միջազգային հարաբերությունները, ծագում է ժամանակի պահանջներով թիկազրված դիվանագիտությունը, առաջանում են միջազգային-իրավական կապերի նոր ձևեր, որոնք զարգանում են բացարձակ միապետության ժամանակաշրջանում: Միջին դարերում միջազգային կյանքի գլխավոր կենտրոններն էին Արևմտյան Եվրոպան, Բյուզանդիան, Կիևյան, ապա Մոսկովյան Ռուսիան և Արաբական խալիֆայությունը:

Միջազգային կյանքի տարրեր կենտրոններում յուրովի զարգացել են ֆեոդալական միջազգային իրավունքի կարևորագույն ինստիտուտները:

Ֆեոդալական իրականությունը բնութագրող մշտական «մասնավոր պատերազմները» պահանջում էին ռեզիմենտացիա, և մենք տեսնում ենք, որ այդ հարցին ղգալի տեղ է հատկացվում այն ժամանակվա միջազգային իրավունքում: Ֆեոդալական միջազգային իրավունքում հատուկ տեղ էր հատկացվում միջազգային պար-

<sup>13</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. I, стр. 445.

տավորությունների կատարման երաշխիքին, հավանաբար պին պատճառով, որ բունցքի թագավորության պայմաններում Գեոգալական միջնադարում միջազգային պարտավորությունները հաստատվել են խախտվում:

Միջազգային, մասնավորապես, պայմանագրային իրավունքի զարգացման համար պատմական կարևոր նշանակություն ունեցավ Կարթագենի 438 թ. ժողովը, որտեղ պաշտոնապես բանաձևվեց միջազգային իրավունքի մինչև օրս գործող հիմնական ըսկզբունքներից մեկը՝ միջազգային պայմանագիրը կատարելու պարտադրականության սկզբունքը՝ *pacta sunt servanda*-ն: «Անպետական սովորույթը» պահանջում էր կատարել սովորած խոսքը: Միջազգային պայմանագրերի կատարման համար որպես երաշխիք, ասպետական խոսքից բացի, կիրառվում է երդման ինստիտուտը: Կրոնական երդումը, որպես միջազգային պարտավորությունների կատարման երաշխիք, գործադրվում է IX—XVIII դարերում: Շուտով երևան է գալիս նաև «պայմանագրերի պահպանելի» հասկացությունը, ըստ որի խոշոր վասալները երաշխավորում էին իրենց սինյորի՝ թագավորի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը: Կիրառվում է նաև պատանդի ինստիտուտը, երբ ի սպառնովումն կնքած պայմանագրի կոնտրադենտից վերցնում էին պատանդ: Պատանդը որպես երաշխիք վերջին անգամ կիրառվել է Ալեքսանդրի 1748 թ. հաշտության պայմանագիրը կնքելու կապակցությամբ: Պայմանագրի կատարման երաշխիք է եղել նաև գրավը՝ քաղաքներ, մարզեր, մեծ արժեքներ:

Միջին դարերում երևան է գալիս մշտական դեսպանության ինստիտուտը սկզբում Հյուսիսային Իտալիայի քաղաք-պետություններում, ապա նաև այլուր: Դիվանագիտական տեխնիկան և դեսպանական իրավունքը առանձնապես զարգացան Քյուզանդիայում, որը բարդ միջազգային կապերի մեջ էր Արևմտյան և Արևելյան Եվրոպայի բարբարոսական թագավորությունների, Ռուսիայի և Արևելքի պետությունների հետ: Քյուզանդիայում ստեղծվում է, առաջին անգամ, արտաքին գործերի հատուկ գերատեսչություն, մշակվում է բարդ դիվանագիտական արարողություն: Քյուզանդիայում հավատարմագրված դեսպաններին ցույց տրվող ճոխ ծիսակարգը նպատակ ուներ ցուցադրելու Քյուզանդիայի անսահման հզորությունը: Արտասահման ուղարկվող քյուզանդական դեսպանները պետք է ոչ միայն բանակցություններ վարեին, այլև ուղարկվածը հետևեին ամբողջ իրադարձությանը և տեղյակ պա-

հեին իրենց կառավարությանը<sup>14</sup>: Դեսպանական իրավունքի հարցերը զգալի տեղ էին զբաղում արաբական պետությունների միջազգային պրակտիկայում: Այստեղ ընդունված կանոն էր դեսպանությունն ուղարկել երկու հոգուց՝ մեկը արքունիքի ավագանուց, մյուսը՝ մոլլաների սպասավորներից: Արաբական պետություններում ձևավորվել և զարգանում էր օտարերկրացիների խնամակալությունը՝ ինստիտուտը, օտարերկրացի մահմեդականներին տրվում էին տեղացիներին հավասար իրավունքներ<sup>15</sup>: Մեկ ուրիշ ազդուրում նշվում է, որ արաբներն գործերի գերատեսչություն անաջին անգամ ստեղծվել է Ճապոնիայում «Չիկոսախիկան» անունով: Եվրոպայում այդ ինստիտուտը երևան է գալիս XV—XVI դարերում՝ «գաղտնի խորհուրդ», «պետական խորհուրդ», «գաղտնի գրասենյակ» և այլ անուններով<sup>16</sup>:

Ֆեոդալական միջազգային իրավունքում տեղ են գտնում ժամանակի ոգուն համապատասխան նոր սովորույթային նորմեր: Պատերազմը դիտվում է որպես դատական մենամարտ («աստծո դատ»): Պատերազմը պետք է սկսվեր այն նախապես հայտարարելուց հետո: Այդ սովորույթը պահպանվում է մինչև XVI դարը: Ֆեոդալական իրավունքը տարբերություն չէր դնում հակառակորդի բանակի և բնակչության միջև: Հաճախակի պատերազմներից տուժող եկեղեցին հորինել ու պահանջում էր կիրառել այսպես կոչված «աստվածային խաղաղության» կամ «աստվածային զինադադարի» ինստիտուտը (*pax* կամ *Treuga*), սահմանված ժամանակամիջոցում արգելվում էին ռազմական գործողությունները:

Արաբական պետություններում պատերազմական սովորույթները որոշակիորեն տարբերվում էին Եվրոպայում ձևավորված սովորույթներից: Շարիաթը պահանջում էր մահմեդականների միջև պատերազմների ղեկավարում ամեն կերպ խնայել բնակավայրերը, հացի ցանքերը, անասունները, տարվա սրբազան շորս ամիսների ընթացքում պատերազմական գործողությունները միանգամայն արգելվում էին: Իսլամն ընդունելուց և տուրք վճարելուց հրաժարվող «անհավատների» դեմ կարելի էր մղել «սրբազան պատերազմ», որի ղեկավարում թույլատրվում էր ամայացնել երկիրը, բայց արգելվում էր ծերերին կանանց ու երեխաներին սպանելը, գերիները ստրկացվում էին, իսկ բնակչությունը պետք է տուրք վճա-

<sup>14</sup> Տե՛ս «История дипломатии», М., 1939, т. 1, էջ 107—110:

<sup>15</sup> Տե՛ս Д. Б. Левин, История международного права, М., 1962, էջ 27—28:

<sup>16</sup> Տե՛ս «Международное право», 1951, էջ 28:

րիւր, որպէս նվաճված ալլադավանների: Իսլամ ընդունելուց հրա-  
ժարվող և նվաճված ալլադավանների իրավիճակի հետ շհաշարիդ  
«անհավատների» հետ կնքում էին ոչ թե հաշտութիւն, այլ պիւնա-  
դադար՝ 4 ամսից մինչև 10 տարի ժամանակով:

Ֆեոդալական եվրոպայում փորձեր են կատարվում սահմա-  
նափակելու պատերազմի միջոցները, սակայն էական արդյունքի  
չեն հասնում: Եկեղեցական անեծքի սպառնալիքով կատարանյան  
(Латеранский) ժողովը (1139 թ.) արգելից հրազենի, աղեղի և  
աղեղնադեմի օգտագործումը որպէս «մահաբեր» և «աստուհա-  
մար առևիխ» միջոցներ: Գեոլի հրազենն ունեցած բացասական վե-  
րաբերմունքը բացատրվում է նրանով, որ քաղաքներում ձևավոր-  
վող բուրժուազիայի ձեռքում այն սպառնալիք էր ֆեոդալական  
վերնախավի համար, իսկ աղեղի ու աղեղնազենի օգտագործման  
արգելումը ուղղված էր դյուզացիական շարժումների դեմ:

Հակառակորդի վիրավորներին ոչ միայն չէին հավաքում, չէին  
բռնում, այլև սպանում էին: Գերիների ստրկացման անցյալի  
պրակտիկային փոխարինելու է գալիս փրկագնով ապատելու ինս-  
տիտուտը, ըստ որում, գերին գերեվարողի անձնական սեփակա-  
նութիւնն էր համարվում: Եթե փրկագնով գերուն ազատելը ձեռն-  
տու չէր, ապա պատերազմի սովորույթները չէին արդելում նրան  
սպանելը:

Ֆեոդալական միջազգային իրավունքին հայտնի էր փոխ-  
ճընշման (репрессалия) ինստիտուտը: Օտարերկրացուց անձնական  
կամ գույքային վնաս ստացած տեղացին կարող էր ինքն իրեն  
փոխհատուցել բռնութիւն կիրառելով օտարերկրացու ցանկացած  
հայրենակցի անձի կամ գույքի նկատմամբ:

Աստիճանաբար ընդլայնվում է միջնորդութիւն և միջնորդ  
դատարանի ծառայութիւնից օգտվելու պրակտիկան: Որպէս իրա-  
վարային հանդես են գալիս առանձին թագավորներ, պապեր  
(Հռոմի), իշխաններ, եպիսկոպոսներ, առանձին քաղաքներ, գիտ-  
նական իրավաբաններ և իրավաբանական ֆակուլտետներ:

Ֆեոդալական իրավունքը որոշակի սահմանադատում չէր  
անցկացնում հողի նկատմամբ սեփականութիւն (դոմինիում) և  
տերիտորիայի նկատմամբ իշխանութիւն (իմպերիում): Հասկա-  
ցութիւնների միջև: Մի քանի պետութիւնների տերիտորիայով  
անընդ գեղը սովյալ պետութիւն հողով անցնող հատվածով հա-  
մարվում էր նրա սեփականութիւնը: Առանձին պետութիւններ  
իրենց համարում էին ծովերի և օվկիանոսների տեր. Վենետիկը՝  
Ադրիատիկ ծովի, Իսպանիան՝ ամբողջ նազաղ օվկիանոսի, Անգ-

լիան՝ իր տիրութիւնները ողողող բոլոր «շոքս ծովերի», Իսպա-  
նիան ու Պորտուգալիան միմյանց միջև (1493 թ.) բաժանում են  
եվրոպացիների կողմից դեռևս չհայտնագործված տերիտորիանե-  
րը: XVII դարում, իսպանական հզորութիւն մայրամուտին, օվ-  
կիանոսները դառնում են բաց բոլոր երկրների նավերի համար:

Միջազգային տնտեսական կապերի հետագա ընդլայնումն ու  
զարգացումը հանգեցրին այն բանին, որ սկսեց ձևավորվել հյու-  
պատոսական իրավունքը, որն իր դարգացումն է ապրում հետագա  
դարերի ընթացքում:

Միջին դարերի միջազգային իրավունքի ինստիտուտների և  
սկզբունքների մշակման գործում ակտիվ դեր է խաղացել ֆեոդա-  
լական մուսուլման<sup>17</sup>, որը լայն միջազգային-իրավական կապերի մեջ  
էր եվրոպայի ու Ասիայի երկրների հետ:

Նշված ժամանակաշրջանում միջազգային իրավունքի կիրա-  
ման ոլորտի ընդլայնումը և պետութիւնների առջև ծառայած նոր  
խնդիրները անհրաժեշտաբար օբսակարգի հարց են դարձնում իրա-  
վունքի, այդ թվում նաև միջազգային իրավունքի գիտութիւն ծա-  
ղումն ու նրա հետագա զարգացումը: Միջնադարյան եվրոպայում  
իրավունքի գիտութիւնը զարգանում է սկսած XI դարի երկրորդ  
կեսից, այսպէս կոչված «գլոսաստորներ» ուսմունքում, որոնք  
մեկնաբանում էին Հուստինիանոսի ժողովածուում պահպանված  
հռոմեական իրավունքի (corpus juris civilis) դրույթները: Գլոս-  
աստորները ձգտում էին քաղաքացիական իրավունքի նորմերը կի-  
րառել միջազգային հարաբերութիւնների նկատմամբ, նրանք մի-  
ջազգային իրավունքի գիտութիւնը չէին դիտում որպէս ինքնու-  
րույն բնագավառ: Գլոսաստորները, որպէս կայսրութիւն զաղա-  
փարախոսներ, ամբողջ կաթոլիկական եվրոպան համարում էին  
Սրբազան Հռոմեական կայսրութիւն կայսրին ենթակա մեկ պե-  
տութիւն: Նրանց ուսմունքում ձևավորվում են միջազգային իրա-  
վունքի առանձին ճյուղերի՝ ծովային, դեսպանական և պատերազ-  
մի իրավունքների սաղմերը:

Միջազգային իրավունքի հարցերը շոշափում է նաև եկեղե-  
ցական՝ «կանոնական» իրավունքը:

Միջազգային իրավունքը և նրա գիտութիւնը որպէս իրավուն-  
քի ու գիտութիւն ինքնուրույն բնագավառ հանդես են գալիս ինք-  
նուրույն ֆեոդալական միապետութիւնների զարգացման ու ամ-  
բազնորման և ազգային պետութիւնների երևան գալու հողի վրա:

<sup>17</sup> См. Ф. И. Кожевников, Русское государство и международное право, М., 1947:

Միջազգային իրավունքի գիտության զարգացմանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ իրավաբան-տեսաբանները միաժամանակ պրակտիկ գործիչներ են եղել Իրավագետների գերը եվրոպայի քաղաքական կյանքում ավելի ու ավելի մեծացավ XIII դարի վերջից: Նրանցից էին նշանակում դիվանագետներ, նրանք էին խմբագրում միջազգային պայմանագրերը և միջազգային նշանակություն ունեցող այլ ակտերը: Բուրբ երկրների թագավորները հոգ էին տանում, որպեսզի իրենց տրամադրության տակ ունենան միջազգային հարաբերությունները լավ հասկացող, միջազգային քաղաքականության ասպարեզում իրենց պահանջները իրավաբանորեն ամուր հիմնավորելու ընդունակ, ճարպկորեն պայմանագրեր կազմող իրավաբաններ: Միջազգային վեճերը հաճախ հանձնում էին հեղինակավոր իրավաբանների եզրակացությունը:

Իրավաբանների գործնական աշխատանքը միջազգային հարաբերությունների ասպարեզում պարարտ հող ստեղծեց տեսական ընդհանրացումների համար: Որպես իրավագիտության հատուկ բնագավառ միջազգային իրավունքի գիտությունը ավելի հստակորեն դրսևորվեց այսպես կոչված «պոստպոսսատորների» կամ «կոմենտատորների» (մեկնաբանողների) ուսմունքում: «Բնական իրավունքից» և «ժողովուրդների իրավունքից» նրանք օգտվում էին գործնական նկատառումներով՝ իրավունքի տեսությունը կյանքի նոր պահանջներին ծառայեցնելու նպատակով: Ի հակադրություն գլոսսատորների ուսմունքի, ըստ որի կայսրությունը միասնական պետություն էր դիտվում, նրանք առաջ քաշեցին առանձին պետությունների սուվերենության ուսմունքը: Պոստպոսսատորների ուսմունքը ծնունդ առավ Ֆրանսիայում, որի տեսաբանները (Ժան Ֆորը, Բարտոլը) հռչակեցին առանձին պետությունների սուվերենությունը, Սրբազան Հռոմեական կայսրությունը համարելով դրանցից մեկը: 1354 թ. հատուկ տրակտատում Բարտոլը դարձրեց ռեպրեսալիաների (ճնշամիջոցների) մասին ուսմունքը, ըստ որի պետությունը կարող է խախտել մյուս պետությունների իրավունքը, ի պատասխան վերջիններիս կողմից կատարած անիրավազոր ակտերի՝ բավարարումն ստանալու և իր խախտված իրավունքները վերականգնել հարկադրելու նպատակով: Դա պետությունների միջև առևտրական ու քաղաքական կապերի աճի հետևանքով առաջացած պրոբլեմ էր: Միասնական կայսրության ուսմունքից ելնելով, հռոմեական իրավունքը վճռականորեն մերժում էր ռեպրեսալիաների իրավունքը, իսկ Բարտոլը ասում էր, որ ռեպրեսալիաների հարցը ծագել է որպես հետևանք

կայսրության անկման, որն անկարող է հարթել միջպետական վեճերը:

Այսպես, ուրեմն, XIII դարի վերջից սկսած պոստպոսսատորների ուսմունքում սկսում են ձևավորվել միջազգային իրավունքի մասին գիտության սաղմերը, որոնք սխառնատիկորեն զարգանում են սկսած XVII դարից<sup>18</sup>,

#### § 4. ՅԵՈՒԱԼԻՉՄԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ԵՎ ՄԵՉԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆԵՆԵՐԻ ՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ֆեոդալական պետությունն իր գոյության վերջին շրջանում ընդունում է բացարձակ միապետության ձև, երբ տիրապետող կալվածատեր ֆեոդալների դասակարգի ամբողջ իշխանությունը կենտրոնանում է բացարձակ միապետի՝ ինքնակալի ձեռքում, իշխանություն, որի պատկերավոր բնորոշումը արտահայտված է Լյուդովիկոս XIV-ի հայտնի աֆորիզմում. «Պետությունը՝ այդ էս եմ» կամ ինչպես հայտարարել է Լյուդովիկոս XV-ը՝ «միայն իմ անձի մեջ է տեղավորված սուվերեն իշխանությունը»: Բացարձակ միապետությունը, որպես դասակարգային ուժերի հավասարակշռության արգասիք, իր դրոշմը դրեց ժամանակաշրջանի միջազգային իրավունքի վրա, որն ապրեց իր զարգացումը՝ արտահայտելով նաև իշխանության ձգտող բուրժուազիայի միջազգային շահերը:

Պետությունների միջազգային սուվերենության սկզբունքն ընդհանուր ճանաչում ստացավ մասնավորապես Աուգսբուրգի 1555 թ. հաշտության մեջ, որն ազդարարում էր *cuius regio eius religio* (ու՜մ թագավորությունն է, նրա էլ կրոնն է) սկզբունքը, Օսնաբրյուկի 1648 թ. պայմանագրում, որն իր բոլոր մասնակիցների համար ճանաչում էր «իրավունք տերիտորիայի նկատմամբ և դերիշխանության իրավունք» և հատկապես վեստֆալյան 1648 թ. տրակտատներում, որոնք իրավաբանորեն եզրափակում էին երեսնամյա պատերազմը:

Վեստֆալյան 1648 թ. հաշտությունը հաստատեց եվրոպական տերությունների իրավահավասարությունը՝ անկախ նրանց կրոնական պաշտամունքից և պետական կարգի ձևից, արձանագրեց գերմանական 355 պետությունների անկախությունը: Վերջիններս

<sup>18</sup> Տե՛ս «История дипломатии», т. I, с. 214—217:

այսուհետև կարող էին որպես սովերեն պետություններ պայմանազերի կնքել միմյանց միջև և օտարերկրյա տերությունների հետ, Ձեռնադրեին ճանաչելով Գերմանիայի մասնատվածությունը, Վեստֆալյան հաշտությունը նպաստեց նրա հետագա թուլացմանը:

Պետությունների սովերենությունը իրավաբանորեն ճանաչելը նրանց շահատեղի դրսի միջամտությունից: Եվրոպական «հավասարակշռությունը» պահպանելու պատրվակով Ֆրանսիան, Անգլիան ու Հոլանդիան 1698—1700 թթ. փորձում են բաժանել իսպանական տիրությունները, 1787 թ. Պրուսիան զինված ինտերվենցիայի դիմեց Հոլանդիայում՝ այստեղ ծագած ժողովրդական շարժումը ճնշելու համար:

Առաջին անհաջող փորձերն են կատարվում առաջատար եվրոպական պետությունների մշտական միջազգային կազմակերպություն հիմնելու ուղղությամբ, իսկ միջազգային համագումարները, կոնգրեսներն ու կոնֆերանսները ամուր տեղ են գրավում պրակտիկայում:

Բացարձակ միապետության շրջանում ընդլայնվում են պետությունների դիվանագիտական հարաբերությունները և դրան համեմատ զարգանում են դեսպանական իրավունքի ինստիտուտները: Դիվանագիտական գործակալների անձի ու բնակարանի անձնամխելիությունը, քրեական գործերով և քաղաքացիական վիճերով տեղական դատարաններին նրանց ընդդատյա շինելը ավելի են ամրապնդվում միջազգային պրակտիկայում: Առանձին երկրներում դիվանագիտական արտոնությունները, ընդհուպ մինչև «ապաստանի իրավունքը», տարածվում են դեսպանությունների և շենքերի ու դրանց հարող քաղաքամասերի վրա: Այդ ժամանակաշրջանում Արևելքի երկրներում երևան են գալիս եվրոպական պետությունների հյուպատոսական յուրիսդիկցիայի և խառը դատարանների ինստիտուտները:

Տերիտորիայի հարցում շարունակում էր իշխել պատրիմոնիալ (ոտչինային) սեփականության հայացքը, կտակվում և ժառանգվում էին ամբողջ պետություններ, «բնական սահմանները» տնտեսությունը գործադրվում է նվաճումներն արդարացնելու և հիմնավորելու համար: Եվրոպայում և գաղութներում տերիտորիալ ձեռքբերումներն ամրապնդելու նկատառումներով մշակվում են պետական տերիտորիաների ձևաբերման մասին տեսություններ: Գաղութներում տերիտորիաների հափշտակումը անվանում են տերիտորիայի ձեռքբերման, այսպես կոչված, նախնական նդանակ

կամ նախնական օկուպացիա, որ նշանակում է, թե մինչ այդ տերիտորիան որևէ պետության չի պատկանել: Եվրոպայում տերիտորիաների ձեռքբերումն անվանում են ցեսիա (զիջում)՝ իր տարատեսակներով:

XVII դարում Անգլիայի դեմ մղած պայքարում բուրժուական Հոլանդիան առաջ է քաշում ու պաշտպանում ծովերի ազատության սկզբունքը: XVII—XVIII դդ. այդ սկզբունքը համընդհանուր ճանաչում է ստանում: Բաց ծովերի հասկացությունն երևան գալը, որ նշանակում էր, թե ծովերից կարող են օգտվել բոլոր պետությունները, ծնեց տերիտորիալ ծովի մասին դադափարը, որ նշանակում էր պետության տերիտորիային հարող բաց ծովի մի որոշակի շերտ, որտեղ առափնյա պետությունը, թեկուզ որոշ սահմանափակումներով, իրականացնում է իր՝ իշխանությունը: Միջազգային առևտրի զարգացման և հետագա ընդլայնման շահերը թելադրում են մի քանի պետություններով անցնող նավարկելի գետերն ազատ հոսակել, այլ կերպ ասած՝ ձևավորվում է միջազգային գետերի հասկացությունը: Մյուսստերի և Օսնարբյուկի կոնգրեսներում 1648 թ. նավարկությունն ազատ է հայտարարվում Հոննոս գետով, 1779 թ. Տեչենի կոնգրեսում՝ Դանուբով և այլն:

Միջազգային առևտրական կապերի ընդլայնումն իր հետ բերեց օտարերկրացիների իրավունքների բարելավման ու ապահովման պահանջը, որն արտացոլվում է առևտրական պայմանագրերում: Օտարերկրացիներին իրավունք է վերապահվում ազատորեն դիմել դատարաններին, դուրս տանել ժառանգական դուլքը, անգամ թշնամական նավերը և ապրանքները դուրս հանել պատերազմ հայտարարելուց հետո վեց ամսվա ընթացքում և այլն: Նույն ժամանակամիջոցում պետություններն առևտրական հարաբերություններում կիրառում են ամենամեծ առավելությունների սկզբունքը, որ նշանակում է մեկ պետություն պարտավորվում է մյուսի առևտրականներին իր հողում տրամադրել առևտրի այն առավելագույն նպաստավոր պայմանները, որոնցից օգտվում են մի որևէ երրորդ պետության քաղաքացի առևտրականները:

Շոշափելի տեղաշարժեր չեն նկատվում պատերազմի իրավունքի առանձին ինստիտուտների ասպարեզում, ուղղական բրոնությունները չեն սահմանափակվում, քաղաքներն ու գյուղերը հրկիզվում և կողոպտման են հանձնվում, խաղաղ բնակչությանը թալանում, խոշտանգում ու կոտորում են: Գերիններին դատապարտում էին տաժանակրություն, որպես քրեական հանցագործների, հարկադրում կալել սեփական բանակի դեմ, իսկ վիրավորներին,

այդ թվում սեփական, թողնում էին բախտի քմահաճույքին: Միայն մշտական բանակների երևան գալու շրջանում է, որ նշմարվում են հոգատարության առաջին նշանները՝ սկզբում սեփական, ապա հակառակորդի վիրավոր մարտիկների նկատմամբ:

Գրավելով հակառակորդի տերիտորիան, օկուպանտն իրեն տեր ու տնօրեն էր համարում, գտնելով, որ սովերենությունն ամբողջ իրավունքներն իրեն են անցել: Նա ամայացնում ու թալանում էր գրաված շրջանները, քանի որ, Հրոցիայի արտահայտությանը, «բնության օրենքներին շի հակասում կողոպտել նրան, ում կարելի է օրենքով սպանել»: Օկուպանտի կամայականությունը չէր տարածվում միայն հողի մասնավոր սեփականություն վրա, քանի որ այն տիրող հասարակարգի հիմքն էր: Կապիտալիստական հասարակությունների զարգացմանը զուգընթաց առաջին փորձերն են կատարվում շարժական գույքի սեփականություն իրավունքը պաշտպանելու ուղղությամբ:

Մովսիսյան պատերազմում իշխում էին կապիտալիստն ու ծովահենությունը, լայն շահով կիրառվում էր, այսպես կոչված, «կարխնետային», «թղթյա», ֆիկտիվ բլոկադան: Հակառակորդ պետության հպատակների մասնավոր սեփականությունը ծովերում անողորմաբար կոնֆիսկացվում էր, կոնֆիսկացնում էին շեզոք նավի վրա եղած հակառակորդի սեփականությունը, այդպիսի շեզոք նավը, ինչպես նաև հակառակորդի նավում եղած շեզոք բեռը: Թուրքիայի (1604 թ.) և Հանդայական միության (1655 թ.) հետ Ֆրանսիայի կնքած պայմանագրերում առաջին անգամ անց է կացվում «զրոշակը ծածկում է բեռը» սկզբունքը, որ նշանակում էր նանաշել հակառակորդի սեփականության անձնական խելիությունը շեզոք նավում, իսկ ծովային բլոկադայի էֆեկտիվության սկզբունքը հռչակվում է 1780 թ. «ղինված շեզոքության» բազմակողմանի պայմանագրում: Եթե միջնադարում ճանաչված էր պատերազմող կողմերին հավասար հնարավորություն տրամադրելու կոնցեպցիան, որը շեզոքության բովանդակությունն էր, ապա հետագայում շեզոքության իմաստը հասկացվում է այնպես, որ պետք է ձեռնպահ մնալ պատերազմին մասնակցելուց: Առանձին միջազգային համաձայնագրերում նշվում է ռազմական մարսանենդանի հասկացությունը:

Բացարձակ միապետության դարաշրջանի միջազգային-իրավական հայացքները տեղ են գտել այնպիսի հեղինակների աշխատություններում, ինչպիսիք են՝ իտալացի Ն. Մաքիավելլին (1469—1527 թթ.), Հուզո Հրոցիայի նախորդներ հոլանդացի Բ. Ալյալան

(1548—1584 թթ.), իսպանացի Ֆ. Վիտորիան (1480—1546 թթ.), Գ. Սոտոն (1494—1560 թթ.), Ֆ. Սուարեսը (1548—1617 թթ.), ֆրանսիացի է. Կրուսեն (1590—1648 թթ.), իտալացի Ա. Ջենտիլին (1551—1611 թթ.): Վերջիններս իրենց աշխատություններում դատողություններ և վերլուծություններ են անում պատերազմի ու դեսպանական իրավունքի հարցերի շուրջը, որոնք առավել կարևոր տեղ էին գրավում բացարձակ միապետության դարաշրջանի ֆեոդալական պետությունների միջազգային-իրավական պրակտիկայում:

Միջազգային իրավունքի արևմտավրոպական գիտության հայրն է համարվում հոլանդացի Հուզո Հրոցիան (1583—1645 թթ.), որը խոշոր գիտնական ու քաղաքագետ էր: Նրա բազմաթիվ ու բազմերանգ աշխատությունների շարքում միջազգային իրավունքի գիտության զարգացման համար առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ «Երեք գիրք պատերազմի և խաղաղության մասին» աշխատությունը, որը վերահրատարակվել է ավելի քան 200 անգամ և թարգմանվել է գրեթե բոլոր լեզուներով (ռուսերեն հրատարակվել է 1958 թ.):

15-ամյա պատանի Հրոցիան արդեն հոլանդական դեսպանության անդամ էր Ֆրանսիայում:

Հուզո Հրոցիայի «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» գիրքը միջազգային իրավունքի առաջին սխոտեմալսված շարադրանքն է և դիվանդանների համար երկար ժամանակ ծառայում էր որպես հիմնական ձեռնարկ: Հրոցիան միջազգային իրավունքի աղբյուր էր համարում բնազդի և առողջ բանականության վրա շինված բնական իրավունքը, որը տարբերվում է մարդկային, անգամ աստվածային պողիտիվ իրավունքից: Նա իրավունքը բաժանում էր jus naturale-ի (բնական իրավունք) և jus voluntarium-ի (կամավոր իրավունք), որն առաջինի զարգացումն ու կիրառումն է: Իրավունքը նա միաժամանակ դասակարգում էր jus divinum (աստվածային իրավունք) և jus humanum-ի (մարդկային իրավունք), վերջինիս մեջ մտնում են jus civile (քաղաքացիական իրավունք, ավելի ճիշտ ներպետական իրավունք) և jus gentium (միջազգային իրավունք): Միջազգային իրավունքի աղբյուր նա համարում էր միջազգային սովորույթը, ինչպես նաև միջազգային համաձայնագրերն ու իրավաբանների մեկնաբանությունները:

Հուզո Հրոցիան իրավագոր էր համարում միայն արդարացի պատերազմները: Մեծ նշանակություն ունեցավ Հրոցիայի ուս-



մունքը շեղորոթյան վերաբերյալ: Օրինաչափ համարելով արդարացի պատերազմը նա ասում էր. «Ովքեր պատերազմից ձեռնպահ են մնում, նրանց պարտականությունը կայանում է նրանում, որ պետքի շանեն այնպիսի բան, որն ուժեղացներ անազնիվ գործ անող կողմին, կամ խոչընդոտեր այն կողմին, որն արդարացի պատերազմ է մղում («justum bellum»): Միայն կասկածելի դեպքում է, որ շեղոք պետությունները պետք է միատեսակ դիրք գրավեն կովող կողմերի նկատմամբ»: Հ. Հրոցիան զարգացրեց դեսպանների «արտերկրայնություն» տեսությունը:

Հրոցիայի հայացքները միջազգային-քաղաքական ցանկությունների ու պահանջների մի ամբողջական ծրագիր էին կազմում, որով հանդես էր գալիս ձեավորված և դեպի իշխանություն շարժվող բուրժուազիան ընդդեմ ֆեոդալական կարգերի մղվող պայքարում: Հրոցիայի պատմական ծառայությունը ոչ միայն նրա տիրում: Հրոցիայի պատմական ծառայությունը ոչ միայն նրա տիրում: Հրոցիայի պատմական ծառայությունը ոչ միայն նրա տիրում: Հրոցիայի պատմական ծառայությունը ոչ միայն նրա տիրում:

Հուզո Հրոցիայի գաղափարները լայն տարածում գտան և զրվեցին միջազգային իրավունքի հետագա զարգացման հիմքում:

Հրոցիայից են իրենց ծագումն առել միջազգային իրավունքի գիտության պատմության երկու զլխավոր ուղղությունները՝ բնական իրավունքի դպրոցը և պոզիտիվ (դրական) իրավունքի դպրոցը:

Բնական զարոցի ներկայացուցիչները՝ Պուֆենդորֆը (1632—1694 թթ.), Բայբերիակը (1674—1744 թթ.) և մյուսները, արտացոլելով ֆեոդալիզմի ընդերքում զարգացող բուրժուազիայի աճը, փորձում էին միջազգային ասպարեզում իշխող ֆեոդալական-բացարձակ միապետական կամայականությունը հակադրել բնական իրավունքի արատրակտ նորմերը, որը խարսխվում էր «աստվածային կամքի», «մարդու բնության» վրա: Բայբերիակի ուսմունքի համաձայն բնական իրավունքից տարբերվող միջազգային իրավունքը «պատրանք» է:

Պոզիտիվ ուղղության խոշորագույն ներկայացուցիչներ էին Ս. Ռեյխելը (1628—1691 թթ.), Մոզերը (1701—1785 թթ.) և այլոք: Մրանք ձգտում էին պահպանել և ամրապնդել գոյություն ունեցող իրավակարգը և այդ հողի վրա անողորաբար քննադատում էին բնական իրավունքի դպրոցի ներկայացուցիչներին:

Երևան եկավ և տարածում գտավ երրորդ՝ այսպես կոչված հրոցիանական կամ հաշտեցնող հոսանքը, որի կարկառուն ներկայացուցիչներն էին Զելը (1590—1660 թթ.), Խր. Վոլֆը (1672—

1754 թթ.), Վատտելը (1714—1767 թթ.), Բինկերսզուկը (1675—1743 թթ.), Գ. Ֆ. Մարտենսը (1756—1821 թթ.) և ուրիշներ: Այս հոսանքի կողմնակիցները ձգտում էին համակցել երկու թշնամական դպրոցները, ժամանակի պոզիտիվ-իրավական միտքը շարադրելով ու զնահատելով բնական-իրավական հիմունքների և ըսկրզբունքների տեսանկյան տակ:

Միջազգային-իրավական պրակտիկայում և միջազգային իրավունքի գիտության զարգացման մեջ նշանակալից դեր է խաղացել ռուսական միահեծանությունը, իհարկե, պատմական այն ժամանակամիջոցում, երբ նա առաջագնհ դեր էր խաղում:

Շվեդիայի և Ռուրքիայի դեմ երկարամյա պայքարը՝ Բայթիկ և Սև ծով դուրս գալու նպատակով, որը Ռուսաստանի համար կենսական նշանակություն ուներ, ուկրաինացիների և բելոռուսների ղգալի մասի վերամիավորումը Ռուսաստանի հետ, ռուսական պետության դերի աճը՝ որպես եվրոպական ու համաշխարհային քաղաքականության ակտիվ գործոնի, բնութագրում են ժամանակաշրջանի միջազգային հանրազումարը Ռուսաստանի համար, որի հետևանքով, Պետրոս I-ի արտահայտություններով, «ոչ միայն կարող ենք մեզ ուրիշների վտանգից ապահովել, այլև եվրոպայում հավասարակշռություն պահպանել»:

Ռուսաստանը բազմիցս հանդես է գալիս որպես եվրոպայում խաղաղության երաշխավոր, ինչպես, օրինակ, 1717 թ. Ֆրանսիայի ու Պրուսիայի հետ պայմանագրով պարտավորվում էր եվրոպայում ապահովել «զլխավոր անդորր, որը վերականգնվել է տրակտատների միջոցով», որպես միջնորդ կովող պետությունների միջև (1779 թ. նա հանդես եկավ որպես միջնորդ տեղեկյան կոնգրեսում՝ Ավստրիայի ու Պրուսիայի միջև): Ռուսաստանը հանդես է գալիս առավել շարամիտ ազրեսորների դեմ և այլն:

1780 թ. զինված շեղորոթյան վերաբերյալ ակտով Ռուսաստանը օգնեց ամերիկյան ժողովրդին անկախության համար նրա մղած պայքարում, այն դեպքում, երբ Գերմանիան վարձու բանակ էր տրամադրել Անգլիային՝ ամերիկյան ժողովրդի անկախության պայքարը ճնշելու համար:

Ռուսական դիվանագիտությունը համառորեն պայքարում էր պետության աճող տեսակարար կշիռը և ցարերի տիտղոսը ճանաչել տալու համար ընդհուպ մինչև այն, որ Սկատերինա II-ը 1762 թ. տեղեկացրեց օտարերկրյա կառավարություններին, որ Ռուսաստանը հրաժարվում է դիվանագիտական հարաբերություն-

ներից այն պետությունների հետ, ովքեր շին ճանաչում ուսական ցարի կայսերական տիրոջը: Ռուսական դիվանագիտությունը հետևողականորեն պահանջում էր հանաչել Ռուսաստանի հավասարությունը մյուս պետությունների հետ: Եկատերինա II-ը ուսական դեսպաններին հանձնարարել էր, որպեսզի խստորեն պահպանվի հավասարության սկզբունքը: Նա ասում էր. «Ոչ մի երկրի նկատմամբ առաջնություն չենք պահանջում և մտադիր չենք այն զիջել» որևէ մեկին:

Ռուսաց լեզուն աստիճանաբար իր իրավունքն է նվաճում միջազգային շրջանառությունում:

Ժամանակի առումով Ռուսաստանում լիբերալ ուժերն է սահմանվում օտարերկրացիների համար: Պետրոս I-ը առանձին մասնիճեստ էր հրապարակել, որով օտարերկրացիների համար Ռուսաստան պալն ու այնտեղից գնալը ազատ էր: Օտարերկրացիները ազատորեն կարող էին հետևել իրենց կրոնական դավանանքին, նրանց համար սահմանված էին դատական երաշխիքներ: Ռուսաստանին նոր տերիտորիաներ միացնելու ժամանակ երբեմն կիրառվում էր օպտացիայի ինստիտուտը, ինչպես, օրինակ, Լեհաստանի նկատմամբ:

Ռուսաստանը միջազգային պայմանագրային լայն կապերի մեջ էր եվրոպայի գրեթե բոլոր պետությունների և Ասիայի մի շարք երկրների հետ: Ռուսական միջազգային-իրավական պրակտիկային բնորոշ էր ստանձնած պարտավորությունները հետևողականորեն կատարելը: Ռուսական պրակտիկան էական նորամուծություններ է կատարում XVIII դարի դեսպանական և հյուպատոսական իրավունքի մեջ: Դեսպանական Պրիկազի փոխարեն Պետրոս I-ը 1720 թ. փետրվարի 13-ին հիմնադրեց Արտաքին գործերի կոլեգիա, որն իրականացնում էր ուսական պետության արտաքին քաղաքականությունը:

Ռուսական պետությունը մեծ ուշադրություն էր դարձնում իր դիվանագիտական ներկայացուցիչների իրավական ուժեղացման վերաբերող հարցերին: Երբ 1708 թ. Լոնդոնում ուսական դեսպան Ա. Մատվեևին պարտքի համար բանտարկեցին, Պետրոս I-ը հանդես եկավ վճռական բողոքով, պահանջելով անհապաղ ազատ արդես եկավ վճռական բողոքով, պահանջելով անհապաղ ազատ արձակել իր դեսպանին: Մատվեևի հետ տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ Ռուսաստանի վճռական ելույթի հետևանքով Անգլիայում հատուկ կատ բնդունեցին դիվանագետների համակողմանի անձնակազմի լիտություն վերաբերյալ (1709 թ. ապրիլի 21-ի պառլամենտական ակտը):

Շոշափվող ժամանակաշրջանում Ռուսական պետության միջազգային պրակտիկայում լայն շափով կիրառվում էին վեճերի կարգավորման խաղաղ միջոցները: Մեծ ներդրում է կատարել Ռուսաստանը պատերազմի իրավունքի ասպարեզում: Որպես կանոն, պատերազմը սկսելուն նախորդում է այն հայտարարելը՝ համապատասխան պատճառաբանությամբ: Գործնականում և առանձին պայմանագրերի հիման վրա պատերազմ սկսելու դեպքում հակառակորդի հպատակներին արտոնյալ ժամկետ էր տրվում երկրից մեկնելու, իսկ առևտրական նավերին՝ հեռանալու ուսական ջրերից:

### § 5. ԲՈՐԹՈՒԿԱՆ ՄԵՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԸ

Յնողալական կարգերը վերջին հաշվով իրենց տեղը պետք է զիջեն բուրժուական հասարակարգին, որն իր գաղափարներով և դրժերով առաջադիմական էր նախորդ հասարակարգի համեմատությամբ: Միջազգային-իրավական հարաբերությունների ասպարեզում բուրժուական հասարակարգը հանդես եկավ բուրժուադեմոկրատական հիմունքներով, որոնք ուղղված էին ֆեոդալական-միահեծանության սկզբունքների դեմ: Այսպես կոչված լեգիտիմիզմի սկզբունքին հակադրվում է ազգության սկզբունքը, այսինքն՝ ֆեոդալական ինտերվենցիայի սկզբունքին հակադրվում է բուրժուազիայի կողմից այն ժամանակ առաջ քաշված շմիջամտելու սկզբունքը:

Ֆրանսիական 1789 թ. հեղափոխության հողթանակը Լական նորամուծություններ կատարեց միջազգային իրավունքում, գործի դրվեց ժամանակաշրջանի առաջադիմության շահերից բխող բուրժուական միջազգային իրավունքը: Բուրժուական հեղափոխությունը Ֆրանսիայում հռչակեց միջազգային իրավունքի մի շարք ձևական-դեմոկրատական սկզբունքներ, որոնք շատ շանցած ոտնահարվեցին հենց իրեն՝ բուրժուազիայի կողմից: Բուրժուազիայի առաջ քաշած միջազգային-իրավական սկզբունքներից էին. շմիջամտելու, տերիտորիայի անձնակազմի լիտության, պետությունների հավասարության, միջազգային պայմանագրերի կայունության, միասնական սուվերենությունը «ժողովրդի» (բուրժուազիայի) սուվերենությամբ փոխարինելու, հպատակությունը քաղաքացիական հեղափոխությունը միաժամանակ առաջ քաշեց պատերազմ վարելու նոր սկզբունքներ, կոմբատանտների և ոչ կոմբատանտ-

ների, կամավորների ինստիտուտները, մասնավոր սեփականությունն անձեռնմխելիության սկզբունքը և այլ գրույթներ ու նորմեր, որոնք պատերազմին համեմատաբար հումանիտական բնույթ էին հաղորդում:

Բուրժուական հասարակարգը որոշակի սահմաններ գրեց իր միջազգային իրավունքի գործադրման համար: Ընդհանրապես առաջ քաշեց «քաղաքակիրթ» և «ոչ քաղաքակիրթ» ժողովուրդների հասկացողությունը և գրան համեմատ բուրժուական միջազգային իրավունքի նորմերը կիրառելի էին միայն քաղաքակիրթ ժողովուրդների պետությունների փոխհարաբերություններում, Եվրոպայի և Ամերիկայի շրջանակներում:

Ֆրանսիական բուրժուական հեղափոխությանը անմիջապես նորին հաջորդած շրջանում, նապոլեոնյան պատերազմների ժամանակ «մոռացության» մատնվեցին բուրժուական հեղափոխական սկզբունքները, գերմանական ազգի Սրբազան Հռոմեական կայսրությունը վերջնականապես վերացավ (1806 թ.), նապոլեոն I-ը հայտարարեց կոնտինենտալ բլոկադա, միջազգային հարաբերություններում վրա հասավ նոր ռեակցիայի շրջանը, որը ներգարծեց ժամանակաշրջանի միջազգային իրավունքի վրա և իր արտացոլումն ստացավ Վիեննայի կոնգրեսում ընդունված ակտերում: Գաղափարները Վիեննայի կոնգրեսը հրավիրեցին (1814—1815 թթ.) նապոլեոնյան կայսրության ջախջախումից հետո: Այս կոնգրեսին մասնակցում էին Եվրոպական բոլոր պետությունների (բացառությամբ Թուրքիայի) 216 ներկայացուցիչներ, նապոլեոնին հաղթած երկրների՝ Ռուսաստանի, Անգլիայի, Պրուսիայի և Ավստրիայի գլխավորությամբ: Վիեննայի կոնգրեսում գլխավոր դեր խաղացող պետությունները խնդիր էին դրել նապոլեոնի նվաճած երկրներում վերականգնել ֆեոդալական կարգերը և գինաստիաները, պայքարել հեղափոխական շարժումների դեմ, ստեղծել կայուն երաշխիքներ ընդդեմ Ֆրանսիայում բռնապարտիստական ռեժիմը վերականգնելու և Եվրոպան նվաճելու փորձերի: Վերջապես կոնգրեսի խնդիրն էր բավարարել նապոլեոնին հաղթած պետությունների տերիտորիալ հավակնությունները, վերածնել Եվրոպան և վերաբաժանել գաղութները<sup>19</sup>:

Վիեննայի կոնգրեսում ամրապնդվեց և ապա միջազգային հարաբերություններում լայն ընդգրկումով գործի գրվեց լեգիտիմիզմի ռեակցիոն սկզբունքը, որը կոչված էր պահպանելու և պաշտպա-

նելու ֆեոդալական-միապետական ռեժիմներն ու կարգերը, ընդհուպ մինչև գինված ինտերվենցիայի միջոցով: Այդ միսիայի իրականացումը գրվում էր Ալեքսանդր I-ի նախաձեռնությամբ ստեղծված Սրբազան դաշինքի վրա (Ռուսաստան, Ավստրիա, Պրուսիա, ապա՝ Ֆրանսիա և Անգլիա):

Վիեննայի կոնգրեսում ստեղծվեց նաև ֆերմանական միություններ, որի գլուխ կանգնած էր սեյմը՝ ավստրիական ներկայացուցչի նախագահությամբ: Բելգիական նահանգները միացվեցին Հոլանդիային և ստեղծվեց Նիդեռլանդական թագավորությունը, Եվեյցարիան հռչակվեց մշտական չեզոք պետություն:

Վիեննայի կոնգրեսում մասնակիորեն կողմնակցվեց դիվանագիտական իրավունքը (Վիեննայի ռեզլամենտը), հաստատվեց միջազգային դետերում նավազնացության ազատության սկզբունքը (Հոնոս և այլն), դատապարտվեց ստրկավաճառությունը:

Սրբազան դաշինքն իր ռեակցիոն գերը կատարեց՝ կազմակերպելով հեղափոխության ճնշումը մի շարք երկրներում, սակայն նրան չհաջողվեց ճնշել ազգային-ազատագրական շարժումները իտալո-պորտուգալական գաղութներում, հարավային և կենտրոնական Ամերիկայում: Սրբազան դաշինքի անզորությունից օգտուվեցին ԱՄՆ-ը՝ 1823 թ. հռչակելով Մոնրոյի միջազգային-իրավական դոկտրինան, որպես ամերիկյան գործերին Եվրոպայի և Եվրոպական գործերին Ամերիկայի շմիջամտության սկզբունք, սակայն հենց սկզբից Մոնրոյի դոկտրինան կոչված էր քողարկելու և արդարացնելու Ամերիկայի Միացյալ Նահանգների անսահման միջամտությունը ամերիկյան մայր ցամաքի երկրների ներքին գործերին:

Սրբազան դաշինքը, որպես լեգիտիմիզմի և ինտերվենցիայի ֆեոդալական-միապետական սկզբունքների կրող, 1848 թ. վերջնականապես ձախողվեց իր ձեռնարկումներում, և միջազգային իրավունքում առաջին պլանի վրա գրվեց բուրժուական «ազգայնությունների սկզբունքը», որն այն ժամանակվա ըմբռնմամբ նշանակում էր յուրաքանչյուր բուրժուական ազգի իրավունք վերամիավորվելու միասնական պետության մեջ: Միաժամանակ երևան եկավ այսպես կոչված «Եվրոպական համերգ» հիմունքը, որ նշանակում էր մեծ տերությունների համագործակցություն և համաշխարհային հեգեմոնիա:

Միջազգային իրավունքի պատմության մեջ զգալի հետք է թողել Փարիզի 1856 թ. կոնգրեսը, Փարիզի հաշտության տրակտատով եզրափակվեց Ղրիմի պատերազմը (1853—1856 թթ.), Ռուսաստա-

<sup>19</sup> СЕ' «Дипломатический словарь», 1960. т. 1, էջ 265—267:

նր կորցրեց Օսմանյան կայսրության քրիստոնյաներին հովանավորելու իրավունքը և հարկադրված էր համաձայնվելու Սև ծովի շեղաբացման հետ: Փարիզի կոնգրեսը վերացրեց Ռուսաստանի պատեկատորաբար Մոլդավիա և Վալախիա իշխանությունների նկատմամբ, որը սահմանված էր Քյուլուկ-Քայնարջի 1774 թ. հաշտության պայմանագրով: Ավստրիան պարտավորվեց զորքերը հանել այդ իշխանություններից, որ մտցրել էր 1854 թ.: Բեսարաբիայի հարավային մասը միացվեց Մոլդավիայի և Վալախիայի իշխանություններին, որոնք ինչպես և Սերբիան, վասալական կախվածության մեջ գրվեցին թուրքիայից, որը այսուհետև համարվում էր «Նվիրյալական համբողջ» անդամ: Փարիզի 1856 թ. կոնգրեսում որոշումներ ընդունվեցին ծովային պատերազմի օրենքի վերաբերյալ, հռչակվեց Գաևուրով ազատ նավարկության սկզբունքը:

Փարիզի 1856 թ. կոնգրեսին անմիջականորեն հաջորդած շրջանը միջազգային իրավունքի համար նշանավոր էր նրա նոր սուբյեկտների երևան գալով, որը հետևանք էր ազգային միավորման (Ռումինիա, Իտալիա, Գերմանիա): Այդ շրջանը նշանավոր է նաև այլ միջազգային կոնգրեսներով ու կոնֆերանսներով, որոնցում ընդունված ակտերը միջազգային իրավունքի ազդեցություն են հանդիսացել տասնամյակների ընթացքում, և նրանց մի մասը այսօր էլ պահպանել է այդ նշանակությունը: Այդպիսի կոնֆերանսներից է Բրյուսելի 1874 թ. կոնֆերանսը, որը Ռուսաստանի նախաձեռնությամբ դեկլարացիա ընդունեց ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին: Այդ դեկլարացիան հիմք հանդիսացավ 1899 և 1907 թթ. Հաագայի կոնֆերանսներում պատերազմի կանոնները կողմնակապես ընդունելու համար:

Կարևոր նշանակություն ունեցավ ռուս-թուրքական 1877—1878 թթ. պատերազմի արդյունքներին իրավական տեսք հաղորդած Բեռլինի 1878 թ. կոնգրեսը: Այս կոնգրեսը հրավիրվեց այն կապակցությամբ, որ Ավստրո-Հունգարիան ու Անգլիան դժգոհ էին 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրից, որը շահավետ էր Ռուսաստանի, Բալկանների սլավոնական պետությունների և հայության համար: Բեռլինի կոնգրեսում 1878 թ. հուլիսի 13-ին ընդունված տրակտատի հիմնական դրույթները հանգում էին հետևյալին. ամրապնդվեց Չեռնոգորիայի անկախությունը, հաստատվեց Սերբիայի և Ռումինիայի անկախությունը, որոնց տերիտորիաները ընդլայնվեցին: Բուլղարիան ստացավ ինքնավարություն, որպես վասալ իշխանություն, իսկ Բոսնիան և Հերցեգովինան դրվեցին Ավստրո-Հունգարիայի կառավարման ներքո: Հաստատվեց Գաևուրով նա-

վարկության ազատության սկզբունքը՝ երկաթյա դարպասներից մինչև գետաբերան:

Բալկաններից հարավ ընկած բուլղարական մարզերը կազմեցին առանձին տերիտորիա՝ Արևելյան Ռումելիան, որը մնաց թուրքական սուլթանի իշխանության ներքո, սակայն վարչական ինքնավարություն ստացավ: Արդահանը, Ղարսը և Բաթումը իրենց սկրուզներով միացվեցին Ռուսաստանին, վերջինս Ալաշկերտի դաշտավայրը և Բայազետ քաղաքը վերադարձրեց թուրքիային: Թուրքիան պարտավորվեց հայկական մարզերում անցկացնել բարենորոգումներ: Ռումինիայում, Սերբիայում, Չեռնոգորիայում, Բուլղարիայում և Արևելյան Ռումելիայում, ինչպես նաև սուլթանի բոլոր տերություններում հռչակվեց խղճի լիակատար ազատություն, քաղաքացիական և քաղաքական իրավունքները տարածվում էին բոլոր դավանանքի հետևող անձանց վրա:

Բեռլինի 1878 թ. տրակտատը կարևոր միջազգային փաստաթուղթ էր և իր հիմնական դրույթներով գործեց մինչև 1913 թ.: Այդ տրակտատը չուժեց Արևելքում կոնֆլիկտների կարևորագույն հանգույցները (սերբերի վերջնական ազգային միավորման հարցը, Մակեդոնիայի, հայկական և այլ հարցեր):

Կապիտալի խաղաղ մրցակցության ժամանակամիջոցը համեմատաբար կարճ տևեց, վրա հասավ մոնոպոլիստական կապիտալի տիրակալության շրջանը, կապիտալիզմը թեև կոխեց իմպերիալիզմի դարաշրջանը, որը կապիտալիզմի բարձրագույն և միաժամանակ վերջին փուլն է: Իմպերիալիզմը միանգամայն բացասաբար ազդեց միջազգային իրավունքի դարգացման ընթացքի վրա, շնայած նրան, որ միջազգային իրավունքի առանձին ինստիտուտներ ու նրոմեր որոշ առաջխաղացում ապրեցին: Իմպերիալիզմի բնորոշ առանձնահատկություններից է իմպերիալիստական պետությունների պայքարը աշխարհը վերաբաժանելու համար, քաղաքական սեպեցիան բոլոր բնագավառներում, ֆինանսական կապիտալի ճնշման ուժեղացումը փոքր ու թույլ ժողովուրդների նրկատմամբ: Վ. Ի. Լենինի բնորոշմամբ իմպերիալիզմը ձգտում է դեպի բռնություն և դեպի իմպերիալիզմը ֆինանսական կապիտալի և մոնոպոլիստների դարաշրջանն է, որոնք ամենուրեք ձրգտում են տիրապետելու և ոչ թե ազատության, «իմպերիալիզմը դեմոկրատիայի բացասումն է»:

Իմպերիալիզմի այդ բնույթը պետք է ազդեր և ազդեց ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների ու այդ հարաբերությունները կարգավորող միջազգային հանրային իրավունքի

վրա: Իմպերիալիստական բուրժուազիան միջազգային հարաբերություններում արմատավորեց կամայականությունը, ոտնահարեց դարերի ընթացքում պետությունների փոխհարաբերություններում ձևավորված և համընդհանուր ճանաչում ստացած ինքնատուները, սկզբունքներն ու նորմերը: Քաղաքական տիրապետության համար ֆեոդալիզմի դեմ մղած պայքարի պրոցեսում բուրժուազիայի կողմից առաջ քաշված պետական սուվերենությունը հարգելու, չմիջամտելու, իրավահավասարության և այլ սկզբունքներ ամենաբիրտ կերպով ոտնահարվում ու արհամարհվում են իմպերիալիստական պետությունների կողմից: Չտեսնված շահերի և հասնում անևսխանները, պետությունների ու ժողովուրդների անկախության ոտնահարումը սովորական երևույթ է դառնում: Իմպերիալիզմը մի կողմ է նետում չմիջամտելու սկզբունքը: Փաք ու թույլ երկրների ներքին գործերին միջամտելը իմպերիալիզմի դարաշրջանի միջազգային հարաբերությունների բովանդակության սովորական տարրն է հանդիսանում: Միջամտությունն արտահայտվում է տարբեր ձևերով, ընդհուպ մինչև զինված ինտերվենցիան՝ ժողովրդական շարժումները ճնշելու համար, ինչպես կատարվեց Չինաստանում 1900 թ.: Միջազգային իրավունքը գործադրվում է որպես գաղութային քաղաքականության և գաղութային նվաճումների գործիք: Իմպերիալիստական պետություններն իրենց իրավունք են վերապահում զավթելու, այսպես կոչված, «տիրազուրկ հողերը», որի տակ հասկանում են «քաղաքակիրթ» պետություններին չպատկանող տերիտորիաներն ու ամբողջ երկրներ: Արագ տեմպերով իրականացվում է թույլ և փոքր երկրների ու ժողովուրդների գաղութացումը, որն ընդունում է տարբեր ձևեր՝ գաղութներ, սլոտեկտորատներ, ազդեցության շրջաններ: Իմպերիալիզմը խախտում է միջազգային իրավահարգը, միջազգային հարաբերություններում սանկցավորում է բիրտ ուժի տիրապետությունը: Օրինականացվում է պետությունների պատերազմի, ինչպես նաև նվաճումների իրավունքը:

Իմպերիալիզմի միջազգային քաղաքականությունը մարմնավորվում է միջազգային-իրավական բազմաթիվ ակտերում: Կապիտալիստական համաշխարհային շուկան պահանջ է առաջադրում տեխնիկայի զարգացման մակարդակին համեմատ ստեղծել միջազգային վարչական միություններ, որոնք պետք է սպասարկեն առաջին հերթին տիրապետող մոնոպոլիաների կարիքները: XIX դարի երկրորդ կեսում կնքված միջազգային համաձայնագրերի հիման վրա ստեղծվում են փոստային միություն (1874 թ.),

հեռագրային միություն, մետրական միություն (1875 թ.), երկաթուղային միություն (1890 թ.), ռադիո-հեռագրային միություն (1906 թ.): Կնքվեցին կոնվենցիաներ՝ արդյունաբերական սեփականության պաշտպանության (1883 թ.), գրական և գեղարվեստական սեփականության պաշտպանության (1886 թ.), ավտոմոբիլային երթևեկության (1909 թ.) վերաբերյալ և այլն: Միջազգային-իրավական ռեգլամենտացիայի է ենթարկվում միջազգային ջրանցքների՝ Սուեզի (1888 թ.) և Պանամայի (1901 թ.) ռեժիմը:

Գաղութատիրական քաղաքականությունը զուգորդվում է ըստըրկացուցիչ պայմանագրեր կնքելու, Արևելքում կապիտուլյացիաների ուժիմը տարածելու հետ: Գաղութային քաղաքականությունը իմպերիալիստական պետությունները «օրինականացնում» են միմյանց միջև տարբեր համաձայնագրեր կնքելու միջոցով: Այդ նպատակին էր ծառայում Բեռլինի 1884—1885 թթ. միջազգային կոնֆերանսը 14 պետությունների մասնակցությամբ (այդ թվում՝ Ռուսաստանը, Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Ավստրո-Հունգարիան, Բելգիան, Պորտուգալիան): Կոնֆերանսը հրավիրվել էր աֆրիկական գաղութների հարցով և Աֆրիկան բաժանելու շուրջը իմպերիալիստական պայքարի էտապներից մեկն էր: Բեռլինի կոնֆերանսի որոշմամբ բելգիական թագավոր Լեոպոլդ II-ի գլխավորած «Կոնգոյի միջազգային ասոցիացիայի» զավթած Կոնգոն ձևականորեն ճանաչվեց որպես «անկախ պետություն» և նրա գլուխ կարգվեց Լեոպոլդ II-ը: Կոնֆերանսի որոշումները ապահովում էին մյուս տերությունների իրավունքը՝ մասնակցելու այդ գաղութի շահագործմանը: Այդ նույն կոնֆերանսում ճշտվեցին պորտուգալական գաղութ Անգոլայի սահմանները: Լեոպոլդ II-ը 1885 թ. օգոստոսին իրեն հռչակեց «ազատ պետություն Կոնգոյի» սյուզերեն, իսկ 1908 թ. այն «զիջեց» (վաճառեց) Բելգիային: «Ազատ պետություն» Կոնգոն դարձավ Բելգիայի գաղութային տիրություն:

Իմպերիալիստական տերությունների հակասությունների սըրումը բուն Եվրոպայում և գաղութների համար մղվող պայքարում հանգեցրեց «Եվրոպական համերգի» քայքայմանը և ռազմական իմպերիալիստական խմբավորումների ստեղծմանը: Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի (1879 թ.) և Իտալիայի (1882 թ.) մասնակցությամբ կազմվեց եռյակ դաշինքը, 1891—1893 թթ. ձևավորվեց Ֆրանս-ռուսական դաշինքը, 1902 թ. անգլո-ճապոնական դաշինքը, 1904 թ. Անտանտան՝ Անգլիայի ու Ֆրանսիայի մասնակցությամբ և այլն:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հրավիրվում են մի շարք միջազգային կոնֆերանսներ՝ միջազգային իրավունքի հասունացած առանձին պրոբլեմներ լուծելու համար: Այդպիսի կոնֆերանսներից էին 1899 և 1907 թթ. Հաագայի խաղաղության կոնֆերանսները, որոնցում համեմատաբար լիակատար կերպով կոդիֆիկացվեցին ցամաքային և ծովային պատերազմների օրենքները, չեղարության կանոնները, ինչպես նաև միջազգային վեճերի խաղաղ կարգավորման միջոցների սխեմներ: Հաագայի խաղաղության կոնֆերանսները, որոնց մասնակցեց 26 պետություն, հրավիրվել էին Ռուսաստանի (1899 թվականին) և ԱՄՆ-ի (1907 թ.) նախաձեռնությամբ: Այդ կոնֆերանսների հրավիրումը մեկ կողմից արտացոլում էր խաղաղասեր ժողովրդական զանգվածների պայքարը ընդդեմ միլիտարիզմի և վերահաս համաշխարհային պատերազմի, մյուս կողմից, պատերազմ նախապատրաստող իմպերիալիստական պետությունների փորձերը՝ շեղելու հասարակայնության ուշադրությունը աշխարհը վերաբաժանելու իմպերիալիստական նախապատրաստություններից: Հաագայի կոնֆերանսներում ընդունված ակտերը կոչված էին ոչ թե կանխել, այլ «մարդասիրական» դարձնել պատերազմները: Հաագայի կոնվենցիաները պահպանում են իրենց ուժը այսօր էլ և բովանդակում են պետությունների մեծամասնության կողմից ճանաչված՝ պատերազմին վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, որոնց կատարումը՝ գործող միջազգային իրավունքի հայացակետից ելնելով, պարտադիր է:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, 1942 թ. ապրիլի 27-ի շրջաբերական նոտայով, Սովետական Միությունը հայտարարեց, որ Հաագայի կոնվենցիաներն ինքը կատարելու է փոխադարձության հիման վրա: Պատերազմից հետո, 1955 թ. մարտի 7-ին, սովետական կառավարությունը հայտարարեց, որ ինքը ճանաչում է «Ռուսաստանի վավերացրած Հաագայի 1899 և 1907 թթ. կոնվենցիաներն ու ղեկարացիաները, հասկանալի է, այն չափով, որչափով որ դրանք չեն հակասում ՄԱԿ-ի կանոնադրությանը և եթե չեն փոփոխվել կամ փոխարինվել հետագա միջազգային համաձայնագրերով, որոնց մասնակիցն է ՄՍՀՄ-ը»<sup>20</sup>:

Աշխարհը վերաբաժանելու դիվանագիտական և ուղմական նախապատրաստություններից հետո տերությունները ձեռնարկում են իմպերիալիստական պատերազմների, որոնց սկիզբը դրեցին

Ամերիկայի Միացյալ Նահանգները: Խոսքը վերաբերում է ամերիկա-խապանական 1898 թ., անգլո-բուրական 1899—1902 թթ., չինական 1900 թ., ռուս-ճապոնական 1904—1905 թթ., իտալո-թուրքական 1911—1912 թթ. պատերազմներին: Միջազգային ասպարեզում երևան են գալիս նոր «մեծ» տերություններ՝ ԱՄՆ-ը, Ճապոնիան, Իտալիան, որոնք հանդես են գալիս որպես երիտասարդ և անպատկառ իմպերիալիստական գիշատիչներ:

Վերահաս պատերազմի վտանգը թելադրում էր որոշակի ճշտումներ մտցնել գործող ծովային իրավունքի համակարգում: Այդ նախատևույթ էլ հրավիրվեց Լոնդոնի 1909 թ. ծովային կոնֆերանսը, որտեղ Գերմանիայի, ԱՄՆ-ի, Ավստրո-Հունգարիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Նիդեռլանդների և Ռուսաստանի մասնակցությամբ ընդունվեց ծովային պատերազմի իրավունքի մասին Լոնդոնի ղեկարացիան: Լոնդոնի ղեկարացիայի մասնակիցները համաձայնեցին, որ նրանում տեղ գտած կանոնները «իրենց էությամբ համապատասխանում են միջազգային իրավունքի հանրաճանաչ հիմունքներին»: Այդ ղեկարացիան պետք է ուժի մեջ մտնեք բոլոր մասնակիցների կողմից վավերացվելուց և վավերագրերը Մեծ Բրիտանիային Ի պահ հանձնելուց հետո, սակայն նրանցից ոչ մեկը չվավերացրեց այդ ղեկարացիան: Չնայած դրան, Լոնդոնի ղեկարացիան համարվում է գործող վավերագիր, քանի որ նրա մեջ տեղ են գտել ծովային պատերազմի հանրաճանաչ կանոններն ու սովորույթները:

Իմպերիալիզմի դարաշրջանում բուրժուական միջազգային իրավունքը բնութագրվում է նրանում իմպերիալիստական կամ իմպերիալիզմի քաղաքականության հետ կապված ինստիտուտների ու նորմերի աճով ու գերակշռությամբ (զաղութային պայմանագրեր, միջազգային վարչական իրավունք, միջազգային վեճերը և պատերազմի իրավունքը ռեզյամենտացիայի ենթարկելու փորձեր, ազրեսիվ բլոկների ստեղծում, ռազմական պայմանագրերի կնքում և այլն):

Ռուսաբանվող ժամանակաշրջանի միջազգային իրավունքի գիտություն մեջ երևան են գալիս նոր կոնցեպցիաներ և դրույթներ: Խաղաղ մրցակցության շրջանում բուրժուական գիտնականների առաջ քաշած բուրժուա-դեմոկրատական կոնցեպցիաներն ու ըստեղծած գաղափարները ազավազվեցին կամ մոտացվեցին իմպերիալիզմի կողմից: «Փնական դայրոցը», որը դրական դեր խաղաց ֆեոդալական կարգերի դեմ մղված պայքարում, իմպերիալիզմի

<sup>20</sup> «Дипломатический словарь», 1960, т. I, էջ 337:

դարաշրջանում լայնորեն օգտագործվում է, մասնավորապես ԱՄՆ-ում, նեխած կապիտալիստական կարգերը պաշտպանելու և արդարացնելու նպատակով: XX դարի սկզբին Գերմանիայում երևան եկան նիճիլիստական ուղղություններ (Ա. Լասսոն, Կ. Լյուդեր և ուրիշներ), որոնք բացասում էին միջազգային հանրային իրավունքի իրավական բնույթը, այն դիտելով որպես բարոյական նորմերի ամբողջություն կամ անվանելով «արտաքին պետական իրավունք» (Ցորնի, Կաուֆման): Այս ուղղությունները նպատակ ունեին տեսականորեն հիմնավորելու և արդարացնելու իմպերիալիզմի կամայականություններն ու կողոպուտը արտաքին աշխարհում: Նույն ժամանակամիջոցում ամերիկյան իմպերիալիզմը, շարաշահելով պանամերիկանիզմի և Մոնրոյի դոկտրինայի գաղափարները, իրականացնում է իր էքսպանսիոնիստական քաղաքականությունը ամերիկյան մայր ցամաքում և միաժամանակ ակտիվորեն աշակցում համաշխարհային պատերազմի սանձազերծմանը՝ աշխարհի վերաբաժանման համար, պատերազմ, որը վրա հասավ 1914 թ. օգոստոսի 1-ին:

Վ. Ի. Լենինը այսպես է բնութագրել առաջին համաշխարհային պատերազմը: «Եվրոպական և համաշխարհային պատերազմն ունի բուրժուական, իմպերիալիստական, դինաստիական պատերազմի պարզորոշ բնույթ: Պայքար շուկաների համար և օտար երկրների կողոպուտ, երկրների ներսում պրոլետարիատի և դեմոկրատիայի ռևոլյուցիոն շարժումը խափանելու ձգտում, բոլոր երկրների պրոլետարներին հիմարացնելու, բաժանելու և շարդելու ձգտում, մի ազգի վարձու ստրուկներին գրգռելով մյուս ազգի վարձու ստրուկների դեմ հօգուտ բուրժուազիայի—այս է պատերազմի միակ ունալ բովանդակությունն ու նշանակությունը»<sup>21</sup>:

Ինչպես հասարակական կյանքի բոլոր բնագավառների դիտությունների, այնպես էլ միջազգային իրավունքի դիտության մեջ մարքսիզմը հանդիսացավ հիրավի հայտնագործություն և իսկապես հեղափոխություն: Իրենց աշխատություններում Մարքսն ու Էնգելսը բազմիցս անդրադարձել են պրոլետարիատի միջազգային քաղաքականության և իրավունքի սկզբունքներին: Նրանք նշել են, որ անգամ բուրժուական հասարակարգի պայմաններում պրոլետարիատը պետք է ունենա իր ինքնուրույն միջազգային քաղաքականությունը և պետք է պայքարի բուրժուազիայի քաղաքականության դեմ, «Եթե բանվոր դասակարգի ազատագրումը պահանջում է բանվորների եղբայրական համագործակցություն, ա-

պա նրանք ինչպե՞ս կարող են կատարել այդ մեծ խնդիրը, երբ անկա է այնպիսի արտաքին քաղաքականություն, որը, հետապնդելով հանցավոր նպատակներ, խաղում է ազգային նախապաշարումների հետ և թալանչիական պատերազմներում վատնում է ժողովուրդների արյունն ու հարստությունը»: Մարքսն ու Էնգելսը սովորեցնում էին, որ բանվորները «...պարտավոր են իրենք տիրապետել միջազգային քաղաքականության գաղտնիքները, հետեվել իրենց կառավարությունների դիվանագիտական գործունեությանը և անհրաժեշտության դեպքում հակադրել նրա վրա՝ իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով...»<sup>22</sup>:

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը ամենալին խորությամբ և մանրազնին ուսումնասիրել ու արժեքավորել են բուրժուական միջազգային իրավունքը, վեր հանել նրա արատավոր կողմերը: Էնգելսը նշել է, որ «Վիեննայի կոնգրեսը 1815 թ. այնպես բաժանեց և վաճառեց Եվրոպան, որ ամբողջ աշխարհը համոզվեց միապետների և պետական գործիչների անկարողության մեջ: Ժողովուրդների համընդհանուր պատերազմը ընդդեմ Նապոլեոնի՝ ազգային զգացմունքների հակադրումն էր, որը Նապոլեոնը ոտնակոխ էր արել բոլոր ժողովուրդների մոտ: Որպես շնորհակալություն այդ բանի համար Վիեննայի կոնգրեսի թագավորներն ու դիվանագետները ալիլի գեռհորեն էին ոտնահարում այդ ազգային զգացմունքները: Ամենափոքր դինաստիան նրանց համար ավելի նշանակություն ուներ, քան մեծ ժողովուրդը»<sup>23</sup>:

Կ. Մարքսի բնորոշմամբ «Վիեննայի պայմանագրերը ամփոփում են ռեակցիոն Եվրոպայի մեծ հաղթանակը հեղափոխական Ֆրանսիայի նկատմամբ: Նրանք իրենցից ներկայացնում են եվրոպական ռեակցիայի տիրապետության գասական ձև և սեսավրացիայի տասնհինգամյա ժամանակաշրջանի ընթացքում: Մարքսը նշում է, որ «Վիեննայի տրակտատը, Եվրոպայի կողմից ճանաչված միջազգային իրավունքի այդ միակ օրենսգիրքը, իրենից ներկայացնում է ամենահրեշավոր (fictiones juris publici) միջազգային իրավունքի ֆիկցիաներից մեկը, որոնք երբևէ հայտնի են Լեդել մարդկության պատմության տարեգրությանը»<sup>24</sup>:

Գիտական կոմունիզմի հիմնադիրները՝ Մարքսն ու Էնգելսը այսպես են բնութագրել ազգայնության և բուրժուազիայի ազգային պատերազմների նշանակությունը ժամանակաշրջանի միջազգային

<sup>22</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, стр. 10—11.

<sup>23</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 21, стр. 421.

<sup>24</sup> Նույն տեղում, հ. 12, էջ 682.

<sup>21</sup> Վ. Ի. Լենին, Նրկեր, հ. 21, էջ 3—4.

իրավունքի զարգացման համար. «Առանց վերականգնելու յուրաքանչյուր առանձին ազգի անկախությունն ու միասնությունը անհնարին է պրոլետարիատի միջազգային միավորումը և այդ ազգերի հաշտ ու գիտակից համագործակցությունը՝ ընդհանուր նպատակներին հասնելու համար»<sup>25</sup>; Մարքսը գտնում էր, որ յուրաքանչյուր ազգի պետք է իրավունք վերապահվի «...տնօրինելու իր ճակատագիրը ներքին բոլոր դրժներում՝ անկախ իր հարևաններից, որքանով այդ չի խախտում ուրիշների ազատությունը»<sup>26</sup>:

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը իրենց աշխատություններում խըստորին քննադատել են միջազգային իրավունքի նորմերի սխտեմատիկ խախտումը, այդ նորմերի նկատմամբ բուրժուական կառավարությունների արհամարհական վերաբերմունքը: Նրանք անարգանքի սյունին էին դամում բուրժուական քաղաքագիտուններին, որոնք երեսպաշտորեն խոսում էին միջազգային իրավունքի սըրբազան լինելու մասին, իսկ գործնականում ամեն քայլափոխում ոտնահարում էին նրա սկզբունքներն ու նորմերը: Նրանք միաժամանակ խարազանում էին ուսուցների և ազգերի անհավասարության բուրժուական «տեսությունը», միջազգային իրավունքը «ուշ քաղաքակիրթ» ժողովուրդների վրա շտարածելու «տեսությունը», «քաղաքակիրթ թալանչի պետությունների ամօթալի արարքները՝ հետամնաց ժողովուրդների նկատմամբ արդարացնելու»<sup>27</sup> փորձերը և այլն:

Գիտական կոմունիզմի հիմնադիրները հետևողականորեն հանդես էին գալիս միջազգային իրավունքը խախտողների դեմ: Նրանք ընդդեմ քաղաքակրթության չլաված ու շտեմնված հանցագործություն էին համարում Պրուսիայի զինված հյուլթը Փարիզի կոմունան հնշելու համար: Կ. Մարքսը գրում է. «Պրուսիայի և կոմունայի միջև պատերազմ չկար, ընդհակառակը, Կոմունան համաձայնել էր հաշտության նախնական պայմանների հետ, և Պրուսիան չեզոքություն էր հայտարարել: Կնշանակի Պրուսիան պատերազմող կողմ չէր: Նա դործում էր ինչպես ստոր մարդասպան, քանի որ չէր ենթարկվել որևէ վտանգի, որպես վարձկան մարդասպան, քանի որ նա նախնական պայման էր դրել Փարիզի անկումից հետո 500 միլիոն՝ սպանության այդ արյունոտ գինը իրեն

վնարելու... դա միջազգային իրավունքի շտեմնված խախտում է՝ անդամ հին աշխարհի իրավաբանների հայեցակետից»<sup>28</sup>:

Իրենց աշխատություններում Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը անդրադարձել են միջազգային իրավունքի առանձին ինստիտուտների և սկզբունքների, վերլուծել ու արժեքավորել են դրանք (սուվերենությունը, չմիջամտելը և ինտերվենցիան, սուվերենությունը սահմանափակելու ձևերը, ճանաչումը և իրավահաջորդությունը, հոլատակության, քաղաքացիության, ապաստանի իրավունքի հարցերը, միջազգային իրավունքի տարբեր ասպեկտները, տերիտորիայի և պետական սահմանների հարցերը, միջազգային գետերի, նեկուցների, ջրանցքների սեփմը, անեքսիաները և այլն, և այլն)<sup>29</sup>:

Միջազգային իրավունքի հարցերը մեծ տեղ են գրավում Վ. Ի. Լենինի աշխատություններում: Իմպերիալիզմի դարաշրջանի բուրժուական միջազգային իրավունքի լենինյան գնահատականը այսօր էլ պահպանում է իր թարմությունն ու նշանակությունը միջազգային-իրավական պրոբլեմները գիտական հիման վրա լուսաբանելու համար: Վ. Ի. Լենինը բացահայտեց կապիտալիզմի անհամաշափ դարգացման օրենքը: «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի վերջին ստադիա» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ այդ դարաշրջանի բնորոշ գծերն են՝ ճգնաժամերը, պայքարը շուկաների և հումքի աղբյուրների համար, պայքար աշխարհը զենքի ուժով բաժանելու համար: Այստեղից էլ հետևում են կոնֆլիկտները, միջազգային հարաբերությունների ագրեսիվ բնույթը, իմպերիալիզմի ձգտումը՝ քայքայելու խաղաղ, «նորմալ հարաբերությունները» և միջազգային իրավունքը, ֆինանսական կապիտալի ձգտումը՝ ստրկացնելու և սուվերենությունից զրկելու ժողովուրդներին ու պետություններին: Վ. Ի. Լենինն ընդգծել է, որ ժողովուրդներին ճնշելու և ստրկացնելու ասպարեզում հատուկ դեր է խաղում «...ամենառեակցիոն, ամենակատաղի, բոլոր մանր ու թույլ ժողովուրդներին խեղդող, ամբողջ աշխարհում սեփական վերականգնող անզու-ամերիկյան իմպերիալիզմը...»<sup>30</sup>: Լենինը մատնանշել է, որ ամերիկյան իմպերիալիզմը մշտապես միջամտում է այլ ժողովուրդների գործերին, միջամտում է ուղղակի

<sup>25</sup> К. Маркс и Ф. Энгельс, Манифест коммунистической партии, М., 1948, стр. 38.

<sup>26</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, стр. 159.

<sup>27</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 14, стр. 101.

<sup>28</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 17, стр. 365.

<sup>29</sup> См. В. Н. Дурденевский, Указатель относящихся к международному праву избранных мест в работах Маркса и Энгельса, «Научные записки» института Влешней торговли, вып. I, 1945, էջ 238—256:

<sup>30</sup> Վ. Ի. Լենին, Ծրվեր, հ. 28, էջ 231:



ուղղման ինտերվենցիայի ձևով, ստրկացնում ու սովամահ է անում ժողովուրդներին:

Վ. Ի. Լենինը իր աշխատություններում անողորմաբար մերկացնում էր իմպերիալիստական պետությունների ու նրանց կառավարությունների կամայականությունները միջազգային հարաբերություններում: 1913 թ. գարնանը հրատարակած «Շեռամնաց Եվրոպան և առաջավոր Ասիան» հոդվածում Վ. Ի. Լենինը գրում էր, որ Եվրոպայում «վրա է հասել մի այնպիսի պատմական մոմենտ, երբ իշխող բուրժուազիան, աճող ու ամրապնդվող պրոլետարիատի առաջ տածած երկյուղից, պաշտպանում է ամեն մի հետամնաց, մահացող, միջնադարյան բան: Զառամյալ բուրժուազիան միանում է իր դարն ապրած ու ապրող բոլոր ուժերի հետ, որպեսզի տատանվող վարձու ստրկությունը պահպանի»<sup>31</sup>: Վ. Ի. Լենինը խրախուսում էր արդարացի, ազատագրական պատերազմները և մերկացնում անարդարացի, զավթողական պատերազմների շատագուլիներին: Նա գտնում էր, որ միջպետական վեճերը պետք է լուծվեն խաղաղ միջոցներով և դատապարտում էր միջազգային պատերազմները, համարելով, որ դրանք «մարդկության վեճերը լուծելու գազանային եղանակներ են»<sup>32</sup>,

§ 6. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕԿՄԱՆԱԿՎՈՒՄԸ ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հեղափոխական թոխերը շատ են եղել մարդկության կյանքում: Հասարակությունն անընդհատ ապրել է սոցիալական թարմացում: Ամեն մի սոցիալական հեղափոխություն իր զրոշմն է դրել հասարակության քաղաքական ինստիտուտների վրա, որոնք կա՛մ նոր բովանդակություն են ձևավորել, կա՛մ հարմարեցվել են ժամանակի պահանջներին, կա՛մ փոխարինվել են նորերով:

Այն արմատական նորը, որ վրա հասավ հասարակության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնաշավառներում կապված է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հետ: Լուծվեց գլխավոր հարցը՝ արտադրության միջոցներն ու գործիքները հայտարարվեցին համաժողովրդական սեփականություն, վերացվեց մարդու կողմից մարդու շահագործումը, աշխատավոր դասակարգերը պետության ղեկը իրենց

ձեռքը վերցրին, կյանքի կոշիկից աշխարհի առաջին սոցիալիստական պետությունը՝ իր նոր ներքին ու արտաքին քաղաքականությունը: «Միջազգային ասպարեզում առաջին անգամ երևան եկավ մի պետություն, որը առաջ քաշեց խաղաղության մեծ լուծույզը և սկսեց նոր սկզբունքներ իրագործել ժողովուրդների ու երկրների հարաբերություններում: Մոդեռնությունը հուսալի պատվար ստացավ զավթողական պատերազմների դեմ, խաղաղության և ժողովուրդների անվտանգության համար իր պայքարում»<sup>33</sup>:

Հոկտեմբերյան հեղափոխությունը, ի դեմս սովետական պետության, մշակեց ու առաջ քաշեց արտաքին-քաղաքական ու միջազգային-իրավական նոր սկզբունքներ ու ինստիտուտներ, որոնք իրենց մարմնավորումն են գտել սովետների հանրապետության առաջին ղեկընդնորդում և լրացվել, զարգացվել ու ամրապնդվել են մեր պետության գոյության ու զործունեության ավելի քան 50 տարիների ընթացքում: Սովետական պետության արտաքին-քաղաքական և միջազգային-իրավական կոնցեպցիաներն ի լուր ամբողջ աշխարհի նախ և առաջ ազդարարված են հաշտության մասին պատմական ղեկընտում, որը ոչ միայն խաղաղության ավետաբերն էր, այլև պատերազմող պետությունների ու ժողովուրդների փոխհարաբերությունները նոր, դեմոկրատական հիմունքներով կարգավորող նորմերի մեծ խարտիա, մեծագույն ներդրում միջազգային իրավունքի մեջ: Լենինյան այդ ղեկընտն ազդարարում էր հաշտություն անհայադ. «Շարունակել այս պատերազմը այն բանի համար, — ասված է ղեկընտում, — թե ուժեղ և հարուստ ազգերի միջև ինչպես բաժանեն նրանց կողմից բռնությամբ տիրված թույլ ժողովուրդներին, — կառավարությունը համարում է մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություն և հանդիսավոր կերպով հայտարարում է իր վճռականությունը՝ անմիջապես ստորագրելու այնպիսի հաշտության պայմաններ, որը վերջ է տալիս այս պատերազմին, առանց բացառության բոլոր ժողովուրդների համար հավասարապես արդարացի մատնանշված պայմաններով»<sup>34</sup>:

Դարերի ընթացքում շահագործողական բոլոր տիպի պետությունների փոխհարաբերություններում պատերազմը վեճերի կարգավորման ճանաչված միջոց է եղել, որից, իհարկե, հիմնականում տուժել են աշխատավորական զանգվածները: Սովետական պետությունը առաջինն էր, որ պատերազմը մերժեց որպես միջպե-

<sup>31</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 100:

<sup>32</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 728:

<sup>33</sup> «ՄՄԿ» XXII համագումարի նյութերը, Երևան, 1962, էջ 431:

<sup>34</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 297:

տական վեճերի կարգավորման միջոց, Հոկտեմբերի ազգաբարձ սկզբունքը, որի համաձայն իմպերիալիստական պատերազմը ծանրագույն հանցագործություն էր համարվում մարդկության դեմ, մեծագույն ներդրում էր դարաշրջանի միջազգային իրավունքում և զնալով ավելի ու ավելի լայն ճանաչում գտավ, ամուր տեղ գրավեց ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների շարքում:

Արտաքին քաղաքականության ու դիվանագիտության ոլորտը դարեր շարունակ եղել է տիրապետող դասակարգերի առավել արտոնյալ խավերի մենաշնորհը: Հասարակությունը միանգամայն անտեղյակ էր իմպերիալիստական կառավարությունների դիվանագիտական խոհանոցներում մշակվող հակաժողովրդական պլաններին ու կոմբինացիաներին: Մեծ հոկտեմբերն իր ազդու ու սթափեցուցիչ խոսքն ասաց աշխարհի բոլոր ժողովուրդներին, հայտարարելով, որ վերացվում է գաղտնի դիվանագիտությունը՝ ժողովուրդներին խաբելու բոլոր միջոցներից նրբագույնը: Հաշտության մասին դեկրետում ասված է. «Կառավարությունը վերացնում է գաղտնի դիվանագիտությունը, իր կողմից հայտնելով հաստատուն մտադրություն՝ վարելու բոլոր բանակցությունները միանգամայն բաց կերպով, ամբողջ ժողովրդի առաջ, անմիջապես ըսկրսելով լիովին հրապարակել այն բոլոր գաղտնի պայմանագրերը, որոնք հաստատել կամ կնքել է կալվածատերերի ու կապիտալիստների կառավարությունը 1917 թվականի փետրվարից մինչև հոկտեմբերի 25-ը»<sup>35</sup>:

Սովետական Ռուսաստանի բաց դիվանագիտությունը հսկայական դեր խաղաց բուրժուական կառավարությունների արտաքին քաղաքականության իմպերիալիստական, հակաժողովրդական բնույթը՝ մերկացնելու գործում և նշանակալից նորամուծություն էր միջազգային հարաբերությունների և միջազգային իրավունքի ասպարեկում:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության առաջ քաշած արտաքին-քաղաքական և միջազգային-իրավական նոր սկզբունքներից էր առանց անեքսիաների, այսինքն՝ առանց ուրիշների հողերի հափշտակման, առանց ուրիշ ժողովուրդների բռնի միացման և առանց կոնտրիբուցիաների դեմոկրատական հաշտություն կնքելու պահանջը: Իմպերիալիստական պետությունները տասնյակ ու հարյուրավոր պատերազմներ են հրահրել ու սանձա-

ղերծել հենց անեքսիաների ու կոնտրիբուցիա (պատերազմական տուգանք) կորզելու համար: Աշխարհի վերաբաժանման համար իրար կոկորդից բռնած իմպերիալիստական կառավարությունները համաշխարհային պատերազմ էին սկսել հենց անեքսիաների ու կոնտրիբուցիաների համար: Եվ ահա աշխարհի առաջին սոցիալիստական պետությունը հանդես եկավ միանգամայն նոր, դեմոկրատական սկզբունքներով, պահանջելով անհապաղ հաշտություն կնքել, այն էլ առանց անեքսիաների ու կոնտրիբուցիաների:

Միջազգային հարաբերությունների դարավոր պատմության մեջ, պետությունների երկարամյա միջազգային-իրավական պրակտիկայում առաջին անգամ սոցիալիստական պետությունը տվեց անեքսիայի միջազգային-իրավական բնորոշումը, որը խոշորագույն ներգրում էր միջազգային իրավունքի տեսության մեջ և հուսալի կալված իրենց անկախության ու ազատության համար պայքարող ժողովուրդների համար: Անեքսիայի բնորոշումը տրված է հաշտության մասին դեկրետում՝ լիակատար որոշակիությամբ ու սպասիչ պարզությամբ, «Անեքսիա կամ ուրիշների հողերի հափշտակում ասելով կառավարությունը հասկանում է, համաձայն ընդհանրապես դեմոկրատիայի և հատկապես աշխատավոր դասակարգերի իրավագիտակցության, փոքր կամ թույլ ժողովրդի յուրաքանչյուր միացում մեծ կամ ուժեղ պետության, առանց այդ ժողովրդի ճշտորոշ, պարզ և կամովին հայտնած համաձայնություն կամ ցանկության, անկախ նրանից, թե երբ է այդ բռնի միացումը կատարվել, անկախ նաև նրանից, թե ինչ շափով զարգացած կամ հետամնաց է բռնի միացվող կամ տվյալ պետության սահմաններում բռնի պահվող ազգը: Վերջապես, անկախ նրանից՝ արդյոք Եվրոպայում, թե հեռավոր անդրօվկիանյան երկրներում է ապրում այդ ազգությունը»<sup>36</sup>:

Անեքսիայի հասկացության լենինյան այս բնորոշումը դրված է եղել սովետական պետության արտաքին քաղաքականության հիմքում և շափանիչ է հանդիսացել այս կամ այն տերիտորիայի ստատուսի կամ ժողովրդի ճակատագիրը զնահատելու հարցում սոցիալիստական պետության վերաբերմունքը որոշելու համար: Հաշտության մասին պատմական դեկրետի՝ անեքսիայի հասկացության սահմանում իր թարմությունն ու ուժը լիովին պահպանում է մեր օրերում և դեռ պետք է ծառայի այն ժողովուրդների արդարացի շահերին, որոնք սպասում են իրենց ինքնորոշման իրավունքի

<sup>35</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 297:

<sup>36</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 298:

իրականացմանը, ոտնահարված իրավունքների վերականգնմանը:

Անեքսիայի լենինյան բնորոշմանը միանգամայն ներդաշնակ է հնչում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության առաջ քաշած միջազգային-իրավական մյուս մեծագույն սկզբունքը՝ ազգերի ինքնորոշման՝ ընդհուպ մինչև անջատվելը ու անկախ ազգային պետություն ստեղծելու իրավունքը: Խոսքի ու գործի լիակատար նույնության լենինյան ոճին համապատասխան՝ Ռուսաստանյան Սովետական Հանրապետությունը պատմության մեջ առաջին անգամ ազդարարեց ազգերի ինքնորոշման իրավունքը՝ որպես բանվորների ու գյուղացիների պետության արտաքին-քաղաքական ու միջազգային-իրավական սկզբունք, ազգային քաղաքականության հիմնաքարային սկզբունք: Այն իր մարմնավորումը գտավ 1917 թ. նոյեմբերի 2(15)-ին հռչակած Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների ղեկավարացիայում<sup>57</sup>, որը ուրույն տեղ ունի Հոկտեմբերյան հեղափոխության առաջին ղեկրեաների շարքում: Այդ ղեկավարացիայով ազդարարվում էր, որ ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշել է Ռուսաստանի ազգությունների հարցում իր գործունեության հիմքում դնել հետևյալ սկզբունքները.

1) Ռուսաստանի ժողովուրդների հավասարություն ու սովետականություն,

2) Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշում՝ ընդհուպ մինչև անջատվելը և ինքնուրույն պետություն ստեղծելու իրավունքը,

3) Ամեն կարգի ազգային և ազգային-կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացում,

4) Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և ազգազրական խմբերի ազատ զարգացում:

Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների ղեկավարացիայի դրույթները լիովին համապատասխանում էին Հաշտության մասին ղեկրեանի պահանջներին, բխում էին այդ ղեկրեանից: Թե՛ հաշտության մասին ղեկրեանը, թե՛ Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների ղեկավարացիան ելնում էին բոլոր ազգերի և ժողովուրդների լիակատար իրավահավասարության, ազատ կամարտահայտության, սովետական սոցիալիստական ըմբռնումից: Այդ ամենը նկատի առնելով է, որ Հաշտության մասին ղեկրեանը ամենայն հստակությամբ ազդարարում էր. «Եթե որևէ ազգություն

բռնություններ է պահվում տվյալ պետության սահմանների մեջ, եթե նրան, հակառակ նրա արտահայտած ցանկության,— միևնույն է, արտահայտված է այդ ցանկությունը մամուլում արդյոք, թե ժողովրդական ժողովներում, պարտիաների որոշումների մեջ, կամ ազգային հնչման դեմ բարձրացրած խռովությունների և ապրտամբությունների ձևով,— իրավունք չի տրվում ազատ քվեարկությամբ, միացնող կամ առհասարակ ավելի ուժեղ ազգի զորքերն այդ երկրից ամբողջովին հանելով, առանց որևէ հարկադրանքի որոշելու այդ ազգի պետական գոյության ձևերի հարցը. ապա նրա միացումը հանդիսանում է անեքսիա, այսինքն՝ զավթում ու բռնություն»<sup>58</sup>:

Հավատարիմ իր իսկ առաջ քաշած միջազգային-իրավական սկզբունքներին, սովետական պետությունն անշեղորեն իրականացրեց Հաշտության մասին ղեկրեանում և Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների ղեկավարացիայում տեղ գտած ազգերի ինքնորոշման մասին դրույթները՝ հայտարարելով ու ճանաչելով Ֆինլանդիայի, Լեհաստանի, Հայաստանի, Վրաստանի և Նախկին ռուսական կայսրության կազմի մեջ մտնող այլ երկրների պետական անկախությունը: Ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքն իր արտացոլումն է գտել սովետական պետության նաև այլ պետական-իրավական ու միջազգային-իրավական ակտերում, ինչպես, օրինակ՝ Ռուսաստանի ու Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին ուղղած դիմումի մեջ, Ժողովրդական կոմիսարների խորհուրդի՝ «Թուրքահայաստանի մասին» ղեկրեանում, Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների ղեկավարացիայում և այլուր:

Սովետական պետության ըմբռնմամբ, ազգերի ինքնորոշման իրավունքը սոսկ բարի ցանկություն չէր, այլ գործունեության ծրագիր ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին-քաղաքական ասպարեզում: Ճանաչելով ու իրականացնելով Ռուսաստանի կազմի մեջ մտնող երկրների ինքնորոշումը, ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը գործողության մեջ է դրվում միջազգային ոլորտում, և դրա առաջին արտահայտություններից մեկն էր «Թուրքահայաստանի մասին» ղեկրեանը: Հրաժարվելով, այսպես կոչված, «պատերազմի իրավունքից», որը լայն կիրառում ուներ բոլոր իմպերիալիստական պետությունների միջազգային-իրավական պրակտիկայում և անեքսիաները արդարացնելու միջազգային-

<sup>57</sup> Տե՛ս «Документы внешней политики СССР», 1957, т. 1, էջ 14:

<sup>58</sup> Վ. Ի. Լենին, Երկր, հ. 26, էջ 296—297:

իրավական միջոցներից մեկն էր: Սովետական Ռուսաստանը հրաժարվեց «Թուրքահայաստանի» անեքսիայից, որը գրավել էին ուսական ղորքերը առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին և ի տես ամբողջ աշխարհի ու առաջին հերթին կեղեքված, ստրկացված ժողովուրդների՝ իմպերիալիզմի անեքսիայի սկզբունքին հակադրեց ազգերի ազատ ինքնորոշման դեմոկրատական սկզբունքը: Ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 29-ի (1918 թ. հունվարի 11) դեկրետը, որը 1918 թ. հունվարի 15(28)-ին հաստատվեց Սովետների համառուսաստանյան կրթող համագումարում, սկսվում էր այսպես. «Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայ ժողովրդին հայտարարում է, որ Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի օկուպացրած «Թուրքահայաստանի» հայության ազատ ինքնորոշման, ընդհուպ մինչև լիակատար անկախության իրավունքը»<sup>39</sup>: Ժողկոմխորհը միաժամանակ սահմանում էր այն նախնական երաշխիքները, որոնց պայմաններում միայն «Թուրքահայաստանի» հայությունը կկարողանար իրականացնել իր անկապտելի ինքնորոշման իրավունքը: Գծբախտաբար, սովետական պետության կամքին հակառակ վրա հասած միջազգային բարդությունները կասեցրին հայության այդ օրինական սպասելիքի իրականացումը, հայ ժողովուրդը հնարավորություն չստացավ մինչև վերջ իրականացնելու Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդարարած և բազմաթիվ ժողովուրդների սեփականությունը դարձած ինքնորոշման իրավունքը:

Այսպիսով, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության առաջ քաշած միջազգային-իրավական և արտաքին-քաղաքական նոր սկզբունքներից մեկն էլ բոլոր ազգերի ինքնորոշման իրավունքն է, որը սովետական պետության երկարամյա հետևողական պայքարի շնորհիվ դարձել է ժամանակակից միջազգային իրավունքի՝ ընդհանուրի ճանաչում ստացած հիմնական սկզբունքներից մեկը և ամրապնդվել է միջազգային իրավունքի բազմաթիվ աղբյուրներում, մասնավորապես, Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում, 13-րդ հոդվածի 1 «Ն» կետում, 55-րդ հոդվածի «Շ» կետում, 73-րդ հոդվածում, 76-րդ հոդվածի «Ն» և «Շ» կետերում և այլուր:

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում, բնականաբար, օրակարգի հարց դարձրեց այն, թե ի՞նչ հի-

ման վրա, ինչպե՞ս պետք է դասավորվեն աշխարհի առաջին սոցիալիստական պետության և կապիտալիստական պետությունների փոխհարաբերությունները: Բրեստ-Լիտովսկի ծանր բանակցությունների շրջանում, երբ մեկ կողմից առաջ էր քաշվում «Տեղափոխական պատերազմի» պահանջը, իսկ մյուս կողմից Տրոցկին առաջարկում էր «պատերազմական դրությունը հայտարարել դադարեցված, բանակը զորացրել ու ետ դարձնել սննդը, բայց հաշտություն չստորագրել», Վ. Ի. Լենինը հանդես եկավ Սովետական Հանրապետության արտաքին-քաղաքական ու միջազգային-իրավական կարևորագույն սկզբունքներից մեկի հիմնավորմամբ. «Սոցիալիստական հեղափոխության գործերի դրությունը Ռուսաստանում պետք է դարձնել մեր սովետական իշխանության միջազգային խնդիրների մասն մի որոշման հիմք... Երկրներից մեկում սոցիալիստական կառավարության հաղթանակից հետո, բոլոր հարցերը հարկավոր է լուծել... բացառապես արդեն սկսված սոցիալիստական հեղափոխության զարգացման ու ամրացման համար լավագույն պայմաններ ստեղծելու տեսակետով»<sup>40</sup>: Հենց այդ հրամայական պահանջին համապատասխան էլ սովետական պետությունը առաջ քաշեց ու կապիտալիստական աշխարհի երկրների հետ իր հարաբերությունների հիմքում դրեց տարբեր սոցիալ-տնտեսական սիստեմներին պատկանող պետությունների խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը թարմություն ու նոր բովանդակություն հաղորդեց միջազգային իրավունքի բազմաթիվ նորմերի, սկզբունքների ու ինստիտուտների, որոնք թեպետ հռչակվել էին կապիտալիստական կարգերի արշալույսին հեղափոխական ղանգվածների պահանջով, սակայն աղճատվել, աղավաղվել էին իմպերիալիստական բուրժուազիայի կողմից՝ հարմարեցվելով նրա զավթողական, նվաճողական քաղաքականությանը: Այդպիսի սկզբունքներից է միմյանց ներքին գործերին չմիջամտելը: Պետությունները, այդ թվում տարբեր սոցիալ-տնտեսական սիստեմի պատկանող պետությունները, պետք է խստորեն ձեռնպահ մնան մեկը մյուսի ներքին գործերին միջամտելուց՝ ինչպիսիք էլ որ լինեն միջամտության շարժառիթները: Լենինը գտնում էր, որ խաղաղ գոյակցության ու ժողովուրդների միջև համագործակցության համար անհրաժեշտ է, որ ոչ միայն պետությունները, այլև միջազգային կոնֆերանսները խստո-

<sup>39</sup> «Документы внешней политики СССР», 1957, т. I, стр. 74—75.

<sup>40</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 539, 541—542:

րեն հետեւին շմիշամտելու սկզբունքին, որ ժողովուրդների միջազգային հարաբերությունները պետք է կառուցված լինեն կամավոր համագործակցության և թույլերին ուժեղների կողմից, առանց առաջիններին երկրորդներին ենթարկելու, աջակցելու վրա<sup>41</sup>։ Զմիշամտելու սկզբունքը միջազգային-իրավական մի պատենշ էր հակահեղափոխության գրոհը ետ մղելու ճանապարհին և այն նախապայմաններից մեկը, առանց որոնց անկարելի կլիներ բանվորների ու գյուղացիների պետության և կապիտալիստական աշխարհի երկրների հարաբերությունները կառուցել երկու սիստեմների իրավահավասարության հիման վրա։

Սովետական հավասարության և սովետիկության փոխադարձ հարգման միջազգային-իրավական սկզբունքները ամուր տեղ են գտել Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած ու ճանաչած արտաքին-քաղաքական սկզբունքների շարքում ու սովետական պետության միջազգային-իրավական պրակտիկայում։ Բազմաթիվ են այն ակտերը և գործնական քայլերը, որոնք ապացուցում են սովետական պետության հետևողականությունը միջազգային-իրավական այդ սկզբունքների իրականացման ասպարեզում։ Այսպես, օրինակ, դիվանագիտական ներկայացուցիչների ռանգերը վերացնելու և նրանց Ռուսաստանյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության լիազոր-ներկայացուցիչներ կոչելու մասին ժողովրդական կոմիսարների խորհրդի 1918 թ. հունիսի 4-ի դեկրետն ազդարարում էր, որ Սովետական Հանրապետությունը «իր միջազգային հարաբերություններում ելնում է մեծ և փոքր ազգերի լիակատար հավասարությունը ճանաչելու» սկզբունքից, վերացնում է դիվանագիտական ռանգերը և «միջազգային իրավունքի հիմնական գաղափարին համապատասխան, որպես իրավահավասար պետությունների հարաբերություններ», Սովետական Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա պետությունների բոլոր դիվանագիտական գործակալներին հավասարապես համարում է լիազոր-ներկայացուցիչներ<sup>42</sup>։

Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը եղած միջազգային իրավունքը աշխարհի ժողովուրդներին բաժանել էր երկու հիմնական խմբի՝ քաղաքակիրթ ազգերի և ոչ քաղաքակիրթ ազգերի։ Դրան համապատասխան էլ միջազգային իրավունքի այն ժամանակ ճանաչված սկզբունքներն ու նորմերը տարածվում էին միայն քաղաքակիրթ երկրների վրա, իսկ, այսպես

կոչված, ոչ քաղաքակիրթ երկրները միջազգային իրավունքի ոչ թե սուբյեկտ, այլ օբյեկտ էին համարվում։ Քաղաքակիրթ կոչված ժողովուրդների համար էլ միասնական շափանիշ չկար, նրանց փոխհարաբերություններում չէր գործում սովետական իրավահավասարության սկզբունքը։ Եվ ահա սովետական պետությունը պատմության մեջ առաջին անգամ ազդարարում ու գործնականում իրականացնում է բոլոր մեծ ու փոքր պետությունների ու ժողովուրդների լիակատար իրավահավասարության սկզբունքը, որը մեր օրերում հաստատապես ճանաչված է որպես գործող միջազգային իրավունքի սկզբունքներից մեկը և ամրապնդված ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ինչպես նաև միջազգային իրավունքի շատ այլ աղբյուրներում։

Տերիտորիալ ամբողջականության և անձեռնմխելիության բարձրունքը ճանաչված ու սովետական պետության կողմից հետևողականորեն իրականացվող սկզբունքներից մեկն է։ Վճռականորեն մերժելով անբարիանների քաղաքականությունը, սովետական պետությունը ելնում է այն բանից, որ պետք է հարգվի պետությունների տերիտորիալ ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը։ Այդ նշանակում է, որ անթույլատրելի է ուրիշ տերիտորիաների սեփականությունը, նրա սահմանների դեմ ուղեկցություն կատարելը։ Պետությունն է սովետական գերիշխանը իր տերիտորիայում, այստեղ այլ իշխանություն չի կարող գործել, բացի այդ տերիտորիայի տեր պետությունից։

Կապիտալիստական աշխարհի հետ ունեցած հարաբերությունների հարցում Սովետական Ռուսաստանը հենց սկզբից կանգնած էր համակողմանի համագործակցություն հաստատելու բարձրունքի վրա։ Հայտնագործելով կապիտալիզմի անհամաշարժ արդաքայման օրենքը և հաստատելով մեկ առանձին վերցրած երկրում հեղափոխության ու սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը, Վ. Ի. Լենինը նշում էր, որ սոցիալիստական պետությունը պետք է բարեկամական հարաբերություններ ու լայն տնտեսական համագործակցություն հաստատի բուրժուական երկրների հետ։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդարարած և սովետական պետության կողմից գործադրվող արտաքին-քաղաքական ու միջազգային-իրավական սկզբունքների մեջ ուրույն տեղ է գրավում թույլ զարգացած, գաղութացված երկրներին ու ժողովուրդներին համակողմանի աջակցություն ու օգնություն ցույց տալու սկզբունքը։ Սոցիալիստական պետությունն իր

<sup>41</sup> Տե՛ս «Ленинский сборник», XXXVI, էջ 451—454։

<sup>42</sup> Տե՛ս «Документы внешней политики СССР», 1957, 4, 1, էջ 345—346։

գոյութիւնը հենարան հանդիսացաւ ճնշված ու կեղեքված ժողովուրդների համար՝ օտարերկրյա նվաճողների դեմ նրանց մղած պայքարում: Հնավատարիմ իր պատմական միսիային՝ Սովետական Ռուսաստանն իր միջազգային-իրավական պաշտպանութեան տակ առավ գաղութացված ու կիսակախյալ երկրների շահերը միջազգային ասպարեզում: Այդ քաղաքականությունը իր լավագույն արտացոլումը գտավ գաղութացված Արևելքի պետությունների հետ դեռևս 1921 թ. սովետական կառավարության կնքած միջազգային պայմանագրերում:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության բովում հիմք դրվեց նոր տիպի միջազգային հարաբերությունների, որոնք իրենց նմանը չունեն կապիտալիստական երկրների ամբողջ դարավոր պրակտիկայում: Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի, կոմունիստական կուսակցության ու Ռուսաստանյան Սովետական Հանրապետության հետևողական ազգային քաղաքականության շնորհիվ ծնունդ առան ազգային սովետական հանրապետությունները, որոնք իրենց էությունը սոցիալիստական տիպի պետություններ են: Այլ կերպ ասած, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հռչակած դեմոկրատական սկզբունքների գործնական արդյունքները և, մասնավորապես, ազգերի ինքնորոշման քաղաքականության լենինյան հետևողականությունը հանգեցրին այն բանին, որ ստեղծվեց նոր աշխարհ՝ սովետական սոցիալիստական հանրապետությունների աշխարհը, Ռուսաստանյան Սովետական Հանրապետության առաջատար դերի պայմաններում: Միջազգային իմպերիալիզմի լազերին դեմ հանդիման սովետական հանրապետությունները պետք է հանդես գային ո՛չ թե առանձին-առանձին, ո՛չ թե մեկը մյուսից անջատ, այլ միասնաբար, եղբայրական ճակատ կազմած ընդդեմ ընդհանուր թշնամու՝ համաշխարհային կապիտալի, որը կատաղի պատերազմ էր մղում սովետական իշխանությունը տապալելու, բանվորների ու գյուղացիների սովետական հանրապետությունները ոչնչացնելու համար:

Միջազգային իրավունքում կարևոր ներդրում է սոցիալիստական սովետական պետության ստեղծած արտաքին առևտրի մեծաշնորհի ինստիտուտը, որը առաջնակարգ դեր է խաղացել երկրի տնտեսական ինքնուրույնությունը իմպերիալիստական պետությունների ոտնձգություններից պաշտպանելու գործում:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից ի վեր սովետական պետությունն անդադրում պայքարել է միջազգային խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու և ամբրապնդելու համար: Միջազգային իրավունքի սովետական գոկտրինանները բխում են առաջին սոցիալիստական պետության արտաքին-քաղաքական սկզբունքներից և ծառայում են այդ ըսկզբունքները կյանքում իրականացնելու նպատակին: Իրավունքը կարևոր գն է, որի օգնությամբ տիրապետող դասակարգերն իրականացնում են իրենց քաղաքականությունը: Վ. Ի. Լենինը սովորեցնում է, որ պետության արտաքին քաղաքականությունը չի կարելի առանձնացնել ներքին քաղաքականությունից, էլ առավել չի կարելի հակադրել նրան: Նման հակադրումը կլիներ ոչ մարքսիստական, հակադիստական: Այստեղից հետևում է, որ սոցիալիզմի կառուցմանը ձեռնամուխ եղած սովետական պետությունը, բնականաբար, պետք է վարեր և վարում է խաղաղասիրական քաղաքականություն, որը համապատասխանում է բոլոր երկրների աշխատավորական լայն զանգվածների և բարի կամքի բոլոր մարդկանց շահերին:

Սոցիալական տարբեր սիստեմների պատկանող պետությունների խաղաղ գոյակցության, խաղաղության, չհարձակման, իրավահավասարության, ազգերի ինքնորոշման, առանց թացառության բոլոր պետությունների անկախությունն ու սուվերենությունը հարգելու և այլ միանգամայն նոր, առաջագեծ միջազգային-իրավական սկզբունքներ առաջադրած սոցիալիստական պետությունը հետևողականորեն իրականացնում է այդպիսիք և ձգտում, որպեսզի դրանք կիրառվեն բոլոր պետությունների ու ժողովուրդների փոխհարաբերություններում՝ անկախ նրանց տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման մակարդակից, անկախ նրանց ռասայական ու ազգային պատկանելությունից: Սովետական պետությունը միաժամանակ անշեղ պայքար է մղում միջազգային իրավունքից դուրս մղելու այն ռեակցիոն սկզբունքներն ու նորմերը, որոնք շահագործողական պետությունները միջազգային ոլորտ են մտցրել իրենց հակաժողովրդական, իմպերիալիստական արտաքին-քաղաքական նպատակների իրականացման համար:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո իմպերիալիստական տերությունները, մեծ ու փոքր բուրժուական պետություն-

ները իրենց փոխհարաբերությունները կառուցեցին, հիմնականում, Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմի պայմանագրերով սահմանված միջազգային-իրավական նորմերից ելնելով:

Վերսալյան սիստեմի պայմանագրերի հիմնական բովանդակությունը հանգում էր հետևյալին (հաղթող Անտանտայի տերությունները հաշտության պայմանագրեր էին կնքել Վերսալում 1919 թ. Գերմանիայի, Սեն-ժերմենում 1919 թ. Ավստրիայի, Նեյյում 1919 թ. Բուլղարիայի, Տրիանոնում 1920 թ. Հունգարիայի, Սկրում 1920 թ. Թուրքիայի հետ): Գերմանիան կորցրել էր՝ Էլզաս-Լոթարինգիան և 15 տարով Սաարի ավազանը՝ հօգուտ Ֆրանսիայի, Ելզովիզն ու Հոլշտեյնը՝ հօգուտ Գանիայի, մի քանի օկրուգ՝ Բելգիայի օգտին, Մեմելն ու Դանցիգը ինքնուրույն քաղաք-պետություններ հռչակվեցին: Գերմանիան կորցրեց իր բոլոր գաղութները, աֆրիկականը՝ Անգլիայի և Ֆրանսիայի, իսկ խաղաղօվկիանոսյանը՝ Ճապոնիայի և Ավստրալիայի օգտին: Երևան եկան միջազգային իրավունքի նոր սուբյեկտներ՝ Լեհաստանն ու Չեխոսլովակիան, Ավստրիան ու Հունգարիան և այլն: Իտալիային անցավ Տիրոլի հարավային մասը և Տրիեստը, Հարավսլավիային (Սերբիային)՝ Բոսնիան, Հերցեգովինան, Դալմացիան, Սլովենիան, Կրահնայի մի մասը, Խորվաթիան և Բանաթը, Ռումինիային՝ Բուկովինայի մի մասը և Սեմիգրադեն, Չեխոսլովակիային՝ Անդերկարպատյան Ուկրաինան: Բուլղարիան զրկվեց էգեյան ծովափից՝ հօգուտ Հունաստանի և մի շարք սահմանային շրջաններից՝ հօգուտ Սերբիայի: Պանական Լեհաստանը զավթեց Ուկրաինայի և Բելոռուսիայի արևմտյան մարզերը, Ռումինիան՝ Բեսարաբիան: Թուրքիան Մերձավոր Արևելքում կորցրեց լայնածավալ տերիտորիաներ՝ Արարիան, Սիրիան, Պաղեստինը, Միջագետքը՝ հօգուտ Անգլիայի ու Ֆրանսիայի: Արևմտյան Հայաստանը մնաց անքսիայի ենթարկված Թուրքիայի կողմից: Թուրքիան նոր տերիտորիաներ զավթեց Հայաստանից: Գերմանիան և նրա նախկին դաշնակիցները պետք է միմեկմյուսի հասցնեին զինված ուժերն ու սպառազինությունը, սակայն նրանք պահպանում էին իրենց ռազմական պոտենցիալը և այլն:

Վերսալյան սիստեմի պայմանագրերով զգալի շափով փոխվեցին միջազգային իրավունքի սուբյեկտների դրությունը և փոխհարաբերությունները:

Բնութագրելով պայմանագրերի Վերսալյան սիստեմը, Վ. Ի. Լենինը գրել է. «Համաշխարհային պատմության մեջ մենք ունենք

առաջին դեպքը, երբ իրավաբանորեն հաստատվում է մեկ ու մեկ քառորդ միլիարդ մարդկանց կողոպտուր, ստրկությունը, կախումը, աղքատությունը և սովը»<sup>43</sup>:

Նեոավոր Արևելքի և Խաղաղ օվկիանոսի ավազանին վերաբերող հոպատերազմյան հարցերը հաղթանակած պետությունները կարգավորեցին Վաշինգտոնի (1922 թ.) կոնֆերանսում կնքած պայմանագրերով, որոնք գալիս էին լրացնելու Վերսալյան սիստեմի պայմանագրերը և դրանց հետ միասին կազմեցին պայմանագրերի Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմ: Վաշինգտոնում կնքված պայմանագրերից հիմնականը այսպես կոչված, Իննի պայմանագիրն էր (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Իտալիա, Բելգիա, Հոլանդիա, Պորտուգալիա և Չինաստան): Այս պայմանագիրը (1922 թ. փետրվարի 6-ին) ձևականորեն հռչակում էր Չինաստանի սուվերենությունը, տերիտորիալ և վարչական անձեռնմխելիությունը հարգելու սկզբունքը, սակայն ըստ էության իմպերիալիստական պետությունները Չինաստանը դիտում էին որպես համատեղ շահագործման օբյեկտ, միայն այն տարբերությամբ, որ եթե մինչև 1922 թ. Չինաստանում իրականացվում էր, այսպես կոչված, «ազդեցության շրջանների» քաղաքականությունը, ապա Իննի պայմանագիրը գործի դրեց «բաց դռների» — «հավասար հնարավորությունների» սկզբունքը, որով Ամերիկայի Միացյալ Նահանգները նպատակ ունեին Չինաստանից դուրս մղել իրենց իմպերիալիստական մրցակիցներին:

Վաշինգտոնի սիստեմի պայմանագրերից էր Չորս տերությունների պայմանագիրը (ԱՄՆ, Անգլիա, Ճապոնիա և Ֆրանսիա)՝ պայմանագիր երկրների կողմից Խաղաղ օվկիանոսի շրջանում հղած կղզիական տիրությունների և կղզիական տերիտորիաների նկատմամբ «իրավունքների» համատեղ պաշտպանության վերաբերյալ, ինչպես նաև Հինգի (ԱՄՆ, Անգլիա, Ճապոնիա, Ֆրանսիա և Իտալիա) պայմանագիրը (6/II 1922 թ.), որով սահմանվում էր ծովային գլխավոր տերությունների ռազմածովային նավատորմի տոննաժի հարաբերակցությունը: Այդ պայմանագրով արգելվում էին թունավոր գազերի օգտագործումը պատերազմում և սուզանավերի կողմից առևտրական նավերի խորտակումը՝ առանց մարդկանց փրկելու համար նախնական միջոցառումներ ձեռնարկելու:

Պայմանագրերի Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմի մասնակիցները փորձում էին հաշտեցնել իրենց անտոգոնիստական շա-

<sup>43</sup> Վ. Ի. Լենին, Երկր, հ. 31, էջ 269:

հերը և ստեղծել միասնական ճակատ ընդդեմ սովետական պետության: Իմպերիալիստական պետությունների շահերը հաշտեցնելու փորձերը ապարդյուն անցան, և Վերսալ-Վաշինգտոնյան պայմանագրերի սխալմամբ շուտով կանգնեց կրախի առաջ: Իմպերիալիստական հակասությունների կծիկը գնալով մեծացավ, վերաբաժանված աշխարհը գլորվում էր դեպի նոր, ավելի մեծ պատերազմի հորձանուտը:

Նախկինմերիյան շրջանում խաղաղության համար մղած պայքարում սովետական պետությունը մեծ տեղ է հատկացնում պայքարի միջազգային-իրավական ձևերին: 1921 թ. Սովետական Ռուսաստանը բարեկամության պայմանագրեր է կնքում Արևելքի երկրների հետ (Պարսկաստան, Աֆղանստան, Քուրդիստան), որոնք մեծ չափով նպաստում են այդ երկրների քաղաքական ու տնտեսական ինքնուրույն դարգացմանը: Այդ պայմանագրերով Սովետական Ռուսաստանը հրաժարվում է այն բոլոր արտոնություններից և առավելություններից, որ ձեռք էր բերել ցարական Ռուսաստանը նախկինում կնքած միջազգային պայմանագրերով:

Խաղաղ շինարարության շրջանում սովետական պետությունը պայմանագրեր է կնքում Անգլիայի, Գերմանիայի, Նորվեգիայի, Ավստրիայի, Իտալիայի հետ, նրանց հետ մտնելով առևտրական կապերի մեջ: Այդ պայմանագրերից առանձնապես կարևոր էր 1922 թ. ապրիլի 16-ին, Ճենովայի կոնֆերանսի ժամանակ, Գերմանիայի հետ կնքած պայմանագիրը, որը սովետական դիվանագիտության խոշոր հաղթանակն էր՝ պետությունների միջև իրավահավասարության և միմյանց ներքին գործերին չմիջամտելու հիման վրա հաշտ հարաբերություններ ու համագործակցություն հաստատելու համար մղած պայքարում:

1924—1925 թթ. Սովետական Միությանը ճանաչում և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ են հաստատում մի ամբողջ շարք պետություններ՝ Անգլիան, Իտալիան, Նորվեգիան, Շվեդիան, Դանիան, Ֆրանսիան, Ճապոնիան: ՍՍՀՄ-ին ճանաչելու ունեն կարևոր քաղաքական և միջազգային-իրավական նշանակություն, բուրժուական պետությունները ճանաչում էին ՍՍՀՄ-ի որպես պետության բոլոր սուվերեն իրավունքները, այդ թվում նաև սովետական օրենսդրության իրավական ուժը:

Սովետական պետության խաղաղափրական քաղաքականության դրսևորման լավագույն օրինակ հանդիսացավ 1924 թ. մայիսի 31-ին Չինաստանի հետ կնքած «Սովետական Միության և Չինական հանրապետության միջև հարցերի կարգավորման ընդհա-

նուր սկզբունքների մասին համաձայնագիրը», որով Սովետական Միությունը ոչնչացված և ուժը կորցրած համարեց այն բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնք կնքվել էին ցարական կառավարության ու Չինաստանի միջև և շոշափում էին շին ժողովրդի սուվերեն իրավունքներն ու ազգային շահերը: Հարյուրամյակների ընթացքում Չինաստանը առաջին անգամ մեծ տերություն կողմից ճանաչվում էր որպես իրավահավասար և անկախ պետություն: Այդ պայմանագիրը միջազգային-իրավական բացառիկ աշակցություն էր շին ժողովրդին՝ իմպերիալիզմի դեմ նրա մղած պայքարում: 1924 թ. սեպտեմբերի 11-ին «Չինաստանի բնակչությանը» հղած դիմումում Սույն Յաթ Սենը նշում էր. «Մենք գիտենք, որ Սովետները երբեք անարդար գործի կողմը չեն կանգնում: Սթի նրանք մեր կողմն են, կնշանակի ճշմարտությունը մեր կողմն է, և ճշմարտությունը չի կարող չհաղթանակել, իրավունքը չի կարող չհաղթել բռնությանը»<sup>44</sup>:

Սովետական Միությունը օգտագործում էր ամենաաննշան հնարավորությունն անգամ՝ միջազգային իրավունքի դեմոկրատական սկզբունքներն արմատավորելու, խաղաղությունը փրկելու համար: Այդ նկատառումով է, որ 1934 թ. սեպտեմբերին, ընդունելով 34 պետությունից ստացված հրավերը, Սովետական Միությունը մտավ Ազգերի լիգայի մեջ, որի կազմից 1933 թ. հունացել էին միլիտարիստական Ճապոնիան և ֆաշիստական Գերմանիան: Ժիշտ է Ազգերի լիգան այն միջազգային կազմակերպությունը չէր, որ կարողանար ապահովել միջազգային խաղաղությունը, բայց և այնպես սովետական երկիրը նրա տրիբունան օգտագործում էր խաղաղասիրական ուժերը մոբիլիզացնելու նպատակով:

Ազրեսիվ պատերազմների աճող վտանգը հրամայաբար թելադրում էր միջազգային համագործակցություն՝ կոլեկտիվ անվտանգություն ապահովելու, ազրեսորին համատեղ սանձաձարելու համար: Այդ նպատակին էին ծառայում Սովետական Միության ձեռնարկած միջազգային-իրավական միջոցառումները և դիվանագիտական քայլերը: Կոլեկտիվ անվտանգության շահերից ելնելով, ՍՍՀՄ-ը փոխադարձ օգնության պայմանագրեր կնքեց բուրժուական հանրապետություններ՝ Ֆրանսիայի (2/V 1935 թ.) և Չեխոսլովակիայի (16/V 1935 թ.) հետ: Ազգերի լիգայի կանոնագրության 16 հոդ. համապատասխան պայմանագիր կողմերը

<sup>44</sup> «Международная жизнь», 1925 г., № 2, стр. 115.



փոխադարձաբար պարտավորվում էին միմյանց անհապաղ ցույց տալ ուղղմական և այլ օգնություն այն դեպքում, երբ կողմերից մեկը հվրոպական պետություններից որևէ մեկի շնորհիվ չհարձակմանը ենթարկվի:

Սովետական Միությունը հետևողականորեն մերկացնում էր կողմերի լիզայում ղեկավար դեր խաղացող Անգլիայի և Ֆրանսիայի՝ ալերեսորների գործին «չմիջամտելու» քաղաքականությունը և անձնական օրինակ էր ցույց տալիս ստանձնած միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու ասպարեզում՝ խաղաղության և ժողովուրդների անվտանգության ասպնովման համար:

Մյուսխենյան դավադրության ժամանակ, երբ արևմտյան «ղեմոկրատիայի» երկրները ուխտադրժորեն հրաժարվեցին իրենց միջազգային-իրավական պարտավորություններից և Չեխոսլովակիան հանձնեցին ֆաշիստական Գերմանիայի հռչումանը, միայն Սովետական Միությունը հավատարիմ գտնվեց Չեխոսլովակիայի հանդեպ ունեցած միջազգային պայմանագրային պարտավորություններին:

Անգլիայի և Ֆրանսիայի հրաժարվելը՝ Սովետական Միության հետ համատեղ միջոցառումներ ձեռնարկելու ընդդեմ ֆաշիստական ագրեսորների, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստների զիջումները հիտլերյան Գերմանիային և ֆաշիստական Իտալիային՝ ագրեսիան ընդդեմ Սովետական Միությանն ուղղելու նպատակով, վերջին հաշվով հանգեցրին երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերժմանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվեց 1939 թ. սեպտեմբերի 1-ին, երբ ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա: Ֆաշիստական Գերմանիան կարճ ժամանակամիջոցում օկուպացրեց Եվրոպայի շատ երկրներ, իսկ 1941 թ. հունիսի 22-ին ուխտադրժորին հարձակվեց Սովետական Միության վրա, ղեկտեմբերի 6-ին Ճապոնիան, առանց պատերազմ հայտարարելու, հարձակվեց Անգլիայի և ԱՄՆ-ի տիրությունների վրա՝ խաղաղ օվկիանոսի ավազանում: Պատերազմը բոլոր կողմերով համաշխարհային բնույթ ստացավ:

Հիտլերյան կոալիցիայի և Ճապոնիայի դեմ մղած երկրորդ համաշխարհային պատերազմը ուներ հակաֆաշիստական բնույթ: Պատերազմում Սովետական Միության հիմնական նպատակն էր՝ սովետական երկրի պետական շահերի պաշտպանությունը, ղեմոկրատական կարգերի վերականգնումն ու ամրապնդումը Եվրո-

պայում, ֆաշիզմի վերացումը, նոր ագրեսիայի հնարավորության կանխումը և իրավահավասար ժողովուրդների համակողմանի խաղաղ համագործակցության ասպնովումը: ԱՄՆ-ը և Անգլիան նպատակ ունեին ազատվել իրենց մրցակիցներից (Գերմանիա, Ճապոնիա) և հասնել տիրապետող դիրքի ամբողջ աշխարհում: Այդ երկրների կառավարող շրջանները շարունակում էին նախապատերազմյան մյուսխենյան քաղաքականությունը, ամեն կերպ խոչընդոտելով Սովետական Միության հետ համակողմանի համագործակցությանը: Չնայած այդ դիմադրությանը, սովետական դիվանագիտությունը հաջողվեց հիմնադրել և գլխավորել հակահիտլերյան կոալիցիա: Պատերազմի ամբողջ ընթացքում ԱՄՆ-ը և Անգլիան սաբոտաժի էին ենթարկում միջազգային պայմանագրերով իրենց ստանձնած պարտավորությունները: Բավական է ասել, որ 1942 թվականի փոխարեն նրանք երկրորդ ճակատ բացեցին միայն 1944 թ. հունիսին, երբ հիտլերյան Գերմանիայի ողնաշարը արդեն չարդված էր, և սովետական բանակը ցույց տվեց, որ ինքը ի վիճակի է սեփական ուժերով վերջնականապես ծնկի բերել ֆաշիստական Գերմանիային և ազատագրել ամբողջ Եվրոպան:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կնքած համաձայնագրերից և տեղի ունեցած միջազգային կոնֆերանսներից հակահիտլերյան կոալիցիայի ամրապնդման տեսակետից միջազգային-իրավական և քաղաքական կարևոր նշանակություն ունեցան ՍՄՇՄ-ի և Մեծ Բրիտանիայի միջև 1941 թ. հուլիսի 12-ին կնքված համաձայնագիրը՝ ֆաշիստական Գերմանիայի դեմ համատեղ գործողությունների մասին և հիտլերյան Գերմանիայի դեմ պատերազմում դաշինքի ու հուպատերազմյան փոխօգնության վերաբերյալ անգլո-սովետական 1942 թ. մայիսի 26-ի պայմանագիրը: 1941 թ. հուլիսի 18-ի սովետա-չեխոսլովակյան համաձայնագիրը՝ Գերմանիայի դեմ պատերազմում փոխօգնության մասին, սեպտեմբերի 27-ի ուղղմական համաձայնագիրը և 1943 թ. ղեկտեմբերի 12-ի պայմանագիրը՝ բարեկամության փոխօգնության և հուպատերազմյան համագործակցության վերաբերյալ: 1941 թ. հուլիսի 30-ի սովետա-լեհական համաձայնագիրը Գերմանիայի դեմ պատերազմում փոխօգնության մասին, 1941 թ. օգոստոսի 14-ի ուղղմական համաձայնագիրը: 1941 թ. ղեկտեմբերի 1-ի ղեկլարացիան բարեկամության և փոխօգնության, հիտլերյան հանցագործներին պատժելու և նոր միջազգային կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև 1945 թ. ապրիլի 21-ի՝ բարեկամության, փոխադարձ օգնու-

թյան և հուպատեհարգման համագործակցության մասին պայմանագիրը. 1942 թ. փետրվարի 3-ի սովետա-անգլո-իրանական դաշնակցային պայմանագիրը. 1942 թ. հունիսի 11-ի սովետա-ամերիկյան համաձայնագիրը՝ ագրեսիայի դեմ մղվող պատերազմում փոխադարձ օգնության սկզբունքների մասին. 1944 թ. դեկտեմբերի 10-ի սովետա-Ֆրանսիական դաշինքի և փոխադարձ օգնության պայմանագիրը. 1945 թ. օգոստոսի 14-ի սովետա-չինական բարեկամության և դաշինքի պայմանագիրը, ինչպես նաև Չինչանչունյան երկաթուղագծի, Պորտ-Արտուրի և Դալնի նավահանգրստի մասին կնքված համաձայնագրերը և այլն:

Հակահիտլերյան կռալիցիայի հնարավորությունները նպատակաւաց օգտագործելու տեսակետից կարևոր էր ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի ներկայացուցիչների Մոսկովյան կոնֆերանսը (29/IX—1/X 1941 թ.): Այստեղ որոշում ընդունվեց ընդհանուր ռեսուրսները բաշխելու և լավագույն ձևով օգտագործելու վերաբերյալ: 1942 թ. հունվարի 1-ին ընդունվեց 26 պետությունների (Միավորված Ազգերի) Վաշինգտոնի ղեկավարացիան՝ Գերմանիայի դեմ համատեղ պայքարի մասին, որը հաստատում էր, այսպես կոչված, «Ատլանտյան խարտիան» (ԱՄՆ-ի պրեզիդենտի և Մեծ Բրիտանիայի պրեմիերի 1941 թ. օգոստոսի 14-ի հայտարարությունը մամուլի ներկայացուցիչներին): 1941 թ. սեպտեմբերի 24-ին Լոնդոնի միջազնակցային խորհրդում ՍՍՀՄ-ը միացավ Ատլանտյան խարտիային, նշելով, որ նրա սկզբունքները պետք է համակերպվեն հանգամանքների, այս կամ այն երկրի կարիքների և պատմական առանձնահատկությունների հետ: Սովետական կառավարությունն ընդգծեց, որ ժողովուրդների առջև դրված գլխավոր խնդիրը տնտեսական և ռազմական բոլոր ռեսուրսները կենտրոնացնելն է՝ հիտլերյան հորդանների լծից ժողովուրդներին ազատազրելու նպատակով: Ատլանտյան խարտիան միջազգային-իրավական նշանակություն ձեռք բերեց, երբ պետություններն այն ընդունեցին որպես «նպատակների և սկզբունքների ընդհանուր ծրագիր»: ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի Մոսկովյան կոնֆերանսում (19—30/IX 1943 թ.) երեք մինիստրները ընդունեցին ղեկավարացիաներ՝ Համընդհանուր անվտանգության, Իտալիայի և Ավստրիայի մասին: Առաջին ղեկավարացիային միացավ Չինաստանը: Միաժամանակ հրապարակվեց Բ. Վ. Ստալինի, Յ. Ռուզվելտի և Ու. Չերչիլի ղեկավարացիան՝ կատարած զազանությունների համար հիտլերականների պատասխանատվության վերաբերյալ:

Մոսկովյան կոնֆերանսին հաջորդեց երեք տերությունների՝

ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի ղեկավարների Քեհրանի կոնֆերանսը (28/XI—1/XII 1943 թ.): Քեհրանի կոնֆերանսը ղեկավարացիա հրապարակեց Գերմանիայի դեմ պատերազմում համատեղ գործողությունների վերաբերյալ, ղեկավարացիա Իրանի մասին, որով տերությունները երաշխավորում էին նրա լիակատար անկախությունը, սովերենությունը և տերիտորիալ անձեռնմխելիությունը:

Համընդհանուր անվտանգության վերաբերյալ Մոսկովյան (1943 թ.) ղեկավարացիային համապատասխան Գումբարտոն-Օկսում (Վաշինգտոնում 1944 թ. օգոստոս-սեպտեմբեր) հրավիրվեց զաշնակից երեք մեծ տերությունների ներկայացուցիչների կոնֆերանսը, որտեղ մշակվեցին ապագա միջազգային կազմակերպության կանոնադրության վերաբերյալ առաջարկություններ:

Կարևոր միջազգային-իրավական ակտեր ընդունվեցին երեք տերությունների կառավարությունների ղեկավարների Ղրիմի կոնֆերանսում (4/II—12/II 1945 թ.): Կոնֆերանսը հրապարակեց կոմյունիկե, որի մեջ ֆիկսացվեց երեք տերությունների պայմանավորվածությունը. նացիստական Գերմանիայի ջախջախման, Գերմանիայի օկուպացման և նրա նկատմամբ դաշնակցային վերահսկողության սահմանման, Գերմանիայից զանձվելիք ռեպարացիաների, Միավորված Ազգերի կոնֆերանսի, Լեհաստանի և Հարավսլավիայի մասին, ազատագրված Եվրոպայի վերաբերյալ ղեկավարացիայի, արտաքին գործերի Վիեննայի խորհրդակցության, խաղաղությունը կազմակերպելու, ինչպես նաև պատերազմը վարելու գործում միասնության հարցերի շուրջը: Կոնֆերանսում որոշումներ ընդունվեցին Հեռավոր Արևելքի և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Նույն, 1945թ. ապրիլի 25-ից մինչև հունիսի 26-ը տեղի ունեցավ Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսը, որտեղ հիմնադրվեց Միավորված Ազգերի Կազմակերպությունը և ընդունվեց նրա կանոնադրությունը, ՄԱԿ-ի միջազգային գատարանի Ստատուտը:

Թվարկված միջազգային-իրավական ակտերը կարևոր դեր էադաջին հիտլերյան Գերմանիայի դեմ մղած պատերազմում խաղաղասեր ժողովուրդների հաղթանակն ապահովելու համար: Այդ հաղթանակը վրա հասավ 1945 թ. մայիսի 9-ին, հաղթանակ, որը ձեռք բերվեց Սովետական Միության ամենավճռական դերի պայմաններում: 1945 թ. հունիսի 5-ին ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Յրանսիայի ներկայացուցիչները ստորագրեցին ղեկավարացիա Գերմանիայի պարտության և Գերմանիայում գերագույն իշխանու-

թյունը դաշնակից շորս տերությունների կառավարությունների կողմից ստանձնելու մասին:

Եվրոպայում պատերազմն ավարտվելուց հետո, 1945 թ. հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 2-ը տեղի ունեցավ երեք մեծ տերությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի Պոտսդամի կոնֆերանսը, որի նպատակն էր լուծել Եվրոպայում պատերազմն ավարտվելու կապակցությամբ ծագած միջազգային անհետաձգելի պրոբլեմները: Ի վարգացումը Ղրիմի կոնֆերանսի որոշումների հռչակվեցին երեք մեծ տերությունների համաձայնեցված քաղաքականության հիմունքները՝ հուպատերազմյան Եվրոպայի կազմակերպման վերաբերյալ: Որոշում ընդունվեց ստեղծել Արտաքին գործերի մինիստրների խորհուրդ՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդ խորհրդի խնդիրն էր՝ նախապատրաստել պարտված երկրների հետ կնքվելիք հաշտության պայմանագրերի նախագծերը: Կոնֆերանսը սահմանեց այն քաղաքական և տնտեսական սկզբունքները, որոնցով պետք է ղեկավարվեին Գերմանիան օկուպացնող շորս տերությունները: Որոշումները նախատեսում էին, որ ապագա Գերմանիան պետք է լինի միասնական, դեմոկրատական, խաղաղասեր պետություն: Սահմանվեց Գերմանիայից զանձվելիք ռեպարացիայի շահը, որոշումներ ընդունվեցին գերմանական նավատորմի և առևտրական նավերի, թյունիկսբերդ քաղաքի և նրա շրջակայքի, պատերազմական հանցագործներին պատժելու, Ավստրիայի, Լեհաստանի և այլ հարցերի վերաբերյալ:

Պատերազմի ընթացքում ձևավորվեցին միջազգային-իրավական նոր ինստիտուտներ ու հասկացություններ, ինչպես, օրինակ, անվերապահ կապիտուլիացիան, զինադադարի համաձայնագրում ապագա հաշտության պայմանագրի դրույթներն ու պայմանները նախատեսելը, «համատեղ պատերազմող կողմի» կացությունը, պարտված երկրների օկուպացված տերիտորիաներում դաշնակցային վերահսկիչ խորհուրդների և հանձնաժողովների ստեղծումը, միջազգային դատարաններում և ազգային դատարաններում պատերազմի մեղավորներին ու հանցագործներին պատժելը, խնամակալության սիստեմը և խնամարկյալ տերիտորիաները, մեծ տերությունների միաձայնության սկզբունքը և այլն:

Սովետական Միության գլխավորած խաղաղասեր ուժերի պատմական հաղթանակը երկրորդ համաշխարհային պատերազմում ընդգեմ ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի հանգեցրեց արմատական փոփոխությունների հա-

մաշխարհային մազտարով: Թուլացան միջազգային իմպերիալիզմի դիրքերը, ուժեղացան ազգային-ազատագրական շարժումները և որ զլխավորն է՝ ասպարեզ եկան նոր սոցիալիստական պետություններ, ձևավորվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, ընդլայնվեց միջազգային իրավունքի սոցիալիստական ըսկզբունքների կիրառման ոլորտը: Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ձևավորումը պայմանավորեց նոր տիպի միջազգային հարաբերությունների առաջացումը՝ սոցիալիստական երկրների միջև, միջազգային իրավունքի հետագա զարգացումը սկսեց ընթանալ պիտությունների, սոցիալիստական համագործակցության ավելի ու ավելի աճող ներգործության ներքո:

Սովետական Միության և սոցիալիստական մյուս պետությունների ազդեցության հետևանքով միջազգային իրավունքում սեղի են ունեցել էական փոփոխություններ: Այժմ միջազգային իրավունքը խաղաղության գործիք է և ուղղված է պատերազմի դեմ, նա ունի հակազառության բնույթ: Սոցիալիզմի և ազգային-ազատագրական ուժերի աճը, իմպերիալիզմի զաղութային սիստեմի քայքայումը հանգեցրին ժամանակակից միջազգային իրավունքի գործողության տարածական ոլորտի ընդլայնմանը, շրջանապետությունից մեկընդմիշտ դուրս մղվեց պետություններն ու ժողովուրդներին այսպես կոչված «քաղաքակիրթ» և «ոչ քաղաքակիրթ» խմբերի բաժանելու իմպերիալիստական պրակտիկան, միջազգային իրավունքը դադարեց իմպերիալիստական նվաճումներն արդարացնելու իրավական միջոց լինելուց: Այժմ միջազգային հարաբերություններին մասնակցում են ժողովուրդները՝ անկախ իրենց քաղաքական, տնտեսական և կուլտուրական զարգացման մակարդակից: Ժամանակակից միջազգային իրավունքը, նրա նորմերի ստեղծմանը մասնակցող պետությունների շրջանակի տեսակետից վեր է ածվել համաշխարհային միջազգային իրավունքի, որի կոշումն է համաշխարհային խաղաղության և ժողովուրդների անվտանգության ապահովումը:

Արդի դարաշրջանում, երբ տեխնիկական հեղաշրջումը մարդկությունը կանգնեցրել է շերմամիջուկային զենքի առկայության փաստի առաջ, և երրորդ համաշխարհային պատերազմի սանձադեբումը իմպերիալիստական պետությունների կողմից մարդկության համար կործանարար կլինի, միջազգային իրավունքի դերը, որպես միջպետական հարաբերությունների կարգավորիչի, ավելի ու ավելի է մեծանում: Սովետական Միությունը, սոցիալիստական մյուս պետությունները և խաղաղասեր երկրները անզաղրում պայ-

քարում են հանուն միջազգային իրավունքի հանրաձայնաչ սկզբունքների ու նորմերի անշեղ կատարման բոլոր պետությունների կողմից՝ անկախ նրանցում իշխող սոցիալ-տնտեսական կարգերի ու կառավարման ձևի: Սովետական Միությունը առաջվա պես պաշտպանում է իր պրակտիկայում հետևողականորեն իրականացնում է միջազգային իրավունքի ընդհանուրի ճանաչումն ստացած սկզբունքները՝ պետությունների սովերենությունն ու իրավահավասարությունը, միմյանց ներքին գործերին չմիջամտելը և այլն: Նա հետևողականորեն իրականացնում է սոցիալիստական պետության արտաքին քաղաքականությունն արտացոլող միջազգային-իրավական ըսկզբունքները՝ սոցիալական տարբեր սիստեմների պատկանող պետությունների խաղաղ դոչակցության սկզբունքը, ազդեխիվ պատերազմներն արգելելու, ազգերի ինքնորոշման սկզբունքները, միջպետական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքը և այլն: Խաղաղության համար մղվող պայքարում Սովետական Միությունը հասավ այն բանին, որ այդ սկզբունքները ճանաչվեցին բոլոր կամ պետությունների ճնշող մեծամասնության կողմից և տեղ գտան միջազգային իրավունքի ազբյուրներում, մասնավորապես ՄԱԿ-ի կանոնադրության մեջ:

Ետպատերազմյան շրջանում միջազգային իրավունքի հատուկ նշուշները զարգացել ու հարստացել են նոր նորմերով և ինստիտուտներով: Ծագել են նոր միջազգային կազմակերպություններ, որոնք ծառայում են խաղաղության պահպանմանը և պետությունների միջև տնտեսական, կուլտուրական համագործակցության հաստատմանն ու ամրապնդմանը: Այդ կազմակերպություններից են՝ ՄԱԿ-ը, նրա մասնագիտացված հիմնարկությունները, առանձին ուղղության կազմակերպությունները՝ Արաբական երկրների լիգան, Հյուսիսային խորհուրդը, Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը, Տնտեսական փոխօգնության խորհուրդը, Ամերիկյան պետությունների կազմակերպությունը, որը ԱՄՆ-ի իմպերիալիստական քաղաքականության գործիքի զեր է խաղում, Աֆրիկյան միասնության կազմակերպությունը և այլն:

Չեզոքությունը են միջազգային-իրավական նորմեր և ինստիտուտներ ազդեխիան կանխելու և ճնշելու ասպարեզում, որոնք տեղ են գտել երկկողմանի փոխօգնության պայմանագրերում, Նյուրբերգի և Տոկիոյի միջազգային տրիբունալների կանոնադրություններում և այլ միջազգային ակտերում: Պահպանվել և զարգացել են միջպետական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու միջոցները՝ «բարի ծառայություն», միջնորդություն, խառն հանձնաժո-

ղություն, միջնորդ դատարաններ և այլն: Միաժամանակ երևան է եկել ՄԱԿ-ի միջազգային դատարանը: Լայն շափով կիրառվում են անմիջական դիվանագիտական բանակցությունները, տարբեր մակարդակներով կոնֆերանսներն ու խորհրդակցությունները:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդլայնվել է մշտական շեղություն ինստիտուտի գործողության ոլորտը, անել է շեղություն հետևող պետությունների քանակը:

Հատկանշական է, որ մարդու անձին այժմ ավելի տեղ է հատկացվում միջազգային իրավունքում: Սովետական Միության ակտիվ ջանքերի շնորհիվ միջազգային իրավունքի սկզբունքի նշանակություն է ձեռք բերել և ամրապնդվել ՄԱԿ-ի կանոնադրության մեջ մարդու, անկախ նրա ազգային, ռասայական պատկանելիությունից, լեզվից, կրոնից, սեռից, իրավունքները հարգելու ըսկզբունքը, ձևավորվել է մարդու իրավունքների միջազգային պաշտպանության ինստիտուտը, որը պաշտոնապես ձևակերպվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ին ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայում, 1948 թ. կնքվել է Կոնվենցիա գեներալը (ցեղասպանություն) կանխելու և նրա համար պատժելու վերաբերյալ:

Տերիտորիալ հարցերի միջազգային-իրավական կարգավորման հարցում, հաշտության մասին սովետական դեկրետի դրույթների ազդեցության ներքո, միջազգային իրավունքում գնալով տեղ է գտնում այն սկզբունքը, ըստ որի տերիտորիայի պատկանելիության հարցը պետք է լուծվի նրա բնակչության՝ աղատուրեն արտահայտված ցանկության հիման վրա:

Միջազգային իրավունքի գեմոկրատական զարգացումը իր արտացոլումն է գտել կողիֆիկացման ասպարեզում: 1958 թ. ժնեվում կնքվեց շոբա կոնվենցիա՝ տերիտորիալ ծովի և հարակից գոտու, բաց ծովի, կոնտինենտալ շեֆի (մայր ցամաքային ելուստ) և բաց ծովի կենդանի պաշարների ու ձկնորսության վերաբերյալ: 1959 թ. Վաշինգտոնի կոնֆերանսում կնքվեց պայմանագիր Անտարկտիկայի մասին: Տիեզերքը նվաճելու կապակցությամբ ձեռնարկվում է տիեզերական իրավունքը:

Կողիֆիկացվել են դեպանական իրավունքի և իմունիտետի վերաբերող հիմնական նորմերը: 1961 թ. Վիեննայում ընդունվեց դիվանագիտական հարաբերությունների վերաբերյալ կոնվենցիան, իսկ 1963 թ.՝ Հյուպատոսական հարաբերությունների մասին կոնվենցիան:

Տնտեսական համագործակցության ասպարեզում ամրա-

պընդհել և հաստատուն ճանաչում է ստացել սեփականության երկու ձևերի իրավահավասարության սկզբունքը: Ձևավորվել են տնտեսական և կոլտուրական համագործակցության նոր ինստիտուտներ, որոնք կիրառվում են սոցիալիստական երկրների փոխհարաբերություններում:

Նախկինում բերյան շրջանում որոշակի փոփոխություններ են կատարվել պատերազմի օրենքների և սովորույթների ասպարեզում: 1925 թ. ստորագրվեց Ժնևի արձանագրությունը՝ պատերազմի քիմիական և մանրէաբանական միջոցներն արգելելու մասին, 1936 թ. Լոնդոնի արձանագրությունը՝ սուլանավերի կողմից՝ առանց նախազգուշացնելու և ուղևորների ու անձնակազմի անվտանգությունն ապահովելու, նավերը խորտակելն արգելելու վերաբերյալ, 1949 թ. ընդունվեց Ժնևի կոնվենցիան պատերազմի զոհերի պաշտպանության վերաբերյալ: Սովետական Միության և զեմոկրատական այլ երկրների պահանջով առաջին անգամ ըսկզբունք ընդունվեց, ըստ որի պատերազմի օրենքներն ու սովորույթները տարածվում են քաղաքացիական և զաղութային պատերազմների վրա, պատերազմողի իրավունքները տարածվեցին պարսիկականների և դիմագրության շարժման մասնակիցների վրա և այլն:

Նախկինում բերյան շրջանում միջազգային իրավունքի բուրժուական գիտության կողքին ներկան եկավ մարքսիզմ-լենինիզմի հիմունքների վրա կառուցված միջազգային իրավունքի սովետական գիտությունը:

Միջազգային իրավունքի բուրժուական գիտությունը, կատարելով իր սոցիալական դերը, ամեն հնարք գործադրում է միջազգային իրավունքն ու նրա գիտությունը ի սպաս դնելու կապիտալիզմի խարխուլող դիրքերը միջազգային ասպարեզում պահպանելուն և ամրապնդելուն, արդարացնում և «հիմնավորում» է իմպերիալիզմի ագրեսիվ վարքագիծը: Դրան համապատասխան բուրժուական գիտությունը ասպարեզ է հանել մի շարք ուղղություններ, որոնք բոլորն էլ, վերջին հաշվով, ծառայում են միևնույն հետադիմական նպատակներին: Այդ ուղղություններն են<sup>45</sup>

Նախապիվիզմը, որն իրենից ներկայացնում է պոզիտիվիզմի համակցումը նեոկանտականության հետ, մի կողմ է նետում հին պոզիտիվիզմի բոլոր դրական կողմերը (գործող նորմերի սխառմատիվացիան ու դրանց ստույգ իմաստի սահմանումը, իրավա-

կան պրակտիկայի հետադուրումը և այլն), ու նպատակ ունի ամեն կերպ քողարկել իմպերիալիստական պետության և իրավունքի շահագործողական բնույթը: Նորմատիվիզմի կարկառուն ներկայացուցիչներից է ամերիկյան (ծագումով ավստրիացի) իրավաբան Հանս Քելզենը: Քելզենը հորինել է ունիվերսալ համաշխարհային իրավակարգի արհեստական սխեմա, որի մեջ մտնում են ինչպես միջազգային իրավակարգը, այնպես էլ բոլոր ազգային իրավակարգերը: Այդ սխեմայում միջազգային իրավունքը վեր է դասվում ազգայինից: Հանս Քելզենի ասելով՝ «ամեն մի առարկա, որը կարգավորվում է կամ կարող է կարգավորվել ազգային իրավունքով, կարող է կարգավորվել նաև միջազգային իրավունքով»: Նա լիովին անտեսում է միջազգային իրավունքի առանձնահատկությունները, որի նորմերը ստեղծվում են պետությունների համաձայնությամբ և որի կարգավորման հարցերը դուրս են գալիս մեկ պետության իրավասության շրջանակներից: Նա միջազգային իրավունքի սուբյեկտ է հայտարարում առաջին հերթին ինդիվիդուներին, ապա նոր միայն պետություններին, վերջիններիս բնութագրելով որպես միջնորդ ինդիվիդուների և միջազգային իրավակարգի միջև: Քելզենը բացասում է պետական սուվերենության գաղափարը: «Եթե մենք ընդունում ենք,—ասում է նա,—որ պետությունը իրավաբանորեն ենթարկված է միջազգային իրավունքին որպես առավել բարձր իրավակարգի, քան ազգային իրավակարգը, ապա պետությունը, այսինքն՝ ազգային իրավակարգը, չի կարող գերազույն իրավական իշխանություն լինել»:

Միջազգային իրավունքը դիտելով որպես իրավական նորմերի ամբողջ համաշխարհային հիերարխիայի հիմք, միջազգային իրավունքի հիմքում նա գնում է իբրև թե իրավունքից դուրս գտնվող «հիզոթեաիկ նորման»—«պայմանագրերը պետք է կատարվեն»: Նրա ասելով պետության ամեն մի բունի գործողություն ըստ էության կամ «դեիլիկտ» է (իրավախախտում), կամ «սանկցիա», ուստի և ագրեսիվ պատերազմը կարող է «օրինական» լինել, եթե որպես սանկցիա այն ուղղված է պատերազմ չհանդիսացող դեիլիկտի դեմ: Այսպիսով, Քելզենը մի կողմ է նետում միջազգային իրավունքի այն սկզբունքը, ըստ որի պետության ռազմական գործողությունները կարող են օրինական համարվել, եթե ձեռնարկվել են ինքնապաշտպանության նպատակով՝ ընդդեմ կատարված ագրեսիայի:

Սովորաբար, որը առածին ուղղություն է միջազգային իրավունքի բուրժուական ժամանակակից գիտության մեջ, էլնում է

<sup>45</sup> Տե՛ս Դ. И. Левин, История международного права, էջ 107—133:  
68

իրավունքի որպես «սոցիալական համերաշխության» բնորոշումից, պետության կամքը և իրավական անձնավորությունն ու միջազգային իրավասուբյեկտությունը, ինչպես նաև պետական սուվերենությունը բացասելուց: Սոցիալարիստներն առաջ են քաշում և՛ պետությունից, և՛ ինդիվիդից վեր կանգնած «գերագույն միջազգային օրինականություն» կատեգորիան:

Միջազգային իրավունքի գիտության մեջ քայլ ուղղության առավել աչքի ընկնող ներկայացուցիչն է Ֆրանսիացի իրավաբան Ժորժ Սոսիլը, որը աշխարհը պատկերացնում է որպես «մարդկային հաղորդակցումների մի անվերջ շղթա», որոնք ինդիվիդներին, անհատներին միավորում են «համերաշխության» հիման վրա: Պետությունը հանդես է գալիս որպես «հողակապ» միջազգային և ներպետական «հաղորդակցությունների» միջև, և Սոսիլի ասելով, պատմա-քաղաքական բնույթի, արտաքին ու պատահական մոմենտ է հանդիսանում: Սոսիլի բնորոշմամբ միջազգային իրավակարգը «ներսոցիալական իրավակարգ է», վեր է կանգնած պետական իրավակարգերից, որոնք միջնորդի դեր են կատարում նրա և ներպետական սոցիալական խմբերի միջև «Հարաբերություններն առանձին անձերի միջև,—գրում է նա,—իրենցից ներկայացնում են միջազգային հաղորդակցման բուն էությունը: Եվ միջազգային հանրային իրավունքի կամ միջկառավարական իրավունքի իմաստը կաշանում է նրանում, որպեսզի գյուրին գարձնի այդ միջանհատական հարաբերությունները»:

Սոսիլը հայտարարում է, որ միջազգային իրավունքի սուբյեկտներն են հանդիսանում բացառապես ինդիվիդները, նա բացասում է պետությունների միջազգային իրավասուբյեկտությունը, պետական սուվերենությունը և այլն: Միջազգային իրավունքի ապագա զարգացումը Սոսիլը տեսնում է պետական սուվերենության լիակատար վերացման և պետությունների գոյություն ունեցող օրիստեմը համաշխարհային ֆեդերացիայի վերանելու մեջ: «Միջազգային իրավունքը կառաջադիմի այն շափով, որ շափով նա կդառնա վերպետական»,—ասում է Սոսիլը: Նա Քելզենի նման «համաշխարհային կառավարություն» ռեակցիոն գաղափարի կողմնակիցներից է:

Սոցիալոգիական և ռեալիստական ուղղությունները ավելի հեռուն են գնում միջազգային իրավունքի նորմերի նշանակության և գնահատման հարցում: Ամերիկյան գրականության մեջ այս սոցիոլոգիական ուղղության առավել աչքի ընկնող ներկայացուցիչը Հանս Մորգենթաունն է: Նա գտնում է, որ միջազգային իրավունքի

հիմնական թուլությունը նրա կողմից ուժի գործոնի թերազնահատումն է, և կոչ է անում «իրավունք», «խաղաղություն», «կարգ» և այլ վերացական հասկացություններից անցնել միջազգային քաղաքականության, որի առարկան է մեծ տերությունների հարատև պայքարը հանուն իշխանության: Մորգենթաունի ասելով միջազգային իրավունքը «իրավունքի պրիմիտիվ տիպ է», իսկ կառավարություններն ամեն կերպ աշխատում են թուլացնել նրա նորմերի ներգործությունը իրենց քաղաքականության վրա և այդ նորմերը կիրառել միայն այն շափով, որ շափով թելադրում են նրանց «ազգային շահերը»: Մորգենթաունը հռչակում է «ազգային լուրի» գերադասությունը միջազգային իրավունքի նկատմամբ: Նրա կարծիքով պատերազմներից խուսափելու երաշխիքը «համաշխարհային պետության» մեջ է, որին պետք է հասնել «սուվերեն պետությունների այժմյան ընկերակցությունը» առաջինի վերափոխելու միջոցով:

Սոցիոլոգիական ուղղությունը միջազգային իրավունքի բուրժուական գիտության մեջ կոչված է արդարացնելու և քողարկելու առաջին հերթին ամերիկյան իմպերիալիզմի ռեակցիոն, էքսպանսիոնիստական քաղաքականությունը:

Ռեալիստական ուղղության ականավոր ներկայացուցիչներից է Մայքլս Մակգուգալը: Սրա կարծիքով միջազգային իրավունքը վճիռներ կայացնելու համաշխարհային պրոցես է, որի առարկան է համաշխարհային արժեքների բաշխումը, և այդ պրոցեսին մասնակցում են ոչ միայն պետությունները, այլև միջազգային կազմակերպությունները, կորպորացիաները, ինդիվիդները, քաղաքական կուսակցությունները, «ճնշման խմբերը», այսինքն՝ այն բոլոր ուժերը, որոնք ներգործում են մարդու վարքագծի և համաշխարհային արժեքները բաշխելու վճիռների կայացման վրա:

Սա ուղղությանը նույնպես բնորոշ է միջազգային իրավունքի բուրժուական գիտության մյուս ուղղությունների տեսողանցը՝ նսեմացնել պետության դերը միջազգային հարաբերություններում և օրինականության տեսք հաղորդել մոնոպոլիաների քաղաքականությանը և այլն:

Առավել լայն տարածում է ստացել բնական-իրավական ուղղությունը՝ ինչպես իրավունքի ընդհանրապես, է՛լ առավել միջազգային իրավունքի բուրժուական գիտության մեջ:

Ինչպես նշում է Գ. Ք. Ախնը, իրենց կոնկրետ բովանդակությամբ միջազգային իրավունքի բնական-իրավական տեսությունները նախահեղորեն տարբեր են: Դրանց մեջ առավել տարածվա-

ծը կղերական-կաթողիկական տեսություններն են՝ Ֆրանսիայում, Արևմտյան Գերմանիայում, Իտալիայում, Քեղզիայում, Հուլանդիայում, Պորտուգալիայում, Իսպանիայում: Միջազգային իրավունքի կաթողիկական թեորիաներից ամենատիպականը նեոթոմիստական թեորիաներն են, այսինքն՝ այն տեսությունները, որոնց հեղինակներն իրենց հայտարարում են թոմա Աբվինացու հետևորդներ: Այդ տեսությունների հեղինակներից են պորտուգալացի իրավաբան-միջազգայնագետ Ա. Գրյուհուլը, իտալացի իրավաբան-միջազգայնագետ Ջորջո դել Վեկիոն և ուրիշներ: Վեկիոյի կարծիքով ամեն մի իրավունքի, այդ թվում միջազգային իրավունքի վերջնական հիմքը «բնական բանականությունն է»: Միջազգային հարաբերությունների հիմքում ընկած կարևորագույն սկզբունքները՝ կնքված պայմանագրերի պարտադիր լինելը, միմյանց իրավունքի սուբյեկտ ճանաչելու պետությունների փոխադարձ պարտականությունը և այլն, նախաիրավաբանական և մետաիրավաբանական պոստուլատներ (նախադրություններ) են, որոնք վերաբերում են «ուսցիոնայ ճշմարտության այն կարգին, որի մեջ միջազգային իրավունքն իր իսկական հիմքն ունի»: Այդ էլ բնական իրավունքն է, որն ընկած է պոզիտիվ իրավունքի հիմքում: Դեյ Վեկիոն դատապարտում է այն պատկերացումը, ըստ որի պետությունը կարող է կատարել միջազգային իրավունքի միայն այն նորմերը, որոնք ընդունվել են իր սեփական կամքով, նման պատկերացումը հայտարարելով «անարխիստի հոմանիշ»: Նա մերժում է պետական սուվերենության գաղափարը, ասելով, որ իբր դա խանգարում է կալուն խաղաղություն հաստատելուն և որ վերջինիս համար անհրաժեշտ է «վերազգային կարգ»: «Կարևոր է նշել, — ասում է նա, — որ վերազգային կարգ ընդունելը պատմական անհրաժեշտություն է, որը չի կարող բացառվել կամ կախվածության մեջ դրվել որևէ մեկի բանահայեցողությունից: Նա բխում է մարդկային ոգու բնությունից և այն օրենքներից, որոնք նրան կառավարում են»: Այստեղ մենք տեսնում ենք նույն «համաշխարհային կարգի» գունազարդված տարատեսակը:

Արևմտագերմանական իրավաբան էդնստ Զաուերը կոչ է անում իրավունքի հասկացությունը, որպես պաշտոնական օրենքներում և հրամանագրերում հռչակված կարգադրությունների համակցություն, անշատել իրավունքի նյութական հասկացությունից, որը կարող է հայտնաբերվել «օբյեկտիվ արժեքին, արդարության իրավական գաղափարին մոտենալու դեպքում»: Զաուերի ասելով միջազգային իրավունքի նորմայի հիմք է հանդիսանում ոչ թե մի-

ջազգային իրավունքի սուբյեկտների ինքնապարտավորեցումը, այլ «ընդհանուր հնազանգությունը իրավունքին», որն արմատավորված է «մարդու բնության» մեջ և ստեղծում է «բնական-իրավական օրենքներ», ինչպիսին է «pacta sunt servanda» սկզբունքը: Այնուհետև Զաուերը բնական միջազգային իրավունքը կարծես թե նրկփեղկում է. «նախնական բնական իրավունք, որը հանդես է գալիս անմիջականորեն ակնհայտ կերպով և սկզբունքորեն արսույլուտ ու անփոփոխ է» և «արտածելի (выводимое) բնական իրավունք», որը բխում է առաջինից, համեմատաբար առաձգական է և բովանդակում է այնպիսի նորմեր, որպիսիք ճանաչում են ոչ բոլոր մարդիկ ու մարդկային խմբերը: Ըստ Զաուերի, բացի այդ, գոյություն ունեն «իրավունքի ընդհանուր սկզբունքներ», որոնք հանդիսանում են միջազգային իրավունքը ներքին իրավունքի և բնական իրավունքի հետ միացնող կամուրջ ու կազմում են «քաղաքակիրթ ընդհանուր իրավունք», և որ այդ բոլոր կատեգորիաները պոզիտիվ իրավունքից վեր կանգնած մի բան են, ընդունակ լրացնելու նրա նորմերում եղած պակասը:

Միջազգային իրավունքի բնական-իրավական կոնցեպցիաների հեղինակներից է նաև իտալացի իրավաբան-միջազգայնագետ Ռոբերտ Ազոնո Նա գրում է, որ իրավունքի նորմերի իրավական բնույթի հատկանիշն են հանդիսանում որոշակի գծեր, որոնք դրսևորվում են նրանց կառուցվածքում, սոցիալական կյանքում նրանց գործելու մեջ և որոնք բացահայտում են սոցիալական երեվույթներն արտացոլող մարդկային միտքը: Նա ավելացնում է, ասելով, որ բացի իրավական նորմերից, որոնք սահմանում են հատուկ իրավաստեղծ մարմինները, կան նաև նորմեր, որոնք շին կնում որևէ ձևական աղբյուրից, այլ հասարակության անդամների գիտակցության մեջ ծագում են ինքնաբերաբար կամ «սպոնտանևս» (իրավունք, որը չի ելնում որևէ ձևական աղբյուրից, այլ ինքնին ծագում է մարդկանց գիտակցության մեջ): «Սպոնտանևս իրավունքի» հասկացությունը Ազոնի կարծիքով շատ ավելի կիրառելի է միջազգային իրավունքի ասպարեզում, քանի որ նա չունի նորմեր սահմանող գերագույն մարմին: XVIII դարում երևան եկած իրավունքի բնական դարոցը հանդես էր գալիս իր դարն ապրած միահեծանության պետական ու քաղաքական կարգերի դեմ, մինչդեռ մեր ժամանակներում այդ դարոցի հետևորդները աշխատում են, ինչպես ասված է վերևում, արդարացնելու և հավերժացնելու իմպերիալիզմի պետական ու միջազգային սիստեմները:

ՎԱՄՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ  
ՈՒ ՆՐԱՄ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ

§ 1. Միջազգային իրավունքի հասկացությունը: § 2. Միջազգային հանրային իրավունքի առանձնահատկությունները: § 3. Միջազգային իրավունքի աղբյուրները: § 4. Միջազգային իրավունքի սխտեմը և կոդիֆիկացիայի հարցերը:

§ 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԸ

Ժամանակակից միջազգային իրավունքը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջանի միջազգային-իրավական հարաբերությունները կարգավորող նորմերի մի համակցություն է:

Միջազգային իրավունքը ծագել ու ձևավորվել է առաջին պետությունների ծագման ու կազմավորման պրոցեսին զուգընթաց, սակայն «միջազգային իրավունք» տերմինը ճանաչում է ստացել համեմատաբար ոչ հեռավոր անցյալում: Նկատենք, որ այլ լեզուներում և մասնավորապես ռուսերենում իրավունքի այս ճյուղը կոչվում է ոչ թե «միջազգային իրավունք», այլ «միջժողովրդային իրավունք»: Հին Հռոմի իրավաբանական տերմինով իրավունքի այս ճյուղը անվանում էին «jus gentium» («ժողովուրդների իրավունք», «ժողովրդական իրավունք», «համաժողովրդական իրավունք»): «Jus gentium» տերմինը ստույգ չէր արտահայտում միջազգային իրավահարաբերությունները կարգավորող նորմերի համակցության էությունը, քանի որ jus gentium ասելով Հռոմի իրավաբանները նկատի ունեին նաև քաղաքացիական-իրավական նորմերի համակցությունը, որով կարգավորվում էին Հռոմի քաղաքացիների և օտարերկրացիների մասնավոր-իրավական հարաբերությունները: «Միջազգային իրավունք» («միջժողովրդային

իրավունք») տերմինը առաջին անգամ օգտագործել է Ֆրանցիսկոս Վիտարիան (1480—1546 թթ.) և հետագայում որոշ փոփոխություններով արմատավորվել է այլ հեղինակների աշխատություններում: Այսպես, օրինակ, XVII դարում օգտագործում են «իրավունք ժողովուրդների միջև» (jus inter gentes) տերմինը, XVIII դարում՝ «միջազգային իրավունք» տերմինը, որը XIX դարում ընդհանուր ճանաչում է գտնում ու արմատավորվում տարբեր լեզուներում, այսպես. «միջժողովրդային իրավունք»՝ ռուսերենում, „droit international“՝ ֆրանսերենում, „International law“՝ անգլերենում, „derito internationale“՝ իտալերենում, „Internationales Recht“՝ գերմաներենում, „derecho internacional“՝ իսպաներենում, «միջազգային իրավունք»՝ հայերենում և այլն:

Իրավաբանական գրականության մեջ միջազգային իրավունքը օգտագործվել է նաև այլ արտահայտությամբ. «արտաքին-պետական իրավունք» (Գ. Հեգել, Ֆ. Հոլցենդորֆ, Ն. Ա. Բեզոբրազով), «միջսովորեն իրավունք» (Մ. Ա. Տաուբե), «պետությունների իրավունք» (Ի. Կանտ), «միջպետական իրավունք» (Վ. Ա. Նեզաբրիտովսկի, Ն. Մ. Կորկունով, Ֆ. Լիստ, Գ. Նլինեկ և ուրիշներ):

Միջազգային իրավունքի նորմերով կարգավորվում են առավելապես հարաբերությունները պետությունների միջև, այդ պատճառով թերևս ավելի ստույգ կլիներ այն անվանել «միջպետական իրավունք», սակայն մենք օգտագործելու ենք ընդհանուր ճանաչում գտած «միջազգային իրավունք» տերմինը:

Միջազգային իրավունքը, բոլոր դեպքերում պահպանելով իր սոցիալական կոչումը, փոփոխվել է պետությունների դասակարգային էության մեջ կատարված տեղաշարժերին համեմատ, և սովալ ժամանակաշրջանի միջազգային իրավունքը նախորդից տարբերելու համար կիրառության մեջ է դրվել «ժամանակակից միջազգային իրավունք» տերմինը, որը մենք հանդիպում քննել XIX դարի իրավաբանական գրականության մեջ: Այժմ օգտագործում են «ընդհանուր միջազգային իրավունք» տերմինը, որի նորմերով կարգավորվում են ինչպես տարբեր սոցիալ-տնտեսական կարգեր ունեցող պետությունների, այնպես էլ համասեռ կարգեր ունեցող պետությունների փոխհարաբերությունները:

Միջազգային իրավունքի պիտությանը և միջազգային իրավական պրակտիկային հայտնի են միջազգային հանրային իրավունք և միջազգային մասնավոր իրավունք առարկաները: Այս դասընթացում չի խոսվելու միջազգային մասնավոր իրավունքի մասին, քանի որ այն հատուկ ուսումնասիրման քննազավառ է: Այնուհան-



գերձ, մի քանի խոսք իրավունքի այդ ճշուզի մասին: Գրականության մեջ կարծիքների միատեսակություն չկա միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ: Ոմանք գտնում են, որ նա ոչ այլ ինչ է. քան միջազգային իրավունքի մի տեսակ, ուրիշները պընդում են, որ նա քաղաքացիական իրավունքի հատուկ բնագավառ է, ոմանք էլ միջազգային մասնավոր իրավունքը նույնացնում են միջազգային հանրային իրավունքի հետ: Հեղինակների մի այլ խումբ գտնում է, որ միջազգային մասնավոր իրավունքը, լինելով քաղաքացիական իրավունքի հատուկ ճյուղ, սերտորեն կապված է միջազգային հանրային իրավունքի հետ<sup>1</sup>:

Գործնականում միջազգային մասնավոր իրավունքի նորմերով կարգավորվում են այնպիսի քաղաքացիական իրավաճարարներություններ, որոնք բովանդակում են մի որևիցե օտար տարր (սուրջեկաններից մեկը կամ ավելին օտարերկրյա ծագում ունեն, իրավաճարարներության օբյեկտը գտնվում է արտասահմանում, իրավախախտումը տեղի է ունեցել արտասահմանում, գործարքը կնքվել է արտասահմանում և այլն): Այս կարգի իրավաճարարությունների սուբյեկտների դերում հանդես են գալիս ֆիզիկական անձինք, ինչպես նաև մեկ կողմից ֆիզիկական, իսկ մյուս կողմից իրավաբանական անձերը, կամ է՝ մեկ, է՝ մյուս կողմը կարող են լինել իրավաբանական անձեր, պայմանով, որ իրավաճարարությունն երկու մասնակիցն էլ պետություն չեն, այլ պատկանում անհատ կազմակերպության միջպետական իրավաճարարություններ, որոնք կարգավորվում են միջազգային հանրային իրավունքի նորմերով:

Միջազգային մասնավոր իրավունքը, չհանդիսանալով միջազգային հանրային իրավունքի ճյուղերից մեկը, սերտորեն կապված է նրա հետ, քանի որ կարգավորում է միջազգային ոլորտում ծագող քաղաքացիական-իրավական հարաբերություններ, որոնք հիմնականում կապված են միջազգային տնտեսական շրջանառության հետ և ունեն միջազգային-իրավական բնույթ: Միջազգային մասնավոր իրավունքի աղբյուր են հանդիսանում ոչ միայն պետությունների ներքին օրենքները, այլև միջազգային պայմանագրերը:

Գրականության մեջ և պրակտիկայում «միջազգային հանրային իրավունք» տերմինի փոխարեն գործածում են «միջազգային

<sup>1</sup> Տե՛ս Ջ. Ա. Լյուց, *Международное частное право (общая часть)*, Госюриздат, 1959, էջ 10—11:

իրավունք» տերմինը, նկատի ունենալով, որ խոսքը վերաբերում է միջազգային հանրային իրավունքին:

Այժմ անդրազանանք միջազգային իրավունքի բնորոշմանը: Միջազգային իրավունքի թե՛ բուրժուական և թե՛ սովետական գիտությունների մեջ իրավունքի այս ճյուղի՝ ընդհանուրի հավանությունն արժանացած բնորոշումներ չկան: Նախ ճանաչողական միջազգային իրավունքի վերաբերյալ բուրժուական գիտնականների բնորոշումներին: Անպիտացի միջազգայնագետ Լ. Օպենհեյմի կարծիքով միջազգային իրավունքը սովորութային-իրավական և պայմանագրային նորմերի համակցությունն է, որ իրավաբանորեն ձանաչված է քաղաքակիրթ պետությունների կողմից և պարտադիր է նորանց համար՝ իրենց փոխհարաբերություններում: Այդ նորմերի այն մասը, որը պարտադիր է քաղաքակիրթ բոլոր պետությունների համար, ինչպես, օրինակ, դեսպանության և պայմանագրերի ճես կապված իրավունքը, կոչվում է ունիվերսալ միջազգային իրավունք, ի տարբերություն պարտիկուլյար միջազգային իրավունքի, որը պարտադիր է երկու կամ մեծ թվով պետությունների համար<sup>2</sup>, Իտալացի Գ. Անցիլոտի գտնում է, որ «պետությունները պետք է կատարեն իրենց միջև կնքված համաձայնագրերը» կանոնը այն ձևական շափանիչն է, որը պետությունների հարաբերությունները կարգավորող նորմերը դանաղանում է այլ նորմերից և հանգեցնում է նրանց միասնությանը: Բոլոր նորմերը և միայն նորմերը, որոնք հանգեցնում են այդ սկզբունքին, որպես նրանց պարտադիր ուժի անհրաժեշտ և բացառիկ աղբյուրի... կազմում են միջազգային իրավունք, այսինքն՝ «պետությունների համագործակցության իրավակարգ»<sup>3</sup>: Ավստրիացի իրավագետ Ա. Ֆերդրոսի կարծիքով միջազգային իրավունքը իրենից ներկայացնում է միջազգային հարաբերությունները կարգավորող պայմանագրային և սովորութային նորմերի, ինչպես նաև իրավունքի ընդհանուր սկզբունքների համակցություն<sup>4</sup>: Ֆրանսիական «Միջազգային իրավունքի տերմինաբանության բառարանը» միջազգային իրավունքը բնորոշում է որպես իրավաբանական նորմերի համակցություն, որը անկախ պետություններին կամ դանազան միջազգային կազմակերպություններին

<sup>2</sup> Տե՛ս Ջ. Օպենհեյմ, *Международное право*, т. 1, п'т 1, М., 1948, էջ 26—27:

<sup>3</sup> Տե՛ս Դ. Անցիլոտի, *Курс международного права*, 1961, էջ 58—59:

<sup>4</sup> Տե՛ս Ա. Фердросс, *Международное право*, М., 1959, էջ 161:

կապում է իրենց փոխադարձ հարաբերություններում<sup>5</sup>։ Ռուսական նախասովետական միջազգային իրավունքի գիտությունն աներկայացուցիչները՝ Ֆ. Մարտենսի բնորոշմամբ միջազգային իրավունքը «իրավաբանական նորմերի համակցություն է, որը սահմանում է ժողովուրդների կողմից իրենց նպատակներին հասնելու պայմանները՝ նրանց փոխադարձ հարաբերությունների ոլորտում»<sup>6</sup>, իսկ ըստ Լ. Կոմարովսկու՝ «միջազգային իրավունքը նշանակում է իրավաբանական նորմերի համակցություն, որով որոշվում է պետությունների վերաբերմունքը մեկը մյուսի, նրանց հպատակների և մնացած բոլոր մարդկանց նկատմամբ ընդհանրապես...»<sup>7</sup>։ Միջազգային իրավունքի բուրժուական գիտության հտպատերազմյան շրջանի ներկայացուցիչ Փրանսիացի իրավաբան Շ. Ռուտլի կարծիքով միջազգային իրավունքը կարգավորում է հարաբերությունները պետությունների միջև կամ ավելի շուտ միջազգային իրավունքի սուբյեկտների միջև։ Շվեյցարացի իրավաբան Պ. Հուգեն-Հեյմը գտնում է, որ միջազգային իրավունքը իրավաբանական նորմերի համակցություն է, որոնք կարգավորում են միջազգային հարաբերությունները<sup>8</sup>։

Ինչպես տեսնում ենք, միջազգային իրավունքի բուրժուական գիտության ներկայացուցիչներն անգամ փորձ չեն անում ասելու, ին որն է միջազգային իրավունքի ղասակարգային-ծառայական դերը։ Նրանք բավարարվում են միջազգային իրավունքի ձևական, դոգմատիկ բնորոշումներով, չեն տեսնում կամ չեն կամենում տեսնել միջազգային իրավունքի սոցիալ-տնտեսական արմատները։ Նման մտածեցման հիմքում ընկած են պետության և իրավունքի մասին բուրժուական տեսաբանների ոչ գիտական հայացքները, պետության և իրավունքի ղասակարգային էության ժխտումը նրանց կողմից։

Բուրժուական գիտականներից ոմանք փորձում են տալ արդի դարաշրջանի միջազգային իրավունքի բնորոշումը, սակայն ելնում են նույն, ոչ գիտական դիրքերից։ Այսպես, օրինակ, շվեյցարացի հայտնի միջազգայնագետ Ա. Ալվարեսը գտնում է, որ արդի միջազգային իրավունքն առավել ընդարձակ և բազմազան նպա-

տակներ ունի, քան «ղասական» միջազգային իրավունքը։ Նա կոչված է միջազգային կյանքը կազմակերպելու մայրցամաքային և համաշխարհային մասշտաբով, կարգավորելու հարաբերությունները ոչ միայն պետությունների, այլև միջազգային իրավունքի մյուս սուբյեկտների միջև։ Ամերիկացի իրավաբան Ի. Կունցն ասում է, որ ժամանակակից միջազգային իրավունքն իրենից ներկայացնում է հին իրավունքի փոխակերպում (տրանսֆորմացիա), որը պայմանավորված է արևմտյան քաղաքակրթության ճգնաժամով, ըստ Ի. Կունցի՝ նոր իրավունքը արտացոլում է լիովին օւղակենտրոնացված իրավունքի անցման շրջանը առավել կենտրոնացված ու կազմակերպված իրավունքի<sup>9</sup>։

Միջազգային իրավունքի սովետական գիտությունը ելնում է պետության և իրավունքի մարքս-լենինյան ուսմունքից, որը միակ ճիշտ նախադրյալն է միջազգային իրավունքի գիտական բնորոշումը տալու համար։

Սովետական հեղինակների՝ միջազգային իրավունքի բնորոշումները, մեկը մյուսից տաբերվելով մանրամասներով, իրենց հիմնական դրույթներով համանման են։

Այժմ գործող միջազգային իրավունքի ճիշտ գնահատման և շատ թե քիչ սպառիչ բնորոշման համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Արդի դարաշրջանը, որի հիմնական բովանդակությունը անցումն է կապիտալիզմից սոցիալիզմին, երկու հակադիր նասարակական սիստեմների պայքարի դարաշրջանն է, սոցիալիստական և ազգային-ազատագրական հեղափոխությունների դարաշրջանը, իմպերիալիզմի կործանման, գաղութային սիստեմի վերացման դարաշրջանը, նորանոր ժողովուրդների՝ սոցիալիզմի ուղին անցնելու, համաշխարհային մասշտաբով սոցիալիզմի և կոմունիզմի հաղթանակի դարաշրջանը։ Արդի դարաշրջանի կենտրոնում կանգնած են միջազգային բանվոր ղասակարգը և նրա պխավոր ծնունդը՝ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը»<sup>10</sup>։

Այսպիսով, այժմ խոսքը վերաբերում է կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջանի միջազգային իրավունքին, որը կոչված է կարգավորելու միջազգային-իրավական հարաբերությունների այն ամբողջ սիստեմը, որը բնորոշ է ժամանակակից խայտաբղետ միջազգային հարաբերություններին։ Տեսնենք, թե այժմյան աշխարհում միջազգային հարաբերությունները ինչ բազ-

<sup>5</sup> Տե՛ս «Dictionnaire de la terminologie du droit international», P., 1960, էջ 236։

<sup>6</sup> Տե՛ս Փ. Մարտեն, Современное международное право цивилизованных народов, т. I. СПб., 1882, էջ 16։

<sup>7</sup> Л. Комаровский, Международное право, М., 1905, стр. 3.

<sup>8</sup> Տե՛ս «Международное право», изд. «Между. отношения», 1964, էջ 28։

<sup>9</sup> Տե՛ս «Международное право», 1964, էջ 29—30։

<sup>10</sup> «ՄՄԿՊ XII համագումարի նյութերը», Երևան, 1962, էջ 425։

կացուցիչ մասերից՝ կոմպոնենտներից են կազմված: Այդ իրավահարաբերությունների կոմպոնենտներն են.

1. հարաբերություններ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի պետությունների և կապիտալիզմի համաշխարհային սիստեմի պետությունների միջև,

2. հարաբերություններ սոցիալիզմի համաշխարհային սիստեմը կազմող պետությունների միջև,

3. հարաբերություններ կապիտալիզմի համաշխարհային սիստեմի մեջ մտնող պետությունների միջև,

4. հարաբերություններ նոր զարգացող պետությունների միջև,

5. հարաբերություններ սոցիալիստական պետությունների և նոր զարգացող պետությունների միջև,

6. հարաբերություններ բուրժուական պետությունների և նոր զարգացող պետությունների միջև,

7. հարաբերություններ միջազգային իրավունքի այլ սուբյեկտների և նրանց ու սուվերեն պետությունների միջև:

Ահա այսքան բարդ և բազմատեսակ իրավահարաբերությունների կարգավորմանն է ծառայում ժամանակակից միջազգային իրավունքը: Այստեղից էլ ծագում են միջազգային իրավունքի բնորոշման հետ կապված դժվարությունները: Պետք է նկատենք, որ սուվետական գրականության մեջ տեղ գտած բազմաթիվ բնորոշումներից և ոչ մեկը, դժբախտաբար, լիովին չի արտացոլում բազմաբովանդակ միջազգային հարաբերություններ կարգավորող իրավունքի համապարփակ պատկերը: Այստեղ մենք կրեքենք հավանության արժանացած և հանձնարարվող դասագրքերում եղած բնորոշումները:

Ժամանակակից միջազգային իրավունքը իրենից ներկայացնում է «նորմերի համակցություն, որոնք ստեղծվում են պետությունների, այդ թվում տարբեր հասարակական կարգ ունեցող պետությունների միջև կայացվող համաձայնագրերի միջոցով, արտահայտում են այդ պետությունների համաձայնեցված կամքերը, կարգավորում են հարաբերությունները նրանց միջև պայքարի և համագործակցության պրոցեսում՝ խաղաղության գործուն պահպանման և խաղաղ գոյակցության հիման վրա և նպատակով, անհրաժեշտության դեպքում ապահովվում են հարկադրանքով,

որը պետությունները կիրառում են անհատապես կամ կոլեկտիվորեն»<sup>11</sup>:

Մեկ ուրիշ դասադրում տրված է հետևյալ բնորոշումը. «Ժամանակակից միջազգային իրավունքի գլխավոր բովանդակությունն են կազմում այն հանրամանաչ սկզբունքներն ու նորմերը, որոնք կոչված են կարգավորելու միջազգային հարաբերությունների սուբյեկտների ամենաբազմազան հարաբերությունները՝ միջազգային խաղաղության գործուն ապահովման հիման վրա ու նպատակով, և նախ և առաջ՝ մեկ դեպքում խաղաղ գոյակցության և մյուս դեպքում սոցիալիստական ինտերնացիոնալիզմի»<sup>12</sup> հիման վրա: Այս բնորոշման հեղինակները նշում են, որ միջազգային իրավունքի նորմերի ապահովման աստիճանն ու ձևերը պայմանավորված են տվյալ միջազգային իրավակարգի բնույթով, ըստ որում, խաղաղ գոյակցության պայմաններում հարկադրանքի տարրը խիստ սահմանափակված է, բայց չի բացառվում:

1967 թվականին լույս տեսած միջազգային իրավունքի դասընթացի առաջին հատորի հեղինակները, փորձելով ի մի բերել սովետական հեղինակների բնորոշումները, գրում են. «Ժամանակակից ընդհանուր միջազգային իրավունքը մենք կարող ենք բնութագրել որպես պետությունների կամքերի համաձայնեցման հիման վրա ստեղծված ու զարգացող իրավաբանական նորմերի մի սիստեմ, որը կոչված է կարգավորելու միջազգային հարաբերությունները՝ պետությունների խաղաղ գոյակցությունը, իրավահավասարությունը և ժողովուրդների ինքնորոշումն ապահովելու նպատակով»<sup>13</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս և նախորդ երկու բնորոշումներն ընդգրկում են քննարկվող երևույթի միայն առավել էական կողմերը և, իհարկե, կատարյալ լինելու հավանություն չեն կարող ունենալ: Հարցի առավել մանրամասն քննարկումը չի մտնում դասընթացի շրջանակների մեջ և արժանի է ինքնուրույն ուսումնասիրության: Այնուամենայնիվ, կարող ենք ասել, որ միջազգային իրավունքը նրա սուբյեկտների վարքագծի կանոնների համակցությունն է, որը սահմանվում է նրանց փոխադարձ համաձայնությամբ՝ խաղաղ գո-

<sup>11</sup> «Международное право», изд. «Юридическая литература», М., 1964, стр. 18.

<sup>12</sup> «Международное право», изд. «Международные отношения», М., 1966, стр. 30.

<sup>13</sup> «Курс международного права», изд. «Наука», М., 1967, т. I, стр. 38: տե՛ս նաև Н. М. Минасян, Сущность современного международного права, 1962.

յակցութեան շրջանակներում պայքարի և համագործակցութեան պրոցեսում, ապահովում է կամովին և, ըստ անհրաժեշտութեան, պետութիւնների անհատական կամ կոլեկտիվ հարկադրանքի ուժով<sup>14</sup>։

Միջազգային իրավունքը սերտորեն կապված է միջազգային հարաբերութիւնների հետ, նրա կիրառման ոլորտը հենց պետութիւնների միջազգային-իրավական հարաբերութիւններն են։ Միջազգային իրավունքի նորմերը կոչված են կարգավորելու պետութիւնների և նրանց ստեղծած կազմակերպութիւնների հարաբերութիւնները։ Սպասարկելով միջազգային հարաբերութիւններին՝ միջազգային իրավունքն ինքն է կրում այդ հարաբերութիւնների ազդեցութիւնը և նրանց ներգործութեան ներքո փոփոխվում, դարձանում է, ժամանակակից միջազգային հարաբերութիւնների ընդլայնումը սլայմանավորված է դործող միջազգային իրավունքի էութիւնը, որի նորմերը մշակվում են այդ հարաբերութիւնների առաջադրած պահանջներին համապատասխան։ Արդի էտապում միջազգային խաղաղութեան ու ժողովուրդների անվտանգութեան ճակատագիրը մեծ չափով կախված է տարբեր սոցիալ-տնտեսական սիստեմների պատկանող պետութիւնների խաղաղ գոյակցութեանից։ Մշուս կողմից, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրների հարաբերութիւնների հիմքում դրված է սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքը։ Այս բոլորից հետևում է, որ ընդհանուր միջազգային իրավունքի հիմքում ընկած են պետութիւնների փոխհարաբերութիւնների հիմքը հանդիսացող այդ երկու կարևորագույն սկզբունքները։ Միաժամանակ պետք է նկատենք, որ իմպերիալիստական պետութիւնների կողմից թեկուզ և պայմանագրերով այլ երկրների պարտադրվող իրավահավասարութիւնն ու սուվերենութիւնը խախտող նորմերը չեն կարող դասվել ընդհանուրի ձանաշումն ստացած միջազգային-իրավական նորմերի շարքը։

Խաղաղ գոյակցութիւնը մարդկային հասարակութեան զարգացման օրչնկտիվ անհրաժեշտութիւն է, ժամանակակից միջազգային հարաբերութիւնների հիմքը։ Խաղաղ գոյակցութիւնը ծառայում է որպէս սոցիալիզմի և կապիտալիզմի խաղաղ մրցութեան հիմք միջազգային մասշտաբով և նրանց միջև մղվող դասակարգային պայքարի մի յուրահատուկ ձև է։ Խաղաղ գոյակցութեան ըսկըդրունքից հետևում է, որ պետութիւնների փոխհարաբերութիւններում պատերազմը պետք է բացառվի որպէս վեճերի կարգավոր-

ման միջոց, դրանք պետք է լուծվեն խաղաղ բանակցութիւնների միջոցով։ Խաղաղ գոյակցութեան սկզբունքը պետութիւններին պարտավորեցնում է իրենց փոխհարաբերութիւններում խստորեն հետևել իրավահավասարութեան, փոխըմբռնման և պետութիւնների միջև վստահութեան հաստատելու սկզբունքին՝ հաշվի առնելով միմյանց շահերը։ Խաղաղ գոյակցութիւնը միաժամանակ ենթադրում է՝ չմիջամտել միմյանց ներքին գործերին, ընդունել, որ յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի ինքնուրույնաբար լուծելու իր երկրի բոլոր հարցերը, խստորեն հարգել բոլոր երկրների սուվերենութիւնը և տերիտորիալ ամբողջականութիւնը, զարգացնել տնտեսական ու կուլտուրական համագործակցութիւնը լիակատար հավասարութեան ու փոխադարձ շահավետութեան հիման վրա<sup>15</sup>։

Խաղաղ գոյակցութեան սկզբունքը պետութիւնների ճանաչմանն է արժանացել, ան իր արտացոլումն է գտել Միավորված Ազգերի կազմակերպութեան կանոնադրութեան «նպատակներն ու ըսկըդրունքները» զլխում, որտեղ մասնավորապէս ասված է, որ կազմակերպութիւնը հետապնդում է զարգացնել բարեկամական հարաբերութիւնները ազգերի միջև՝ իրավահավասարութեան և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրա, իրականացնել միջազգային համագործակցութիւն՝ լուծելու միջազգային տնտեսական, սոցիալական, կուլտուրական և հումանիտար բնույթի սրբըլմները (Հոդ. 1, կ. կ. 2, 3)։

Միջազգային իրավունքը պետութիւնների ձեռքում մի դէնք է իրենց արտաքին քաղաքականութեան իրականացման գործում։ Այդ նույն նպատակին է ծառայում դիվանագիտութիւնը, որը ոչ այլ ինչ է. քան այն միջոցների, մեթոդների ու պրիտմների համակցութիւնը, որպիսիք պետութիւնը համապատասխան մարմինների միջոցով գործի է դնում իր արտաքին քաղաքական նպատակներին հասնելու համար։ Ուրեմն և՛ միջազգային իրավունքը, և՛ դիվանագիտութիւնը նույն ծառայական դերն են կատարում պետութեան արտաքին քաղաքականութեան իրականացման գործում։ Այդ առումով էլ ընդունված է ասել, որ միջազգային իրավունքն ու դիվանագիտութիւնը իրենց կոչմամբ երկվորյակներ են։

## § 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ԱՐԱՆՁՆԱՆԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջազգային իրավունքն ունի իր առանձնահատկութիւնները, որոնցով նա տարբերվում է իրավունքի մնացած էլյուզերից։ Այդ

<sup>14</sup> Տե՛ս А. А. Есаян, К вопросу о характере международного права, «Советский ежегодник международного права», 1958, էջ 500—502։

<sup>15</sup> Տե՛ս «ՄԿԳ XXII համագումարի նյութերը», էջ 481։

առանձնահատկությունները վերաբերում են սուբյեկտի, օբյեկտի, ազդյունների և նորմերի կատարումն ապահովող միջոցների ու ներքանց բնույթի հարցերին:

Միջազգային իրավահարաբերությունների սուբյեկտներ են դերազանցապես պետությունները. սրանք է, որ օժտված են միջազգային իրավունակությամբ ու գործունակությամբ և, լինելով այդ հարաբերությունների մասնակիցները, ստանձնում են որոշակի պարտականություններ և ձեռք բերում դրանց համապատասխան իրավունքներ: Սրա հետ մեկտեղ միջազգային իրավունքի սուբյեկտ է նաև ազգը, որը, իրականացնելով իր ինքնորոշման իրավունքը, պայքարում է անկախության ու ազատության համար և ստեղծել է ազգը ներկայացնող հանրային իշխանության մարմիններ: Միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված են նաև միջազգային կազմակերպությունները այն շափով, որ շափով այդ նախատեսվում է հիմնադիր պետությունների կողմից հաստատված նրանց կանոնադրություններում: Այսպես, օրինակ, ՄԱԿ-ը, լինելով պետությունների քաղաքական միավորում, իրավաբանական անձ է՝ միջազգային իրավունակության և գործունակության հատկանիշներով: Միջազգային իրավունքի սուբյեկտական պիտությունը գտնում է, որ ֆիզիկական անձերը միջազգային իրավունքի սուբյեկտներ չեն:

Կերպական իրավունքի ճշտությունը միջազգային իրավունքը տարբերվում է նաև ըստ առարկայի և օբյեկտի: Միջազգային իրավունքի առարկա ասելով հասկանում ենք որոշակի միջազգային հարաբերություններ: Միջազգային հարաբերությունների ծավալը անհամեմատ մեծ է, քան միջազգային իրավունքի առարկա հանդիսացող հարաբերությունները, ուրեմն միջազգային իրավունքի առարկա են միայն այն միջազգային հարաբերությունները, որոնցում որպես սուբյեկտներ հանդես են գալիս սուվերեն պետությունները: Հասարակական, սպորտային, կուլտուրական, կրոնական, հասարակական հիմունքներով գործող գիտական ընկերությունները և կազմակերպությունները միջազգային իրավունքի սուբյեկտներ չեն, իսկ նրանց փոխադարձ հարաբերությունները միջազգային-իրավական բնույթ չունեն, ուստի և միջազգային իրավունքի առարկա չեն: Սակայն միաժամանակ պետք է նկատենք, որ միջպետական ոչ բոլոր հարաբերություններն է, որ միջազգային իրավական բնույթ ունեն, նրանք կարող են լինել զուտ փաստական բնույթի հարաբերություններ, որոնք համապատասխան միջազգային իրավական տեսք չեն ստացել: Նման հարաբերություններում պետությունները կաշկանդված չեն իրավաբանական պարտավորություն-

ներով: Պետությունների միջև փաստական քաղաքական հարաբերությունները միջազգային իրավունքի առարկա են դառնում այն պահից, երբ համապատասխան իրավաբանական ձև են ընդունում՝ նրանց միջև միջազգային համաձայնագիր կնքելու կամ արդեն գոյություն ունեցող պայմանագրին միանալու միջոցով և կամ միջազգային սովորույթի հիման վրա: Միջազգային հանրային հարաբերություններ չեն ծագում տնտեսական որոշ համաձայնագրերից: Երբ առ ու ծախի գործարք է կնքվել տարբեր պետությունների մասնավոր կոմպանիաների միջև, ապա նման գործարքն իր բնույթով քաղաքացիական-իրավական է: Տնտեսական բնույթի միջև իսկ միջպետական ոչ բոլոր հարաբերություններն է, որ միջազգային-հանրային իրավունքի առարկա են: Հնարավոր է, որ կառավարությունների ներկայացուցիչների միջև կնքված առ ու ծախի գործարքից ծագած կոլիդիաների դեպքում կողմ պետությունը հանդես գա մյուսի դատարանում որպես պատասխանող, եթե նախօրոք ըստ համաձայնագրի նա այդ մասին համաձայնություն է տվել:

Նոսելով միջազգային իրավունքի առարկա հանդիսացող հանրային բնույթի հարաբերությունների մասին, պետք է նկատի ունենանք, որ միջազգային-հանրային են կոչվում այն հարաբերությունները, որոնցում պետությունները հանդես են գալիս որպես դերագույն սուվերեն իրավունքների կրողներ, այսինքն՝ որպես իրավունքի սուբյեկտներ:

Միջազգային իրավունքի առարկայից պետք է տարբերել նրա օբյեկտի հասկացությունը: Միջազգային իրավունքի օբյեկտ ասելով նկատի ունենք այն ամենը, որի շուրջը միջազգային իրավունքի սուբյեկտները մտնում են իրավահարաբերությունների մեջ՝ միջազգային հարաբերություններում ձանաչված սկզբունքների և նորմերի հիման վրա: Ընդունված է այդ օբյեկտները բաժանել երեք տեսակի. 1) պետությունների գործողությունները միջազգային հարաբերությունների ոլորտում, 2) այս կամ այն գործողությունից ձեռնպահ մնալը, 3) տերիտորիան:

Միջազգային իրավունքի օբյեկտի այս դասակարգումը տրված է Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի 1964 թ. հրատարակած դասընթացում: Այլ ազդյուններ տերիտորիան չեն դասում միջազգային իրավունքի օբյեկտների շարքը.

դրա փոխարեն նրանք օբյեկտ են համարում «նյութական և ոչ նյութական բարիքները»<sup>16</sup>:

Այս կամ այն գործողությունը որպես միջազգային իրավահարաբերություն օբյեկտ կարող է տեղ գտնել բազմատեսակ պայմանագրերում: Օրինակ, փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանագրերով կողմերը պարտավորվում են կատարել որոշակի գործողություններ՝ պայմանագրում նախատեսված իրավիճակներում հասնելու դեպքում, կամ ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով ընդունված որոշումների ուժով նրա անդամ պետությունները պարտավոր են սանկցիաներ կիրառել միջազգային խաղաղությունը խախտած պետության նկատմամբ և այլն: Զհարձակման, շեղորության, առանձին տերիտորիաների շեղորացման կամ ապառազմականացման վերաբերյալ պայմանագրերը նախատեսում են ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց, այն է՝ չհարձակվել մեկը մյուսի վրա, չեզոք դիրք գրավել, եթե մյուս կողմը կոնֆլիկտի մեջ ներգրավվի, ռազմական բնույթի քայլեր չձեռնարկել շեղորացված կամ ապառազմականացված տերիտորիայում: Հաճախ, մանավանդ պատերազմներից հետո, միջազգային իրավահարաբերության օբյեկտ է դառնում տերիտորիան: Հաշտության պայմանագրերով, որպես կանոն, լուծվում են տերիտորիալ հարցեր և այլն:

Ամեն ինչի շուրջը չէ, որ կարելի է մտնել միջազգային բնույթի իրավահարաբերությունների մեջ: Պետությունները չեն կարող, չպետք է պայմանավորվեն ուրիշի ներքին գործերին միջամտելու շուրջը, և ընդհանրապես պետությունների ներքին իրավասության մեջ մտնող հարցերը չպետք է միջազգային իրավահարաբերության օբյեկտ լինեն, այլ կերպ ասած՝ պետք է բացառվի այն ամենի շուրջը իրավահարաբերության մեջ մտնելը, որը հակասում է միջազգային իրավունքի հանրաձանաչ սկզբունքներին ու նորմերին:

Միջազգային իրավունքի օբյեկտի հարցը առավել կարևոր և բարդ հարցերից է, որը պատշաճ լուսաբանում չի ստացել տեսության մեջ: Արևմտյան բուրժուական գրականության մեջ զարգանում է այն տենդենցը, որը հետապնդում է առավել շահով ընդլայնել միջազգային իրավունքի օբյեկտի հասկացության ծավալը, ընդհուպ մինչև պետության ներքին իրավասությանը ենթակա

հարցերը, որն, իհարկե, հակասում է միջազգային իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկին՝ պետական սուվերենության սկզբունքին: «Միջազգային իրավահարաբերության օբյեկտի բնորոշ կողմն այն է, որ նա վերաբերում է պետական իշխանության իրավասությանը, պետական սուվերենության ոլորտին»<sup>17</sup>:

Գնալով փոփոխվում ու ընդլայնվում է միջազգային իրավունքի օբյեկտների շրջանակը, որը պայմանավորված է միջազգային կյանքի զարգացմամբ: Գիտության և տեխնիկայի աննախընթաց զարգացման կապակցությամբ ծագում են միջազգային-իրավական կարգավորում պահանջող բազմաթիվ պրոբլեմներ, ինչպես, օրինակ, ատոմային էներգիայի հայտնագործումից ծագած պրոբլեմները, տիեզերական տարածությունից և տիեզերական մարմիններից օգտվելու իրավաբանական պրոբլեմները և այլն:

Միջազգային իրավունքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ եթե ներպետական իրավունքի հիմնական աղբյուրը օրենքն է, ապա միջազգային իրավունքի հիմնական աղբյուր են պայմանագրերն ու սովորույթը: Մեր ժամանակներում պայմանագրի նշանակությունը, որպես միջազգային իրավունքի զլխավոր աղբյուրի, ավելի է մեծանում, քանի որ միջպետական հարաբերությունների կարգավորման համընդհանուր ճանաչում ստացած եղանակը շահագրգռված կողմերի միջև համաձայնության հասնելն է դերազանցապես խաղաղ ճանապարհով:

Պետությունը սուվերեն է ներպետական օրենքները սեփական հայեցողությամբ սահմանելու համար, սակայն ոչ մի պետություն կամ պետությունների խումբ չի կարող իրավական նորմեր սահմանել և պարտադրել այլ պետությունների: Միջազգային իրավական նորման սահմանվում է առնվազն երկու պետությունների փոխադարձ համաձայնությամբ, այն պարտադիր իրավաբանական ուժ ունի տվյալ նորման սահմանող սուբյեկտների համար: Միջազգային իրավական նորմերի ձևավորման պրոցեսի վրա ներգործուն ազդեցություն ունեն ժողովուրդները, որոնք կենսականորեն շահագրգռված են, որպեսզի ընդունվեն և գործողության մեջ դրվեն միջազգային խաղաղությանն ու ժողովուրդների անվտանգությունը ծառայող միջազգային-իրավական նորմեր: Ժողովուրդները այժմ ակտիվորեն միջամտում են միջազգային հարցերի լուծմանը: «Պատմական նոր դարաշրջանում անչափ աճել են ժողովրդական մասսաների հնարավորությունները՝ ակտիվորեն

<sup>16</sup> Տե՛ս «Курс международного права», т. I, էջ 20, «Международное право», учебное пособие, ВЮЗИ, էջ 19:

<sup>17</sup> «Курс международного права», т. I, стр. 20.

միջամտելու միջազգային հարցերի լուծմանը: Ժողովուրդները զընալուով ավելի ակտիվորեն են իրենց ձեռքը վերցնում խաղաղության և պատերազմի հարցի լուծումը»<sup>18</sup>,—ասված է ՄՄԿԿ ծրագրում:

Ներպետական իրավունքի նորմերի կատարումն ապահովելու համար գոյություն ունի հարկադրանքի կենտրոնացված ապարատի գեմա պետություն համապատասխան մարմինների, մինչդեռ միջազգային իրավունքի նորմերի կատարումն ապահովող համաշխարհային մասշտաբով գործող հարկադրանքի կենտրոնացված ապարատ գոյություն չունի: Այդ էլ միջազգային իրավունքի առանձնահատկություններից մեկն է, որով նա տարբերվում է ներպետական իրավունքի ճշուդերից: Միայն կլինե՞ր միջազգային նորմերի կատարման ապահովումը կապիլ բացառապես հարկադրանքի հետ: Միջազգային իրավունքի սուբյեկտները պարտավոր են կամավոր և բարեխղճորեն կատարել միջազգային ասպարեզում սահմանված վարքագծի կանոնները և նրանց հիմնական մասն այդ կատարում է բարեխղճորեն, որի լավագույն օրինակ են ցույց տալիս Սովետական Միությունն ու սոցիալիստական մյուս երկրները:

Միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի անշեղ իրականացման մեջ կենսականորեն շահագրգռված են խաղաղասեր բոլոր ժողովուրդները, որոնք հնարավոր միջոցներով ներգործում են պետությունների և նրանց կառավարությունների վրա՝ ազնվորեն կատարելու միջազգային իրավունքի նորմերը: Կավազույն օրինակ կարող է ծառայել ամբողջ աշխարհով մեկ ծավալված ժողովրդական շարժումը, որը պահանջում է դադարեցնել ամերիկյան ագրեսիան Վիետնամում, հարգել նրա ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքը՝ առանց դրսի միջամտության լուծելու իր երկրի ներքին գործերը:

Արդի պայմաններում, սակայն, չի կարելի նսեմացնել հարկադրանքի դերը որպես իրավաբանական նորմերի կատարումն ապահովելու սպեցիֆիկ ձև: Միջազգային իրավունքը բացառող նիհիլիստները փորձում են ցույց տալ, որ հարկադրանքի կենտրոնացված ապարատի բացակայությունը իբր խոսում է այն մասին, որ միջազգային իրավունքը իրավունք չէ բառի իսկական իմաստով: Իրավունքի նիհիլիստական տեսությունները լայն տարածում գրտան մասնավորապես ֆաշիստական Գերմանիայում: Գերմա-

նական միլիտարիզմի շահերի արտահայտիչ Ի. Յարինգը, Լասոն և Յորնը, նշելով, որ «իրավունքը սոցիալական նպատակների սխտեմ է, որը ձևեր է բերվում բանությունը», պնդում էին, որ միջազգային հարաբերությունները կարող են լինել բարոյական, այլ ոչ թե իրավական: Բուրժուական իրավագետներից ոմանք էլ ծայրահեղության մեջ են ընկնում այլ ուղղությամբ: Չընդունելով հարկադրանքը միջազգային իրավունքում, նրանք պնդում են, որ հարկադրանքի առկայությունը իրավունքի անհրաժեշտ հատկանիշը չէ (Ֆրանսիական իրավագետներ Պ. Յոշիլ, Ա. Ռիվյե, ամերիկացի իրավաբան Յ. Ք. Սկոտ և ուրիշներ)<sup>19</sup>: Եղել են ու այժմ էլ կան նաև բուրժուական տեսաբաններ, ովքեր հակում ունեն հաստատելու, թե իբր միջազգային հարաբերություններում «ամեն ինչ վճռվում է ուժով»: Զի կարելի, իհարկե, համաձայնել այդ կարծիքին նույնպես, քանի որ դա կհանգնեցնե՞ր բիրտ ուժի տիրապետության ընդունումը միջազգային ասպարեզում, կարգաբացներ իմպերիալիստական պետությունների և հատկապես ԱՄՆ-ի, այսպես կոչված, «ուժի գիրքերից» տարվող արտաքին քաղաքական կուրսը, որը լուրջ սպառնալիք է միջազգային խաղաղության ու ժողովուրդների անվտանգության գործին:

Ժամանակակից միջազգային իրավունքում պետությունները հարկադրանքը կիրառում են անհատապես կամ համատեղ ուժերով: Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում իրավախախտում թույլ տված պետության նկատմամբ հարկադրանքը պետք է կիրառվի միջազգային իրավունքի շրջանակներում թույլատրելի կարգով ու միջոցներով: Զինված ուժի կիրառումը թույլատրվում է անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության նպատակով, ինչպես այդ նախատեսված է Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությամբ: ՄԱԿ-ը ինքն էլ կարող է կիրառել հարկադրանք, ընդհուպ մինչև զինված ուժ՝ խաղաղության դեմ ուղղված սպառնալիքը կանխելու և վերացնելու, ագրեսիայի ակտերը կամ խաղաղության այլ խախտումները ճնշելու համար: Հարկադրական միջոցներ կարող են կիրառվել նաև այն կողմ-պետության դեմ, որը հրաժարվում է կատարել ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումը: Այսպես է նախատեսված կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆում:

Միջազգային իրավունքը որոշակի հարաբերակցության մեջ է գտնվում ներպետական իրավունքի հետ: Արևմտյան միջազգային-

<sup>18</sup> ՄՄԿԿ ԱՄԻ համադրմանի նյութերը», էջ 479:

<sup>19</sup> Տե՛ս «Курс международного права», 6, I, էջ 21:

իրավական գրականության մեջ նկատվում է այն տենդենցը, ըստ որի միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի ելակետը արդի աշխարհի պետությունների ներքին իրավունքի որոշ սկզբունքների ընդհանրացումն է, ընդհուպ մինչև այն, որ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները նույնացվում են «իրավունքի ընդհանուր սկզբունքների» հետ: Միջազգային իրավունքի սովետական գիտության ներկայացուցիչները գտնում են, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի Ստատուտի 38-րդ հոդվածի կետ 1 «С»-ում նշված «իրավունքի ընդհանուր սկզբունքների» տակ պետք է հասկանալ միջազգային իրավունքի սկզբունքները, որոնք պարտադիր կարգով պետք է կատարեն բոլոր պետությունները, այսինքն՝ այն հանրաճանաչ սկզբունքները, որոնց ծագումը պետք է փնտրել պետությունների միջև կայացված համաձայնագրերում<sup>20</sup>:

Միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության վերաբերյալ միջազգային իրավունքի բուրժուական գիտության մեջ գոյություն ունի երկու ուղղություն՝ դուալիստական և մոնիստական: Դուալիստական տեսությունը ելնում է այն նախադրյալից, որ միջազգային իրավունքը և ներպետական իրավունքը երկու միանգամայն տարբեր և իրավունքի մեկը մյուսից անջատ սիստեմներ են: Այդ տեսությունը գտնում է, որ զրանք լիակատար իրավաբանական համարժեք սիստեմներ են և մեկը մյուսի նկատմամբ առաջնություն չունի: Մոնիստական տեսությունը ելնում է իրավունքի ունիվերսալ միասնության նախադրյալից, որ նշանակում է, թե գոյություն ունի իրավունքի ինչ-որ մի միասնական սիստեմ, որն ընդգրկում է ամբողջ աշխարհը և ներառում առանձին, ավելի նեղ բաղմամբի սիստեմներ: Ընթացիկ միասնության մեջ մոնիստական թեորիան առաջ է քաշում միջազգային իրավունքի առաջնությունը կամ, ինչպես ասում են այդ թեորիայի հեղինակներից շատերը, «պրիմատը» ներպետական իրավունքի նկատմամբ: Բուրժուական գիտության մեջ երևան է եկել մոնիստական այլ ուղղություն, ըստ որի միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցում առաջնությունը պետք է տալ ներպետականին:

Սովետական գիտությունը չի ընդունում վերոհիշյալ ուղղություններից ոչ մեկը, համարելով, որ դուալիստական տեսությունը սահմանափակվում է միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության ձևական վերլուծությամբ, իսկ մոնիստական տե-

սությունների ուղղություններն էլ հակադիտական են, աղավաղում են իրականությունը՝ ի շահ իմպերիալիզմի<sup>21</sup>:

Միջազգային իրավունքի սովետական գիտությունը միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցը քննարկում է նրանց փոխադարձ կապի ու ներգործության տեսանկյան տակ՝ իրավական նորմերի և ինստիտուտների ձևավորման պրոցեսում: «Միջազգային և պետությունների ներպետական (ազգային) իրավունքի հարաբերակցությունը քննարկելիս չի կարելի, ինչպես սովորաբար անում են, բանը հանգեցնել միջազգային իրավունքի նորմերի գերազասելիության ուժին ազգային իրավունքի նորմերի նկատմամբ կամ ընդհակառակն: Միջազգային և ազգային իրավունքի հարաբերակցության պրոբլեմի ճիշտ լուծումը կարող է տրվել միայն նրանց միջև եղած ռեալ կապերի պարզաբանման ճանապարհով, միջազգային իրավունքի նորմերի ձևավորման պրոցեսում՝ մեկ կողմից և միջազգային իրավունքի ու ազգային իրավունքի նորմերի կիրառման պրոցեսում՝ մյուս կողմից»<sup>22</sup>:

Ազգային և միջազգային իրավունքի հարաբերակցության հարցը քննարկելիս սովետական գիտությունը ելնում է պետական սուվերենության սկզբունքից և պետությունների ներքին իրավասությունը խստորեն հարգելու անհրաժեշտությունից:

Սոցիալիստական պետությունները հաստատակամորեն կանգնած են միջազգային իրավունքի նորմերը պահպանելու դիրքերում, սակայն նրանք միաժամանակ մերժում են պետական սուվերենությունը բացասելու և պետության ներքին իրավասության մեջ ներխուժելու նպատակով միջազգային իրավունքի վրա հենվելու ամեն մի փորձ:

Սոցիալիստական դոկտրինաները և պրակտիկան խոսում են հողուտ այն բանի, որ միջազգային պայմանագրերի նորմերը պետք է կատարվեն անգամ այն դեպքում, եթե չեն համընկնում ներքին իրավունքի նորմերին, պայմանով, որ այդ պայմանագրերը կնքված լինեն կողմերի սովերեն, լիակատար իրավահավասարության հիման վրա: Գերմանական Դեմոկրատական Հանրապետության 1949 թ. սահմանադրության 5-րդ հոդվածը սահմանում է, որ «Միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը պարտադիր են պե-

<sup>21</sup> Տե՛ս «Курс международного права», т. I, էջ 196—236:

<sup>22</sup> Г. И. Тункин, Основы современного международного права, М., 1956, стр. 8—9.

<sup>20</sup> Տե՛ս В. М. Корецкий, Общие принципы права в международном праве, изд. АН УССР, Киев, 1957:



տական իշխանություն և յուրաքանչյուր քաղաքացու համար»<sup>23</sup>։ Հայկական ՍՍՀ-ի քաղաքացիական օրենսգրքի 572-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմունքների 129-րդ հոդվածին համապատասխան այն դեպքերում, երբ միջազգային պայմանագրով կամ միջազգային համաձայնագրով, որին մասնակցում է ՍՍՀ Միությունը, սահմանված են այլ կանոններ, քան սովետական քաղաքացիական օրենսդրության մեջ պարունակվող կանոններն, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի կամ միջազգային համաձայնագրի կանոնները»։

Նույն կանոնը կիրառվում է Հայկական ՍՍՀ տերիտորիայում, եթե միջազգային պայմանագրով կամ միջազգային համաձայնագրով, որին մասնակցում է Հայկական ՍՍՀ-ն, սահմանված են այլ կանոններ, քան Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված կանոնները<sup>24</sup>։ Նույն կարգը սահմանված է ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների քաղաքացիական դատավարության հիմունքների 64-րդ և ՀՍՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածներով։

### § 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ

Տեսության մեջ իրավունքի աղբյուր ստեղծվել նկատի ունենք հարցի կրկու նշանակությունը։ Լայն առումով իրավունքի աղբյուր են հանդիսանում հասարակության կյանքի նյութական պայմանները, որոնցով պայմանավորված է գաղափարական վերնաշերտը, իսկ նեղ, ավելի ճիշտ՝ իրավաբանական առումով իրավունքի աղբյուր ստեղծվում ենք այն արտաքին հատուկ ձևերը, որոնց միջոցով կերպավորվում են իրավունքի համապատասխան ճշգրիտ նորմերը։ Այս դատողությունները հավասարապես վերաբերում են նաև միջազգային հանրային իրավունքին։

Միջազգային իրավունքի աղբյուրների սահմանումը որոշակի տեսական և սյրակտիկ նշանակություն ունի, որովհետև այդ հանգամանքը վերջին հաշվով շոշափում է միջազգային իրավունքի

լուծյան հարցը<sup>25</sup>։ Այդ պատճառով է, որ արժարժվող հարցի պատասխանը տալուց տարբեր գաղափարախոսությունների հետևող հեղինակները միանգամայն տարբեր մտածեցում են ցուցաբերում։ Իմպերիալիզմի դաղափարախոսներ բուրժուական գիտնականները միջազգային իրավունքի աղբյուրների վերաբերյալ հորինում են այնպիսի տեսություններ, որոնք նախնացնում են պետությունների դերը միջազգային իրավունքի նորմերի ձևավորման մեջ։ Դրան հակառակ, մարքսիստ գիտնականները ենում են այն բանից, որ հենց իրենք՝ պետություններն են միջազգային ասպարեզում իրենց վարքագծի կանոնների օրենսդիրները։ Միջազգային իրավունքի դասընթացի հեղինակների բնորոշմամբ «Միջազգային իրավունքի աղբյուրները այն ձևերն են, որոնցում ստեղծվում է միջազգային իրավունքը՝ այն իրավաբանական եղանակները, որոնց օգնությամբ սահմանվում են նրա նորմերը»<sup>26</sup>։

Միջազգային իրավական նորմերը սահմանվում են պետությունների փոխադարձ համաձայնությամբ, ընդհուպ մինչև փոխադարձ լիզումների ճանապարհով։ Վարքագծի նորմերը միջազգային ասպարեզում ձևավորվում են ինչպես համասեռ սոցիալ-տնտեսական կարգ ունեցող, այնպես էլ տարբեր կարգի ունեցող պետությունների փոխհարաբերություններում։ Այդ նորմերը արտահայտում են պետություններում տիրապետող դասակարգերի շահերը, ըստ որում, նրանց շահերի սոցիալական բովանդակությունը կարող է լինել և՛ միևնույնը, և՛ հակադիր։ Այլ կերպ ասած՝ իրավաբանական միևնույն ձևի մեջ յուրաքանչյուր պետություն գիտեղում է այնպիսի բովանդակություն, որը արտացոլում է տրվյալ պետության տիրապետող դասակարգերի շահերը։ Միջազգային-իրավական նորմերի ձևավորման պրոցեսում հակադիր սիստեմի պատկանող պետությունները փոխադարձաբար պետք է հաշվի նստեն միմյանց տիրապետող դասակարգերի շահերի հետ՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի, խաղաղ գոյակցության սկզբունքի շրջանակներում։ Սոցիալ-տնտեսական համասեռ կարգ ունեցող պետությունների փոխհարաբերություններում ձևավորվող իրավական նորմերը իրենց բովանդակությամբ մի գիպեղում կարող են հարմոնիկ լինել, եթե խոսքը վերաբերում է սոցիալիստական տիպի պետություններին, և մյուս դեպքում՝ ան-

<sup>23</sup> «Конституции зарубежных социалистических государств». Юридат, М., 1956, стр. 117.

<sup>24</sup> «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը», 1964, էջ 257։

<sup>25</sup> Տե՛ս Н. М. Минасян, Источники современного международного права. Ростов, 1960։

<sup>26</sup> «Курс международного права», т. I, стр. 168.

սողոմնիստական, եթե խոսքը վերաբերում է կապիտալիստական պետություններին:

Եթե ներպետական իրավական նորմը երկրում տիրապետող դասակարգի կամքն արտահայտող պետության միակողմանի ակտի արդյունք է, ապա միջազգային-իրավական նորման հիմնականում ծագում է սուվերեն պետությունների միջև կայացված համաձայնություններ: Սպառնալիքի, ճնշման և անիրավազոր այլ պրիսմների ու մեթոդների միջոցով, միակողմանիորեն ուրիշների վզին նորմեր փաթափելը, ինչպես այդ անում են Ամերիկայի Միացյալ Նահանգները, միջազգային իրավունքի հանրաձայնաչ ըսկը պոնենների գեոհիկ խախտում է: Ոչ մի պետություն կամ պետությունների խումբ չի կարող ու իրավասու չէ իր կամքը թելադրել այլ պետության կամ պետությունների խմբի:

Միջազգային իրավունքը որոշակի կապի մեջ է ներպետական իրավունքի հետ: Պետության ներքին ու արտաքին քաղաքականությունը մի ամբողջություն են կազմում, արտահայտում են տիրապետող դասակարգի կամքը: Տիրապետող դասակարգը իրավունքն օգտագործում է որպես գործիք իր ներպետական նպատակներն իրականացնելու համար, իսկ միջազգային իրավունքը դիտում է որպես մի դեմք՝ արտաքին քաղաքական նպատակներին յանձնելու համար: Ընդհանուր միջազգային իրավունքի նորմերի ձևավորման վրա ազդում է դասակարգային ուժերի հարաբերակցությունը ինչպես պետության ներսում, այնպես էլ համաշխարհային մասշտաբով, և քանի որ ուժերի փոխհարաբերակցությունը օրինաչափորեն փոխվում է հօգուտ դեմոկրատիայի ու սոցիալիզմի, այդ պատճառով էլ միջազգային իրավունքն ու նրա նորմերը գնալով ավելի դեմոկրատական բնույթ են ձևոք բերում:

Արգի միջազգային իրավունքի հիմնական աղբյուրներն են միջազգային պայմանագիրը և միջազգային սովորույթը: Միջազգային պայմանագիրը երկու կամ ավելի թվով սուբյեկտների համաձայնությունն է միմյանց միջև փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ սահմանելու վերաբերյալ, արտահայտում է կողմերի կամքը՝ կամավորության և սուվերեն հավասարության հիման վրա: Պայմանագիրը ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական և գլխավոր աղբյուրն է, պայմանագրով է, որ առավել հստակ և որոշակի սահմանվում են պետությունների վարքագծի կանոնները միջազգային ոլորտում: Միջազգային իրավունքի նորմերի հիմնական մասը պայմանագրային բնույթ ունի:

Միջազգային սովորույթ ասելով նկատի ունենք վարքագծի

այնպիսի կանոն, որը գրի առնված չլինելով հանդերձ տասնամյակների ընթացքում կիրառվել է պետությունների փոխհարաբերություններում և այդ հիման վրա էլ արժանացել է ընդհանուրի մանաշմանը որպես պարտադիր իրավաբանական նորմ: Ժամանակի որևէ շափ չկա այս կամ այն կանոնի կիրառման համար: Սովորույթային նորմը կարող է ձևավորվել ու արմատավորվել համեմատաբար կարճ ժամանակամիջոցում և կիրառվել ավելի կամ պակաս թվով պետությունների փոխհարաբերություններում: Միջազգային սովորույթային նորմերը համեմատաբար ավելի մեծ ակդ են գրավում դեպքանական և հյուպատոսական իրավունքում, ծովային իրավունքում և այլն: Միջազգային սովորույթային նորմի հիմնական տարրերն են՝ կիրարկության երկարատևությունը, ճանաչման համընդհանրությունը և իրավաբանորեն պարտադիր լինելու համոզվածությունը:

Միջազգային սովորույթը պետք է տարբերել միջազգային բարոյականությունից և քաղաքավարությունից: Բարոյականությունը որպես հասարակական գիտակցության ձև ձևավորվել է ստավել վաղ ժամանակաշրջանում: Բարոյական նորմերը, շունենալով իրավաբանական բնույթ, կարևոր նշանակություն ունեն ոչ միայն հասարակության ներքին կյանքում, այլև միջազգային իրավաբարբերությունների ասպարեզում: Դեռևս Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը կոչ էին անում պայքարել հանուն այն բանի, «որպեսզի բարոյականության և արգարության հասարակ օրենքները, որոնցով մասնավոր անձերը պետք է ղեկավարվեն իրենց փոխհարաբերություններում, գերազույն օրենքներ դառնան նաև ժողովուրդների հարաբերություններում»<sup>27</sup>:

Պետությունները չեն կարող չհետևել բարոյականության նորմերին, այլապես կարժանանան միջազգային հասարակայնության պարտավանքին: Եթե պետությունը ենթարկվում է այս կամ այն բնական աղետի (ջրհեղեղ, երկրաշարժ, հրդեհ և այլն), մյուս պետությունների բարոյական պարտականությունն է տուժածին նյութական օգնություն ցույց տալ, թեպետև նրանք իրավաբանական պարտավորություններ չունեն նման օգնություն ցույց տալու վերաբերյալ: Բարոյական պարտականությունից իրեն ազատ համարող պետությունը պետք է հաշվի առնի, որ «այդ ուղտը իր դրանն էլ կլսի», վաղն էլ ինքը ուրիշների օգնության ու աջակցության կարիքը կզգա:

<sup>27</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, стр. 11.

Միջազգային քաղաքավարություն ասելով նկատի ունենք այն կանոնները, որոնք, իրավաբանորեն պարտադիր չլինելով, միջազգային պրակտիկայում կիրառվում են դրանց զործնական հարմարության հետևանքով՝ փոխադարձության հիման վրա կամ կիրառող պետության ցանկության միջոցով: Միջազգային քաղաքավարության կանոնները մեծ մասամբ կիրառվում են ծովային հարաբերություններում և դիվանագիտության սլորտում: Թրինակ, նավերը բայ ծովում հանդիպելով՝ միմյանց ողջունում են համազարկով, կամ դիվանագիտական արարողակարգը հիմնված է միջազգային քաղաքավարության կանոնների վրա (պետության գլխին դիմավորում է ընդունող պետության զլուխը, կարգում են պատվո պահակ և այլն):

Միջազգային քաղաքավարության կանոնները իրավաբանական պարտադիր բնույթ չունենալով հանդերձ պետք է կիրառվեն պետությունների փոխհարաբերություններում: Այդ կանոնները չկատարելի կարող է դիտվել որպես անբարյացակամ ակտ, բայց ոչ միջազգային պարտավորությունների խախտում, դրանից չի հետևում պետության միջազգային-իրավական պատասխանատվություն և դա չի կարող հիմք հանդիսանալ պահանջներ ներկայացնելու կամ փոխձեռնում (սեպրեսսիա) կիրառելու համար:

Միջազգային քաղաքավարության այս կամ այն կանոնը կարող է դառնալ միջազգային-իրավական նորմ՝ վերաձվելով միջազգային սովորույթային նորմի կամ իրավունքի պայմանագրային նորմի: Այսպես, օրինակ, դիվանագիտական խմուխտետի և արտոնությունների վերաբերյալ այժմ Լոնդոնի միջազգային-իրավական շատ նորմեր սկզբում եղել են միջազգային քաղաքավարության կանոններ: Կարող է տեղի ունենալ և հակառակը՝ միջազգային իրավական նորմը կարող է դառնալ միջազգային քաղաքավարության կանոն: XVII—XVIII դարերում կիրառվող դիվանագիտական արարողակարգի կանոնները հետագայում դարձան միջազգային քաղաքավարության կանոններ:

Բացի հիշատակված հիմնական աղբյուրներից միջազգային իրավունքն ունի նաև օժանդակ աղբյուրներ՝ միջազգային մտքմիտների և կազմակերպությունների վճիռները կամ որոշումները, ներդրողական օրենքները, սզգային դատարանների վճիռները, դսկտրինաները:

Միջազգային մարմինների և կազմակերպությունների վճիռներն ու որոշումները հիմնականում վերաբերում են իրենց ներքին հարցերին, ուստի և միջազգային իրավունքի աղբյուր չեն:

Միջազգային այդ հիմնարկությունների որոշումները, երբ իրենց նշանակությամբ դուրս են գալիս ներքին շրջանակներից և սահմանում են վարքագծի կանոններ, որպես ընդհանուր կանոն ունեն հանձնարարականի բնույթ, այսինքն՝ իրավաբանական առումով պարտավորեցնող ուժ չունեն: Միջազգային մարմնի կամ կազմակերպության վճիռ, կամ որոշման այս կամ այն կանոնը կարող է ձևոր բերել իրավական նորմի բնույթ, եթե այդ միջազգային հարաբերության մասնակիցները այդպիսի ընդհանուր համաձայնություն են հայտնել: Նման դեպքերում, որպես կանոն, շահագրգռված պետությունները իրենց այդ ընդհանուր համաձայնությունը պայմանագրային տեսք են հաղորդում, և կամ հիշատակված վճիռներով ու որոշումներով սահմանված կանոնները կարող են ձևոր բերել միջազգային սովորույթային նորմի բնույթ ընդհանուր կարգով:

Այդ դատողությունները եթե փորձենք փոխադրել Միավորված Ազգերի Կազմակերպության շրջանակը, ապա կնկատենք, որ Չըլիտալոր Ասամբլեայի վճիռները, որպես կանոն, ունեն հանձնարարականի բնույթ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ վճիռները սահմանում են վարքագծի ընդհանուր կանոններ և եթե դրանք ընդունվել են ՄԱԿ-ի սնդամ բոլոր պետությունների ձայներով: Այս պայքում նման վճիռներն արդեն ձևոր են բերում միջազգային իրավունքի աղբյուրի նշանակություն, քանի որ արտահայտում են պետությունների սովորույթային կամքը:

Միջազգային մարմինների ու կազմակերպությունների վճիռների և որոշումների ընդհանուր բնութագրից տարբերվում է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի՝ սահմանված կարգով ընդունված որոշումների բնութագիրը: ՄԱԿ-ի կանոնադրության 25-րդ հոդվածի համաձայն Անվտանգության Խորհուրդը կարող է պարտադիր որոշումներ ընդունել, որոնք հավասարապես պետք է տարածվեն ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունների վրա: Ենթադրվում է, որ Անվտանգության Խորհուրդը նման բնույթի որոշումներ պետք է ընդունի միջազգային խաղաղության և անվտանգության շահերից ելնելով և դրժող ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի շրջանակներում:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի միջազգային դատարանի, ինչպես նաև միջազգային (միջնորդ) մյուս դատարանների վճիռներին, ապա վերջիններս միջազգային իրավունքի նոր նորմեր չեն ստեղծում, այլ իրենք հանդիսանում են գործող նորմերը կիրառող ակտեր:

Ինչպես ներպետական օրենքները, այնպես էլ ազգային դատարանների վճիռները միջազգային իրավունքի աղբյուր չեն և պարտադիր են միայն ազգային իրավունքի սուբյեկտների համար, սակայն կարող են ձեռք բերել միջազգային իրավունքի աղբյուրի բնույթ, եթե միջազգային ճանաչում ստանան և դառնան միջազգային պայմանագրային կամ սովորույթային նորմ: Այսպես, օրինակ, Արտաքին առևտրի մենաշնորհի վերաբերյալ սովետական ղեկրետի ոգուն համապատասխան ձևավորվել է արտաքին առևտրի ներկայացուցչության ինստիտուտը և, ստանալով միջազգային ճանաչում, ձեռք բերել ժամանակակից միջազգային իրավունքի ինստիտուտի բնույթ ու հաստատորեն կիրառվում է միջազգային-իրավական պրակտիկայում:

Միաժամանակ պետք է նկատել, որ ներպետական բնույթի իրավական ակտերով երբեմն ամրապնդվում են առանձին միջազգային իրավական նորմեր և արտահայտում են պետության վերաբերմունքը վերջիններիս նկատմամբ: Ներպետական այդպիսի ակտերը ունեն միջազգային իրավունքի օժանդակ աղբյուրի նշանակություն:

Միջազգային իրավունքի սովետական գիտությունն ու միջազգային-իրավական պրակտիկան դոկտրինաները (իրավաբան-միջազգայնագետների գիտական աշխատությունները) չեն ճանաչում որպես միջազգային իրավունքի աղբյուր: Միջազգային իրավունքի դոկտրինաները, իհարկե, ունեն որոշակի նշանակություն միջազգային իրավունքի նորմերի ճիշտ բնութման ու կիրառման համար, սակայն նրանք կարող են դառնալ միջազգային իրավունքի աղբյուր, եթե արժանացել են պետությունների համաձայնությունը, ընդունել են միջազգային պայմանագրային կամ սովորույթային նորմի բնույթ: Առաջներում, քանի դեռ միջազգային սովորույթային նորմերը գերակշռություն ունեին, դոկտրինաների դերն ու նշանակությունը նկատելիորեն մեծ էին միջազգային իրավահարաբերությունների կարգավորման գործում:

Միջազգային իրավունքի վերոհիշյալ աղբյուրներից բացի, պետությունների փոխհարաբերություններում լայն կիրառում ունեն ժամանակակից միջազգային իրավունքի հանրաճանաչ ըսկրդրունքներն ու նորմերը:

Միջազգային իրավունքի դասագրքի բնորոշմամբ (1966 թ.) Ժամանակակից միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերն են այն կանոնները, որոնք կամովին ճանաչում են բոլոր պետությունները՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական սիս-

տեմից»<sup>26</sup>: Մրանք վարքագծի այնպիսի կանոններ են, որոնց հետ պետությունները պարտավոր են համակերպվել այլ պետությունների հետ ունեցած հարաբերություններում, անկախ այն բանից, այդ կանոնները տեղ են գտել նրանց հարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերում և համաձայնագրերում, թե ո՛չ: Որպես վարքագծի կանոններ և՛ հիմնական սկզբունքները, և՛ հիմնական նորմերը միատեսակ նշանակություն ունեն պետությունների միջազգային-իրավական հարաբերությունների կատարման ու կարգավորման տեսակետից, սակայն նրանք որոշ չափով տարբերվում են մեկը մյուսից: Միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներ ասելով հասկանում ենք պետությունների վարքագծի հիմնական կանոնները, միջազգային օրինականություն հիմնական սկզբունքները, որոնց հետ պետք է հաշվի նրատեն աշխարհի բոլոր պետությունները, որոնք արտացոլում են առաջագնի մարդկության իրավագիտակցությունը:

Նաշվի առնելով միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների առաջնահերթ նշանակությունը միջազգային իրավակարգի ամրապնդման և միջազգային հարաբերությունների առաջագնի գարգացման գործում, սովետական իրավաբանական գրականության մեջ մեծ տեղ է հատկացվում այդ սկզբունքների գիտական ընդհանրացմանը և նրանց դերի ու նշանակության հարցերին: Բավական է նշել, որ «Միջազգային իրավունքի դասընթացի» 2-րդ հատորը ամբողջովին նվիրված է ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին<sup>27</sup>:

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները մեկընդմիջտ մշակված և հասարակարգից-հասարակարգ փոխանցվող սկզբունքներ չեն: Այդ սկզբունքների սիստեմը կրում է զարաշրջանի գրոշմը և ապրում իր զարգացման ու կատարելագործման պրոցեսը: Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների սիստեմի մեջ արմատական տեղաշարժեր վրա հասան շոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի կազմավորման հետևանքով: Միջազգային իրավունքի սովետական գրականության մեջ ընդունված է ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները դասակարգել այսպես. 1) խաղաղ գոյակցության, 2) սկստական սովերենությունը հարգելու, 3) պետությունների

<sup>26</sup> «Международное право», изд. «Международные отношения», М., 1966, стр. 43.

<sup>27</sup> Ст. «Курс международного права», М., 1967, т. II.

իրավահավասարություն, 4) շահարձակվելու, 5) միջազգային վեճերը խաղաղ լուծելու, 6) պետությունների ներքին գործերին շփոթամտնելու, 7) ժողովուրդների և ազգերի ինքնորոշման, 8) մարդու իրավունքները հարգելու, 9) միջազգային պարտավորությունները հարգելու և 10) զինաթափման սկզբունքներ:

Վերոհիշյալ սկզբունքների մասին հանգամանորեն կխոսվի սույն դասընթացի 7-րդ գլխում:

#### § 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ ԵՎ ԿՈՒՌՅԵԿԱՅԻՆԱՅԻ ՀԱՐՑՆԵՐԸ

Միջազգային իրավունքի սիստեմ ասելով նկատի ունենք միջազգային իրավական նորմերի դասակարգման սկզբունքը ըստ առանձին ձյուզերի ու խմբերի և նրանց խմբավորումը ըստ կարգավորվող բնագավառների: Միջազգային իրավունքը չի ունեցել և չի կարող ունենալ կայուն, անշարժ մի սիստեմ: Վերջինս պայմանավորված է ժամանակաշրջանի միջազգային-իրավական հարաբերությունների ամբողջ կոմպլեքսով, որոնց կարգավորման համար ձևավորվել են տվյալ էտապում գործող միջազգային իրավանորմերը: Անգամ միևնույն ժամանակաշրջանի համար ընդհանուրի ձանաշմանն արժանացած միջազգային իրավունքի միասնական սիստեմի մենք չենք հանդիպում գրականություն մեզ: Միջազգային իրավունքի սովետական գիտությունն աղբյուրներում նրա սիստեմը որոշակի փոփոխություններ է կրել՝ կապված իրավունքի այդ ձյուզի կարգավորման օբյեկտի կրած փոփոխությունների հետ:

Այժմ սովետական իրավաբանական գրականության մեջ ձանաշում է ստացել և ուսումնական ծրագրերում տեղ է գտել միջազգային իրավունքի հետևյալ սիստեմը.

1. Միջազգային իրավունքի ծագումն ու դարգացումը:

2. Ժամանակակից միջազգային իրավունքի էությունը և նրա աղբյուրները:

3. Տարբեր սոցիալական կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցությունը և միջազգային իրավունքը:

4. Սոցիալիստական երկրների համագործակցության միջազգային-իրավական ձևերը:

5. Ազգային-ազատագրական շարժումը և միջազգային իրավունքը:

6. Ժամանակակից միջազգային իրավունքի սուբյեկտները:

7. Ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական ըսկզբունքները:

8. Միջազգային պայմանագրերի իրավունքը:

9. Բնակչությունը և միջազգային իրավունքը:

10. Տերիտորիան միջազգային իրավունքում:

11. Միջազգային ծովային իրավունք:

12. Միջազգային օդային իրավունք:

13. Տիեզերական իրավունք:

14. Դիվանագիտական և հյուպատոսական իրավունք:

15. Միջազգային կաղմակերպություններ և միջազգային կոնֆերանսներ:

16. Տնտեսական և հատուկ հարցերի գծով միջազգային կաղմակերպություններ և համաձայնագրեր:

17. Միջազգային վեճերի կարգավորման խաղաղ միջոցները:

18. Խաղաղության ապահովման և պատերազմը կանխելու միջազգային-իրավական միջոցները:

19. Միջազգային իրավունքը և պատերազմը:

20. Պատասխանատվությունը ժամանակակից միջազգային իրավունքում:

Գործնական և տեսական կարևոր նշանակություն ունի միջազգային իրավունքի կոդիֆիկացիան, որի տակ պետք է նկատի ունենալ ինչպես միջազգային իրավունքի համապարփակ կոդիֆիկացիան, այնպես էլ նրա առանձին բնագավառների մասնակի կոդիֆիկացիան: Միջազգային իրավունքի կոդիֆիկացիա ասելով հասկանում ենք միջազգային իրավունքի գործող նորմերի սիստեմավորումը, որը կատարվում է միջազգային իրավունքի տարբեր աղբյուրների ուսումնասիրման, դրանք միմյանց միջև համաձայնեցնելու և դրանց միջև եղած բոլոր հակասությունները վերացնելու միջոցով<sup>30</sup>: Միջազգային իրավունքի կոդիֆիկացիայի մասին խոսելիս պետք է հաշվի առնենք, որ այն կարող է լինել պաշտոնական, այսինքն՝ կոդիֆիկացիա միջկառավարական համաձայնություն հիման վրա, և ոչ պաշտոնական՝ առանձին դիտնականների, գիտական հաստատությունների և կաղմակերպությունների կողմից կատարվող կոդիֆիկացիա:

Միջազգային իրավունքի կոդիֆիկացման գաղափարը ծագել է եվրոպական մայր ցամաքում բուրժուական հեղափոխությունների դարաշրջանում: Միջազգային իրավունքի համընդհանուր կո-

<sup>30</sup> Տե՛ս «Дипломатический словарь», т. II, էջ 78:

գիֆիկացման վերաբերյալ առաջարկութիւններ արվել են դեռևս XVIII դարում (օրինակ, վանահայր Գրեգուարի 1792 թ. դեկլարացիան)։ XIX դարի սկզբին կողմնակիցացման հարցը զբաղեցնում է առանձին պետութիւնների պաշտոնական շրջաններին, սակայն միջազգային իրավունքի համընդհանուր կողմնակիցումը առ այսօր էլ չի լուծվել՝ խոր սոցիալական, քաղաքական ու գաղափարական հակասութիւնների հետևանքով, որոնք բնութագրում են միջազգային հարաբերութիւնները և նրանց հիմնական մասնակիցներ հանդիսացող պետութիւններին։

Միջազգային իրավունքի կողմնակիցացման առաջին փորձը կատարվել է Ռուսաստանի նախաձեռնութեամբ։ Հյուսիսային Ամերիկայի անկախութեան համար մղվող պատերազմի ժամանակ շեղորբ երկրների ծովային առևտուրը խիստ տուժում էր Անգլիայի, ԱՄՆ-ի, Իսպանիայի հաժանակերից և ծովահեն նավերից։ Ի պատասխան այդ ապօրինության 1780 թ. Ռուսաստանը հայտարարեց ղինված շեղորբութիւն։ Ռուսական կառավարութեան հանձնարարութեամբ գերմանացի մասնագետ Կորալը կազմեց և 1782 թ. հրատարակեց պատերազմի ժամանակաշրջանի ընդհանուր ծովային օրենսգիրք, որը միջազգային իրավունքի ոչ պաշտոնական կողմնակիցացման սկիզբն էր։ XIX դարի ընթացքում հրեան են գալիս միջազգային իրավունքի օրենսգրքերի մի շարք նախագծեր՝ անգլիացի Ի. Բենթամի (1808 թ.), ավստրիացի Ա. Գոմբին-Պետրուշևիչի (1861 թ.), շվեդարացի Ի. Բլյունդիի (1868 թ.), Ֆիլդի (1872 թ.), իտալացի Պ. Ֆիորբի (1889 թ.), XX դարի սկզբին՝ կանադացի Ջ. Ինտերնոսցիայի (1910 թ.), մեքսիկացի Կոզենտինի (1937 թ.) նախագծերը և այլն։ Միջազգային իրավունքի ոչ պաշտոնական կողմնակիցացման գործում մեծ ներդրում են կատարել ռուս գիտնականներ Դ. Ի. Կաշենովսկին, Վ. Պ. Բեդորբազովը, Յ. Յ. Մարտենսը, Մ. Ն. Կապուստինը, Լ. Ա. Կոմարովսկին, Վ. Պ. Գանեսկին, Ի. Ա. Իվանովսկին և այլք։

Միջազգային իրավունքի ոչ պաշտոնական կողմնակիցացման հարցերով սկսում են զբաղվել ազգային և միջազգային գիտական հաստատութիւններ, ինչպես, օրինակ, Միջազգային իրավունքի ինստիտուտը, որը հիմնադրվել է 1873 թ. և որի հիմնադիրներից է ռուս ակադեմիկոս Վ. Պ. Բեդորբազովը, Միջազգային իրավունքի ասոցիացիան, Համեմատական իրավագիտութեան միջազգային ակադեմիան, Միջազգային իրավունքի ամերիկյան ինստիտուտը և այլն։

Միջազգային իրավունքի կողմնակիցացման հարցերը քննարկվել

են միջկառավարական բանակցութիւնների մակարդակով և լուծվել են մասնակի կողմնակիցացման կարգով։ Կողմնակիցացվել են միջազգային սրտցեսի, միջազգային վարչական և միջազգային մասնավոր իրավունքի հարցերը։ Այսպես, օրինակ, 1899 և 1907 թթ. Հաագայի կոնֆերանսում մշակվել ու ստորագրվել են կոնվենցիաներ ցամաքային և ծովային պատերազմների օրենքներն ու սովորույթները կողմնակիցանելու մասին։ Միջազգային իրավունքի կողմնակիցացման հարցերով զբաղվել է Ազգերի լիգան։ 1924 թ. Ազգերի լիգային առընթեր ստեղծվեց կողմնակիցացիայի հանձնաժողով, որն իր աշխատանքի պրոցեսում էական արդյունքների շահաւակ, 1930 թ. Հաագայում հրավիրված կոնֆերանսն ավարտվեց նրանով, որ ստորագրվեց միայն մեկ կոնվենցիա՝ քաղաքացիութեան վերաբերյալ։

Միջազգային իրավունքի կողմնակիցացման հարցերով զբաղվել են ռեզիտնալ մասշտաբով, ամերիկյան մայր ցամաքում։ Միջազգային իրավունքի հարցերը քննարկվել են միջամերիկյան կոնֆերանսներում ու կոնգրեսներում, ինչպես նաև ամերիկյան պետութիւնների կազմակերպութեան շրջանակներում։ 1928 թ. Պանամերիկյան 6-րդ կոնգրեսում՝ Հավանայում ընդունվեց միջազգային մասնավոր իրավունքի օրենսգիրք, որը կոչվեց նրա նախագծի հեղինակ, կուբացի իրավաբան Բուստամանտի անվամբ։ Կողմնակիցացման աշխատանքները ամերիկյան մայր ցամաքում շարունակվում են միջազգային իրավունքի կողմնակիցացման ազգային հանձնաժողովներում և ամերիկյան պետութիւնների՝ իրավաբանների միջամերիկյան խորհրդի ղեկավարութեան ներքո Ռիո-դե-ժանեյրոյում աշխատող Միջամերիկյան իրավաբանական կոմիտեում։

Նրկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային իրավունքի կողմնակիցացման հարցերը զգալի տեղ են զբաղում Միավորված Ազգերի Կազմակերպութեանում։ ՄԱԿ-ի կանոնադրութեան 13-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված է, որ կազմակերպութեան նպատակներից մեկն է միջազգային իրավունքի առաջադիմական զարգացումը և նրա կողմնակիցացումը։ Այդ նպատակով 1947 թ. ՄԱԿ-ին առընթեր հիմնադրվել է Միջազգային իրավունքի հանձնաժողով, որն անց է կացնում ամենամյա նստաշրջաններ։ 1949—1966 թթ. հանձնաժողովը 18 նստաշրջան է ունեցել և նախապատրաստել է ժամանակակից միջազգային իրավունքի առանձին հարցերի վերաբերյալ կողմնակիցացման մի շարք նախագծեր։ Այդ նախագծերի հիման վրա է, որ 1958 թ. ստորագրվեցին Ժնևի

կոնվենցիաները ծովային իրավունքի հարցերի վերաբերյալ, Վիեննայի 1961 թ. կոնվենցիան դիվանագիտական հարաբերությունների և 1963 թ. կոնվենցիան հյուպատոսական հարաբերությունների վերաբերյալ:

Միջազգային իրավունքի համապարտփիկ կոդիֆիկացմանը խոչընդոտում են իմպերիալիստական պետությունները, որոնք ամեն կերպ խույս են տալիս կոդիֆիկացումից, նրա մեջ տեսնելով իրենց «ձեռքերի ազատության» քաղաքականության սահմանափակում:

Միջազգային իրավունքի կոդիֆիկացման ընագավառում Սովետական Միությունը, սոցիալիստական մյուս երկրների աջակցությամբ, մեծ աշխատանք է կատարում միջազգային իրավունքի առաջադեմ սկզբունքների հիման վրա պետությունների վարքագծի համապարտադիր կանոններ սահմանելու, մասնավորապես այնպիսի կարևորագույն ասպարնզներում, ինչպիսիք են միջազգային խաղաղության պահպանումը, պետությունների և աղզերի սուվերեն իրավունքների պահպանումը, բարեկամական հարաբերությունների զարգացումը բոլոր երկրների միջև:

Միջազգային իրավունքի համապարփակ օրենսգրքի ընդունումը մեր դարաշրջանի հրամայական պահանջն է, որի համար մեծ ջանքեր են դրժադրում ՍՍՀՄ-ը, սոցիալիստական երկրները և խաղաղասեր մյուս պետությունները:

ԳԼՈՒՆ ԵՐՈՐԴ

**ՏԱՐԲԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՂԱՂ ԳՈՅԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

§ 1. Հակադիր հասարակական սիստեմի պետությունների խաղաղ գոյակցության լենինյան ուսմունքը և նրա զարգացումը ՍՄԿԿ XX—XXIII համագումարների որոշումներում ու ծրագրում: § 2. Խաղաղ գոյակցությունը և միջսզգային իրավունքը:

**§ 1. ՀԱԿԱԳԻՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՈՍԵՄԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՂԱՂ ԳՈՅԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՄԿԿ XX—XXIII ՀՄՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՈՒ ՄՐԱԳՐՈՒՄ**

Պատմությունը ցույց է տալիս, որ սոցիալական մեկ հասարակարգից մյուսին անցնելը տեղի է ունենում ոչ թե մի ակնթարթում, այլ շատ թե քիչ տևական ժամանակամիջոցում: Ֆեոդալական հասարակարգը փոխարինեց ստրկատիրականին, իսկ բուրժուականը՝ ֆեոդալականին դարավոր պայքարի պրոցեսում: Ըստացվում էր այնպես, որ նոր հասարակարգի պետությունների կողքին շարունակում էին գոյություն ունենալ հին սոցիալ-տնտեսական կարգի պետությունները: Այսպես, ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու ժամանակաշրջանում մի կողմից ձևավորվում էին բուրժուական պետությունները, մյուս կողմից՝ բավական երկար ժամանակ շարունակում էին գոյություն ունենալ նաև ֆեոդալական տիպի պետությունները: Նման պայմաններում օբյեկտիվորեն ծագում էր տարբեր սիստեմների պատկանող և կողք-կողքի տարող պետությունների գոյակցության հարցը, մինչև որ հին հասարակարգին պատկանող պետությունները օրինաչափորեն կհանուանային պատմական ասպարեղից: Ծահագործողական տիպի հին ու նոր պետությունների գոյակցության հարցը կարգավորվել է ոչ

աւանց պայքարի, կոնֆլիկտները, այդ թվում ռազմական, եղել են նրանց փոխհարաբերությունների մշտական ուղեկիցները:

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջանին բնորոշ է այն, որ կապիտալիզմի համաշխարհային սիստեմի կողքին երևան են գալիս միանգամայն նոր՝ սոցիալիստական տիպի պետություններ և բնականաբար ծագում է նրանց փոխհարաբերությունների կարգավորման, նրանց գոյակցության հարցը:

Քուրժուական հասարակարգի և սոցիալիստական հասարակարգի գոյակցության անխուսափելիությունը ծագում է կապիտալիզմի տնտեսական և քաղաքական անհամաչափ զարգացման օրենքից, որը բացահայտել է Վ. Ի. Լենինը: Բացահայտելով այդ օրենքը, Լենինը եկավ այն հետևություն, որ սոցիալիստական հեղափոխության հաղթանակը սկզբում հնարավոր է մեկ կամ մի քանի երկրում, որ այդ հաղթանակը հնարավոր չէ բոլոր կամ կապիտալիստական երկրների մեծամասնությունում միաժամանակ: Այստեղից հետևվում է, որ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում միաժամանակ գոյություն կունենան նոր՝ սոցիալիստական և հին՝ կապիտալիստական պետությունները:

Այս երկու սիստեմների խաղաղ գոյակցության ժամանակաշրջանն սկսվում է Ռուսաստանում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ առաջին սոցիալիստական պետության ստեղծման պահից:

Սովետական պետությունը ոչ թե ինքնամեկուսացման ուղին բռնեց, այլ կանգնեց բուրժուական պետությունների հետ խաղաղ համագործակցության ուղու վրա: Նա ելնում էր այն բանից, որ սովետական պետության գոյությունը՝ մեկ կողմից, ամբողջ կապիտալիստական համաշխարհային սիստեմի գոյությունը՝ մյուս կողմից, օբյեկտիվ փաստ է և որ նրանց միջև նորմալ հարաբերությունների հաստատումն էլ օբյեկտիվ անհրաժեշտություն է: Սովետական պետությունը խաղաղ գոյակցությունը հռչակեց որպես արտաքին քաղաքականության սկզբունք, որի հիման վրա էլ կառուցեց իր հարաբերությունները կապիտալիստական այն բոլոր պետությունների հետ, որոնք պատրաստակամություն հայտնեցին փոխադարձ շահավետության հիման վրա հարաբերությունների մեջ մտնել բանվորների ու գյուղացիների առաջին սոցիալիստական պետության հետ:

Վ. Ի. Լենինն իր ելույթներում ու աշխատություններում բազմիցս անդրադարձել է սոցիալիստական պետության և բուրժուական պետությունների խաղաղ գոյակցության հարցին, նշելով, որ

այն օբյեկտիվ անհրաժեշտություն է կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու շրջանում: Լենինը գտնում էր, որ նորագույն ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների միակ հիշատակը դրուները հակադիր սիստեմների պետությունների խաղաղ գոյակցությունն է և այդ սկզբունքը անհրաժեշտություն կլինի այնքան ժամանակ, քանի զեռ «կողք-կողքի գոյություն կունենան սոցիալիստական և կապիտալիստական պետությունները»<sup>1</sup>:

Խոսելով սոցիալիստական պետության արտաքին քաղաքականության էություն մասին, Վ. Ի. Լենինն ասում էր, որ մեր պետության պլանները Ասիայում «նույնն են, ինչ որ Եվրոպայում, այն է՝ խաղաղ համակեցություն բոլոր ազգերի ժողովուրդների, բանվորների և գյուղացիների հետ...»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, Լենինը խաղաղ գոյակցության սկզբունքը հավասարապես կիրառելի էր համարում կապիտալիստական բոլոր երկրների հետ սովետական պետության փոխհարաբերություններում: Այստեղից պարզ է դառնում սնանկությունն այն հեղինակների պնդումների, որոնք անազնիվ նպատակներով փորձում են Սովետական Միությանը մեղադրել այն բանում, թե իբր խաղաղ գոյակցության սկզբունքի կիրառումը իմպերիալիստական պետությունների հետ ունեցած հարաբերություններում ոչ ավելի, ոչ պակաս շեղում է Լենինյան սկզբունքներից: Վ. Ի. Լենինը ուղղակիորեն նշել է, որ «միանգամայն բարեկամական հարաբերությունները» կապիտալիստական մեծ տերությունների հետ «լիովին հնարավոր են և կազմում են մեր նպատակը»<sup>3</sup>: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի հետ հարաբերություններին, ապա Վ. Ի. Լենինը այդ մասին ասել է «մեր կողմից ոչ մի խոչընդոտ»<sup>4</sup> չկա: Պատասխանելով այն հարցին, թե պատրաստ է, արդյո՞ք, Ռուսաստանը գործարար հարաբերությունների մեջ մտնել Ամերիկայի հետ, Վ. Ի. Լենինը որոշակիորեն ասել է. «Իհարկե պատրաստ է, ինչպես և բոլոր երկրների հետ»<sup>5</sup>: Ամերիկյան թղթակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ 1920 թ. նա ասել է. «Թող ամերիկյան կապիտալիստները մեզ ձեռք չտան: Մենք նրանց ձեռք չենք տա: Մենք նույնիսկ պատրաստ ենք նրանց ոսկով վճարել տրանսպորտի և արտադրության համար, օգտակար մեքենաների, գործիքնե-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 28:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 464:

<sup>3</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 453—454:

<sup>4</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 465:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 467:



րի և այլ բաների համար»<sup>6</sup>։ Առաջ քաշելով և հիմնավորելով խաղաղ գոյակցության սկզբունքը կապիտալիստական երկրների՝ հետունեցած հարաբերություններում, Վ. Ի. Լենինը այն դիտում էր որպես անհրաժեշտություն և աշխատավոր ժողովուրդների շահերին համապատասխանող սկզբունք։ «Մենք պարտավոր ենք անել այն ամենը, ինչ կարող է տալ մեր դիվանագիտությունը պատերազմի մոմենտը հեռացնելու համար... Եվ մենք այդ կանխնք»<sup>7</sup>։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ խաղաղ գոյակցությունը դասակարգային պայքարի յուրահատուկ ձև է միջազգային հարաբերություններում, որ խաղաղ գոյակցությունը ասպարեզից բուրբուլիին չի հանում հակադիր սիստեմաների միջև աեղի ունեցող պայքարը։ Կա քանիցս նշել է. «Անցման այդ ժամանակաշրջանը չի կարող պայքարի ժամանակաշրջան չլինել մենուց կապիտալիզմի և ծրնվող կոմունիզմի միջև, այլ խոսքով պարտված, բայց չուշնացված կապիտալիզմի և ծնված, բայց դեռ բուրբուլիին թույլ կոմունիզմի միջև»<sup>8</sup>։

Վ. Ի. Լենինի գլխավորած կառավարության անդամ, արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինը, 1920 թ. հունիսի 17-ին Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նիստում հանդես գալով զեկուցումով, նշել է. «Մեր լուսնագր Լոնդոն և մնում է միևնույնը՝ խաղաղ գոյակցություն բուրբուլիստականությունների հետ, ինչպիսիք էլ որ նրանք լինեն։ Ինքը՝ իրականությունն է մեզ և մյուս պետություններին մղել բանվորագյուղացիական կառավարության և կապիտալիստական կառավարությունների միջև երկարատև հարաբերություններ ստեղծելու անհրաժեշտությանը։ Այդ երկարատև հարաբերությունները հրամայաբար մեր վզին է կապում տնտեսական իրականությունը»<sup>9</sup>։

Սովետական պետությունը ամենուրեք և միշտ պաշտպանել է համընդհանուր խաղաղության շահերը, այն համարելով բուրբուլիստների աշխատավորական զանգվածների շահը։ 1923 թ. խոսելով սովետական դիվանագիտության խնդիրների մասին Գ. Վ. Չիչերինը ասում էր. «Սովետական դիվանագիտությունը ձգտում է խաղաղ, նորմալ, բարեկամական հարաբերություններ դարգացնել բուրբուլիստների հետ՝ ի շահ համընդհանուր խաղաղության,

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 465։

<sup>7</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 465։

<sup>8</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 115—116։

<sup>9</sup> Գ. Վ. Чичерин, Статьи и речи, М., 1960, стр. 145.

տնտեսական զարգացման, համաշխարհային ճգնաժամը հաղթահարելու և իր սեփական տնտեսությունը վերականգնելու»<sup>10</sup>։

Խաղաղ գոյակցությունը որպես կարևորագույն միջազգային-իրավական սկզբունք ծագեց ու գործի դրվեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո, որպես սոցիալ-տնտեսական տարբեր սիստեմաների պատկանող պետությունների արաաքին հարաբերությունների միջազգային-իրավական պատշարմ և այսօր էլ ամբողջովին պահպանում է իր դերն ու նշանակությունը։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո հասարակական տարբեր սիստեմաների գոյակցության անսահմանահատկությունը կայանում է նրանում, որ արդեն խոսքը վերաբերում է հակամարտ սոցիալ-տնտեսական սիստեմաների պատկանող պետությունների գոյակցությանը՝ արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականության ու շահագործման վրա հիմնված հին, կապիտալիստական պետությունների և հանրային սեփականության ու շահագործումը բացասելու սկզբունքի վրա կառուցված նոր, սոցիալիստական պետությունների խաղաղ գոյակցությանը։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կապիտալիզմի սիստեմից անջատվեցին նոր երկրներ, ձևավորվեց սոցիալիստական պետությունների լագերը, սոցիալիզմի համաշխարհային սիստեմը։ Այս պատճառով էլ վրա հասավ երկու համաշխարհային հասարակական սիստեմաների խաղաղ գոյակցության ժամանակաշրջանը։

Հակադիր հասարակական սիստեմներին պատկանող պետությունների խաղաղ գոյակցության մասին լենինյան ուսմունքն իր հետագա զարգացումն ստացավ ՍՄԿԿ XX—XXIII համագումարների որոշումներում և կուսակցության նոր ծրագրում։

Կուսակցության XX համագումարին Կենտրոնական կոմիտեի սոված հաշվետու զեկուցման մեջ ընդգծված է, որ «սոցիալական տարբեր կարգեր ունեցող պետությունների խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքը Լոնդոն է և մնում է մեր կուսակցության արտաքին քաղաքականության գլխավոր գիծը... Մենք գտնում ենք, որ սոցիալական տարբեր սիստեմներ ունեցող երկրները կարող են ոչ միայն պարզապես գոյություն ունենալ մեկը մյուսի կողքին։ Պետք է ավելի հեռուն գնալ՝ դեպի հարաբերությունների բարելա-

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 243—244։

վում, դեպի նրանց միջև վստահության ամրապնդում, դեպի համագործակցություն»<sup>11</sup>։

Սովետական Միության հավատարմությունը խաղաղ գոյակցության սկզբունքին իր արտացոլումն ու ամրապնդումը ստացավ նաև ՍՄԿԿ XXI համագումարի բանաձևում, որտեղ ասված է. «Խաղաղասեր բոլոր ժողովուրդների ջանքերով անհրաժեշտ է միջազգային միջուկում մաքրել ուղղակի հարձակումների հրահրիչ կոչերից, հասնել պետությունների միջև փոխադարձ վստահության և համագործակցության հաստատման՝ անկախ նրանց սոցիալական կարգից...»

Սովետական Միությունը, առաջնորդվելով խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքով, այսուհետև ևս անշեղորեն կձգտի հասնել բոլոր պետությունների հետ համակողմանի համագոյակցության»<sup>12</sup>։

Հակադիր սոցիալ-քաղաքական ու տնտեսական համաշխարհային երկու սիստեմների խաղաղ գոյակցությունը արդիականության հրամայական պահանջն է, որովհետև տրոհված աշխարհը օբյեկտիվորեն կանգնած է երկրներանքի առաջ՝ կա՛մ խաղաղ գոյակցություն, կա՛մ երրորդ համաշխարհային պատերազմ՝ ջերմամիջուկային ավերիչ զենքի կիրառմամբ, դրանից բխող արճավիրքներով։ Առաջագեմ մարդկությունը վճռականորեն մերժում է նոր համաշխարհային պատերազմը և անսասան կերպով կանգնած է պետությունների ու ժողովուրդների խաղաղ հարաբերությունների հաստատման ու պարզացման սկզբունքի վրա։ Արտահայտելով ամբողջ աշխարհի աշխատավորական զանգվածների և առաջագեմ մարդկության շահերը՝ սոցիալիստական պետությունները ամեն ջանք գործադրում են միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը ամրապնդելու և պաշտպանելու համար։ «Սոցիալիզմը մարդկությանը առաջարկել է աշխարհի՝ երկու սիստեմների բաժանվելու սլայմաններում պետությունների հարաբերությունների միակ բանական սկզբունքը՝ սոցիալիստական տարբեր կարգեր ունեցող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքը, որն առաջ է քաշել Վ. Ի. Լենինը։

Սոցիալիստական և կապիտալիստական պետությունների խա-

<sup>11</sup> «Սովետական Միության կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը կուսակցության XX համագումարին», Երևան, 1956, էջ 45, 48։

<sup>12</sup> «Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXI համագումարի բանաձևը», Երևան, 1959, էջ 36, 37։

ղաղ գոյակցությունը մարդկային հասարակության զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությունն է։ Պատերազմը չի կարող և չպետք է միջազգային վեճերը լուծելու միջոց լինի։ Խաղաղ գոյակցություն կամ կատաստրոֆիկ պատերազմ—միայն այսպես է դրել հարցը պատմությունը»<sup>13</sup>,—ասված է Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագրում։

Հետևողականորեն վարելով կապիտալիստական աշխարհի երկրների հետ հաշտ ու խաղաղ պայելու, խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքի վրա կառուցված արտաքին քաղաքականություն, սովետական պետությունը ելնում է այն բանից, որ խաղաղ գոյակցությունը ծառայում է որպես սոցիալիզմի և կապիտալիզմի խաղաղ մրցության հիմք միջազգային մասշտաբով և նրանց միջև մղվող դասակարգային սլայքարի մի յուրահատուկ ձև է։ Խաղաղ գոյակցության անհրաժեշտությունը պայմանավորող օբյեկտիվ գործոնների անկախությունը խոսում է հօգուտ միջազգային իրավունքի այդ կարևորագույն սկզբունքի անշեղ իրականացման։ Այդ գործոններն են. սոցիալիստական հզոր լագերի, խաղաղասեր ոչ սոցիալիստական պետությունների առկայությունը, միջազգային բանվոր դասակարգի և խաղաղության գործը պաշտպանող բոլոր ուժերի միացյալ ջանքերը, իմպերիալիզմի ուժերի նկատմամբ սոցիալիզմի ուժերի, պատերազմի ուժերի նկատմամբ խաղաղության ուժերի հարաճուն գերակշռությունը։

Սոցիալիզմի ու կապիտալիզմի խաղաղ գոյակցությունը երկարատև պրոցես է, որի ընթացքում լուծվում է ով-ումի հարցը համաշխարհային մասշտաբով, ըստ որում, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակին հաջորդած ժամանակաշրջանում միջազգային առպարեզում, հասարակական կյանքում տեղի ունեցած արձատական փոփոխությունները անհերքելիորեն խոսում են հօգուտ սոցիալիստական կարգերի վերջնական հաղթանակի ամբողջ աշխարհում։ Այդ պատմական նպատակի իրականացման համար սոցիալիստական երկրները անշեղորեն ամրապնդում են համաշխարհային սոցիալիստական սիստեմի դիրքերը կապիտալիզմի հետ նրա մրցության մեջ։ Կուսակցության ծրագիրը նշում է, որ խաղաղ գոյակցության պայմաններում ավելի նպաստավոր հնարավորություններ են ստեղծվում կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի սլայքարի համար, հեշտանում է գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների սլայքարը իրենց ազատագրության համար։

<sup>13</sup> «ՍՄԿԿ XXI համագումարի նյութերը», էջ 480։

նաղաղ գոյակցութեան սկզբունքի պաշտպանութիւնը համապատասխանում է բուրժուադիալի նաև այն մասի շահերին, որը հասկանում է, որ ջերմամիջուկային պատերազմը չի խնայի նաև կապիտալիստական հասարակութեան տիրապետող գասակարգերին: Խնդրաղ գոյակցութեան քաղաքականութիւնը համապատասխանում է ամբողջ մարդկութեան կենսական շահերին, բացառութեամբ խոշոր մոնոպոլիաների տերերի ու ռազմամուլներին:

Ինչպես երկու հասարակական սիստեմների գոյակցութիւնը մեր դարաշրջանի օրինաշափութիւնն է, այնպես էլ գոյութիւն ունեցող երկու հակադիր սոցիալ-տնտեսական կարգ ունեցող պետութիւնների խաղաղ գոյակցութիւնը մարդկային հասարակութեան հետագա զարգացման օբյեկտիվ անհրաժեշտութիւնն է: Խաղաղ գոյակցութեան հնարավորութիւնը պայմանավորված է նրանով, որ այժմյան պայմաններում միանգամայն հնարավոր է միջազգային հարցերը լուծել խաղաղ միջոցներով՝ պետութիւնների համաձայնութեամբ: Պետութիւնները գոյութիւն ունեն ոչ թէ մեկուսացած, այլ նրանցից յուրաքանչյուրը գտնվում է պետութիւնների սիստեմում:

Խաղաղ գոյակցութիւնը պայքարի և համագործակցութեան պրոցես է: Պետութիւնների գոյակցութիւնը անխուսափելիորեն ծնում է բազմապիսի միջազգային պրոբլեմներ, որոնց լուծման համար պահանջվում է շահադրույթով պետութիւնների համագործակցութիւն՝ համատեղ ջանքերով և համաձայնեցված կարող ազդ պրոբլեմները լուծելու համար, հակառակ դեպքում չլուծված պրոբլեմները և անհամաձայնութիւնը նրանց շուրջը կհանգեցնեն հակապետութիւնների սրմանը պետութիւնների միջև, կուժեղացնեն պատերազմի վտանգը, իսկ խաղաղ գոյակցութիւնը կդառնա ոչ կայուն և անցողիկ:

Երկու հակադիր սիստեմների խաղաղ գոյակցութիւնն իրենից ներկայացնում է երկկողմ պրոցես, որի բնթացքում տեղի ունի հակադիր հասարակական օրենքների և հօգուտ, և ընդգեմ խաղաղ գոյակցութեան հանդես եկող տարրեր հասարակական ուժերի ընդհարում:

Սոցիալիստական պետութիւնները անշեղորեն հետևում են խաղաղ գոյակցութեան սկզբունքին, որը բխում է նրանց միջազգային խաղաղասիրական քաղաքականութիւնից: Խաղաղութեան քաղաքականութիւնը սոցիալիստական պետութիւնների արտաքին քաղաքականութեան օրինաշափութիւնն է և պայմանավորված է նրանով, որ սոցիալիստական երկրներում հասարակութեան տնտեսական հիմքն են կազմում արտադրութեան միջոցների ու գործիք-

ների հանրային սոցիալիստական սեփականութիւնը և տնտեսութեան կազմակերպման սոցիալիստական եղանակը: Հավաստելով սովետական պետութեան վճռականութիւնը՝ անշեղորեն հետևելու լենինյան խաղաղասիրական կուրսին, ՍՄԿԿ XXIII համագումարը ազդարարեց, որ իր արտաքին քաղաքական գործունեութեան մեջ Սովետական Միութեան կոմունիստական կուսակցութիւնը ելնում է սովետական ժողովրդի արմատական շահերից, սոցիալիստական եղբայրական երկրների հանդէպ և բոլոր երկրների աշխատավորների հանդէպ ունեցած ինտերնացիոնալ հեղափոխական պարտքից: Սովետական պետութեան արտաքին քաղաքականութիւնը նպատակ ունի սոցիալիստական մշուս պետութիւնների հետ միջազգային նպատակովոր պայմաններ ապահովել սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման համար, ամրապնդել սոցիալիստական երկրների միասնութիւնն ու համախմբվածութիւնը, նրանց բարեկամութիւնն ու եղբայրութիւնը, պաշտպանել ազգային-ազատագրական շարժումները և բազմակողմանի համագործակցութիւն իրագործել երիտասարդ զարգացող պետութիւնների հետ, հետևողականորեն պաշտպանել սոցիալական տարրեր կարգ ունեցող պետութիւնների խաղաղ գոյակցութեան սկզբունքը, վճռական հակահարված հասցնել իմպերիալիզմի ագրեսիվ ուժերին, մարդկութեանը փրկել համաշխարհային նոր պատերազմից<sup>14</sup>:

Կապիտալիստական աշխարհում, իմպերիալիզմի առկայութեան պայմաններում պահպանվում է պատերազմի տնտեսական հիմքը: Պատերազմական վտանգի միակ աղբյուրը իմպերիալիզմն է: Իմպերիալիստական լագերը, ամերիկյան մոնոպոլիստների գրւխավորութեամբ, նախապատրաստում է մարդկութեան դեմ ամենասարսափելի ոճրագործութիւն՝ համաշխարհային ջերմամիջուկային պատերազմ: Սակայն նույն կապիտալիստական աշխարհը ինքն է ծնում ընդդեմ պատերազմի հանդես եկող ուժեր, որոնք աշխուրջ հետևում են իմպերիալիստների դավերին և ամեն զնով պայքարում պատերազմի հրձիգների խարդավանքների դեմ:

Փամանակակից աշխարհում պետութիւնների խաղաղ գոյակցութիւնը և համագործակցութիւնը թիկադրվում են հասարակութեան արտադրողական ուժերի զարգացմամբ: Արտադրողական ուժերի զարգացման արդի մակարդակի պայմաններում ոչ մի երկիր չի կարող նորմալ զարգանալ առանց անհրաժեշտ տնտեսական ու կուլտուրական կապերի այլ երկրների հետ: Միջազգային տրեն-

<sup>14</sup> Տե՛ս «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», Երևան, 1967, էջ 295:

տեսական կապերի հաստատումը օբյեկտիվ տնտեսական անհրաժեշտություն է, որը ենթադրում է խաղաղ հարաբերությունների հաստատում տարբեր սիստեմի պետությունների միջև:

Պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքը չի փարածվում գաղափարական ասպարեզի վրա, գաղափարական պայքարի բնագավառում կոմպրոմիսները բացառվում են: Կոմունիստական և բուրժուական աշխարհայացքները հաշտեցվել չեն կարող: Կապիտալիզմի գաղափարախոսները քիչ ջանքեր չեն գործադրում խաղաղ գոյակցության սկզբունքները գաղափարական ասպարեզի վրա տարածելու ուղղությամբ: Նրանք փորձում են աշխարհին հրամցնել երկու համաշխարհային սիստեմների այսպես կոչված *status quo*-ի սկզբունքը, որը նպատակ ունի կասեցնել համաշխարհային կապիտալիզմի դիրքերի հետագա քայքայումը: Այդ ջանքերն ու փորձերը անգոր են փոխել համաշխարհային զարգացման օրինաչափությունը, կասեցնել կապիտալիզմի կործանումը: Նոր, սոցիալիստական կարգերի հաստատումը հասարակության զարգացման անխուսափելի արդյունքն է և նույնքան անհրաժեշտ հասարակական կյանքի անկաշկանդ առաջադիմության համար: Անցման այս շրջանում գաղափարական պայքարը ոչ միայն չի մարում, այլև գնալով սրվում ու խորանում է: Սակայն այդ չի խանգարում պետությունների խաղաղ գոյակցությանը: Յուրաքանչյուր պետություն, մնալով իր գաղափարական դիրքերում, կարող է և պետք է տնտեսական խաղաղ համագործակցություն հաստատի մյուս պետությունների հետ, համագործակցություն հաստատի միջազգային խաղաղության և անվտանգության ապահովմանը վերաբերող բոլոր հարցերում:

Խաղաղ գոյակցությունը իր էությունը վերաբերում է հակադիր սոցիալ-տնտեսական սիստեմների պատկանող պետությունների փոխհարաբերություններին: Այն չի վերաբերում ներպետական հարաբերությունների ասպարեզին: Անհեթեթ են այն փորձերը, որոնք հետապնդում են խաղաղ գոյակցության սկզբունքը պետության ներսում դասակարգային փոխհարաբերությունների վրա տարածելու նպատակ: Շահագործող և շահագործվող դասակարգերի փոխհարաբերություններում սոցիալական համեմատություն պրոպագանդելը անմտություն է, որովհետև շահագործումն ու շահագործվելը անհաշտելի են: Ավելին, խաղաղ գոյակցության անհրաժեշտության ու հնարավորության ընդունումը հակադիր սիստեմների պետությունների փոխհարաբերություններում չի նշանակում դասակարգային պայքարից, կապիտալիզմի նկատմամբ

կոմունիզմի հաղթանակի անխուսափելիության գաղափարից հրաժարում: Ինչպես նշվեց վերը, խաղաղ գոյակցության պայմաններում գաղափարական պայքարը ոչ միայն չի թուլանում, այլև գնալով խորանում ու սաստկանում է՝ ընդգրկելով մարդու աշխարհայացքը, ձևավորող բոլոր գործոնների ոլորտը: Գաղափարական պայքարը երբևք այնպիսի սրությունը չի դրվել, ինչպես արդի ժամանակաշրջանում, այն ներպետական շրջանակներից վաղուց դուրս է եկել համաշխարհային թատերաբեմ:

Հակադիր սիստեմների խաղաղ գոյակցությունը նախ և առաջ նշանակում է գոյակցություն առանց պատերազմի, խաղաղ պայմաններում: Այդ գոյակցությունը ենթադրում է մի շարք պայմաններ, որոնց իրականացումը միայն կարող է խաղաղություն ապահովել պետությունների փոխհարաբերություններում:

Սոցիալ-տնտեսական տարբեր սիստեմների պատկանող պետությունների փոխհարաբերություններում խաղաղ գոյակցության սկզբունքի իրականացումը նախ բացառում է պատերազմը որպես միջպետական վեճերի կարգավորման միջոց: Պատերազմն անհամատեղելի է ժամանակակից միջազգային իրավունքի բուն էության, նրա գլխավոր սկզբունքի՝ խաղաղ գոյակցության սկզբունքի հետ (խոսքը վերաբերում է թե՛ համաշխարհային պատերազմին, թե՛, այսպես կոչված, «փոքր» կամ «լուկալ» պատերազմներին): Խաղաղ գոյակցությունը ենթադրում է, որ պետությունները պետք է ձեռնպահ մնան մեկը մյուսի նկատմամբ զինված ուժի կիրառումից, եթե, իհարկե, խոսքը չի վերաբերում ազատագրական պատերազմներին, ազրեսորներին ու գաղութարարների դեմ մղվող պայքարին: Խաղաղ գոյակցության սկզբունքին համապատասխան, որպես ժամանակակից միջազգային իրավունքի հրամայական պահանջ, պետությունները պարտավոր են միջազգային վեճերը կարգավորել խաղաղ բանակցությունների կամ միջազգային-իրավական այլ միջոցների օգնությամբ: Տարբեր սոցիալ-տնտեսական սիստեմների պատկանող պետությունները, իրենց փոխհարաբերությունները կառուցելով խաղաղ գոյակցության ըսկզբունքի վրա, պետք է գործեն փոխըմբռնման, պետությունների միջև վստահության և միմյանց շահերը հաշվի առնելու նշանաբանով. այդ են պահանջում խաղաղության, ջերմամիջուկային պատերազմը կանխելու շահերը: Խաղաղ գոյակցության սկզբունքից բխում է, որ պետությունները պետք է հետևեն այնպիսի արտաքին քաղաքականության, որպեսզի ապահովվի միմյանց տերիտորիալ ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը, սուվերեն-

նությունը, միմյանց ներքին դործերին շմիջամտելը, հավասարությունն ու համագործակցության փոխադարձ շահավետութիւնը:

Խաղաղ գոյակցության սկզբունքը պետութիւններին պարտավորեցնում է ոչ միայն ձեռնպահ մնալ ուժի կիրառումից բնդդեմ այլ պետութիւնների, այլև շփարել այնպիսի քաղաքականութիւն, որը տանում է դեպի պատերազմ, վարել այնպիսի քաղաքականութիւն, որը նպաստում է միջազգային խաղաղության ու անվտանգության ամրապնդմանը, ծառայում պետութիւնների խաղաղ մրցակցութեանը տնտեսական, դիտական, կուլտուրական և խաղաղ այլ բնագավառներում:

Այս բոլորի հետ մեկտեղ պետք է նկատենք, որ խաղաղ գոյակցութեան սկզբունքը չի կարող գործադրվել գաղութատիրերի և գաղութատիրութեան դոկտրին փոխհարաբերութիւններում: Գաղութատիրերը, իհարկէ, կկամենային, որպեսզի «խաղաղ գոյակցութիւն» հաստատվի իմպերիալիստ-գաղութատիրերի և դադութացված, աստիճանային ժողովուրդների հարաբերութիւններում, այսինքն՝ գաղութները հլու-հնազանդ ենթարկվեին գաղութատիր մետրոպոլիտաններին: Բայց դա, ինչպես ասում են, լինելու բան չէ: Պատմութեան անխիթ օրինաչափորեն շարժում է դեպի գաղութատիրութեան բոլոր ձևերի իսպառ վերացում:

## § 2. ԽԱՂԱՂ ԳՈՅԱԿԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԵՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Խաղաղ գոյակցութեան սկզբունքը պետական քաղաքականութեան մակարդակով առաջին անգամ ազդարարվել է Հոկտեմբերյան հեղափոխութեան ակտերում և աստիճանաբար տեղ է գրավել միջազգային իրավունքում, ընդհուպ մինչև նրա՝ ժամանակակից միջազգային իրավունքում կարևոր հիմունքի նշանակութիւնը ձեռք բերելը: Խաղաղ գոյակցութեան սկզբունքը ապրել է իր զարգացման պրոցեսը, զնալով նա ավելի լայն ճանաչում է ստացել, ընդլայնվել է նրա կիրառման միջազգային-իրավական ոլորտը:

Բուրժուական պետութիւնները ինչպես թշնամաբար դիմավորեցին պրոլետարական հեղափոխութեան հաղթանակը Ռուսաստանում, այնպես էլ խաղաղ գոյակցութեան մասին լսել անգամ չէին կամենում: Սակայն ամեն ինչ չէ, որ կախված է նրանց սուբյեկտիվ կամքից: Համաշխարհային տնտեսական կապերը և նրանցում պետութիւնների ու հենց բուրժուազիայի տնտեսական շահերը ավելի զորեղ գտնվեցին կապիտալիստական երկրների տիրապետող քա-

ղաքական շրջանների դատապարտված հակասովետական, թշնամական վարքազմի նկատմամբ: Ստացվեց այնպես, որ անգամ մինչև Սովետական Ռուսաստանի կառավարութեանը իրավաբանորեն ճանաչելը կապիտալիստական պետութիւնները, թեկուզ սանձանափակ ծավալով, սակայն այնուամենայնիվ նրա հետ մտան որոշակի հարաբերութիւնների մեջ, այդ թվում առաջին հերթին տնտեսական բնույթի: Այսպես, օրինակ, Անգլիան Սովետական Ռուսաստանի հետ առևտրական հարաբերութիւնների մեջ մտավ դեռևս 1921 թ., սակայն իրավաբանորեն ՍՍՀՄ-ին ճանաչեց միայն 1924 թ.: Խաղաղ գոյակցութեան անհրաժեշտութիւնը իրեն զգացնել տվեց և բուրժուական երկրների կառավարող որոշակի շրջաններ սկսեցին հասկանալ նրա նշանակութիւնը պետև Կաննի ու Ջենովայի (1922 թ.) կոնֆերանսները հրավիրելու շրջանում: Սովետական Ռուսաստանին հարկադրաբար հրավիրելով տնտեսական-ֆինանսական հարցերը կարգավորելու նպատակով գումարվող համաեվրոպական կոնֆերանսին, բուրժուական պետութիւնները իրենց այդ քայլով, կամա թե ակամա, խաղաղ գոյակցութեանը իրավական տեսք էին տալիս, այն մտնում էր միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի շարքը որպես իրավաբանական սկզբունք, որի վրա աստիճանաբար կառուցվեցին սոցիալիստական և բուրժուական պետութիւնների փոխհարաբերութիւնները:

Բնութագրելով Սովետական Ռուսաստանին կոնֆերանս հրավիրելու պայմանները, Վ. Ի. Լենինը 1922 թ. մայիսին Ջենովայի կոնֆերանսում սովետական պատվիրակութեան հաշվետվութեան վերաբերյալ Համառուսաստանյան ԿԳԿ-ի որոշման նախագծում այսպես է գրել. «...Կաննի բանաձևի § 1-ը, ընդունելով սեփականութեան (կապիտալիստական, կամ մասնավոր սեփականութեան, և կոմունիստական սեփականութեան...) երկու սխտեմների իրավահավասարութիւնը, այսպիսով՝ ստիպված է, թեպետև անուղղակի կերպով, ընդունել սեփականութեան առաջին սխտեմի կրողը, սնանկութիւնը, երկրորդի հետ, որպես հավասարի հետ հավասարի, համաձայնութեան անխուսափելիութիւնը»<sup>15</sup>:

Այստեղից երևում է, որ խաղաղ գոյակցութեան սկզբունքի ճանաչումը նախ և առաջ նշանակում էր սեփականութեան երկու ձևերի (սոցիալիստական և կապիտալիստական) իրավահավասարութեան ճանաչումը միջազգային ասպարեզում:

<sup>15</sup> Վ. Ի. Լենին, Ծրկեր, հ. 33, էջ 421:

Հոկտեմբերյան հեղափոխության 6-րդ տարեդարձին նվիրված հոդվածում, անդրադառնալով 1922 թ. միջազգային իրազրույթյանը, Գ. Վ. Չիչերինը դրում է. «Կաննի հայտնի բանաձևում հրաշակվեց երկու տնտեսական սիստեմների իրավահավասարության սկզբունքը՝ նրանց փոխադարձ հարաբերություններում: Սովետական կառավարությունը չեքոքեց այդ սկզբունքը և այն առաջ քաշեց սրպես հիմք՝ իր միջազգային քաղաքականության և համաշխարհային կապիտալի հետ տնտեսական հարաբերություններում: Սակայն կապիտալիստական աշխարհը սահմանափակվեց այդ սկզբունքը հռչակելով, այն շիրականացնելով գործնականում»<sup>16</sup>: Խաղաղ գոյակցության սկզբունքը տեղ է գտել Արևելքի երկրների հետ սովետական պետության կնքած պայմանագրերում: Թեպետև «խաղաղ գոյակցություն» արտահայտությունը այդ պայմանագրերում հղովված չէ, սակայն այդ գաղափարը ներծծված է պայմանագրերի բուն էության մեջ:

Հանգես դալով որպես ժողովուրդների միջև խաղաղության նախագուշակ, սովետական պետությունը հետևողականորեն կիրառել է բոլոր երկրների հետ խաղաղ հարաբերություններ հաստատելու քաղաքականություն: Այդ նպատակին էին ծառայում սովետական կառավարության ջանքերը՝ կապիտալիստական աշխարհի պետություններից իրավաբանական ճանաչում ստանալու համար, և նա այդ բանին հասավ: Բուրժուական պետությունները սեփական շահերից ելնելով ճանաչեցին սովետական կառավարությանը, որը և նպաստեց այս կամ այն շափով համագործակցություն հաստատելու կապիտալիստական երկրների հետ:

Կապիտալիստական երկրների կողմից սովետական կառավարությանը ճանաչելը ինքնին նշանակում էր ճանաչել խաղաղ գոյակցության սկզբունքը, որքան էլ այդ անցանկալի լինեք բուրժուական պետությունների համար:

Տարբեր սիստեմների պետությունների համագործակցությունը և միջազգային իրավունքի նորմերով թույլատրելի շրջանակներում պայքարը խաղաղ գոյակցության բաղադրիչ տարրերն են: Սրան համապատասխան սովետական պետությունը, ձգտելով համակողմանի համագործակցության բուրժուական բոլոր պետությունների հետ, միաժամանակ անդադրում պայքարել է բուրժուական իմպերիալիստական պետությունների ագրեսիվ քաղաքականության և ոտնձգությունների դեմ: Այդ նպատակին են ծառայել սովետական

պետության կողմից տարբեր երկրների հետ կնքած շեղբույթյան, չհարձակման պայմանագրերը, Ազգերի լիգայի մեջ մտնելը և այլն: Այս պայմանագրերը և մասնավորապես բուրժուական առանձին պետությունների հետ կնքած փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանագրերը (Ֆրանսիայի, Չեխոսլովակիայի հետ 1935 թ. 2/IV և 16/V) միջազգային իրավական տեսակետից ամրապնդում էին խաղաղ գոյակցության սկզբունքը, ընդլայնելով նրա կիրառման ոլորտը: Այսպիսով, միջազգային հարաբերությունների վարդաքմանը ղուղընթաց զարգանում է խաղաղ գոյակցության ըսկըղրունքը, հարստանալով նոր տարրերով: ԾՅԵ սկզբում խոսքը վերաբերում էր նոր տիպի պետության գոյության իրավունքի ճանաչմանը համաշխարհային միջպետական հարաբերությունների ոլորտում, երկու սիստեմների պետությունների խաղաղ բնակակցությանը և «կապիտալիստական երկրների հետ պատերազմական հարաբերություններից խաղաղ ու առևտրական հարաբերություններին»<sup>17</sup> անցնելուն, ապա հետագայում խաղաղ գոյակցությունն արտահայտվում է միջազգային իրավունքի որոշակի ըսկըղրունքներում, ինչպիսիք են սեփականության երկու սիստեմների իրավահավասարությունը և տնտեսական համագործակցությունը՝ ՍՍՀՄ-ում արտաքին առևտրի մենաշնորհը ճանաչելու հիման վրա:

Միջազգային հարաբերություններում խաղաղ գոյակցության ամրապնդման ու ճանաչման համար կարևոր իրադարձություն էր Բրիտան-Կելլոգի պակտին 1928 թ. ՍՍՀՄ-ի միանալը և այդ պակտը ՍՍՀՄ-ի ու նրա սահմանակից պետությունների փոխհարաբերություններում Մոսկվայի 1929 թ. փետրվարի արձանագրության հիման վրա կիրառության մեջ դնելու հանգամանքը: Այս պակտն ու արձանագրությունը պարտավորեցնում էին հրաժարվել պատերազմից, որպես ազգային քաղաքականության գործիքից: Այս նշանակում էր, որ պետությունները ճանաչում են խաղաղ գոյակցության զլխավոր պահանջը՝ միջպետական վեճերի կարգավորման համար շղթիվ պատերազմի, և ճանաչում էին որպես միջազգային-իրավական պարտավորություն, այն էլ պայմանագրային հիման վրա:

Միջազգային հարաբերություններում Սովետական Միության նշանակության ու դերի աճման պայմաններում խաղաղ գոյակցությունը աստիճանաբար ճանաչում է գտնում և ամրապնդվում

<sup>16</sup> Г. В. Чичерик, Статьи и речи, стр. 264.

<sup>17</sup> Վ. Ի. Լեևիճ, Երկեր, հ. 32, էջ 216:

որպես ժամանակակից միջազգային իրավունքի գլխավոր օրյակ-  
տիվ հիմք:

Խաղաղ գոյակցությունն առանձնապես զարգացավ և հաստա-  
տուն կերպով արմատավորվեց երկրորդ համաշխարհային պատե-  
րազմի տարիներին:

Ընդհանուր թշնամու դեմ հանդիման, ժողովուրդների հզոր  
ներդրածության ներքո, խաղաղ գոյակցությունը դառնում է միջաղ-  
դային իրավունքի նախաշեղջուկ՝ հակահիտլերյան կոալի-  
ցիայի մեջ մտնող բոլոր պետությունների հետ Սովետական Միու-  
թյան հարաբերություններում, Հակահիտլերյան կոալիցիայի ըս-  
տեղծման իսկ փաստը, սովետական պետության ակտիվ մասնակ-  
ցության և ղեկավար դերի պայմաններում, ինքնին խոսում էր  
այն մասին, որ խաղաղ գոյակցության սկզբունքի կիրառման շրջ-  
անակներն ընդլայնվել են և մեծաթիվ պետություններ փաստո-  
րեն ու իրավաբանորեն նախաչել են խաղաղ գոյակցությունը որ-  
պես ժամանակաշրջանի միջաղդային իրավունքի կարևորագույն  
նորմ:

Խաղաղ գոյակցությունը հիմք հանդիսացավ ինչպես հակա-  
հիտլերյան կոալիցիայի անդամների համագործակցության հա-  
մար՝ ընդհանուր թշնամու դեմ նրանց մղած սլաքարում, այնպես  
էլ Ետպատերազմյան սիստեմի ստեղծման գործում: Այդ սկզբուն-  
քը իրավաբանական նախաշեղջուկ համաշխարհա-  
յին պատերազմի տարիներին կնքված մի շարք կարևորագույն մի-  
ջաղդային-իրավական ակտերում: Այսպես, օրինակ, 1942 թ.  
մայիսի 26-ի սովետա-անգլիական՝ հիտլերյան Գերմանիայի և  
նրա հանդակիցների դեմ Եվրոպայում ռազմական դաշինքի ու  
պատերազմից հետո համագործակցության և փոխադարձ օգնու-  
թյան վերաբերյալ պայմանագրի 5-րդ հոդվածում սահմանվում  
էր, որ հաշվի առնելով կողմերից յուրաքանչյուրի անվտանգության  
շահերը, նրանք համաձայնում են Եվրոպայում անվտանգության  
կազմակերպման և տնտեսական բարգավաճման նպատակով,  
խաղաղությունը վերականգնելուց հետո աշխատել համատեղ՝  
սերտ և բարեկամական համագործակցության մեջ: Կողմերը պար-  
տավորվում էին հիշյալ նպատակների իրականացման ժամանակ  
հաշի առնել միավորված ազգերի շահերը և գործել երկու ըս-  
կրգբունքի համապատասխան՝ չձգտել տերիտորիալ նեոֆեռում-  
ների իրենց համար և չմիջամտել մյուս պետությունների ներքին  
գործերին: Նույն պայմանագրի 3-րդ հոդվածով կողմերը պայմա-  
նավորվեցին միավորվել մյուս համախոհ պետությունների հետ՝

առաջարկություններ ընդունելու և ստատերազմյան շրջանում ընդ-  
հանուր գործողությունների վերաբերյալ՝ խաղաղությունը պահ-  
պանելու և ազդեցության դիմակայելու նպատակով: Կողմերը միա-  
ժամանակ պարտավորվում էին փոխադարձաբար միմյանց ամեն  
կարգի տնտեսական օգնություն ցույց տալ (հոդվ. 6), հավատա-  
րիմ մնալ դաշնակցային պարտավորություններին (հոդվ. 7)<sup>18</sup>:

Խաղաղ գոյակցության սկզբունքն իր իրավաբանական մարմ-  
նավորումը դտավ նաև սովետա-ամերիկյան 1942 թ. հունիսի  
11-ի համաձայնագրում: ՍՍՀՄ-ն ու ԱՄՆ-ը պայմանավորվում էին  
«աջակցել փոխադարձաբար շահավետ տնտեսական հարաբերու-  
թյուններին միմյանց միջև և համաշխարհային տնտեսական հա-  
րաբերությունների բարելավմանը: Այդ նպատակով նրանք պետք  
է նախատեսեն Ամերիկայի Միացյալ Նահանգների և Սովետական  
Մոցիալիստական Հանրապետությունների Միության համաձայ-  
նեցված գործողությունների հնարավորությունը, որոնց կարողա-  
նան միանալ նրանց նման մտածող մյուս բոլոր պետությունները  
և որոնք ուղղված լինեն... ծառայեն... միջազգային առևտրում  
խտրականության բոլոր ձևերի վերացմանը, մաքսատուրքերի և  
այլ առևտրական պատենների կրճատմանն ու ընդհանրապես  
բոլոր այն տնտեսական նպատակներին հասնելուն»<sup>19</sup>, որոնք շա-  
րադրված են 1941 թ. օգոստոսի 14-ի անդր-ամերիկյան համա-  
տեղ ղեկավարացիայում և որին միացել է ՍՍՀՄ-ը:

Խաղաղ գոյակցության սկզբունքներն ավելի ծավալուն են  
արտահայտված բարեկամության, փոխադարձ օգնության և ևտ-  
պատերազմյան համագործակցության վերաբերյալ ՍՍՀՄ-ի և  
Չեխոսլովակյան Հանրապետության միջև 1943 թ. դեկտեմբերի  
12-ի պայմանագրում, որի 4-րդ հոդվածում ասված է. Բարձր  
Պայմանավորվող կողմերը համաձայնում են սերտ և բարեկամա-  
կան համագործակցություն հաստատել միմյանց միջև՝ խաղա-  
ղությունը վերականգնելուց հետո և գործել միմյանց անկախու-  
թյունն ու սովերենությունը փոխադարձաբար հարգելու, միմյանց  
ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների հիման վրա՝ նրանք  
համաձայնում են պատերազմից հետո հնարավոր լայն մասշտաբ-  
ներով ծավալել տնտեսական համագործակցությունը միմյանց մի-

<sup>18</sup> ԶԷՍ «Внешняя политика Советского Союза в период Отечественной войны», 1941, 4, 1, էջ 235—238:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 245:

չև և ամեն կարգի տնտեսական օգնություն ցույց տալ միմյանց<sup>20</sup>։  
Սովետա-Ֆրանսիական 1944 թ. դեկտեմբերի 10-ի պայմանագրով խաղաղ գոյակցության հիման վրա կողմերը պայմանավորվեցին պատերազմն ավարտելուց հետո համատեղ ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ կլինեն զերմանական նոր ագրեսիայի վրա հասնելը կանխելու համար (հոդվ. 3), իսկ եթե այդպիսի ագրեսիա այնուամենայնիվ ծագի նրանցից մեկի դեմ, ապա մյուս կողմը անհապաղ օգնություն և աջակցություն ցույց կտա ագրեսիայի ենթարկված կողմին (հոդվ. 4)։ Կողմերը պարտավորվում էին հավատարիմ մնալ իրենց ստանձնած միջազգային պարտավորություններին (հոդվ. 5)։ Նրանք համաձայնեցին պատերազմից հետո փոխադարձաբար միմյանց օգնություն ցույց տալ (հոդվ. 6)<sup>21</sup>։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հակահիտլերյան կռույցիայի մասնակից տերությունների համակողմանի համագործակցությունը և փոխադարձ օգնությունը ապացույց էին այն բանի, որ տարբեր սիստեմների պետությունների փոխհարաբերություններում ոչ միայն կիրառելի է գոյակցության ըսկզբունքը, այլև նրանք կարող են սերտ դաշինքի մեջ լինել՝ ընդհանուր թշնամու դեմ մղվող պատերազմում։ Համագործակցության ու դաշինքի այդ տարիներին տերությունները կարողանում էին լուծել ծագած վեճերը փոխադարձաբար ընդունելի ձևով։ Ետպատերազմյան համագործակցության շուրջը կնքված համաձայնագրերում որոշակիորեն ճանաչում է ստացել խաղաղ գոյակցությունը որպես ժամանակակից միջազգային իրավունքի կարևորագույն սկզբունք։

Խաղաղ գոյակցության գաղափարը իր զարգացումն է ստացել չորս մեծ տերությունների՝ անվտանգության միջազգային կազմակերպություն հիմնադրելու մասին 1943 թ. հոկտեմբերի 30-ի մոսկովյան դեկլարացիայում։ Նախատեսվում էր, որ այդ կազմակերպությունը պետք է հիմնադրվի «խաղաղասեր բոլոր պետությունների սովբերն հավասարության հիման վրա, որի անդամ կարող են լինել նման բոլոր մեծ ու փոքր պետությունները»։

Հաղթանակի ընդհանուր ձգտումը հնարավոր դարձրեց միավորել խաղաղասեր բոլոր ժողովուրդների ջանքերը և հաղթահարել

պատերազմի հետ կապված անհամար դժվարությունները։ Միջազգային-իրավական տեսակետից այդ ջանքերը արտացոլվել ու ամրապնդվել են այնպիսի իրավաբանական առաջնակարգ նշանակություն ունեցող փաստաթղթերում, ինչպիսիք են Քեհնդանի, Յալթայի և Պոտսդամի դեկլարացիաները, որոնցում ամուր տեղ է գտել խաղաղ գոյակցությունը որպես միջազգային իրավունքի սկզբունք։ Տարբեր սոցիալ-տնտեսական սիստեմներ ունեցող ՄՍՀՄ-ը, մեկ կողմից, և ԱՄՆ-ն ու Անգլիան, մյուս կողմից, Քեհնդանի (1943 թ. 2/XII) դեկլարացիայում հայտարարեցին. «Մենք մեր վճռականությունն ենք հայտնում այն բանում, որ մեր երկրները պետք է աշխատեն համատեղ ինչպես պատերազմի ժամանակ, այնպես էլ հետագա խաղաղ ժամանակաշրջանում... մենք համոզված ենք, որ մեր միջև գոյություն ունեցող համաձայնությունը կայուն խաղաղություն կապահովի։ Մենք լիովին ընդունում ենք մեր և միավորված բոլոր ազգերի վրա ընկած բարձր պատասխանատվությունը՝ այնպիսի խաղաղություն իրականացնելու, որ արժանանա հողագնդի ժողովուրդների ճշտող մեծամասնության հավանությունը և որը վերացնի պատերազմի աղետներն ու սարսափները»<sup>22</sup>։

Քայլ առ քայլ մոտենալով բաղձալի հաղթանակին, միավորված ազգերը ընհանջեցին խաղաղ գոյակցության հիման վրա աշխարհի գործերը կարգավորելու և կազմակերպելու գաղափարից։ Այստեղ վճռական նշանակություն ուներ ժողովուրդների աշաւուրջ ներգործությունը իրենց կառավարությունների վրա, միջազգային հարաբերությունների ամբողջ ընթացքի վրա։ Ժողովուրդների վճռականությունը քիչ դեր չխաղաց երեք մեծ տերությունների կառավարությունների ղեկավարների Յալթայի (Դրիմի) կոնֆերանսի հաջող ելքի համար։

ՄՍՀՄ-ը, Անգլիան ու ԱՄՆ-ն Յալթայի կոնֆերանսում (1945 թ. 4—12/II) ընդունված վավերագրերում պարտավորվեցին գործել համատեղ և խաղաղ գոյակցության հիման վրա։ Խաղաղ գոյակցությունը նորից ամրապնդվեց որպես միջազգային իրավական սկզբունք, որի վրա կառուցվել էին դաշնակից երեք տերությունների փոխհարաբերությունները պատերազմի տարիներին և որի հիման վրա պետք է դասավորվեին նրանց փոխհարաբերությունները հուպատերազմյան ժամանակաշրջանում։ Այդպիսի վճռակա-

<sup>20</sup> Տե՛ս «Внешняя политика Советского Союза в период Отечественной войны», М., 1946, т. II, էջ 329։

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 375։

<sup>22</sup> «Внешняя политика Советского Союза в период Отечественной войны», М., 1947, т. III, стр. 369.



նությամբ է տոգորված Սովետական Միության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի համատեղ հայտարարության IX բաժինը, որտեղ ասված է. «Մեր խորհրդակցությունը Ղրիմում կրկին հաստատեց մեր ընդհանուր վճռականությունը՝ առաջիկա խաղաղ ժամանակաշրջանում պահպանել և ուժեղացնել նպատակների և գործողությունների այն միասնությունը, որը այժմյան պատերազմում հաղթանակը Միավորված Ազգերի համար դարձրեց հնարավոր և անտարակուսելի Մենք հավատում ենք, որ դա մեր կառավարությունների սրբազան պարտականությունն է մեր ժողովուրդներին, ինչպես նաև աշխարհի ժողովուրդների առջև»:

Մեր երեք երկրների միջև և աշխարհի խաղաղասեր բոլոր ժողովուրդների միջև շարունակվող ու աճող համագործակցության և փոխըմբռնման պայմաններում կարող է իրականացվել մարդկության գերագույն ձգտումը՝ կայուն և տևական խաղաղությունը»<sup>23</sup>:

Ղրիմի կոնֆերանսի որոշումներում մեկ կողմից ամրապնդվեց խաղաղ գոյակցության զաղափարը, մյուս կողմից շարադրվեցին նրա մի շարք սկզբունքներ: Ազատագրված Եվրոպայի վերաբերյալ զեկվարացիայում, մասնավորապես, ընդգծվում էր, որ «պետք է ապահովվի սովորեն իրավունքների և ինքնակառավարման վերականգնումը» ելնելով այն բանից, որ բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն «ընտրելու այն կառավարման ձևը, որի պայմաններում նրանք պետք է ապրեն»:

Խաղաղ գոյակցության ոգով են ներծծված նաև Պոտսդամի կոնֆերանսի կարևոր որոշումներն ու համաձայնագրերը: Երեք տերությունների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսի վերաբերյալ հատուցողարության մեջ աղղարարվեց, որ այդ կոնֆերանսը ամրապնդում է կապերը երեք տերությունների միջև և ընդլայնում նրանց համագործակցության ու ըմբռնողության շրջանակները: Երեք կառավարությունների ղեկավարները արձանագրեցին, որ իրենք հեռանում են կոնֆերանսից նոր համողմունքով, որ իրենց կառավարություններն ու ժողովուրդները միավորված մյուս ազգերի հետ համատեղ կապահովեն արդարացի և կայուն խաղաղության ստեղծումը<sup>24</sup>:

Մոսկվայի, Թեհրանի, Ղրիմի, Բեռլինի կոնֆերանսներում ընդունված և միջազգային իրավունքի աղբյուր հանդիսացող փաս-

տաղթղթերում, այսպիսով, խաղաղ գոյակցության սկզբունքները հետագա հաստատում ու զարգացում ստացան: Այդ սկզբունքները պարտավորեցնում են մասնակից պետություններին՝ գործել համատեղ ի շահ ընդհանուր խաղաղության և ժողովուրդների անվտանգության: Սակայն նույնպես շրջանում, ինչպես հայտնի է, ԱՄՆ-ը և Անգլիան ընթացան խաղաղության շահերին հակառակ ուղղությամբ, որը նրանց չի ազատում խաղաղ գոյակցության սկզբունքներին հետևելու միջազգային պարտավորությունից:

Խաղաղ գոյակցության գաղափարն է դրված ՄԱԿ-ի կանոնադրությամբ հռչակված նպատակների ու սկզբունքների հիմքում: Կանոնադրության պրեամբուլայում ազդարարված է, որ Միավորված Ազգերի ժողովուրդները չի են վճռականությամբ հուսալի հավատ ստեղծելու բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների իրավունքների հավասարության ասպարեղում, պայմաններ ստեղծել, որպեսզի հնարավորություն լինի ապահովելու արդարությունն ու հարգանքը պայմանագրերից և միջազգային իրավունքի մյուս աղբյուրներից բխող պարտավորությունների նկատմամբ և նպաստել սոցիալական առաջադիմությանն ու կյանքի պայմանների բարելավմանը մեծ ազատության պայմաններում: Պրեամբուլայում անուհետև ասված է, որ այդ նպատակների համար Միավորված Ազգերը պետք է «ցուցաբերեն հանդուրժողականություն և ապրեն միասին՝ հաշտ մեկը մյուսի հետ, որպես բարի գրացիներ, և միավորեն իրենց ուժերը միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը սատարելու համար» և, սկզբունքներ ընդունելով ու մեթոդներ սահմանելով ապահովել, որպեսզի զինված ուժերը կիրառվեն ոչ այլ կերպ, քան ընդհանուր շահերի համար: Կանոնադրության 26-րդ հոդվածում ասված է, որ «սպառազինման գործի համար նվազագույն շափով համաշխարհային մարդկային ուժեր և տընտեսական ռեսուրսներ հատկացնելով միջազգային խաղաղություն և անվտանգություն հաստատելուն և սատարելուն աջակցելու նպատակով» Անվտանգության Խորհուրդը բանաձևում է սպառազինությունների կարգավորման սիստեմ ստեղծելու պլաններ, որի համար նա պատասխանատու է:

Խաղաղ գոյակցությունը տեղ է գտել ՄԱԿ-ի կանոնադրության նաև մի շարք այլ հուլիմներում ու բաժիններում: 11-րդ հոդվածի 1-ին կետը Գլխավոր Ասամբլեային լիազորում է քննարկել միջազգային խաղաղության և անվտանգության գործում համագործակցության ընդհանուր սկզբունքներ, այդ թվում զինաթափում սահմանող և սպառազինությունները կարգավորող սկզբունքներ:

<sup>23</sup> «Внешняя политика Советского Союза в период Отечественной войны», т. III, стр. 109.

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 336—337:

կուկտիվ անվտանգութունը որպես խաղաղ գոյակցութեան գաղափարի ու սկզբունքի բաղադրիչ մաս ՄԱԿ-ի կանոնադրութեան մեջ տեղ գտած սկզբունքներից մեկն է: Կանոնադրութեան համաձայն ՄԱԿ-ի անդամ պետությունները պետք է «միավորեն իրենց ուժերը՝ միջազգային խաղաղությունն ու անվտանգութունը պաշտպանելու համար» և այդ նպատակով «էֆեկտիվ կոլեկտիվ միջոցներ ձեռնարկեն խաղաղության դեմ ուղղված սպառնալիքը կանխելու ու վերացնելու և ազդեցիկ ախտերն ու խաղաղության մյուս խախտումները ճնշելու համար» (Նոդվ. 1-ին, կետ 1):

ՄԱԿ-ի կանոնադրությունը բացառում է պատերազմը որպես միջպետական վեճերի կարգավորման միջոց և պահանջում միջազգային բոլոր վեճերը լուծել միայն խաղաղ միջոցներով: Կանոնադրության 2-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ «Միավորված Ազգերի Կազմակերպության բոլոր անդամները իրենց միջազգային վեճերը լուծում են խաղաղ միջոցներով՝ այնպես, որպեսզի միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և արդարությունը շինթարկեն սպառնալիքի»: Նույն նպատակը շարադրված է նաև 1-ին հոդվածի 1-ին կետում, որտեղ ազդարարված է, որ Կազմակերպության խնդիրն է արդարության և միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան «հարթել կամ լուծել միջազգային վեճերը կամ իրադրությունները, որոնք կարող են հանգեցնել խաղաղության խախտմանը»:

Խաղաղ գոյակցության կարևոր գրույթներից են ժողովուրդների իրավահավասարությունն ու ինքնորոշման իրավունքը, որոնք նույնպես ամրապնդված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ: Կանոնադրության «նպատակներն ու սկզբունքները» պիսի 1-ի հոդվածի 2-րդ կետում սահմանված է, որ կազմակերպությունը պետք է զարգացնի «բարեկամական հարաբերություններն ազգերի միջև՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը հարգելու հիման վրա»: ՄԱԿ-ի կանոնադրությունը սահմանում է, որ բոլոր անդամ պետությունները պետք է բարեխղճորեն կատարեն կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները, որը նույնպես խաղաղ գոյակցությունից բխող սկզբունք է: Վերջապես, խաղաղ գոյակցության կարևորագույն պահանջներից է՝ հարգել տարբեր սոցիալ-տնտեսական սիստեմների պատկանող պետությունների սուվերենությունը, տերիտորիալ ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը: Այդ պահանջն ամրապնդված է կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետում. «Միավորված Ազգերի Կազմակերպության բոլոր անդամները իրենց մի-

ջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժի սպառնալիքից կամ նրա կիրառումից՝ ինչպես ընդդեմ ամեն մի պետության տերիտորիալ անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության, այնպես էլ ամեն մի այլ ձևով, որն անհամատեղելի է միավորված ազգերի նպատակների հետ»:

Կարելի է բերել կանոնադրության մեջ շարադրված նաև այլ գրույթներ, որոնք խոսում են խաղաղ գոյակցության սկզբունքը Միավորված Ազգերի կողմից ճանաչելու մասին, սակայն բավարարվենք շարադրվածով:

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ձևավորումը օրակարգից չհանեց խաղաղ գոյակցության անհրաժեշտությունը, ավելին, երկու համաշխարհային սիստեմների կողք-կողքի գոյության փոստը հրամայաբար պահանջում է հակադիր սիստեմների պատկանող պետությունների հարաբերությունները կառուցել հանդուրժողականության ոգով, այդ հարաբերություններում բացառելով ինչպես հակահեղափոխության, այնպես էլ հեղափոխության արտահանման ամեն մի փորձ: Եթե առաջներում խոսքը վերաբերում էր մեկ կողմից սուվետական պետության և մյուս կողմից կապիտալիստական պետությունների խաղաղ գոյակցությանը, ապա այժմ աշխարհը կանգնած է համաշխարհային երկու սիստեմների խաղաղ գոյակցության անհրաժեշտության առաջ: Խաղաղ գոյակցության բովանդակությունը զարգացել է, իսկ կիրառման ոլորտը՝ ընդլայնվել, որն իր արտացոլումն է գտել ինչպես ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, այնպես էլ այդ կազմակերպության մարմինների ընդունած համապատասխան փաստաթղթերում:

Խաղաղ գոյակցության զարգացմանը զուգընթաց աճել են նրա իրականացմամբ շահագրգռված ուժերը, որոնք էլ գլխավոր ազդակն ու զործոնն են միջազգային իրավունքի այդ սկզբունքի իրականացումն ապահովելու ասպարեղում: Խաղաղ գոյակցության սկզբունքի իրականացումը չի կարելի թողնել ինքնահոսի, դա քաջ գիտակցում են խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի ուժերը: Այդ ուժերի հարաճուն ներգործությունը միջազգային հարաբերությունների ամբողջ ընթացքի վրա խաղաղ գոյակցության հետևողական և ծավալուն իրականացման հիմնական գրավականն է: Խաղաղ գոյակցությունը ջերմամիջուկային ամայացնող պատերազմի հակոտնյան է:

«Ժողովուրդների ջանքերը պետք է կենտրոնացվեն իմպերիալիստներին ժամանակին սանձելու, մահաբեր դեմք գործադրելու հնարավորությունից նրանց զրկելու վրա, — ասված է ՄԱԿ Ժրա-

գրրում: Գլխավորն այն է, որ կանխվի ջերմամիջուկային պատե-  
րագմբ, թույլ շարվի, որ այն բռնկվի: Եվ մարդկանց ներկա սե-  
րունդը ի վիճակի է անելու այդ բանը»<sup>25</sup>:

Իմպերիալիստական տերությունների սաղմամուլ շրջանների  
ազդեցիվ քայլերը ուժեղացնում են միջազգային լարվածությունը:  
Սանձազերծելով այսպես կոչված լոկալ պատերազմներ, ԱՄՆ-ի և  
ազդեցիկացի գծով նրա արբանյակները լուրջ վտանգ են ստեղծում  
համընդհանուր խաղաղության և ժողովուրդների անվտանգության  
համար: Սակայն խաղաղության թշնամիների գործողությունները  
հանգիստում են ժողովուրդների աճող դիմադրությանը, որոնք լի են  
վճռականությունով ամեն գնով սանձաճարել պատերազմի հրձիգ-  
ներին:

<sup>25</sup> «ԱՄԿՊ XXII համագումարի նյութեր», էջ 479:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

§ 1. Սոցիալիստական պետությունների միջև հարաբերությունները  
նոր, բարձր ասիայի միջազգային հարաբերություններ են: § 2. Սո-  
ցիալիստական պետությունների ֆաղափական համագործակցու-  
թյան միջազգային իրավական ձևերը: § 3. Սոցիալիստական պետու-  
թյունների տնտեսական և գիտա-տեխնիկական համագործակցու-  
թյան միջազգային իրավական ձևերը: § 4. Սոցիալիստական պե-  
տությունների համագործակցության այլ ձևերը:

#### § 1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ, ԲԱՐՁՐ ՏԻՊԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական Գեր-  
մանիայի և միլիտարիստական Ճապոնիայի ջախջախումը նպաս-  
տավոր պայմաններ ստեղծեցին Եվրոպայի և Ասիայի մի շարք եր-  
կրների ժողովուրդների համար տապալելու կապիտալիստների ու  
կալվածատերերի իշխանությունը: Սոցիալիզմի կառուցման ուղու  
վրա կանգնեցին Ալբանիայի, Բուլղարիայի, Գերմանական Դեմո-  
կրատական Հանրապետության, Վիետնամի Դեմոկրատական Հան-  
րապետության, Լեհաստանի, Կորեական Ժողովրդա-Դեմոկրատա-  
կան Հանրապետության, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Չինաս-  
տանի, Ռումինիայի, Հարավսլավիայի, Կուբայի, իսկ դրանից էլ ա-  
ռաջ՝ Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության ժողովուրդ-  
ները, որոնք Մովետական Միության հետ միասին կազմեցին սո-  
ցիալիզմի համաշխարհային լագերը: «Ստեղծվեց սոցիալիզմի հա-  
մաշխարհային սխտեմը՝ սոցիալական, տնտեսական ու քաղաքա-  
կան համագործակցությունն ազատ, սուվերեն ժողովուրդների, ո-

րոնք ընթանում են սոցիալիզմի և կոմունիզմի ուղիով, միավորված են շահերի ու նպատակների ընդհանրությամբ, միջազգային սոցիալիստական համերաշխության սերտ կապերով»<sup>1</sup>, —ասված է ՍՄԿԿ ծրագրում:

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրների ուժերի ու հնարավորությունների միավորումը հուսալի երաշխիք է իմպերիալիզմի ամեն կարգի ոտնձգությունից պաշտպանվելու և հակահարված տալու համար: Սոցիալիստական պետությունների համախմբումը, նրանց ամրապնդվող միասնությունն ու հարաճուն հզորությունը ապահովում են սոցիալիզմի և կոմունիզմի լիակատար հաղթանակը սոցիալիզմի ամբողջ սիստեմի շրջանակներում: Սոցիալիստական պետություններն ունեն միատիպ տնտեսական հիմք՝ արտադրության միջոցների հանրային սեփականություն, միատիպ միտական կարգ, այն է՝ ժողովրդական ղանգվածների իշխանություն: Նրանք ղեկավարվում են ընդհանուր գաղափարախոսությունով՝ մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով: Սոցիալիստական երկրներն ունեն ընդհանուր շահեր՝ հեղափոխական նվաճումներն ու ազգային անկախությունը միջազգային իմպերիալիզմի ոտընձգություններից պաշտպանելու գործում, նրանք ունեն միասնական նույատակ՝ կոմունիստական հասարակարգի կառուցումը:

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի պետությունները իրենց փոխհարաբերություններում ղեկավարվում են միջազգային իրավունքի ղեկավարող սկզբունքներով, որը պայմանավորված է սոցիալ-տնտեսական ու քաղաքական շահերի ընդհանրությամբ: Այդ օբյեկտիվ հիմքի վրա կառուցվում են նրանց միջպետական ամուր ու բարեկամական հարաբերությունները: Սոցիալիստական պետությունների հարաբերությունների բնորոշ գծերն են՝ լիակատար իրավահավասարությունը, անկախության և սուվերենությունից փոխադարձ հարգումը, եղբայրական փոխադարձ օգնությունը և համագործակցությունը:

Սոցիալիստական պետությունների միջև հարաբերությունները նպատակների ընդհանրությամբ և համագործակցության բուկրզբունքներով նոր, բարձր տիպի միջազգային հարաբերություններ են, երկրների տնտեսական ու քաղաքական հարաբերությունները նոր տիպ:

Սոցիալիստական երկրների եղբայրական միասնությունն ու համագործակցությունը համապատասխանում է նրանցից յուրա-

քանչյուրի ազգային բարձրագույն շահերին: «Պրոլետարական ինտերնացիոնալիզմի հիման վրա համաշխարհային սոցիալիստական սիստեմի միասնության ամրապնդումն այդ սիստեմի մեջ մտնող բոլոր պետությունների հետագա հաջողությունների անվերապահ պայմանն է»<sup>2</sup>, —ասված է ՍՄԿԿ ծրագրում:

Սոցիալիստական պետությունների միջև ձևավորված նոր տիպի միջազգային հարաբերությունների պրոցեսում ծագել են միջազգային-իրավական նոր սկզբունքներ, որպիսիք չեն եղել և չէին կարող գոյություն ունենալ շահագործողական տիպի պետությունների փոխհարաբերություններում: Այդ նոր սկզբունքներից գլխավորը սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքն է: Մինչև սոցիալիստական պետությունների երևան գալը և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ձևավորումը պրոլետարական (սոցիալիստական) ինտերնացիոնալիզմը համաշխարհային պրոլետարիատի միջազգային համագործակցության ու համերաշխության քաղաքական սկզբունք էր միայն: Այժմ սոցիալիստական ինտերնացիոնալիզմը սոցիալիստական պետությունների արտաքին քաղաքական սկզբունք է, միմյանց միջև նրանց միջազգային հարաբերություններում և, միաժամանակ, միջազգային-իրավական սկզբունք է, որը իրավաբանորեն ձևակերպված ու ամրապնդված է բազմաթիվ միջազգային երկկողմանի և բազմակողմանի պայմանագրերում ու համաձայնագրերում:

Սոցիալիստական ինտերնացիոնալիզմը, որպես արտաքին-քաղաքական և միջազգային-իրավական սկզբունք, ասպարեզ գալով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո, ապրել է իր զարգացումը, և գնալով ընդլայնվել է նրա կիրառման ոլորտը: Պրոլետարական (սոցիալիստական) ինտերնացիոնալիզմի միջազգային-իրավական սկզբունքը սկզբում կիրառություն մեջ դրվեց Սովետական Ռուսաստանի և սովետական մյուս հանրապետությունների միջպետական հարաբերությունների ոլորտում, ապա ՍՍՀՄ-ի՝ Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության ու Զինաստանի սովետական շրջանների հետ ունեցած հարաբերություններում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սոցիալիստական նոր պետությունների առաջացման և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ձևավորման կապակցությամբ պրոլետարական ինտերնացիոնալիզմի միջազգային-իրավական սկզբունքի

<sup>1</sup> «ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը», էջ 440:

<sup>2</sup> «ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը», էջ 442:

գործադրման շրջանակները, բնականաբար, անհամեմատ ընդ-  
լայնվում են, այն ձեռք է բերում կարևորագույն նշանակությունը՝  
Սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքն առավել ցայ-  
տուն կերպով արտահայտվել է բարեկամության, դաշինքի և փո-  
խադարձ օգնության վերաբերյալ պայմանագրերում, որոնց սուբ-  
յեկտները սովորեն սոցիալիստական պետություններն են: Այդ-  
պայմանագրերի նպատակը հանգում է հետևյալին. 1. սոցիալիս-  
տական երկրների միջև համակողմանի բարեկամական հարաբե-  
րությունների զարգացումը, 2. ամբողջ աշխարհում խաղաղության  
և անվտանգության համատեղ ամրապնդումը, 3. համակողմանի  
ու եղբայրական փոխօգնությունը, 4. սոցիալիստական լազերի  
երկրների միջև ամենայն տնտեսական և կուլտուրական համա-  
գործակցության զարգացումը:

Սովետական Միության և Լեհական Ժողովրդական Հանրա-  
պետության միջև 1965 թ. ապրիլի 8-ի բարեկամության, համա-  
գործակցության և փոխադարձ օգնության վերաբերյալ կնքած  
պայմանագրի 1-ին հոդվածում ասված է. «Բարձր պայմանավոր-  
վող կողմերը, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքին  
համապատասխան, ամրապնդելու են հավերժ ու անխախտ բարե-  
կամությունը»:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության ու  
կառավարության ղեկավարների և Ռումինիայի Սոցիալիստական  
Հանրապետության կուսակցական-կառավարական պատվիրակու-  
թյան միջև տեղի ունեցած բանակցությունների (1967 թ. 14—15  
դեկտեմբերի) վերաբերյալ կոմյունիկեիտում ասված է. «ՍՄԿԿ-ն և  
Ռումինիայի կոմկուսը իրենց առաջնահերթ խնդիրն են համարում,  
ըստ ամենայնի, նպաստել սոցիալիստական համագործակցու-  
թյան երկրների, համաշխարհային կոմունիստական ու բանվորա-  
կան շարժման համախմբվածության և միասնության ամրապնդ-  
մանը՝ մարքս-լենինյան մեծ ուսմունքի, պրոլետարական ինտեր-  
նացիոնալիզմի սկզբունքների և եղբայրական կուսակցությունների  
համատեղ մշակած փաստաթղթերի հիման վրա»<sup>5</sup>:

Համանման հոդվածներ են բովանդակում նաև բարեկամու-  
թյան, դաշինքի և համագործակցության մյուս պայմանագրերը, ո-  
րոնք կնքվել են սոցիալիստական երկրների միջև:

Սոցիալիզմի համաշխարհային սխտեմի առկայության կա-  
պակցությամբ երևան է գալիս սոցիալիստական պետությունների

նոր ֆունկցիա՝ եղբայրական բարեկամության, անկեղծ համա-  
գործակցության և անշահախնդիր փոխադարձ օգնության ֆունկ-  
ցիան: Այդ ֆունկցիայի երևան գալը և նրա իրականացումը ենթա-  
դրում են, որ սոցիալիստական պետություններն անշեղորեն հետե-  
վելու են արտաքին-քաղաքական պրոլետարական ինտերնացիո-  
նալիզմի սկզբունքին: Իրենց փոխհարաբերությունները կառույցե-  
լով սոցիալիստական ինտերնացիոնալիզմի հիման վրա, սոցիա-  
լիստական երկրների կառավարությունները և կոմունիստական ու  
բանվորական կուսակցությունները ղեկավարվում են Վ. Ի. Լենինի  
ցուցումներով: Նա գրել է. «Մենք ազգերի կամավոր միություն  
ենք ուզում, այնպիսի միություն, որը ոչ մի բռնություն չթույլա-  
տրեր մի ազգի կողմից մյուսի վրա, այնպիսի միություն, որը հիմ-  
նրված չլիներ ամենալրիվ վստահության վրա, եղբայրական միաս-  
նության պարզ գիտակցության վրա, լիովին կամավոր համաձայ-  
նության վրա»<sup>6</sup>:

Սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքը արտա-  
ցույվել է նաև սոցիալիստական երկրների կոմունիստական ու բան-  
վորական կուսակցությունների համատեղ ընդունած փաստաթղ-  
թերում: Այսպես, օրինակ, 1957 թ. Մոսկվայի խորհրդակցությու-  
նում ընդունված դեկլարացիայում ընդգծվում է, որ սոցիալիստա-  
կան երկրների փոխհարաբերությունների անկառիկ տարրն է  
հանդիսանում «եղբայրական փոխօգնությունը: Այդ փոխադարձ  
օգնության մեջ իր գործոն արտահայտությունն է գտնում սոցիա-  
լիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքը»<sup>7</sup>:

Սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքը ելնում է  
աշխատավոր ժողովուրդների համերաշխ շահերից, այն բանից, որ  
երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական ընդհանրությունը  
«ըլեկտիվ հիմք է ստեղծում միջպետական ամուր բարեկամական  
հարաբերությունների համար: Հասարակական նոր կարգի ստեղծու-  
մը, սոցիալիստական կարգերի հաղթանակը հանգեցնում են շահա-  
գործող դասակարգերի վերացմանը, ուրեմն և դասակարգային  
նախամարտության վերացմանը սոցիալիստական պետություննե-  
րում, որն իր հերթին հիմք է հանդիսանում ազգային հակամար-  
տությունները վերացնելու համար: Կոմունիստական և բանվորա-  
կան կուսակցությունների 1960 թ. նոյեմբերի խորհրդակցության  
Հայտարարության մեջ այս առթիվ ասված է. «Ի հակադրություն

<sup>5</sup> Վ. Ի. Լենին, երկեր, 4. 30, էջ 368:

<sup>6</sup> «Программные документы борьбы за мир, демократию и социализм»,  
Госполитиздат, 1961, стр. 10.

<sup>7</sup> «Սովետական Հայաստան», 17-րդ դեկտեմբերի 1967 թ.:

կապիտալիստական հասարակարգի օրենքների, որին յուրահատուկ են անտապոնիստական հակասություններ դասակարգերի, ազգերի և տեղությունների միջև, որոնք հանգեցնում են ռազմական ընդհարումների, սոցիալիստական սխտեմի բնույթում օբյեկտիվ պատճառներ չկան նրա մեջ մտնող ժողովուրդների ու պետությունների միջև հակասությունների և ընդհարումների համար, նրա զարգացումը տանում է դեպի պետությունների ու ազգերի ավելի մեծ համախմբման, նրանց միջև համագործակցության բուրբ ձևերի ամրապնդմանը»<sup>6</sup>:

Սոցիալիստական պետությունների փոխհարաբերություններում պրոլետարական սկզբունքից շեղվելը, նահանջելը խիստ վտանգավոր է սոցիալիզմի համաշխարհային սխտեմի շահերի համար, խփում է խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի համար մղվող պայքարի ընդհանուր գործին և օբյեկտիվորեն չուր է լցնում իմպերիալիզմի ջրաղացին:

Ղեկավարվելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով և մեծ նըշանակություն տալով պրոլետարական ինտերնացիոնալիզմի բուկրբունքի հետևողական իրականացմանը սոցիալիստական պետությունների և նրանց կառավարող կոմունիստական ու բանվորական կուսակցությունների փոխհարաբերություններում, ՄՄԿԿ XXIII համագումարը իր բանաձևում կրկին հավաստեց. «Կոմունիստական շարքերի համախմբման պարտադիր պայմանը կուսակցությունների փոխհարաբերությունների նորմաների, իրավահավասարության, ինքնուրույնության, միմյանց ներքին բործերին չմիջամտելու սկզբունքների խստիվ պահպանումն է, որոնք ձևակերպված են 1965 թ. Հայտարարության մեջ: ՄՄԿԿ-ն հանդես է գալիս կոմունիստական շարժման մեջ հեգեմոնիզմի դեմ, բոլոր կուսակցությունների իսկական իրավահավասարության և եղբայրական հարաբերությունների օգտին՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների հիման վրա»<sup>7</sup>:

Պրոլետարական ինտերնացիոնալիզմից բացի միջազգային բանվորական շարժման զարգացման պրոցեսում ձևավորվել և կիրառվել են այլ սկզբունքներ ևս, ինչպես, օրինակ, իրավահավասարության սկզբունքը և ազգերի ինքնորոշման ու սուվերենության սկզբունքը: Ազգերի ինքնորոշման իրավունքը կարևոր տեղ է զբաղում մարքս-լենինյան տեսության մեջ և սոցիալիստական պետու-

թյունների պրակտիկայում: Ինքնորոշման իրավունքը ենթադրում է ամեն մի ազգի ազատ կամաբարտահայտությունը՝ անջատվելու և ինքնուրույն ազգային պետություն ստեղծելու և կամ իր հոժար կամքով այլ ազգի կամ ազգերի հետ մեկ միասնական պետության մեջ իր ազգային կյանքը կառուցելու աստարեզում: Վ. Ի. Լենինն ասում էր, որ «Ազգերի անջատման իրավունքը պրակտարիատի կողմից ձանաչելն է միայն, որ ասպահովում է տարբեր ազգերի շտնվորների լիակատար համերաշխությունը և օգնում ազգերի իսկապես դեմոկրատական մերձեցմանը»<sup>8</sup>:

Նոստրով անցյալից ժառանգություն մնացած ազգերի անվըտաստություն մասին, Վ. Ի. Լենինը մատնացույց էր անում, որ «անհրաժեշտ է առանձնահատուկ զգուշություն ցուցաբերել ազգային պայքարների նկատմամբ, հոգատարություն կիրառել ազգերի հավասարությունը և իրականում անջատվելու ազատությունը, որպեսզի վերացնենք այդ անվաստահուն հողը և ձեռք բերենք բոլոր ազգերի սովետական հանրապետությունների ամենասերտ կամավոր միությունը»<sup>9</sup>:

Սոցիալիստական պետությունների փոխհարաբերություններում գործում են միջազգային իրավունքի սոցիալիստական ըսկրզբունքներն ու նորմերը, ինչպես նաև ընդհանուր միջազգային իրավունքի այն նորմերը և սկզբունքները, որոնք կիրառվում են պետությունների փոխհարաբերություններում ընդհանրապես: Միջազգային իրավունքի սոցիալիստական սկզբունքներն ու նորմերը ձևավորվում են ինչպես պայմանագրային կարգով, այնպես էլ սովորույթի եղանակով: Սոցիալիստական պետությունների միջև կնքվող միջազգային պայմանագրերը արտացոլում են այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են նոր տիպի միջպետական հարաբերություններին: Սոցիալիստական միջազգային-իրավական սկզբունքների ու նորմերի աղբյուր են հանդիսանում ինչպես երկկողմանի, այնպես էլ կոլեկտիվ պայմանագրերը: Վերջիններիս թիվը զնալով ավելանում է՝ կապված սոցիալիստական երկրների կոլեկտիվ համագործակցության զարգացման և ընդլայնման հետ: Այդպիսի կոլեկտիվ պայմանագրերից են 1955 թ. մայիսի 14-ի՝ Վարշավայի պայմանագրերը, 1960 թ. ապրիլի 13-ի՝ Տնտեսական փոխօգնության խորհրդի Կանոնադրությունը և Տնտեսական փոխօգնության խորհրդի իրավունակության, արտոնությունների և իմունիտետների վերաբերյալ Կոնվենցիան, անասնաբուժության

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>7</sup> «ՄՄԿԿ XXIII համագումարի նյութերը», էջ 293:

<sup>8</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, 5. 24, էջ 369—370:

<sup>9</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, 5. 29, էջ 118—119:

ասպարեզում համագործակցելու վերաբերյալ 1959 թ. դեկտեմբերի 14-ի համաձայնագիրը, կարանտինի և բույսերը վնասատուներից ու հիվանդություններից պաշտպանելու ասպարեզում համագործակցելու մասին 1959 թ. դեկտեմբերի 14-ի համաձայնագիրը և այլն:

Շատացել են նաև երկկողմանի պայմանագրերը, որոնց սուբյեկտները սոցիալիստական պետություններն են և որոնք բովանդակում են նրանց հարաբերությունները կարգավորող սոցիալիստական նորմեր և սկզբունքներ: ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցման առթիվ Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIII համագումարի բանաձևում ասված է, որ անցած ժամանակամիջոցում «ամրապնդվել է սոցիալիզմի մյուս երկրների հետ Սովետական Միության պայմանագրային հարաբերությունների սիստեմը: Այդ պայմանագրերի մեջ մարմնավորվում է մեր ժողովուրդների եղբայրական բարեկամությունը»<sup>10</sup>:

Սոցիալիստական երկրների միջև կնքված պայմանագրերը բազմաբովանդակ են ու բաղմաալիսի: Այդպիսի պայմանագրերից են՝ բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության, առևտրական, գիտա-տեխնիկական համագործակցության վերաբերյալ, սահմանային պայմանագրերը, ապրանքներ մատակարարելու, ֆինանսական հարցերի, կուլտուրական համագործակցության վերաբերյալ համաձայնագրերը, հյուպատոսական կոնվենցիաները, Երկբազարացիություն ունեցող անձանց իրավական վիճակը կարգավորելու մասին կոնվենցիաները, իրավական փոօգնության համաձայնագրերը և այլն, և այլն:

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի պետությունները փոխհարաբերություններում միջազգային-իրավական սկզբունքներ և նորմեր են սահմանվում նաև նրանց համատեղ ղեկարացիաներում և կոմյունիկեններում:

Ինչպես նկատեցինք վերը, սոցիալիստական սկզբունքներն ու նորմերը ձևավորվում են նաև սովորույթի կարգով: Այսպես, օրինակ, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքներն ու նորմերը ձևավորվել են զլխավորապես սովորույթային մանապարհով, զարգացել ու ամրապնդվել են սոցիալիստական պետությունների պրակտիկայում և աստիճանաբար ձևոք են բերել միջազգային իրավական սկզբունքի նշանակություն:

Սոցիալիստական միջազգային-իրավական սկզբունքների և նորմերի ազդյուր են հանդիսանում նաև կառավարական-կուսակցական պատվիրակությունների խորհրդակցությունների հայտարարությունները: Ինչ վերաբերում է կոմունիստական և բանվորական կուսակցությունների խորհրդակցությունների հայտարարություններին (օրինակ՝ 1957 և 1960 թթ. հայտարարությունները), ապա դրանք, չլինելով իրավաբանական վավերագրեր, միջազգային իրավունքի ազդյուր, հսկայական նշանակություն ունեն միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի ձևավորման համար:

Այսպիսով, ինչպես երևում է ամբողջ վերը շարադրվածից սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքը նոր տիպի միջազգային հարաբերությունների գլխավոր սկզբունքն է: Սոցիալիստական ինտերնացիոնալիզմը որպես միջազգային-իրավական սկզբունք, սաղմնավորվելով սովետական սոցիալիստական անկախ հանրապետությունների միջպետական հարաբերությունների պրոցեսում, իր զարգացումն ապրեց ու լայն ոլորտում կիրառության մեջ դրվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ առաջացան սոցիալիստական նոր պետություններ և ստեղծվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը: «Սոցիալիստական երկրները,—ասված է սոցիալիստական երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների 1957 թ. խորհրդակցության զեկլարացիայում,—իրենց փոխհարաբերությունները կառուցում են լիակատար իրավահավասարության, տեղիտրիալ ամբողջականության, պետական անկախության և սուվերենության հարգման, մեկը մյուսի գործերին չմիջամտելու սկզբունքների վրա: Դրանք կարևոր սկզբունքներ են, որոնք, սակայն, չեն սպառում սոցիալիստական երկրների միջև հարաբերությունների ամբողջ էությունը: Նրանց փոխհարաբերությունների անկապուելի մասն է եղբայրական փոօգնությունը»<sup>11</sup>:

Նըրայրական փոօգնության սկզբունքից հետևում է, որ սոցիալիստական յուրաքանչյուր պետություն իրավունք ունի օգնություն ստանալու սոցիալիստական համագործակցության մյուս երկրներից և, համապատասխանաբար, ամեն մի սոցիալիստական երկիր պարտավոր է եղբայրական օգնություն ցույց տալ եղբայրական մյուս երկրներին:

Իր գոյության ավելի քան հիսուն տարիների ընթացքում սո-

<sup>11</sup> «Программные документы борьбы за мир, демократию и социализм», стр. 10.

<sup>10</sup> «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», էջ 289:

մետական պետությունը հետևողականորեն իրականացրել է իր ինտերնացիոնալ պարտքը՝ աշակցություն և օգնություն ցույց տալով իրենց ազատության, անկախության համար պայքարող ժողովուրդներին, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի պետություններին: Իր այդ պատմական միտման Սովետական Միությունը կատարեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ ազատագրվեցին Եվրոպայի ու Ասիայի շատ երկրներ: Նա համակողմանի օգնություն է ցույց տալիս սոցիալիստական մյուս երկրներին պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում: Դրա փայլուն օրինակներից է Վիետնամի հերոսական ժողովրդին ցույց տրվող հարաճուն օգնությունը՝ ամերիկյան իմպերիալիզմի դեմ նրա մղած հերոսական, արդարացի պայքարում:

Սոցիալիստական երկրների փոխհարաբերություններում եղբայրական փոխօգնությունը ընդգրկում է քաղաքական, տնտեսական և համագործակցության մյուս բնագավառները:

«ՍՍՇՄ-ի փորձն ապացուցեց, — ասված է ՍՄԿԿ ծրագրում, — որ հավատարմությունը մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներին, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին, զբանց հաստատուն և անշեղ կենսագործումը, զբանց պաշտպանությունը բոլոր ու ամեն տեսակ թշնամիներից և օպորտունիստներից՝ սոցիալիզմի հաղթանակի անհրաժեշտ պայմանն է»<sup>12</sup>:

Սուվերենությունը հարգելու, շմիջամտելու և իրավահասարակության սկզբունքները, որոնք հաստատուն տեղ են գրավում ժամանակակից ընդհանուր միջազգային իրավունքում, հետևողականորեն կիրառվում են սոցիալիստական համագործակցության երկրների փոխհարաբերություններում: Այս սկզբունքները կիրառվում են նաև մյուս պետությունների հարաբերություններում, սակայն ոչ այնպիսի բովանդակությամբ ու նպատակադրմամբ, ինչպես սոցիալիստական երկրների փոխհարաբերություններում: Կապիտալիստական պետությունների միջազգային-իրավական պրակտիկայում պետական սուվերենության, շմիջամտելու և իրավահասարակության սկզբունքները, որքան էլ տեղ են գտնում համապատասխան ակտերում, լիարժեք կիրառում չունեն: Կյանքը ցույց է տալիս, որ կապիտալիստական ուժեղ պետությունները, ձեռնարկներ են հանդես գալով պետական սուվերենությունը հարգելու սկզբունքի օգտին, գործնականում կախվածության մեջ են դնում բուրժուական փոքր պետություններին: Բուրժուական երկրների

միջպետական հարաբերությունների պրակտիկան հարուստ է բազմաթիվ օրինակներով, երբ կապիտալիստական խոշոր պետություններն ամենաբռնազորսիկ ձևով ոտնահարում են բուրժուական թույլ երկրների պետական սուվերենությունը, խախտում ներքին զործերին շմիջամտելու և իրավահասարակության սկզբունքները:

Պետական սուվերենության, շմիջամտելու և իրավահավասարության միջազգային-իրավական սկզբունքները սոցիալիստական պետությունները բարեխղճորեն կիրառում են ո՛չ միայն միմյանց հետ ունեցած հարաբերություններում, այլև թե՛ կապիտալիստական, թե՛ երիտասարդ անկախ ազգային պետությունների հետ ունեցած փոխհարաբերություններում: Բոլոր դեպքերում սոցիալիստական պետությունները օրինակ են ծառայում միջազգային իրավունքի սկզբունքները բարձր մակարդակով ու հետևողականորեն, առանց խտրականության միջազգային հարաբերություններում իրագործելու ասպարեզում:

Սոցիալիստական երկրները, միմյանց հետ ունեցած հարաբերություններում խստորեն պահպանելով սուվերենության, շմիջամտելու և իրավահասարակության սկզբունքները, զործում են համատեղ՝ իմպերիալիզմի ոտնձգություններից իրենց սուվերեն իրավունքները պաշտպանելու համար: Սոցիալիստական պետությունների սուվերենությունը ժողովրդական սուվերենություն է ինչպես ըստ ձևի, այնպես էլ ըստ էության: Սոցիալիստական պետությունները ծառայում են իրենց ժողովուրդների շահերի համար, նրանց կամաարտահայտիչն են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ասպարեզում:

Սոցիալիստական պետությունների փոխհարաբերություններում ձևավորվել ու կիրառվում են այլ սկզբունքներ ու նորմեր, որոնք յուրահատուկ են հենց նրանց հարաբերություններին: Բացի այդ, միջազգային իրավունքին հայտնի առանձին նորմեր ու ինստիտուտներ նոր բովանդակություն են ձեռք բերում՝ կիրառման մեջ դրվելով սոցիալիստական պետությունների հարաբերություններում:

Ժողովրդա-տնտեսական պլանների կոորդինացիան, արտադրության մասնագիտացումն ու կոոպերացումը, որոնք սահմանված են տնտեսական փոխօգնության խորհրդի կանոնադրությամբ և նրա մասնակից պետությունների կոմունիստական ու բանվորակա կուսակցությունների 1962 թ. հունիսի խորհրդակցությունում ընդունված Աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժան-

<sup>12</sup> «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 438:



ման հիմունքներում, միանգամայն նոր ինստիտուտներ են և՛ ձե-  
վով, և՛ բովանդակությամբ նրանք ծագել ու զարգացել են սոցիա-  
լիստական սիստեմի երկրների տնտեսական համագործակցության  
պրոցեսում:

Հյուպատոսական և սահմանային հարաբերությունները, իրա-  
վական հարցերի ասպարեզում համագործակցությունը կարգավոր-  
ող միջազգային-իրավական նորմերը և այլն, որոնք կիրառվում  
են սոցիալիստական երկրների հարաբերություններում երկկողմա-  
նի պայմանագրերի հիման վրա, ըստ ձևի այնպիսի նորմեր են,  
որոնք կիրառվում են նաև մյուս պետությունների փոխհարաբե-  
րություններում, սակայն դրանք սոցիալիստական պետություն-  
ների հարաբերություններում ձեռք են բերել նոր բովանդակու-  
թյուն, որը համապատասխանում է նրանց միջազգային հարաբե-  
րությունների բնույթին:

Խոսելով միջազգային իրավունքի սոցիալիստական սկզբունք-  
ների ու նորմերի, մեկ կողմից, և ընդհանուր միջազգային իրա-  
վունքի սկզբունքների ու նորմերի, մյուս կողմից, հարաբերակցու-  
թյան մասին, հենվելով Գ. Ի. Տունկինի աշխատության<sup>13</sup> վրա,  
միջազգային իրավունքի 1966 թ. դասադիրը այսպես է գրում.  
«Սոցիալիստական երկրների հարաբերություններում գործող պրո-  
լետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները և սոցիալիստա-  
կան մյուս սկզբունքներն ու նորմերը միջազգային իրավունքի ու-  
րակապես նոր սկզբունքներ և նորմեր են: Դրանք նոր, ավելի  
բարձր տիպի միջազգային իրավունքի՝ սոցիալիստական միջազ-  
գային իրավունքի սկզբունքներ են, որի հիմքերը դրվում են սո-  
ցիալիստական սիստեմի պետությունների հարաբերություններում  
և որը դալիս է փոխարինելու ժամանակակից ընդհանուր միջազ-  
գային իրավունքին»<sup>14</sup>:

Հավանաբար ավելի ճիշտ կլինեք ասել այսպես.

Սոցիալիզմի լազերի երկրների հարաբերություններում ձեա-  
վորվել են նոր տիպի միջազգային հարաբերություններ, որոնք  
ենթադրում են այդպիսիք կարգավորող նոր որակի իրավական  
նորմեր: Սակայն դա չի նշանակում, թե այդ նոր նորմերը ներփակ  
միջազգային իրավունք են կազմում: Չնավորված այդ նոր իրա-  
վական նորմերը, կարելի է ասել, մտնում են գործող ընդհանուր  
միջազգային իրավունքի ընդհանուր ֆոնդի մեջ: Այդ դրույթի օգ-

տփն են խոսում միջազգային իրավունքի այնպիսի ազդեցություններ,  
ինչպիսիք են Վարշավայի պայմանագիրը և Տնտեսական փոխօգ-  
նությունների խորհրդի մասին համաձայնագիրը: Այդ ակտերի սուր-  
ջեկտներ են հանդիսանում սոցիալիստական երկրները: Սակայն  
դրանք բաց միջազգային պայմանագրեր են, և մյուս պետություն-  
ները, անկախ նրանցում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական  
կարգի, կարող են սահմանված կարգով միանալ այդ պայմանա-  
գրերին: Հասկանալի է, որ նման դեպքում հիշատակված միջազ-  
գային ակտերով սահմանված իրավական նոր սկզբունքներն ու  
նորմերը կտարածվեն նրանց միացած պետությունների վրա:

Սոցիալիստական երկրների միջազգային-իրավական պրակ-  
տիկան վկայում է այն մասին, որ նրանք բացառում են ամեն կար-  
գի խտրականություն և պատրաստ են համագործակցելու բոլոր պե-  
տությունների հետ՝ փոխադարձության հիման վրա: Ինչ վերաբե-  
րում է սոցիալիստական պետությունների փոխհարաբերու-  
թյունում ձեավորված միջազգային-իրավական նոր սկզբունքներին  
ու նորմերին, ապա դրանք իրավական նորմերի ինքնամփոփ սիս-  
տեմ չեն կազմում: Սոցիալիստական պետությունների ստեղծած  
նորմերը սոցիալիստական երկրների խոշորագույն ներդրումն են  
ընդհանուր միջազգային իրավունքում, նրա անկապտելի մասն են  
կազմում:

Գործող միջազգային իրավունքի նորմերի ամբողջության մեջ  
գնալով մեծանում է սոցիալիստական պետությունների փոխհա-  
րաբերություններում և նրանց աճող ներգործության շնորհիվ ըս-  
տեղծվող միջազգային նորմերի տեսակարար կշիռը:

Պատմական մի հասարակարգից մյուսին անցնելը մի ակուն-  
քարթում չի կատարվում, այն երկարատև ու ցավաքին պրոցես  
է: Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու անկասելի պրոցեսը  
շարունակվում է, և սոցիալիզմի համաշխարհային սիստեմը մեկ  
համապարփակ համաշխարհային սիստեմի վերածվելու պրոցե-  
սում, այդ որակական փոփոխության համեմատ, գործող ընդհա-  
նուր միջազգային իրավունքը աստիճանաբար կվերածվի մեկ  
միասնական համաշխարհային սոցիալիստական միջազգային ի-  
րավունքի<sup>15</sup>:

<sup>13</sup> «Вопросы теории международного права», 1962, стр. 325.

<sup>14</sup> «Международное право». изд. «Международные отношения»,  
1966, стр. 115.

<sup>15</sup> См. А. А. Есаев, К вопросу о характере международного права,  
«Советский ежегодник международного права», 1958, էջ 500—502:

Սոցիալիստական պետությունների բաղաքական համագործակցության միջազգային իրավական ձևերը բաղմամպիսի են: Այդ ձևերից են համապատասխան երկրների կուսակցությունների և կառավարությունների ղեկավարների խորհրդակցություններն ու կոնսուլտացիաները: Այդ հանդիպումների ժամանակ քննարկվում են սոցիալիստական պետությունների համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը, սահմանվում են միջազգային քաղաքականության ասպարեզում նրանց համագործակցության ձևերն ու եղանակները, մշակվում են ազգային սոցիալիստական համագործակցության կապերի հետագա ընդլայնման ու ամրապնդման միջոցառումներ և այլն:

Խորհրդակցություններն ու կոնսուլտացիաները, որպես քաղաքական համագործակցության ձևեր, պարբերաբար են հրավիրվում:

Բերենք մի քանի օրինակ. 1954 թ. (29/XI—2/XII) Մոսկվայում տեղի ունեցավ ՍՍՀՄ-ի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Հունգարիայի, Ռումինիայի, Բուլղարիայի և Ալբանիայի խորհրդակցությունը: Խորհրդակցության անհրաժեշտությունը թելադրված էր միջազգային իրադրության լարվածությամբ, որը ստեղծվեց 1954 թ. հոկտեմբերին Փարիզում՝ Արևմտյան Գերմանիայի վերադիման և Հյուսիսատլանտյան ռազմական խմբավորման մեջ նրան ներգրավելու վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման կապակցությամբ: Նկատի ունենալով, որ արևմտագերմանական ռեանշիստական բանակի ստեղծումը կուժեղացնի խաղաղասեր պետությունների ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքը, խորհրդակցության մասնակիցները պայմանավորվեցին միջոցառումներ մշակել իրենց սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու համար: Խորհրդակցությունում ընդունված ղեկավարացիան նախազգուշացնում էր, որ եթե Փարիզի համաձայնագրերը վավերացվեն, ապա խորհրդակցության մասնակիցները հարկադրված կլինեն համատեղ միջոցառումներ ձեռնարկել զինված ուժերի և նրանց հրամանատարության ասպարեզում և կձեռնարկեն այլ միջոցառումներ՝ իրենց տերիտորիաների անձեռնմխելիությունն ապահովելու համար:

Սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական

կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցություններից կարելի է նշել նաև Մոսկվայի 1957 թ. և 1960 թ. խորհրդակցությունները: 1957 թ. խորհրդակցության մասնակիցները քննարկեցին միջազգային գրության և խաղաղության ու սոցիալիզմի համար պայքարի արդիական պրոբլեմները, և ընդունվեց սոցիալիստական երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ղեկավարացիան: Գեկլարացիայում նշվում է, որ մեր դարաշրջանի հիմնական բովանդակությունը անցումն է կապիտալիզմից սոցիալիզմին: Մեր դարաշրջանում համաշխարհային դարգացումը որոշվում է երկու հակադիր հասարակական սխեմաների մրցության ընթացքով և արդյունքներով: Գեկլարացիան ազդարարում էր, որ խաղաղ տնտեսական մրցության մեջ կհաղթանակի սոցիալիզմը, որպես կապիտալիզմին փոխարինելու եկող առաջադեմ հասարակարգ: Նա սահմանում էր սոցիալիստական պետությունների համագործակցության սկզբունքները. լիակատար իրավահավասարության, տերիտորիալ ամբողջականության, պետական անկախության և սուվերենության հարգում, միմյանց ներքին գործերին չմիջամտել: Հատկապես ընդգծվում էր, որ սոցիալիստական երկրների համախմբվածությունն ու միասնությունը յուրաքանչյուր սոցիալիստական պետության ազգային անկախության և սուվերենության հուսալի երաշխիքն են<sup>16</sup>,

Սոցիալիստական պետությունների բաղմակողմ խորհրդակցություններից պետք է հիշատակել նաև 1967 թ. հունիսի 9-ին Մոսկվայում տեղի ունեցած հանդիպումը՝ կապված Մերձավոր Արևելքում Իսրայելի սանձազերծած ագրեսիայի հետևանքով ըստեղծված միջազգային լարվածության ուժեղացման հետ: Հանդիպմանը մասնակցում էին Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության, Հունգարական Ժողովրդական Հանրապետության, Լեհական Ժողովրդական Հանրապետության, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության, Չեխոսլովակյան Սոցիալիստական Հանրապետության և Հարավսլավիայի Ծեղերատիվ Սոցիալիստական Հանրապետության կոմունիստական ու բանվորական կուսակցությունների և կառավարությունների ղեկավարները: Քննարկելով Մերձավոր Արևելքում ստեղծված լարված գրությունը, այդ բարձր մակարդակի հանդիպումը ընդունեց հայտարարություն,

<sup>16</sup> Տե՛ս «Дипломатический словарь», т. II, էջ 340—341:

որի մեջ ասված է. Իսրայելի ազրեսիան որոշակի իմպերիալիստական ուժերի, առաջին հերթին ԱՄՆ-ի, գործարք է: Հանդիպման մասնակիցները կարծիքներ փոխանակեցին այն միջոցառումների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են ազրեսիան խափանելու և ընդհանուր խաղաղության գործի համար նրա վտանգավոր հետևանքները կանխելու նպատակով: Հանդիպման մասնակիցները կոչ արեցին ՄԱԿ-ին միջոցներ ձեռնարկել ազրեսիան կասեցնելու և նրա հետևանքները վերացնելու համար: «Միավորված Ազգերի Կազմակերպության պարտքն է,—ասված է հայտարարության մեջ,— դատապարտել ազրեսիան: Եթե Անվտանգության խորհուրդը պատշաճ միջոցներ չձեռնարկի, ապա ծանր պատասխանատվություն կընկնի այն պետությունների վրա, որոնք չեն կատարի իրենց պարտքը որպես Անվտանգության խորհրդի անդամներ»<sup>17</sup>:

Սոցիալիստական երկրների երկկողմանի խորհրդակցություններ ավելի հաճախակի են հրավիրվում: Այս կարգի խորհրդակցություններում քննարկվում են մասնակիցներին անմիջապես վերաբերող հարցերը, ինչպես նաև ընդհանուր քաղաքական հետաքրքրություններ կապացնող խնդիրներ: Այսպես, օրինակ, ՄՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարի Չեխոսլովակիա կատարած այցի ժամանակ (4—6/III—1967) քննարկվեցին սովետա-չեխոսլովակյան հարաբերությունների հետագա դարգացման հարցերը և միջազգային քաղաքականության ու համաշխարհային կոմունիստական շարժման կարևորագույն պրոբլեմները: Երկու կողմերը միահամուռ ձգտում արտահայտեցին շարունակել պայքարը Եվրոպայի ժողովուրդների խաղաղության և անվտանգության համար՝ Բուխարեստի ղեկավարացիայի սկզբունքների հիման վրա<sup>18</sup>:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության ու կառավարության ղեկավարների և Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետության կուսակցական-կառավարական պատվիրակության Մոսկվայում 1967 թ. դեկտեմբերի 14—15-ը տեղի ունեցած հանդիպման վերաբերյալ հրապարակած համատեղ կոմյունիկեում ասված է, որ կողմերը ինֆորմացիա փոխանակեցին իրենց երկրներում սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման ընթացքի, ժողովրդական տնտեսության, գիտության, կուլտուրայի դարգացման և աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացման՝ ուղղությամբ ՍՍՀՄ-ում և Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետությունում իրականացվող կարևորագույն միջոցառումների մա-

<sup>17</sup> «Սովետական Հայաստան», 11-ը հունիսի 1967 թ.:

<sup>18</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան», 7-ը փետրվարի 1967 թ.:

սին: Կոմյունիկեում այնուհետև ասված է, որ «արդի միջազգային իրադրության մեջ սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման խնդիրների հաջող իրականացման և աշխարհում սոցիալիզմի դիրքերի ամրապնդման վճռական պայմաններից մեկը պայքարն է համաշխարհային նոր պատերազմի սպառնալիքը կանխելու համար իմպերիալիզմի ազրեսիվ դավերի դեմ, որը կանգ չի առնում զինված ուժի ուղղակի գործադրման առջև. այդ մասին է վկայում նախ և առաջ Վինտնամում շարունակվող ԱՄՆ-ի ազրեսիան»: Հանդիպման մասնակիցները ընդգծեցին Վարշավայի պայմանագրի կազմակերպության հետագա ամրապնդման կարևորությունը, որը հուսալի պատեն է իմպերիալիստական ազրեսիայի ճանապարհին, վճռական ուժ՝ Եվրոպայի խաղաղության պահպանման գործում<sup>19</sup>:

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի պետությունների քաղաքական համագործակցությունն իրականացվում է նաև երկկողմ և բազմակողմ կոնսուլտացիաների միջոցով: Թարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանագրերի մեծ մասը համապատասխան հողված է պարունակում կողմերի միջև կոնսուլտացիաներ անցկացնելու մասին՝ միջազգային կարևորագույն պրոբլեմների և կողմերին հետաքրքրող արդիական հարցերի շուրջ: Այսպես, օրինակ, Վարշավայի պայմանագրի 3-րդ հոդվածը սահմանում է, որ պայմանավորվող կողմերը սխտք է միմյանց միջև կոնսուլտացիաներ անցկացնեն միջազգային բուլտր կարևոր հարցերի շուրջը, որոնք շոշափում են նրանց ընդհանուր շահերը, միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը ամրապնդելու նպատակով: Դրան համապատասխան, պարբերաբար հրավիրվում են Վարշավայի պայմանագրի կազմակերպության քաղաքական կոնսուլտատիվ կոմիտեի խորհրդակցություններն ու կոնսուլտացիաները:

Սոցիալիստական պետությունների միջև տեղի ունեցող կոնսուլտացիաները բարեկամական բնույթ ունեն: Սոցիալիստական պետությունների հասարակական-քաղաքական կարգի էությունը հնթադրում է, որ սոցիալիստական պետությունների միջազգային հարաբերություններում բացառվում է թելադրանքի մեթոդը, ուժեղների կողմից իրենց կամքը թույլերի վզին փաթաթելու պրակտիկան, ինչպես այդ հաճախ տեղի ունի կապիտալիստական երկրների փոխհարաբերություններում: Սոցիալիստական երկրների կոնսուլտացիաները ձեռք են բերել նրանց համար ընդհանուր շահ ներ-

<sup>19</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան», 17-ը դեկտեմբերի 1967 թ.:

Ակայացնող քաղաքական ու գործնական նշանակություն ունեցող հարցերի շուրջը միասնական դիմ մշակելու ձև: Սոցիալիստական պետությունների խորհրդակցություններն ու կոնսուլտացիաները, սրպես համագործակցության միջազգային իրավական ձևեր, անց են կացվում տարրեր մակարդակի լիազորություններով օժտված ներկայացուցիչների մասնակցությամբ, որը պայմանավորված է քննարկման ենթակա հարցերի կարևորությամբ և հրատարակությամբ: Առավել պատասխանատու պրոբլեմների ու խնդիրների քննարկման ու որոշումներ ընդունելու համար հրավիրվում են բարձր մակարդակի հանդիպումներ՝ կուսակցությունների ու կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ, ինչպես, օրինակ, Մերձավոր Արևելքում Իսրայելի ազդեցիկ հետևանքով ստեղծված դրությունը քննարկելու համար հրավիրված խորհրդակցությանը մասնակցեցին սոցիալիստական երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների և կառավարությունների ղեկավարները:

Իմպերիալիստական պետությունների փոխհարաբերություններում նույնպես կիրառվում է խորհրդակցությունների և կոնսուլտացիաների պրակտիկան, որի հիմքում հիմնականում ընկած է ազդեցիկ քաղաքականության միասնական կուրս մշակելու և իրականացնելու ձգտումը՝ սպառման շուկաներ ու հումքի աղբյուրներ նվաճելու համար:

Սոցիալիստական երկրների քաղաքական համագործակցության իրավական ձևերի մեջ կարևոր տեղ են գրավում նրանց միջև կնքված բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության երկկողմանի պայմանագրերը: Այդպիսի պայմանագրերի թիվը հրեք տասնյակից ավելի է: Սովետական Միությունը նման պայմանագրեր է կնքել Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետության, Լեհական Ժողովրդական Հանրապետության, Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության, Ռումինիայի Ժողովրդական Հանրապետության, Հունգարական Ժողովրդական Հանրապետության, Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության, Չինական Ժողովրդական Հանրապետության, Կորեական Ժողովրդական Գեմոկրատական Հանրապետության, Գերմանական Գեմոկրատական Հանրապետության հետ: Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության երկկողմանի պայմանագրեր են կնքվել սոցիալիստական մյուս պետությունների միջև, ինչպես, օրինակ, Լեհական Ժողովրդական Հանրապետության և Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետության, Լեհաստանի և Բուլ-

ղարիայի, Լեհաստանի և Հունգարիայի, Լեհաստանի և Ռումինիայի միջև, Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետության և Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության, Չեխոսլովակիայի և Ռումինիայի, Չեխոսլովակիայի և Հունգարիայի միջև: Չեխոսլովակիան նման պայմանագիր ունի նաև Չինական Ժողովրդական Հանրապետության և Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության հետ: Հիշատակված կարգի պայմանագիր է կնքվել ՉԺՀ-ի և ԳԳՀ-ի միջև, Հունգարիայի և Ռումինիայի միջև և այլն<sup>20</sup>:

Վերջ թվարկված պետությունների ժողովուրդների զարավոր պատմությանն անհայտ են այնպիսի սրտագին ու եղբայրական դաշինքի վրա կառուցված փոխհարաբերություններ, որպիսիք հաստատվել են նրանց միջև այդ երկրներում սոցիալիստական կարգեր հաստատվելուց հետո: Շահագործողական տիպի պետությունների միջև կայուն ու բարեկամական հարաբերություններ հաստատելը բացառվում է այն բանի հետևանքով, որ նրանցում տիրապետող դասակարգերի շահերը հակամարտ են, այդ դասակարգերից յուրաքանչյուրը ձգտում է հարստանալ և տերիտորիաներ ձեռք բերել մյուսի հաշվին: Բավական է հիշել մեկ օրինակ. հայտնի է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին շրջանում, 1940 թ. դեկտեմբերի 12-ին, կնքվեց հունգարա-հարավսլավական բարեկամության և հարատև խաղաղության վերաբերյալ պայմանագիրը: Հունգարիան և Հարավսլավիան պարտավորվեցին վճարել կարգավորման համար շղիմել պատերազմի, շմասնակցել կողմերից մեկի դեմ ուղղված թշնամական կռիցիաներին, սակայն ընդամենը մի բանի ամիս հետո, 1941 թ. ապրիլի 10-ին, Հունգարիան միացավ գերմանական ազդեցիկային ընդդեմ Հարավսլավիայի: Սոցիալիստական կարգերի հաղթանակը նոր դարաշրջանի բացից սոցիալիստական պետությունների փոխհարաբերություններում: «Ճվրոպական ժողովուրդների անկողմ միջազգային համագործակցությունը, — գրել է Ֆ. էնգելսը, — հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը իր տան լիակատար տերը կլինի»<sup>21</sup>:

Սոցիալիզմի ուղու վրա կանգնած երկրները վերագնահատում են իրենց նախկին հարաբերությունները և վերացնում նախկինից ժառանգություն մնացած այն ամենը, ինչը խորթ է աշխատավորական զանգվածների շահերին, անհամատեղելի մարքս-լենինյան

<sup>20</sup> Տե՛ս «Международно-правовые формы сотрудничества социалистических государств», 1962, էջ 78:

<sup>21</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. II, стр. 282.

գաղափարի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքի հետ, շունգարական ժողովրդական Հանրապետության և Չեխոսլովակյան Հանրապետության միջև 1949 թ. ապրիլի 16-ին կնքված Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանագրում այսպես է բնութագրվում այդ երկրների հարաբերությունները. «...Քեպես շունգարիայի և Չեխոսլովակիայի ժողովուրդները զարեր ի վեր ապրել են հարեանության մեջ, տիրապետող դասակարգերի մեղքով նրանք չեն կարողացել հասկանալ միմյանց ազգային և սոցիալական ձգտումներն ու պահանջները... երկու ժողովուրդները միմյանց չէին ըմբռնում այն պատճառով, որ տիրապետող դասակարգերը դիտմամբ բորբոքում և թարմացնում էին հակասությունները, որպեսզի այդպիսով թաքցնեն երկու ժողովուրդների շահերի նույնությունը... Դա ավելի ուժեղ ազգի տիրապետող դասակարգերին հնարավորություն էր տալիս ստրկացնել ավելի թույլ ազգին և ճնշել երկու ժողովուրդների առաջադեմ ուժերի աճը... Օտար տերությունները արհեստականորեն արմատավորվող և բորբոքվող այդ հակասությունները օգտագործում էին այն բանի համար, որպեսզի երկու ազգերին թշնամացնեն և հարկադրեն արյուն թափելու՝ խորթ, ասաջին հերթին, գերմանական շահերի համար...»<sup>22</sup>:

Սոցիալիստական երկրների միջև կնքված բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանագրերի նպատակները համապատասխանում են այդ պետությունների արտաքին-քաղաքական ֆունկցիաներին: Այդ պայմանագրերը կոչված են ծառայելու նրանց մասնակիցների տնտեսական, քաղաքական և կուլտուրական համագործակցության համակողմանի զարգացմանը և փոխադարձ օգնության շահերին: Դրանք կոչված են ծառայելու նրանց տերիտորիալ ամբողջականության և պետական սուվերենության պահպանմանը, իմպերիալիստական պետությունների ագրեսիվ ոտնձգություններից պաշտպանվելուն և այլն:

Այդ երկկողմանի պայմանագրերով սահմանված համատեղ գործողությունների ձևերը տարբեր են և պայմանավորված են պատմական կոնկրետ հանգամանքներով, որոնք թելադրված են կողմերի փոխադարձ շահերով, սակայն նրանց բոլորի գլխավոր նպատակները համանման են՝ բարեկամություն, համագործակցություն, փոխադարձ օգնություն, ագրեսիայի դեմ համատեղ

պայքար, երկու համաշխարհային սիստեմների խաղաղ գոյակցության սկզբունքի իրականացման ապահովում:

Ստեղծելով իրավաբանական հիմքեր բարեկամությունը, համագործակցությունն ու փոխադարձ օգնությունը զարգացնելու համար, այդ պայմանագրերը հուսալի երաշխիք են պայմանագիր կողմերի անվտանգությունն ապահովելու գործում, նպաստում են սոցիալիստական կարգերի հետագա ամրապնդմանը այդ երկրներում, ապահովում են նրանց էկոնոմիկայի և կուլտուրայի համակողմանի զարգացումը: Այդ պայմանագրերի ոգին ու նպատակները լիովին համապատասխանում են ժամանակակից միջազգային իրավունքի պահանջներին և մասնավորապես Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության գրույքներին, որոնք պահանջում են «զարգացնել հարաբերությունները ազգերի միջև՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա...», «աղբյուր միասին, մեկը մյուսի հետ հաշտ, որպես բարի դրացիներ»:

Եթե կապիտալիստական պետությունների բնույթը գործնականում բացառում է բարեկամական ու եղբայրական հարաբերությունների հաստատումը նրանց միջև, ապա սոցիալիստական երկրների միջև նման հարաբերությունների հաստատումը օբյեկտիվ անհրաժեշտություն է և թելադրվում է նրանց հասարակական-քաղաքական կարգի սոցիալիստական էությունը: ՍՄԿԿ ծրագիրը հավաստում է, որ «համաշխարհային սոցիալիստական սիստեմի փորձը հաստատեց կապիտալիզմից անջատվող երկրների ամենասևրտ դաշինքի, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման գործում նրանց ջանքերի միավորման անհրաժեշտությունը»<sup>23</sup>:

Միջազգային հարաբերություններում պետությունների համատեղ գործողությունների ձևերը բազմապիսի են, և դրանցից ոչ բոլորն է, որ համապատասխանում են միջազգային իրավունքի դեմոկրատական սկզբունքների պահանջներին, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ի և ագրեսիայի գծով նրա գործակիցների հարաբերությունների ձևերը: Ագրեսիվ նպատակներով իմպերիալիստական պետությունների միջև ռազմա-քաղաքական դաշինքների գծով հաստատվող «համագործակցությունը» ոչինչ ընդհանուր չունի խնդրի «համագործակցության» հետ, որին կոչ է անում ՄԱԿ-ի կանոնադրությունը, ավելին, լիովին հակասում է Միավորված Ազգերի Կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին: Իմպերիալիստական պետությունների միջև կնքվող բարեկամության և հա-

<sup>22</sup> ՏԵՄ «Международно-правовые формы сотрудничества социалистических государств», էջ 80:

<sup>23</sup> «ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը», էջ 441:

մաղործակցութեան պայմանագրերի իրական նպատակները լիակատար հակասութեան մեջ են գտնվում պայմանագրային ձևի հետ, մինչդեռ սոցիալիստական երկրների միջև կնքվող նման պայմանագրերով հետապնդվող իրական նպատակների և պայմանագրային ձևի միջև գոյություն ունի լիակատար համապատասխանություն:

Սոցիալիստական պետությունների միջև գործող բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրերը սահմանում ու պարտավորեցնում են կողմերին իրականացնել բարեկամության և համակողմանի համագործակցության քաղաքականություն, պայքարել հանուն խաղաղության և անվտանգության: Այդ պայմանագրերից մեծ մասը բովանդակում է հողվածներ, որոնք պարտավորեցնում են պայմանագիր կողմերին օգնության հասնել միմյանց, իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով, եթե կողմերից մեկը ագրեսիայի օբյեկտ հանդիսանա:

Սոցիալիստական պետություններն իրենց անվտանգությունը չեն անջրպետում ընդհանուր խաղաղության և ժողովուրդների անվտանգության շահերից: Ընդհակառակն, մի շարք պայմանագրերում սոցիալիստական պետություններն ազդարարել են իրենց պատրաստակամությունն ու վճռականությունը ամեն կերպ նպաստելու կղեկտիվ անվտանգության համընդհանուր կազմակերպության՝ Միավորված Ազգերի Կազմակերպության գործունեությանը՝ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար: Այսպես, օրինակ, լնհ-հունգարական 1948 թ. հունիսի 18-ի պայմանագրով կողմերը պայմանավորվել ու պարտավորվել են «ամենալիակատար մասնակցություն ունենալ բոլոր այն միջազգային ակցիաներում, որոնք կոչված են պահպանելու խաղաղությունն ու միջազգային անվտանգությունը, ինչպես նաև լիովին... աջակցել այդ պատվավոր խնդիրների իրականացմանը»<sup>24</sup>:

Բարեկամության, համագործակցության և փոխօգնության պայմանագրերի, որոնց մասնակիցներն են սոցիալիստական երկրները, ագրեսորին համատեղ հակահարված տալու որոշումները հեղուկ են ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածում հաստատված՝ ամեն մի պետության ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը ճանաչելու գրույթի վրա:

Հաշվի առնելով երկրորդ համաշխարհային պատերազմի դա-

սերը, փոխադարձ օգնության պայմանագրերը սահմանում են, որ կողմերը պետք է օգնության հասնեն մեկը մյուսին գերմանական և ճապոնական ագրեսիան վերածնվելու դեպքում, ինչպես նաև Գերմանիայի և Ճապոնիայի դաշնակից պետությունների ագրեսիայից պաշտպանվելու համար: Այսպես, օրինակ, Սովետական Միության 1948 թ. փետրվարի 4-ի պայմանագրում ասված է. «Այն դեպքում, եթե Բարձր Պայմանավորվող Կողմերից մեկը ներգրավվի պատերազմական գործողությունների մեջ Գերմանիայի դեմ, որը փորձեր վերսկսել իր ագրեսիվ քաղաքականությունը, կամ մի որևէ այլ պետության դեմ, որն անմիջականորեն կամ մի որևէ այլ ձևով միավորված լինի Գերմանիայի հետ ագրեսիայի քաղաքականության մեջ, ապա մյուս բարձր պայմանավորվող կողմը ռազմական գործողությունների մեջ ներգրավված Պայմանավորվող Կողմին անհապաղ ցույց կտա ռազմական և այլ օգնություն՝ իր արամադրության տակ եղած բոլոր միջոցներով»: Սովետա-Չինական 1950 թ. փետրվարի 14-ի պայմանագիրը սահմանում է, որ կողմերը միմյանց օգնության կհասնեն, եթե նրանցից մեկը «ենթարկվի հարձակման՝ Ճապոնիայի կամ նրա հետ դաշնակից պետության կողմից»:

Միջազգային իրադրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների կապակցությամբ, երբ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան իմպերիալիզմը բռնեց սոցիալիստական պետությունների դեմ ագրեսիվ պատերազմներ հրահրելու, շարժառիթ համաշխարհային պատերազմ նախադատարատելու և սանձազերծելու հանցավոր ուղին՝ ստեղծելով ամեն կարգի ռազմական ագրեսիվ խմբավորումներ, երբ ռևանշիզմը գլուխ է բարձրացրել Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում, իսկ Ճապոնիան ավելի է ներքաշվում ԱՄՆ-ի քաղաքականության ոլորտը, սոցիալիստական պետությունների միջև կնքվող բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրերում ագրեսորի հասկացությունը տարածական ձևով է հղուվում, նկատի ունենալով սոցիալիստական երկրների անվտանգությունն ամեն կարգի ագրեսորից պաշտպանելու շահը: Սովետական Միության և Կորեական Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության միջև 1961 թ. հուլիսի 6-ին կնքված պայմանագիրը նախատեսում է փոխօգնություն այն դեպքում, երբ պայմանավորվող կողմերից մեկը ենթարկվի զինված հարձակման ռորևէ պետության կամ պետությունների կողմիցիայի կողմից», որի հետևանքով նա պատերազմական վիճակի մեջ լինի:

<sup>24</sup> Տե՛ս «Международно-правовые формы сотрудничества социалистических государств», էջ 87:

ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան սոցիալիստական երկրների բոլոր պայմանագրերում casus foederis-ը (դաշինքի առիթ) վրա է հասնում միայն զինված հարձակման դեպքում, մինչդեռ ԱՄՆ-ի կողմից թելադրված ուղղման դաշինքներում այլ կերպ է լուծվում այդ հարցը: Քուրբիայի, Իրանի և Պակիստանի հետ ուղղման դաշինքի վերաբերյալ 1959 թ. մարտի 5-ի համաձայնագրերով ԱՄՆ-ը իրեն զինված միջամտության իրավունք է վերապահել այսպես կոչված «ոչ զինված անուղղակի ազդեցության», «միջազգային կոմունիզմի ներթափանցման» դեպքում, ըստ որում, այդ համաձայնագրերում, ցուցադրելով միջազգային ժանդարմի իր կերպարանքը, ԱՄՆ-ը անպակասորեն անվանակոչում են ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածը, որը ոչ մի պետության իրավունք չի տալիս կամ չի լիազորում այս կամ այն պատրվակով միջամտել ուրիշ երկրների ներքին գործերին:

Սոցիալիստական պետությունների քաղաքական համագործակցության միջազգային-իրավական ձևերից է կոլեկտիվ անվտանգության բաղմակողմանի պայմանագրերը: Խոսքը վերաբերում է 1955 թ. մայիսի 14-ին Վարշավայում Ալբանիայի Ժողովրդական Հանրապետության, Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության, Հունգարական Ժողովրդական Հանրապետության, Կեհական Ժողովրդական Հանրապետության, Ռումինական Ժողովրդական Հանրապետության, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Չեխոսլովակյան Սոցիալիստական Հանրապետության միջև կնքված պայմանագրին:

Վարշավայի պայմանագիրը կնքվել է 20 տարի ժամկետով: Այդ ժամկետը լրանալուց մեկ տարի առաջ պայմանագիրը ղեկնասացնելու մասին Լեհական Ժողովրդական Հանրապետության կառավարությանը հայտարարություն չհանձնած պայմանագիրը կողմերի համար նա ուժի մեջ կմնա հաջորդ տասը տարվա ընթացքում: Վարշավայի պայմանագիրը ուժի մեջ է մտել 1955 թ. հունիսի 5-ին: Նա պաշտպանական նշանակություն ունի և կնքվեց պատերազմի վտանգը ուժեղանալու և խաղաղասեր պետությունների ազգային անվտանգության դեմ ուղղված ակնհայտ սպառնալիքի առկայության պայմաններում: Պայմանագիրը ստորագրելուն նախորդեց Մոսկվայի 1954 թ. խորհրդակցության որոշումներին համապատասխան Վարշավայում հրավիրված խորհրդակցություն-

ընդ (11—14/5—1955 թ.): Խորհրդակցության մասնակիցները քրննարկեցին միջազգային իրադրությունը, որն ստեղծվել էր Եվրոպայում արևմտեվրոպական պետությունների կողմից Փարիզի 1954 թ. համաձայնագրերը վավերացնելու հետևանքով, որը հետապնդում էր գերմանական միլիտարիզմը վերականգնելու նպատակ: Վարշավայի խորհրդակցությունն արձանագրեց, որ արևմուտյան պետությունների քայլերը ուժեղացնում են նոր պատերազմի վտանգը և սպառնալիք են ստեղծում խաղաղասեր պետությունների ազգային անվտանգության համար: Հաշվի առնելով ըստեղծված վտանգավոր իրադրությունը, Վարշավայի խորհրդակցության մասնակիցները որոշեցին ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ Եվրոպայում խաղաղությունը պահպանելու և իրենց անվտանգությունն ապահովելու համար և այդ նպատակով էլ կրնքեցին Վարշավայի բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիրը:

Ի տարբերություն իմպերիալիստական պետությունների կողմից ստեղծված ներլիակ ուղղման խմբավորումների, Վարշավայի պայմանագիրը բաց է նրան կարող է միանալ ամեն մի պետություն՝ անկախ նրա հասարակական և պետական կարգի, որը պատրաստակամություն կհայտնի պայմանագրին մասնակցելու միջոցով նպաստել խաղաղասեր պետությունների ջանքերը միավորելուն՝ խաղաղությունն ու ժողովուրդների անվտանգությունն ապահովելու նպատակով:

Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության սիստեմ ստեղծելու և այդ նպատակով կոլեկտիվ անվտանգության համաեվրոպական պայմանագիր կնքելու դեպքում, որին ձգտում են Եվրոպայի սոցիալիստական երկրները, Վարշավայի պայմանագիրը կդադարի գործելուց հենց որ Համաեվրոպական պայմանագիրը գործողության մեջ մտնի:

Վարշավայի պայմանագրում ընդգծվում է, որ կողմերը ղեկավարվում են ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներով և սկզբունքներով, ձգտում են ամրապնդել ու զարգացնել բարեկամությունը, համագործակցությունը և փոխադարձ օգնությունը՝ պետությունների անկախությունն ու սուվերենությունը հարգելու, ինչպես նաև նրանց ներքին գործերին շմիջամտելու սկզբունքի հիման վրա:

Պայմանագրի մասնակիցները հանդիսավոր կերպով պարտավորվել են, Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ մնալ ուժի սպառնալիքից կամ նրա կիրառումից

և իրենց միջազգային վեճերը լուծել խաղաղ միջոցներով, այնպես, որպեսզի միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը վրտանգի տակ չըրվեն:

Ի հակակշիռ իմպերիալիստական պետությունների ռազմական խմբավորումների Արևմտահվրոսյական դաշինքի և Հյուսիս Ատլանտյան բլոկի, Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը ստեղծվեց սրպես կոլեկտիվ անվտանգության գործիք: Վարշավայի պայմանագրի մասնակիցները պարտավորվել են. պայմանագրի մասնակից մեկ կամ մի քանի պետության վրա նվթրպայում մեկ պետության կամ պետությունների խմբի կողմից զինված հարձակման դեպքում պայմանագրի մասնակից յուրաքանչյուր պետություն, անհատական կամ կոլեկտիվ պաշտպանության իրավունքի իրականացման կարգով, հարձակման ենթարկված պետությունը կամ պետություններին ցույց կտա անհետաձգելի օգնություն, անհատապես կամ պայմանագրի մյուս մասնակիցների հետ համաձայնեցնելով, բոլոր միջոցներով, որպիսիք նա անհրաժեշտ կհամարի՝ ներառյալ զինված ուժերը:

Վարշավայի պայմանագիրը եկավ լրացնելու սոցիալիստական երկրների միջև կնքված բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության երկկողմանի պայմանագրերը: Վարշավայի պայմանագիրը շփոխարինեց ագրեսիայից պաշտպանվելու երկկողմանի պայմանագրերից բխող պարտավորությունները, սակայն Վարշավայի պայմանագիրը կնքելուց հետո սոցիալիստական պետությունների անվտանգությունը նրաշխավորող իրավաբանական գլխավոր աղբյուրը հանդիսանում է նաև Իհարիե, դրանով չի նսեմանում երկկողմանի պայմանագրերով ստանձնած պարտավորությունների նշանակությունը փոխօգնության ասպարեզում. մանավանդ որ ոչ բոլոր սոցիալիստական պետություններն են մասնակցում Վարշավայի պայմանագրին:

Սոցիալիստական բոլոր երկրներն էլ կարևոր նշանակություն են տալիս բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրին, որպես փոխադարձ միջազգային իրավունքների և պարտականությունների կարևորագույն իրավաբանական աղբյուրների: Այդ պայմանագրերի մեջ մարմնավորվում է սոցիալիստական երկրների եղբայրական բարեկամությունը ու նրանց անսասան վճռականությունը կոլեկտիվ ուժերով հակահարված տալու սոցիալիզմի համաշխարհային սիստեմի պետությունների գեմ ուղղված իմպերիալիստական ագրեսորների ամեն մի ոտնձգության:

Բնութագրելով սոցիալիստական պետությունների քաղաքական համագործակցության ընթացքը և հեռանկարները, ՍՄԿԿ XXIII համագումարի բանաձևը հավաստում է, որ «ընդլայնվել է սոցիալիստական երկրների ռազմական համագործակցությունը, ամրապնդվում ու կատարելագործվում է Վարշավայի պակտի մեխանիզմը»<sup>25</sup>:

**§ 3. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱ-ՏԵՆԵԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳՍՅՈՒՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ**

Սոցիալիստական կարգերի հաստատումը Եվրոպայի ու Ասիայի մի շարք երկրներում և այդ հիման վրա սոցիալիզմի համաշխարհային սիստեմի առաջացումը օրակարգի հարց դարձրեց սոցիալիստական երկրների միջև տնտեսական համագործակցության անհրաժեշտությունը և այդ համագործակցության միջազգային իրավական ձևերի մշակումը: Նախկինում միջազգային հարաբերություններում ձևավորված համագործակցության ձևերը չէին կարող բավարարել սոցիալիստական երկրների տնտեսական համագործակցության պահանջները, քանի որ բուրժուազիան համապարփակ միջազգային տնտեսության և համաշխարհային շուկայի ստեղծումը իրականացրել է ոչ թե պետությունների ու ժողովուրդների կամավոր համագործակցությամբ, այլ թույլերին ուժնղների կողմից դաժանորեն ճնշելու, նվաճողական պատերազմների, գաղութային կողոպուտի և թալանի ճանապարհով:

Սոցիալիստական երկրների համագործակցության և փոխադարձ օգնության կոնկրետ ձևերը որոշվում են պատմական պայմաններով: Պատմականորեն ստեղծված իրադրությունն այնպիսին էր, որ առաջացած սոցիալիստական պետություններին օգնություն ցույց տալու գլխավոր ծանրությունը բաժին ընկավ Սովետական Միությանը, և նա պատվով կատարեց այդ պատմական դերն ու ինտերնացիոնալ պարտքը: Ժողովրդական դեմոկրատիայի երկրները ոչ միայն դեր չէին մնացել երկրորդ համաշխարհային պատերազմի արհավիրքներից, այլև խիստ տուժել էին, նրանց ժողովրդական տնտեսությունը հիմնովին քայքայված էր: Առանց դրսի օգնության այդ երկրները ի վիճակի չէին կարճ ժամանակամիջոցում վերականգնել իրենց էկոնոմիկան և ձեռնամուխ լինել սոցիալիստական շինարարության հրատապ խնդիրների իրակա-

<sup>25</sup> «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», էջ 289:



նացմանը: Այդ անշահախնդիր եղբայրական օգնությունը ցույց տվեց Սովետական Միությունը: Խոսելով սովետական օգնության նշանակության մասին, Ռումինիայի բանվորական կուսակցության ղեխավոր քարտուղար Գ. Դեմը ասել է. «Այն տարիներին, երբ մեր ջանքերն ուղղված էին պատերազմի առաջացրած ավերածությունները վերացնելուն և երկամյա երաշտի դժվարությունները հաղթահարելուն, երբ ժողովուրդը տառապում էր սովից, օվկիանոսի այն կողմից մեզ ուղարկում էին նեխած եգիպտացորեն, որի համար մենք վճարում էինք ոսկով, սովետական ժողովրդի համար նույնպես մեծ գրկանքների տարիներին Սովետական Միությունը մեզ տվեց հաց և փրկեց շատ հարյուր հազար երեխաների, կանանց ու տղամարդկանց կյանք»:

Մեր երկրների ժողովուրդները երբեք չեն մոռանա, որ առանց Սովետական Միության օգնության Ռումինիան չէր կարող խուսափել իմպերիալիստական ինտերվենցիայից պաշտպանել իր քաղաքական ու տնտեսական անկախությունը և միջազգային կյանքում գրավել իրեն վերապահված օրինական տեղը»<sup>26</sup>:

Ամերիկյան իմպերիալիզմի կողմից ղեխավորած կապիտալիստական երկրների խտրականության քաղաքականության պայմաններում սոցիալիստական պետությունների համար հրատապ խնդիր էր տնտեսական համագործակցության ընդլայնումն ու զարգացումը: Համագործակցության ձևերը տարբեր են: Այն, մասնավորապես, իրականացվում է երկկողմանի և կոլեկտիվ տնտեսական համագործակցության վերաբերյալ պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա: Տնտեսական համագործակցության հաջողությունը մեծ չափով կախված է աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման խելացի իրականացումից: Սոցիալիստական երկրների տնտեսական և գիտա-տեխնիկական համագործակցության հիմնական միջազգային կենտրոնը Տնտեսական Փոխօգնության Խորհուրդն է, որը հիմնադրվել է 1949 թ. հունվարին Մոսկվայում կնքված համաձայնագրի հիման վրա: Սոցիալիստական երկրների այդ միջազգային տնտեսական կազմակերպությունը ստեղծվել է նրա մասնակիցների սերտ քաղաքական ու տնտեսական կապերը ամրապնդելու նպատակով՝ լիակատար իրավահավասարության, անկախության և սուվերենության փոխադարձ հարգման հիման վրա և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով:

<sup>26</sup> Տե՛ս Գ. Գեորգիու Դեյ, Нерушимое единство социалистических стран, «Правда», 7 ноября 1956 г.

Տնտեսական Փոխօգնության Խորհրդի (ՏՓԽ) ղեխավոր խընդիրն է միավորել և կոորդինացնել մասնակից երկրների ջանքերը, իրականացնել տնտեսական փորձի փոխանակում, կազմակերպել տնտեսական և գիտա-տեխնիկական համակողմանի համագործակցություն, փոխադարձ օգնություն՝ երկրներին հումքով, պարենով, մեքենաներով, սարքավորումով և այլով ապահովելու համար:

ՏՓԽ-ն կոչված է աջակցել արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի զարգացմանը, ձեռնարկությունների համատեղ շինարարությունը, տեխնիկական առաջադիմության զարգացումը արագացնելուն, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և ժողովուրդների բարեկեցության աճին:

Տնտեսական Փոխօգնության Խորհուրդը միաժամանակ կատարելագործում ու խորացնում է աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանումը, ժողովրդա-տնտեսական պլանների կոորդինացումը և արտադրության կոոպերացումն ու մասնագիտացումը կամավորության և փոխադարձ շահավետության հիման վրա:

Սոցիալիստական պետությունների տնտեսական համագործակցության մեջ կարևոր տեղ է գրավում արտադրության կոոպերացիան և մասնագիտացումը՝ ժողովրդա-տնտեսական պլանների կոորդինացման հիման վրա:

Աշխատանքի միջազգային բաժանում նշանակում է համաշխարհային տնտեսության շրջանակներում առանձին երկրների մասնագիտացումը արտադրության տարբեր նյութերի ու տեսակների ասպարեզում և դրանց արտադրության կոոպերացումը:

Կապիտալիստական հասարակարգում աշխատանքի միջազգային բաժանման բնույթն ու համամասնությունը գոյանում է սարերայնության և արտադրության անարխիայի հիման վրա, որի շարժիչ ուժն է շահույթը: Կապիտալիզմի համար ավելի բնորոշ է աշխատանքի տերիտորյալ բաժանումը:

Աշխատանքի սոցիալիստական միջազգային բաժանման բնույթն ու համամասնությունը դասավորվում է այլ հիման վրա: Այն պայմանավորված է պլանաչափ, համամասնական զարգացման օրենքով, որի գործողության ուղորտը ընդգրկում է սոցիալիստական տնտեսության համաշխարհային համակարգը: Աշխատանքի բաժանումը սոցիալիստական պետությունների միջև իրականացվում է սոցիալիստական երկրների գիտակցված գործունեության շնորհիվ, այնպես որ տնտեսապես զարգացած երկրները օգնում ու աջակցում են տնտեսապես թույլ զարգացած պետություն-

ներին, այն հաշվով, որ պատմական կարճ ժամանակամիջոցում նրանց տնտեսական զարգացման մակարդակը հավասարվի<sup>27</sup>:

ժողովրդա-տնտեսական պլանների կոորդինացման միջազգային-իրավական ձևերից են ապրանքների մատակարարման և տեխնիկական օգնություն ցույց տալու վերաբերյալ միջկառավարական տարբեր համաձայնագրերը:

Տնտեսական Փոխօգնության հորհուրդ ստեղծելուց հետո տնտեսությունների տարբեր ձյուղերի ասպարեզում սոցիալիստական երկրների արտադրության մասնագիտացման և կոոպերացման վերաբերյալ հանձնարարականներ են մշակում ՏՓԽ-ի մշտական հանձնաժողովները, իսկ հանձնարարականներ ըզուևում են ՏՓԽ-ի գործադիր կոմիտեն և սեսիաները: Տնտեսական Փոխօգնության հորհրդի ընդունած հանձնարարականները ուղարկվում են հորհրդի անդամներին քննարկելու և հավանություն տալու համար:

ժողովրդա-տնտեսական պլանների կոորդինացման, արտադրության մասնագիտացման և կոոպերացման վերաբերյալ Տընտեսական Փոխօգնության հորհրդի հանձնարարականները ղեռն միջազգային իրավական բնույթի պարտավորություններ չեն առաջացնում: ՏՓԽ-ի կանոնադրության, հորհրդի և նրա օրգանների պրոցեսուրային կանոններին համապատասխան կազմակերպության անդամ պետություններից յուրաքանչյուրը պարտավոր է, ա) համապատասխան հանձնարարականը ներկայացնել իր կառավարության կամ իրավասու այլ օրգանի քննարկմանը, բ) հանձնարարականը ստանալու օրից հաշված 60 օրվա ընթացքում հորհրդի Քարտուղարին կամ համապատասխան Մշտական հանձնաժողովի քարտուղարին տեղեկացնել հանձնարարականը քննարկելու արդյունքների մասին, գ) ապահովել իր աղջային օրենսդրության համապատասխան իր կողմից ընդունված՝ հորհրդի օրգանների հանձնարարականների կատարումը, դ) հորհրդին տեղեկացնել նրա ընդունած հանձնարարականների կատարման ընթացքի մասին: Այսպիսով, ստացվում է, որ հորհրդի ու նրա օրգանների ընդունած հանձնարարականներն ունեն բարոյա-բաղադրական նշանակություն, քանի ղեռ չեն արժանացել ՏՓԽ-ի անդամ պետությունների հավանությանը, վերջիններիս աղջային օրենքով սահմանված կարգով: Այն բանից հետո, երբ հորհրդի հանձնարարականները արժանացել են համապատասխան անդամ պետու-

թյունների հավանությանը, դրանք ձեռք են բերում իրավաբանական ուժ, և այդ պետությունների հարաբերություններում պարտավորեցնող են, այսինքն՝ շահագրգռված անդամ-պետությունների փոխհարաբերություններում նման հանձնարարականը արդեն ձեռք է բերում միջազգային համաձայնագրի բնույթ: Այդպիսի հանձնարարական-համաձայնագիրը համարվում է ուժի մեջ մտած՝ հորհրդի անդամ-վերջին երկրից հանձնարարականը ընդունելու մասին հաղորդում ստանալու պահից: Տնտեսական պլանների կոորդինացման, արտադրության մասնագիտացումն ու կոոպերացման ծառայում են սոցիալիստական երկրներից յուրաքանչյուրի և բոլորի տնտեսության արգասավոր զարգացմանը: Սոցիալիստական երկրների միջև տեղի ունեցող արտադրանքի ու ծառայության բնույթի փոխանակումները ընդունում են արտաքին առևտրի ձև, որն արտացոլվում է համապատասխան համաձայնագրերում՝ ապրանքների փոխադարձ մատակարարումների, տեխնիկական օգնություն ցույց տալու և այլնի վերաբերյալ: Փոխանակումների այսպայմանագրային ձևը նպատակահարմար ճանաչվեց Տնտեսական Փոխօգնության հորհրդի IX սեսիայում: Սեսիան նպատակահարմար գտավ, որպեսզի ՏՓԽ-ի անդամները տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հիմնական հարցերի շուրջը, որոնք բխում են հորհրդի և նրա օրգանների հանձնարարականներից, ըստ անհրաժեշտության ձևակերպեն երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրեր, իսկ համաձայնագիր կնքել շղահանելու հանձնարարականների գծով պատրաստակամություն հայտնեն կատարելու այն միջոցառումները, որոնք այդ հանձնարարականներից բխում են նրանց համար:

Արտադրության վերաբերյալ հանձնարարականներից բխում է, որ համապատասխան երկրները պետք է ապրանքների մատակարարումների քանակի մեջ մտցնեն մասնագիտացվող արտադրանքը, որը նախատեսված է տարեկան և երկարաժամկետ համաձայնագրերում:

Տնտեսական Փոխօգնության հորհրդի կանոնադրությունը ընդունվել է 1959 թ. դեկտեմբերի 14-ին (մասնակիցներն են՝ Ալբանիայի ժողովրդական Հանրապետությունը, Բուլղարիայի ժողովրդական Հանրապետությունը, Հունգարական Ժողովրդական Հանրապետությունը, Լեհական Ժողովրդական Հանրապետությունը, Սովետական Միությունը, Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը և Չեխոսլովակյան Սոցիալիստական Հանրապետությունը: Մոնղոլա-

<sup>27</sup> ՏԼ՝ «Международно-правовые формы сотрудничества социалистических государств», էջ 261—265:

կան ժողովրդական Հանրապետությունը ՏՓԽ-ի մեջ մտավ 1962 թ. հունիսին)։ վավերացվելուց հետո ուժի մեջ մտավ 1965 թ. ապրիլի 13-ին և մասնակի փոփոխությունների է ենթարկվել ՏՓԽ-ի 1962 թ. հունիսի 7-ին, XVI սեսիայում<sup>28</sup>։

Տնտեսական Փոխօգնության Խորհուրդը բաց միջազգային կազմակերպություն է, նոր անդամների ընդունելությունը կատարվում է Խորհրդի սեսիայում՝ ընդունվել ցանկացող պետության պաշտոնական ցանկության հիման վրա։ Կազմակերպության յուրաքանչյուր անդամ կարող է դուրս գալ նրանից, այդ մասին տեղեկացնելով կանոնադրության ավանդապահ պետությանը՝ ՍՍՀՄ-ին։ Դուրս գալու մասին ծանուցումը համարվում է ուժի մեջ մտած ավանդապահի կողմից այն ստանալուց վեց ամիս հետո։

Բացի հանձնարարականներից, որոնց մասին խոսվեց վերը, Տնտեսական Փոխօգնության Խորհուրդը որոշումներ է ընդունում կազմակերպչական և պրոցեդուրային հարցերի շուրջ, որոնք ուժի մեջ են մտնում Խորհրդի համապատասխան մարմնի նիստի արձանագրությունը ստորագրելու օրից, եթե այլ բան չի նախատեսված սվյալ որոշման մեջ։ Խորհրդի հանձնարարականներն ու որոշումներն ընդունվում են միայն շահագրգռված անդամ-պետության համաձայնությամբ, ըստ որում Խորհրդի յուրաքանչյուր անդամ քննարկվող ցանկացած հարցի վերաբերյալ կարող է իր շահագրգռվածությունը հայտնել։ Հանձնարարականներն ու որոշումները չեն տարածվում այն երկրների վրա, որոնք իրենց շահագրգռվածությունը չեն հայտնել սվյալ հարցի վերաբերյալ։ Սակայն նման երկրները հետագայում կարող են միանալ ընդունված հանձնարարականներին և որոշումներին։

Տնտեսական Փոխօգնության Խորհուրդը կազմված է հետևյալ հիմնական մարմիններից՝ 1. Խորհրդի սեսիա, 2. Խորհրդի անդամ երկրների ներկայացուցիչների խորհրդակցություն, 3. Մշտական հանձնաժողովներ, 4. Քարտուղարություն։

Խորհրդի սեսիան կազմակերպության գերագույն մարմինն է։ Նա իրավասու է քննարկելու Խորհրդի իրավասության մեջ մտնող ամեն մի հարց և նրա շուրջ ընդունել հանձնարարականներ ու որոշումներ։ Խորհրդի սեսիաներ հրավիրվում են տարեկան երկու անգամ, անդամ պետությունների մայրաքաղաքներում՝ հերթականությամբ։ Արտակարգ սեսիաներ հրավիրվում են անդամների ոչ պակաս մեկ երրորդի խնդրանքով կամ համաձայնությամբ։

Խորհրդի սեսիան քննարկում է անդամ-պետությունների, ներկայացուցիչների խորհրդակցության, Մշտական հանձնաժողովների և քարտուղարության կողմից տնտեսական և գիտա-տեխնիկական համագործակցության հարցերի վերաբերյալ արված առաջարկությունները և Խորհրդի գործունեության վերաբերյալ քարտուղարության ղեկուցումը։

Խորհրդի սեսիան սահմանում է կազմակերպության մշուս մարմինների գործունեության ուղղությունը և հերթական սեսիայի օրակարգի հիմնական հարցերը։ Նա կարող է ստեղծել այնպիսի մարմիններ, որոնք անհրաժեշտ կհամարի՝ Խորհրդի նպատակներին հասնելու համար։

Խորհրդի ներկայացուցիչների խորհրդակցությունը կազմված է բոլոր անդամ-պետությունների մեկական ներկայացուցիչներից։ Յուրաքանչյուր ներկայացուցիչ ունի տեղակալ և անհրաժեշտ քանակությամբ խորհրդականներ և այլ աշխատակիցներ՝ Խորհրդի քարտուղարության գտնվելու վայրում։ Խորհրդակցությունը նիստեր է հրավիրում ըստ անհրաժեշտության և իր իրավասության շրջանակներում ընդունում է հանձնարարականներ ու որոշումներ և առաջարկություններ է ներկայացնում Խորհրդի սեսիայում քննարկելու համար։ Խորհրդակցությունը միաժամանակ քննարկում է անդամ-պետությունների, Մշտական հանձնաժողովների և Խորհրդի քարտուղարության առաջարկությունները Խորհրդի սեսիայի հանձնարարականների և որոշումների կատարումն ապահովելու վերաբերյալ, ինչպես նաև տնտեսական և գիտա-տեխնիկական համագործակցության այլ հարցեր, որոնք լուծում են պահանջում Խորհրդի սեսիաների միջև ընկած ժամանակամիջոցում։

Ներկայացուցիչների Խորհրդակցությունը կոորդինացնում է Մշտական հանձնաժողովների աշխատանքը, քննարկում է նրանց ղեկուցումները՝ կատարած աշխատանքների և հետագա գործունեության վերաբերյալ, հաստատում է քարտուղարության հաստիքը և բյուջեն, ինչպես նաև վերջինիս հաշվետվությունը բյուջեի կատարման վերաբերյալ։ Նա հաստատում է Մշտական հանձնաժողովների և Խորհրդի քարտուղարության կանոնադրությունները, ստեղծում է վերահսկիչ օրգաններ՝ Քարտուղարության ֆինանսական զործունեությունը ստուգելու համար։

Տնտեսական Փոխօգնության Խորհրդի մշտական հանձնաժողովները ստեղծվում են Խորհրդի սեսիայում՝ անդամ-պետությունների միջև տնտեսական կապերի հետագա զարգացմանը և այդ երկրների ժողովրդական տնտեսության առանձին բնագավառնե-

<sup>28</sup> Տե՛ս «Современное международное право» (Сборник документов), 1964, էջ 42—53։

բում բաղմակողմանի տնտեսական ու գիտա-տեխնիկական համա-  
գործակցության դարգացմանը աջակցելու նպատակով: Կազմա-  
կերպությունն ունի այսպիսի մշտական հանձնաժողովներ, սև մե-  
տալուրգիայի, գունավոր մետալուրգիայի, մեքենաշինության, քի-  
միական արդյունաբերության, ածխի արդյունաբերության, շինա-  
բարության, նավթի և գազի արդյունաբերության, թեթև և սննդի  
արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, ատոմային էներգիան  
խաղաղ նպատակներով օգտագործելու ասպարեզում համագոր-  
ծակցելու, գյուղատնտեսության, տրանսպորտի, տնտեսական  
հարցերի, ստանդարտացման, գիտական և տեխնիկական հետազո-  
տությունների կոորդինացիայի, վիճակագրության և այլն:

Մշտական հանձնաժողովներն իրավունք ունեն հանձնարարա-  
կաններ և որոշումներ ընդունել իրենց իրավասության շրջանակնե-  
րում: Նրանք ներկայացուցիչների խորհրդակցությանը ամենամշա-  
ղկուցումներ են ներկայացնում կատարած աշխատանքի և իրենց  
հետագա գործունեության վերաբերյալ: Մշտական հանձնաժողով-  
ների նիստերը հրավիրվում են նրանցից յուրաքանչյուրի մշտա-  
կան աշխատավայրում, սրբ որոշում է խորհրդի սեսիան: Մշտա-  
կան հանձնաժողովներից յուրաքանչյուրն ունի իր քարտուղարու-  
թյունը՝ հանձնաժողովի քարտուղարի գլխավորությամբ:

Տնտեսական Փոխօգնության խորհրդի հաջորդ հիմնական մար-  
մինը նրա քարտուղարությունն է, որը կազմված է խորհրդի քար-  
տուղարից, վերջինիս տեղակալներից և այնպիսի անձնակազմից,  
որն անհրաժեշտ կլինի քարտուղարության վրա դրված ֆունկցիա-  
ներն իրականացնելու համար: Քարտուղարն ու նրա տեղակալները  
նշանակվում են խորհրդի սեսիայի կողմից, իսկ անձնակազմը հա-  
մալրվում է անդամ-պետությունների քաղաքացիներից՝ խորհրդի  
քարտուղարության կանոնադրությանը համապատասխան: Քար-  
տուղարը խորհրդի գլխավոր պաշտոնատար անձն է: Նա է խոր-  
հրդին ներկայացնում խորհրդի անդամ-երկրների պաշտոնական  
անձերի և կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կազ-  
մակերպությունների հետ ունեցած հարաբերություններում: Քար-  
տուղարի տեղակալներն ու քարտուղարության աշխատակիցները  
կարող են հանդես գալ քարտուղարի անունից՝ նրա լիազորու-  
թյամբ: Ինչպես քարտուղարը, այնպես էլ նրա տեղակալները կա-  
րող են մասնակցել խորհրդի մարմինների բոլոր նիստերին:

Քարտուղարության պարտականությունները մեծ են: Նա խոր-  
հրդի հերթական սեսիային հաշվետվություն է ներկայացնում  
խորհրդի գործունեության վերաբերյալ, աջակցում է խորհրդի սե-

սիայի նախապատրաստմանն ու անցկացմանը և կազմակերպու-  
թյան մյուս մարմինների նիստերը հրավիրելուն ու անցկացմանը  
և այլն:

Խորհրդի քարտուղարության մշտական աշխատատեղին Մոսկ-  
վան է:

Տնտեսական Փոխօգնության խորհրդի կանոնադրության հա-  
մաձայն նրա աշխատանքներին կարող են մասնակցել կազմակեր-  
պությանը ոչ անդամ-պետությունները խորհրդի և համապատաս-  
խան պետության միջև կայացված պայմանավորվածության հի-  
ման վրա: Այդ դրույթին համապատասխան 1964 թ. սեպտեմբերի  
17-ին ՏՓՆ-ի և Հարավսլավիայի կառավարության միջև կնքված  
համաձայնագրով վերջինս մասնակցում է խորհրդի մարմինների  
աշխատանքներին իրավահավասարության և փոխադարձ շահավե-  
տության հիման վրա, այնպիսի հարցերի ասպարեզում, որոնք  
տնտեսության տարբեր բնագավառներում փոխադարձ հետաքրք-  
րություն են ներկայացնում ՏՓՆ-ի անդամ երկրների և Հարավ-  
սլավիայի համար:

Խորհրդի մարմինների աշխատանքներին որպես գիտորդներ  
մասնակցում են Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության,  
Կորեական Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության,  
Զինական Ժողովրդական Հանրապետության և Կուբայի ներկայա-  
ցուցիչները:

Սոցիալիստական պետությունների համագործակցությունը  
տնտեսական փոխօգնության շրանակներում միանգամայն բեղմ-  
նավոր է: Այդ համագործակցության շնորհիվ հնարավոր եղավ  
կառուցել աշխարհի խոշորագույն «Բարեկամություն» նավթամու-  
ղը, 4500 կիլոմետր երկարությամբ, որը սովետական նավթը հասց-  
նում է Հունգարիա, ԳՊՀ, Լեհաստան ու Չեխոսլովակիա: Ստեղծ-  
վել է «Խաղաղություն» միացյալ էներգասիտեմ՝ Հունգարիայի,  
ԳՊՀ-ի, Լեհաստանի, Ռումինիայի, ՍՍՀՄ-ի և Չեխոսլովակիայի  
մասնակցությամբ, «Ինտերմետալլ» միջազգային կազմակերպու-  
թյունը՝ սև մետալուրգիայի ասպարեզում համագործակցելու հա-  
մար, բեռնատար վազոնների ընդհանուր պարկ և այլն:

Տնտեսական Փոխօգնության խորհրդի իրավասուրյեկտության,  
արտոնությունների և իմունիտետների հարցերը կարգավորվում  
են 1959 թ. դեկտեմբերի 14-ին Սոֆիայում կնքված Կոնվենցիա-  
լով, որին մասնակցում են խորհրդի բոլոր անդամ-պետություն-  
ները: Այդ Կոնվենցիան կնքվել է կազմակերպության Կանոնա-  
գրության XIII հոդվածին համապատասխան, ըստ որի խորհուր-

զը, նրա անդամ-երկրների ներկայացուցիչները և Խորհրդի պաշտոնատար անձիք օգտվում են առաջինը իրավասուբյեկտությունից, Խորհուրդը և մյուսները արտոնություններից և իմունիտետներից՝ Խորհրդի յուրաքանչյուր անդամ-երկրի տերիտորիայում:

Կոնվենցիայի համաձայն Տնտեսական Փոխօգնության Խորհուրդը իրավաբանական անձ է և իրավագր է կնքելու համաձայնագրեր, ձևեր բերել, վարձել և օտարել գույք, հանդես գալ դատարանում: Նրա շեքն անձեռնմխելի է, գույքը, ակտիվներն ու փաստաթղթերը, անկախ դրանց գոնվելու վայրից, օգտվում են իմունիտետից վարչական և դատական ամեն մի միջամտությունից, բացառյալ այն դեպքերից, երբ Խորհուրդը այս կամ այն կոնկրետ դեպքի կապակցությամբ հրաժարվում է իմունիտետից:

Տնտեսական Փոխօգնության Խորհուրդը ազատվում է համապետական և տեղական բոլոր ուղղակի հարկերից և տուրքերից, ինչպես նաև ծառայական օգտագործման համար ներմուծվող և դուրս տարվող առարկաների մարսային տուրքերից ու սահմանափակումներից. փոստային, հեռագրային և հեռախոսային կապի ասպարեզում օգտվում է այն նույն կարգից, ինչ սահմանված է գիվանագիտական ներկայացուցչությունների համար:

Խորհրդի օրգաններում անդամ երկրների նշանակած ներկայացուցիչների համար սահմանված են այնպիսի արտոնություններ և իմունիտետներ, որպիսիք սահմանված են համապատասխան դիվանագիտական ուսուցիչի աշխատակիցների համար՝ տվյալ երկրում: Ներկայացուցիչներին տրվող արտոնություններն ու իմունիտետները պետք է օգտագործվեն բացառապես ծառայության շահերի համար: Խորհրդի յուրաքանչյուր անդամ երկիր իրավունք ունի և պարտավոր է հրաժարվել իր ներկայացուցչի իմունիտետից այն բոլոր դեպքերում, երբ այդ երկրի կարծիքով, իմունիտետը խանգարում է արդարագատության իրականացմանը և իմունիտետից հրաժարվելը չի վնասի այն նպատակներին, որոնց կապակցությամբ տրամադրվել է:

Խորհրդի պաշտոնատար անձանց համար նույնպես սահմանված են արտոնություններ և իմունիտետներ: Նրանք ենթակա չեն դատական ու վարչական պատասխանատվության այն գործողությունների համար, որպիսիք նրանք կկատարեն որպես պաշտոնատար անձիք, ազատվում են անձնական պարհակներից, ուղղակի հարկերից ու տուրքերից՝ Խորհրդից ստացած աշխատավարձի նկատմամբ և այլն: Խորհրդի քարտուղարն ու նրա տեղակալները օգտվում են նաև տվյալ երկրում դիվանագիտական ներկայացու-

ցիչների համար սահմանված արտոնություններից ու իմունիտետներից:

Տնտեսական Փոխօգնության Խորհրդի հիմնարկությունները, հիմնականում, տեղավորված են ՍՍՀՄ տերիտորիայում: Այդ հանգամանքից բխող հարցերի իրավական կարգավորումն իրականացվում է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կառավարության և Տնտեսական Փոխօգնության Խորհրդի միջև 1961 թ. դեկտեմբերի 7-ին կնքված համաձայնագրով:

Տնտեսության անընդհեջ, գիտության ու տեխնիկայի աննախագեղ զարգացումը ընդլայնում են սոցիալիստական պետությունների տնտեսական համագործակցության շրջանակները: Նկատի ունենալով տնտեսական կապերի հետագա զարգացումը և հաշվարկային սխտեմի կատարելագործումը Տնտեսական Փոխօգնության Խորհրդի անդամ-երկրները 1963 թ. հոկտեմբերին Մոսկվայում համաձայնագիր ստորագրեցին Տնտեսական համագործակցության միջազգային բանկ հիմնադրելու մասին, որը աշխատել սկսեց 1964 թ. հունվարի 1-ից:

Սոցիալիստական երկրները լայն շափով համագործակցում են նաև գիտա-տեխնիկական ասպարեզում, և այդ մասին միմյանց միջև կնքել են համապատասխան համաձայնագրեր: Այսպես, օրինակ, ի վարգացումն սովետա-լեհական բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրի՝ 1947 թ. մարտի 5-ին կնքվեց առաջին երկկողմանի համաձայնագիրը Սովետական Միության և Լեհական Ժողովրդական Հանրապետության միջև գիտա-տեխնիկական համագործակցության վերաբերյալ: Նույն թվականի դեկտեմբերի 11-ին համանման համաձայնագիր կնքվեց ՍՍՀՄ-ի և Չեխոսլովակիայի միջև: Հետագայում ՍՍՀՄ-ը նման համաձայնագրեր կնքեց Հունգարիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Ալբանիայի, ԶԺՀ-ի, ԿԺԴՀ-ի, ՎԴՀ-ի, ՄԺՀ-ի, Հարավսլավիայի հետ: Այդ համաձայնագրերին համապատասխան ստեղծվել են երկկողմանի գիտա-տեխնիկական համագործակցության հանձնաժողովներ (սովետա-լեհական, սովետա-հունգարական և այլն): Մրանք տարեկան երկու նիստ են ունենում: Մեկը՝ Մոսկվայում, մյուսը՝ պայմանագիր մյուս կողմի մայրաքաղաքում: Երկկողմանի հանձնաժողովների սեսիաների որոշումները պարտադիր են երկու կողմերի համար:

Սոցիալիստական երկրների գիտա-տեխնիկական համագործակցությունը հնարավորություն է տալիս ուժերի և միջոցների

նվազագույն ծախսումով և առավել կարճ ժամկետներում գործի ղնել արդյունաբերական օբյեկտները, զարգացնել գյուղատնտեսական արտադրությունը, ավելի ռացիոնալ օգտագործել հումքի և էներգիայի ռեսուրսները, կատարելագործել մեքենաների և սարքավորումների պարկը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը: Սոցիալիստական երկրների գիտա-տեխնիկական համագործակցությունը իրականացվում է տարբեր ձևերով և ընդգրկում է ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառները: Այդ համագործակցության հիմնական ուղղություններն են. գիտատեխնիկական և արտադրական նվաճումների՝ արդյունաբերական ձեռնարկությունների և այլ օբյեկտների կապիտալ շինարարության նախագծերի, գծադրերի կոմպլեկտների, տեխնոլոգիայի վերաբերյալ և այլ փաստաթղթերի փոխադարձ փոխանակումը, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի նմուշների փոխանակումը, գիտա-տեխնիկական նվաճումներին և արտադրության առաջավոր փորձին ծանոթանալու նպատակով փոխադարձ գործուղումները և այլն:

Սոցիալիստական երկրները համագործակցում են նաև գիտահետազոտական և նախագծային-կոնստրուկտորական աշխատանքների ասպարեզում:

Գիտա-տեխնիկական համագործակցության ձևերից մեկն էլ միացյալ գիտա-հետազոտական հաստատություններ հիմնադրելն է, ինչպիսին Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտն է:

Սոցիալիստական երկրների տնտեսական համագործակցության համակողմանի զարգացումը ամենաանմիջական ներգործություն ունի նրանց էկոնոմիկայի վերելքի համար: ՄՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թթ. հնգամյա պլանի՝ ՄՄԿԿ XXIII համագումարի գիրեկտիվներում ասված է, որ սովետական պետության տնտեսական կապերի ընդլայնումը նպաստեց ոչ միայն սովետական էկոնոմիկայի հետագա վերելքին, այլև համաշխարհային սոցիալիստական սխտեմի երկրների համախմբմանը, նրա հզորության ուժեղացմանը: Սովետական արտաքին տնտեսական կապերի մեջ հիմնական տեղը գրավում են սոցիալիզմի երկրները: Սոցիալիստական երկրների միջև աշխատանքի բաժանումը ավելի ու ավելի մեծ դեր է խաղում ժողովրդական տնտեսությունը սարքավորման և հումքի անհրաժեշտ տեսակներով ապահովելու, բնակչության սպառման բազմազան ապրանքների մատակարարումը բարելավելու գործում: Դա նը-

պաստում է տեխնիկական անաշտդիմության արագացմանը, հանրային արտադրության բարձրացմանը:

Կամավորության և լիակատար հավասարության սկզբունքների վրա հիմնված՝ աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանումը մեղ և հղթարական սոցիալիստական երկրներին օգնում է ավելի արագորեն ընթանալու դեպի ընդհանուր նպատակը՝ կոմունիզմի կառուցումը:

Սոցիալիստական երկրների տնտեսական կապերը առաջիկայում էլ ավելի կամրապնդվեն: Միջազգային տնտեսական համագործակցությունների պրակտիկայում առաջին անգամ հինգ տարի առաջ համաձայնեցված են ապրանքների փոխադարձ մատակարարումները: Սովետական Միությունն ավելի քան հազար կոմպլեկտ սարքավորում է գնելու քիմիական, թեթև, սննդի արդյունաբերության և այլ ճյուղերի ձեռնարկությունների և արտադրամասերի համար: Սոցիալիստական երկրների մատակարարումների միջոցով ծածկվելու է ՄՍՀՄ ծովային փոխադրումների պահանջմունքների 48, մագիստրալային ու արդյունաբերական էլեկտրաբարձերի 40, երկաթուղային մարդատար վագոնների 36 տոկոսը և այլն: 1966 թ. դրությամբ սոցիալիստական երկրները իրենց անհրաժեշտ բոլոր սարքավորումների ու մեքենաների 95 տոկոսից ավելին ստանում են սեփական արտադրության և փոխադարձ փոխանակումների հաշվին: ՄՍՀՄ արտաքին առևտրական շրջանառության մոտավորապես 70 տոկոսը բաժին է ընկնում սոցիալիստական երկրներին<sup>29</sup>:

ՄՄԿԿ XXIII համագումարի բանաձևում արձանագրված է, որ «սոցիալիզմի երկրների տնտեսական համագործակցությունը բարձրացել է նոր աստիճանի: Այդ գործում ավելի ու ավելի է աճում Տնտեսական Փոխօգնության նորհրդի դերը»<sup>30</sup>:

#### § 4. ԱՌՏԱԼԻԽՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԶԵՆԵՐԸ

Սոցիալիստական երկրների փոխհարաբերություններում որոշակի տեղ է զբաղում սահմանային հարցերի միջազգային-իրավական կարգավորումը: Այս նպատակով սահմանակից երկրները

<sup>29</sup> Տե՛ս ՄՄԿԿ XXIII համագումարի նյութերը, էջ 264—267:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 289:

կնքել են համապատասխան երկկողմանի սահմանային համաձայնագրեր: Ինչպես մյուս հարևանների, այնպես էլ հարևան սոցիալիստական երկրների հետ կնքած համաձայնագրերով կարգավորվում են գրացի պետությունների պետական սահմանների հետ կապված՝ սահմանանիշներին հետևելու, դրանց վերանորոգման և վերականգնման, սահմանային ջրերից օգտվելու, սահմանային երկաթուղային ու խճուղային կամուրջներից անցնելու կարգի, սահմանային ջրերում ձկնորսությամբ զբաղվելու, որսորդության վերաբերյալ հարցերը և այլն: Սոցիալիստական երկրների հետ ՄՍՀՄ-ի կնքած սահմանային համաձայնագրերի համաձայն կողմերը նշանակում են սահմանային լիազորներ՝ սահմանային միջադեպերը և սահմանային համաձայնագրերով նախատեսված այլ բնույթի հարցերը կարգավորելու համար: Այսօր 1961 թվականից ուժը կորցրած պայմանագրերի ու կոնվենցիաների (պետական սահմանների վերաբերյալ) փոխարեն ՄՍՀՄ-ը հարևան սոցիալիստական երկրների հետ կնքում է պետական սահմանի ուժի մի, սահմանային հարցերի դժուր համագործակցության և փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանագրեր: Այդպիսի պայմանագրեր ՄՍՀՄ-ը կնքել է Լեհաստանի (15/2—1961 թ.) և Ռումինիայի հետ (27/2—1961 թ.):

Ներառյալ համագործակցության միջոցառումները հնարավոր դարձրեց սոցիալիստական երկրների հարաբերություններում լուծելու մի այնպիսի կարևոր միջազգային-իրավական հարց, ինչպիսին երկքաղաքացիությունն է: Երկքաղաքացիությունը անձի այնպիսի վիճակ է, երբ նա միաժամանակ երկու և ավելի պետության քաղաքացի է: Անձի այդպիսի վիճակը հաճախ վեճերի աղբյուր է ծառայում նրա հայրենիք պետությունների միջև: Վեճեր առաջացնող այդ աղբյուրը վերացնելու նպատակով սոցիալիստական երկրները միմյանց միջև կնքել են երկկողմանի կոնվենցիաներ, որոնք նախատեսում են երկքաղաքացիության հնարավոր զուգորդումը վերացնելու պայմանները: Այդպիսի կոնվենցիաներ 1956—1958 թթ. Սովետական Միությունը կնքել է Ալբանիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Կորեական Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության, Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության, Լեհաստանի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի և Լատվիայ-վիայի հետ:

Երկքաղաքացիությունը վերացնելու վերաբերյալ սոցիալիստական պետությունների միջև կնքված կոնվենցիաների հիմնական

դրույթն այն է, որ երկքաղաքացուն հնարավորություն է տրվում իր հայեցողությամբ ընտրելու մեկի կամ մյուսի քաղաքացիությունը:

Պետությունների բարեկամական հարաբերությունների զարգացման գործում կարևոր նշանակություն ունի կուլտուրական համագործակցության ասպարեզը: Միջազգային կուլտուրական համագործակցություն ասելով մենք հասկանում ենք բոլոր երկրների նյութական և հոգևոր կուլտուրայի նվաճումների իրավահավասար և փոխադարձաբար շահավետ փոխանակում՝ ի շահ խաղաղության և բարեկամության բոլոր ժողովուրդների միջև, ի շահ ազգային կուլտուրաների զարգացման և համաշխարհային կուլտուրայի գանձարանի հարստացման<sup>31</sup>, Միջազգային կուլտուրական համագործակցությունը զարգանում է տարբեր ճանապարհներով ու ձևերով և ունի ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմանի բնույթ:

Կուլտուրական սերտ կապեր են հաստատված եղբայրական սոցիալիստական պետությունների միջև: Կուլտուրական համագործակցությունը նպաստում է սոցիալիստական երկրների ժողովուրդների եղբայրական կապերի ամրապնդմանը, նրանց ազգային սոցիալիստական կուլտուրաների զարգացմանը: Սոցիալիստական երկրների կուլտուրական համագործակցությունը կարգավորող իրավաբանական ակտերը բազմատեսակ են: Կուլտուրական համագործակցության ասպարեզում նրանք փոխադարձ պարտավորություններ են ստանձնել բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանագրերում, որոնց համաձայն կողմերը պարտավորվել են «գործել բարեկամության և համագործակցության ոգով՝ տնտեսական և կուլտուրական կապերի հետագա զարգացման ու ամրապնդման նպատակով»: Կուլտուրական համագործակցության հարցերի իրավական կարգավորումը հիմնականում իրականացվում է հատկապես այդ նպատակով կնքված կուլտուրական համագործակցության վերաբերյալ համաձայնագրերով, որոնք միջկառավարական ակտերի բնույթ ունեն: Այդպիսի համաձայնագրեր կնքվել են սոցիալիստական բոլոր պետությունների միջև: ՄՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների միջև կնքվել են համաձայնագրեր, Լեհական Ժողովրդական Հանրապետության և մի շարք սոցիալիստական պետությունների միջև՝ պայմանագրեր, Ռումինիայի և Հունգարիայի միջև՝ կոնվենցիա և այլն: Անկախ այն բանից, թե ինչպես են կոչվում կուլտուրական համագործակցության շուրջը սոցիալիստա-

<sup>31</sup> Տե՛ս «Дипломатический словарь», 1961, 5. II, էջ 154—156:

կան երկրների միջև կնքված միջազգային իրավական ակտերը, դրանք բոլորն էլ բովանդակում են հարցերի միևնույն շրջանակը՝ համագործակցության նպատակների բնութագրերը, սկզբունքները, ձևերն ու մեթոդները: Կուլտուրական համագործակցության վերաբերյալ միջկառավարական համաձայնագրերի հիման վրա համաձայնագրեր են կնքվում կողմերի համապատասխան գերատեսչությունների միջև, այսինքն՝ կնքվում են միջգերատեսչական համաձայնագրեր: Վերջիններս լինում են երկկողմանի և բազմակողմանի: Բազմակողմանի միջգերատեսչական համաձայնագրերից է Լեզգիոհաղորդումների և հեռուստատեսության միջազգային կազմակերպության կանոնադրությունը և Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի կանոնադրությունը: Որպես երկկողմանի միջգերատեսչային համաձայնագիր կարելի է հիշատակել Հայկական ՄՍՀ և Ղուբաքիայի գիտությունների ակադեմիաների միջև գիտական համագործակցության վերաբերյալ 1968 թ. կնքված համաձայնագիրը:

Կուլտուրական համագործակցության միջկառավարական համաձայնագրերը նախատեսում են գիտական հաստատությունների համագործակցության տարբեր ձևեր, ակադեմիաներում, համալսարաններում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար ասպիրանտներ և ուսանողներ փոխանակելուն աջակցելը, համագործակցություն հրատարակչական գործում, կուլտուր-լուսավորական և սպորտային կազմակերպությունների գործունեության ասպարեզում, ինչպես նաև համագործակցություն մամուլի մարմինների աշխատանքում:

Սոցիալիստական երկրների համագործակցությունն ընդգրկում է նաև իրավական փոխօգնության ասպարեզը: Համագործակցությունն այս բնագավառում իրականացվում է շահագրգռված կողմերի միջև համապատասխան պայմանագրերով սահմանված շրջանակներում և կարգով: Իրավական փոխօգնության պայմանագրերը նախատեսում են կողմերի դատարանների և արդարադատության այլ օրգանների համագործակցությունը քաղաքացիական և քրեական գործերին վերաբերող հարցեր լուծելու համար:

Իրավական օգնության վերաբերյալ ՄՍՀՄ-ը պայմանագրեր է կնքել Ալբանիայի (30 մայիսի 1958 թ.), Բուլղարիայի (12 դեկտեմբերի 1957 թ.), Հունգարիայի (15 հուլիսի 1958 թ.), Գերմանական Գեմոկրատական Հանրապետության (28 նոյեմբերի 1957 թ.), Կորեական Ժողովրդա-Գեմոկրատական Հանրապետության (16 դեկտեմբերի 1957 թ.), Մոնղոլական Ժողովրդական Հանրա-

պետության (25 օգոստոսի 1958 թ.), Լեհաստանի (28 դեկտեմբերի 1957 թ.), Ռումինիայի (3 ապրիլի 1958 թ.) և Չեխոսլովակիայի (31 օգոստոսի 1957 թ.) հետ: Այդ պայմանագրերի խնդիրն է պայմանադիր մեկ կողմի քաղաքացիների ղույքային և անձնական իրավունքների ճանաչումն ու պահպանումը պայմանադիր մյուս կողմի տերիտորիայում: Պայմանագրերը հանդամանորեն կարգավորում են կողմերի արդարադատության օրգանների համագործակցության, իրավական պաշտպանության, դատարանների իրավասությունը սահմանելու և իրավունքի կիրառման հարցերը, օտարերկրացիների դատավարական իրավունքները, իրավական օգնության վերաբերյալ հանձնարարությունների կատարման հարցերը, քաղաքացիական և ընտանեկան գործերով որոշումների ճանաչումն ու կատարումը, փաստաթղթերի ճանաչումն ու ուղարկումը: Փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանագրերը սահմանում են հանցագործներին հանձնելու կարգը, քրեական գործերի բնագավառում փոխադարձ օգնություն և այլն:

ՄՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների միջև գործող պայմանագրերի հիման վրա պայմանագիր մեկ պետության քաղաքացիները մյուս կողմի տերիտորիայում անձնական և ղույքային իրավունքների հարցում օգտվում են այն նույն պաշտպանությունից, ինչ-որ սահմանված է վերջինիս սեփական քաղաքացիների համար: Նրանք կարող են ազատ ու անարգել դիմել դատարաններին, դատախազությանը, նոտարարական գրասենյակ և պետության մյուս հիմնարկություններին:

ՄՍՀՄ-ի քաղաքացիները պայմանագիր սոցիալիստական պետության տերիտորիայում օգտվում են վերջինիս հայրենական քաղաքացիների համար սահմանված դատավարական իրավունքներից:

Սոցիալիստական երկրները համագործակցում են նաև երկաթուղային տրանսպորտի ասպարեզում, որի իրավական հիմքերը սահմանված են շահագրգռված երկրների և նրանց գերատեսչությունների միջև կնքված հատուկ համաձայնագրերով: 1956 թ. ստեղծվել և գործում է Երկաթուղային ճանապարհների համագործակցության կազմակերպություն (ՃՀՀԿ), որը միջգերատեսչային կազմակերպություն է: Այս կազմակերպությունը միավորում է սոցիալիստական երկրների տրանսպորտային վարչությունները՝ երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտի ասպարեզում գիտատեխնիկական համագործակցություն իրականացնելու նպատակով, ինչպես նաև տրանսպորտի այդ տեսակների աշխատանք-



ները կոորդինացնելու համար<sup>32</sup>։ Երկաթուղային տրանսպորտի աշխատանքների կոորդինացիան կարևոր գործոն է տնտեսական համագործակցության զարգացման և ամրապնդման համար։ Սոցիալիստական երկրների մեծ մասը երկկողմանի համաձայնագրեր է կնքել ուղևորների և ամեն կարգի բեռների փոխադրումների վերաբերյալ։ Եվրոպայի սոցիալիստական երկրները բազմակողմանի համաձայնագրեր կնքեցին 1951 թ.՝ Համաձայնադիր միջազգային բեռնահաղորդակցության (ՀՄԲՀ) մասին և Համաձայնագիր միջազգային ուղևորների հաղորդակցության (ՀՄՈՒՀ, վերաբերյալ, 1953 թ. այդ համաձայնագրերին միացան Զինական ժողովրդական Հանրապետությունը, Կորեական ժողովրդական և Մոնղոլական ժողովրդական։ Հանրապետությունը։ Այդ համաձայնագրերի հիման վրա ստեղծվեց գործերի կառավարման բյուրո, որը պետք է կոորդինացնեք ուղևորների և բեռների փոխադրումը ուղղակի երկաթուղային հաղորդակցության ճանապարհով։ Բյուրոյի գործող (բանվորական) ապարատը Վարշավայում էր։ Երբ 1956 թ. հիմնադրվեց Երկաթուղային ճանապարհների համագործակցության կազմակերպությունը (ԵՃՀԿ) գործերի կառավարման բյուրոն լուծարվեց, և նրա ֆունկցիաները տրվեցին ԵՃՀԿ Կոմիտեին, որի լիազորություններն ավելի լայն են։ ԵՃՀԿ-ի կանոնադրությունն ընդունվեց 1957 թ. մայիս-հունիսին, Պեկինում, և նա գործի անցավ նույն թվականի սեպտեմբերի 1-ից։

1957 թ. դեկտեմբերին Մոսկվայի խորհրդակցությունում հիմնադրվեց Եվրոպայի և Ասիայի սոցիալիստական երկրների էլեկտրական և փոստային կապի բնագավառում համագործակցության կազմակերպությունը (ԿՀԿ—Կապի համագործակցության կազմակերպություն), որը սոցիալիստական երկրների տնտեսական համագործակցության ոլորտի ընդլայնման ու զարգացման մի նոր ապացույց էր։ Կապի համագործակցության կազմակերպության խնդիրներն են. էլեկտրական և փոստային կապի գծերի շահագործման և ընդարձակման բարելավումը, գոյություն ունեցող կապի գծերի կատարելագործումը, ռադիոհաճախականությունների բաշխման և օգտագործման հարցերի գծով գործունեության կոորդինացիան, կապի միջազգային կազմակերպություններում գործունեության կոորդինացիան և այլն։ Կազմակերպությունն իրականացնում է տնտեսական և գիտատեխնիկական համագործակ-

ցություն կապի բոլոր բնագավառներում (ռադիո, հեռուստատեսություն, փոստ, էլեկտրոկապ)։

Սոցիալիստական երկրների փոխհարաբերություններում հաստատվել և հաջողությամբ իրականացվում է համագործակցություն օղային տրանսպորտի հարցերի ասպարեզում։ Այդ նպատակով շահադրված սոցիալիստական երկրները միմյանց միջև կնքեցին համապատասխան համաձայնագրեր, որոնցով սահմանված են օղային տրանսպորտի հարցերի ասպարեզում համագործակցության հիմունքները և համագործակցության իրավաբանական սկզբունքները։ Օղային հաղորդակցության բնագավառում Սովետական Միությունը երկկողմանի համաձայնագրեր է կնքել Զինասլովակիայի, Լեհաստանի, Հունգարիայի, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Ռումինիայի, Բուլղարիայի և սոցիալիստական մյուս երկրների հետ։

Սոցիալիստական երկրների համագործակցության միջազգային-իրավական ձևերը զնալով կատարելագործվում են՝ ժամանակի պահանջներին ու խնդիրներին համապատասխան։ Այդ ձևերը ապագայում ևս կզարգանան ու կամրապնդվեն՝ ծառայելով սոցիալիստական համագործակցության պետությունների եղբայրական համակողմանի կապերի խորացմանն ու ընդլայնմանը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը խնդիր դրեց «ըստ ամենայնի նպաստել սոցիալիստական համագործակցության համախմբվածությանը, նրա հզորության ու ազդեցության ամրապնդմանը, ընդլայնել տնտեսական, գիտատեխնիկական համագործակցությունը և կուլտուրական կապերը...»<sup>33</sup>։

<sup>33</sup> «ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը», էջ 289—290։

<sup>32</sup> Տե՛ս «Международно-правовые формы сотрудничества социалистических государств», 1962, էջ 306—316։

**ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

§ 1. Ազգային-ազատագրական շարժումը և գաղութատիրական սխտանի փլուզումը: § 2. Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի նոր պետությունների ձևավորումը ժողովուրդների ինֆևրոնչման իրավունքի գործնական իրականացումն է: § 3. Ժողովուրդների ինֆևրոնչման իրավունքի իրականացման եղանակները: § 4. Կազուպատիրության և նեոգաղութատիրության ձևերն ու մեթոդները: § 5. Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների համագործակցության միջազգային իրավական ձևեր՝ գաղութատիրության և իմպերիալիզմի դեմ մղած պայքարում: § 6. Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների հետ ՍՄՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների համագործակցության միջազգային իրավական ձևերը:

**§ 1. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԳԱՎՈՒԹԱՏԻՐԱԿԱՆ ՍՒՍՏԵՄԻ ՓՂՈՒՋՈՒՄԸ**

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից ի վեր ամենուրեք ուժեղացավ իմպերիալիզմի կողմից գաղութացված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը հանուն ազատության և անկախության: Այդ պայքարը նոր թափով ծավալվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որպես հետևանք այն արժատական տեղաշարժերի, որոնք վրա հասան աշխարհում, Սովետական Միության գլխավորած խաղաղասեր ժողովուրդների աննախադեպ պայքարը իմպերիալիզմի սև ուժերի դեմ, պատմական խոշորագույն հաղթանակը ֆաշիստական Գերմանիայի, միլիտարիստական Ճապոնիայի և նրանց

արքանյակների նկատմամբ նոր և նպաստավոր իրադրություն ըստեղծեցին հանուն ազատության և անկախության պայքարող ժողովուրդների համար: Համաշխարհային մասշտաբով թուլացան միջազգային իմպերիալիզմի դիրքերը Եվրոպայում, Ասիայում, Ամերիկյան մայր ցամաքում, գաղութներում ու կիսակախյալ երկրներում: Դրան հակառակ, ուժեղացան խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի ուժերի դիրքերը, փոխվեց ուժերի հարաբերակցությունը ի նպաստ ազգային-ազատագրական, հեղափոխական ուժերի: Սոցիալիզմի համաշխարհային սխտանի առաջացումը հոսանքի հենարան ծառայեց իրենց անկախության համար պայքարող ժողովուրդների համար:

Գնահատելով ազգային-ազատագրական շարժումները աշխարհում տեղի ունեցած արժատական տեղաշարժերի լույսի տակ, Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագրերը հավաստում է, որ «եթե իմպերիալիզմը ճնշել է ժողովուրդների մեծամասնության ազգային անկախությունը և ազատությունը, նրանց կաշկանդել է գաղութային գաժան ստրկության շղթաներով, ապա սոցիալիզմի առաջացումը նշանավորում է նեշված ժողովուրդների ազատագրության դարագլխի սկիզբը»<sup>1</sup>:

Ազգային-ազատագրական շարժումների հարվածների տակ քայքայվում է իմպերիալիզմի գաղութային սխտանը, առաջացել և առաջանում են երիտասարդ ազգային սուվերեն պետություններ, որոնց ժողովուրդները թևակոխել են իրենց զարգացման նոր ժամանակաշրջանը, որպես միջազգային քաղաքականության ակտիվ մասնակիցներ:

Ղեկավարվելով մարքս-լենինյան ուսմունքով և հավատարիմ իրենց ինտերնացիոնալիստական պարտքին Սովետական Միությունը և մյուս սոցիալիստական պետությունները ակտիվորեն պաշտպանում և ընդլայնում են քաղաքական, տնտեսական և կուլտուրական համագործակցությունը գաղութային լուծը թոթափած երկրների հետ: Սոցիալիստական համագործակցության երկրները վճռականորեն պաշտպանում են երիտասարդ սուվերեն պետություններին՝ իմպերիալիզմի ամեն կարգի ոտնձգություններից: Դրա լավագույն օրինակներից են արաբական երկրներին Իսրայելի ագրեսիայից պաշտպանելու և այդ ագրեսիայի հետևանքները վերացնելու ուղղությամբ սոցիալիստական երկրների ձեռնարկած միահամուռ քայլերը:

<sup>1</sup> «ՍՄԿ ԽՄՄ համագումարի նյութերը», էջ 465:

Արդի միջազգային իրավունքի դեմոկրատական սկզբունքներին համապատասխան ազգային-ազատագրական շարժումները միանգամայն օրինալի են ու արդարացի, բխում են բոլոր ժողովուրդների ինքնորոշման անկապտելի իրավունքից, ըստ որում չուրաքանչյուր ժողովրդի համար պետք է ապահովվի այդ իրավունքի անկաշկանդ իրականացումը, ընդհուպ մինչև անշատվեր և ինքնուրույն անկախ ազգային պետություն ստեղծելը: Վ. Բ. Լինինը սովորեցնում է, որ մարքսիստները պահանջում են ինքնորոշման ազատություն, «այսինքն՝ անկախություն, այսինքն՝ կեղերվող ազգերի անջատման ազատություն, ոչ այն պատճառով, որ մենք երազում ենք տնտեսական տրոհում կամ մանր պետությունների իդեալ, այլ, ընդհակառակն, այն պատճառով, որ մենք կամենում ենք խոշոր պետություններ և մերձեցում, նույնիսկ ազգերի ձուլում, սակայն իսկական դեմոկրատական, իսկական ինտերնացիոնալիստական հողի վրա... Ռուսաստանի սոցիալիստների հրաժարվելն ազգերի ինքնորոշման ազատության պահանջից, մեր մատնանշած իմաստով, համարում ենք ուղղակի դավաճանություն դեմոկրատիային, ինտերնացիոնալիզմին և սոցիալիզմին»<sup>2</sup>:

Գաղութատիրությունը դատապարտված է պատմականորեն և արդելված է միջազգային-իրավական տեսակետից: Գաղութատիրության արդելման հիմքում ընկած է ազգերի ինքնորոշման իրավունքը, որը ժամանակակից միջազգային իրավունքում համընդհանուրի ճանաչումն ստացած սկզբունքներից է: Այդ մասին է վկայում մասնավորապես Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությունը, որի առաջին գլխում, «նպատակներն ու սկզբունքները», ուղղակի ասված է, որ Կազմակերպության նպատակներից է նաև բարեկամական հարաբերությունների զարգացումը ազգերի միջև «ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը հարգելու հիման վրա» (հոդ. 1, կ. 2): Ինքնորոշման իրավունքը իր արտացոլումն է գտել ՄԱԿ-ի կանոնադրության նաև այլ հոդվածներում և նրա ընդունած մի շարք ակտերում: Այսպես, օրինակ, ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդ. 3-րդ կետում, 13-րդ հոդ. 1 «Ն» կետում, պրեամբուլայում, 55-րդ հոդ. «Ե» կետում, 73 հոդվածում, 76 հոդ. «Ն» և «Ը» կետերում և այլն: Այսպիսով, միջազգային իրավունքի աղբյուրները վկայում են, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը միջազգային իրավական սկզբունք է, որի տակ հասկացվում է ամեն մի ժողովրդի

անառարկելի իրավունքը տնօրինելու իր ճակատագիրը, սեփական հայեցողությամբ սահմանելու իր երկրի հասարակական և քաղաքական կարգը: Ինքնորոշման իրավունքի իրականացմանն անցած ժողովուրդը օգտվում է միջազգային-իրավական պաշտպանությունից՝ սկսած այն պահից, երբ նա զրուներել է իր կամքը ինքնորոշվելու և իր անկախ պետությունը, իր երկրի հասարակական ու քաղաքական կարգը ստեղծելու մասին, ըստ որում պետք է նկատել, որ ինքնորոշման իրավունքով օժտված են ինչպես պետականություն ունեցող, այնպես էլ պետականություն չունեցող ժողովուրդները:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը իրավաբանական պարտավորեցնող բնույթ ունի ոչ միայն Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ-պետությունների, այլև յուր-անդամ պետությունների համար, որը բխում է ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդ. 6-րդ կետի բովանդակությունից, ըստ որի Կազմակերպությունը պետք է ապահովի, որպեսզի նրա անդամ չհանդիսացող պետությունները զործեն ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին համապատասխան: Ինքնորոշման իրավունքի վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնադրության դրույթների իրավաբանական պարտագիր բնույթից հետևում է, որ ինքնորոշման իրավունքը չուրաքանչյուր ժողովրդի անկապտելի իրավունքն է, իսկ այս կամ այն ժողովրդին ինքնորոշման իրավունքի իրականացման հնարավորությունից զրկելը միջազգային հանցագործություն, և մեղավոր պետության նկատմամբ պետք է կիրառվեն միջազգային սանկցիաներ:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1952 թ. փետրվարի 5-ի 545 (VI) բանաձևում նախատեսված է, որ ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ պետք է հոգվածներ մտցվեն մարդու իրավունքների մասին միջազգային պակտի մեջ: Այդ բանաձևում ասված է, որ Գլխավոր ասամբլեան հինգերորդ նստաշրջանում ճանաչել է ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրավունքը, որպես մարդու հիմնական իրավունք (բանաձև 421 D (V), 4 դեկտեմբերի 1950 թ.): Այդ նույն բանաձևում ասված է, որ գլխավոր ասամբլեան ձգտում է պատշաճ ձևով հաշվի նստել բոլոր ժողովուրդների քաղաքական իդեերի հետ և դրանով նպաստել միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, և ազգերի միջև զարգացնել բարեկամական հարաբերություններ, որոնք հիմնված լինեն բոլոր ժողովուրդների իրավահավասարության և նրանց ինքնորոշման իրավունքի սկզբունքը ճանաչելու վրա: Ելնելով վերոհիշյալից, Գլխավոր ասամբլեան որոշում է մարդու իրավունքների վերաբերյալ միջազ-

<sup>2</sup> Վ. Բ. Լինին, երկր, հ. 21, էջ 524—525:

գալին պակտի կամ միջազգային պակտերի մեջ հոգված մտցնելը բոլոր ժողովուրդների ու ուղղերի ինքնորոշման մասին, որը պետք է սահմանի, որ «բոլոր ժողովուրդները ինքնորոշման իրավունք ունեն», ըստ որում նման հոգվածում պետք է նշվի, որ բոլոր պետությունները, ներառյալ այնպիսիք, որոնք պատասխանատվություն են կրում շինքնակառավարվող տերիտորիաների կառավարման համար, միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին համապատասխան, պետք է աջակցեն այդ իրավունքի իրականացմանը<sup>8</sup>։

Տոգորված գաղութային երկրների ժողովուրդներին ինքնիշխան լինելու լծից ազատագրելու անկեղծ ձգտմամբ Սովետական Միությունը 1960 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 15-րդ նստաշրջանին ղեկավարացիայի նախագիծ ներկայացրեց՝ գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու վերաբերյալ։ Գեկլարացիայի սովետական նախագիծը դրույթները հանդում էին հետևյալին.

1. Բոլոր գաղութային երկրներին, ինամարկյալ և շինքնակառավարվող տերիտորիաներին անհետաձգելիորեն տալ անկախություն և ազատություն սեփական ազգային պետություն կառուցելու զործում՝ նրանց ժողովուրդների ազատորեն արտահայտած կամքի համաձայն։ Գաղութային ուժերը, գաղութային ազմինխատրացիան, նրա բոլոր տեսակներով, պետք է վերացվեն լիովին, այն նպատակով, որպեսզի այդպիսի տերիտորիաների ժողովուրդներին հնարավորություն տրվի իրենք որոշեն իրենց ճակատագիրը և պետական կառավարման ձևերը։

2. Հավասարապես վերացնել գաղութատիրության բոլոր հենակետերը՝ տիրությունների և ուրիշների տերիտորիաներում վարձակալված շրջանների ձևով։

3. Բոլոր երկրների կառավարություններին կոչ է արվում պետությունների հարաբերություններում խստորեն և անշեղորեն պահպանել Միավորված Ազգերի կազմակերպության կանոնադրության և սույն ղեկավարացիայի դրույթները՝ հավասարության և առանց բացառության բոլոր պետությունների սովորեն իրավունքները և տերիտորյալ ամբողջականությունը հարգելու վերաբերյալ։ Թույլ շտաբով գաղութատիրության որևէ դրսևորում, որևիցե բացառիկ իրավունք կամ արտոնություններ մեկ պետության համար չեն վնաս մյուսներին։

Գեկլարացիայի սովետական նախագիծը լայն արձագանք գրեց

տալ ամբողջ առաջադեմ մարդկության շրջանում և հիմք հանդիսացավ գլխավոր ասամբլեայի 14 դեկտեմբերի 1960 թ. գաղութային երկրներին անկախություն տալու վերաբերյալ հայտնի գեկլարացիան ընդունելու համար։

Այս ղեկավարացիան գլխավոր ասամբլեայում ընդունվեց միաձայն։ Նրանում նորից ընդգծվում է կայունության և բարեկեցության պայմաններ և բարեկամական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը՝ բոլոր ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքները հարգելու հիման վրա։ Նա արձանագրում է, որ պետք է համընդհանուր հարգանքի արժանանալու ու պահպանվելու մարդու իրավունքները և հիմնական ազատությունները բոլորի համար՝ անկախ ուսայի, սեռի, լեզվի ու կրոնի տարբերության։

Գաղութային երկրներին անկախություն տալու վերաբերյալ 1960 թ. դեկտեմբերի 14-ի ղեկավարացիայում Գլխավոր ասամբլեան, հլնելով այն համոզմունքից, որ բոլոր ժողովուրդները ունեն լիակատար ազատություն, իրենց սովորենությունն իրականացնելու և ազգային տերիտորիայի ամբողջականության անկապտելի իրավունք, «հանդիսավոր կերպով հռչակում է գաղութատիրությունը նրա բոլոր ձևերով և արտահայտություններով անհապաղ և անվերապահորեն վերջ տալու անհրաժեշտությունը»։ Այդ նպատակով Գլխավոր ասամբլեան հայտարարում է.

Ժողովուրդներին օտարերկրյա լծին ու տիրապետությանը ենթարկելը և նրանց շահագործումը մարդու հիմնական իրավունքների բացասում են հանդիսանում, հակասում են Միավորված Ազգերի կազմակերպության կանոնադրությանը և խոչընդոտում համադորձակցության զարգացմանը ու խաղաղություն հաստատելուն ամբողջ աշխարհում (1)։

Բոլոր ժողովուրդներն ինքնորոշման իրավունք ունեն։ Այդ իրավունքի հիման վրա նրանք ազատորեն սահմանում են իրենց բազմազան ստատուսը և իրականացնում իրենց անտեսական, սոցիալական և կուլտուրական զարգացումը (2)։

Նկատի ունենալով Միավորված Ազգերի կազմակերպության կանոնադրությամբ սահմանված ինամակալության սիստեմի անորոշիկ բնույթը, այսպես կոչված շինքնակառավարվող տերիտորիաների նկատմամբ այլ պետությունների կողմից իրականացվող կառավարման սիստեմի անհամատեղելի լինելը արդի միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչումն ստացած սկզբունքների հետ և այն, որ այլ կամ այն երկրի նկատմամբ գաղութային բա-

<sup>8</sup> Տե՛ս «Современное международное право (Сборник документов)», 1964, էջ 71—72։

դաբախանության իրականացումը գաղութատերերը հակումն ունեն պատճառաբանել այդ երկրի բնակչության ինքնակառավարման համար պատրաստ չլինելու պատրվակով: Գլխավոր ասամբլեայի գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին 1960 թ. դեկտեմբերի 14-ի դեկլարացիայի երրորդ խիտը սահմանում է. «Քաղաքական, տնտեսական և սոցիալական անբավարար պատրաստությունը կամ կրթության ասպարեզում անբավարար պատրաստությունը երբեք չպետք է օգտագործվեն որպես պատրվակ անկախության հասնելը ձգձգելու համար: Ինչ վերաբերում է խնամարկյալ և չինքնակառավարվող տերիտորիաներին, ինչպես նաև բոլոր այն տերիտորիաներին, որոնք դեռևս անկախության չեն հասել, պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկվեն ամբողջ իշխանությունը այդ տերիտորիաների ժողովուրդներին հանձնելու համար, նրանց ազատորեն արտահայտած կամքին ու ցանկությանը համապատասխան՝ առանց որևէ պայմանի կամ վերապահման և անկախ ուսույցի, կրոնի կամ մաշիկ գույնի, այն հաշվով, որպեսզի նրանց հնարավորություն տրվի օգտվելու լիակատար անկախությունից և ազատությունից (5):

Դեկլարացիան գատապարտում է ամեն մի քայլ, որը նպատակ կունենա բռնության կիրառմամբ կամ հարկադրանքի որևէ միջոցով խոչընդոտելու ինքնորոշման իրավունքի իրականացմանը: Նա ազդարարում է, որ պետք է գաղաբեցվեն ամեն կարգի ռազմական գործողությունները և ամեն բնույթի ռեպրեսիվ միջոցները ընդդեմ կախյալ ժողովուրդների, այն հաշվով, որպեսզի նրանց հնարավորություն ընձեռվի խաղաղության և ազատության պայմաններում իրականացնելու լիակատար անկախության իրենց իրավունքը, իսկ նրանց ազգային տերիտորիայի ամբողջությունը պետք է հարգվի (4): Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին դեկլարացիան գտնում է, որ երկրի ազգային միասնությունը մասնակիորեն կամ ամբողջովին և տերիտորիալ ամբողջականությունը քայքայելու ամեն մի փորձ անհամատեղելի է Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության նպատակների և սկզբունքների հետ: Եզրափակիչ կետում դեկլարացիան պարտավորեցնում է բոլոր պետություններին խստորեն և բարեխղճորեն կատարել Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայի և Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու վերաբերյալ դեկլարացիայի դրույթները՝ հավասարության, բոլոր պետությունների ներքին գործերին

չմիջամտելու, բոլոր ժողովուրդների սուվերեն իրավունքները և նրանց պետությունների տերիտորիալ ամբողջականությունը հարգելու հիման վրա:

Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի 1960 թ. դեկտեմբերի 14-ի դեկլարացիան խոշոր իրադարձություն է անկախության համար պայքարող ժողովուրդներին միջազգային-իրավական օգնություն կազմակերպելու գործում: Դա մի մեղադրական ակտ է, որն անարգանքի սյունին է գամում գաղութատեր պետություններին, իմպերիալիզմի գաղութային սխտեմը համարելով անհարիր ժամանակակից միջազգային իրավունքի տառի և ոգու հետ: Այդ դեկլարացիան ընդունելուց հետո Գլխավոր ասամբլեան հետամուտ է հղել, որպեսզի նրա պահանջները կատարվեն և վերջ տրվի ամօթայի իմպերիալիզմի գաղութային սխտեմին՝ նրա բոլոր ձևերով և արտահայտություններով: Այդ նպատակով է, որ, դեկլարացիայի դրույթները հատուկ կերպով հաստատելով իր XVI նստաշրջանում ընդունած 1954 (XVI) բանաձևում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան որոշում ընդունեց և ստեղծեց հատուկ կոմիտե, նրա վրա դնելով 1960 թ. դեկտեմբերի 14-ի դեկլարացիայի կատարման ընթացքին վերահսկելու պարտականությունը: Հաջորդ նստաշրջաններում, բննարկելով այդ հատուկ կոմիտեի ղեկուցումները դեկլարացիայի դրույթների կատարման ընթացքի վերաբերյալ, Գլխավոր ասամբլեան հավաստել է իր համոզմունքը, որ գաղութատիրության մնացորդների գոյությունը միջազգային կոնֆլիկտների մշտական աղբյուր է, խախտում է միջազգային համագործակցությունը և ստեղծում վտանգներով հղի սխտուացիաներ, որոնք սպառնում են միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Կսելով ու քննարկելով Հատուկ կոմիտեի ղեկուցումները Գլխավոր ասամբլեան պահանջել է անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի բոլոր գաղութային տերիտորիաներն ու ժողովուրդները անկախություն ձեռք բերեն:

§ 2. ԱՍՄԱՅԻ, ԱՅՐԻԿԱՅԻ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՐԱՎԱՆՑՈՒՄԸ Է

Ինքնորոշման իրավունքը Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության մեջ տեղ է գտել շնորհիվ Սովետական  
4 Տե՛ս «Современное международное право» (Сборник документов), 42 69—70:

Միության հետևողական պայքարի, որ նա մղել է տարիների ընթացքում և մասնավորապես Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսի ժամանակաշրջանում, երբ վերջնականապես մշակվեց և ընդունվեց ՄԱԿ-ի այժմ գործող կանոնադրությունը: ՄԱԿ-ի կանոնադրությամբ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի միջազգային-իրավական ճանաչումը մի յուրօրինակ կող էր ուղղված գաղութային երկրներին ու ժողովուրդներին և պարտավորություն այն մասին, որ միջազգային խաղաղության ու անվտանգության համար համագործակցության ու պայքարի համաշխարհային կենտրոն-հանդիսացող այդ ունիվերսալ միջազգային կազմակերպությունը սատարելու է իմպերիալիզմի գաղութային լուծը թոթափել ցանկացող ստրկացված ժողովուրդների ազատագրական պայքարին:

Համաշխարհային ասպարեզում պատմական իրադարձությունների զարգացումը տրամաբանորեն տարավ դեպի իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը, որպես հետևանք ազգային-ազատագրական հեղափոխությունների հետագա զարգացման ու հաղթանակների՝ ընդդեմ իր դարն ապրած գաղութատիրության նողկալի սիստեմի: Ազգային-ազատագրական շարժումները համաշխարհային մասշտաբով մղվող հակաիմպերիալիստական պայքարի շղթայի օղակներից մեկն են: Համաշխարհային հակաիմպերիալիստական պայքարում առաջատար դերը պատկանում է միջազգային բանվոր դասակարգին և նրա մեծագույն պատմական նվաճումը հանդիսացող սոցիալիզմի համաշխարհային սիստեմին:

Մարքսիստական-լենինյան ըմբռնմամբ ազգային ազատագրական շարժումը հեղափոխական մեծ ուժ է: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով ստեղծված նոր պատմական պայմաններում, ինչպես քանիցս ընդգծել է Վ. Ի. Լենինը, սոցիալիստական հեղափոխություններն անխզելիորեն կապված են ազգային-ազատագրական շարժումների հետ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աշխատավորների քաղաքացիական պատերազմը ընդգեմ իմպերիալիստների և շահագործողների բոլոր առաջադեմ երկրներում սկսում է միահյուսվել ազգային պատերազմների հետ ընդդեմ միջազգային իմպերիալիզմի: Ինչպես ասված է Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագրում, սոցիալիստական հեղափոխությունները, ազգային-ազատագրական հակաիմպերիալիստական հեղափոխությունները, ժողովրդական-դեմոկրատական հեղափոխությունները, ժողովրդական զանգվածների պայքարը ֆաշիստական և այլ բռնակալական ռեժիմները տապալելու համար, համադեմոկրատական

շարժումներն ընդդեմ ազգային ճնշման—այդ բոլորը միահյուսվում է մեկ միասնական համաշխարհային հեղափոխական պրոցեսում, որը քաղքայում և կործանում է կապիտալիզմը:

Ազգային-ազատագրական հեղափոխությունները իմպերիալիզմի ճակատը քայքայող, նրա հիմքերը սասանող հզոր ուժ են: «Ազգային ազատագրական շարժման հուժկու հարվածների տակ փաստաբե՛ն փոչ է եկել գաղութային սիստեմը»<sup>5</sup>,—ասված է ՍՄԿԿ XXII համագումարի բանաձևում: Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ձևավորումից հետո իմպերիալիզմի ստրկական գաղութային սիստեմի փլուզումը կարևորագույն պատմական նշանակություն ունեցող երևույթ է:

Իմպերիալիզմի գաղութային սիստեմի քայքայման անող տեմպերը պայմանավորված են համաշխարհային սոցիալիզմի ազդեցության վերելքով, իմպերիալիստական երկրների պրոլետարիատի ինտերնացիոնալ համերաշխությամբ, Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների փոխադարձ պաշտպանությամբ ու համագործակցությամբ, որը ձևավորվում է նրանց ազգային ազատագրության համար պայքարի պրոցեսում: Ազգային ազատագրական պայքարի շնորհիվ իմպերիալիզմի գաղութային տիրապետության լուծը թոթափեցին մոտ 70 երկիր և իրենց անկախ պետություններ հռչակեցին:

Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրները պետությունների ձևավորումը ժողովուրդների ինֆեռոշման իրավունքի գործնական իրականացումն է: Այս նոր պետությունների երևան գալու կապակցությամբ խորը փոփոխություններ տեղի ունեցան աշխարհի քաղաքական կյանքում: Այդ փոփոխությունների-տեղաշարժերի պատկերն իր արտացոլումն է ստացել Միավորված Ազգերի Կազմակերպության կազմի մեջ: Նախապատերազմյան միջազգային ունիվերսալ կազմակերպության Ազգերի լիգայում, նրա գոյության վերջին շրջանում, ներկայացված էին առիական ու աֆրիկական ընդամենը 10 պետություն՝ Չինաստանը, Աֆղանստանը, Իրանը, Իրաքը, Հնդկաստանը, Տաիվանը, Եթովպիան, Լիբերիան, Հարավ-Աֆրիկյան Միությունը և Եգիպտոսը, ըստ որում գաղութային Հնդկաստանը, կիսագաղութային Չինաստանը և իմպերիալիստական տերություններից կախված մյուս ոչ եվրոպական երկրները ինքնուրույն դեր չէին խաղում Ազգերի լիգայում: 1945 թվականին, երբ հիմնադրվեց ՄԱԿ-ը, նրա սկզբնական 51 անդամներից 11-ն էին առիական ու աֆրիկական պետություն: 1955 թ.

<sup>5</sup> «ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը», էջ 396:

նրանց թիվը հասավ 23-ի. 1964 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ում ասիական և աֆրիկական պետությունները 59-ն էին<sup>6</sup> (115-ից), իսկ 1968 թ. հունվարին նրանց թիվը հասնում էր 70-ի:

Երիտասարդ սովետական պետությունները միջազգային ասպարեզում հանդես են գալիս որպես ինքնուրույն քաղաքական գործոն և վարում են իրենց ժողովուրդների ազգային շահերին համապատասխանող քաղաքականություն: Այդ հանգամանքը որոշակիորեն ներգործում է ժամանակակից միջազգային իրավունքի առաջադիմական զարգացման վրա: Միավորված Ազգերի Կազմակերպության մեջ և նրա շրջանակներից դուրս երիտասարդ ազգային պետությունները համագործակցում են սոցիալիստական երկրների հետ, ակտիվորեն մասնակցում են միջազգային իրավունքի դեմոկրատական սկզբունքների ու նորմերի ստեղծմանը և պայքարում դրանց իրականացման համար: Այսպես, օրինակ, 1956 թվականին Գլխավոր ասամբլեայի արտահերթ նստաշրջանում գաղութային լուծը թողնափած երկրները միահամուռ կերպով պաշտպանեցին Սովետական Միության առաջարկած միջոցառումները՝ անզու-ֆրանս-իսրայելական եռակողմ ազրեսիան ընդդեմ Եգիպտոսի դատապարտելու, ազրեսորներին կարգի հրավիրելու, խաղաղությունը Մերձավոր Արևելքում վերականգնելու վերաբերյալ: Ազգային պետությունների մեծ մասը վարում է հակաիմպերիալիստական քաղաքականություն, պայքարում գաղութատիրության մնացորդները վերացնելու համար: Նրանք բոլորը հանդես եկան ի պաշտպանություն Սովետական Միության նախաձեռնության՝ գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու վերաբերյալ և միասնաբար քվեարկեցին հօգուտ Գլխավոր ասամբլեայի 1960 թ. դեկտեմբերի 14-ի դեկլարացիայի: Ազատագրված երկրները, որպես կանոն, վարում են ռազմական խմբավորումներին չմիանալու, դրական չեզոքության քաղաքականություն, հետևում են խաղաղ գոյակցության սկզբունքին, սոցիալիստական երկրների կողմում պայքարում են ջերմամիջուկային զենքն արգելելու համար և այլն:

Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ազատագրված նոր երկրները միմյանց հետ ունեցած փոխհարաբերություններում և սոցիալիստական պետությունների հետ համագործակցության պրոցեսում, արտահայտելով իրենց սովերեն կամքը, հանդես են գալիս որպես միջազգային-իրավական նորմերի ակ-

տիվ ստեղծագործողներ, որպես միջազգային-իրավունքի պրոգրեսիվ զարգացման մասնակիցներ:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագրում բարձր է գնահատվում ազգային պետությունների դերը միջազգային ասպարեզում: «Ազգային պետությունները զնալով ավելի ակտիվորեն են հանդես գալիս որպես ինքնուրույն ուժ համաշխարհային ասպարեզում, — ասված է ծրագրում, — ընդ որում դա օբյեկտիվորեն հիմնականում առաջադեմ, հեղափոխական և հակաիմպերիալիստական ուժ է: Գաղութային ճնշումից ազատագրված երկրները և ժողովուրդները կոչված են աչքի ընկնող դեր խաղալու արդիականության կենտրոնական պրոբլեմը լուծելու՝ համաշխարհային նոր պատերազմը կանխելու գործում»: Մրազրում այնուհետև ընդգծվում է, որ «անցել է այն ժամանակը, երբ իմպերիալիզմը կարող էր անարգել կերպով այդ երկրների մարդկային և նյութական ռեսուրսները օգտագործել իր սանձազերծած կոլոնիալիստական պատերազմներում: Եկել է այն ժամանակը, երբ այդ երկրների ժողովուրդները... կարող են իրենց ռեսուրսներն ի սպաս դնել ընդհանուր անվտանգությանը, դառնալ խաղաղության նոր ամրոց»<sup>7</sup>:

### § 3. Ժողովուրդներու ԽՅՆՈՐՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Գաղութացված երկրների ու ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացումը տեղի է ունենում հարաբերական խաղաղ ճանապարհով և ուժի կիրառմամբ: Առաջին դեպքում խոսքը վերաբերում է այն բանին, որ ազգային ազատագրական շարժումները զարգանում ու հասունանում են այն աստիճանի, որ բացարձակ սպառնալիքի են վերածվում գաղութատեր իմպերիալիստական տերության համար: Վերջինս, անկարող լինելով պահպանել իր տիրապետությունը նվաճված-գաղութացված երկրում, հարկազրված է լինում «կամովին» հեռանալ, իշխանությունը հանձնելով տեղական ազգային օրգաններին: Այդպես տեղի ունեցավ Հնդկաստանում 1947 թ. օգոստոսի 15-ին, երբ բրիտանական իմպերիալիզմը, անկարող լինելով պահպանել իր գաղութային տիրապետությունը, հարկազրված էր ճանաչել Հնդկաստանի և Պակիստանի

<sup>7</sup> «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 471:

<sup>6</sup> Տե՛ս «Международные отношения после второй мировой войны», 4. 3, էջ 500:

անկախութիւնը: Մեծ Բրիտանիան նույն ձևով ստիպված էր հանաչել Բիրմայի անկախութիւնը: Հարաբերական խաղաղ ճանապարհով անկախութեան հասան կիվիան, Սուդանը և մի շարք այլ գաղութացված երկրներ Ասիայում, Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում:

Ազգային ազատագրական շարժումը վերածվում է դինված ելույթի ընդդեմ իմպերիալիստական գաղութատերերի, որք, հաշվի չնստեցնով ժողովուրդների ինքնորոշման անկապտելի իրավունքի հետ, դավթիշները համառորեն հրաժարվում են ճանաչել գաղութների անկախութիւնը և իրենց հանցավոր վարքագծով հարկազրուում են, որպեսզի նվաճված ժողովուրդները ղենքի ուժով վնդգեն օտարերկրյա տիրապետողներին: Այդպես վարվեցին Հընդ-կաշինի, Մարոկկոյի, Ռունիսի, Ալժիրի ժողովուրդները, որոնք ղենքի ուժով ստիպեցին, որպեսզի ֆրանսիական իմպերիալիզմը նանաչի իրենց երկրների պետական անկախութիւնը: Այդպես վարվեցին Եգիպտոսի, Եմենի, Ադենի և անգլիական տիրապետութեան տակ գտնվող այլ երկրների ժողովուրդներ, որոնց ազգային զինված հեղափոխութեանների հարվածների տակ բրիտանական իմպերիալիզմը հարկադրված էր հեռանալ, ճանաչելով այդ երկրների անկախութիւնը: Ազատագրման խաղաղ կամ ոչ խաղաղ ուղին բնորոշը, այսպիսով, կախված է ոչ միայն գաղութացված երկրից, այլև ավելի շատ օտարերկրյա նվաճողից: Բավական է, որ վերջինս հարգի նվաճված երկրի օրինական իրավունքը, ճանաչի նրա միջազգային իրավունքով երաշխավորված պետական անկախութիւնը և զինված հեղափոխութեան անհրաժեշտութիւնը, բնականաբար, կվերանա:

Գաղութային երկրների ժողովուրդների անկախութեան համար մշտապես պայքարը սերտորեն զուգորդվում է ընդհանուր խաղաղութեան և անվտանգութեան համար միտղ պայքարի հետ: Ազգային ազատագրական շարժումների համար բնորոշ են առանց զինված պայքարի ու արյունահեղութեան, խաղաղ նանապարհով անկախութեան հասնելու փորձերը, բանի որ գաղութացված երկրները կենսականորեն շահագրգռված են իրենց նյութական և հոգևոր ուժերն ու ննարալորութեանները լիովին զործի ղենլու գաղութատիրութեանից ժառանգութեան մնացած տնտեսական և կուլտուրական հետամնացութեանը վերացնելու, տասնամյակների ու հարյուրամյակների ընթացքում կեղծքված ժողովուրդների կենսամակարդակը բարձրացնելու, ազգային վերածննդի հասնելու համար: Սակայն գաղութատերերը չեն ցանկանում կամովին հանձնել իրենց

դիրքերը, ձգտում են հավերժացնել իրենց տիրապետութիւնը գաղութացված երկրներում, բոլոր միջոցներով խոչընդոտում են ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացմանը, համախղիմում են ազգային ազատագրական շարժումները ղինված ուժով ճնշելու մեթոդների, որին, բնականաբար, ճնշված ժողովուրդները պատասխանում են ղինված պայքարով՝ սեփական օրինական շահերը իմպերիալիստների գրոհից պաշտպանելու համար:

Միջազգային իրավունքի հարաճանաչ սկզբունքները և, մասնավորապես, Միավորված Ազգերի Կազմակերպութեան կանոնադրութեամբ ու միջազգային իրավունքի այլ աղբյուրներով ժողովուրդների ինքնորոշման միջազգային-իրավական սկզբունքը որոշակիորեն խոստում են հօդուտ այն բանի, որ ազգային ազատագրական պատերազմներն օրինաչափ են և հուղատիրազմյան ժամանակաշրջանում օգտւում են միջազգային-իրավական պաշտպանութեանից: Ազգային ազատագրական պատերազմները պաշտպանելու միջազգային իրավական ինստիտուտը ձևալորվել է աստիճանաբար: Ուղղակիորեն շնչելով ազգային ազատագրական պատերազմների արգարացի լինելը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1948 թ. օգոստոսի 10-ին ընդունած՝ Մարդու իրավունքների համընդհանուր ղեկլարացիայում հռչակել է, որ «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար» իրենց արժանապատւութեան և իրավունքների տեսակետից, որ «չորարանչուր մարդ պետք է օժտված լինի բոլոր իրավունքներով և ազատութեաններով, որոնք հռչակված են սույն ղեկլարացիայով, առանց որեիցե տարրերութեան, այն է՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, բաղաբական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ղուլքային, դասային կամ այլ ղրութեան տեսակետից» (հոդ. հոդ. 1, 2): Այլ կերպ ասած Մարդու իրավունքների համընդհանուր ղեկլարացիան ղատապարտում է մեկ ժողովրդի տիրապետութեան հաստատումը մյուսի նկատմամբ: Այդ ղեկլարացիայից բխում է, որ ստրկացված ժողովուրդներն ազատութեան և հավասարութեան իրավունք ունեն: Նույն ողին է պարունակում Գլխավոր ասամբլեայում 1963 թ. նոյեմբերի 20-ին Ռասայական խտրականութեան բոլոր տեսակները վերացնելու մասին Միավորված Ազգերի Կազմակերպութեան՝ միաձայն ընդունած ղեկլարացիայի 1-ին հոդվածի բովանդակութեանը, ըստ որի՝ «խտրականութեանը մարդկանց միջև ըստ ռասայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման հատկանիշի իրենից ներկայացնում է ոտնձգութեան ընդդեմ մարդկային անձնավորութեան արժանապատւութեան և ղատապարտում



է որպէս Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրութեան մէջ շարադրված սկզբունքների բացասում, որպէս Մարդու իրավունքների համընդհանուր ղեկավարացիայում հռչակված մարդու իրավունքների և հիմնական ազատությունների խախտում, որպէս խոչընդոտ պետությունների միջև խաղաղ ու բարեկամական հարաբերություններ սատարելու և որպէս հանգամանք, որը կարող է խախտել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը»:

Գաղութատիրության ամոթալի սխտեմը իմպերիալիստական տերությունների կողմից կիրառած ու կիրառվող խտրականության ամենավատթարագույն տեսակն է, այդ խտրականությունից ազատվելու համար գործադրվող միջոցները, այդ թվում ազգային ազատագրական պատերազմը օրինական ու արդարացի են միջազգային իրավունքի տեսակետից: Դա որոշակի կերպով հաստատել են պատերազմի գոհերի պաշտպանության վերաբերյալ 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաները, որոնք միջազգային-իրավական պաշտպանության նորմերը տարածում են ազգային-ազատագրական շարժումների մասնակիցների վրա:

Ազգային-ազատագրական պատերազմի օրինաչափությունը ճանաչվեց 1954 թ. Ժնևում ՄՍՀՄ-ի, ԶժՀ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության, Կամբոջայի, Լաոսի և Հարավային Վիետնամի մասնակցությամբ Հնդկաչինում խաղաղությունը վերականգնելու հարցի վերաբերյալ տեղի ունեցած խորհրդակցությունում ընդունված, միջազգային իրավունքի աղբյուր հանդիսացող ակտերում: 1954 թ. հուլիսի 21-ին ընդունված եզրափակիչ ղեկավարացիայում Ժնևի խորհրդակցության մասնակիցները զգոհունակությամբ ի գիտություն ընդունեցին Հնդկաչինի պետություններում ուղղման գործողությունները դադարեցնելու մասին, ինչպէս նաև Ֆրանսիայի կառավարության հայտարարությունը Կամբոջայից, Լաոսից ու Վիետնամից իր զորքերը հանելու պատրաստակամության և նրանց անկախությունն ու տերիտորիալ ամբողջականությունը հարգելու վերաբերյալ<sup>8</sup> խորհրդակցության բոլոր մասնակիցները պարտավորվեցին հարգել Հնդկաչինյան պետությունների սուվերենությունը, միասնությունն ու տերիտորիալ ամբողջությունը և ձեռնպահ մնալ ամեն կարգի միջամտությունից նրանց ներքին գործերին: Այսպիսով, աշխարհի հինգ մեծ տերությունները ըստ էության ճանաչեցին ժո-

ղովորդների ազգային-ազատագրական պատերազմների արդարությունը, պարտավորվեցին ճանաչել նրանց արդյունքները՝ ժողովուրդների անկախությունն ու սուվերեն պետության գոյությունը:

Ազգային-ազատագրական պատերազմների օրինականությունը հաստատված է միջազգային իրավական բնույթի մի շարք այլ ակտերում. 1962 թ. մարտի 18-ի Փրանս-ալժիրական էվիանի համաձայնագրում, Լաոսի շեղբություն վերաբերյալ 1962 թ. հուլիսի 23-ի 14 պետությունների ղեկավարացիայում և այլն:

Միջազգային-իրավական տեսակետից ազգային-ազատագրական պատերազմը օրինաչափ երևույթ է, օրինաչափ է ազգային-ազատագրական պատերազմի դիմած ժողովուրդներին պաշտպանելը և ամեն կարգի օգնություն ցույց տալը: Դա Միավորված Ազգերի Կազմակերպության յուրաքանչյուր անդամ-պետության պարտականությունն է և, ընդհակառակն, գաղութային պատերազմը, անկախություն պահանջող ժողովրդի նկատմամբ զինված ուժի կամ սպառնալիքի դիմելը ժամանակակից միջազգային իրավունքի տեսակետից ազբեսիա է և սպառնալիք միջազգային խաղաղության համար:

Ի խախտումն միջազգային իրավունքի սկզբունքների, մասնավորապես ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ճանաչելու վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնադրության և գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի 1960 թ. ղեկավարացիայի դրույթների, այս կամ այն ժողովրդի անկախություն հաստատելուն բռնացող պետությունը պետք է պատասխան տա իր գործողությունների համար՝ Միավորված Ազգերի Կազմակերպությանն ու համաշխարհային հասարակական կարծիքին:

Վերոհիշյալի լույսի տակ միանգամայն պարզ է դառնում, որ ամերիկյան իմպերիալիզմի զինված միջամտությունը Հարավային Վիետնամի ներքին գործերին իր էությամբ գաղութային ստատուրազմ է, ազբեսիա ընդդեմ ազատության և անկախության համար ոտքի ելած հարավ-վիետնամական ժողովրդի: Ամերիկայի Միայնալ Նահանգների ստոր վարքագիծը միջազգային իրավունքի ըսկըզբունքների գոհելի խախտում է, մարտահրավեր՝ ուղղված Միավորված Ազգերի Կազմակերպությանը, խաղաղասեր բոլոր ժողովուրդներին: Այդ պատճառով էլ աշխարհի բոլոր խաղաղասեր պետություններն ու ժողովուրդները անարգանքի սյունին անգամում ամերիկյան ագրեսորներին և հնարավոր օգնություն ու

<sup>8</sup> «Дипломатический словарь», т. I, стр. 510.



դուժալին տիրապետության մեկ այլ ձև, այսպես կոչված «ազգեցութեան շրջան» (շահերի ոլորտ), որը լայն տարածում ստացավ իմպերիալիստական պետությունների պայմանագրային պրակտիկայում, ըստ որում «ազգեցութեան շրջան» արտահայտությունը վերաբերում էր քաղաքական նպատակներին, իսկ «շահերի ոլորտը»՝ տնտեսական:

Թույլ երկրները ազգեցութեան շրջանների բաժանելն իրականացվում էր «շահագրգռված» իմպերիալիստական տերությունների միջև համապատասխան համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնց հիման վրա գաղութատիր պետությունները փոխադարձաբար ձանաչում էին միմյանց բացառիկ իրավունքները այսպես կոչված «ոչ ոքի չպատկանող» հողերի նկատմամբ՝ հետագայում օկուպացնելու և գաղութացնելու համար: Մրցակցող իմպերիալիստական տերությունները, որպես կանոն, երկկողմանի պայմանագրերով ձանաչում էին մեկը մյուսի բացառիկ «իրավունքները» իրենց համապատասխան ազգեցութեան շրջանում: «Թեպետ և ազգեցութեան շրջանի սահմանումը ինքնին տերիտորիալ իրավունքներ չէր առաջացնում, այն հաճախ դիտվում էր որպես մի տատնան լիակատար անբութայի ձանապարհին: Իմպերիալիստական պետությունը, այսպիսով, մենաշնորհ հնարավորություն էր ստանում տնտեսական ու քաղաքական էքսպանսիա իրականացնելու, «կուլպացնելու, պրոտեկտորատ սահմանելու կամ տերիտորիան աներսիայի ենթարկելու համար»<sup>9</sup>:

«Քաղաքակրթված» իմպերիալիզմը գաղութատիրության ձևերի մեջ նորամուծություն մտցրեց XX դարի առաջին քառորդում, առաջին համաշխարհային պատերազմից հետո: Խոսքը վերաբերում է այսպես կոչված մանդատային սիստեմին, որը գործողության մեջ դրվեց 1919 թ. Անտանտայի գլխավոր տերությունների կողմից՝ իրենց զավթած դերմանական նախկին գաղութները և Օսմանյան կայսրությունից անջատած տերիտորիաները կառավարելու համար: Մանդատային սիստեմը իրավաբանորեն ձևակերպված է Ազգերի լիգայի պակտի XXII հոդվածում, որտեղ ասված է, որ այն տերիտորիաների ժողովուրդները, «որոնք պատերազմի հանրագումարում գաղաթիլ են գտնվել պատերազմից առաջ այդ տերիտորիաները կառավարող պետությունների սուվերենության ներքո», իբր թե «անընդունակ են ինքնուրույնաբար ղեկավարել իրենց՝ ժամանակակից աշխարհի հատկապես դժվարին պայմաններում»: Այդ պատճառով

էլ հանուն «քաղաքակրթության սրբազան առաքելության» Ազգերի լիգայի պակտը պատվիրագրում է «այդ ժողովուրդների նկատմամբ խնամակալությունը վստահել առաջավոր ազգերին, որոնք... այդ խնամակալությունը կիրականացնեն որպես մանդատարների և լիգայի անունից»:

Վ. Ի. Լենինը այսպես է բնութագրել Ազգերի լիգայի մանդատային սիստեմը. «Երբ խոսում են գաղութների մանդատներ բաժանելու մասին, մենք հիանալի գիտենք, որ դա մանդատների բաժանումն է հափշտակման, կողոպուտի համար, որ դա երկրագնդի բնակչության մի շնչին մասին իրավունքների բաժանումն է երկրագնդի բնակչության մեծամասնությանը շահագործելու համար»<sup>10</sup>:

Ազգերի լիգայի մանդատային սիստեմը իմպերիալիզմի գաղութատիրության կատարելագործված նոր ձևն էր, որ կիրառության մեջ դրվեց XX դարի առաջին քառորդում: Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած իմպերիալիստական տերությունները՝ Ազգերի լիգայի հիմնադիրները, իրենց առջև խնդիր էին դրել ղեկավարական տեսք տալու պատերազմի ընթացքում կատարած զավթումներին, այսինքն՝ գտնել այն իրավաբանական ձևը, որի օգնությամբ ուրիշ տերիտորիաների, գաղութների ու երկրների ղավթումը ներկայացվեր որպես «հոգատարություն» նրվաձված տերիտորիաների, գաղութների ու երկրների ժողովուրդների նկատմամբ<sup>11</sup>:

Դատելով երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հակահիտլերյան կռիվիցիայի մասնակիցների հռչակած ըսկրզբունքներով, պետք է, որ գաղութացված բոլոր երկրներին ու ժողովուրդներին ինքնորոշման հնարավորություն ընձեռվեր, մանավանդ որ Սովետական Միության պահանջով ՄԱԿ-ի կանոնադրության մեջ տեղ գտավ ինքնորոշման իրավունքը, որպես նրա հիմնաքարային սկզբունքներից մեկը: Սակայն մինչև վերջ հաղթահարել գաղութային տերությունների դիմադրությունը հնարավոր չէր լինի, և, հաշվի առնելով տվյալ պահին աշխարհում գոյություն ունեցող իրերի ռեալ վիճակը, կանոնադրության մեջ դրվեց

<sup>9</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 50, էջ 186:

<sup>11</sup> Տե՛ս Ս. Նաչան, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, գրքեր 11 («Հայկական հարցը» և Ազգերի լիգան):

<sup>8</sup> «Дипломатический словарь», т. III, стр. 331:

ներ մտցվեցին գաղութային ժողովուրդների վերաբերյալ, իսկ գաղութների կառավարումը զբվեց միջազգային վերահսկողության ներքո: Այդ պատճառով էլ Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում ձևավորվեցին «խնամարկյալ տերիտորիաների» և «չինքնակառավարվող տերիտորիաների» ինստիտուտները: «Զինքնակառավարվող» տերիտորիաներ ասելով նկատի ունենին բոլոր պաղոթային տերիտորիաները, ներառյալ պրոտեկտորատները և մյուսները, որոնք խնամարկյալ տերիտորիաներ չեն: Տերիտորիաների օտարերկրյա կառավարումը զբվեց Միավորված Ազգերի Կազմակերպության խնամակալության հորհրդի վերահսկողության ներքո: ՄԱԿ-ի կանոնադրությունն ընդունելու ժամանակ սուր պայքար ծավալվեց միջազգային խնամակալության հարցի շուրջը: Սովետական պատվիրակությունը պնդում էր, որ միջազգային խնամակալությունը պետք է ծառայի միջազգային խաղաղության և անվտանգության շահերին: Նա պետք է հետապնդի, որ կախյալ երկրները կարողանան շուտ հասնել անկախության: Գաղութատեր տերությունները ամեն կերպ խոչընդոտում էին սովետական առաջարկություններն ընդունելուն:

ՄԱԿ-ի կանոնադրության դրույթներին համապատասխան միջազգային խնամակալությունը տարածվում է խնամակալության վերաբերյալ համաձայնագրերով այդ սիստեմի մեջ մտցված տերիտորիաների վրա, այդ թվում Ազգերի լիգայի մանդատով կառավարվող տերիտորիաները, Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով թշնամական պետություններից անջատված տերիտորիաները և այն տերիտորիաները, որոնք կամովին մրտցրվել են միջազգային խնամակալության սիստեմի մեջ՝ նրանց կառավարման համար պատասխանատու պետությունների կողմից: Յուրաքանչյուր տերիտորիայի միջազգային խնամակալության պայմանները սահմանվում են Գլխավոր ասամբլեայի հաստատած համաձայնագրերով, իսկ եթե սովյալ տերիտորիան ձանաշված է ստրատեգիական, ապա համասպատասխան համաձայնագրեր պետք է հաստատի Անվտանգության հորհուրդը:

Ստրատեգիական ձանաշված տերիտորիաների նկատմամբ ՄԱԿ-ի բոլոր ֆունկցիաները իրականացնում է Անվտանգության հորհուրդը, իսկ ստրատեգիական չձանաշվածների նկատմամբ՝ Գլխավոր ասամբլեան, այդ նպատակով ստեղծված խնամակալության հորհրդի միջոցով:

Խնամակալության վերաբերյալ համաձայնագրերը հաստատվել են տարբեր ժամանակներում: Այսպես, օրինակ, 1947 թ. ապ-

րիլի 2-ին Անվտանգության հորհուրդը հաստատեց խաղաղովկիանոսյան ստրատեգիական ձանաշված կղզիների (Մարշալյան, Մարիանյան և Կարոլինյան) նկատմամբ ԱՄՆ-ի խնամակալության վերաբերյալ համաձայնագիրը: Նույն թվականի նոյեմբերի 1-ին Գլխավոր ասամբլեան հաստատեց Անգլիայի, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի համատեղ ներկայացրած համաձայնագիրը Նաուրա (Nauru) կղզու նկատմամբ խնամակալություն հաստատելու համաձայնագիրը, որով ավարտվում էր ենթամանդատային տերիտորիաները միջազգային խնամակալության սիստեմի մեջ մտցնելը, բացառությամբ Հարավ-Արևմտյան Աֆրիկայի, որի մանդատորը Հարավ-Աֆրիկյան Միությունն է, և որը, ի խախտումն Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության դրույթների, հրաժարվեց այդ տերիտորիան մտցնել խնամակալության սիստեմի մեջ: 1950 թ. դեկտեմբերի 2-ին Գլխավոր ասամբլեան հաստատեց իտալական նախկին գաղութ Սոմալիի նկատմամբ խնամակալության վերաբերյալ համաձայնագիրը՝ տասը տարի ժամկետով: Այդ տերիտորիայի կառավարող պետություն նշանակվեց Իտալիան:

Խնամակալության միջազգային սիստեմ հիմնադրելուն հաջորդած ժամանակաշրջանի փորձը ցույց տվեց, որ խնամակալ պետությունները խախտում են ՄԱԿ-ի կանոնադրությունը և խնամակալությունն իրականացնում են էլնելով իրենց շահագիտական նկատառումներից: Անգլիայի, Ֆրանսիայի, Բելգիայի և Ավստրալիայի կառավարությունները իրենց կառավարման ներքո գտնվող խնամարկյալ տերիտորիաները միացրել էին իրենց գաղութների հետ այսպես կոչված «վարչական միությունների» մեջ, որով էլ խնամարկյալ տերիտորիաները դրվեցին գաղութների վիճակին հավասար դրության մեջ: Կառավարող իշխանությունները խնամարկյալ տերիտորիաներում վարում էին շնշման, դաժան շահագործման և խտրականության բաղաբաղանդություն, որպիսին նրանց վարում էին գաղութներում: Մի բանի տերիտորիայում պահպանվում է ճորտատիրական իրավունքը, անգամ ստրկությունը: Խնամարկյալ տերիտորիաներում ԱՄՆ-ը չեղմամիջուկային զենքի փորձարկումներ էին կատարում և այլն<sup>12</sup>:

Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության՝ միջազգային խնամակալության սիստեմին վերաբերող դրույթներից հետևում է, որ «խնամարկյալ տերիտորիաների» և «չինքնա-

<sup>12</sup> Տե՛ս «Дипломатический словарь», т. 11, էջ 428—430:

կառավարվող տերիտորիաների» ինստիտուտներն ունեն ժամանակավոր բնույթ, և խնամակալության սխեմեմի մեջ մտցված տերիտորիաները պետք է, որ ինքնուրույնություն ստանան կարճ ժամանակամիջոցում: Խնամարկյալ մի շարք տերիտորիաներ արդեն անկախություն են ստացել, ինչպես, օրինակ, Բրիտանական Տոգոն (1956 թ. մայիս), որը, միավորվելով Ռակյա Ափի հետ, կազմել է միացյալ պետություն՝ Գանա: 1960 թ. հունվարի 1-ին անկախ պետություն դարձավ Ֆրանսիական Կամերունը, նույն թվականի ապրիլին՝ Ֆրանսիական Տոգոն: Սոմալին՝ անկախ հռչակվեց 1960 թ. հուլիսի 1-ին: Միջազգային իրավունքի գործող սկզբունքների համաձայն և, մասնավորապես, Գլխավոր ասամբլեայի 1960 թ. դեկտեմբերի 14-ի՝ Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու վերաբերյալ դեկլարացիայի պահանջներին համապատասխան խնամակալության սխեմեմի մեջ մտցված տերիտորիաների ճակատագիրը պետք է լուծվի անհետաձգելիորեն: Միջազգային խնամակալության սխեմեմի գոյությունը անհարիր է արդի միջազգային իրավունքի դեմոկրատական հիմունքների հետ: Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները հետևողականորեն պայքարել ու պայքարում են խնամարկյալ տերիտորիաների ժողովուրդների ինքնորոշման օգտին, հանդես են գալիս ի պաշտպանություն այդ ժողովուրդների օրինական իրավունքների:

Չնայած այն բանին, որ ազգային ազատագրական շարժումների հարվածների տակ գաղութային սխեմեմը փուլ է եկել, և գաղութատիրության վերջին մնացորդները երերվում ու ընկնում են մեկը մյուսի հետևից, գաղութատերերը չեն ուզում հրաժարվել վաղեմի արտոնություններից և ամեն ջանք ու հնարք գործադրում են վերահաստատելու իրենց դիրքերը: «Իմպերիալիստական ուժերը, առաջին հերթին ամերիկյան իմպերիալիզմը՝ համաշխարհային ոեակցիայի գլխավոր պատվարն ու միջազգային ժանդարմը,—ասված է ՍՄԿԿ XXII համագումարի բանաձևում,—ձգտում են պահպանել իրենց դիրքերը, օգտագործելով գաղութային ստրկացման նոր, ավելի խորամանկ ձևեր: Սակայն պատմական փորձը նախկին գաղութների ժողովուրդներին ավելի ու ավելի է համոզում, որ միայն տնտեսական ու քաղաքական կախման բոլոր՝ ձևերից վերջնական ազատագրումը, միայն զարգացման ոչ կապիտալիստական ուղին կարող է նրանց երկրներին հասցնել իսկական ազատության, բարգավաճման ու երջանկության»<sup>15</sup>:

Ընդհանուրապես շրջանում իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունը դրսևորվում է տարբեր ձևերով: Իմպերիալիզմի ավանդական գաղութային քաղաքականությանը փոխարինելու է եկել այսպես կոչված նոր գաղութատիրությունը՝ նեոգաղութատիրությունը: Զհրաժարվելով զինված ուժի գործադրման քաղաքականությունից, գաղութատերերը իրենց նոր քաղաքականության մեջ հիմնական տեղը հատկացնում են ռազմական բյուրոկրատիային և ռազմական ու տնտեսական «օգնություն» կազմակերպելուն: Ռազմական խմբավորումներն օգտագործվում են նրանցում ներգրավված երկրներին իմպերիալիստական տերությունների քաղաքականության ոլորտում պահելու և մոնոպոլիստական կապիտալի շահադիտական նկատառումներին ծառայեցնելու համար: Այդ նպատակով է, որ 1954 թ. սեպտեմբերի 8-ին Մանիլայում ԱՄՆ-ի ակտիվ մասնակցությամբ հիմնադրվեց «Հարավ-Արևելյան Ասիայի պայմանագրի կազմակերպությունը»—ՍԷԱՏՕ-ն, որի անդամները պարտավորվել են համատեղ միջոցառումներ ձեռնարկել Հարավ-Արևելյան Ասիայում աշխարհի սիտուացիա ծագելու դեպքում, և դա նրանք կհամարեն սպառնալից, որը առիթ կծառայի միջամտելու աշխարհի այդ շրջանի երկրների ներքին գոտծերին: 1955 թ. հիմնադրվեց «Բաղդադի պակտի» կազմակերպությունը՝ Թուրոհայի, Իրանի, Մեծ Բրիտանիայի, Պակիստանի, Իրաոի մասնակցությամբ, իսկ 1957 թ. մարտին այդ բյուրոն փաստորեն միադավ ԱՄՆ-ը: 1958 թ. տեղի ունեցած հեղափոխության հետևանքով Իրաքը դուրս եկավ այդ ռազմական բյուրոյից, և այդ բյուրոն 1959 թ. մերանվանվեց Կենտրոնական պայմանագրի կազմակերպության—ՍԵՆՏՕ: Ռազմական բյուրոների մասնակից ասիական երկրների տերիտորիաներում տեղադրված են ռազմական քաղանք՝ հենակետեր, որոնք ուղղված են սոցիալիստական երկրների դեմ: Հենվելով ռազմական խմբավորումների վրա, իմպերիալիստական պետությունները դիմում են ագրեսիվ ակտերի՝ 1956 թ. անսուֆրանս-խորալիստական ագրեսիան ընդդեմ Եգիպտոսի, 1958 թ. ԱՄՆ-ի և Անգոլայի ինտերվենցիան Լիբանանում և Հորդանանում, ամերիկյան ինտերվենցիան Հարավային Վիետնամում, ԱՄՆ-ի ագրեսիան Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության դեմ, ԱՄՆ-ի ինտերվենցիան Լաոսում և Կամբոջայում և այլն:

Ասիայի և Աֆրիկայի սուվերեն պետությունների ներքին գործերին միջամտելու փորձված մեթոդն է այսպես կոչված տնտեսական «օգնությունը» որպես գաղութային ստրկացման նոր մեթոդ: Երիտասարդ պետություններին ցույց տրվող «օգնությունն» օգտա-

<sup>15</sup> ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը, էջ 396:

գործվում է այդ երկրների տնտեսական զարգացումը կանխելու, նրանց՝ իմպերիալիստական պետությունների էկոնոմիկայի հումքային կցորդի վիճակում պահելու համար: Տնտեսական թափանցումը իրականացվում է կապիտալ ներդրումների, փոխառություններ տալու, դրամական օգնության, բազմաբանակ տեխնիկական փորձագետներ ուղարկելու, ստրկացուցիչ կոնցեսիաներ պարտադրելու և այլ եղանակներով:

Նոր գաղութատիրության ձևերից ու մեթոդներից են նաև՝ 1. մարտնետային կառավարություններ և ռեժիմներ կարգելը: Խոսքը վերաբերում է այն բանին, որ գաղութային տերությունները, հարկադրված լինելով հեռանալ տվյալ երկրից, այնտեղ նախապես ստեղծում են այնպիսի կառավարություն ու ռեժիմ, որը հնազանդաբար ծառայի հեռացող գաղութատերին: 2. Գաղութատեր իմպերիալիստական պետությունը տվյալ երկրներին անկախություն տալուց առաջ կամ հետո վերախմբավորում է այդ երկրները, ըստեղծելով տարբեր միավորումներ, որոնք փաստորեն գրվում են կախվածության մեջ նախկին գաղութատեր պետությունից (Մալազիայի Ֆեդերացիա և այլն): 3. Երիտասարդ անկախ պետությունների օրինական կառավարությունների դեմ դավադրություններ կազմակերպելը, ինչպես այդ կատարվեց Գանայում և ուրիշ պետություններում: 4. Ազգամիջյան և միջցեղային կոնֆլիկտների կազմակերպումը (Նիգերիայում, Եմենի Արաբական Հանրապետությունում և այլն): 5. Բաղմապիսի անհավասար պայմանագրեր պարտագրելը, որոնցով իմպերիալիստական տերությունները փորձում են օրինականացնել իրենց նոր գաղութային քաղաքականությունը: Այդպիսի պայմանագրեր գաղութատերերը սովորաբար կնքում են անկախություն տալու մասին ակտերը ստորագրելու հետ մեկտեղ կամ դրանից հետո: Նման անհավասար պայմանագրեր կնքելու միջոցով, այս կամ այն շափով, պահպանելով իրենց դիրքերը, նախկին գաղութատերերը անվանակոչում են *pacta sunt servanda* սկզբունքը, որի համաձայն պայմանագրից միակողմանիորեն հրաժարվելն արգելվում է: Սակայն այդ սկզբունքը չի կարող օգտագործվել անիրավահավասար վիճակը պահպանելու՝ անկախություն ձեռք բերած նոր պետության և նախկին գաղութատերի փոխհարաբերություններում: Նկատի ունենալով այդ հանդամանքը 1957 թ. նոյեմբերի 1-ին Դամասկոսում տեղի ունեցած աֆրո-ասիական երկրների իրավաբանների առաջին կոնֆերանսն իր՝ «Անիրավահավասար պայմանագրերի մասին քանաձեռում» արձանագրել է, որ

«1. Անիրավահավասար պայմանագրերը Միավորված Ազգերի կազմակերպության Կանոնադրության դրույթների բացահայտ խախտում են... և սպառնում են խաղաղությանն աշխարհում:

2. Պետությունը, որը հարկադրված է եղել կնքել այդպիսի պայմանագրեր, իրավունք ունի ազատվել նրանցից՝ հրաժարվելու միջոցով:

3. Արաբական երկրների և Մեծ Բրիտանիայի միջև կնքված պայմանագրերը, Բաղդադի պակտի վրա կառուցված Մեծ Բրիտանիայի և Իրաքի միջև փոխադարձ համաձայնագրերը, լիբանանա-անգլիական և լիբանանա-ամերիկյան և մյուս նման պայմանագրերը—բոլորը համարվում են անիրավահավասար, մեկ կողմից այն հանգամանքների ուժով, որոնց պայմաններում նրանք կնքվել են, և, մյուս կողմից, կողմերի պարտավորությունների խիստ անհամապատասխանության պատճառով: Թվարկված պետություններն իրավունք ունեն դենոնսացնել այդ համաձայնագրերն ու պայմանագրերը, և ազատվել նրանցով պայմանավորված պարտավորություններից»<sup>14</sup>:

Անիրավահավասար պայմանագրերի անհամատեղելիությունը արդի միջազգային իրավունքի հետ ճանաչված է կառույց չեղոթության վերաբերյալ 1962 թ. հուլիսի 23-ին ընդունված դեկլարացիայում, որի մասնակիցներն են նաև այժմ աշխարհում մեծ ճանաչված պետությունները՝ Չինական Ժողովրդական Հանրապետությունը, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը և Ֆրանսիական Հանրապետությունը: Այդ դեկլարացիայի մասնակիցները ուղչունել և ի դիտություն են ընդունել կառույց թագավորության կառավարության հայտարարությունը, որը մտցվել է դեկլարացիայի մեջ, որպես նրա բաղկացուցիչ մաս և որի 8-րդ կետում աղղարարված է, որ կառույց կառավարությունը պահպանելու է այն պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնք կնքվել են կառույց ժողովրդի շահերին և խաղաղության քաղաքականության ու թագավորության չեղոթությանը համապատասխան... և վերացվելու են այն պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնք հակասում են այդ ըսկրզբունքներին»<sup>15</sup>:

Այսպիսով, իմպերիալիստները ձգտում են նոր մեթոդներով և

<sup>14</sup> Տե՛ս «Международное право», М., 1966, էջ 144—145:

<sup>15</sup> Տե՛ս «Современное международное право» (Сборник документов), 1964, էջ 615:

նոր ձևերով պահպանել ժողովուրդների գաղութային շահագործումը: Նրանք օգտագործում են բոլոր միջոցները (գաղութային պատերազմներ, ռազմական բլոկներ, զավազրություններ, տեռոր, քայքայիչ գործունեություն, տնտեսական ճնշում, կաշառում) որպեսզի իրենց իշխանության տակ պահեն աղատագրված երկրները, նրանց նվաճած անկախությունը դարձնեն ձևական կամ այդ երկրները դրկեն անկախությունից: Նրանք «օգնություն» դրոշի ներքո ճգնում են այդ երկրներում պահել հին դիրքերը և զբաղել նոր դիրքեր, ընդլայնել իրենց սոցիալական հենարանը, իրենց կողմը գրավել ազգային բուրժուազիային, հաստատել ռազմա-բռնապետական ռեժիմներ, իշխանության գլուխ դնել հյու-հնազանդ մարիոնետներին: Իմպերիալիզմը մնում է որպես գլխավոր թշնամի և պլյավոսբ խոչընդոտ երիտասարդ սովկերեն պետությունների և բոլոր կախյալ երկրների առջև ծառայած համազգային խնդիրների լուծման ճանապարհին<sup>16</sup>:

Նոր գաղութատիրության այս կամ այն ձևն ու մեթոդը գործադրելով, իմպերիալիստական պետությունները նպատակ ունեն կանխել երիտասարդ ազգային պետությունների զարգանալը ոչ կապիտալիստական ուղիով, այդ երկրներին պահել կապիտալիզմի համաշխարհային տնտեսության ոլորտում՝ տնտեսական, ֆինանսական և քաղաքական շահագործման համար:

Ետպատերազմյան շրջանում նոր գաղութատիրության գլխավոր ուժը Ամերիկայի Միացյալ Նահանգներն են: Լինելով կապիտալիստական աշխարհի գլխավոր տերությունը, ԱՄՆ-ը հանդես են գալիս միջազգային ժանդարմի դերում և ամեն ապօրինության միջոցով փորձում են կասեցնել, խեղդել ազգային-ազատագրական շարժումները: Սակայն ամերիկյան իմպերիալիզմը ամենուրեք հանդիպում է ժողովուրդների աճող դիմադրությանը:

§ 5. ԱՄՆԵՅԻ, ԱՅՐԻԱՅԻ ԵՎ ԱՏԵՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՑՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Իմպերիալիզմի նոր գաղութային քաղաքականությանը դեմ հանդիման ազատագրված երիտասարդ պետությունները ակտիվորեն գործում են գաղութատիրության մնացորդները վերացնելու և որևէ ձևով նրա վերականգնելը կանխելու համար: Համբնդհանուր շահերի համար մղվող պայքարում նրանք հենվում են սոցիալ-

լիզմի համաշխարհային սխտեմի վրա, օգտվում են խաղաղասեր բոլոր ուժերի աջակցությունից և պաշտպանությունից: Իմպերիալիզմի ոտնձգությունների դեմ մղվող պայքարի և համագործակցության ձևերը տարբեր են: Ազատագրված երկրների համագործակցությունն անցել է իր զարգացման ուղին: Երկրորդ համաշխարհային սպառնալից հետո, տակավին 1947—1950 թթ. հրավիրվում են ասիա-աֆրիկական երկրների խորհրդակցություններ, կոնֆերանսներ և հանդիպումներ՝ ազգային հասարակական կազմակերպությունների և կառավարությունների ներկայացուցիչների մակարդակով: 1947 թ. Գեյիում տեղի ունեցավ Առաջին ասիական կոնֆերանսը, որին մասնակցում էին 27 երկրների հասարակական գործիչներ, ասիական 13 պետությունների կառավարական ղեկավարներ և ոչ կառավարական ղեկավարներ ՍՍՀՄ-ից, ԱՄՆ-ից, Անգլիայից, Ավստրալիայից, ինչպես նաև ՄԱԿ-ի և Արաբական պետությունների լիգայի ղեկավարներ:

Ասիայի և Աֆրիկայի երկրների համագործակցության զարգացման և կատարելագործման ճանապարհին նշանակալից իրադարձություն էր 29 երկրների Բանդունգի (Ինդոնեզիա) կոնֆերանսը, որը տեղի ունեցավ 1955 թ. ապրիլի 18—24-ը: Բանդունգի կոնֆերանսը նախապատրաստվել էր ասիական մի խումբ երկրների՝ Բիրմայի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Պակիստանի և Յեյլոնի պրեմիեր-մինիստրների Կոլոմբոյի (Յեյլոն) և Բոգորի խորհրդակցություններում (ապրիլ 1954 թ., դեկտեմբեր 1954 թ.): Այս վերջին խորհրդակցությունում ընդունված կոմյունիկեում շարադրված էին նախատեսվող կոնֆերանսի նպատակները, որոնք հանգում էին հետևյալին.

ա) նպատակ Ասիայի և Աֆրիկայի երկրների միջև բարի կամքի և համագործակցության հաստատմանը, քննարկել և ապահովել նրանց փոխադարձ շահերը, հաստատել և ամրապնդել բարեկամական և բարիդրացիական հարաբերություններ. բ) Քննարկել սոցիալական, տնտեսական և կուլտուրական պրոբլեմներ, ինչպես նաև ներկայացված երկրների հարաբերությունները. գ) Ուսումնասիրել Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համար հատուկ շահ ներկայացնող պրոբլեմները, օրինակ, ազգային սուվերենությանը, ռասիզմին ու գաղութատիրությանը վերաբերող պրոբլեմները. դ) Քննարկել Ասիայի և Աֆրիկայի երկրների և նրանց ժողովուրդների դրությունը ժամանակակից աշխարհում և այն ավանդի հարցը, որ նրանք կարող են ներդնել համընդհանուր խաղաղության և համագործակցության ամրապնդման գործում: Այդ նպա-

<sup>16</sup> Տե՛ս «ՄՄԿ XXII համագումարի նյութերը», էջ 467:

տակների նշանաբանով էլ սկսվեց Բանդունգի կոնֆերանսը: Սակայն Թուրքիայի, Տաիլանդի և Ֆիլիպինների պատվիրակությունները, իրականացնելով արևմտյան տերությունների դիտավորությունները, փորձեցին շեղել Բանդունգի կոնֆերանսը այն հիմնական խնդիրներից, որի համար նա հրավիրվել էր: Այդ նրանց շահաչափն է:

Ասիայի և Աֆրիկայի երկրների մեծամասնությունը վճռակա-նորեն հանդես եկավ հակաիմպերիալիստական պայքարի դիրքե-րից և հանուն այդ պայքարի պատրաստակամություն հայտնեց ար-մենալայն համագործակցություն հաստատել իրենց երկրների մի-ջև, անկախ նրանցում գոյություն ունեցող սոցիալական կարգերի: Նրանք հայտնեցին իրենց մտապրությունը պաշտպանելու խաղաղ գոյակցության քաղաքականությունը:

Բանդունգի կոնֆերանսը ընդունեց ընդարձակ բանաձև, որի «Կախյալ ժողովուրդների պրոբլեմները» բաժնում ասված է. ա) Գաղութատիրությունը նրա բոլոր արտահայտություններով շարիք է, որը պետք է արագորեն արմատախիլ անել: բ) Ժողովուրդներին օտարերկրյա ստրկացմանը, տիրապետությանը և շահագործմանը ենթարկելը մարդու հիմնական իրավունքների բացասում է, որը հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը և խոչընդոտում միջազգային խաղաղությանն ու համագործակցությանը նպաստելուն: գ) Պետք է պաշտպանել այդպիսի բոլոր ժողովուրդների ազատության և անկախության գործը: դ) Կոչ անել շահագրգռված երկրներին այդպիսի ժողովուրդներին ազատություն և անկախություն տալու:

Բանդունգի Կոմյունիկեն բովանդակում է նաև համընդհանուր խաղաղությանն ու համագործակցությանը վերաբերող մի շարք կարևոր դրույթներ, այն է. 1) մարդու հիմնական իրավունքները, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներն ու սկզբունք-ները հարգելը. 2) բոլոր երկրների սուվերենությունն ու տերիտո-րիալ ամբողջականությունը հարգելը. 3) բոլոր ռասաների և բոլոր մեծ ու փոքր ազգերի հավասարությունը ճանաչելը. 4) ինտերվեն-ցիայից և ուրիշ երկրների ներքին գործերին միջամտելուց ձեռնպահ մնալը. 5) յուրաքանչյուր երկրի անհատական և կոլեկտիվ պաշտ-պանությունը հարգելը՝ ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատաս-խան. 6) միջազգային բոլոր վեճերը խաղաղ միջոցներով կարգա-վորելը. 7) արդարացիությունն ու միջազգային պարտավորություն-ները հարգելը և այլն:

Կոնֆերանսը բոլոր երկրների կառավարություններին կոչ ար-եց զինաթափվելու և արգելելու մասսայական ոչնչացման զենքի

արտագրությունը, փորձարկումն ու կիրառումը՝ միջազգային վե-րահսկողության ներքո: Բանդունգի կոնֆերանսի որոշումները բա-ցառիկ կարևոր նշանակություն ունենին Ասիայի և Աֆրիկայի եր-կրների միջև փոխըմբռնումն ամրապնդելու, գաղութացված ժողո-վուրդների ազգային ազատագրական պայքարի զարգացման, խա-ղաղության և անվտանգության գործի համար: Ասիայի և Աֆրիկա-յի երկրների այդ կոնֆերանսը խորը հետք թողեց ամբողջ միջազ-գային հարաբերությունների զարգացման մեջ, նպաստելով խա-ղաղ գոյակցության սկզբունքների ամրապնդմանը, որպես սոցիա-լական տարբեր սիստեմների պատկանող երկրների միջպետա-կան հարաբերությունների միջազգային իրավական սկզբունք<sup>17</sup>:

Բանդունգի կոնֆերանսին հաջորդած շրջանում, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրների համակողմանի աջակցու-թյան և օգնության պայմաններում, իմպերիալիզմի գաղութային տիրապետությունից ազատագրվեցին ու անկախ զարգացման ու-ղին բռնեցին տասնյակ նոր երկրներ և ինքնուրույնաբար մասն համաշխարհային քաղաքականության ոլորտը: Ընդլայնվեցին Ասիայի և Աֆրիկայի երիտասարդ ազգային պետությունների կա-պերը և զարգացան համագործակցության միջազգային իրավա-կան ձևերը: Համագործակցության ձևերն ու սկզբունքները մշակ-վել և սահմանվել են աֆա-աֆրիկյան պետությունների ու ժողո-վուրդների մի շարք կոնֆերանսներում և խորհրդակցություններում, որոնցից հարկ է հիշատակել ներքոհիշյալները.

Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության առա-ջին կոնֆերանսը (Կահիրե, 1957 թ. դեկտեմբեր—1958 թ. հունվար):

Աֆրիկայի ժողովուրդների առաջին կոնֆերանսը (Աքրա, 1958 թ. դեկտեմբեր):

Գանայի, Գվինեայի և Լիբերիայի պետությունների և կառա-վարությունների ղուլսների կոնֆերանսը (Մոնրովիա, 1959 թ. հուլիս):

Աֆրիկայի անկախ պետությունների կոնֆերանսը (Մոնրովիա, 1959 թ. օգոստոս):

Աֆրիկայի ժողովուրդների երկրորդ կոնֆերանսը (Թունիս, 1960 թ. հունվար):

Աֆրիկայի երկրների կառավարական և հասարակական-քա-ղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների կոնֆե-

<sup>17</sup> Տե՛ս «Дипломатический словарь», т. 1, с. 157—159, «Современное международное право» (Сборник документов), 1964, с. 16—17:



րանսը՝ Աֆրիկայում խաղաղությունն ու անվտանգությունն ապահովելու հարցերի շուրջը (Աքրա, 1960 թ. ապրիլ):

Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության երկրորդ կոնֆերանսը (Կոնակրի, 1960 թ. ապրիլ):

Աֆրիկայի անկախ պետությունների երկրորդ կոնֆերանսը (Ադիս-Աբեբա, 1960 թ. հունիս):

Աֆրիկայի 15 անկախ պետությունների կոնֆերանսը (Լեոպոլդվիլ, 1960 թ. օգոստոս):

Աֆրիկայի պետությունների գլուխների կոնֆերանսը (Կասաբլանկա, 1961 թ. հունվար):

Աֆրիկայի ժողովուրդների երրորդ կոնֆերանսը (Կահիրե, 1961 թ. մարտ):

Չմիացած պետությունների առաջին կոնֆերանսը (Բելգրադ, 1961 թ. սեպտեմբեր):

Աֆրիկայի անկախ պետությունների կոնֆերանսը (Լագոս, 1962 թ. հունվար):

Հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոնֆերանսը («Աշխարհն առանց ուժերի») (Աքրա, 1962 թ. հունիս):

Միջազգային կոնֆերանս անտեսական զարգացման պրոբլեմների շուրջը (Կահիրե, 1962 թ. հուլիս):

Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության երրորդ կոնֆերանսը (Մոշի, 1963 թ. փետրվար):

Աֆրիկայի անկախ պետությունների կառավարությունների և պետությունների գլուխների երրորդ կոնֆերանսը (Ադիս-Աբեբա, 1963 թ. մայիս):

Չմիացած պետությունների երկրորդ կոնֆերանսը (Կահիրե, 1964 թ. հոկտեմբեր):

Աֆրիկյան միասնության կազմակերպության (ԱՄԿ) ասամբլեայի առաջին հերթական նստաշրջանը (Կահիրե, 1964 թ. հուլիս):

ԱՄԿ-ի ասամբլեայի երկրորդ հերթական նստաշրջանը (Աքրա, 1965 թ. հոկտեմբեր):

Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդների համերաշխության առաջին կոնֆերանսը (Հավանա, 1966 թ. հունվար):

Արաբական երկրների պետությունների և կառավարությունների գլուխների հանդիպումը (1967 թ.):

Արաբական երկրների պետությունների և կառավարությունների գլուխների հանդիպումը (1968 թ.):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, գաղութատիրությունից ազատագրված սուվերեն պետությունների համագործակցության միջազգային իրավական ձևերի մեջ աչքի են ընկնում բազմակողմ միջպետական կոնֆերանսները, որոնք այս կամ այն չափով սահմանում են մասնակիցներին պարտավորեցնող կանոններ, առաջին հերթին փոխադարձաբար միմյանց սատարելու և համատեղ ջանքերով նոր գաղութատիրության գրոհները ետ մղելու, իմպերիալիզմի ոտնձգություններից պաշտպանվելու համար:

Ասիայի և Աֆրիկայի պետությունների ու ժողովուրդների համագործակցությունն իրականացվում է միջազգային կազմակերպությունների շրջանակներում և, մասնավորապես, իրենց մասնակցությամբ ստեղծված տարբեր հասարակական և միջպետական կազմակերպություններում: Դրանցից են. Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության մշտական կազմակերպությունը, որը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդների համերաշխության առաջին կոնֆերանսը հրավիրելուց հետո դարձել է երեք մայր ցամաքների ժողովուրդների համերաշխության կազմակերպություն: Կասաբլանկայի խարտիան, որն ընդունվել է 1961 թ. հունվարին, նախատեսում է ստեղծել Աֆրիկյան կոնսուլտատիվ խորհուրդ, կառավարությունների գլուխների և մինիստրների մակարդակով մի շարք կոմիտեներ, ինչպես նաև աֆրիկյան դերագույն հրամանատարություն՝ փոխադարձ պաշտպանությունը ապահովելու և աֆրիկյան երկրների անկախությունը պահպանելու նպատակով:

Աֆրիկայի ազատագրված երկրների համագործակցության խոշոր կենտրոն է 1963 թ. մայիսին Ադիս-Աբեբայում հիմնադրված Աֆրիկյան միասնության կազմակերպությունը, որն ունի հակաիմպերիալիստական ուղղություն և աշխարհում եղած ռեգիոնալ կազմակերպություններից խոշորագույնն է իր մասնակիցների թվով<sup>18</sup>:

Աֆրիկյան միասնության խարտիայի համաձայն այդ կազմակերպության նպատակներն են. աֆրիկյան պետությունների միասնության և համերաշխության ամրապնդումը, նրանց համագործակցության կոորդինացիան և ընդլայնումը, իրենց սուվերենության, տերիտորիալ ամբողջականության և անկախության պաշտպանությունը, գաղութատիրության բուրք ձևերի վերացումը Աֆ-

<sup>18</sup> Տե՛ս Ք. Ա. Тузмухамедов, Организация африканского единства, М., 1965:

րիկյան մայր ցամաքում միջազգային համագործակցությանն աշակցելը:

Գաղութատիրության մնացորդների վերացման և նեոգաղութատիրության դեմ մղած պայքարում ազատագրված երկրները բարոյական և նյութական մեծ օգնություն են ցույց տալիս իմպերիալիզմի տիրապետությունից դեռևս շաղատագրված երկրներին ու ժողովուրդներին, դրանով էլ նպաստում իմպերիալիզմի գաղութային ամոթալի սխտեմի վերջին մնացորդների վերացմանը:

Աֆրիկայի և Ասիայի երկրներին ու ժողովուրդներին ստեղծած կազմակերպությունները իրենց լուծան են ներդնում կայուն խաղաղության և միջազգային անվտանգության ապահովման գործում: Այդ կազմակերպությունները փակավիճակ կատարելով չեն, սակայն առաջադրած նպատակներին հասնելու համար մղած պայքարում նրանք աստիճանաբար կատարելագործվում են:

**§ 6. ԱՄՆԱՅԻ, ԱՖՐԻԿԱՅԻ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՍՍՀՄ-Ի ԵՎ ՄՅՈՒՍ ԱՌԵՒԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՂԵՐԸ**

Սոցիալիզմի համաշխարհային սխտեմի պետությունները ակտիվորեն պաշտպանում և ընդլայնում են քաղաքական, տնտեսական և կուլտուրական համագործակցությունը գաղութային լուծը թոթափած երկրների հետ: Սոցիալիստական երկրները այդ պետությունների հետ իրագործում են փոխադարձաբար շահավետ առևտրական լայն հարաբերություններ:

Գաղութատիրության լուծը թոթափած երիտասարդ ազգային պետությունների հետ ունեցած հարաբերություններում սոցիալիստական երկրները ելնում են նրանց սուվերենությունը, տերիտորիալ ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը հարգելու անփոփոխ սկզբունքից: Ավելին, սոցիալիստական պետություններն Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ազատագրված երկրների բարեկամն ու հենարանն են նրանց անկախությունն իմպերիալիստական տերությունների ստնձգություններից պաշտպանելու գործում:

Սովետական Միության համագործակցությունը երիտասարդ պետությունների հետ քաղաքական ասպարեղում իրականացվում է շահագրգռված երկրների հետ երկկողմանի խորհրդակցությունների, համատեղ հայտարարությունների, կոմյունիկաների ըն-

դունման ձևով: ՍՍՀՄ-ը և այդ երկրները հանդես են գալիս ի պաշտպանություն խաղաղության և միջազգային անվտանգության: Սոցիալիստական երկրների և գաղութատիրությունից ազատագրված երկրների քաղաքական շահերը ընդհանուր խաղաղության, իմպերիալիզմի գաղութային սխտեմի մնացորդների վերացման և շատ այլ հարցերում համընկնում են: Նրանք համագործակցում են Միավորված Ազգերի Կազմակերպության և նրա օրգանների շրջանակներում պատերազմի վտանգի դեմ մղվող պայքարում: Սովետական Միության անշահախնդիր քաղաքական օգնությունն ու աջակցությունը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ազատագրված երկրներին և իրենց անկախության համար պայքարող ժողովուրդներին սովետական արտաքին քաղաքականության անկյունաքարերից մեկն է և բխում է ՄՄԿԿ ծրագրից: «Գաղութային և կիսագաղութային լուծը թոթափած ժողովուրդների հետ... եղբայրական դաշինքը ՄՄԿԿ-ն դիտում է որպես իր միջազգային քաղաքականության անկյունաքարերից մեկը: Այդ դաշինքը հիմնված է համաշխարհային սոցիալիզմի և համաշխարհային ազգային ազատագրական շարժման կենսական շահերի ընդհանրության վրա: ՄՄԿԿ-ն իր փոփոխանցիոնալ պարտքն է համարում օգնել ազգային անկախությունը նվաճելու և ամրապնդելու ուղիով ընթացող ժողովուրդներին, գաղութային սխտեմը լիովին ոչնչացնելու համար պայքարող բոլոր ժողովուրդներին»<sup>19</sup>,—ասված է ՄՄԿԿ ծրագրում: 1956 թ. Սովետական Միությունը եռանդուն աջակցություն ցույց տվեց Եգիպտոսին՝ անգլո-ֆրանս-իսրայելական ագրեսիան հաճախելու արգարացի գործում: 1957 թ. աշնանը, երբ իմպերիալիստների զինված սպառնալիքը կախվել էր Սիրիայի վրա (այդ հարձակումը հիմնականում պետք է կատարվեր Թուրքիայի ուժերով), Սովետական Միությունը դիմեց ակտիվ քայլերի, կանխեց այդ ագրեսիան, պահպանվեց Սիրիայի անկախությունը և պահպանվեց խաղաղությունը Մերձավոր և Միջին Արևելքում: 1958 թ. սովետական պետությունը վճռականորեն հանդես եկավ ընդդեմ ԱՄՆ-ի և Անգլիայի ինտերվենցիայի Լիբանանում և Հորդանանում:

Սովետական կառավարությունը ակտիվորեն պաշտպանել է Աֆրիկյան մայր ցամաքի ժողովուրդների ազատագրական շարժումը անկախության և ինքնուրույն դարգացման համար: Նա

<sup>19</sup> «ՄՄԿԿ XXII համագումարի նյութերը», էջ 471—472:

ակտիվորեն պաշտպանեց Կոնգրեսի օրինական կառավարությունը՝ ընդդեմ իմպերիալիստական ագրեսիայի, որ ձեռնարկել էին նրա դեմ 1960—1961 թթ.: Սովետական Միությունն անփոփոխ աջակցություն ցույց տվեց Ալժիրի, Անգոլայի և մյուս երկրների ժողովուրդներին զաղութատիրության դեմ նրանց մղած պայքարում:

Սովետական Միությունն օգնության ձեռք մեկնեց իր անկախությունը նվաճած կուբայական ժողովրդին, երբ նա տնտեսական, քաղաքական, ապա նաև ռադիական ճնշման էր ենթարկվում իմպերիալիզմի հիմնական ուժի՝ ԱՄՆ-ի կողմից: Սովետական կառավարությունը բազմիցս նախազգուշացրել է, որ ինքը չի հանդուրժի ագրեսիան ընդդեմ Կուբայի:

Սովետական կառավարությունը հետևողականորեն պայքարում է Հնդկաչինի ժողովուրդների օրինական շահերը հարգելու, նրանց երկրների սուվերենությունը, տերիտորիալ ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը պահպանելու, ամերիկյան իմպերիալիզմի ագրեսիվ գործողություններին վերջ տալու համար:

Ազատագրված երկրների և սոցիալիստական պետությունների միջև լայն համագործակցություն է հաստատված տնտեսական ասպարեզում: Սոցիալիստական երկրների և ամենից առաջ Սովետական Միության ժողովրդական տնտեսության աննախադեպ հաջողությունները լայն հնարավորություններ են ստեղծել մեծածավալ տնտեսական համագործակցություն հաստատելու Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի սուվերեն պետությունների հետ: Այդ համագործակցության ընթացքում սոցիալիստական երկրները արտոնյալ վարկի կարգով ազատագրված պետություններին տրամադրում են առաջնակարգ սարքավորում և տեխնիկական օգնություն գլխավորապես ազգային ծանր արդյունաբերության ձեռնարկություններ կառուցելու համար: Տնտեսական համագործակցությունը, ներառյալ փոխադարձաբար շահավետ առևտուրը, թուլացրեց, իսկ առանձին դեպքերում լիովին վերացրեց օտարերկրյա կապիտալի մենաշնորհ դիրքերը ազգային սուվերեն պետությունների ժողովրդական տնտեսության կարևորագույն ոլորտներում:

Տնտեսական համագործակցությունը սոցիալիստական պետությունների և երիտասարդ ազգային պետությունների միջև իրականացվում է երկկողմանի տնտեսական, առևտրական պայմանագրերով և համաձայնագրերով սահմանված իրավական հիմքերի վրա: Այսպես, օրինակ, տնտեսական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ սովետա-եգիպտական 1958 թ. հա-

մաձայնագիրը նախատեսում է Սովետական Միության համագործակցությունը եգիպտոսի արդյունաբերության մի շարք կարևորագույն ճյուղերի (չեռնահանքային, նավթային, մետալուրգիական, մեքենաշինական և այլն) զարգացման գործում, երկրաբանական հետախուզական աշխատանքներ կատարելու, արդյունաբերության համար որակյալ կազմեր պատրաստելու ասպարեզում և այլն: Առանձնահատուկ նշանակություն ունի Արաբական Միացյալ Հանրապետության և ՍՍՀՄ-ի միջև 1958 թ. կնքած համաձայնագիրը, որը վերաբերում է Սովետական Միության կողմից ԱՄՆ-ին տնտեսական և տեխնիկական օգնություն ցույց տալուն՝ Ասուանի ամբարտակի առաջին հերթի կառուցման համար: Այդ կառույցը երկրի մշակելի հողերը կավելացնի 1/3-ով, իսկ ամբարտակի վրա կառուցված էլեկտրակայանը ավելի էներգիա կտա, քան երկրում եղած բոլոր էլեկտրակայանները միասին վերցրած: Համաձայնագիրը ՍՍՀՄ-ի հետ վճռական դեր խաղաց Արաբական Միացյալ Հանրապետության քաղաքական ու տնտեսական անկախ զարգացումն ապահովելու և իմպերիալիստների դիտավորությունները ձախողելու համար:

Սովետական Միությունը համանման համաձայնագրեր է կրնքել Հնդկաստանի, Քիրմայի, Ցեյլոնի, Մալիի, Սիրիայի և շատ այլ երկրների հետ:

Սոցիալիստական երկրների և Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի երկրների միջև համագործակցություն է իրականացվում կուլտուրական ասպարեզում՝ համապատասխան միջազգային համաձայնագրերի հիման վրա: Այդպիսի համաձայնագրեր Սովետական Միությունը կնքել է Գանայի, Գվինեայի, Հնդկաստանի, Իրաքի, Արաբական Միացյալ Հանրապետության և այլ երկրների հետ: Այդ համաձայնագրերն անհրաժեշտ իրավաբանական և նյութական հիմք են ստեղծում ծավալուն կուլտուրական համագործակցության համար:

Սուվերենության, ներքին գործերին չմիջամտելու, իրավահավասարության սկզբունքների հիման վրա կնքված համաձայնագրերը նախատեսում են համագործակցություն և փոխանակում գիտության, լուսավորության, բարձրագույն կրթության, թատրոնի, կինոյի, ռադիոյի, դրականության, երաժշտության, առողջապահության, սպորտի, տուրիզմի և այլ ասպարեզներում՝ պատվիրակություններ և գիտության առանձին ներկայացուցիչներ, ուսուցիչներ, ուսանողներ ուղարկելու և այլ միջոցներով:

Այսպիսով, Սովետական Միության և մյուս սոցիալիստական

պետութիւնների քաղաքական, տնտեսական ու կուլտուրական համագործակցութիւնը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների հետ իրականացվում է համապատասխան իրավական հիմքի վրա, ինչպես երկկողմանի համաձայնագրերի ուժով, այնպես էլ այն միջազգային կազմակերպութիւնների, մասնավորապես Միավորված Ազգերի, կանոնադրութիւնների հիման վրա, որոնց մասնակիցներն են թե՛ սոցիալիստական երկրները և թե՛ ազատագրված սովետները կրկրները:

Այդ համագործակցութիւնը մի ուսում է, որը դրականորեն է ներգործում ամբողջ համաշխարհային հարաբերութիւնների ընթացքի և միջազգային իրավունքի զարգացման վրա՝ առաջադիմական ուղղութիւնով: ՍՄԿԿ ծրագիրը բարձր է դնահատում երիտասարդ սովետներն պետութիւնների (որոնք չեն մտնում ո՛չ իմպերիալիստական պետութիւնների, ո՛չ էլ սոցիալիստական պետութիւնների սիստեմի մեջ) համագործակցութիւնը սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրների հետ:

«Պատերազմի վտանգի դեմ մղվող պայքարում ազատագրված երկրների ժողովուրդների և սոցիալիստական պետութիւնների ժողովուրդների ջանքերի միավորումը ընդհանուր խաղաղության մեծագույն գործոնն է: Մարդկութեան երկու երրորդի կամքը և ուժը արտահայտող այդ հզոր ճակատը կարող է նահանջի հարկադրել իմպերիալիստական ագրեսորներին:

Սոցիալիզմի երկրները ազատագրութեան համար պայքարող կամ իմպերիալիստական լծից ազատագրված ժողովուրդների անկեղծ և հավատարիմ բարեկամներն են և բաղձակողմանի աջակցութիւն են ցույց տալիս նրանց: Նրանք կողմնակից են գաղութային ճնշման բոլոր ձևերի ոչնչացմանը և ամեն կերպ նպաստում են գաղութային կայսրութիւնների ավերակների վրա ծագող պետութիւնների սովետներնութեան ամրապնդմանը»<sup>20</sup>,—ասված է ՍՄԿԿ ծրագրում:

<sup>20</sup> «ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը», էջ 471:

ԳԼՈՒԽ ՎԵՏԵՐՈՐԴ

ԱՐԳԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒՐՅԵԿՏՆԵՐԸ

§ 1. Միջազգային իրավունքի սուբյեկտների հասկացությունը և տեսակները: § 2. Պետությունները որպես միջազգային իրավունքի նիմնական սուբյեկտներ: § 3. Սովետական միութենական հանրապետությունները միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտներ են: § 4. Ազգերի և ժողովուրդների միջազգային իրավասուբյեկտությունը: § 5. Միջազգային կազմակերպությունների իրավասուբյեկտությունը: § 6. Պետություններին հանաչելը: § 7. Պետությունների իրավահաջորդությունը:

§ 1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒՐՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՍՎԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Միջազգային իրավունքի սուբյեկտ ասելով հասկանում ենք, թե ով է, որ օժտված է միջազգային իրավասուբյեկտութեամբ և որպես այդպիսին կարող է մասնակցել միջազգային բնույթի իրավահարաբերութիւններին, ձեռք բերել միջազգային իրավունքներ և ստանձնել դրանց համապատասխան պարտավորութիւններ: Միջազգային իրավունքի սուբյեկտներ են գլխավորապես սովետներն պետութիւնները: Սովետներն պետութիւնների գլուխ կանգնած մի որևէ գերագույն իշխանութիւն չկա, դրանով էլ բնութագրվում է միջազգային իրավունքի սուբյեկտների կարևորագույն առանձնահատկութիւնը: Միջազգային իրավունքի գլխավոր սուբյեկտները՝ սովետներն պետութիւնները միաժամանակ միջազգային իրավունքի նորմերի ստեղծողներն ու երաշխավորներն են: Պետութիւնն ամբողջովին վերցրած միջազգային իրավունքի սուբյեկտ է, իսկ նրա առանձին մասերը և օրգանները՝ ոչ: Պետութեան միջազգային իրավասուբյեկտութիւնը որևէ շահով ու ձեռով կախված չէ մյուս

պետությունների կամքից: Պետությունը միջազգային իրավունքի սուբյեկտ է ի ծնե, իր ծագման պահից, իր գոյության փաստի ուժով: Իրավասուբյեկտությունը սուվերեն պետության օրգանական հատկանիշն է:

Պետությունները որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ հավասարազոր են: Պետությունների սուվերեն հավասարությունն արտահայտվում է նրանում, որ նրանցից մեկը մյուսին ենթակա չէ: Միջազգային իրավանորմերի ձևավորման պրոցեսում նույնպես պետություններից յուրաքանչյուրի կամքը իրավական տեսակետից հավասար է մյուսների կամքին, զրան համապատասխան էլ միջազգային կոնֆերանսներում ամեն մի պետություն ունի մեկ ձայն՝ անկախ տերիտորիայի մեծությունից, բնակչության քանակից, տնտեսական զարգացման մակարդակից և սոցիալ-տնտեսական կարգից:

Որպես միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտներ պետություններն օժտված են որոշակի իրավունքներով և ունեն համապատասխան պարտականություններ: Այդ իրավունքների և պարտականությունների համակցությունը կազմում է պետությունների միջազգային իրավասուբյեկտության բովանդակությունը: Միջազգային իրավունքի զարգացման տարբեր էտապներում պետությունների հիմնական իրավունքների ու պարտականությունների ցանկն ու բովանդակությունը փոփոխվել է: Միաժամանակ պետք է նկատենք, որ պետությունների հիմնական իրավունքների ու պարտականությունների հարցի շուրջը միջազգային իրավունքի գիտության մեջ միասնական կարծիք չկա: Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Ա. Ֆերդրոսը գրում է, որ ըստ Վենզանուրի միջազգային իրավունքի գոյություն ունեն նիմնական միջազգային իրավունքներ, եթե դրա տակ հասկանանք այն իրավունքները, որոնք պատկանում են պետություններին անմիջապես նրանց միջազգային իրավասուբյեկտության ուժով, այն դեպքում, երբ մյուս իրավունքների առկայությունը կախված է դեռևս այլ նախադրյալներից: Այսպես, օրինակ, դեսպանական իրավունքի նախադրյալը դեսպան ուղարկելն է, պատերազմի իրավունքինը՝ պատերազմի փաստը, տերիտորիայի նկատմամբ իրավունքի նախադրյալը որոշակի տարածական հարաբերությունների առկայությունն է... Պետությունները տիրապետում են հիմնական իրավունքների... քանի որ առանց այդ իրավունքների առհնարին կլինեն պետությունների խաղաղ գոյակցությունը: Նրանց դադարումով կղազարեք ինքը՝ միջազգային

իրավունքը<sup>1</sup>: 1. Օպենհեյմի կարծիքով դեռ վաղուց հիմնական իրավունքների մեջ մտնում էին գոյության, ինքնապահպանման, հավասարության, անկախության, տերիտորիալ գերիշխանության իրավունքը, միջազգային հարաբերությունների, ինչպես նաև բարի անվան ու համբավի իրավունքը<sup>2</sup>: Ավելի հին տեսությունը գտնում էր, — ասում է Ա. Ֆերդրոսը, — որ հիմնական իրավունքները հինգն են, այն է. անկախության, ինքնապահպանման, հավասարության, պատվի և հաղորդակցության իրավունք<sup>3</sup>:

Ռուս ազանավոր միջազգայնագետ, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Մարտենսը տալիս է պետության հիմնական միջազգային իրավունքների հետևյալ համակարգը՝ 1. ինքնապահպանման (ինքնապաշտպանության իրավունք), 2. տերիտորիալ-նուստի իրավունք, 3. անկախության իրավունք, 4. հարգանքի և պատվի իրավունք, 5. միջազգային հաղորդակցության իրավունք, 6. հարկադրելու իրավունք<sup>4</sup>:

Ֆրանսիացի իրավագետ Դեպանյեի կարծիքով պետության հիմնական իրավունքները պետք է բաժանել երկու խմբի՝ բացարձակ և հարաբերական: Առաջին խմբի մեջ մտնում են՝ 1. ներքին և արտաքին սուվերենություն, 2. իրավահավասարություն, 3. ինքնապահպանման կամ ինքնապաշտպանության իրավունք, 4. փոխադարձ առևտրի իրավունք, 5. փոխադարձ հարգանքի իրավունք, 6. ներկայացուցչության իրավունք: Ըստ Դեպանյեի բացարձակ իրավունքներից սուվերենությունն ու իրավասուբյեկտությունը «պետության հիմքն են կազմում»<sup>5</sup>:

Միջազգային իրավունքի սովետական գիտության մեջ ճանաչում է գտել այն կարծիքը, ըստ որի պետության հիմնական իրավունքների և պարտականությունների իշակետը միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներն են<sup>6</sup>:

Զափանիչ ընդունելով արդի միջազգային իրավունքի հիմ-

<sup>1</sup> А. Фердросс, Международное право, М., 1959, стр. 205.

<sup>2</sup> St'v Международное право, изд. «Международные отношения», 1966, էջ 152:

<sup>3</sup> St'v А. Фердросс, Международное право, էջ 205:

<sup>4</sup> St'v Ф. Мартенс, Международное право цивилизованных народов, 1904, էջ 302—317:

<sup>5</sup> St'v Л. А. Моджорян, Основные права и обязанности государств, 1965, էջ 154:

<sup>6</sup> St'v В. М. Корейский, Проблема основных прав и обязанностей государств, «Советский ежегодник международного права, 1958», М., 1959, էջ 87:

նական սկզբունքները և ելնելով դրանցից, սովետական գրականության մեջ ընդունված է պետության հիմնական իրավունքների ու պարտականությունների ներքոհիշյալ դասակարգումը՝ 1. քաղաքական անկախության իրավունք (սովերենություն), 2. ազգերի և ժողովուրդների ինքնորոշման և սեփական քաղաքական ճակատագիրը ինքնուրույնաբար լուծելու իրավունք, 3. տերիտորիայի անձեռնմխելիության իրավունք, 4. հավասարության իրավունք, 5. միջազգային հաղորդակցության և համագործակցության իրավունք, 6. միջազգային իրավունքի նորմերի ստեղծմանն անմիջականորեն մասնակցելու իրավունք, 7. ժողովուրդների հաղորդակցության պայմաններում խաղաղության իրավունք, 8. ունիվերսալ և ռեզիդենսի միջազգային կազմակերպություններին մասնակցելու իրավունք<sup>7</sup>:

Պետությունների հիմնական իրավունքների և պարտականությունների միջև գոյություն ունի որոշակի ներքին կապ, կոնկրետ իրավունքից բխում է համազոր պարտականություն, որը պայմանավորված է պետությունների սովերեն հավասարությամբ: Հիմնական իրավունքները օրգանապես հատուկ են պետությանը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտի, առանց այդ իրավունքների նա նորմալ գոյություն ունենալ չի կարող, իսկ դրանց խախտումը սպառնալիքի տակ կղնի միջազգային հաղորդակցությունը: Պետության հիմնական իրավունքները բխում են տվյալ ժամանակաշրջանում գործող միջազգային իրավունքի հիմունքներից, պայմանավորված են պետության սովերենությամբ, նրա անկապտելի հատկության տարրերից են և սահմանված չեն և չեն կարող սահմանվել ինչ-որ վերպետական մարմնի կողմից:

Պետությունների հիմնական միջազգային իրավունքների ու պարտականությունների համառոտ բովանդակությունը հետևյալն է.

ինքնորոշման իրավունք ասելով հասկանում ենք, յուրաքանչյուր ժողովրդի, ազգի իրավունքը ստեղծելու իր ինքնուրույն ազգային պետությունը իր ազգային տերիտորիայի շրջանակներում, ընտրելու պետական կառուցվածքի ձևը (ներառյալ այլ պետությունների հետ ֆեդերացիայի կամ միջազգային միության մեջ մտնելու և նրանից դուրս գալու իրավունք), ազատորեն ընտրելու իր երկրի կառավարման ձևը և սոցիալ-տնտեսական սիստեմը:

Այդ իրավունքին համապատասխանում է միջազգային պար-

տականություն՝ ցուցաբերել հանդուրժողականություն և մեկը մյուսի հետ ապրել հաշտ, որպես բարի դրացիներ, հարգել միմյանց հասարակական-քաղաքական կարգը, կառավարման ձևը: Գաղութատեր պետությունները պարտավոր են անկախություն տալ իրենց կողմից նվաճված երկրներին:

Քաղաքական անկախության իրավունքը (սովերենությունը) ենթադրում է անկաշկանդ կերպով լուծել երկրի ներքին կյանքին ու արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերը:

Այս քաղաքական անկախության իրավունքին համապատասխանում է միջազգային իրավունքի մյուս սուբյեկտների ներքին գործերին չմիջամտելու պարտականությունը, չձեռնարկել որևէ քայլ, որը սպառնալիքի տակ ղնի ուրիշ պետությունների քաղաքական անկախությունը, նրանց սովերենությունը:

Տերիտորիալ անձեռնմխելիության իրավունք ասելով հասկանում ենք, որ պետության տերիտորիան անձեռնմխելի է, պետության բացառիկ իրավունքն է ազատորեն օգտագործել իր տերիտորիայի հարստություններն ու ռեսուրսները: Տերիտորիալ անձեռնմխելիություն նշանակում է, որ պետությունը տերիտորիալ գերիշխանություն, այսինքն՝ բացարձակ տիրապետություն ունի իր տերիտորիայում, որը պետական սովերենության օրգանական մասն է կազմում: Այդ ամենը վերաբերում է պետության՝ իր տերիտորիայի նկատմամբ ունեցած գերագույն իշխանությանը: Մինչդեռ գաղութատեր պետության տերիտորիալ գերիշխանությունը չի տարածվում գաղութների վրա: Գաղութը չի մտնում գաղութատերի պետական տերիտորիայի կազմի մեջ:

Տերիտորիալ գերիշխանությունից բխում է համապատասխան պարտականություն՝ ձեռնպահ մնալ ուրիշ տերիտորիան զավթելուց, շոտնձգել մյուս պետությունների տերիտորիալ ամբողջականության ու անձեռնմխելիության դեմ, չճանաչել ուրիշ տերիտորիայի զավթումը մի երրորդ պետության կողմից, ձեռնպահ մնալ ուրիշ տերիտորիայում քայքայիչ գործունեությունից, զինված խմբեր կազմակերպելուց և այլն: Պետության տերիտորիալ գերիշխանությանը համապատասխանում է միջազգային իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտի պարտականությունը. ձեռնպահ մնալ ուժի սպառնալիքից կամ նրա կիրառումից՝ մյուս պետության սահմանները խախտելու կամ պետությունների միջև սահմանների շուրջը եղած վեճերն ու պրոբլեմները լուծելու նպատակով:

Միջազգային իրավունքի սուբյեկտի հավասարության իրավունքի տակ նկատի ունենք այն, որ պետություններից մեկը չի կա-

<sup>7</sup> См. И. А. Моджорян, Основные права и обязанности государства, т. 2 156, «Международное право», 1966, т. 2 153—156:

րող հավակնել արտոնյալ վիճակի մյուսների նկատմամբ, ենթարկել իր յուրիսդիկցիային: Այստեղից հետևում է գաղութատիրության և կախավածության բոլոր ձևերը վերացնելու պարտականությունը, խտրականության բոլոր տեսակների վերացումը: Պետությունները պարտավոր են հարգել բոլոր ժողովուրդների և պետությունների պատիվն ու արժանապատվությունը, պահպանել մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները բոլորի համար՝ անկախ ուսայի, սեռի, լեզվի և կրոնի տարբերությունից:

Պետությունների սուվերեն հավասարության սկզբունքին չի հակասում տվյալ պատմական դարաշրջանում այս կամ այն պետության ճանաչված դերի և միջազգային հարաբերությունների վրա նրա ունեցած շոշափելի ազդեցության փաստին: Միջազգային իրավունքը ճանաչում է մեծ տերությունների առաջատար դերը միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման գործում, որն ամրապնդված է Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության մեջ: Մեծ տերությունների (ՄՄԶՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Զինաստան) հատուկ իրավունքները պայմանավորված են նրանց վրա դրված պարտականություններով: ՄԱԿ-ի կանոնադրությունը մեծ տերություններին պարտավորեցնում է գործել միաձայնության սկզբունքի հիման վրա:

Միջազգային իրավունքի սուբյեկտ պետությունն իրավունք ունի միջազգային հաղորդակցության և համագործակցության: Այս նշանակում է, որ նա իրավունք ունի քաղաքական, սոցիալական, տնտեսական, կուլտուրական և ամեն այլ ասպարեզում հաղորդակցության մեջ մտնել և համագործակցել միջազգային իրավունքի մյուս սուբյեկտների հետ, իրավունք ունի մասնակցելու միջազգային կոնֆերանսներին, փոխանակել դիվանագիտական, հյուպատոսական և այլ ներկայացուցիչներ: Այս իրավունքին համապատասխանում է՝ իրավահավասարության հիման վրա միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու պարտականությունը՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական կարգերի, ինչպես նաև միջազգային կոնֆերանսներին, խորհրդակցություններին մասնակցելու համար շահագրգռված պետություններին հրավիրելու պարտականությունը:

Միջազգային իրավունքի նորմերի ստեղծմանն անմիջականորեն մասնակցելու իրավունք ասելով հասկանում ենք այն, որ պետությունն իրավունք ունի մասնակցելու միջազգային իրավակարգի սահմանմանն ու պահպանմանը՝ միջազգային ասպարեզում գոր-

ծող վարքագծի կանոնների մշակմանն ու ընդունմանն ակտիվորեն մասնակցելու միջոցով: Այդ իրավունքին էլ համապատասխանում է պայմանագրերից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող միջազգային պարտավորությունները պահպանելու և հարգելու պարտականությունը, ինչպես նաև միջազգային նորմերի խախտման համար պատասխանատվություն կրելու պարտավորությունը:

Խաղաղության իրավունքի տակ նկատի ունենք պետության իրավունքը ակտիվորեն պայքարելու միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման ու ամրապնդման համար, մասնակցելու կոլեկտիվ անվտանգության գործին, ինչպես նաև անհատական և կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունք: Այդ իրավունքին համեմատ պետությունները պարտավոր են միջազգային իրավունքի նորմերին համապատասխան խաղաղ ճանապարհով ու միջոցներով լուծել, հարթել իրենց միջև եղած բոլոր վեճերը, ձեռնպահ մնալ այն բոլոր գործողություններից, որոնք կարող են խախտել կամ վտանգել ենթարկել միջազգային խաղաղությունը և ժողովուրդների անվտանգությունը:

Վերջապես, ունիվերսալ և ռեզիոնալ միջազգային կազմակերպություններին մասնակցելու իրավունք նշանակում է, որ յուրաքանչյուր սուվերեն պետություն պետք է օգտվի այդ կազմակերպություններին անդամակցելու իրավունքից անկախ նրանում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական կարգի: Այս իրավունքին էլ համապատասխանում է միջազգային իրավունքի սուբյեկտների պարտականությունը միջազգային կազմակերպություններում նոր անդամներ ընդունելու ժամանակ շղիմել խտրականության, նպաստել նրանց ընդունմանը, իսկ այդ կազմակերպությունները ծառայեցնել ժողովուրդների տնտեսական ու սոցիալական առաջադիմության շահերին, միջազգային խաղաղության և անվտանգության ամրապնդման նպատակներին:

Միջազգային իրավունքին վերաբերող գրականության մեջ երկար ժամանակ վեճի առարկա է այն հարցը, թե միջազգային կազմակերպություններն, արդյոք, պետք է դիտել որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ: Առանձին հեղինակներ այդ հարցին տալիս են բացասական պատասխան, ուրիշները՝ դրական, երրորդները՝ կիսադրական: Սովետական անվանի միջազգայնագետ, պրոֆեսոր Ս. Բ. Կոխլովի կարծիքով միջազգային իրավունքի սուբյեկտներ չեն նաև միջազգային մարմինները: «Զի կարելի միջազգային իրավունքի սուբյեկտներ դիտել պետությունների ստեղծած

միջազգային բնույթի բաղմաբանակ վարչական մարմինները... Այդ մարմինները չի կարելի դնել նրանց ստեղծած պետությունների կողքին որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ, թեպետև նրանցից մի քանիսին պետությունների համաձայնությամբ շնորհվում են առանձին լիազորություններ՝ հանդես գալու միջազգային շրջանառությունում (օրինակ՝ Միավորված Ազգերի կազմակերպությունը)»<sup>8</sup>։

Միջազգային կազմակերպություններին որևէ ձևով ու չափով միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչելուն կտրականապես դևմ է արտահայտվում ճանաչված միջազգայնագետ, պրոֆեսոր Լ. Ա. Մոջորյանը<sup>9</sup>։

Սովետական այլ հեղինակներ գտնում են, որ միջազգային մարմիններն ու կազմակերպություններն օժտված են իրավասուբյեկտությամբ։

Այսպես կոչված զանաձ պետությունները՝ Սան-Մարինոն, Մոնակոն, Լիխտենշտեյնը, Անդորրան միջազգային իրավասուբյեկտության հարցում սահմանափակված են իրենց «հովանավորների» (Իտալիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Իսպանիա) կողմից, չեն օգտվում միջազգային իրավունքի սուբյեկտի մի շարք հիմնական իրավունքներից և չեն կարող կրել այդ իրավունքներին համապատասխանող պարտականություններ։

Յուրովի է դրվում Վատիկանի միջազգային իրավասուբյեկտության հարցը։ Միջազգային իրավունքի բուրժուական գիտությունը և պրակտիկան ճանաչում են Վատիկանի միջազգային իրավասուբյեկտությունը։ Վատիկանը «իրենից ներկայացնում է յուրատեսակ միջազգային կազմավորում և ձևավորված ավանդության շնորհիվ օգտվում է միջազգային իրավունքի սուբյեկտի որոշ իրավունքներից, դեսպանական ակտիվ և պասսիվ իրավունքից, միջազգային պայմանագրեր կնքելու իրավունքից և այլն»<sup>10</sup>։

Միջազգային իրավունքի սովետական հեղինակները, որպես կանոն, բացասում են Վատիկանի միջազգային իրավասուբյեկտությունը։

Միջազգային իրավունքի ժամանակակից բուրժուական գիտության մեջ արմատավորված է այն կարծիքը, ըստ որի միջազգային իրավունքի սուբյեկտներ են հանդիսանում նաև ֆիզիկա-

կան և իրավաբանական անձերը։ Այդ տեսությունը զարգացնում են Քելզենը, Լաուտերպախսը, Ջեսսպը, Ռուսսոն և ուրիշները։ Այս տեսությունը գիտական տեսակետից հիմնավորված չէ, իսկ քաղաքական նպատակների իմաստով՝ ռեակցիոն է։ Ֆիզիկական անձերին միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչողները իրենց տեսությունը փորձում են հիմնավորել նրանով, որ ֆիզիկական անձերը օժտված են մարդու հիմնական իրավունքներով։ Սակայն բանն այն է, որ ֆիզիկական անձերը օժտված են մարդու հիմնական իրավունքներով ոչ թե այն պատճառով, որ նրանք միջազգային իրավունակություն ունեն, այլ նրա համար, որ միջազգային իրավունքի սուբյեկտ պետությունները պարտավորություն են ըստանձնել «իրենց տերիտորիալ գերիշխանության ոլորտում զբաղվող ֆիզիկական անձերի համար ճանաչել ու ապահովել իրավունքների մի որոշակի միջիմում»<sup>11</sup>։

Ֆիզիկական անձերի համար միջազգային իրավասուբյեկտություն ճանաչելը նպատակ ունի նսեմացնել պետական սուվերենությունը և արդարացնել ուրիշների ներքին գործերին միջամտելու իմպերիալիստական տերությունների պրակտիկան։

Միջազգային իրավունքի սուբյեկտներ չի կարելի համարել նաև իրավաբանական անձերին՝ տնտեսական կազմակերպություններին, ակցիոներական ընկերություններին և այլ միավորումներին, որոնց ներպետական օրենքը ճանաչում է որպես իրավաբանական անձ։ Իրավաբանական անձերը միջազգային ոլորտում հանդես են գալիս ոչ որպես միջպետական հարաբերությունների մասնակիցներ, նրանք միջազգային մասնավոր-իրավական հարաբերությունների մասնակիցներ են, իսկ նման հարաբերությունները կարգավորվում են ոչ թե հանրային, այլ միջազգային մասնավոր իրավունքի նորմերով։ Մյուս կողմից իրավաբանական անձերը գտնվում են իրենց ազգային պետության յուրիսդիկցիայի ներքո և չեն կարող ինքնուրույնաբար հանդես գալ միջազգային հարաբերություններում, նրանց իրավունքները միջազգային հարաբերությունների ասպարեզում սահմանվում են ինչպես ներպետական օրենքով, այնպես էլ միջազգային պայմանագրերով, որոնց մասնակիցները այդ իրավաբանական անձերի ազգային պետություններն են։

Այսպիսով, թե՛ ֆիզիկական անձերը, թե՛ իրավաբանական անձերը միջազգային իրավունքի սուբյեկտներ չեն։

Անդրադառնալով միջազգային իրավունքի սուբյեկտների ա-

<sup>8</sup> «Международное право», 1951, стр. 158.

<sup>9</sup> «Л. А. Моджорян, Основные права и обязанности государств», стр. 19—33:

<sup>10</sup> «Дипломатический словарь», т. 1, стр. 244—245.

<sup>11</sup> Л. А. Моджорян, Субъекты международного права, 1958, стр. 26.



աանձնահատկություններին ներպետական իրավահարաբերությունների մասնակիցների համեմատությամբ, պետք է նկատենք, որ միջազգային իրավունքի առանձնահատկությունը, իրավունքի մյուս ճյուղերի համեմատությամբ, իրավական կարգավորման առարկայի և մեթոդի տեսակետից կանխորոշում է նրանց տարբերությունը նաև սուբյեկտի հարցում: Ներպետական իրավունքի կարգավորման առարկան «կամային հասարակական հարաբերություններն են»<sup>12</sup>, «գործունեության որոշակի տեսակներ, այսինքն՝ յուրաքանչյուր իրավահարաբերության համար մարդկանց որոշակի վարքագիծ, որոշակի հարաբերություններ մարդկանց միջև»<sup>13</sup>: Մինչդեռ միջազգային իրավունքի կարգավորման առարկան հանդիսանում որոշակի միջազգային հարաբերություններ, որոնցում պետությունները հանդես են գալիս զերազույն սուվերեն իրավունքների կրողներ, իշխանության սուբյեկտներ: Ներպետական իրավունքի սուբյեկտներն են ֆիզիկական և իրավաբանական անձերը, որոնց իրավասուբյեկտության ծավալը որոշվում է ազգային-հայրենական օրենսդրությամբ, մինչդեռ միջազգային իրավունքի սուբյեկտ-պետության իրավասուբյեկտության ծավալը որևէ մեկի կողմից չի սահմանվում, այլ պայմանավորված է նրա անկապտելի հատկանիշով՝ պետական սուվերենությամբ:

**§ 2. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐ ԶԻՄՆԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ**

Ինչպես տեսանք վերը, միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտներ են պետությունները: Որպես այդպիսին նրանք օժտված են սուվերենությամբ: Սուվերենությունն այն անկապտելի հատկանիշն է, որը կանխորոշում է պետության միջազգային իրավասուբյեկտությունը և որը պետության, որպես միջազգային իրավունքի սուբյեկտի, հիմնական առանձնահատկությունն է:

«Պետությունը որպես մարդկային հասարակության հատուկ քաղաքական կազմակերպություն ունի սպեցիֆիկ հատկություն, որն արտահայտվում է պետական սուվերենության մեջ:

Պետական սուվերենությունը դա պետության յուրաքանչյուր գեր-

իշխանությունն է իր տերիտորիայում և անկախությունը միջազգային հարաբերություններում:

Սուվերենությունը յուրաքանչյուր պետության անհրաժեշտ քաղաքական-իրավաբանական հատկանիշն է, որն անխզելիորեն կապված է նրա հատուկ բնույթի հետ»<sup>14</sup>:

Պետական սուվերենությունից բխում է, որ սովյալ սուբյեկտի շահերը շոշափող ամեն մի միջազգային հարց կարգավորելիս պետք է, որպես կանոն, լինի նրա մասնակցությունը և կամավոր համաձայնությունը: Սուվերենությունը միջազգային իրավունքի սուբյեկտի նախ և առաջ քաղաքական անկախությունն է ինքնուրույնությունը՝ սեփական հայեցողությամբ կարգավորելու իր ներքին գործերը և որոշելու իր միջազգային ստատուսը:

Պետության որպես միջազգային իրավունքի սուբյեկտի անկախ քաղաքական պատկերը բնութագրող սուվերենությունը այն զլխավոր իրավաբանական գործոնն է, որի վրա կառուցվում են միջազգային իրավահարաբերությունները, որն ամուր տեղ է գտել միջազգային իրավունքի բազմաթիվ ազդուրններում և մասնավորապես Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության մեջ: Կանոնադրության 2-րդ հոդ. 4-րդ կետում սահմանված է, որ ՄԱԿ-ի բոլոր անդամները իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնալու «ուժով սպառնալիքից կամ նրա կիրառումից ինչպես ամեն մի պետության տերիտորիալ անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այնպես էլ Միավորված Ազգերի նպատակների հետ անհամատեղելի մի որևէ այլ ձևով»: ՄԱԿ-ի կանոնադրությունը ընդգծում է, որ «Կազմակերպությունը հիմնադրված է նրա բոլոր անդամների սուվերեն հավասարության սկզբունքի վրա», և նրա անդամների հարաբերությունները «պետք է կառուցվեն սուվերեն հավասարության սկզբունքը հարգելու վրա» (հոդ. 78):

Սուվերենությունը որպես պետության անհրաժեշտ քաղաքական և իրավաբանական հատկանիշ բնորոշ է պատմական բոլոր տիպի պետություններին: Պետության սուվերենության սոցիալ-քաղաքական բովանդակությունը պայմանավորված է նրա սոցիալ-տնտեսական հիմքով և այն բանով, թե որ դասակարգն է հանդես գալիս սովյալ պետության անունից, որպես հասարակության քաղաքական կազմակերպություն: Այդ պատճառով էլ սուվերենության ռեալ բովանդակությունն ու գաղափարական հիմնավորումը

<sup>12</sup> «Общая теория Советского права», изд. «Юридическая литература», 1966, стр. 17.

<sup>13</sup> «Теория государства и права». Госюриздат, 1955, стр. 412.

<sup>14</sup> Н. А. Ушаков, Суверенитет в современном международном праве, 1963, стр. 6.

վորոտիվում է պատմական զարգացմանը զուգընթաց՝ կապված հասարակական-տնտեսական ֆորմացիայի բնույթի հետ, այսինքն՝ հասարակության տնտեսական քաղաքին և իդեոլոգիական վերնաշենքին համեմատ, որի մասն է ինքը սուվերենությունը:

Սուվերենությունը որպես քաղաքական և իրավաբանական ըսկզբունք շատ թիչ լիակատար հիմնավորում է ստանում ֆեոդալական մասնատվածության վերացման և խոշոր կենտրոնացված պետությունների ազգային՝ Եվրոպայի արևմուտքում և բազմազգ՝ Եվրոպայի արևելքում ձևավորվելու շրջանում: Միահեծանության գաղափարախոսները (Բոդենը, Հոբսը Արևմտյան Եվրոպայում, Իվան Պերեսվետովը և Իվան Ահեզը Ռուսաստանում) սուվերենությունը բնորոշում են որպես միապետի գլխապետություն (ВЕРХОВЕНСТВО) և անկախությունը, ընդամին սուվերենության միակ կրողը միապետն է:

Ֆեոդալական կարգերի դեմ մղած պայքարում իշխանության ձգտող բուրժուազիայի գաղափարախոսները (Ռուսոս, Միլես, Լոբեսայեր, Մարատ) առաջ են քաշում «ժողովրդական սուվերենության» գաղափարը: Այս այն շրջանն էր, երբ բուրժուազիան հանդես էր գալիս որպես ֆեոդալական կարգերի դեմ պայքարի ելած բոլոր դասակարգերի ու խավերի դրոշակակիր: Նվաճելով իշխանությունը և ամրապնդելով այն, բուրժուազիան մի կողմ նետեց հեղափոխության շրջանում առաջ քաշած դեմոկրատական լոզունգները, և բուրժուական քաղաքագետներն ու իրավաբանները «ժողովրդական սուվերենության» հասկացության փոխարեն գործի են դնում «ազգի սուվերենություն», «պետության սուվերենություն» հասկացությունները:

Անկախ այն բանից, թե սուվերենությանը քաղաքական և իրավաբանական ինչպիսի բնորոշումներ են տվել ֆեոդալիզմի և բուրժուական կարգերի գաղափարախոսները, սուվերենությունը պատկանել է տվյալ պետության մեջ տիրապետող դասակարգին, որն այն իրականացնում է ինչպես պետական օրգանների լիցոցով, այնպես էլ պետության ներքին ու արտաքին քաղաքականության վրա ներգործելու այլ միջոցներով:

Պետական սուվերենությունը ժողովրդական բնույթ է ձեռք բերում այն ժամանակ, երբ պետությունն ինքն է դառնում ժողովրդրդական: Այս իմաստով քաղաքական տեսակետից սուվերենությունը ժողովրդական բնույթ ունի սոցիալիստական երկրներում: ՍՍՀՄ-ում պետության համաժողովրդական բնույթին համապատասխանում է սուվերենության համաժողովրդական էությունը:

Սուվերենությունը միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից է, և միջազգային իրավական իմաստով նշանակում է պետության անկախությունը ներքին ու արտաքին գործերում: Պետության ներքին կյանքին, ինչպես նաև արտաքին-քաղաքական կյանքին վերաբերող հարցերը մտնում են նրա բացառիկ իրավասության մեջ: Միայն առանձին դեպքերում պետությունը այս կամ այն հարցը կամավորաբար կարող է դարձնել միջազգային համաձայնագրի առարկա (օրինակ՝ պարտավորություն ստանձնել վարելու շեղություն քաղաքականություն կամ ապահովել ազգային փոքրամասնությունների իրավունքները և այլն): Պետության բացառիկ իրավասության մեջ մտնող հարցերին ամեն մի միջամտություն մյուս պետությունների կամ միջազգային մարմինների կողմից ապօրինություն է, քանի որ ոտնձգություն է պետության սուվերենության դեմ և խախտում է պետության ներքին գործերին շփումատելու սկզբունքը:

Միաժամանակ պետք է նկատել, որ սուվերենությունը միջազգային ասպարեզում գործելու անսահմանափակ ազատություն չի ընձեռում: Յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել մյուս պետությունների՝ միջազգային իրավունքով պաշտպանվող իրավունքները, կատարել նրանց հետ կնքած միջազգային պայմանագրերն ու համաձայնագրերը: Այլ կերպ ասած յուրաքանչյուր պետություն իր գործողությունների մեջ ազատ է այն շահով, որ շահով որ չի խախտում մյուս պետությունների համար միջազգային իրավունքով երաշխավորված ազատությունը: Իր սուվերենությունը հարգող պետությունն ինքը պարտավոր է հարգել մյուսների սուվերենությունը, համագործակցել միջազգային հաղորդակցության մյուս սուբյեկտների հետ, փոխադարձ շահերը հաշվի առնելու և համաձայնեցնելու, մեկը մյուսի սուվերենությունը հարգելու հիման վրա: Ուրիշների սուվերենության խախտման հաշվին իր գործերն առաջ տանելը, վիճելի հարցերի շուրջը համաձայնեցված որոշումների հասնելուց հրաժարվելը հակասում են միջազգային իրավունքի սկզբունքներին, իրենց էությունը իմպերիալիզմի համաշխարհային տիրապետության ռեակցիոն գաղափարների դրսևորում են և կարող են հանգեցնել քառսի ու անարխիայի միջազգային հարաբերություններում:

Ներքին գործերին շփումատելու սկզբունքը վերաբերում է ինչպես պետությունների փոխադարձ հարաբերություններին, այնպես էլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հարաբերություններին: Այս դրույթն իր արտացոլումն է գտել

ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդ. 7-րդ կետում, որտեղ ասված է. Միավորված Ազգերի Կազմակերպությունը իրավունք չունի միջամտելու «ըստ էության ցանկացած պետության ներքին իրավասության մեջ մտնող գործերին», կանոնադրությունը չի պահանջում «այդպիսի գործերը ներկայացնել կարգավորման» ՄԱԿ-ին: Պետության ներքին իրավասության մեջ մտնող հարցերի շարքին են դասվում առաջին հերթին սոցիալ-տնտեսական սիստեմի բընույթը, պետական կարգի ու կառավարման ձևերը, ազգայնացման և բնական հարստությունների ու ռեսուրսների օգտագործման վերաբերյալ օրենսդրությունը և օրենսդրությունն ընդհանրապես, օտարերկրացիների ռեժիմը, պետության տերիտորիա մտնելու և այլն:

ՄԱԿ-ի կանոնադրությամբ շմիջամտելու վերաբերյալ գրույթից շեղում թույլատրվում է միայն այն դեպքում, երբ կանոնադրության VII գլխում սահմանված կարգով Անվտանգության Խորհուրդը որոշել է հարկադրական միջոցներ կիրառել՝ խաղաղության պահպանման կամ խախտված խաղաղությունը վերականգնելու նպատակով:

Համաշխարհային կապիտալիզմի սիստեմի ընդհանուր ձգնաժամի շրջանում բուրժուական քաղաքագետներն ու գաղափարախոսները գրոհ են ձեռնարկել պետական սուվերենության դեմ, ասելով, թե իբր այդ սկզբունքը հնացել է և իբր նրա հետագա կիրառումը խոչընդոտ է խաղաղության գործի համար և կհանգեցնի անարխիայի միջազգային հարաբերություններում: Իրականում իմպերիալիզմի ջատագովների նպատակն է ասպարեզից վերացնել սուվերենության սկզբունքը, որպես իրավաբանական պատենշի, որը խոչընդոտում է մոնոպոլիստական կապիտալին՝ նրա էքսպանսիոնիստական քաղաքականության ճանապարհին:

Միջազգային իրավունքի գիտության մեջ և պրակտիկայում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում բարդ պետությունների անդամների միջազգային իրավասուբյեկտության հարցը: Նախ նկատենք, որ եթե խոսքը վերաբերում է կոնֆեդերացիաներին որպես պետությունների միության, ապա, որպես կանոն, կոնֆեդերացիան ամբողջովին վերցրած օժտված չէ միջազգային իրավասուբյեկտությամբ: Միայն առանձին դեպքերում և առանձին հարցերի շուրջը նա կարող է մտնել միջազգային իրավահարաբերությունների մեջ, այն էլ այն շրջանակներում, որը սահմանել են և որի համար լիազորել են կոնֆեդերացիայի անդամ պետությունները: Պետություններն այս կամ այն հարցի շուրջը մտնելով կոն-

ֆեդերատիվ հարաբերությունների մեջ, որոշակի նպատակի համար ստեղծելով պետությունների միություն, լիովին պահպանում են իրենց միջազգային իրավասուբյեկտությունը և հանդես են դալիս որպես միանգամայն ինքնուրույն սուբյեկտներ:

Ինչ վերաբերում է ֆեդերացիայի և նրա անդամների միջազգային իրավասուբյեկտությանը, ապա այս հարցին պատասխան տալու համար պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ գոյություն ունեն տարբեր տիպի և տարբեր սկզբունքներով կազմավորված ֆեդերացիաներ: Բոլոր դեպքերում ֆեդերացիաներն ամբողջովին վերցրած միջազգային իրավունքի սուբյեկտներ են: Միջազգային իրավունքը որևէ արգելք չի սահմանում, որ ֆեդերացիաների անդամները հանդես գան որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ, եթե ներքին օրենսդրությունը՝ ֆեդերացիայի սահմանադրությունը նրանց այդպիսի իրավունք տալիս է:

Բուրժուական տիպի ֆեդերացիաներն իրենց անդամների միջազգային իրավասուբյեկտությունը չեն ճանաչում, նրանց անդամները սուվերեն չեն: Միայն որոշ բուրժուական ֆեդերացիաների սահմանադրությամբ (Շվեյցարիա, ԳՖՀ) ֆեդերացիայի անդամներին իրավունք են տալիս երկրորդական հարցերի շուրջ ռաբերությունների մեջ մտնել և համաձայնագրեր կնքել հարևան պետությունների հետ:

Ինչ վերաբերում է սոցիալիստական տիպի ֆեդերացիաների անդամներին, ապա այստեղ պետք է նկատենք, որ այժմ գոյություն ունեցող սոցիալիստական ֆեդերացիաները կարելի է դասակարգել երկու տեսակի. ֆեդերացիա ինքնավարության հիմունքով (ԽՍՖՍՀ, ՀՍՖՀ)՝ իրենց առանձնահատկություններով և դաշնակցային ֆեդերացիա (ՄՍՀՄ), այսինքն՝ ֆեդերացիա, որն օստեղծվել է սուվերեն սոցիալիստական պետությունների միջև կընքված դաշինքի հիման վրա: Սուվետական դաշնակցային ֆեդերացիայի՝ ՄՍՀՄ-ի անդամները միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտներ են:

§ 3. ՍՈՍԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԷԻ ԼԻՒՐԱՎ ՍՈՒՐԵՅԿՏՆԵՐ ԵՆ

Սուվետական միութենական հանրապետությունների միջազգային իրավասուբյեկտությունը պայմանավորված է նրանց սու-

\* «Սուվետական միութենական հանրապետություն» արտահայտությունը, ինչ

վերեն ազգային պետականությանը և իրավաբանորեն ձևակերպված է ինչպես Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրության, այնպես էլ միութենական հանրապետություններից յուրաքանչյուրի սահմանադրության մեջ:

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, որպես սովերեն սոցիալիստական պետությունների համագործակցության սովետական դաշնակցային ֆեդերացիայի ձև, բնութագրվում է ժողովուրդների փոխհարաբերությունների երկու բաղադրիչներով՝ միութենական պետության հարաբերություններով իր կազմի մեջ մտնող դաշնակից պետությունների հետ և միասնական միութենական պետության շրջանակներում սովերեն սոցիալիստական պետությունների՝ սովետական դաշնակցային ֆեդերացիայի անդամների փոխհարաբերություններով: Միութենական պետության հարաբերությունները Միության կազմի մեջ մտնող հանրապետությունների հետ պետկան-իրավական բնույթ ունեն: Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունն ստեղծելու մասին ընդունված դեկլարացիայում միութենական պետության կազմում սովերեն սոցիալիստական պետությունների փոխհարաբերություններն այսպես են բնութագրվում. «...Միութենական պետությունը կհանդիսանա ժողովուրդների համակցության ու եղբայրական համագործակցության դեպք 1917 թ. հոկտեմբերին զբաղեցրած հիմքերի արժանավույն թագադրումը... կծառայի հուսալի հենարան ընդդեմ համաշխարհային կապիտալիզմի և նոր վճռական քայլ կլինի բոլոր երկրների աշխատավորներին համաշխարհային Սոցիալիստական Սովետական Հանրապետության մեջ միավորելու նախապահին»:

Միասնական միութենական պետության շրջանակներում ան-

կարծիքով, չի արտահայտում չարդի իրավաբանական իմաստը, քանի որ իսպր վերաբերում է ոչ թե առանձին ինքնուրույն սովետական հանրապետության և Միության հարաբերություններին, այլ սովետական ինքնուրույն հանրապետությունների փոխազդած հարաբերություններին: Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը հիմնադրվել է սովետական անկախ հանրապետությունների միջև 1922 թ. դեկտեմբերի 30-ին կնքված դաշինքի պայմանագրի հիման վրա: Այդ դաշինքի մասնակից հանրապետությունները կոչվում են դաշնակից հանրապետություններ, որնմն պետք է ասել ոչ թե «միութենական հանրապետություն», այլ «դաշնակից հանրապետություն», սակայն, որովհետև Հայկական Հանրապետության սահմանադրությունը օգտագործում է «միութենական հանրապետություն» տերմինը, մենք էլ հետևելու ենք այդ որինակին, հասարակ, որ «սովետական դաշնակից հանրապետություն» տերմինը առաջիկայում քաղաքացիական իրավունք կրատանա Սահմանադրությամբ:

կախ սովետական սոցիալիստական հանրապետությունների փոխհարաբերությունների սպառիչ բնութագրից արված է կուսակցության XII համագումարի՝ ազգային հարցին վերաբերող բանաձևի 9-րդ կետում. «Հանրապետությունների միությունը, որ ստեղծվել է առանձին հանրապետությունների բանվորների և գյուղացիների հավասարության ու կամավորության սկզբունքներով, հանդիսանում է պրոլետարիատի առաջին փորձը անկախ երկրները միջազգային փոխհարաբերությունները կարգավորելու գործում և առաջին քայլը՝ աշխատանքի ապագա համաշխարհային Սովետական Հանրապետություն ստեղծելու ուղղությունը»<sup>15</sup>:

Որպես սովերեն պետություն սովետական միութենական հանրապետություններից յուրաքանչյուրն ունի իր տերիտորիան, քաղաքացիությունը, դիվանագիտական և հյուպատոսական հարաբերություններ հաստատելու, միջազգային համաձայնագրեր կնքելու, ազգային զորային միավորումներ ունենալու, ինչպես նաև Միության կազմից ազատորեն դուրս գալու իրավունք: Միութենական սովետական հանրապետությունները կարող են մասնակցել միջազգային կոնֆերանսներին և անդամակցել միջազգային կազմակերպություններին: Ուկրաինական ՍՍՀ-ն և Բելոռուսական ՍՍՀ-ն Միավորված Ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված մի շարք հիմնարկությունների անդամներ են: Այդ նույն հանրապետությունները 1947 թ. հաշտության պայմանագրերի և միջազգային շատ համաձայնագրերի մասնակիցներ են: Նրանք մասնավորապես ստորագրել են Մոսկվայի 1963 թ.՝ միջուկային զենքի փորձարկումներն արդելիլու մասին պայմանագրեր և ընդհանրապես գործուն մասնակցություն ունեն միջազգային կյանքին:

ՍՍՀՄ-ի և նրա կազմի մեջ մտնող միութենական հանրապետությունների իրավասությունները սահմանված են ՍՍՀՄ սահմանադրության 14 և 15 հոդվածներում: ՍՍՀ Միությունը հանդես է գալիս որպես միջազգային միասնական սուբյեկտ և իրականացնում է դաշնակից հանրապետությունների կամավոր ֆեդերացիայի ներկայացուցչությունը միջազգային հարաբերություններում, ՍՍՀՄ-ի անունից կնքում, վավերացնում և զենոնսացնում է միջազգային պայմանագրեր, լուծում է պատերազմի և հաշտության հարցերը, սահմանում է օտարերկրյա պետությունների հետ միութենական

<sup>15</sup>Տե՛ս Ա. Եսայան, Հայաստանի միջազգային իրավական դրությունը, 1967, էջ 319:

հանրապետությունների հարաբերությունների կարգը և իրականացնում է արտաքին առևտրի մենաշնորհը:

Այսպիսով, ՄԱՀՄ-ը և նրա մեջ մտնող հանրապետությունները միջազգային իրավունքի սուբյեկտներ են:

§ 4. ԱԶԳԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՈՐԳՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ

Ազգերի և ժողովուրդների միջազգային իրավասուբյեկտության հարցը ո՛չ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն ունի: Մեր ժամանակներում ազգի իրավասուբյեկտության միջազգային իրավական ըմբռնումը սերտորեն կապված է գաղութատիրության բուլոբ ձևերի վերջնական վերացման, ազգային ազատագրական շարժումներին միջազգային իրավական պաշտպանություն ցույց տալու, անկախության համար պայքարի ելած ազգերին ու ժողովուրդներին միջազգային հաղորդակցության մեջ տեղ տալու հարցերի հետ:

Ազգի սուվերենությունը ենթադրում է ազատորեն ինքնորոշվելու իրավունք՝ լինի այդ առանձին ազգային պետություն ասեղծելու ձևով, թե ուրիշ ազգերի հետ պետական համագործակցության այս կամ այն ձևը սահմանելու միջոցով:

Միջազգային իրավունքի սովետական գոկտրինայում նախաշում են գտել ազգային սուվերենության, պետական սուվերենության և ժողովրդական սուվերենության հասկացությունները, որոնք սերտորեն կապված են մեկը մյուսի հետ: Նեղ առումով նրանցից յուրաքանչյուրի տակ ընդունված է հասկանալ հետևյալը.

Ազգային սուվերենությունն առաջին հերթին նշանակում է յուրաքանչյուր ժողովրդի իրավունքը ասեղծելու իր ինքնուրույն ազգային պետությունը:

Պետական սուվերենությունն նշանակում է պետության ինքնուրույնությունը ներքին և արտաքին քաղաքականության աստարիզում, օտարերկրյա պետություններից անկախ վիճակ:

Ժողովրդական սուվերենությունն նշանակում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի իր ընտրություններ սահմանելու սեփական երկրի սոցիալ-տնտեսական սիստեմը և կառավարման ձևը, այսինքն՝ որոշելու իր քաղաքական, տնտեսական, սոցիալական և իրավական ստատուսը<sup>15</sup>:

Լինելով փոխադարձ կապի մեջ, պետական սուվերենությունն

ու ազգային սուվերենությունը տարբերվում են իրենց ծավալով: Պետական սուվերենության մասին խոսվել է սույն գլխի 2-րդ պարագրաֆում: Ինչ վերաբերում է ազգային սուվերենությանը, ապա նրա տակ լայն առումով հասկանում ենք հետևյալը.

Ազգային սուվերենությունը դա ազգի օբյեկտիվ հատկանիշն է, որը նշանակում է նրա գլխապետությունը իր ճակատագիրը լուծելու հարցում: Այն միջազգային իրավունքում արտահայտվում է հասարակական և քաղաքական կարգը ընտրելու, ազգային սուվերենություն ասեղծելու, ազգային տերիտորիայի ամբողջականության, տնտեսական անկախության, իր կուլտուրան, ազգային պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մյուս ազգերի և ժողովուրդների հետ լիակատար իրավահավասարության և ազգի (ժողովրդի) մյուս սուվերեն իրավունքների համակցության ձևով: Այդ իրավունքների իրականացումը պետք է ապահովվի իսկական ղեմավարտի պայմաններում՝ առաջադիմական հասարակական զարգացման նախադրմանով, ի շահ ժողովրդական լայն զանգվածների, աշխարհում խաղաղությունն ամրապնդելու, ժողովուրդների բարեկամության և մերձեցման նպատակով<sup>17</sup>:

Ազգային սուվերենության սկզբունքի միջազգային իրավական նախաշումն արձանագրված է միջազգային բազմաթիվ վավերագրերում՝ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և, մասնավորապես, գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու վերաբերյալ ղեկավարացիայում, որի մեջ ասված է. «Բոլոր ժողովուրդներն ունեն լիակատար ազատության, իրենց սուվերենությունն իրականացնելու և ազգային տերիտորիայի ամբողջականության անկապտելի իրավունք... Կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները» և, օգտագործելով ինքնորոշման իրավունքը, «իրականացնել իրենց տնտեսական, սոցիալական և կուլտուրական զարգացումը»<sup>18</sup>:

Բուրժուական իրավաբան-միջազգայնագետներից շատերը փորձում են ազգային սուվերենությունը ինչ-որ շրջանակի մեջ դրնել, փորձելով ազգային սուվերենության տակ հասկանալ միայն «ինքնորոշման պահանջը»: Այսպես, օրինակ, ամերիկացի Կ. Ռայտի կարծիքով ազգային սուվերենությունը «կարող է գոյություն ունենալ միայն պոտենցիալում, այլ ոչ թե իրականության մեջ»: Նրա կարծիքով գաղութային ժողովուրդների ազգային սուվերենու-

<sup>15</sup> Տե՛ս «Международное право», 1966, էջ 130—131:

<sup>17</sup> «Современное международное право» (Сборник документов), 1964, стр. 69

թյունը «մշտական մարտակոչ է պետությունների իրավական սուվերենությունը և միջազգային իրավունքի ճկունությունը»: Գաղութատիրերի շահերի արտահայտիչ և պաշտպան բուրժուական տեսարաններն անթույլատրելի են համարում զենքը ձեռքին սուվերենության պաշտպանությունը: Նրանց կարծիքով գաղութատիրերի և անկախության ձգտող ժողովուրդների միջև ծագած վեճերը պետք է լուծվեն միջնորդ դատարանների միջոցով: Ամերիկյան իրավաբաններից մեկը՝ Վ. Փրիդմանը ազգային սուվերենությունը «անախրոնիզմ» է համարում<sup>19</sup>:

Իմպերիալիզմի տիրապետության պայմաններում ազգն ի վիճակի չէ ապրել ինքնուրույն, քանի որ կապիտալիստական կարգերն իրենց հիմքում չեն ընդունում ազգերի իրավահավասարությունը: Այդ պատճառով էլ կապիտալի աշխարհում ազգային ինքնուրույնությունը կարող է երաշխավորված լինել, եթե ազգային սուվերենությունը ամրապնդվի պետական սուվերենությամբ: Այսպիսով, պետական սուվերենությունը կոչված է ապահովել ժողովրդի ազգային սուվերենությունը: Ինքնորոշման իրավունքը հանդես է գալիս որպես ազգային սուվերենության սկզբունքի ճանաչման իրավաբանական արտահայտություն և այդ իմաստով որպես պետական սուվերենության իրավունք<sup>20</sup>:

Ինչպես ասվեց վերը, ազգի սուվերենությունը նրա օբյեկտիվ հատկանիշն է, իսկ ինքնորոշման իրավունքը՝ ազգային սուվերենության իրավաբանական արտահայտությունը, իրավաբանական ձևերից մեկը, ըստ որում ազգի սուվերենությունը նրա մշտական ուղեկիցն է, իսկ ինքնորոշման իրավունքը՝ իր ճակատագիրը տնօրինելու կամաարտահայտության կիրառումը: Ինչպես սուվերենությունը ազգի անկապտելի հատկանիշն է, այնպես էլ ինքնորոշման իրավունքը իր ճակատագիրը տնօրինելու անփոփոխ իրավաբանական հնարավորությունն է: Ազգը կաշկանդված չէ ինքնորոշման իրավունքի իրականացման այսօրվա վիճակով, նա կարող է իր սուվերենության ուժով ինքնորոշման իրավունքի իրականացման նոր քայլի դիմել, եթե խախտվել է նրա ազգային ինքնուրույնությունը, եթե ստեղծված իրազրության պայմաններում նա կամենում է նոր ձևով սահմանել իր իրավական ստատուսը:

Ազգի սուվերենության անկապտելի հատկանիշից բխում է նրա միջազգային իրավասուբյեկտությունը: Ազգը կարող է հան-

դես գալ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ այն պահից, երբ նա ինքնորոշման իրավունքը դրել է գործողության մեջ, և նա իր գործողությունները՝ ազգային շարժումը գլխավորելու համար ստեղծել է այս կամ այն ժամանակավոր մարմինը, որը հանդես է գալիս նրա անունից և մտնում մեծ թե փոքր ժավալի հարաբերությունների մեջ միջազգային իրավունքի արդեն գոյություն ունեցող սուբյեկտների հետ: Ազգի միջազգային իրավասուբյեկտությունը, այսպիսով, վրա է հասնում այն պահից, երբ ազգը թեալոսում է իր պետականության ձևավորման շրջանը:

Պետությունների և ազգերի միջազգային իրավասուբյեկտության նմանությունների ու տարբերությունների, ազգերի ինքնորոշման որպես ազգային սուվերենության կարևորագույն տարրերից մեկի մասին հանգամանորեն կխոսվի յոթերորդ գլխի 9-րդ պարագրաֆում:

## § 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային (միջպետական) կազմակերպությունները կարող են հանդես գալ որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ: Սակայն նրանց միջազգային իրավասուբյեկտությունը սահմանափակ և անանցյալ է: Յուրաքանչյուր պետություն ինքնին միջազգային իրավունքի սուբյեկտ է, դա նրա օրգանական հատկանիշն է: Մինչդեռ միջազգային ոչ մի կազմակերպություն իր հայնցողությունամբ ու կամքով չի կարող միջազգային իրավասուբյեկտության որակ ձեռք բերել, նա այդպիսի իրավաստեղծ կամք էլ չունի: Այս կամ այն միջազգային (միջպետական) կազմակերպության իրավասուբյեկտության ծավալը սահմանվում է նրա ստատուտով՝ այն պետությունների կողմից, որոնք ստեղծել են այդ կազմակերպությունը: Այսպիսով միջազգային կազմակերպությունը միջազգային իրավունքի սուբյեկտ է միայն այն շափով, որ շափով որ այդ կամեցել ու կամենում են կազմակերպության անդամ պետությունները: Որպես այդպիսին միջազգային կազմակերպությունները կարող են մտնել իրավահարաբերությունների մեջ ինչպես պետությունների, այնպես էլ միմյանց հետ, ունենալ իրենց ներկայացուցիչները և նրանց միջոցով պաշտոնական հարաբերություններ իրականացնել պետությունների և համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ:

Միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված են Միավոր-

<sup>19</sup> Տե՛ս «Курс международного права», изд. «Международные отношения», 1966, էջ 131—132:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 132:

ված Ազգերի Կազմակերպությունը, Վարչապետի պայմանագրի կազմակերպությունը, ՄԱԿ-ի մասնագիտացված հիմնարկությունները, Տնտեսական փոխօգնության խորհուրդը և այլն:

Միջազգային իրավասուբյեկտությամբ, թերևս, ՄԱԿ-ն ավելի լայն ծավալով է օժտված, քան մյուս կազմակերպությունները: Կանոնադրության 35, 43, 53, 57, 63, 64, 77, 87 և այլ հոդվածների համաձայն Միավորված Ազգերի Կազմակերպությունը ի դեմս իր օրգանների կարող է համաձայնագրեր կնքել պետությունների և տարբեր միջպետական կազմակերպությունների հետ: ՄԱԿ-ին կից նրա անդամ պետություններն ունեն ներկայացուցչություններ: Կանոնադրության 105 հոդ. համաձայն անդամ-պետություններից յուրաքանչյուրի տերիտորիայում ՄԱԿ-ն օգտվում է արտոնություններից և իմունիտետներից, որոնք անհրաժեշտ են իր նպատակներին հասնելու և ֆունկցիաներն իքնուրույնարար կատարելու համար: Հատկապես պետք է հիշատակել ՄԱԿ-ի կանոնադրության 43-րդ հոդվածը, որտեղ ասված է, որ միջազգային խաղաղությունը վերականգնելու նպատակով ՄԱԿ-ի անդամները պարտավոր են Անվտանգության խորհրդի տրամադրության տակ դնել համապատասխան զինված ուժեր, ըստ որում այդ հանգամանքն իրականացվում է Անվտանգության խորհրդի և ՄԱԿ-ի անդամ պետության կամ պետությունների միջև պատշաճ համաձայնագրեր կնքելու իրավաբանական եղանակով: Կամ մեկ ուրիշ օրինակ. Տնտեսական Փոխօգնության խորհրդի կանոնադրության XIII հոդ. 3-րդ կետի հիման վրա 1959 թ. դեկտեմբերի 14-ին կնքած՝ Տնտեսական Փոխօգնության խորհրդի իրավունակության, արտոնությունների և իմունիտետների վերաբերյալ կոնվենցիայի I հոդ. համաձայն ՏՓԽ-ը համարվում է իրավաբանական անձ և որպես այդպիսին կարող է կնքել համաձայնագրեր, II հոդ. համաձայն նրա շենքերն անձեռնմխելի են և այլն:

Սթի խոստով ենք այն մասին, որ միջազգային (միջպետական) կազմակերպությունները կարող են հանդես գալ որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ իրենց կանոնադրություններով սահմանված շրջանակներում, ապա պետք է նկատի ունենալ այն պարտադիր պայմանը, որ նրանց կանոնադրությունները պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի և հատկապես ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին: Այդ սկզբունքներին հակասող կանոնադրություններով զործող միջազգային կազմակերպությունները չպետք է դիտվեն որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ:

Ընդունելով միջազգային կազմակերպությունների միջազգային

իրավասուբյեկտությունը, պետք է ընդգծել, որ դա չի նշանակում, թե նրանք հավասարեցվում են պետություններին: Բոլոր դեպքերում միջազգային կազմակերպությունների իրավունքներն ածանցյալ են պետությունների սուվերեն իրավունքներից: Միջազգային կազմակերպություններին հատուկ չէ սուվերենություն և պետություններից անկախ սուվերեն կամք, նրանք պետությունների միջև կայացված համաձայնության արդյունք են:

## § 6. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՃԱՆԱԶԵԼԸ

Միջազգային հարաբերությունների մասնակից պետությունների ցանկը մեկընդմիջտ սահմանված բան չէ: Պատմական դարգացման պրոցեսում ամենաբազմապիսի հանգամանքների ուժով ասպարեզից վերանում են առանձին պետություններ և, ընդհակառակը, միջազգային հաղորդակցության ոլորտ են մտնում նոր առաջացած պետություններ:

Մեր դարում նոր պետություններ առաջանում են, գլխավորապես, իմպերիալիզմի գաղութային սխտեմի փլուզման հետևանքով: Նախկին գաղութային երկրները, թոթափելով իմպերիալիզմի լուծը, իրենց անկախ են հռչակում, և կյանքի են կոչվում նոր պետություններ: Նոր պետություններ կարող են առաջանալ գոյություն ունեցող միջազգային իրավունքի սուբյեկտի՝ պետության տրոհման հողի վրա, երբ նախկին պետությունը զաղարում է գոյություն ունենալ և նրա փլատակների վրա ասպարեզ են գալիս նոր անկախ պետություններ: Այդպես կատարվեց Ավստրո-Հունգարական կայսրության հետ, նա տրոհվեց և նրա փլատակների վրա կյանքի կոչվեցին Չեխոսլովակիան, Հունգարիան և Ավստրիան: Նոր պետություններ կարող են առաջանալ տերիտորիալ փոփոխությունների հետևանքով, երբ գոյություն ունեցող պետության կազմից դուրս են գալիս նրա առանձին մասեր, անջատվում և ինքնուրույն պետություններ են հռչակվում: Այդպես կատարվեց ցարական կայսրության հետ: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո սովետական պետության լենինյան ազգային քաղաքականությամբ հռչակված ազգերի ինքնորոշման սկզբունքի հետևողական իրականացման շնորհիվ ցարական կայսրությունից անջատվեցին և անկախ պետություններ հռչակվեցին մի շարք երկրներ (Ֆինլանդիա, Լեհաստան, Ուկրաինա, Հայաստան, Վրաստան և այլն): Կամ ոչ հեռավոր անցյալում

Արաբական Միացյալ Հանրապետության կազմից դուրս եկավ Սիրիան և ինքնուրույն պետություն հռչակվեց, Սինդապուրը դուրս եկավ Մալազիայի կազմից և իրեն ինքնուրույն հանրապետություն հռչակեց: Նոր պետություն կարող է առաջանալ գոյություն ունեցող երկու սուբյեկտների միավորումից, ինչպես, օրինակ, Եգիպտոսն ու Սիրիան միավորվեցին, և ստեղծվեց Արաբական Միացյալ Հանրապետությունը: Այդ միավորման հետևանքով առաջին երկուսը որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ դադարեցին գոյություն ունենալ և, ընդհակառակն, ասպարեզ եկավ միջազգային իրավունքի նոր սուբյեկտ՝ Արաբական Միացյալ Հանրապետությունը: Միջազգային իրավունքի նոր սուբյեկտ կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ մի քանի պետություններ, պահպանելով իրենց իրավասուբյեկտությունը, միավորվում և ըստեղծում են մեկ միութենական պետություն: Այս օրինակի դեպքում և՛ միութենական պետությունը, և՛ նրա կազմի մեջ մտնող պետությունները հանդես են գալիս որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ: Այդպիսի օրինակ են հանդիսանում ՍՄՇՄ-ը և նրա կազմի մեջ մտնող միութենական հանրապետությունները:

Անկախ այն բանից, թե նոր պետությունը ինչպիսի հանդամանքի հետևանքով է ասպարեզ եկել, նա կարիք ունի միջազգային իրավական ճանաչման, որը ճանապարհ է բացում մյուս պետությունների հետ նորմալ և համակողմանի հարաբերությունների մեջ մտնելու համար: Պետության միջազգային իրավական ճանաչման վերաբերյալ տեսության մեջ բազմաթիվ իրավաբանական բնորոշումներ կան<sup>21</sup>: Նպատակահարմար ենք գտնում մեջ բերել «Դիվանագիտական քառարանում» տրված բնորոշումը. «Միջազգային ճանաչումը դիվանագիտական ակտ է, որով գոյություն ունեցող պետությունները հայտարարում են միջազգային ասպարեզում ծագած նոր պետության հետ նորմալ հարաբերություններ հաստատելու մասին»<sup>22</sup>:

Նոր ծագած պետության միջազգային ճանաչումը իրավական ակտ է, նման ճանաչումը իրավաբանական հիմք է հանդիսանում

ճանաչող և ճանաչվող պետությունների միջև իրավահարաբերություններ հաստատելու համար:

Պետության ճանաչման ձևերն ու տեսակները տարբեր են Ճանաչումը լինում է փաստական և պաշտոնական:

«Փաստական ճանաչումն» այն է, որ պետությունը պաշտոնապես շանաչելով նոր ձևավորված պետությանը, նրա հետ մտնում է փաստական հարաբերությունների մեջ այս կամ այն կոնկրետ հարցի կամ հարցերի շուրջը (օրինակ՝ վերավորներին փոխանակելու, գերիների վիճակի, սեփական քաղաքացիների շահերի պաշտպանության հարցերի շուրջը և այլն):

Պաշտոնական ճանաչում կատարվում է հայտարարությամբ, նոտա հղելու, համաձայնագրով և այլ ձևով: Իրավաբանական հետևանքների տեսակետից պաշտոնական ճանաչումը լինում է de facto (դե ֆակտո) և de jure (դե յուրե): Ճանաչման այս երկու տեսակները միմյանցից տարբերվում են մի շարք հատկանիշներով: De facto ճանաչումը ունի ժամանակավոր, ոչ լրիվ, սահմանափակ բնույթ: Որպես կանոն de facto ճանաչման դեպքում ճանաչող ու ճանաչվող պետությունները դիվանագիտական ներկայացուցիչներ չեն փոխանակում: De facto ճանաչումը կարող է հտվերցվել, ըստ որում միջազգային իրավական տեսակետից նման քայլը չի կարող անիրավազոր դիտվել: De facto ճանաչումը անցողիկ է, նա վերանում է, եթե ճանաչման օբյեկտը դադարում է գոյություն ունենալ և կամ փոխարինվում է de jure ճանաչումով: Այսպես, օրինակ, ՍՄՇՄ-ը 1960 թ. հոկտեմբերի 7-ին Ալժիրի Հանրապետությանը ճանաչեց de facto, իսկ 1962 թ. մարտի 19-ին՝ de jure: De facto ճանաչման մյուս բնորոշ հատկանիշն այն է, որ այն չի հանդեցնում ճանաչվող սուբյեկտի օրենսգրքության ճանաչմանը: De facto ճանաչմանը սովորաբար հետևում է առևտրական և սահմանափակ քաղաքական հարաբերությունների հաստատումը՝ ճանաչող պետության և միջազգային իրավունքի նոր սուբյեկտի միջև:

De jure ճանաչումը (երբեմն ասում են դիվանագիտական ճանաչում) լիակատար և վերջնական է: Ճանաչման այս տեսակից հտ կանոններ միջազգային իրավական տեսակետից անթույլատրելի է, դիտվում է որպես խախտում: Միջազգային իրավական պրակտիկայում բացառիկ են այն դեպքերը, երբ պետությունը հտ է վերցնում de jure ճանաչումը: De jure ճանաչումը իրավաբանական լիակատար հիմք է ծառայում ճանաչողի և ճանաչվողի միջև համակողմանի միջազգային քաղաքական, տնտեսական, կուլտուրական

<sup>21</sup> Д. И. Фельдман, Признание государств в современном международном праве. Изд. Казанского университета, 1965.

<sup>22</sup> «Дипломатический словарь», т. II, 1961, стр. 593.



ու այլ բնույթի հարցերի շուրջը հարաբերություններ հաստատելու համար. փոխանակում են դիվանագիտական, հյուպատոսական ներկայացուցիչներ, մտնում են պայմանագրային հարաբերությունների մեջ և այլն:

De jure ճանաչման բնորոշ հատկանիշներից մեկն այն է, որ նա հետագարձ ուժ ունի, այն առումով, որ նոր պետության օրենսդրությունը ճանաչվում է ոչ թե ճանաչման պահից, այլ նրա գոյության օրից:

Պետության ճանաչումն ունի միջազգային մեծ նշանակություն: Բանն այն է, որ առանց ճանաչման պետությունը ի վիճակի չէ լայն ճակատով միջազգային իրավական կապերի մեջ մտնել միջազգային հաղորդակցության մասնակիցների հետ: Որքան էլ կարևոր է պետության միջազգային ճանաչումը, այնուամենայնիվ նա կոնստիտուտիվ (հիմնող) նշանակություն չունի, այսինքն՝ ճանաչմամբ չէ, որ պետությունը գառնում է միջազգային իրավունքի սուբյեկտ: Սույլերեն պետությունն օժտված է այդ հատկանիշով օրգանապես:

Քիչ շնն այն դեպքերը, երբ իմպերիալիստական տերությունները շարաշահում են նոր սուբյեկտների շահազրգովածությունը ճանաչվելու հարցում: Երբեմն այդ տերությունները շտապողականություն են ցուցաբերում նոր ստեղծված և իրենց հնազանդ պետությունների ճանաչման հարցում, ինչպես վարվեց ԱՄՆ-ը 1963 թ. Պանամայի նկատմամբ, Ճապոնիան՝ Մանչժուոյի նկատմամբ 1932 թ., իսկ ուրիշ դեպքերում նրանք համառոտ են հրաժարվում են ճանաչել իրենց համար հաճելի կարգեր չունեցող պետություններին, կամ լավագույն դեպքում ձգձգում են նրանց ճանաչումը: Իմպերիալիստական պետությունները այդպիսի դիրք գրավեցին սոցիալիստական երկրների նկատմամբ:

Ի հակադրություն իմպերիալիստական տերությունների շահամուտական քաղաքականության, սոցիալիստական երկրները առանց որևէ քաղաքական, տնտեսական կամ այլ բնույթի պայման առաջադրելու, ղեկավարվելով ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքով, ճանաչում են անկախություն նվաճած երկրների միջազգային իրավասուբյեկտությունը:

Պետության միջազգային ճանաչման իրավաբանական և քաղաքական նշանակության վերաբերյալ բուրժուական դիտության մեջ տեղ են գտել երկու հիմնական տեսություններ՝ ղեկավարտիվ և կոնստիտուտիվ:

Ըստ ղեկավարտիվ տեսության հետևորդների ճանաչումը մի-

այն ֆիկսացնում, արձանագրում է նոր պետության երևան դալը: Ճանաչումը ոչ այլ ինչ է, քան արձագանք այն մասին, որ ճանաչողներին հայտնի է նոր պետության գոյությունը, հետևապես ճանաչումը միջազգային իրավունքի նոր սուբյեկտ առաջացնող իրավաբանական ախտ չէ, նա ունի միայն ղեկավարտիվ նշանակություն: Պետությունների ճանաչման ղեկավարտիվ տեսությունը երևան եկավ կապիտալիզմի զարգացման և ֆեոդալական կարգերի դեմ բուրժուազիայի պայքարի ժամանակաշրջանում և օբյեկտիվորեն նսպատում էր նոր ծագած պետությունների՝ միջազգային սուբյեկտի մեջ մտնելուն: Նախահեղափոխական Ռուսաստանում այդ տեսության հետևորդներից էին Ֆ. Ֆ. Մարտենսը, Գանեսկին:

Իմպերիալիզմի շրջանում բուրժուական զազափարախուսներն առաջ են քաշում կոնստիտուտիվ տեսությունը, որը նահանջ էր բուրժուական հեղափոխությունների շրջանում աղյարարված ղեկավարատական սկզբունքներից: Այս տեսության կողմնակիցներից են Օպենհեյմը, Քելզենը, Լաուտերպախը: Կոնստիտուտիվ տեսության կողմնակիցները պնդում են, որ յուրաքանչյուր նոր պետություն միջազգային իրավունքի սուբյեկտի որակ է ձևոք բերում այն շափով, որ շափով նա արժանացել է գոյություն ունեցող պետությունների ճանաչմանը: Այլ կերպ ասած, ըստ կոնստիտուտիվ տեսության նոր պետությունը միջազգային իրավունքի սուբյեկտ չէ, քանի դեռ չի ճանաչվել: Այդ տեսությունն իր հիմքում հակադիտական է, իսկ քաղաքական իմաստով՝ ուսակցիոն: Բանն այն է, որ կոնստիտուտիվ տեսության կողմնակիցները նոր պետության իրավասուբյեկտության հարցը կախվածության մեջ են դնում այլ պետությունների քմահաճույքից, այստեղից էլ հետևում է այն, որ նոր պետության ճանաչման հարցը իմպերիալիստական տերությունները դարձնում են քաղաքական սպեկուլյացիայի առարկա, ճանաչվող պետությանը որպես ճանաչման պայման թելադրելով իրենց քաղաքական, տնտեսական ու այլ բնույթի պահանջներ: Լ. Օպենհեյմը ուղղակի գրում է. «Պետությունը միջազգային անձ-միջազգային իրավունքի սուբյեկտ է գառնում միայն ճանաչման միջոցով... Պետությանը ճանաչելով որպես միջազգային հասարակության անդամ, գոյություն ունեցող պետությունները հայտարարում են, որ իրենց կարծիքով նոր պետությունը բավարարում է միջազգային իրավունքի կողմից պահանջվող պետականության պայմաններին: Գործելով այս ձևով՝ գոյություն ունեցող պետությունները իրականացնում են իրենց ամբողջովին դիսկրեցիոն իշխանությունը և կատարում քվադր-դատական պարտականություն:

ներս: Միջազգային իրավունքը նրանց վրա խնդիր է դնում, այդպիսի ֆունկցիա իրականացնելու իրավասու հատուկ օրգանի բացակայության պատճառով, հաստատել՝ գոյություն ունե՞ն, արդյոք, յուրաքանչյուր տվյալ դեպքում միջազգային իրավունքի սահմանած պետականության պայմանները»<sup>23</sup>:

Արդի պայմաններում կոնստիտուտիվ տեսությանը կոչված է արդարացնելու իմպերիալիստական պետությունների թշնամական քաղաքականությունը գաղութատիրության լուծը թոթափած Լրիտասարդ ազգային պետությունների ու սոցիալիստական երկրների նկատմամբ:

Միջազգային իրավունքին հայտնի է նաև կառավարություններին ճանաչելու ինստիտուտը: Կառավարությունների կազմափոխման եղանակները երկուսն են. սահմանադրական և արտասահմանադրական եղանակ: Երբ պետության ներսում կառավարությունները փոփոխվում են երկրում գործող օրենքների հիման վրա, ապա նման դեպքերում նոր կառավարության միջազգային ճանաչման հարց չի ծագում, միայն թե, որպես կանոն, միջազգային քաղաքավարության կարգով օտարերկրյա պետությունների կառավարությունները շնորհավորանք են հղում այդ նոր կառավարությանը՝ ի դեմս նրա պրեմիերի:

Միջազգային պրակտիկայում կառավարության ճանաչման հարցն առաջանում է այն ժամանակ, երբ նա իշխանության գլուխ է անցել հեղափոխության կամ այլ պետական հեղաշրջման կարգով, այսինքն՝ ոչ այնպես, ինչպես սահմանված է երկրի սահմանադրությամբ: Պետությունների գեմոկրատական պրակտիկան և միջազգային իրավունքի դոկտրինան խոսում են այն մասին, որ կառավարությունների ճանաչման հարցում պետությունները ելնում են այն բանից, թե որ կառավարություն է էֆեկտիվ իշխանություն իրականացնում տվյալ երկրում, ըստ որում ճանաչման ենթակա է նա, ով օժտված է փաստական-իրական իշխանությամբ: Նման կառավարությանը մյուս պետությունների կողմից ճանաչելը նշանակում է, որ հին կառավարությունը տվյալ երկրին այլևս չի ներկայացնում, որ ճանաչողի համոզմամբ միջազգային հարաբերություններում միջազգային իրավունքի տվյալ սուբյեկտին միակ ներկայացնողը ճանաչվող կառավարությունն է, և ճանաչողը այ-

սուհետև իր հարաբերությունները տվյալ սուբյեկտի հետ իրականացնելու է այդ նոր կառավարության միջոցով:

Նոր կառավարությունների հարցի շուրջը ձևավորվել ու գործի են դրվել մի շարք դոկտրինաներ: Այդ դոկտրինաներից է այսպես կոչված «Հալշտեյնի դոկտրինան»: Այս դոկտրինան մարմնավորում է Արևմտյան Գերմանիայի ռեանշիստական շրջանների միլիտարիստական նկրտումները և արտահայտվում է նրանում, որ ԳՅՀ-ն դիտվում է որպես միակ գերմանական պետությունը և որպես գերմանական ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչը միջազգային հարաբերություններում: «Հալշտեյնի դոկտրինայի» համաձայն Գերմանական Դեմոկրատական Հանրապետությանը որևէ պետության կողմից ճանաչելը ավտոմատիկորեն կհանդեպի դիվանագիտական հարաբերությունների խզմանը այդ պետության և ԳՅՀ-ի միջև: «Հալշտեյնի դոկտրինան» հակասում է պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ միջազգային իրավունքի հանրաձայն նորմերին, մասնավորապես դիվանագիտական հարաբերությունների վերաբերյալ Վիեննայի 1961 թ. Կոնվենցիայի դրույթներին:

Միջազգային ճանաչման հարցում ԱՄՆ-ի կառավարող շրջաններին ծառայելու եկավ «Տոբարի դոկտրինան»: Կինելով էկվադորի արտաքին գործերի մինիստրը, 1907 թ. Տոբարը ուղղակի կոչ էր անում միջամտել Արևմտյան կիսագնդի հանրապետությունների ներքին գործերին: «Այդ միջամտությունը, — գրում էր նա, — կարող էր կայանալ առնվազն փաստական կառավարություններին ճանաչելուց հրաժարվելու մեջ, կառավարություններ, որոնք ծագել են ընդդեմ սահմանադրությունների հեղափոխության հետևանքով»: Տոբարի դոկտրինան անկենսունակ գտնվեց հենց Արևմտյան կիսագնդի հանրապետությունների բացասական վերաբերմունքի պատճառով:

1930 թ. իր դոկտրինայով հանդես եկավ Մեքսիկայի արտաքին գործերի մինիստր Խ. Էստրադան, որն արգարացիորեն դատարարում էր կառավարությունների ճանաչման ինստիտուտը շարաշահելու պրակտիկան, երբ այս կամ այն պետությունն իր վրա է վերցնում լուծելու՝ «օրինական, թե ապօրինի է նոր ռեժիմը»: Ստեղծվում է այնպիսի պրակտիկա, ասում էր Էստրադան, որը «բացի այն, որ ստանձնում է ուրիշ ազգերի սուվերենության դեմ, այլև մղում է այն բանին, որ վերջիններիս ներքին գործերը կարող են դառնալ... ուրիշ կառավարությունների գնահատման առարկան, որոնք ստանձնում են քննադատի դեր, որը օտարերկրյա պե-

<sup>23</sup> П. Оппенгейм, Международное право, т. I, полутом I, 1948, стр. 137.

տությունները քիմիկոս օրինակի վերաբերյալ դրական կամ բացասական գնահատական է տալու:

Էստրադայի դոկտրինան ուղղված էր Տոբարի դոկտրինայի ինտերվենցիոնիստական էություն դեմ և այդ իմաստով առաջադիմական նշանակություն ունեւր: Էստրադան առաջարկում էր հրաժարվել կառավարությունների «ճանաչման» պրակտիկայից և լուծել տվյալ երկրում իշխանության գլուխ անցած նոր կառավարության հետ դիվանագիտական հարաբերությունները պահպանելու կամ հաստատելու հարցը:

Պետությունների և կառավարությունների ճանաչման ինստիտուտներից բացի միջազգային իրավունքին հայտնի են նաև ապրտամբ և պատերազմող կողմ, ազգի, դիմադրության կազմակերպությունների, վտարանդիական կառավարությունների ճանաչման ինստիտուտները:

Անկախության, սոցիալական անարգարացի կարգերի դեմ մղվող ժողովուրդների պայքարը, քաղաքացիական պատերազմները իրենց մասշտաբներով և խնդիրներով տարբեր աստիճաններ են անցնում: Պայքարի ելած կողմը կարող է ճանաչվել որպես ապրտամբ կողմ: Եթե կողմը «ապտամբ» է ճանաչվել, ապա նրա վրա տարածվում են պատերազմի օրենքներն ու սովորույթները, ապտամբները դիտվում են որպես կոմբատանտներ և ոչ թե հանցագործներ, որոնք հանդես են գալիս ընդդեմ օրինական իշխանության: Այսպիսով, եթե պետությունը վերը նշված նպատակով պայքարի ելած մարդկանց ճանաչել է որպես ապտամբ կողմ, ապա դրանով ճանաչողը իրավազոր է համարում ապտամբի գործողությունները, ճանաչում է նրա գործողությունների օրինականությունը ցամարում, ծովում, թե օդում՝ պայմանով, որ պահպանվեն և հարգվեն միջազգային իրավունքով սահմանված նորմերն ու կանոնները: Ճանաչումը ապտամբներին հնարավորություն է տալիս պայմանադրային, այդ թվում առևտրական հարաբերությունների մեջ մտնել իրենց ճանաչած միջազգային իրավունքի սուբյեկտների հետ:

Երբ ապտամբ կողմի դիրքերը շատ թե քիչ ամուր են, նա վերահսկում է երկրի տերիտորիայի շոշափելի մասը, բավական երկար ժամանակ պայքարում է կենտրոնական կառավարության կամ օտարերկրյա տիրակալի դեմ, ապա շահագրգռված պետությունները, ըստ որում շահագրգռվածության շարժառիթները կարող են տարբեր լինել, ապտամբներին ճանաչում են որպես պատերազմող կողմ: Այս դեպքում, բացի այն, որ վրա են հասնում

ապտամբ կողմ ճանաչելու հետ կապված իրավաբանական հետևանքները, ճանաչողը իրավական տեսակետից հավասարության նշան է դնում այդ պատերազմող կողմ ճանաչվածի և նրա միջև ում դեմ ապտամբել են: Դրա հետևանքը լինում է այն, որ ճանաչողը հավասար հիմունքներով հարաբերություններ է իրականացնում կոնֆլիկտի մեջ ներգրավված կողմերի հետ: Այսպես, օրինակ, 19-րդ դարի կեսին Ամերիկայում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի ժամանակ հարավային նահանգները ճանաչվել էին որպես պատերազմող կողմ, կամ 1936—1939 թթ. իսպանական քաղաքացիական պատերազմի ժամանակ Անդլիան և այլ իմպերիալիստական պետություններ գեներալ Ֆրանկոյի գլխավորած խռովարարներին սկզբում ճանաչեցին ապտամբ, ապա պատերազմող կողմ: Պետությունների մեծ մասը գեներալ Ֆրանկոյին ճանաչեց պատերազմող կողմ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին «մարտնչող Ֆրանսիային» («France combattante») պատերազմող կողմ ճանաչեցին Սովետական Միությունը և հակահիտլերյան կուլիցիայի մյուս մասնակիցները, որոնք նրան իրենց դաշնակիցն էին համարում:

Անցած համաշխարհային պատերազմի ժամանակ միջազգային ճանաչման նոր օբյեկտներ հանդես եկան՝ վտարանդիական կառավարությունները: Ինչպես հայտնի է, հիտլերյան Գերմանիան լիովին օկուպացրել էր մի շարք երկրներ՝ Նորվեգիան, Դանիան, Հոլանդիան, Հարավսլավիան և այլն: Այս երկրների համար ըստեղծվել էր յուրովի իրավիճակ, նրանք գտնվում էին օկուպանտի փաստական իշխանության ներքո, սակայն արտասահմանում գործում էին նրանց ներկայացնող վտարանդիական կառավարությունները: Այս վտարանդիական կառավարություններին ճանաչում էին հակահիտլերյան կուլիցիայի մասնակից պետությունները, իսկ նրանց երկրները համարվում էին դաշնակիցներ:

Միջազգային հարաբերություններին հայտնի է նաև ազգ ճանաչելու պրակտիկան: Ազգ ճանաչելու հարցը գործնականում առաջ քաշվեց առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, այն կապակցությամբ, որ բազմազգ պետությունների կազմի մեջ մտնող մի շարք եվրոպական ազգեր պայքարի էին ելել իրենց ազգային պետություններն ստեղծելու համար: 1916 թ. Ֆրանսիան, 1918 թ. Անդլիան ճանաչեցին «Արտասահմանյան շխական կոմիտեն», իսկ 1917 թ. Ֆրանսիան, Իտալիան, Անդլիան և ԱՄՆ-ը ճանաչեցին «Լեհական ազգային կոմիտեն»: Այս այն ժամանակ

էր, երբ Լեհաստանն ու Չեխոսլովակիան որպէս ինքնուրույն պետութիւններ տակաւին չէին ձեւավորվել: Ազգ՝ ճանաչելուց վրա են հասնում այնպիսի իրավաբանական հետեւանքներ, ինչ-որ պատերազմող կողմ ճանաչելուց:

Մեր ժամանակներում, երբ միջազգային իրավունքը ճանաչում է յուրաքանչյուր ազգի սուվերեն իրավունքը ինքնորոշման հիման վրա ստեղծելու իր ինքնուրույն ազգային պետութիւնը, ազգ ճանաչելու ինստիտուտը, որի տակ հասկանում էին ազգային պետութիւն ստեղծելու իրավունքը, կորցրել է իր իմաստը: Ինքնորոշման իրավունքը ընդհուպ մինչև անջատվելը և անկախ ազգային պետութիւն ստեղծելը յուրաքանչյուր ազգի անկապտելի իրավունքն է, իսկ երբ ինքնուրույն պետութիւն ստեղծելու պրոցեսը հասել է որոշակի ստադիայի, ազգն արդէն ճանաչվում է որպէս միջազգային իրավունքի սուբյեկտ:

### § 7. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրավահաջորդութիւնն ասելով միջազգային իրավունքում հասկանում ենք մեկ պետության իրավունքների և պայտականութիւնների փոխանցումը մեկ ուրիշ պետության: Իրավահաջորդութեան հարցն առաջանում է միջազգային իրավունքի սուբյեկտների ծագելու և վերանալու կապակցութեամբ՝ երբ պետութիւնը տրոհվում է բաղկացուցիչ մասերի կամ երկու և ավելի պետութիւններ միավորվում են մեկ պետության մեջ՝ իրենք դադարելով որպէս ինքնուրույն պետութիւններ գոյութիւն ունենալուց, երբ պետութիւնը պահպանվում է, սակայն նրա առանձին մաս կամ մասեր անջատվում և ինքնուրույն պետութիւն կամ պետութիւններ են կազմում, երբ տերիտորիան մեկ պետութիւնից փոխանցվում է մյուսին: Մեր ժամանակներում, իրավահաջորդութեան հարցը զբոսնում է գաղութատիրութեան փլուզումից անկախ պետութիւնների առաջացման, ինչպէս նաև յուրահատուկ կարգով սոցիալական հեղափոխութեան հետեւանքով միջազգային իրավունքի սուբյեկտի էութեան մեջ տեղի ունեցած արմատական փոփոխութիւնների կապակցութեամբ: Նայած հանգամանքներին իրավահաջորդութիւնը կարող է լինել համապարփակ կամ մասնակի<sup>24</sup>:

Սրբ նոր սուբյեկտն առաջանում է տերիտորիալ փոփոխութիւնների հետեւանքով, ապա իրավահաջորդութեան հարցերը, սովորաբար, կարգավորվում են այդ պրոցեսն իրավաբանորեն ձեւակերպող ակտերով: Վերսալյան սիստեմի պայմանագրերը (1919—1920 թթ.), արձանագրելով առաջին համաշխարհային պատերազմից հետո Կենտրոնական և Արեւելյան Եվրոպայում առաջացած նոր պետութիւնների գոյութեան փաստը յուրովի կարգավորեցին իրավահաջորդութեան հարցերը՝ հիմնականում ֆինանսական պարտավորութիւնների ասպարեզում: Ավստրիայի հետ կնքած Մեն-ժերմենի հաշտութեան պայմանագրով սահմանվում էր, որ յուրաքանչյուր պետութիւն, ում անցել է նախկին Ավստրո-Հունգարական կայսրութեան տերիտորիայի մասը և յուրաքանչյուր պետութիւն, որն առաջացել է այդ նախկին կայսրութեան տրոհվելուց ներառյալ Ավստրիան, իրենց վրա պետք է պատասխանատվութիւն վերցնեն պատերազմն սկսվելու դրութեամբ նախկին ավստրո-հունգարական կառավարութեան երաշխավորած և շերաշխավորած պարտքի մի մասի համար: Այդ պետութիւններից ոչ մեկը, բացառութեամբ Ավստրիայի, պատասխանատու չէ նախկին ավստրո-հունգարական կառավարութեան երաշխավորած ռազմական պարտքերի համար, մյուս կողմից՝ այդ պետութիւններն իրավունք չունենին Ավստրիային պահանջ ներկայացնել իրենց կամ իրենց բաղաբաղիների ձեռքում եղած ռազմական պարտքերի պարտավորագրերով:

Տնտեսական պարտավորութիւնները սկզբունքորեն պահպանվում են ինչպէս մի շարք պետութիւնների միավորումից միջազգային իրավունքի մեկ սուբյեկտ առաջանալու, այնպէս էլ երբ պետութեան տրոհվելուց առաջանում են մի քանի սուբյեկտ: Ավստրո-Հունգարիայի տրոհվելուց հետո նրա տնտեսական պարտավորութիւնները համամասնորեն բաշխվեցին նոր սուբյեկտների վրա շափանիչ ընդունելով վերջիններիս տերիտորիայի շափը, բնակչութեան բանակը, ազգային հարստութիւնը կամ հարկերի այն շափը, որ նրանք մուծել են տրոհված սուբյեկտի բյուջեն:

Ըստ Սերի պայմանագրի նույն սկզբունքով Հայաստանը պետք է իր վրա վերցնէր Օսմանյան կայսրութեան տնտեսական պարտավորութիւնների մի մասը:

Եթէ միջազգային իրավունքի նոր սուբյեկտն առաջացել է երկու կամ ավելի պետութիւնների միավորումից, և եթէ վերջիններս որպէս ինքնուրույն պետութիւններ դադարում են գոյութիւն ունենալուց, իրավահաջորդութեան հարցը կարգավորվում է, սովորաբար, այսպէս. նախկին սուբյեկտների միջազգային պայմանագրերը

<sup>24</sup> Տե՛ս Н. В. Захарова, Влияние социальной революции на силу международного договора, 1966; А. А. Есаиян, Некоторые вопросы правосубъектности и правопреемства в теории международного права, 1963.

պահպանում են իրենց ուժը նրանցից չուրաքանչյուրի տերիտորիա-  
յում, բայց ոչ նոր սուբյեկտի ամբողջ տերիտորիայում: Այսպես,  
օրինակ, երբ Եգիպտոսն ու Սիրիան միավորվեցին և ստեղծվեց  
Արաբական Միացյալ Հանրապետությունը, նրանցից չուրաքան-  
չյուրի կողմից նախկինում կնքած միջազգային պայմանագրերը  
իրենց ուժը պահպանեցին նոր սուբյեկտի, համապատասխանա-  
բար, սիրիական և եգիպտական մասերում:

Պետք է նկատենք, որ թե՛ տերիտորիալ փոփոխումների հե-  
տևանքով և թե՛ վերջին դեպքում նոր սուբյեկտներ առաջանալուց  
իրավահաջորդությունը բացառվում է քաղաքական բնույթի մի-  
ջազգային պայմանագրերի դժով: Օրինակ, Ավստրո-Հունգարիան  
Գերմանիայի դաշնակիցն էր, սակայն, երբ նա տրոհվեց և առա-  
ջացան Չեխոսլովակիան, Հունգարիան և Ավստրիան, վերջիններիս  
և Գերմանիայի փոխհարաբերություններում դաշնակցային պար-  
տավորությունների ու իրավունքների իրավահաջորդությունը բա-  
ցառվում էր:

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միու-  
թյան կազմավորման կապակցությամբ ՍՍՀՄ արտաքին գործերի  
ժողովրդական կոմիտարիատը 1923 թ. հուլիսի 23-ին Մոսկվայում  
օտարերկրյա զիվանագիտական ներկայացուցիչներին տեղեկաց-  
րեց, որ Կենտրոնական գործադիր կոմիտեն հաստատել է նույն  
թվականի հուլիսի 6-ից գործողության մեջ է դրել ՍՍՀՄ կազմելու  
մասին Գեկլարացիան ու Պայմանագիրը՝ որպես Սովետական Սո-  
ցիալիստական Հանրապետությունների Միության հիմնական օ-  
րենք և այդ կապակցությամբ «ՍՍՀՄ Արտգործժողովումսի վրա է  
դրված Միության անունից վարելու միջազգային բոլոր հարաբե-  
րությունները, այդ թվում՝ կյանքում կենսագործելու վերևում հի-  
շատակված բոլոր հանրապետությունների (ՌՍՖՍՀ, ՈՒՍՍՀ, ԲՍՍՀ  
և ԱՍՖՍՀ—Ա. Ե.) կողմից մյուս պետությունների հետ կնքած պայ-  
մանագրերն ու համաձայնագրերը, որոնք համապատասխան հան-  
րապետությունների տերիտորիայում պահպանում են իրենց նախ-  
կին ուժը»<sup>25</sup>:

Տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի իրա-  
վահաջորդության հարցը՝ կապված սոցիալական հեղափոխու-  
թյունների հետ: Պետք է ասել, որ սովետական հեղինակների մոտ  
միասնական կարծիք չկա այս հարցում: Որոշ հեղինակներ գտնում  
են, որ սոցիալիստական հեղափոխության հաղթանակով ձևվում

է միջազգային իրավունքի նոր սուբյեկտ, իսկ հինը վերանում է և  
այդ պատճառով էլ վրա է հասնում իրավահաջորդություն (Ս. Բ.  
Կոխով, Մ. Մ. Ավակով, Գ. Պ. Ջադորոժնի և ուրիշներ): Ֆ. Ի. Կո-  
ժենիկովի խմբագրությամբ 1966 թ. լույս տեսած միջազգային ի-  
րավունքի դասընթացում Գ. Պ. Ջադորոժնին այսպես է գրում.  
Իրավահաջորդության հարցը նախ և առաջ ծագում է այն դեպքում,  
երբ սոցիալական հեղափոխության հետևանքով նախկին պետու-  
թյան փոխարեն առաջանում է նոր պետություն: Ընդամենը բնակ-  
չությունն ու տերիտորիան կարող են մնալ նույնը, սակայն արմա-  
տապես փոխվում է պետության սոցիալական կերպարը<sup>26</sup>:

Սովետական այլ հեղինակների (Ս. Ա. Կորոլին, Լ. Ա. Մոշոր-  
յան, Ն. Վ. Ջախարովա, Ա. Ա. Եսայան և ուրիշներ) կարծիքով սո-  
ցիալական հեղափոխությունները արմատական փոփոխություններ  
են մտցնում միջազգային իրավունքի սուբյեկտի էության մեջ, սա-  
կայն պետության միջազգային իրավասուբյեկտությունը պահ-  
պանվում է անընդմիջելուության կարգով, ուստի և նման դեպքում  
իրավահաջորդության հարց չպետք է առաջանա:

«Սոցիալական հեղափոխությունը չի ոչնչացնում ավյալ ժողովրդ-  
դի պետականությունը, այլ փոխում է նրա դասակարգային էություն-  
ը: Այսպես, օրինակ, սոցիալիստական հեղափոխությունը ոչ մի  
երկրում չի ոչնչացրել ավյալ ժողովրդի պետականությունը: Սոցիա-  
լիստական հեղափոխությունը ոչնչացնում է բուրժուական պետու-  
թյունը՝ որպես ժողովրդին ճնշելու գեներ: Սոցիալիստական հեղա-  
փոխությունը ոչնչացնում է բուրժուական դիկտատուրան և հաստա-  
տում պրոլետարիատի դիկտատուրա: Սակայն այդ ամենը կատար-  
վում է միևնույն միջազգային-իրավական անձի՝ միջազգային իրա-  
վունքի սուբյեկտի շրջանակներում: Հեղափոխությունը կատարվում  
է ոչ թե դատարկության մեջ, այլ պետականորեն ձևավորված հա-  
սարակության ներսում...»

«Ազգային պետականություն» և «պետություն» հասկացու-  
թյունները քննարկելով փոխադարձ կապի մեջ և միջազգային ի-  
րավական պրոբլեմի լույսի տակ, կարելի է ասել, որ միջազգային  
իրավասուբյեկտության աղբյուրը ավյալ ժողովրդի պետականու-  
թյունն է: Տվյալ սուվերեն պետությունը միջազգային իրավունքի  
սուբյեկտ է ոչ թե նրա համար, որ նրանում քաղաքական իշխա-  
նությունը գտնվում է այս կամ այն հասարակական դասակարգի

<sup>25</sup> «Документы внешней политики СССР», 1962, т. 4, стр. 395—396.

<sup>26</sup> Տե՛ս «Международное право», 1966, էջ 175—176:

ձեռքում, այլ որ առկա է հասարակության քաղաքական կայուն կազմակերպություն»<sup>27</sup>:

Նույն կարծիքն է հայտնում Ն. Վ. Զախարովան. «Միջազգային իրավունքը ճանաչում է պետության միջազգային իրավասուբյեկտության հատկանիշն անկախ այն բանից, թե ինչպիսին է նրա պատմական տիպը: Այդ փաստի հիմքում ընկած են այն նույն պատճառները, որոնք առաջացնում են միջազգային իրավունքի անհրաժեշտությունը և սահմանում նրա դերը որպես իրավունքի, որը կոչված է կարգավորելու հարաբերությունները բոլոր պետությունների միջև»<sup>28</sup>:

Այսպիսով, քանի որ սոցիալական հեղափոխության հաղթանակի հետևանքով միջազգային իրավունքի նոր սուբյեկտ չի առաջանում, ուստի չի ծագում նաև իրավահաջորդության հարցը:

«Մինչև հեղափոխության հաղթանակը առաջացած միջազգային պայմանագրային իրավունքներն ու պարտականությունները պահպանվում և ipso facto փոխանցվում են նոր իշխանությանը: Սակայն, ինչպես ցույց է տալիս պետությունների միջազգային-իրավական պրակտիկան, իշխանության գլուխ անցած նոր հասարակական դասակարգը, արտահայտելով իր սովերեն կամքը, կատարում է անցյալի միջազգային-իրավական ամբողջ ժառանգության վերագնահատում»<sup>29</sup>:

Միջազգային իրավական պրակտիկան ցույց է տալիս, որ անցյալի իրավական ժառանգության նկատմամբ նոր իշխանության վերաբերմունքի հարցում վրա են հասնում լուրջ կազուսներ, երբ նոր կարգը ծագում է իր դարն ապրած շահագործողական հասարակարգի փլատակների վրա և իր դասակարգային էությունը ու խնդիրներով նախկինի բացասումն է, այլ կերպ ասած, երբ խոսքը վերաբերում է իշխանության գլուխ անցած բանվոր դասակարգի վերաբերմունքին նախկին հասարակարգի՝ միջազգային-իրավական ոլորտում թողած ամբողջ ժառանգությանը:

Նոր իշխանության վերաբերմունքը դեպի անցյալից ժառանգած միջազգային իրավունքներն ու պարտականությունները պայմանավորված է ներքին և արտաքին բնույթի հանգամանքների մի

ամբողջ կոմպլեքսով և առաջին հերթին իշխանության գլուխ անցած դասակարգի իրավագիտակցությամբ, այլ պետությունների՝ դեպի նոր իշխանությունն ունեցած վերաբերմունքով, զործող միջազգային իրավունքի դեմոկրատական սկզբունքներով և այլն:

Սոցիալական հեղափոխությունը պետությանը չի զրկում իր իրավունքներից և ավտոմատիկորեն չի ազատում իր միջազգային պարտավորություններից: Նա լրիվ պահպանում է իր իրավունքները պետության ամբողջ տերիտորիայի նկատմամբ, ինչպես նաև տերիտորիայի այն մասերի նկատմամբ, որ գտնվում են ուրիշ պետությունների հսկողության ներքո: Հեղափոխությամբ կյանքի կոչված նոր իշխանությունը լիիրավ տերն է պետության ամբողջ սեփականության՝ որտեղ էլ որ այդ սեփականությունը գտնվելիս լինի: Վերագնահատվում են միջազգային պայմանագրային իրավունքներն ու պարտականությունները՝ շեղյալ են հայտարարվում ստրկացուցիչ, անիրավահավասար, հակաժողովրդական պայմանագրերը և այլն: Որպես կանոն, պահպանում են իրենց ուժն այն պայմանագրերը, որոնք չեն ոտնձգում երկրի շահերի դեմ, ծառայում են ժողովուրդների ու նրանց պետությունների նորմալ հարաբերություններին: Այս առթիվ Վ. Ի. Լենինն ասել է. «Գաղտնի պայմանագրերը պետք է հրապարակվեն: Պետք է վերացվեն աններսիաների և կոնտրիբուցիաների վերաբերյալ կետերը»: Պետք է նկատի ունենալ, որ «կոդոպուշական կառավարությունները ոչ միայն համաձայնության էին գալիս կոդոպուտների մասին, այլև այդպիսի համաձայնագրերի մեջ նրանք զետեղում էին, թե՛ տրնտեսական համաձայնություններ և թե՛ զանազան այլ կետեր՝ բարի-դրացիական հարաբերությունների մասին... Մենք մերժում ենք կոդոպուտների և բնությունների վերաբերյալ բոլոր կետերը, բայց բոլոր այն կետերը, որոնց մեջ պարփակված են բարի-դրացիական պայմաններ ու տնտեսական համաձայնություններ, մենք ուրախությամբ կրնդունենք, զրանք մենք չենք կարող մերժել»<sup>30</sup>:

Այն բոլոր դեպքերում, երբ կառավարությունների փոփոխումը հետևանք չէ երկրի սոցիալ-տնտեսական կարգերի փոփոխման, անկախ այն բանից, թե կառավարությունը փոխվել է սահմանադրական, թե արտասահմանադրական կարգով, իրավահաջորդության հարց չի առաջանում: Այս դեպքում շահանիշ են ընդունում «կառավարությունների փոփոխումն ազգին չի ազատում միջազգային պարտավորություններից» սկզբունքը:

<sup>27</sup> А. А. Есаиян, Некоторые вопросы правосубъектности и правопреемства в теории международного права, 1963, стр. 13, 23.

<sup>28</sup> Н. В. Захарова, Влияние социальной революции на силу международного договора, стр. 127.

<sup>29</sup> А. А. Есаиян, Некоторые вопросы правосубъектности и правопреемства в теории международного права, стр. 19.

<sup>30</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 304:

իրավահաջորդություն չի առաջանում նաև պետությունների կառավարման ձևի փոփոխման կապակցությամբ: Այսպես, օրինակ, նախապատերազմյան Իտալիան սահմանադրական միապետություն էր, իսկ պատերազմից հետո հռչակվեց հանրապետություն, սակայն իրավահաջորդության պրոբլեմ չծագեց, քանի որ միջազգային իրավունքի սուբյեկտը մնաց նախկինը:

Երբեք այս կամ այն տերիտորիան մեկ պետությունից փոխանցվում է մեկ ուրիշ պետության: Այս դեպքում իրավահաջորդություն կատարվում է այսպես կոչված լոկալ պայմանադրերից բխող պարտավորությունների և իրավունքների ասպարեզում, այսինքն՝ այն պայմանագրերի, որոնք անմիջականորեն կապված են փոխանցվող տերիտորիայի հետ:

Արդիական միջազգային-իրավական մեծ հետաքրքրություն է ներկայացնում իրավահաջորդության հարցը, կապված իմպերիալիզմի գաղութային սիստեմի քայքայման հետևանքով միջազգային իրավունքի նոր սուբյեկտների՝ ազգային անկախ պետությունների առաջացման հետ: Երբ դադութը կամ կիսագաղութն անկախ պետություն է հռչակվում, իրավահաջորդության հարցը կարգավորվում է այսպես. պրակտիկան վկայում է, որ անկախություն ձեռք բերած գաղութը կամ կիսագաղութը տերիտորիան ժառանգում է նախկին սահմանների շրջանակներում: Այդ սկզբունքն այժմը համընդհանուր ճանաչում է ստացել: Միաժամանակ համընդհանուր ճանաչում է ստացել այն սկզբունքը, ըստ որի գաղութատիրությունից ազատագրված և անկախություն նվաճած երկիրն ազատ է այն պարտավորություններից, որ դրել էր նրա վրա նախկին մետրոպոլիան, քանի որ գաղութատեր տերություններն իր ժամանակին միջազգային համաձայնագրեր կնքել էին առանց այդ երկրի ժողովրդի մասնակցության և, որպես կանոն, հակառակ նրա կամքի, ինչպես նաև այն պատճառով, որ գաղութացնելով այս կամ այն երկիրը գաղութատերն իրեն այդ երկրի միջազգային պարտավորությունների իրավահաջորդ չէր համարում<sup>21</sup>:

Ազատագրված երկիրն իրավահաջորդն է այն ամբողջ ակտիվի (գործարաններ, բանկեր, ճանապարհներ, ամեն կարգի կառույցներ և այլն), որը պատկանում է մետրոպոլիային և որը, իհարկե, ստեղծվել է գաղութացված ժողովրդի արյան ու քրտինքի գնով:

Անկախություն ձեռք բերած երկիրը կարող է հանդես գալ որպես իրավահաջորդ այն իրավունքների և պարտականությունների,

որոնք բխում են վարչական, իրավական, սոցիալական, հումանիտար և կուլտուրայի հարցերի շուրջը կնքած միջազգային պայմանագրերից և համաձայնագրերից:

Միջազգային իրավունքում իրավահաջորդության օբյեկտներ են՝ 1. պետական տերիտորիան, 2. պետական սեփականությունը՝ երկրի ներսում և նրանից դուրս, 3. միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները:

Ինչպես արդեն ասվել է, միջազգային հարաբերությունների պրակտիկայում իրավահաջորդության վերաբերյալ միասնական կանոններ չեն մշակվել: Իրավահաջորդության նորմերի կողմնակացման հարցերով զբաղվում է 1947 թ. ՄԱԿ-ին կից հիմնադրված միջազգային իրավունքի հանձնաժողովը, որի գործունեության հիմքում դրված է ՄԱԿ-ի նպատակներից մեկը՝ միջազգային իրավունքի պրոգրեսիվ զարգացումը և նրա կողմնակցումը:

<sup>21</sup> Տե՛ս «Дипломатический словарь». 4. II, т. 2 585:

ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՂՐՈՒՆՔՆԵՐԸ

§ 1. Խաղաղ գոյակցության սկզբունքը: § 2. Ռուսի և ուրի սպառնալիցի կիրառման արգելումը: § 3. Միջազգային վեճերը խաղաղ կերպով լուծելու սկզբունքը: § 4. Պետական սուվերենությունը հարգելու սկզբունքը: § 5. Տերիտորիալ անձեռնմխելիության ըսկզբունքը: § 6. Պետությունների իրավահավասարության սկզբունքը: § 7. Պետությունների ներքին գործերին չմիջամտելու ըսկզբունքը: § 8. Ազգերի ինքնուրույն և իրավահավասարության սկզբունքը: § 9. Զինաքափման սկզբունքը: § 10. Մարդու հիմնական իրավունքները հարգելու սկզբունքի ձևավորումը: § 11. Միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու ըսկզբունքը: § 12. Պատասխանատվության սկզբունքը միջազգային իրավունքում: § 13. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների կողմնորոշման պարբերությունը:

Իրավունքի յուրաքանչյուր ճյուղ, լինելով իրավական նորմերի մի համակցություն, ունի իր որոշակի հիմնական սկզբունքները, որոնք բնութագրում են նրա էությունը և արտացոլում նրա նպատակադրությունը պատմական սովյալ էությունում: Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները փոփոխվել ու զարգացել են միջպետական հարաբերությունների մեջ տեղի ունեցած պատմական փոփոխություններին ու տեղաշարժերին համեմատ: Մեկընդմիջտ սահմանված և ընդհանուր կողմից ճանաչված հիմունքներ անհայտ են միջազգային իրավունքին: Միջազգային իրավունքի սկզբունքներն արտացոլում են դարաշրջանի միջազգային հարաբերությունների ոգին, մարմնավորում ժամանակաշրջանի միջազգային քաղաքական դադափարները, որոնք իրացվում և ամրապնդվում են իրավական սկզբունքներում: Պատմական յուրաքանչյուր տիպի հասարակարգին յուրահատուկ են միջազգային իրա-

վունքի համապատասխան սկզբունքներ: Այդ սկզբունքները ձևավորվում են պետությունների փոխհարաբերություններում, նրանց համագործակցության և պայքարի պրոցեսում և ձեռք բերում բուլտրի կողմից պարտադիր կարգով կիրառվելու նշանակություն:

Մեր ժամանակաշրջանի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների ձևավորումն ու զարգացումը պայմանավորված են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի հետևանքով համաշխարհային ասպարեզում տեղի ունեցած արմատական տեղաշարժերով և առաջին հերթին սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երևան գալով: Արդի միջազգային իրավունքի սկզբունքները ձևավորվել են սոցիալիզմի, խաղաղության ու դեմոկրատիայի ուժերի՝ միջազգային ռեակցիայի դեմ մղած երկարամյա հետևողական պայքարի պրոցեսում և ձևակերպվել ու ամրապնդվել են միջազգային իրավունքի բազմաթիվ աղբյուրներում և հատկապես Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության մեջ: Այդ սկզբունքները ունեն համապարտադիր նշանակություն բոլոր պետությունների փոխհարաբերություններում և ենթակա են կիրառման անկախ այն բանից, թե երկրների հարաբերությունները կարգավորող պայմանագրերում և համաձայնագրերում նրանք տեղ գտել են, թե ոչ:

Մեր օրերի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները արտացոլում են կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջանը բնութագրող օրինաչափությունները միջազգային հարաբերություններում, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հարաճուն ներգործությունը մարդկային հասարակության զարգացման ամբողջ ընթացքի վրա, միջպետական հարաբերություններում միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի կիրառման ուլորտն աստիճանաբար ընդլայնվելու համապատկերը:

Միջազգային իրավունքում նրա հիմնական սկզբունքներին հատուկ տեղ հատկացնելը բացատրվում է նրանով, որ այդ ըսկզբունքները սահմանում են պետությունների միջազգային վարքագծի առավել ընդհանուր նորմեր, որոնք կարևոր նշանակություն ունեն խաղաղության և միջազգային անվտանգության ապահովման համար: Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները անշըրրպետված-մեկուսացված չեն մեկը մյուսից, նրանք գտնվում են փոխադարձ կապի մեջ և կազմում են մի հարմոնիկ միասնություն, նրանցից մեկը լրացնում է մյուսին՝ մեկ կողմից արտացոլում է որոշակի հասարակական հարաբերություններ միջազգային ասպարե-



զում և, մյուս կողմից, սպասարկում է այդ հարաբերությունները Այդ սկզբունքների կարևորությունը երևում է նաև նրանից, որ պետությունները, փոխադարձ համաձայնությամբ սահմանելով միջազգային իրավական այս կամ այն նորման, պարտավոր են համակերպվել այդ սկզբունքների հետ, միջազգային իրավունքի նորմերը պետք է բխեն այդ սկզբունքներից, համապատասխանեն դրանց: Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները կազմում են մի սխեմա, որի մեջ առաջնակարգ տեղ է հատկացվում խաղաղ գոյակցության սկզբունքին:

Միջազգային իրավունքի բուրժուական գիտությունը պատշաճ տեղ չի հատկացնում իրավունքի այդ ճյուղի հիմնական սկզբունքների տեսական ընդհանրացմանը, չի ուզում տեսնել համաշխարհային ասպարեզում տեղի ունեցած սոցիալական տեղաշարժերը, որոնք արտացոլված են այդ սկզբունքներում: Միջազգային իրավունքի սովետական գիտությունը կարևոր տեղ է հատկացնում հիմնական սկզբունքների տեսական ընդհանրացմանն ու վերլուծությանը<sup>1</sup>:

Միջազգային իրավունքի սովետական գրականության մեջ<sup>2</sup> հիմնական սկզբունքների ճանաչում ստացած սխեմային համապատասխան շարադրում ենք սկզբունքներից յուրաքանչյուրի համառոտ բովանդակությունը:

§ 1. ԽԱՂԱՂ ԴՈՅՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆԵՐ

Խաղաղ գոյակցության, որպես տարբեր սխեմաների երկրների միջպետական հարաբերությունների միջազգային իրավական սկզբունքի, տեսական ակունքները տեղ են գտել մեկ առանձին վերջրած երկրում սոցիալիստական հեղափոխության և սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին լենինյան ուսմունքում: Բացահայտելով իմպերիալիզմի զարաշրջանում կապիտալիզմի անհամաչափ զարգացման օրինաչափությունը, Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ ստեղծված իրադրության պայմաններում հեղափոխությունը սկզբում կհաղթանակի Թուսաստանում, Թուսաստանը կլի-

նի առաջին սոցիալիստական պետությունը, և նա պատմական մի որոշակի ժամանակահատվածում կապրի ու կզարգանա կապիտալիստական շրջապատման պայմաններում: Այստեղից էլ, բնականաբար, ծագում է այն հարցը, թե ապա ինչպե՞ս և ի՞նչ հիման վրա են կառուցվելու սոցիալիստական պետության և կապիտալիստական աշխարհի երկրների փոխհարաբերությունները: Թրեստ-կոոպերատիվի ծանր բանակցությունների շրջանում, երբ մեկ կողմից առաջ էլքաշվում «հեղափոխական պատերազմի» պահանջը, իսկ մյուս կողմից Տրոցկին առաջարկում էր «պատերազմական դրությունը հայտարարել դադարեցված, բանակը զորացրել ու ետ դարձնել տները, բայց հաշտություն չստորագրել», Վ. Ի. Լենինը հանդես եկավ Սովետական Հանրապետության արտաքին-քաղաքական ու միջազգային-իրավական կարևորագույն սկզբունքներից մեկի հիմնավորմամբ: «Սոցիալիստական հեղափոխության գործերի դրությունը Թուսաստանում պետք է դարձնել մեր սովետական իշխանության միջազգային խնդիրների ամեն մի որոշման հիմքը: Երկրներից մեկում սոցիալիստական կառավարության հաղթանակից հետո, բոլոր հարցերը պետք է լուծել... բացառապես արդեն սկսված սոցիալիստական հեղափոխության զարգացման ու ամրացման համար լավագույն պայմաններ ստեղծելու տեսակետով»<sup>2</sup>: Այդ հրամայական պահանջին համապատասխան Սովետական Թուսաստանն առաջ քաշեց և կապիտալիստական աշխարհի երկրներին հետ իր հարաբերությունների հիմքում դրեց տարբեր սոցիալ-տնտեսական սխեմաներին պատկանող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքը, որն, ապրելով իր զարգացման պրոցեսը, ժամանակակից միջազգային իրավունքի ընդհանրացնող սկզբունքն է դարձել:

Խաղաղ գոյակցության սկզբունքը միջազգային հարաբերություններում արմատավորվել է աստիճանաբար՝ կապիտալիզմի և սոցիալիզմի միջև տեղի ունեցող պայքարի պրոցեսում: Սովետական Թուսաստանն իր գոյության առաջին իսկ օրից հանդես եկավ ընդդեմ պատերազմի որպես միջազգային վեճերի կարգավորման միջոցի: Սովետական պետության արտաքին-քաղաքական և միջազգային-իրավական սկզբունքները բովանդակող առաջին պատմական վավերագիրը՝ Հաշտության մասին դեկրետը, ի լուր աշխարհի ազդարարեց, որ նա մերժում է ամեն կարգի զավթողական պատերազմ և այն համարում է հանցագործություն ընդդեմ մարդ-

<sup>1</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, Г. И. Тукин, Основы современного международного права. Учебное пособие, М., 1956, նույնի. Вопросы теории международного права, 1962, В. Н. Дурденевский и М. И. Лазарев, Пять принципов мирного сосуществования, 1957, «Международное право». Учебный курс под редакцией Ф. И. Коженикова, 1966 և այլն:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 539, 541—542:

կուսիան, «Շարունակիչ այս պատերազմը այն բանի համար,—  
ասված է Գեկրեսում,—թե ուժեղ և հարուստ ազգերի միջև ինչպես  
քաժանեն նրանց կողմից բռնությունը տիրված թույլ ժողովուրդ-  
ներին»։—կառավարությունը համարում է մարդկության դեմ ուղղու-  
ված մեծագույն հանցագործություն և հանդիսավոր կերպով հայ-  
տարարում է իր վճռականությունը՝ անմիջապես ստորագրելու  
այնպիսի հաշտության պայմաններ, որը վերջ է տալիս այս պա-  
տերազմին, առանց բացառության բոլոր ժողովուրդների համար  
հավասարապես արդարացի մատնանշված պայմաններով»<sup>3</sup>։

Մերժելով խաղաղության սովետական առաջարկությունները,  
իմպերիալիստական տերությունները հրաժարվեցին ճանաչել սո-  
ցիալիստական կարգերը Ռուսաստանում, կաղժակերպեցին դավա-  
դրություններ ու դիվերսիաներ, դիմեցին դիվանագիտական մեկու-  
սացման և տնտեսական բլոկադայի քայլերի, անցան դիմված ին-  
տերվենցիայի սովետական իշխանությունը տապալելու և կապի-  
տալիզմը Ռուսաստանում վերականգնելու նպատակով։ Սու մղելով  
իմպերիալիզմի բոլոր ոսնձգությունները, սովետական պետու-  
թյունը հետևողականորեն պայքարում է խաղաղ գոյակցության  
իրադրություն ստեղծելու, կապիտալիստական աշխարհի երկրների  
հետ բարեգրացիական հարաբերություններ և նորմալ տնտեսական  
ու առևտրական կապեր հաստատելու համար։ Այդ խնդրի իրա-  
գործման ճանապարհին սովետական Ռուսաստանի առաջին քայ-  
լերից էր հաշտության պայմանագրերի կնքումը սահմանակից, հա-  
րևան բուրժուական հանրապետությունների՝ էստոնիայի, կիտվա-  
յի, լատվիայի, Ֆինլանդիայի, Լեհաստանի, Վրաստանի և Հայաս-  
տանի հետ 1920 թ. խաղաղ գոյակցության սովետական սկզբուն-  
քը միջազգային իրավական պարտավորության տեսք ընդունեց  
Արևելքի երկրների հետ սովետական Ռուսաստանի կնքած պայ-  
մանագրերում, որոնցով լիակատար իրավահավասարության վրա  
կառուցված հարաբերություններ էին հաստատվում սոցիալիստա-  
կան մեծ տերության և Արևելքի կիսակախյալ պետությունների՝  
Պարսկաստանի, Աֆղանստանի և Թուրքիայի միջև։ Մի քանի տա-  
րի անց, պարտություն կրելով սովետական Ռուսաստանի դեմ  
ձեռնարկած ռազմական ինտերվենցիայում, կապիտալիստական  
աշխարհի ազդեցիկ տերությունները սեփական տնտեսական շա-  
հերի թելադրանքով, աստիճանաբար կանգնեցին սովետական  
երկրի հետ շատ թե քիչ նորմալ հարաբերություններ հաստատելու

ուղու վրա և վերջին հաշվով ստիպված էին դիվանագիտական հա-  
րաբերություններ հաստատել նրա հետ։ Սովետական պետության  
հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելը և տրն-  
տեսական-առևտրական կապերի մեջ մտնելը խոսում էին այն մա-  
սին, որ խաղաղ գոյակցության սկզբունքը ճանապարհ է հարթում  
միջազգային-իրավական ճանաչված սկզբունք դառնալու համար։  
Սովետական կառավարությանը ճանաչելը և նրա հետ դիվանագի-  
տական հարաբերությունների մեջ մտնելը նշանակում էր, որ կա-  
պիտալիստական պետությունները ճանաչում են արտագրության  
միջոցները և գործիքների սեփականության սոցիալիստական ձևի  
իրավահավասարությունը մասնավոր սեփականության հետ միջազ-  
գային ոլորտում, առանց որի անհնարին կլինեին տնտեսական գոր-  
ծարար կապերի հաստատումը սովետական պետության հետ։

Բուրժուական պետությունները շարունակում էին թշնամական  
քաղաքականությունը սովետական պետության նկատմամբ՝ գործի  
դնելով պայքարի բազմապիսի միջոցներ, նպատակ ունենալով նրան  
նեղրավել պատերազմի մեջ, վերացնել սոցիալիստական կարգերը  
մեր երկրում։ Սակայն սովետական Միությունը համբերությամբ  
ետ էր մղում թշնամու գրոհները՝ հենվելով իր աճող հզորության,  
սովետական բարեկամ ժողովուրդների հայրենասիրության, համաշ-  
խարհային պրոլետարիատի աջակցության և օգնության վրա։

Չնայած նրան, որ սովետական Միությանը չէին հրավիրել  
Բրիան-Կելլոգի պակտի մշակմանը (1928 թ.), որը ազդեցիվ պա-  
տերազմը արգելելու, միջպետական վեճերը խաղաղ ճանապարհով  
կարգավորելու մասին առաջին բազմակողմանի պայմանագիրն էր,  
այնուամենայնիվ նա միացավ այդ պակտին։ Սովետական Միու-  
թյունը շարունակելով իր խաղաղասիրական քաղաքականությունը,  
առաջ քաշեց միջազգային իրավունքի հետագա դեմոկրատական  
զարգացման մի ամբողջ ծրագիր։ Նա հայտարարեց, որ իր կար-  
ծիքով պետք է արգելվեն բոլոր տեսակի ազդեցիվ պատերազմ-  
ները, մասնավորապես ժողովրդական ազատագրական շարժում-  
ները անշեղու նպատակով ձեռնարկվող պատերազմները, պետք է  
արգելվեն ինտերվենցիան, բլոկադան, ուրիշ տերիտորիայի ռազ-  
մական օկուպացիան, դիվանագիտական հարաբերությունները  
խղելը և այլն։

Հետագա տարիներին նույնպես սովետական կառավարությունը  
շարունակում է անդադրում պայքարել դինամիստիկ, սպառազի-  
նությունների կրճատման, Եվրոպայում և ամբողջ աշխարհում խա-  
ղաղության ապահովման համար։ Սովետական Միությունը շար-

<sup>3</sup> Վ. Ի. Անիև, Երկր, հ. 26, էջ 297։

ձակման և շեղությունների պակասը է կենթում կապիտալիստական շատ պետությունների հետ, ընդհուպ մինչև այն, որ 1935 թ. փոխադարձ օգնության պայմանագրեր է կնքում Ֆրանսիայի և բուրժուական Չեխոսլովակիայի հետ: Սովետական Միության այդ միջոցառումները խաղաղ գոյակցության սկզբունքի բովանդակությունից բխող քայլեր էին և վկայությունն այն բանի, որ սոցիալ-տնտեսական տարբեր սիստեմների պատկանող պետությունները կարող են համագործակցել ընդհանուր շահ ներկայացնող հարցերի շուրջը և առաջին հերթին միջազգային խաղաղության ու անվտանգության ասպանական համար, երբ կապիտալիստական պետությունները գործեն լրջախոհ և սնկնդրեն Սովետական Միությունից ելնող ողջամիտ առաջարկությունները: Տոգորված միջազգային խաղաղության և ժողովուրդների անվտանգության շահերով, Սովետական Միությունը հետևողականորեն պայքարում էր կոլեկտիվ անվտանգության և ֆաշիստական ագրեսորին համատեղ հակահարված տալու ուղղությամբ: Սակայն նրա ջանքերը ցանկալի արդյունքի չհանդես բերին, քանի որ արևմտյան տերությունները շարունակում էին իրենց արատավոր քաղաքական կուրսը՝ ազդեցիկ դեպի Արևելք ընդդեմ Սովետական Միությանն ուղղելու քաղաքականությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմը նոր ուժով հաստատեց խաղաղ գոյակցության սկզբունքին հետևելու անհրաժեշտությունը: Փորձը ցույց տվեց, որ արևմտյան տերությունների հակասովետական դիրքերից վարվող քաղաքականությունը դատապարտված է ձախողման, իսկ խաղաղ գոյակցության հիման վրա համագործակցությունը Սովետական Միության հետ օրչեկտիվ անհրաժեշտություն է, որի հիման վրա էլ կազմավորվեց հակահիտլերյան կռալիցիան և ՄՍՀՄ-ի ղեկավար ու վճռական դերի պայմաններում հասավ պատմական հաղթանակի: Պատերազմը ցույց տվեց, որ ոչ միայն կարելի է ապրել խաղաղ գոյակցության պայմաններում, այլև համակողմանիորեն համագործակցել ագրեսորին ջախջախելու համար:

Տարբեր սոցիալ-տնտեսական սիստեմների պատկանող պետությունների ռազմա-քաղաքական համագործակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կողմերի համար, այսպես թե այնպես, ընդունելի հող ստեղծեց, որպեսզի խաղաղ գոյակցության սկզբունքը դրվի Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության հիմքում: Կանոնադրության մեջ ուղղակիորեն չի հոլովվում խաղաղ գոյակցության սկզբունքը, սակայն նա ամբողջովին ներծծված է այդ պաղափարով: Կանոնադրության հենց պրի-

ամբուլյաում ազդարարված է, որ կազմակերպության անդամները չի են վճռականությամբ «առաջիկա սերունդներին փրկելու պատերազմի աղետներից», «նորից հավատ հաստատել մարդու հիմնական իրավունքների, մարդկային անձնավորության արժանապատվության և արժեքի նկատմամբ», «ցուցաբերել հանդուրժողականություն և ապրել միատեղ, մեկը մյուսի հետ խաղաղ, ինչպես բարի հարեաններ, և միավորել մեր ուժերը՝ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար»: ՄԱԿ-ի կանոնադրության առաջին գլխում «նպատակներն ու սկզբունքները», որպես իրավաբանական պարտականություն սահմանված է, որ ՄԱԿ-ի խնդիրն է «պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով էֆեկտիվ կոլեկտիվ միջոցառումներ ձեռնարկել՝ խաղաղության դեմ ուղղված սպառնալիքները կանխելու և վերացնելու ու ագրեսիայի ակտերը կամ խաղաղության այլ խախտումները ճնշելու համար, և, արգարության ու միջազգային իրավունքի սկզբունքներին ներդաշնակ, խաղաղ միջոցներով զուլիս բերել այն միջազգային վեճերի կամ սիտուացիաների հարթելը և լուծումը, որոնք կարող են հանգեցնել խաղաղության խախտմանը» (հոդ. 1, կետ 1):

Այսպիսով, ըստ բանի էության, խաղաղ գոյակցության սկզբունքը արմատավորվել է Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության մեջ, դրանով էլ դարձել է միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունք: Խաղաղ գոյակցության սկզբունքը ճանաչում է ստացել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի մի շարք բանաձևերում, մասնավորապես պետությունների միջև խաղաղ և բարիդրացիական հարաբերությունների և նրանց ամրապնդման միջոցառումների վերաբերյալ բանաձևում (1957 թ. դեկտեմբերի 15-ի 1236/XII) և մի շարք այլ բանաձևերում:

Խաղաղ գոյակցության սկզբունքը հաստատուն տեղ է գրավել մեկ կողմից Սովետական Միության ու սոցիալիստական մյուս երկրների և մյուս կողմից՝ կապիտալիստական ու նոր պարզացող պետությունների միջև կնքված պայմանագրերում, համաձայնագրերում, նրանց համատեղ հայտարարություններում ու կոմյունիկաներում և այլն:

Խաղաղ գոյակցության սկզբունքը որպես միջազգային իրավական սկզբունք սերտորեն շաղկապված է միջազգային իրավունքի մյուս հիմնական սկզբունքների հետ և մեկ կողմից հանդիսանում է սոցիալական տարբեր սիստեմի պատկանող պետությունների մոտահարաբերությունների պլխավոր միջազգային իրավական բա-

զան, իսկ մյուս կողմից՝ ենթադրում է մյուս սկզբունքների հետևողական կատարումը, որպես խաղաղ գոյակցության սկզբունքի նախաշումից բխող պարտավորություն: Այս նշանակում է, որ խաղաղ գոյակցության հիման վրա իրենց հարաբերությունները կարգավորելու շուրջը պայմանավորված պետությունները պարտավորվել են ապրել խաղաղ ու հաշտ, վեճերը կարգավորել բացառապես խաղաղ միջոցներով և հետևողականորեն իրականացնել խաղաղ գոյակցությունը ենթադրող և դրանից բխող սկզբունքները, որոնք վերջին հաշվով կազմում են խաղաղ գոյակցության սկզբունքի հիմնական բովանդակությունը: Խաղաղ գոյակցության սկզբունքի հիմքում ընկած են սուվերենությունը և տերիտորիալ ամբողջականությունը հարգելու, պետությունների իրավահավասարության, միմյանց ներքին գործերին շփոթամտելու, ազգերի ինքնորոշման և արդի միջազգային իրավունքը բնութագրող նրա մյուս հիմնական սկզբունքները: Խաղաղ գոյակցության սկզբունքը ենթադրում է նաև զինաթափման սկզբունքը, քանի որ կայուն խաղաղության ապահովման ուղին նրա մեջ է: Խաղաղ գոյակցության սկզբունքը միաժամանակ պետություններին պարտավորեցնում է հարգանք ցուցաբերել դեպի պետությունների տարբեր սոցիալական կարգերը, նրանց կողք-կողքի գոյությունը դիտելով որպես պատմական զարգացման օբյեկտիվ հետևանք արդի էտապում և չփորձել իր սխտեմը ուժի, տրնտեսական կամ ճնշման այլ միջոցների կիրառմամբ պարտադրել ուրիշներին, քանի որ յուրաքանչյուր պետության քաղաքական կարգը նրա ժողովրդի ներքին գործն է:

Խաղաղ գոյակցության սկզբունքը միաժամանակ նկատի ունի համաշխարհային երկու սխտեմների իրավահավասարության գաղափարը, որը բոլոր հեռանկարներն ունի ոչ հեռավոր ապագայում վերաճվելու միջազգային իրավունքի սկզբունքի: Այդպիսին է համաշխարհային դարգացման տենդենցը: Խաղաղ գոյակցությունը ներառում է նաև պարտավորություն զարգացնելու տնտեսական և կուլտուրական համագործակցությունը պետությունների միջև՝ հավասարության և փոխադարձ շահավետության հիման վրա, պետությունների սոցիալական սխտեմների տարբերությունից անկախ<sup>1</sup>:

Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից մեկի՝ խաղաղ գոյակցության սկզբունքի շուրջը սուր գաղափարական պայքար տեղի ունի: «Ուժի դիրքերից» և «սառը պատերազմի» քաղաքականության ջատագովներն ամեն կերպ հակադրվում են խաղաղ

գոյակցության սկզբունքի իրականացմանը: Մյուս կողմից իմպերիալիզմի գաղափարախոսները փորձում են խաղաղ գոյակցության սկզբունքը դիտել որպես միջազգային ասպարեզում գործող ուժերի հարաբերակցության այսպես կոչված status quo, ինչպես նաև փորձում են խաղաղ գոյակցության սկզբունքը տարածել գաղափարական պայքարի ոլորտի վրա:

«...Սոցիալիզմի ամրապնդման, խաղաղության ու ժողովուրդների անվտանգության, խաղաղ գոյակցության համար հետևողական պայքարը ոչ միայն չի հակասում կապիտալիստական աշխարհի աշխատավորների դասակարգային պայքարի շահերին, այլև, ընդհակառակն, նպաստում է այդ պայքարին: Այդպիսի քաղաքականությունը բոլորովին չի նշանակում ո՛չ որևէ սոցիալական ստատուս քվոյի պահպանում, ո՛չ դասակարգերի հաշտեցում, ո՛չ խաղաղ գոյակցություն գաղափարախոսության ասպարեզում»<sup>2</sup> — ասված է ՄՄԿԿ պատվիրակության ղեկավարի՝ Իտալիայի կոմկուսի XII համագումարում արտասանած ճառում:

Սոցիալիզմի, խաղաղության ու զեմոկրատիայի ուժերի հարաձուլվելու համեմատ ղեկավարվում է խաղաղ գոյակցության սկզբունքի կիրառման ոլորտը հակադիր սխտեմների պետությունների փոխհարաբերություններում, իսկ իրերի գոյություն ունեցող վիճակը քաղաքական ուժերի հարաբերակցության տեսակետից, անփոփոխ պահպանելու ձգտումներն ու փորձերը ետ են մղվում հասարակական կյանքի զարգացման օբյեկտիվ օրենքների ուժով, օրենքներ, որոնք խոսում են հողուտ համաշխարհային մասշտաբով սոցիալիզմի հաղթանակի: Ինչ վերաբերում է գաղափարական պայքարի ասպարեզին, ապա այստեղ խաղաղ գոյակցության սկզբունքը կիրառելի չէ (տե՛ս գլ. III):

## § 2. Ուժի եւ Ուժի ՍՊԱՌԱՅԻՆ ԿԻՐԱՄԱՆ ԱՐԿԵՆՈՒՄԸ (ԶԷԱՐԶԱԿՄԱՆ ՍԿԶՐՈՒՄԸ)

Այս սկզբունքը միջազգային իրավունքում ամրապնդվել է համեմատաբար մոտ ժամանակներում, որպես հետևանք առաջադեմ ուժերի և զլխավորապես Սովետական Միության երկարատև և համառ պայքարի՝ բնղղեմ պատերազմի, հանուն խաղաղության ամբողջ աշխարհում:

Ուժի և ուժի սպառնալիքի կիրառումն արգելող կամ չհարձակ-

<sup>1</sup> «Правда», 13-ր փետրվարի, 1969 թ., № 44(18457).

<sup>2</sup> Տե՛ս «Курс международного права», т. II, 1967, էջ 32:

ման սկզբունքը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը միջազգային իրավունքում ճանաչված այսպես կոչված պատերազմի իրավունքի հակադրությունն է: Նախահոկտեմբերյան միջազգային իրավունքը պետություններին չէր արգելում դիմել պատերազմի որպես վեճերի կարգավորման ծայրահեղ միջոցի: Պատերազմը սահմանափակելու և այն մեղմացնելու միջազգային իրավական փորձերը դեռևս իրավաբանորեն չէին արգելում պատերազմը: Այսպես, օրինակ, Հաագայի 1907 թ. Միջազգային բախումների խաղաղ կարգավորման վերաբերյալ կոնվենցիայի 1-ին հոդվածը պայմանագիր կողմերին պարտավորեցնում էր «գործադրել իրենց լուրը ջանքերը, որպեսզի ապահովվի միջազգային անհամաձայնությունների խաղաղ կարգավորումը», իսկ նույն կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում էր, որ «պայմանավորվող Տերությունները համաձայնվում են՝ կարևոր անհամաձայնության կամ ընդհարման դեպքում նախքան զենքի դիմելը, որքանով որ հանգամանքները թույլատրում են, դիմել մեկ կամ մի քանի բարեկամ Տերությունների բարի ծառայություններին կամ միջնորդությանը»<sup>6</sup>: Պատերազմի միջազգային իրավական արգելքը չլուծեց նաև Ազգերի լիգան, որի կանոնադրության 12-րդ հոդ. մեկ կողմից հանձնարարում էր միջպետական վեճերի կարգավորման համար դիմել միջնորդ դատարանին, կամ դատական քննության, իսկ մյուս կողմից նշում էր, որ Լիգայի անդամները «միջնորդ դատարանների որոշումից, կամ դատական վճռից, կամ խորհրդի գեկուցումից հետո մինչև եռամսյա ժամկետը անցնելը ոչ մի դեպքում չպետք է դիմեն պատերազմի»<sup>7</sup>: Ուրեմն, պատերազմը իրավաբանորեն չէր արգելվում, Ազգերի լիգայի կանոնադրությունը միայն ժամկետ էր սահմանում, որն անցնելուց հետո կարելի կլիներ դիմել պատերազմի: Պետությունների միջազգային-իրավական պրակտիկայի դաշտավոր պատմության մեջ Սովետական Ռուսաստանն առաջինն էր, որ պատերազմը հայտարարեց ծանրագույն հանցագործություն ընդդեմ մարդկության և իր գործնական կյանքում հետևողականորեն վարեց միջպետական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու քաղաքականություն: Հաշտության վերաբերյալ պատմական դեկրետն ընդունելուց ի վեր չհարձակման սկզբունքը միջազգային իրավունքում արմատավորվել է երկկողմանի և բազմակողմանի պայմանագրերի միջոցով: Չհարձակման սկզբունքի նշանակությունը

<sup>6</sup> «Международное право в избранных документах», М., 1957, стр. 247-248.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 80:

միջազգային կյանքում այնքան մեծ է, որ պետությունները, չբավարարվելով նրա համընդհանուր ճանաչում ստացած փաստով, այն ամբողջությամբ են պայմանագրերում, որոնցում նախատեսվում է, որ կողմերը պետք է ձեռնպահ մնան մեկը մյուսի վրա հարձակվելուց: Սովետական Միության կողմից կնքած չհարձակման պայմանագրերում նախատեսվում է նաև կողմերի փոխադարձ պարտավորությունը՝ պահպանել շեղություն, եթե պայմանագրի մյուս մասնակիցը ենթարկվի երրորդ պետության հարձակմանը: Նմանօրինակ պայմանագրեր Սովետական Միությունը կնքել է մի շարք երկրների հետ: Նա 1931 թ. ապրիլի 24-ին շեղություն և փոխադարձ չհարձակման պայմանագիր կնքեց Աֆղանստանի, 1932 թ. հունվարի 21-ին չհարձակման պայմանագիր Ֆինլանդիայի հետ, 1933 թ. սեպտեմբերի 2-ին չհարձակման պայմանագիր Իտալիայի, 1925 թ. դեկտեմբերի 17-ին բարեկամության ու շեղությունից պայմանագիր Թուրքիայի, 1941 թ. ապրիլի 13-ին շեղությունից պակտ Ճապոնիայի հետ և այլն: ՍՍՀՄ-ի կնքած երկկողմանի պայմանագրերի առանձնահատկությունն այն է, որ այդ պայմանագրերը, որպես կանոն, բովանդակում էին հատուկ վերապահում, այն մասին, որ եթե պայմանագիր կողմերից մեկը հարձակվի պայմանագրին շմանակցող մի երրորդ պետության վրա, ապա պայմանագիր մյուս կողմը իրավասու է առանց նախազգուշացնելու դենոնսացնել չհարձակման պայմանագիրը:

Ուժի և ուժի սպառնալիքի կիրառումն արգելող սկզբունքը մի շարք բազմակողմ պայմանագրերի հիմնական բովանդակությունն է կազմել: Այդպիսի միջազգային պայմանագրերից են Սահադաբադի պակտը (8-ը հուլիսի 1937 թ.)՝ Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Աֆղանստանի մասնակցությամբ, Լոկառնոյի երաշխավորական պայմանագիրը՝ Գերմանիայի, Ֆելգիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի մասնակցությամբ (16-ը հոկտեմբերի, 1925 թ.), Չհարձակման և համաձայնեցուցիչ պրոցեդուրայի մասին պայմանագիրը (10-ը հոկտեմբերի 1933 թ.) Ամերիկյան մայր ցամաքի և եվրոպական մի քանի պետությունների մասնակցությամբ: Չհարձակման սկզբունքին էր նվիրված Կելլոգ-Քրիանի պակտը կամ որն է Փարիզի պայմանագիրը (27-ը օգոստոսի 1928 թ.) պատերազմը որպես աղբային քաղաքականության զենք արգելելու վերաբերյալ: ՍՍՀՄ-ն այդ պակտին միացավ 1928 թ. սեպտեմբերի 6-ին: Նմանօրինակ պայմանագիր ստորագրելու նախաձեռնությամբ 1958 թ. հանդես եկան Վարշավայի պայմանագրի կազմակերպության անդամները, առաջարկելով

Հհարձակման պակտ կնքել Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության և Վարշավայի պայմանագրի կազմակերպության մեջ մտնող պետությունների միջև:

Միջազգային իրավունքում Հհարձակման սկզբունքի արմատավորման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1933 թ. Հուլիսին ՍՍՀՄ-ի և 10-ը այլ երկրների (Լեհաստան, Ռումինիա, Քուրքիա, Իրան, Աֆղանստան և այլն) միջև ագրեսիայի բնորոշման վերաբերյալ Լոնդոնում կնքված կոնվենցիան: Այս կոնվենցիան հիմնականում վերաբերում էր զինաթափման կոնֆերանսում 1933 թ. ընդունված ագրեսիայի բնորոշման վերաբերյալ ակտի բովանդակությունը, որն ընդունվել էր սովետական առաջարկության հիման վրա:

Լոնդոնի կոնվենցիան սահմանում էր, որ միջազգային կոնֆլիկտում հարձակվող կողմ պետք է համարել այն պետությանը, որն առաջինն է կատարել ներքոհիշյալ գործողություններից մեկն ու մեկը. 1) ուրիշ պետությանը պատերազմ հայտարարելը, 2) ում զինված ուժերը ներխուժել են ուրիշ պետության տերիտորիան, թեկուզ և առանց պատերազմ հայտարարելու, 3) ում ցամաքային, ծովային կամ օդային ուժերը, թեկուզ և առանց պատերազմ հայտարարելու, հարձակվել են ուրիշ տերիտորիայի, նավերի կամ օդանավերի վրա, 4) ուրիշ պետության ամբի կամ նավահանգիստների ծովային բլոկադան, 5) պետության տերիտորիայում կազմակերպված զինված բանզաներին աջակցություն ցույց տալը, որոնք ներխուժում են ուրիշ պետության տերիտորիան: Լոնդոնի կոնվենցիայի համաձայն քաղաքական, ռազմական, տնտեսական կամ այլ կարգի նկատառումներ չեն կարող ագրեսիայի արդարացում հանդիսանալ: Լոնդոնի կոնվենցիայի նշանակությունը նախ և առաջ կայանում է նրանում, որ միջազգային իրավունքում առաջին անգամ տրվում էր ագրեսիայի ստույգ բնորոշումը:

Չհարձակման սկզբունքը, լինելով ժամանակակից միջազգային իրավունքի հանրաճանաչ և համապարտադիր սկզբունք, ամրապնդված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ինչպես նաև Նյուրնբերգի և Տոկիոյի միջազգային ռազմական տրիբունալների կանոնադրություններում: ՄԱԿ-ի կանոնադրությունը կազմակերպության անդամներին պարտավորեցնում է իրենց միջև եղած վեճերը կարգավորել բացառապես խաղաղ միջոցներով և իրենց փոխհա-

րաբերություններում ձեռնպահ մնալ ուժի սպառնալիքից կամ նրա կիրառումից ընդդեմ որևէ պետության տերիտորիալ ամբողջականության և անձեռնմխելիության: ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն պետության կողմից ուժի կիրառումը կարող է տեղի ունենալ միայն անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության դեպքում, եթե ՄԱԿ-ի անդամի դեմ զինված հարձակում կատարվի (հ. 51) կամ Անվտանգության Խորհրդի որոշմամբ՝ ագրեսորի նկատմամբ սանկցիա կիրառելու կարգով (Տոգ. հոդ. 34, 42, 43, 48): Նյուրնբերգի և Տոկիոյի միջազգային ռազմական տրիբունալների կանոնադրությունները ամրապնդել են ագրեսիայի իրավաբանական որակավորումը, որպես ծանրագույն միջազգային հանցագործություն:

Մեր ժամանակներում փոխվել են հարձակման-ագրեսիայի ձևերն ու մեթոդները, որը բացատրվում է ինչպես տեխնիկայի բնագավառում տեղի ունեցած հեղափոխական տեղաշարժերով, այնպես էլ իմպերիալիստական պետությունների ագրեսիվ քաղաքականության իրականացման մեթոդների ու միջոցների կատարման հնարավորությունը շատ շարժով կախված է այն բանից, թե ի՞նչ պետք է հասկանալ ագրեսիա ասելով: Լոնդոնի 1933 թ. կոնվենցիան այս հարցին այժմ բավարար պատասխան տալ չի կարող, քանի որ ժամանակները փոխվել են, փոխվել են ագրեսիայի մեթոդները, միջոցները և տեսակները: Ընկելով ժամանակի պահանջի ոգուց, հուպատերազմյան շրջանում ՍՍՀՄ-ը մի քանի անգամ հանդես է եկել ագրեսիայի բնորոշման նոր առաջարկություններով: Ագրեսիայի բնորոշման հարցը քննարկվել է Գլխավոր ասամբլեայի V (1950 թ.), VI (1951 թ.), VII (1952 թ.), IX (1954 թ.), XII (1957 թ.), XXII (1967 թ.) նստաշրջաններում: Այդ հարցով զբաղվել է ՄԱԿ-ի միջազգային-իրավունքի հանձնաժողովը և դրա համար ստեղծված հատուկ կոմիտեն (1953 թ. և 1956 թ.):

1953 թ. ՍՍՀՄ-ը ագրեսիայի բնորոշման նոր նախագիծ մտցրեց Միավորված Ազգերի Կազմակերպություն: Այս նախագիծը վերաբերում էր Լոնդոնի 1933 թ. կոնվենցիայի գրույթները որոշ լրացումներով: ՄԱԿ-ի հատուկ կոմիտեի նստաշրջանում 1953 թ. օգոստոսին Սովետական Միությունը ներկայացրեց ագրեսիայի բնորոշման նախագիծ, որի մեջ բացի զինված ագրեսիայի բնորոշումից տրված էր նաև անուղղակի, տնտեսական և զաղափարական ագրեսիաների սահմանումը: Ըստ նախագծի անուղղակի ագ-

\* Տե՛ս «Дипломатический словарь», т. II, էջ 222, «Международное право в избранных документах», 1957, т. III, էջ 5—7:

րեսիա էր համարվում որևէ պետության կողմից ընդդեմ այլ պետության քայքայիչ գործունեությունը (տեղորիստական ակտեր, դիվերսիաներ և այլն), ուրիշ պետությունում քաղաքացիական պատերազմ բրբրեղուն նպաստելը, այլ պետության մեջ հեղաշրջումը կամ քաղաքականությունը հօգուտ ազրեսորի թեքելուն նպաստելը: Տնտեսական ազրեսիայի տակ պետք է հասկանալ որևէ պետության կողմից (առաջինը) տնտեսական ճնշման միջոցներ ձեռնարկելը, որոնք խախտում են ուրիշ պետության սուվերենությունը, նրա տնտեսական անկախությունը և սպառնում են այդ պետության տնտեսական կյանքի հիմքերին, ինչպես նաև մեկ պետության կողմից մյուսի դեմ կիրառվող միջոցառումներ, որոնք խոչընդոտում են վերջինին՝ շահագործելու կամ ազգայնացնելու իր բնական հարստությունները: Ազրեսիա է նաև տնտեսական բլոկադան: Քաղաքական ազրեսիայի տակ պետք է հասկանալ պատերազմի պրոպագանդան խրախուսելը, մասսայական ոչնչացման դեմքի կիրառման պրոպագանդան, ոսասայական և ազգային բացառիկության, ուրիշ ժողովուրդների նկատմամբ ատելություն ու արհամարհանքի ֆաշիստական հայացքների պրոպագանդային նպաստելը:

Ազրեսիայի բնորոշման սուվետական առաջարկությունները արժանացան խաղաղասեր բոլոր պետությունների և ժողովուրդների հավանությունը, սակայն իմպերիալիստական ազրեսիվ պետություններն ամեն կերպ խոչընդոտեցին այդ առաջարկություններին միջազգային իրավական տեսք տալուն, նպատակ ունենալով իրենց համար ձեռքերի ազատություն ասպհոսվել նոր ազրեսիաների դիմելու համար: Սուվետական առաջարկություններին առանձնապես դեմ դուրս եկան Ամերիկայի Միացյալ Նահանգների ռեակցիոն կառավարող շրջանները, որոնք գիմեցին ազրեսիայի բնդդեմ Գվատեմալայի, Կուբայի, Կորեական Ժողովրդական Գեմոկրատական Հանրապետության, Կոնգոյի և այժմ էլ շարունակում են նողկալի ազրեսիան Վիետնամի դեմ:

Միջազգային խաղաղության և անվտանգության ասպհոսվման միջազգային իրավական միջոցների թվում կարևոր է նաև ազրեսիայի բնորոշումը, այդ պատճառով էլ Սուվետական Միությունը միշտ էական նշանակություն է տվել այդ հարցին: Պրորբեմի կարևորությունից ելնելով, ՄՍՀՄ-ը 1967 թ. նորից նախաձեռնություն ցուցաբերեց ազրեսիայի միջազգային իրավական բնորոշման հարցում և Գլխավոր ասամբլեայի XXII նստաշրջանում հանդես եկավ «Ժամանակակից միջազգային իրադրության լուսի տակ ազրեսիայի սահմանման մշակումն արագացնելու վերաբերյալ» բանա-

ձևի նախագծով, որն արժանացավ ՄԱԿ-ի անդամ-պետությունների ճնշող մեծամասնության հավանությունը: Ինչպես նախորդ դեպքերում, այնպես էլ այս անգամ ԱՄՆ-ը և նրա ընկերակիցները համառորեն փորձում էին շեղել Գլխավոր ասամբլեայի ուշադրությունը: Սուվետական այդ նոր բանաձևի նախագծում առաջարկվում էր ստեղծել հատուկ կոմիտե, որը պետք է գրադվի հարցի նախապատրաստմամբ՝ Գլխավոր ասամբլեայի XXIII նստաշրջանում քննարկելու համար: Գլխավոր ասամբլեայի XXII նստաշրջանը որոշեց ազրեսիայի բնորոշման հարցը հանձնել վեցերորդ (իրավաբանական) հանձնաժողովին՝ հետագա քննարկման և սուսումնասիրման համար:

Չհարձակման սկզբունքի մեջ իր անմիջական արտահայտությունն է գտնում պետությունների խաղաղ գոյակցությունը, այլ կերպ ասած՝ շհարձակման սկզբունքը միջազգային խաղաղության և անվտանգության գլխավոր նախապայմաններից մեկն է:

Չհարձակման սկզբունքի կոպիտ խախտման արտահայտությունը ազրեսիան է, որն իր մեջ բովանդակում է նախաձեռնության հատկանիշ, նշանակում է հարձակում (առաջինը) ուրիշ պետության վրա: Այդ պատճառով էլ հարձակման ենթարկված պետության իր պաշտպանության համար ձեռնարկած գործողությունները, թեկուզ և դրանք հարձակողական բնույթ ունենան, չեն կարող դիտվել որպես ազրեսիա: Ազրեսիա չեն համարվում ազգային-ազատագրական բոլոր պատերազմները: Ազրեսիա չի համարվում պետության կողմից գինված ուժերի կիրառումը ուրիշ պետության դեմ, եթե այդ կատարվում է որպես սանկցիա ընդդեմ ազրեսորի՝ ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով:

Արդի միջազգային իրավունքը, դատապարտելով ազրեսիայի բոլոր տեսակներն ու ձևերը, միանգամայն օրինաչափ է համարում պետությունների ինքնապաշտպանության իրավունքը: ՄԱԿ-ի կանոնադրության 51 հոդվածում ասված է, որ այն չի շոշափում պետությունների անհատական և կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունքը, եթե ՄԱԿ-ի անդամը ենթարկվի գինված հարձակման, մինչև որ Անվտանգության Խորհուրդը անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար:

Պետությունը կարող է դիմել ինքնապաշտպանության քայլերի սկսված, այլ ոչ թե կարծեցյալ ազրեսիայից պաշտպանվելու համար: Եթե պետությունը կամ պետությունները դիմում են ինքնապաշտպանության իրավունքի իրականացմանը, ասպ այդ դեպքում ձեռնարկ-

ված միջոցառումների մասին պետք է անհապաղ իրազեկ դարձվի Անվտանգության խորհուրդը: Ինքնապաշտպանության համար ձեռնարկված միջոցառումները չպետք է շոշափեն Անվտանգության խորհրդի լիազորություններն ու պատասխանատվությունը:

Անուղղակի, տնտեսական և գաղափարական ազդեցիկները չեն կարող հիմք հանդիսանալ դիմելու ՄԱԿ-ի կանոնադրության 51 հոդ. նախատեսված ինքնապաշտպանության միջոցառումների կիրառմանը:

ՄԱԿ-ի կանոնադրությունը սանկցիաներ է նախատեսում զինված ագրեսիայի դեպքում: Անվտանգության խորհուրդը, հավաստելով զինված ագրեսիայի առկայությունը, կանոնադրությամբ լիազորված է ագրեսորի դեմ կիրառելու զինված ուժերի գործադրման հետ չկապված միջոցառումներ՝ տնտեսական հարաբերությունների, երկաթուղային, ծովային, օդային, փոստային, հեռագրային, ռադիո կամ հաղորդակցության այլ միջոցների լրիվ կամ մասնակի ընդհատում, դիվանագիտական հարաբերությունների խզում: Նա կարող է նաև օդային, ծովային կամ ցամաքային ուժերով անհրաժեշտ քայլեր ձեռնարկել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար: Այդ գործողությունները կարող են արտահայտվել զինված ուժերի ցուցադրման, բլոկադայի կամ այլ ձևերով: Երբ որոշված է՝ ագրեսորի դեմ զինված ուժ գործադրել, այդ դեպքում ՄԱԿ-ի անդամ-պետությունները Անվտանգության խորհրդի տնօրինության տակ են դնում ազգային զինված ուժերի համապատասխան կոնտինգենտներ, որը կատարվում է Անվտանգության խորհրդի և ՄԱԿ-ի անդամ-պետության միջև համաձայնագիր կնքելու միջոցով:

### § 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ ԽԱՂԱԿ ԿԵՐՊՈՎ ԼՈՒՄԵՆԻ ՍԿՋՈՒՆՔԸ

Միջպետական վեճերի խաղաղ կարգավորման միջոցների ինստիտուտները, ինչպիսիք են բանակցությունները, բարի ծառայությունները, միջնորդությունը, միջազգային արբիտրաժը, երևան են եկել դեռևս հնագույն ժամանակներում ու պետությունների կողմից կիրառվել են ըստ անհրաժեշտության և նրանց հայեցողությամբ: Վեճերի խաղաղ կարգավորման միջազգային-իրավական միջոցների առկայությունը դեռևս պետություններին չէր պարտավորեցնում իրենց միջև եղած վեճերը լուծել խաղաղ ճանապարհով, ավելին՝ պատերազմը որպես միջպետական վեճերի կար-

գավորման միջոց ճանաչված ինստիտուտ էր, և պետություններն ազատ էին վեճի կարգավորման խաղաղ կամ ոչ խաղաղ միջոց ընտրելու մեջ: Այսպես էր դրուվում մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը:

Միջազգային վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքը իրավական պարտավորության ուժ կարող էր ձեռք բերել միայն շահարձակման սկզբունքի առկայության պայմաններում, այդ պատճառով էլ առաջինի և երկրորդի ձևավորման պրոցեսը պետք է դիտել մեկ ամբողջության մեջ: Վեճերի խաղաղ կարգավորման ըսկզբունքի ձևավորումը պետք է տեսնել հանուն միջազգային խաղաղության և անվտանգության սովետական պետության վճռական ու հետևողական պայքարում, որ նա մղել է իր գոյության պահից ի վեր: Հաշտության մասին պատմական դեկրետում, սովետական արտաքին-քաղաքական սկզբունքները սահմանող այլ ակտերում և միջազգային իրավական բնույթի բազմաթիվ վավերագրերում սովետական պետությունը անհանձնել կերպով պատերազմը մերժել է որպես վեճերի կարգավորման միջոց և առաջ է քաշել միջպետական վեճերի կարգավորման խաղաղ միջոցների գործադրման պահանջը:

Ո՛չ բուրժուական պացիֆիզմը, ո՛չ բուրժուական կառավարությունների կեղծավոր հայտարարությունները հօգուտ խաղաղության՝ չէին խոսում այն մասին, որ կապիտալիստական երկրները ցանկանում են միջազգային-իրավական պարտավորություններ ստանձնել վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Միայն սովետական պետության խաղաղասիրական քաղաքականության և միջազգային-իրավական պրակտիկայի ներգործության ուժով է, որ վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը միջազգային իրավական պարտավորեցնող նշանակություն է ձեռք բերում: Միջպետական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելը միջազգային իրավունքում առաջին անգամ ճանաչվում է որպես իրավական սկզբունք Փարիզի 1928 թ. բազմակողմանի պայմանագրում, որի երկրորդ հոդվածը կողմերին պարտավորեցնում էր իրենց միջև ծագած բոլոր վեճերն ու միջազգային կարգավորել խաղաղ միջոցներով: ՄՍՀՄ-ը չէր հրավիրվել Փարիզի պայմանագրին նախորդած բանակցություններին մասնակցելու: Այդ փաստը խոսում էր այն մասին, որ կապիտալիստական պետությունները հետապնդում են հակասովետական բռն ստեղծելու նպատակ, իրենց համար սպառնալից էին հանդիսանում Վեճերի առաջնություն՝ հարմար պահին ընդդեմ Սովետական Միության պատերազմ սկսելու համար: Սակայն, քանի որ Փարիզի պայմա-



նագիրը բաց էր, ՄՍՀՄ-ը միացավ այդ պայմանագրին և առաջինը  
ինքը վավերացրեց, ապա դիմեց Լեհաստանին, Լիտվային, Ֆին-  
լանդիային, Էստոնիային, Լատվիային և Ռումինիային առաջար-  
կելով հատուկ արձանագրություն ստորագրել Փարիզի պայմանա-  
դիրը (Կելլոգ-Քրիանի պակտը) գործողության մեջ դնելու իրենց  
փոխհարաբերություններում, չսպասելով մյուս պետությունների  
վավերացմանը: Այդպիսի հատուկ արձանագրություն ստորագրվեց  
Մոսկվայում 1929 թ. փետրվարի 9-ին:

Փարիզի պայմանագիրը կնքելուն հաջորդած շրջանում վեճերը  
խաղաղ միջոցներով լուծելու սկզբունքը ամրապնդվում է մի  
շարք միջպետական համաձայնագրերում և Ազգերի լիգայի բա-  
նաձևերում: 1928 թ. սեպտեմբերի 26-ին Ազգերի լիգայի ժողո-  
վում հատուկ բանաձև ընդունվեց «միջազգային վեճերը խաղաղ  
լուծելու շահարձակման և փոխադարձ օգնության վերաբերյալ»:  
Բանաձևին կցվեց այսպես կոչված Գլխավոր ակտ, որը բաղկացած  
էր չորս գլխից. 1) հաշտարար պրոցեդուրայի մասին (այստեղ  
նշվում էր, որ այն վեճերը, որոնք չեն լուծվի դիվանագիտական  
ճանապարհով, ենթակա են հաշտարար պրոցեդուրայի), 2) վեճե-  
րը միջազգային արդարադատության մշտական պալատում դա-  
տական կարգով լուծելու մասին (պետություններն այս բային  
պետք է դիմեն, եթե համաձայնեցուցիչ հանձնաժողովի աշխա-  
տանքներն ավարտվելուց հետո մեկ ամսվա ընթացքում համա-  
ձայնություն ձեռք չի բերվել) և 4) ընդհանուր դրույթներ: Այս գըլ-  
խավոր ակտը վավերացվեց միայն 23 պետության կողմից, ուստի  
գործնական մեծ նշանակություն չունեցավ:

Չհարձակման և միջազգային վեճերը խաղաղ ճանապարհով  
լուծելու սկզբունքը տեղ է գտել ամերիկյան պետությունների  
1933 թ. հոկտեմբերի 10-ի Ռիո դե Փանելոյի պայմանագրում<sup>9</sup>:

Այսպիսով, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափո-  
խությունից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմն սկսե-  
լու ժամանակամիջոցում աստիճանաբար ձևավորվեց և միջազգա-  
յին իրավունքում ամուր տեղ գրավեց նրա հիմնական սկզբունքնե-  
րից մեկը և՛ միջազգային վեճերը խաղաղ ճանապարհով լուծե-  
լու սկզբունքը: Պատերազմից հետո այդ սկզբունքը է՛լ ավելի ա-  
մուր տեղ գրավեց միջազգային իրավունքում և հատկապես Միա-  
վորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության մեջ: Կա-  
նոնադրության 2-րդ հոդ. 3-րդ կետում ուղղակի սաված է. «Միա-  
վորված Ազգերի Կազմակերպության բոլոր անդամներն իրենց

միջազգային վեճերը լուծում են խաղաղ միջոցներով այնպես, որ-  
պեսզի վտանգի չենթարկեն միջազգային խաղաղությունն ու ան-  
վտանգությունը և արդարությունը»:

Միջպետական վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքն իր  
արտացոլումն է ստացել Ասիայի ու Աֆրիկայի 29 երկրների Բան-  
դունգի դեկլարացիայում, Գլխավոր ասամբլեայի XII, XIII և  
XVII նստաշրջանների՝ պետությունների միջև խաղաղ և բարի-  
դրացիական հարաբերություններ վարդապետելու վերաբերյալ բա-  
նաձևերում, ինչպես նաև մի շարք այլ միջազգային պայմանա-  
գրերում, դեկլարացիաներում ու ակտերում: Այսպես, օրինակ,  
Վարշավայի պայմանագրի 1-ին հոդվածում նշվում է, որ «պայ-  
մանավորվող կողմերը պարտավորվում են Միավորված Ազգերի  
Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան իրենց  
միջազգային հարաբերություններում ձեռնպահ մնալ ուժի սպառ-  
նալիքից կամ նրա կիրառումից և իրենց միջազգային վեճերը լու-  
ծել խաղաղ միջոցներով այնպես, որպեսզի միջազգային խաղա-  
ղությունն ու անվտանգությունը սպառնալիքի տակ չդնեն»<sup>10</sup>: Ամե-  
րիկյան պետությունների կազմակերպության կանոնադրության  
20-րդ հոդվածը սահմանում է, որ «...միջազգային այն բոլոր վե-  
ճերը, որոնք կծագեն ամերիկյան պետությունների միջև, պետք է  
լուծվեն խաղաղ պրոցեդուրայի միջոցով»<sup>11</sup>: Արաբական երկր-  
ների լիգայի կանոնադրության V հոդվածում սաված է. «...լիգայի  
անդամ երկու կամ ավելի պետությունների միջև ծագած վեճերի  
կարգավորման համար արգելվում է դիմել ուժի»<sup>12</sup>:

Ճիշտ են նկատում «Միջազգային իրավունքի դասընթացի»  
(1967 թ.) հեղինակները, որ վեճերի խաղաղ կարգավորման ըս-  
կըբունքի ճիշտ կիրառման համար կարևոր է «Միջազգային վե-  
ճի» հասկացության սահմանումը: Արդի միջազգային իրավունքում  
միջազգային վեճ ասելով հասկանում են երկու կամ ավելի պե-  
տությունների հարաբերություններում շարժվող ճիշտ հարցերի  
առկայությունը, նրանց միջև ընդհարումների, միջազգային կյան-  
քի տարբեր պրոբլեմների շուրջը տարաձայնությունների գոյու-  
թյունը, ինչպես նաև միջազգային պայմանագրերի, համաձայնա-  
գրերի և այլ ակտերի բովանդակության շուրջը տարակարծույուն-

<sup>9</sup> «Современное международное право, сборник документов», 1964, стр. 38.

<sup>11</sup> «Курс международного права», 1967, т. II, стр. 154.

<sup>12</sup> «Международное право в избранных документах», изд. ИМО, 1957, стр. 33.

<sup>9</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, էջ 152:

ները: «Վեճը գոյություն ունի, — գրում է Հ. Կելզենը, — եթե մի կողմը բողոք է հարուցում մյուսի դեմ, իսկ այս մյուս կողմը հերքում է այդ բողոքը»<sup>13</sup>:

Միջպետական վեճերի մեջ յուրահատուկ տեղ են գրավում տերիտորիալ, սահմանային վեճերը: Այսօրվա աշխարհը անցյալից ժառանգել է այդ կատեգորիայի բազմաթիվ վեճեր, որոնց առկայությունը լուրջ վտանգ է ներկայացնում միջազգային խաղաղության և անվտանգության համար: Պատմությունը ցուցանում է, որ ռազմական կոնֆլիկտների և սահմանային ընդհարումների հիմնական պատճառը տերիտորիալ վեճերն են եղել: Այդ հանգամանքն էլ խոսում է այն մասին, որ ամեն ջանք պետք է գործադրել տերիտորիալ վեճերը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար: Այդ նկատառումով է, որ 1963 թ. դեկտեմբերի 31-ին ՍՍՀՄ կառավարության նախագահը հատուկ ուղերձով դիմեց աշխարհի երկրների պետությունների (կառավարությունների) պոլիսների տերիտորիալ վեճերի խաղաղ կարգավորման հարցի շուրջը: Այդ ուղերձում մասնավորապես ասված է. «...Սովետական կառավարությունը, ղեկավարվելով խաղաղությունն ամրապնդելու, պատերազմը կանխելու շահերով, բոլոր պետությունների կառավարությունների քննարկմանն է ներկայացնում հետևյալ առաջարկությունը. Միջազգային համաձայնագիր (կամ պայմանագիր) կընթել տերիտորիալ վեճերի և սահմանային հարցերի լուծման համար ուժ կիրառելուց պետությունների հրաժարվելու վերաբերյալ»<sup>14</sup>:

Անհրաժեշտ է պարզություն մտցնել մի հարցում ևս: ՄԱԿ-ի կանոնադրության մի շարք դրույթներում խոսվում է միջազգային վեճերի և սիտուացիաների մասին, սակայն որոշակիորեն չի խոսվում այն մասին, թե որն է «վեճը» և որը «սիտուացիան»: ՄԱԿ-ի կանոնադրության 34-րդ հոդ. համաձայն «Անվտանգության խորհուրդը լիազորվում է քննարկելու ամեն մի վեճ և ամեն մի սիտուացիա, որը կարող է հանգեցնել միջազգային ընդհարման կամ առաջացնել վեճ, որպեսզի պարզի, թե այդ վեճի կամ սիտուացիայի շարունակվելը չի կարող, արդյոք, սպառնալ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը»: Վերևում հիշատակված «Միջազգային իրավունքի դասընթացում» նշվում է, որ յուրաքանչյուր վեճ ստեղծում է սիտուացիա, բայց ամեն մի սիտուացիա վեճ չէ: Սիտուացիան կարող է վեճ առաջացնել, սակայն կարող է և վեճի

չհանգեցնել: Այդպիսի բնույթ ունի, օրինակ, սիտուացիան, որը ծագել էր 1957 թ. աշնանը Թուրքա-սիրիական սահմանագլխին: Նրա ծագման աղբյուրը Թուրքիայի շարդարացված գործողություններն էին, նա սկսել էր իր զինված ուժերը կենտրոնացնել Սիրիայի սահմանի մոտ: Տվյալ սիտուացիան վեճի առարկա չառաջացրեց, կամ այլ կերպ ասած վեճ չդարձավ: Ընդհանրապես վեճի համեմատությամբ սիտուացիա հասկացությունը նվազ որոշակի է: Նման բնույթով լայն տարածում ունի միջազգային իրավունքի գրականության մեջ<sup>15</sup>:

#### § 4. ՊԵՏԱԿԱՆ ՍՈՎԵՐԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԳԵԼՈՒ ՍԿՋՐՈՒՆԵԸ

Պետական սովերենություն, ազգի, ժողովրդի սովերենության և սովերենության հետ կապված մի շարք այլ խնդիրների վերաբերյալ ասվել է նախորդ գլխում: Այստեղ հիմնականում խոսվում է պետական սովերենությունը հարգելու սկզբունքի բովանդակության և նրա որպես այդպիսինի ձևավորման մասին:

Սովետական գրականության մեջ ընդունված է սովերենության հետևյալ սահմանումը. սովերենությունը պետության որպես իշխելու (ВЛАСТВОВАНИЯ) հատուկ կազմակերպության յուրովի հատկություն է (քաղաքական և իրավաբանական): Պետական սովերենության տակ հասկանում ենք պետությանը ներհատուկ գերիշխանությունը իր տերիտորիայում և անկախությունը միջազգային հարաբերություններում: Պետության գերիշխանությունը նշանակում է, որ պետության տերիտորիայի շրջանակներում պետական իշխանությունը բարձրագույն, գերագույն է: Պետությունը հանրային իշխանություն (օրենսդրական, քաղաքական, դատական) լիակատար կրողն է, նրա տերիտորիայում բացառվում է օտարերկրյա իշխանությունը: Պետության անկախությունը միջազգային հարաբերություններում նշանակում է պետական իշխանության շենթարկվելը օտարերկրյա պետությունների իշխանություններին, այսինքն՝ պետության լիակատար ինքնուրույնությունը միջազգային հարաբերությունների ոլորտում<sup>16</sup>:

Պետական սովերենությունը դասակարգային կատեգորիա է, նրա կրողը հասարակության մեջ քաղաքականապես, տնտեսապես և գաղափարապես տիրապետող դասակարգն է: Այսպես, օրինակ,

<sup>15</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, էջ 157:

<sup>16</sup> Տե՛ս ևույն տեղում, էջ 33:

<sup>13</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, էջ 156—157:

<sup>14</sup> Տե՛ս «Международное право, (Сборник документов)», 1964, էջ 93:

բուրժուական պետության սուվերենությունը դա բուրժուազիայի տիրապետության դասակարգային իրավաբանական և քաղաքական ձևն է: Իմպերիալիստական պետություններում սուվերենության կրողը մոնոպոլիստական բուրժուազիան է, որն ամբողջովին գավաթել է հիմնական նյութական միջոցները և ոչ մեկի հետ չի բաժանում քաղաքական իշխանությունը: Նա իր դիկտատուրան է հաստատել ամբողջ հասարակության նկատմամբ:

Պետության սուվերենությունը, նրա անկախությունը չի նշանակում, որ նա կարող է կամայականություն ցուցաբերել մյուս պետությունների հետ ունեցած հարաբերություններում: Յուրաքանչյուր պետություն ապրում է ոչ թե մեկուսացած, այլ պետությունների սիստեմում, ուրեմն նա պարտավոր է հարգել մյուս պետությունների սուվերենությունը:

Պետական սուվերենության իրականացման համար արդի ժամանակներում ստեղծված իրադրությունը նպաստավոր է: Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի առկայության պայմաններում ոչ միայն մեծ, այլև փոքր երկրները հնարավորություն ունեն ինքնուրույն արտաքին քաղաքական կուրս վարելու, իրադրությունը նպաստավոր է միջազգային իրավական տեսակետից, այն իմաստով, որ պետական սուվերենությունն այժմ միջազգային իրավունքի հանրաձայն սկզբունքներից մեկն է, իսկ պետական սուվերենությունը հարգելը համապարտադիր միջազգային իրավական նորմա է: Պետական սուվերենությունը հարգելու սկզբունքը սերտորեն կապված է միջազգային իրավունքի մյուս հանրաձայն սկզբունքների հետ և զրսեկորվում է նրանց կիրառման մեջ, պետությունների քաղաքական անկախության և տերիտորիալ անձեռնմխելիության, նրանց սուվերեն հավասարության, ուրիշի ներքին գործերին շմիջամտելու, շհարձակման, տարբեր սոցիալ-անտեսական սիստեմների պատկանող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքների մեջ:

Պետական սուվերենությունը հարգելու սկզբունքը միջազգային սուվորությունից իրավունքի նորմայի ծագում ունի և միջազգային հարաբերություններում համապարտադիր նորմայի ուժ է ձեռք բերել պետությունների երկարամյա միջազգային իրավական պրակտիկայի պրոցեսում: Արդի շրջանում նա միաժամանակ կոնվենցիոն նորմայի բնույթ ունի, քանի որ միջազգային պայմանագրերում ձանաչված և կողմերին պարտավորեցնող սկզբունք է: Այսպես, օրինակ, սուվերենությունը փոխադարձաբար հարգելու սկզբունքը հանդիսավոր կերպով հաստատված է սուվետա-հնդկա-

կան 1955 թ. հունիսի 22-ի և դեկտեմբերի 13-ի հայտարարության, ՍՍՀՄ-ի և Բիրմայի համատեղ հայտարարության (1955 թ. 3-ը նոյեմբերի), ՍՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի (1956 թ. ապրիլի 26), ՍՍՀՄ-ի և Ֆրանսիայի (1956 թ. մայիսի 10) համատեղ ակտերի մեջ և այլն:

Պետական սուվերենությունը հարգելու սկզբունքը իրավաբանորեն ամրապնդված է բազմաթիվ բազմակողմանի ակտերում: Վարչավայի պայմանագրի (1955 թ. մայիսի 14) պրեամբուլայում նշված է, որ պայմանագրի կողմերը ամրապնդելու են բարեկամությունը, համագործակցությունն ու փոխադարձ օգնությունը «պետությունների անկախությունը և սուվերենությունը հարգելու, ինչպես նաև իրենց ներքին գործերին շմիջամտելու սկզբունքներին համապատասխան»: Պետական սուվերենությունը հարգելու ըսկզբունքի վրա է կառուցված Միավորված Ազգերի կազմակերպության ամբողջ համակարգը: Այդ սկզբունքն իր արտացոլումն է ըստացել ՄԱԿ-ի մասնադիտացված հիմնարկությունների կանոնադրություններում, Ամերիկյան պետությունների կազմակերպության, Արաբական պետությունների լիգայի կանոնադրություններում և միջազգային-իրավական շատ այլ ակտերում: Պետական սուվերենության բնորոշ կողմը պետության անսահմանափակ գերիշխանությունն է իր տերիտորիայում իր ներքին գործերը կարգավորելու առանց արտաքին որևէ միջամտության: Միայն առանձին դեպքերում և այն էլ պետության սուվերեն կամքով նրա ներքին կյանքի այս կամ այն հարցը կարող է դառնալ միջազգային կարողավորման և հսկողության օբյեկտ: Սակայն կան հարցեր, որոնք լիովին դուրս են միջազգային իրավական կարողավորման ոլորտից: Իրանցից են նախ և առաջ պետության հասարակական և պետական կարգին վերաբերող հարցերը:

Պետական սուվերենությունը հարգելու սկզբունքն, այսպիսով, պարտավորեցնում է ձեռնպահ մնալ ինչպես պետության արտաքին, այնպես էլ ներքին գործերին միջամտելուց: Սուվետական պետությունը անշեղորեն հետևում է այդ սկզբունքին, նա ղեկավարվում է լենինյան այն գրույթով, ըստ որի յուրաքանչյուր ժողովուրդ սուվերեն է ազատորեն տնօրինելու իր ձակատաղիքը, սեփական հայեցողությամբ սահմանելու իր երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կարգը առանց դրսի միջամտության:

Պետական սուվերենությունը փոխազարձաբար հարգելու միջազգային իրավական սկզբունքից տրամաբանորեն հետևում է տերիտորիալ անձեռնմխելիության սկզբունքը, որը պետության տերիտորիալ գերիշխանության բովանդակության կարևորագույն բաղադրիչն է: Միջազգային իրավունքը ճանաչում ու պահպանում է յուրաքանչյուր պետության տերիտորիալ գերիշխանությունը: Պետությունն իր տերիտորիայում իրականացնում է լիակատար իշխանություն, այլ պետության իշխանությունը նրա տերիտորիայում բացառվում է: Այս նշանակում է, որ պետության օրենսդրությունը տարածվում է բոլոր նրանց վրա և այն ամենի վրա, որ գրտնրվում են նրա տերիտորիայում՝ մարդկանց, հիմնարկությունների, կազմակերպությունների և այլն: Օտարերկրացիին, ուր ղնելով սովյալ պետության տերիտորիան, ընկնում է նրա օրենսդրության ներգործության տակ, բացառությամբ դիվանագիտական աշխատակիցների, որոնց իրավական վիճակի մասին կխոսվի սույն դասընթացի Բ մասի XIV գլխում:

Պետությունը, ելնելով իր տերիտորիալ սուվերենությունից, սահմանում է սեփական երկրի իրավակարգը, իսկ միջազգային իրավունքը պարտավորեցնում է պետություններին փոխադարձաբար հարգել միմյանց ներքին իրավակարգը: Պետությունների տերիտորիալ գերիշխանության սկզբունքը մարմնավորում է նաև պետությունների տերիտորիալ անձեռնմխելիությունը հարգելու փոխադարձ պարտավորությունը: ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդ. 4-րդ կետը անդամ-պետություններին պարտավորեցնում է ձեռնպահ մնալ ամեն մի գործողությունից՝ ընդդեմ ուրիշ պետությունների տերիտորիալ անձեռնմխելիության:

Տերիտորիալ անձեռնմխելիության սկզբունքն ամրապնդված է պետությունների միջև կնքված երկկողմանի և բազմակողմ պայմանագրերում և համաձայնագրերում, որը բարձրացնում է պետությունների պատասխանատվությունը ճշտորեն կատարելու միջազգային իրավունքի այդ հիմնական սկզբունքը: Պայմանագրի բացակայությունը պետությանը չի ազատում այլ պետությունների նկատմամբ տերիտորիալ անձեռնմխելիության միջազգային իրավական սկզբունքը կատարելու պարտականությունից: Այդ սկզբունքը պետք է կատարվի անկախ պայմանագրային փոխադարձ պարտավորությունից:

Տերիտորիալ սուվերենությունից և տերիտորիալ անձեռնմխելի-

լիության սկզբունքից բխում է, որ պետությունն է սահմանում իր ամբողջ տերիտորիայի և նրա առանձին մասերի իրավական ուժի մը, այդ թվում բնակեցման, վերաբնակեցման, օտարերկրացիների մուտք գործելու և երկրի սահմաններում տեղաշարժերի, սահմանների և սահմանային գոտու ուժի մի, օդային տարածությունում և տերիտորիալ շրջրում նավարկելու կարգին վերաբերող հարցերը և այլն:

Տերիտորիալ անձեռնմխելիության սկզբունքը միջազգային խաղաղության և անվտանգության կարևոր նախապայմաններից մեկն է: Ժամանակակից միջազգային իրավունքի և ժողովուրդների իրավագիտակցության տեսակետից դեմոկրատական, արդարացի և կայուն խաղաղության համար հիմք պետք է ծառայի պետության տերիտորիալ ամբողջականությունը հարգելը՝ ազգերի ինքնորոշման իրավունքը ճանաչելու հետ զուգորդած: Ինքնորոշման իրավունքը բացառում է ամեն մի անեքսիա, օտարազգի պետության սահմաններում ազգերին և ժողովուրդներին ամեն կարգի բռնություններով պահելը: Ժամանակակից միջազգային իրավունքը պահպանում է պետությունների տերիտորիալ անձեռնմխելիությունը դրսևի ամեն կարգի ռազմագություններից: Սակայն նա ճանաչում է տերիտորիալ փոփոխությունների անհրաժեշտությունը ներքին ազգային ուժերի կամքին համապատասխան՝ ի պատասխան իրենց պետական պատկանելիությունը փոփոխելու վերաբերյալ պետության ազգային մասերի պահանջի: Ինքնորոշման իրավունքի հիման վրա տերիտորիալ փոփոխությունները գործողություններ են, որոնք կոչված են ստեղծելու պետական տերիտորիայի իսկական անձեռնմխելիությունն ու ամբողջականությունն ապահովող պայմաններ<sup>17</sup>: Միջազգային իրավունքը միաժամանակ հնարավոր է համարում պետական տերիտորիաների մասնակի փոփոխություններ, պայմանով, որ այդ փոփոխությունները կատարվեն պետությունների կամավոր փոխադարձ համաձայնությամբ: Ընդամին կամավորությունը հիմնավոր լինելու համար ձևական-իրավաբանական շահանքի բավական չէ: Տերիտորիալ փոփոխությունների օրինականությունը սահմանելու համար պետք է նկատի ունենալ այդ փոփոխությունների ժամանակ գոյություն ունեցած ռեալ, փաստական հանգամանքները: Ձևական համաձայնությունը, որը թեկուզ և արտահայտվել է պայմանագրի կնքելու ձևով, չի կարող ծառայել որպես կոչ պայմանագրի փաստական անիրավահավա-

<sup>17</sup> Տե՛ս «Курс международного права», изд. «Наука», 1967, էջ 59:

սար բնույթը սքողելու, ուրիշի տերիտորիայի գավթումը «օրինականացնելու» համար:

Նախահոկտեմբերյան միջազգային իրավունքը թույլատրում էր սուվերեն պետության նկատմամբ կիրառել հարկադրանքի ամեն կարգի միջոցներ, ընդհուպ մինչև պատերազմը, ավելին՝ պատերազմը համարվում էր հարկադրանքի հիմնական միջոց: Լ. Օպենհեյմի ասելով. «Իրավունքի տեսանկյունով պատերազմը պատկերացվում էր որպես պետության բնական ֆունկցիա, նրա անսահմանափակ սուվերենության առանձնաշնորհությունը»<sup>18</sup>, Միջազգային իրավունքը օրինականացնում էր «պատերազմի իրավունքի» կիրառման հետևանքները: Անցյալից ժառանգություն մնացած տերիտորիալ ձեռքբերումների ապօրինությունների վերացումը արդի միջազգային իրավունքի գործող սկզբունքների հիման վրա պետք է կատարվի խաղաղ ճանապարհով: Այդ է պահանջում ՄԱԿ-ի կանոնադրությունը, մասնավորապես նրա 2-րդ հոդ, 3-րդ կետում տեղ գտած գրույթը, որը կազմակերպության անդամներին պարտավորեցնում է իրենց վեճերը լուծել «խաղաղ միջոցներով այնպես, որպեսզի միջազգային խաղաղությունը, անվտանգությունը և արդարությունը շենթարկվեն սպառնալիքի»:

### § 6. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆԵՐ

Պետությունների իրավահավասարության սկզբունքը միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման միջազգային իրավական նախապայմաններից մեկն է: Այս սկզբունքը ձեվավորվել է բավականին երկար ժամանակամիջոցում, և տարբեր ժամանակներում նրա բովանդակությունը տարբեր է եղել: Պետության իրավահավասարության սկզբունքը առաջ է քաշվել տակավին XV—XVI դարերում՝ կենտրոնացած բացարձակ միապետությունների կազմավորման ժամանակաշրջանում<sup>19</sup>: Այն ժամանակվա հասկացողությամբ պետական սուվերենությունը նույնացվում էր միապետի սուվերենության հասկացության հետ, իսկ սուվերեն հավասարության տակ հասկանում էին միապետների հավասարություն՝ հավասարը հավասարի նկատմամբ իշխանություն չունի

(par in parem non habet imperium) սկզբունքով: Բուրժուական հեղափոխությունների հաղթանակը նոր բովանդակություն հաղորդեց սուվերենությանը և սուվերեն հավասարության սկզբունքին: Միապետի սուվերենության հասկացությանը փոխարինելու եկավ ժողովրդի սուվերենության գաղափարը: Բուրժուական միջազգային իրավունքը հռչակում է պետությունների իրավահավասարությունը, որը, իհարկե, իր ժամանակի առումով առաջադեմ քայլ էր, սակայն ուներ անցողիկ և ձևական նշանակություն: Հետագայում կ'տեսության մեջ, կ'միջազգային իրավական պրակտիկայում բուրժուական երբեք և ոչ մի դեպքում սուվերենության և սուվերեն հավասարության սկզբունքը շտարածեց գաղութային երկրների ու ժողովուրդների վրա, ավելին, ամրապնդելով իր իշխանությունը, նա անցավ գաղութային նվաճումների:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո սկսվում է նոր դարաշրջան, կործանիչ հարված է հասցվում իմպերիալիզմի նվաճողական քաղաքականությանը, ազգերի ու պետությունների հավասարության սկզբունքը իր իսկական բովանդակությունն է ստանում:

Պետությունների սուվերեն հավասարության սկզբունքն ամուր տեղ է գտել սովետական պետության արտաքին քաղաքական քաղաքականության շարքում և միջազգային իրավական պրակտիկայում: Դիվանագիտական ներկայացուցիչների ունեցրել վերացնելու և նրանց Ռուսաստանյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության լիազոր ներկայացուցիչներ կոչելու մասին ժողովրդական կոմիսարների խորհրդի 1918 թ. հունիսի 4-ի դեկրետն ազդարարում էր, որ սովետական հանրապետությունը «իր միջազգային հարաբերություններում ելնում է մեծ և փոքր ազգերի լիակատար հավասարությունը ճանաչելու» սկզբունքից, վերացնում է դիվանագիտական ունեցրել և «միջազգային իրավունքի հիմնական գաղափարին համապատասխան, որպես իրավահավասար պետությունների հարաբերություններ», սովետական հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա պետությունների բոլոր դիվանագիտական գործակալներին հավասարապես համարում է լիազոր ներկայացուցիչներ<sup>20</sup>:

Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը եղած միջազգային իրավունքը աշխարհի ժողովուրդներին բաժանել էր երկու հիմնական խմբի՝ քաղաքակիրթ ազգերի և ոչ քա-

<sup>18</sup> Л. Опенгейм, Международное право, т. II, п/т. 1, 1949, стр. 201.

<sup>19</sup> S. V. В. Э. Грабарь, Начало равенства государств в современном международном праве, «Известия МИД», 1912, кн. I, «Курс международного права», 1967, т. II:

<sup>20</sup> S. V. «Документы внешней политики СССР», т. I, էջ 345—346:

դարակիրք ազգերի Դրան համապատասխան էլ միջազգային իրավունքի այն ժամանակվա ճանաչված նորմերն ու սկզբունքները տարածվում էին միայն քաղաքակիրթ երկրների վրա, իսկ այսպես կոչված՝ ոչ քաղաքակիրթ երկրները միջազգային իրավունքի ոչ թե սուբյեկտ, այլ օբյեկտ էին համարվում: Քաղաքակիրթ կոչված երկրների համար էլ միասնական շափանիչ շկար, նրանց փոխհարաբերություններում շէր գործում սուվերեն իրավահավասարության սկզբունքը: Միջազգային հարաբերությունների դարավոր պատմության մեջ առաջին անգամ Սովետական Ռուսաստանն էր, որ և՛ ազդարարեց, և՛ գործնականում իրականացրեց պետությունների հիրավի հավասարության սկզբունքը: Հենց այդ սկզբունքից ելնելով է, որ սովետական կառավարությունը շեղյալ հայտարարեց ցարական Ռուսաստանի կնքած բոլոր անիրավահավասար միջազգային պայմանագրերը և լիակատար հավասարության հիման վրա նոր պայմանագրեր կնքեց հարևան երկրների հետ:

Պետությունների սուվերեն հավասարության սկզբունքը ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից է: Այն ճանաչված է որպես այդպիսին պետությունների միջև կրնքված երկկողմ և բազմակողմ պայմանագրերում: Սուվերեն հավասարությունը բխում է պետությունների սուվերենությունից, որը ամեն մի անկախ պետության անկապտելի հատկանիշն է: ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդ. 1-ին կետում նշված է, որ Կազմակերպությունը հիմնադրված է նրա բոլոր անդամների սուվերեն հավասարության հիման վրա: «Սուվերեն հավասարության» բովանդակության մեկնաբանումը տրվել է ՄԱԿ-ի Կանոնադրության մշակման ժամանակ Սան-Ֆրանցիսկոյում, որի համաձայն «սուվերեն հավասարություն» նշանակում է. «1) որ պետություններն իրավաբանորեն հավասար են, 2) որ նրանք օգտվում են բոլոր իրավունքներից, որոնք բխում են իրենց սուվերենությունից, 3) որ պետության անձնավորությունը պետք է հարգվի նույնպես, ինչպես և նրա տերիտորիալ ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը, 4) որ պետությունը պետք է միջազգային հարաբերություններում բարեխղճորեն կատարի իր պարտականություններն ու միջազգային պարտավորությունները»<sup>21</sup>: Այսպիսով, սուվերեն հավասարության սկզբունքը նշանակում է, նախ և առաջ, պետությունների իրավաբանական հավասարություն: Իրենց փաստական վիճակով պետությունները անհավասար են տերիտորիա-

լի շափով, բնակչության թվով, արդյունաբերական զարգացման մակարդակով, տնտեսական և ռազմական հզորությամբ, կուլտուրական զարգացման մակարդակով և այլն: Սակայն այդ ցուցանիշների գումարով չէ, որ որոշվում է պետությունների միջազգային իրավական վիճակը, այլ նրանց անկապտելի սուվերեն հատկանիշով, որի շնորհիվ յուրաքանչյուր պետություն որպես միջազգային իրավունքի սուբյեկտ օժտված է մյուսների հավասար իրավասուբյեկտությամբ: Պետությունների իրավահավասարության ըսկզբունքից բխում է նրանց հավասար պարտականությունը՝ խըստորեն կատարելու միջազգային իրավունքի իմպերատիվ սկզբունքներն ու նորմերը: Այս շրջանակներից դուրս պետության համար պարտավորեցնող են միայն այն միջազգային իրավական նորմերը, որոնց վերաբերյալ տվյալ պետությունը տվել է իր կամավոր համաձայնությունը: Այս վերջին հարցի շուրջը բուրժուական հեղինակների կարծիքները տարբերվում են: Լ. Օպենհեյմի անելով իրավական տեսակետից մեծ, թե փոքր, թույլ, թե զորեղ պետությունների ձայները հավասար կշիռ ունեն, Ուստի և «պայմանագրի միջոցով միջազգային իրավունքի նորմերի ամեն մի փոփոխություն ուժ ունի միայն այն ստորագրած տերությունների համար և միայն նրանց համար, ովքեր հետագայում միացել են այդ պայմանագրին կամ լուակյաց միացել են նրան սովորույթի ուժով» և որ միջազգային իրավունքին «անհայտ է օրենսդրական պրոցես բառի իսկական իմաստով, այսինքն՝ անհամաձայն պետություններին կամ պետությունների փոքրամասնությանը իրավաբանորեն պարտագիր նորմեր հրամանագրող պրոցես»<sup>22</sup>:

Բուրժուական այլ հեղինակներ անհիմն կերպով գտնում են, որ պետության համար պարտագիր կարելի է ճանաչել որոշ իրավական նորմեր անկախ նրա համաձայնության, մասնավորապես միջազգային սովորույթային նորմերը (Ա. Ֆրեդրոսս, Ժ. Բադելան, Գ. Կելզեն, Պ. Գուգենհեյմ և ուրիշներ): Պետությունների մի խմբի կողմից մեկ այլ խումբ պետությունների կամ պետության միջազգային իրավական նորմեր պարտադրելու հնարավորության կոնցեպցիան լիակատար հակասության մեջ է գտնվում միջազգային իրավունքի էության, նրա հիմնական սկզբունքների հետ, այդ պատճառով էլ պետք է մերժվի վճռականորեն:

Պետությունների սուվերեն հավասարության սկզբունքը հավասարապես վերաբերում է ինչպես միեկնույն սոցիալ-տնտեսա-

<sup>21</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, էջ 94:

<sup>22</sup> Տե՛ս Л. Опенгейм, Международное право, т. I, п/т. 1, стр. 245:

կան կարգ ունեցող պետութիւնների, այնպես էլ տարբեր սոցիալ-տնտեսական կարգ ունեցող պետութիւնների փոխհարաբերութիւններին: Իմպերիալիստական պետութիւնների և հատկապես ԱՄՆ-ի կողմից սոցիալիստական երկրների նկատմամբ միջազգային անուարի, կուլտուրական, գիտական համագործակցութեան և այլ բնագավառում վարվող խտրականութիւնը պետութիւնների սուվերեն հավասարութեան սկզբունքի կոպիտ խախտում է և ազադակող հակասութեան մեջ է գտնվում Միավորված Ազգերի Կազմակերպութեան կանոնադրութեան դրույթների ու սկզբունքների հետ:

### § 7. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻՆ ՉՄԻՉԱՄՏՅԱԼՈՒ ՍԿՋՐՈՒՆԵՐԸ

Այս սկզբունքը նույնպես արդի միջազգային իրավունքի հիմնական և հանրաճանաչ սկզբունքներից մեկն է և խաղաղ գոյակցութեան ու պետութիւնների համագործակցութեան կարևորագույն պայմանը: Այս նշանակում է, որ պետութիւնը կամ պետութիւնների խումբը որևէ ձևով չպետք է իրենց կամքը թելադրեն մի այլ պետութեան, վերջինիս ներքին կյանքի ուղորտին վերաբերող հարցերի ասպարեզում:

Չմիջամտելու հարցն իր արմատներով ծագում է ֆեոդալական հասարակարգից, սակայն որպես միջազգային իրավական ըսկզբունք առաջ է քաշվել բուրժուական հեղափոխութիւնների շրջանում և տեղ է գտել, մասնավորապես, Ֆրանսիական Հանրապետութեան 1793 թ. սահմանադրութեան մեջ, որտեղ ասված է, որ Ֆրանսիական ժողովուրդը «չի միջամտում ուրիշ ազգերի կառավարական գործերին: Նա չի հանդուրժի, որ ուրիշ ազգերը միջամտեն իր գործերին»: Բուրժուազիային չմիջամտելու սկզբունքը պետք էր ֆեոդալական միապետութիւնների գրոհներից պաշտպանվելու համար: Սակայն, երբ նա ամբապնդեց իր իշխանութիւնը, այլևս իրեն կաշկանդված չէր զգում այդ սկզբունքով և պատե՛հ առիթով ոտնահարում էր չմիջամտելու սկզբունքը՝ շահագիտական նկատառումներով: 1815 թ. ստեղծված Սրբազան դաշինքի պաշտոնական քաղաքականութիւնը այլ պետութիւնների ներքին գործերին միջամտելն էր, այսպես կոչված լեզիտիվի սկզբունքով: 1823 թ. դեկտեմբերի 2-ին չմիջամտելու սկզբունքը հռչակվեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Մոնրոյի ուղերձում, որը հայտնի է «Մոնրոյի գոկարինա» անվան տակ: Չեականորեն հանդես գալով ընդդեմ հվրոպական տերութիւնների միջամտութեան կատինական Ամե-

րիկայի գործերին և հայտարարելով, որ ԱՄՆ-ը չի միջամտելու եվրոպական գործերին, Մոնրոյի գոկարինան տասնամյակներ շարունակ ծառայել է որպես միջոց ամերիկյան ինտերվենցիան Արևմուտքյան կիսագնդի երկրներում քողարկելու համար:

Ազգերի լիգայի կանոնադրութիւնը չմիջամտելու սկզբունքի վերաբերյալ դրույթ էր բովանդակում, իսկ գործնականում լիգան քողարկում էր իմպերիալիստական տերութիւնների միջամտութիւնն այլ երկրների ներքին գործերին, ինչպես այդ տեղի ունեցավ իսպանական հարցում (1936—1939 թթ.):

Չմիջամտելու սկզբունքն ամուր տեղ է գրավել Միավորված Ազգերի Կազմակերպութեան կանոնադրութեան մեջ և հատկապես նրա 2-րդ հոդ. 7-րդ կետում, որտեղ աներկմտորեն ընդգծվում է, որ ՄԱԿ-ը չի կարող միջամտել ըստ էության պետութիւնների ներքին իրավասութեանը վերաբերող հարցերին, բացառութեամբ VII գլխում նախատեսված դեպքերի: Այս նշանակում է, որ նման հարցերը չեն կարող ՄԱԿ-ի քննարկման առարկա լինել. և նրանց վերաբերյալ ՄԱԿ-ը չի կարող որոշումներ կայացնել, իսկ պետութիւններն էլ պարտավոր չեն նման հարցերը ՄԱԿ-ի քննարկմանը ներկայացնել: Գործնականում ՄԱԿ-ը շեղումներ է թույլ տվել այդ սկզբունքից և ԱՄՆ-ի ու ազդեցիկ գծով նրա ընկերակիցների ճնշման ներքո քննարկման առարկա է դարձրել բացառապես պետութիւնների ներքին կյանքին վերաբերող հարցեր, ինչպես հունգարական, տիրեթական և նման «հարցեր» և իր դրոշի ներքո նպաստել է ամերիկյան դիմված ինտերվենցիային Կորեայում:

Չմիջամտելու սկզբունքը հետևողականորեն իրականացնում են ՍՍՀՄ-ն ու սոցիալիստական մյուս երկրները: Այդ արտահայտվում է մասնավորապես նրանում, որ միմյանց միջև և այլ պետութիւնների հետ կնքած պայմանագրերում և համաձայնագրերում հատուկ տեղ է հատկացվում չմիջամտելու սկզբունքին, և գործնականում իրականացվում է կյանքում:

Մեծ նշանակութիւն տալով չմիջամտելու սկզբունքին որպես արդի միջազգային իրավունքի կարևորագույն սկզբունքի և այդ ըսկզբունքի հետևողական իրականացմանը, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 20-րդ նստաշրջանը Սովետական Միութեան նախաձեռնութեամբ 1965 թ. դեկտեմբերի 22-ին դեկլարացիա ընդունեց պետութիւնների ներքին գործերին չմիջամտելու անթույլատրելիութեան, նրանց անկախութիւնն ու սուվերենութիւնը պաշտպանելու վերաբերյալ: Այդ դեկլարացիայում ընդգծված է, որ «ոչ

մի պետություն իրավունք չունի մի որևէ պատճառով ուղղակի կամ անուղղակի միջամտել ուրիշ պետության ներքին և արտաքին գործերին» և որ՝ այդ պահանջի իրականացումը հանդիսանում է «էապես կարևոր պայման՝ ազգերի խաղաղ գոյակցության ապահովման համար, քանի որ որևէ քննադատման միջամտության պրակտիկան ոչ միայն ՄԱԿ-ի կանոնադրության ոգու և տառի խախտում է, այլև տանում է այնպիսի սիտուացիաների ստեղծման, որոնք սպառնալիքի տակ են դնում միջազգային խաղաղությանն ու անվտանգությունը»:

Միջազգային իրավունքի այդ կարևորագույն սկզբունքը մեր օրերում ամենագոհիկ կերպով խախտում են Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ դիմելով միջամտության ամենատարբեր ձևերի ու մեթոդների կիրառմանը, ինչպես, օրինակ, 1. զինված ինտերվենցիա (Կորեայում, Վիետնամում, Գոմինիկյան Հանրապետությունում, Պանամայի Հանրապետությունում), 2. քաղաքական ինտերվենցիա (քաղաքացիական պատերազմների, դավադրությունների, լրտեսական, դիվերսիոն գործունեության, տեռորի, խուլիոթյունների, «հինգերորդ զորասյան» կազմակերպումը), 3. ուրիշի միջոցով ինտերվենցիայի դիմելը (զինված բանգաներ և ներխուժման ջոկատներ կազմակերպելը, օրինակ՝ Կուբայի դեմ 1963 թ. և Գվատեմալայի դեմ 1954 թ.), 4. տնտեսական ինտերվենցիա (դոլլարի դիվանագիտությունը, «Մարշալի պլանը», «Տրումենի դոկտրինան», կապիտալի արտահանումը, դեմպինգ, ստրկացուցիչ փոխառություններ, անհամարժեք առևտուր, տվյալ երկրի առևտրի և վալյուտայի խտրականություն); 5. դիվանագիտական ինտերվենցիա («ուժի դիրքից քաղաքականությունը», «սառը պատերազմ»), 6. գաղափարական ինտերվենցիա («գաղիք հանուն առաջադիմության», ռադիոպրոպագանդա, այսպես կոչված «ըստըրկացված երկրների շարաթի» անցկացումը և այլն), 7. պետական հեղաշրջումների կազմակերպումը (Բրազիլիայում, Հունաստանում, Գանայում և այլուր):

Պետությունների ներքին գործերին շփոթման միջազգային իրավական սկզբունքից հետևում է, որ անօրինական է ամեն մի ինտերվենցիա, ինչ ձևով էլ, որ արտահայտված լինի այն:

Այն բոլոր դեպքերում, երբ, ի կատարումն իր լիազորությունների, Անվտանգության խորհուրդը կանոնադրության 36 հոդ. 1-ին կետի կարգով միջոցառումներ է ձեռնարկում այս կամ այն վեճի կամ սիտուացիայի վտանգավորությունը վերացնելու համար, նրա ձեռնարկած քայլերը չեն կարող շոշափել վիճող կողմերի ներքին

սոցիալ-տնտեսական կարգը կամ իրավահարգը: Դա բխում է ՄԱԿ-ի կանոնադրության ամբողջ ոգուց. Գլխավոր ասամբլեայի 1965 թ. դեկտեմբերի 22-ի դեկլարացիայից, որի 1-ին հոդվածն ազդարարում է. «...դատապարտվում է ոչ միայն զինված միջամտությունը, այլև միջամտության բոլոր ձևերը և ամեն մի սպառնալիք, որն ուղղված է պետության իրավասուբյեկտության դեմ կամ ընդդեմ նրա քաղաքական, տնտեսական և կուլտուրական տարրերի»: Հիշյալ դեկլարացիայում ընդգծվում է, որ զինված միջամտությունը ազդեցիկ համահունչ է և այդ պատճառով հակասում է այն սկզբունքներին, որոնց վրա պետք է կառուցվի խաղաղ համագործակցությունը պետությունների միջև, ժողովուրդներին ազգային գոյության ձևից զրկելու համար ուժի կիրառումը նրանց անկապտելի իրավունքին շփոթման սկզբունքի խախտում է: Դեկլարացիայում նշվում է, որ յուրաքանչյուր պետության անկապտելի իրավունքն է ընտրելու իր քաղաքական, տնտեսական և այլ սխտեմը՝ առանց գրսի միջամտության<sup>23</sup>:

#### § 8. ԱՋԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՎԱՍՏՐՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՄԸ

Այս սկզբունքի երևան գալը կապված է Եվրոպայում ազգային-ազատագրական շարժումների քաղաքական պահանջների առաջադրման հետ: Իմպերիալիզմի շրջանում ուժեղացավ ազգային ճնշումը գաղութներում և բազմազգ բուրժուական պետություններում: Այդ ժամանակ էլ ազգի ինքնորոշման իրավունքը դարձավ ազգային-ազատագրական շարժումների պահանջներից մեկը: Ազգերի ինքնորոշման նշանակությունը մեծացավ հատկապես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում, երբ սկսվեց իմպերիալիզմի գաղութային սխտեմի կործանումը:

Ազգի ինքնորոշման իրավունքը համակողմանիորեն մշակվել է Վ. Ի. Լենինի աշխատություններում: Ազգերի ինքնորոշման իրավունքը մարքս-լենինյան ուսմունքի կարևորագույն բաղադրիչներից մեկն է, և սովետական պետության ու կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության կարևոր սկզբունքը: Ազգի ինքնորոշման իրավունքը ստեղծվում է հասկանում ենք յուրաքանչյուր ազգի իրավունքը ինքնուրույնաբար որոշելու իր պետական

<sup>23</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, с. II, էջ 200—201:



գոյութեան ձևը: Ազգը կարող է անջատվել այն պետությունից, որի կազմում գտնվում է, և նտեղծել իր անկախ պետությունը, կարող է այլ ազգերի հետ համագործակցած մտնել ֆեդերատիվ-միութենական պետության կազմի մեջ կամ իր կյանքը կառուցել ազգային ինքնավարության հիման վրա:

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը ազգի ինքնորոշման իրավունքը ազգային-ազատագրական շարժումների լողունն էր, իսկ կոմունիստական կուսակցության քաղաքական սկզբունքը ազգային հարցում: Հեղափոխության հաղթանակից հետո ազգի ինքնորոշման իրավունքը բարձրացվում է պետական քաղաքականության օրենքի աստիճանի, ճանաչվելով որպես սահմանադրական սկզբունք, և աստիճանաբար վերաճվում է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից մեկի: Ռուսաստանյան սովետական հանրապետությունը պատմության մեջ առաջին անգամ հուշակեց ազգերի ինքնորոշման իրավունքը՝ որպես բանվորների ու գյուղացիների պետության արտաքին-քաղաքական և միջազգային իրավական սկզբունք: Այն իր մարմնավորումը գտավ 1917 թ. նոյեմբերի 2(15)-ին հռչակված Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների ղեկավարացիայում<sup>24</sup>, որտեղ նշվում էր, որ ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշել է ազգությունների հարցում իր գործունեության հիմքում դնել հետևյալ սկզբունքները.

1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունն ու սուվերենությունը,
  2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշում՝ ընդհուպ մինչև անջատվելը և ինքնուրույն պետություն ստեղծելու իրավունքը,
  3. Ամեն կարգի ազգային և ազգային-կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացում,
  4. Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և էթնիկական խմբերի ազատ զարգացում:
- Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների ղեկավարացիայի դրույթները լիովին համապատասխանում էին Հաշտության մասին ղեկընտի պահանջներին, բխում էին նրանից: Թե՛ Հաշտության մասին ղեկընտը, թե՛ Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների ղեկավարացիան ելնում էին բոլոր ազգերի և ժողովուրդների լիակատար իրավահավասարության, ազատ կամաարտահայտության, սուվերենության սոցիալիստական ըմբռնումից: Այդ ամենը նկատ

տի առնելով է, որ Հաշտության մասին ղեկընտը ամենայն հստակությամբ ազգարարում էր «Եթե որևէ ազգություն բռնությամբ է պահվում տվյալ պետության սահմանների մեջ, եթե նրան, հակառակ նրա արտահայտած ցանկության... իրավունք չի տրվում ազատ բնակարկությամբ, միացնող կամ առհասարակ ավելի ուժեղ ազգի զորքերն այդ երկրից ամբողջովին հանելով, առանց որևէ հարկազրահների որոշելու այդ ազգի պետական գոյության հարցը, ապա նրա միացումը հանդիսանում է անեքսիա, այսինքն՝ զավթում ու բռնություն»<sup>25</sup>:

Ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքն իր արտացոլումն է գտել Սովետական Ռուսաստանի նաև այլ պետա-իրավական ու միջազգային իրավական ակտերում, ինչպես, օրինակ՝ Ռուսաստանի ու Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին ուղղված դիմումի մեջ, Ժողովրդական կոմիսարների խորհրդի՝ «Թուրքահայաստանի» մասին ղեկընտում, Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների ղեկավարացիայում և այլն:

Ճանաչելով ու իրականացնելով Ռուսաստանի կազմի մեջ մղուկող երկրների ինքնորոշումը, ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը գործողության մեջ է դրվում միջազգային ոլորտում, և դրա առաջին դրսևորումներից մեկն էր «Թուրքահայաստանի» մասին ղեկընտը: Հրաժարվելով այսպես կոչված «պատերազմի իրավունքից», որը լայն կիրառում ուներ բոլոր իմպերիալիստական պետությունների միջազգային իրավական պրակտիկայում և անեքսիաներն արդարացնելու ճանաչված միջազգային իրավական միջոցներից մեկն էր, Սովետական Ռուսաստանը հրաժարվեց «Թուրքահայաստանի» անեքսիայից, որը գրավել էին ռուսական զորքերը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, և անեքսիայի իմպերիալիստական սկզբունքին հակադրեց ազգերի ազատ ինքնորոշման ղեմոկրատական սկզբունքը: Ժողովուրդների 1917 թ. ղեկտեմբերի 29-ի (1918 թ. հունվարի 11) ղեկընտը, որը 1918 թ. հունվարի 15 (28)-ին հաստատվեց Սովետների Համառուսաստանյան երրորդ համագումարում, սկսվում էր այսպես. «Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայ ժողովրդին հայտարարում է, որ Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի օկուպացրած «Թուրքահայաստանի» հայության ազատ ինքնորոշման, ընդհուպ մինչև լիակատար անկախության իրավունքը»<sup>26</sup>: Ժողովուրդները միաժամանակ սահմանել

<sup>24</sup> Տե՛ս «Документы внешней политики СССР», 1957, т. 1, էջ 14:

<sup>25</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 296—297:

<sup>26</sup> Գեկընտում ասված է. «Рабоче-крестьянское правительство России

էր այն նախնական երաշխիքները, որոնց պայմաններում միայն «Թուրքահայաստանի» հայութիւնը կկարողանար իրականացնել իր անկապտելի ինքնորոշման իրավունքը: Վրահասած միջազգային բարդութիւնները կասեցրին հայութեան օրինական իրավունքների իրականացումը:

Ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքն իր արտահայտութիւնն է գտել մի շարք պետութիւնների հետ Սովետական Ռուսաստանի կնքած միջազգային պայմանագրերում և այդպիսով ձեռք է բերել կոնվենցիոն նշանակութիւն: Սովետական Միութեան հետևողական ջանքերի շնորհիվ, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ազգերի ինքնորոշման իրավունքը ձեռք է բերում միջազգային իրավունքի հիմնական և հանրաճանաչ սկզբունքի նշանակութիւն և մտցվում է ՄԱԿ-ի կանոնադրութեան մեջ: «Նպատակները և սկզբունքները» գլխում (հոդ. 1, կետ 2) արձանագրված է, որ ազգերի միջև բարեկամական հարաբերութիւնները զարգացվելու են «ժողովուրդների իրավահավասարութեան և ինքնորոշման սկզբունքը հարգելու հիման վրա»: Ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքն ամրապնդված է կանոնադրութեան նաև 1-ին հոդ. 3-րդ կետում, 13-րդ հոդվ. 1 «Ե» կետում, 55-րդ հոդվ. «Ը» կետում, 73-րդ հոդվածում, 76-րդ հոդվ. «Ե» և «Ը» կետերում և այլն:

Ազգի ինքնորոշման իրավունքը սերտորեն շաղկապված է ազգի սուվերենութեան հետ: Ինչպես որ պետական սուվերենութիւնը կոչված է ապահովելու ժողովրդի ազգային սուվերենութիւնը: այնպես էլ ճանաչել ազգային սուվերենութիւնը առաջին հերթին նշանակում է ճանաչել յուրաքանչյուր ազգի ինքնորոշման սուվերեն իրավունքը, ներառյալ ազգային անկախ պետութիւն ստեղծելու իրավունքը: Ինքնորոշման իրավունքը հանդես է գալիս որպես ազգային սուվերենութեան սկզբունքի ճանաչման իրավարանական արտահայտութիւն: Այսպիսով, ժողովուրդների ինքնորոշման իրավունքը բխում է ազգի սուվերենութիւնից և ազգային սուվերենութեան ապահովման հիմնական իրավական միջոցն է: Ընդամիսն պետք է նկատել, որ անշատվելը որպես ինքնորոշման իրավունքի բաղադրիչ ինքնանպատակ չէ, այլ ծառայում է տվյալ ժո-

ղովրդի ազատ և ինքնուրույն գոյութեանն ու զարգացմանը: Մինչդեռ իմպերիալիստական պետութիւնները երբեմն ինքնորոշման իրավունքի սկզբունքն օգտագործում են որպես քող այս կամ այն երկրում իրենց տիրապետութիւնը պահպանելու համար: Այդպիսի նպատակ էր հետապնդում գաղութատերերի «ինքնորոշման» կոչը Կատանզայի, Արևմտյան Իրիանի հարցում և այլն:

Ազգերի ինքնորոշման իրավունքը և նրանց իրավահավասարութիւնը մեկ ամբողջութեան մեջ վերցրած ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից են, որի հետևողական իրականացումը ազգերի իրավահավասարութեան հիման վրա ժողովուրդների միջև կայուն բարեկամական միջոցառում ստեղծելու գրավականն է: Ազգերի իրավահավասարութեան սկզբունքից հետևում է, որ փոխադարձաբար պետք է հարգել ազգային սուվերենութիւնը, որը բնութագրում է տվյալ ազգի տերիտորիալ, քաղաքական-տնտեսական, կուլտուրական և լեզվական ինքնուրույնութիւնը:

Ազգերի ինքնորոշման և իրավահավասարութեան միջազգային իրավական սկզբունքից հրամայաբար բխում է գաղութատիրութեան և նեոգաղութատիրութեան բոլոր ձևերի անհապաղ վերացման անհրաժեշտութիւնը: Գաղութատիրութեան և նեոգաղութատիրութեան գոյութեան փաստը աղաղակող հակասութեան մեջ է գտնվում արդի միջազգային իրավունքի բուն էութեան հետ: Արդի պայմաններում ազգային սուվերենութեան համար մղվող պայքարը պայքար է բոլոր ձևերի գաղութատիրութեան վերացման համար: Ազգային սուվերենութեան համար մղվող պայքարը ծառայում է իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի ավելի լայն ծավալի խնդիրներին, այն պայքար է դեմոկրատիայի և սոցիալիզմի համար: ՄԱԿ-ը ծրագրում ասված է. «Իմպերիալիստները համառորեն ձգտում են խեղաթյուրել ազգային սուվերենութեան դադափարը, հանել զլխավոր բովանդակութիւնը, այն օգտագործել ազգային էգոիզմ բորբոքելու, ազգային բացառիկութեան ոգի արմատավորելու, ազգային հակամարտութիւնները ուժեղացնելու համար: Դեմոկրատական ուժերը հաստատում են ազգային սուվերենութեան գաղափարը հանուն ժողովուրդների իրավահավասարութեան, նրանց փոխադարձ վստահութեան, բարեկամութեան, փոխօգնութեան և ավելի սերտ շփման, հօգուտ սոցիալական առաջադիմութեան: Ազգային սուվերենութեան գաղափարը իր դեմոկրատական բմբռնումով զնալով ավելի է հաստատվում, ձեռք է բերում

поддерживает право армян оккупированной Россией «Турецкой Армени» (Документы внешней политики СССР), 1957, т. I, стр. 74. «Միջազգային իրավունքի գասընթացի հեղինակները» „Права армян“ -ի փոխարեն, չդիտես ինչպես, կամայաբար գրել են „Права населения“ ահա „Курс международного права“, 1967, т. II, էջ 207:

աճող նշանակություն, դառնում է հասարակության առաջադիմական վարձացման կարևոր գործոն»<sup>27</sup>;

### § 9. ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՍՎՋՐՈՒՄԸ

Զինաթափման պրոբլեմը միջազգային իրավունք մտավ ոչ հեռավոր անցյալում և սպրևսիան դատապարտելու տրամաբանական շարունակությունն է: Զինաթափման հարցը կապված է իմպերիալիստական տերությունների սպառազինման մրցավազքի հետ: Անցյալ դարի վերջին Ֆ. էնգելսը գրել է. «Ահա արդեն քսանհինգ տարի է, ինչ ամբողջ Եվրոպան սպառազինվում է մինչև այժմ շտեմնը ված շափերով: Մեծ տերություններից յուրաքանչյուրը ձգտում է անցնել մյուսից սազմական հզորության տեսակետից և պատերազմի պատրաստությունը, Գերմանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը լարում են բոլոր ուժերը, որպեսզի գերազանցեն մեկը մյուսին»<sup>28</sup>:

Սպառազինությունների մրցավազքը, բնականաբար, աճող անհանգստություն է ծնում բոլոր երկրներում: Անգամ իմպերիալիստական պետությունների կառավարությունները մտահոգվում են սպառազինությունների մրցավազքը սահմանափակելու պրոբլեմով: Սակայն այդ ուղղությամբ ձևոնարկված որոշ քայլերը (Հաագայի խաղաղության 1-ին և 2-րդ կոնֆերանսները 1899 և 1907 թթ.) նկատելի հաջողություններ չունեցան: Առաջին համաշխարհային պատերազմից հետո սպառազինությունների սահմանափակման հարցը շոշափվեց վերսպյան սիստեմի պայմանագրերում, Ազգերի լիգայի կանոնադրության մեջ, որն այդ պայմանագրերից յուրաքանչյուրի բաղկացուցիչ մասն էր կազմում: Լիգայի կանոնադրությունը նախատեսում էր կաղմակերպության անգամ-պետությունների սպառազինությունների սահմանափակում: Կանոնադրության 8-րդ հոդ. 1-ին կետում ասված էր. «Լիգայի անդամները գտնում են, որ խաղաղության պահպանումը պահանջում է ազգային սպառազինությունների սահմանափակում մինչև մինիմում, որը համատեղելի լինի ազգային անվտանգության հետ և միջազգային պարտավորությունների կատարման հետ...»: Նույն հոդվածի 2-րդ կետում ասված է, որ «Խորհուրդը, հաշվի առնելով յուրաքանչյուր պետության աշխարհագրական դիրքը և հատուկ պայ-

մանները, նախատեսում է այդ սահմանափակման պլանները՝ տարբեր կառավարությունների կողմից քննարկելու և որոշումներ կայացնելու նպատակով»<sup>29</sup>: Ազգերի լիգայում տնօրինող իմպերիալիստական պետություններն իրենց սպառազինությունների կրճատման վերաբերյալ իրականում չէին էլ մտածում:

Սպառազինությունների կրճատման պրոբլեմի հետագա բնանարկումը տեղի է ունեցել սովետական պետության խաղաղասիրական քաղաքականության ազդեցության ներքո: Ընկնովայի կոնֆերանսում (1922 թ.) Սովետական Ռուսաստանի պատվիրակությունը հայտարարեց, որ մտադիր է առաջարկել «սպառազինությունների համընդհանուր կրճատում և պաշտպանելու է այն բոլոր առաջարկությունները, որոնք նպատակ ունեն լինելուց միլիտարիզմի բեռը՝ բոլոր պետությունների բանակները կրճատելու պայմանով, և պատերազմի կանոնների լրացում՝ նրա առավել բարբարոսական՝ ձեռքի լիովին արգելմամբ»<sup>30</sup>: Երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին սովետական պետությունը բաղմիցս առաջ է քաշել սպառազինությունների կրճատման, զինաթափման հարցերը: Մոսկովայի կոնֆերանսում 1922 թ. սովետական հանրապետությունը առաջարկեց 1 1/2—2 տարվա ընթացքում բանակները կրճատել 75 տոկոսով: 1928 թ. Սովետական Միությունը Ազգերի լիգայի զինաթափման նախապատրաստական կոմիտեին կոնվինցիայի նախագիծ ներկայացրեց համընդհանուր, լիակատար և անհայտը զինաթափման վերաբերյալ: Լիակատար զինաթափման հարցը սովետական երկիրը առաջ քաշեց 1932 թ. հրավիրված զինաթափման համընդհանուր կոնֆերանսում և այլն: Բոլոր դեպքերում իմպերիալիստական խոշոր տերություններն ամեն կերպ խոչընդոտեցին սպառազինությունների կրճատման ուղղությամբ որևէ առաջադիմության հասնելուն: Ետպատերազմյան շրջանում զինաթափման հարցը ձանաչված է որպես կարևորագույն միջոցառում միջազգային անվտանգության ապահովման գործում: Այն առանձնահատուկ տեղ է զբաղում Միավորված Ազգերի կաղմակերպության կանոնադրությունում և զգալի տեղ է զբաղում նրա օրգանների գործունեության մեջ: Կանոնադրության 11 հոդ. 1-ին կետում ասված է. «Գլխավոր ասամբլեան լիազորվում է քննարկել համազործակցության ընդհանուր ըսկրզբունքներ միջազգային խաղաղության և անվտանգության գոր-

<sup>27</sup> «ՍՄԿԳ XXII համագումարի նյութերը», էջ 470:

<sup>28</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 22, стр. 387.

<sup>29</sup> *Տե՛ս* «Международное право в избранных документах», 1957, т. II, 42-79:

<sup>30</sup> «Документы внешней политики СССР», т. V, 1961, стр. 193.

ծի համար, այդ թվում սկզբունքներ, որոնք սահմանեն զինաթափում և սպառազինությունների կարգավորում, և այդ սկզբունքների վերաբերյալ անել հանձնարարականներ Կազմակերպության Անդամներին կամ Անվտանգության խորհրդին կամ և Կազմակերպության Անդամներին և Անվտանգության խորհրդին»:

Զինաթափման պլանների մշակման զխավոր պարտականությունը գրվում է Անվտանգության խորհրդի վրա: Կանոնադրության 26-րդ հոդվածն այս մասին սահմանում է. «Միջազգային խաղաղություն և անվտանգություն հաստատելուն և պահպանելուն նպաստելու նպատակով՝ սպառազինության դրոժի համար համաշխարհային մարդկային ուժերի և տնտեսական ռեսուրսների նվազագույն տրամադրմամբ, Անվտանգության խորհուրդը պատասխանատվություն է կրում... սպառազինությունների կարգավորման սիստեմի ստեղծման պլանների բանաձևման համար»:

Սպառազինությունների կարգավորման և զինաթափման հարցերը տեղ են դառել ՄԱԿ-ի կանոնադրության նաև 47-րդ հոդվածում, որի համաձայն Ռազմա-Շտաբային կոմիտեն պարտավորեցվում է խորհուրդներ տալ և օգնել Անվտանգության խորհրդին «...սպառազինությունների կարգավորման և հնարավոր զինաթափման վերաբերյալ»:

Սպառազինությունների կրճատման, կարգավորման և զինաթափման վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնադրության դրույթներին համապատասխան Գլխավոր ասամբլեան և Անվտանգության խորհուրդը կարևոր որոշումներ են ընդունել ընդհանուր սկզբունքների վերաբերյալ, որոնք սահմանում են զինաթափման ծրագրերը կյանքում իրականացնելու կարգը: 1946 թ. հունվարի 24-ին Գլխավոր ասամբլեան հավանություն տվեց Ատոմային էներգիայի դժով հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ բանաձևին, ըստ որի հանձնաժողովի զխավոր խնդիրն է ազգային սպառազինություններից բացառել ատոմային զենքը և մասսայական ոչնչացման մյուս միջոցները: 1946 թ. դեկտեմբերի 14-ին Գլխավոր ասամբլեան հավանություն տվեց 41(1) «Սպառազինությունների ընդհանուր կարգավորումը և կրճատումը սահմանող սկզբունքներ» անունը կրող բանաձևին, որի համաձայն սպառազինությունների կրճատումը դիտվում է որպես ՄԱԿ-ի անդամների և իրեն՝ Կազմակերպության անհետաձգելի խնդիրը: Բանաձևում հատկապես ընդգրծվում է, որ անվտանգության պրոբլեմը սերտորեն կապված է զինաթափման պրոբլեմի հետ:

Անվտանգության խորհուրդը լիովին համաձայնվեց այդ բանա-

ձևի դրույթներին և արձանագրեց (1947 թ. հունվար-փետրվար), որ «սպառազինությունների և զինված ուժերի ընդհանուր կարգավորման ու կրճատումը իրենից ներկայացնում է կարևոր միջոցառում միջազգային խաղաղությունն ու անվտանգությունն ամրապնդելու ասպարեզում» և որ «այդ հարցի վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի բանաձևի կատարումը Անվտանգության խորհրդի առջև ծառայած առաջիկա անհետաձգելի և կարևոր խնդիրներից է»<sup>31</sup>: Սպառազինությունների կարգավորման և կրճատման պրոբլեմը բազմիցս բննարկվել է Գլխավոր ասամբլեայի հաջորդ նստաշրջաններում և ընդունվել են համապատասխան բանաձևեր, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում XIV նստաշրջանում հավանության արժանացած 1978 (XIV) (1959 թ. 20/XI) բանաձևը: Այստեղ ՄԱԿ-ի բոլոր անդամների միահամուռ հավանությունն արժանացավ համընդհանուր և լիակատար զինաթափման զաղափարը: «Գլխավոր ասամբլեան,—ասված է բանաձևում,—տողորված ենթկա և ապագա սերունդները նոր բնաշնչող պատերազմի սպառնալիքից փրկելու ձգտումով, ձգտելով լիովին և մեկընդմիջտ վերջ տալու սպառազինությունների մրցավազքին, որը որպես ծանր բեռ ընկած է մարդկանց ուսերին, և ազատված միջոցները օգտագործել ի բարօրություն մարդկության, ցանկանալով նպաստել պետությունների միջև վստահության և խաղաղ համագործակցության հարաբերություններ ստեղծելուն... Համոզված լինելով, որ էֆեկտիվ միջազգային վերահսկողության ներքո լիակատար և համընդհանուր զինաթափման նպատակի նանապարհին ամեն մի ռազազգի մություն կլինի ներդրում այդ բարձր ձգտումների իրականացման մեջ, դրնելով, որ համընդհանուր և լիակատար զինաթափման հարցը ամենակարևոր հարցն է, որը ծառայած է աշխարհի առջև այժմ, կառավարություններին կոչ է անում բոլոր ջանքերը գործադրել այդ պրոբլեմի կոնստրուկտիվ լուծմանը հասնելու համար»<sup>32</sup>:

Գլխավոր ասամբլեայի այս բանաձևը, քաղաքական կարևոր նշանակություն ունենալուց բացի, ճանաչար է հարթում համընդհանուր և լիակատար զինաթափման սկզբունքը միջազգային իրավունքում ամրապնդելու համար:

Խոսելով զինաթափման սկզբունքի այժմյան բովանդակության մասին, պետք է նկատենք, որ զինաթափման սկզբունքը տակավին չի ավարտել իր ձևավորման պրոցեսը: Զինաթափումը որպես ըս-

<sup>31</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, № 308:

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 309:

կղբբունք բխում է ՄԱԿ-ի կանոնադրության ոգուց ու տառից, որը հաստատվում է նրա ընդունած որոշումներով: Իր էվոլյուցիայի պրոցեսում զինաթափման սկզբունքն աստիճանաբար վերաճվում է համընդհանուր և լիակատար զինաթափման սկզբունքի, որը կնթադրում է ոչ միայն սպառազինությունների սահմանափակում, այլև պատերազմ վարելու միջոցների լիկվիդացիա:

Գլխավոր ասամբլեայի 1378 (XIV) բանաձևը դրեց համընդհանուր և լիակատար զինաթափման սկզբունքի ձևավորման սկիզբը, որը ինչպես նշվեց, չի ավարտվել, բայց այժմ արդեն կարելի է ասել, որ պետությունների վրա որոշակի իրավաբանական պարտականություններ են դրվում: Այդ սկզբունքի ձևավորման այժմյան ստադիայում այդպիսի պարտականությունները կայանում են նրանում, որ պետությունները շուտափույթ կերպով համընդհանուր և լիակատար զինաթափման վերաբերյալ պայմանագիր նախապատրաստեն: Մինչև այդպիսի պայմանագրի կնքելը պետությունների վրա չի կարելի պարտավորություն դնել զինված ուժերն ու սպառազինությունները վերացնելու վերաբերյալ<sup>33</sup>:

Վերջին հաշվով, զինաթափման սկզբունքը ենթադրում է պատերազմ վարելու նյութական միջոցների վերացում, որին հետևողականորեն ձգտում է Սովետական Միությունը: «Պատերազմները վերացնելը, Երկրագնդի վրա հավիտենական խաղաղություն հաստատելը կոմունիզմի պատմական խնդիրն է,—ասված է ՄՄԿԳ ծրագրում:—Կայուն խաղաղություն ապահովելու արմատական ուղին ընդհանուր և լրիվ զինաթափումն է՝ միջազգային խիստ վերահսկողությամբ հանդերձ: Իմպերիալիզմը ժողովուրդների ուսերին է գցել սպառազինությունների աննախընթաց բեռը: Մարդկության հանդեպ ունեցած իր պարտքը սոցիալիզմն այն բանի մեջ է տեսնում, որ նրան ադատի ազգային հարստությունների այդ անմիտ վատնումից: Այդ խնդրի լուծումը պատմական նշանակություն կունենար մարդկության համար»<sup>34</sup>:

Ժողովուրդների համար բաղձալի զինաթափման հանապարհին առաջնահարգ նշանակություն ունի մասսայական բնաջնջման գեների այնպիսի տեսակների տարածումը, կիրառումն ու արտադրությունն արգելելը, ինչպիսին ջերմամիջուկային գեների տեսակներն են: Այս ուղղությամբ մեծ են ՄՍՀՄ-ի ծառայությունները: Դեռևս 1946 թ. Սովետական Միությունը ՄԱԿ ներկայացրեց «մաս-

սայական ոչնչացման նպատակով ատոմային էներգիայի վրա հիմնված գեների արտադրությունն ու կիրառումն արգելելու վերաբերյալ միջազգային կոնվենցիայի նախագիծ»: Դրանից հետո Սովետական Միությունը նոր առաջարկություններ ներկայացրեց միջուկային գեներ արգելումն էֆեկտիվ վերահսկողության ներքո իրականացնելու վերաբերյալ: Սովետական առաջարկությունների ընդունումը վճռական քայլ կլինի այդ հրեշավոր գեների վրտանդից մարդկությանն ազատելու համար, սակայն իմպերիալիստական տերությունների համառ դիմադրությունը առ այսօր էլ վիժեցնում է այդքան կինսական հարցի լուծումը:

Հավատարիմ իր խաղաղասիրական միսիային ՄՍՀՄ-ը նոր նախաձեռնությամբ հանդես եկավ Գլխավոր ասամբլեայի XVI նստաշրջանում և առաջարկեց, որ, որպես անհետաձգելի միջոցառում, պետությունները պարտավորություն ստանան միջուկային գեների կիրառումից հրաժարվելու մասին: Սովետական առաջարկություններում ասված էր. «... եթե արևմտյան տերությունները այժմ պատրաստ չեն Սովետական Միության հետ պարտավորություն ստանձնել միջուկային գեների կիրառումից հրաժարվելու մասին, ապա կարելի կլինի որպես առաջին քայլ պայմանավորվել միջուկային գեները առաջինը շփրառելու վերաբերյալ»<sup>35</sup>: Թեպետ այս առաջարկությունն էլ չընդունվեց, սակայն այնուամենայնիվ Գլխավոր ասամբլեայի XVI նստաշրջանում ընդունվեց Ասիայի ու Աֆրիկայի մի խումբ երկրների առաջարկած բանաձևը, որի օգտին, իհարկե, քվեարկեց ՄՍՀՄ-ը: Այդ բանաձևը կրում է «Դեկլարացիա միջուկային և ջերմամիջուկային գեների կիրառումն արգելելու վերաբերյալ» անունը: Դեկլարացիայում որոշակիորեն ընդգծվում է, որ ջերմամիջուկային գեների կիրառումն այսօրին է: Դեկլարացիայի ձ կետում ուղղակի ասված է. «...միջուկային և ջերմամիջուկային գեների կիրառումը հակասում է Միավորված Ազգերի Կազմակերպության ոգուն, տառին ու նպատակներին, ուստի և Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության ուղղակի խախտում է հանդիսանում», իսկ Ե կետում նշվում է, որ «միջուկային և ջերմամիջուկային գեների կիրառումը անզամ դուրս կզա պատերազմի շրջանակից և կպատճառի համընդհանուր տառապանք և կհանգեցնի մարդկության և քաղաքակրթության ոչնչացմանը և այդ պատճառով հակասում է միջազգային իրավունքի նորմերին և մարդկության օրենքներին»: Դեկլարացիայում այնու-

<sup>33</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, էջ 311:

<sup>34</sup> «ՄՄԿԳ XXII համագումարի նյութերը», 1962, էջ 480:

<sup>35</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, էջ 327:

հետև նշվում է, որ միջուկային և ջերմամիջուկային զենքի կիրառումը կլինի պատերազմ ուղղված ընդդեմ ոչ միայն այս կամ այն թշնամու կամ թշնամիների, այլև ամբողջ մարդկության, քանի որ նման պատերազմներին շմասնակցող ժողովուրդները կենթարկվեն այդպիսի զենքի կիրառումից պատճառած աղետներին: Քրե-նարկվող զեկլարացիան ավարտվում է հետևյալ ընդհանուր եզրակացությամբ. «Միջուկային կամ ջերմամիջուկային զենք կիրառող յուրաքանչյուր պետություն պետք է համարվի Միավորված Ազգե-րի Կազմակերպության կանոնադրությունը խախտող, մարդկու-թյան օրենքներին հակառակ գործող, ընդդեմ մարդկության ու ընդդեմ քաղաքակրթության հանցագործություն կատարող»<sup>36</sup>:

Միջուկային զենքի արգելման ուղղությամբ ձեռք բերված դրա-կան արդյունք պետք է համարել 1963 թ. օգոստոսին Մոսկվայում՝ միևուրտում, տիեզերքում և ջրի տակ միջուկային փորձարկում-ներն արգելելու վերաբերյալ պայմանագրի կնքումը, որին մաս-նակցում են ավելի քան 100 պետություն: Այդ պայմանագիրը կնքելուց հետո ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի նախաձեռնությամբ Գլխավոր ասամբլեայի XVIII նստաշրջանը միահամուռ կերպով բանաձև ընդունեց միջուկային զենքով օբյեկտներ ուղեծիր շահնելու մա-սին, իսկ 1964 թ. ապրիլին ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց ռազմական նպատակների համար ձեղքվող նյութերի արտադրությունը կրճատելու վերաբեր-յալ: Գլխավոր ասամբլեայի XXI նստաշրջանում մշակվեց և 1967 թ. հունվարին պայմանագիր ստորագրվեց Տիեզերական տարածու-թյունը, ներառյալ Լուսինը և մյուս երկնային մարմինները հետա-դոտելու և օգտագործելու՝ պետությունների գործունեության ըս-կրդրունքների վերաբերյալ:

Զինաթափման ասպարեզում ձեռնարկվող միջոցառումների շարքում առաջընթաց քայլ պետք է համարել 18-ի կոմիտեում նախապատրաստած և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի XXXI շարու-նակված նստաշրջանում 1968 թ. հունիսի 12-ին հավանության ար-ժանացած միջուկային զենքը շտարածելու մասին պայմանագիրը: Ավանդապահ էրեք տերությունները՝ Սովետական Միությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան 1968 թ. հունիսի 1-ին Մոսկվայում, Վաշինգտոնում և Լոնդոնում ստորա-գրեցին այդ պայմանագիրը: Այդ պայմանագիրը ստորագրեցին նրան հավանություն տված մյուս պետությունները: Միջուկային

զենքը շտարածելու մասին պայմանագիրը բաց է և ուժի մեջ է մտնելու ավանդապահ պետությունների և պայմանագիրն ստորա-դրած 40 ուրիշ պետությունների կողմից վավերացվելուց և նրանց կողմից վավերագրերն ի պահ հանձնելուց հետո<sup>37</sup>:

Վերը շարադրվածից երևում է, որ զնալով զինաթափման ըս-կրդրունքը ավելի լայն ճանաչում է ստանում միջազգային հարա-բերություններում և զարգանում է միջազգային իրավունքի հան-րաճանաչ սկզբունք դառնալու ուղղությամբ:

#### § 10. ՄԱԿ-Ի ՆԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՆՔՆԵՐԸ ՀԱՐԳՆՈՒ ՍԿԶՐՈՒՆԵՑ ԶԵՎՆԱՎՈՐՈՒՄԸ

Մարզու հիմնական իրավունքների հռչակումը պատմականոր-բն կապված է բուրժուական հեղափոխությունների հետ, որը բուր-ժուազիայի ձեռքում դրոշ էր ֆեոդալիզմի դեմ մղած պայքարում ժողովրդական զանգվածներին իր շուրջը համախմբելու և մարտի մղելու համար: Մարզու հիմնական իրավունքները պետա-իրավա-կան կարգավորման օբյեկտ էին: Հետագայում աստիճանաբար ձևավորվում է մարզու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության կոնցեպցիան, որը քայլ առ քայլ կոնվինցիոն բնույթ է ձեռք բերում՝ տեղ գտնելով առանձին միջազգային պայ-մանագրերում:

Մարզու հիմնական իրավունքների սկզբունքը թե՛ ներպետա-կան կյանքում և թե՛ միջազգային իրավական ասպարեզում, հեն-վում էր մասնավոր սեփականության վրա, այդ պատճառով էլ աշ-խատավորական զանգվածների համար նա ուներ հիմնականում ձե-վական-իրավական նշանակություն: Այդ սկզբունքի ռեալ բովան-դակությունը գործնականում պայմանավորված էր անձի նյութա-կան վիճակով, ուստի և մարզու հիմնական իրավունքները իրա-վունքներ էին սեփականատեր բուրժուաների համար: Սոցիալիս-տական կարգեր հաստատելուց հետո մարզու հիմնական իրա-վունքների սկզբունքը ձեռք է բերում միանդամայն նոր բովանդա-կություն, այս անգամ նա խարսխվում է ոչ թե մասնավոր, այլ հանրային սոցիալիստական սեփականության վրա: Մարզու հրաշ-խավորված իրավունքների արտահայտության բարձրագույն ձևը շահագործումից նրա ազատագրվելն է:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մարզու հիմնական

<sup>36</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, էջ 327—328:

<sup>37</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան», 2-ր հուլիսի 1968 թ.:

իրավունքների միջազգային իրավական պաշտպանությունը նոր հիմքերի վրա է դրվում Սովետական Միության քաղաքականության շնորհիվ: Յաշիգմի դեմ ձեռք բերած հաղթանակում ՍՍՀՄ-ի վերճակական դերը ապահովեց, որպեսզի միջազգային իրավական մակարդակով դրվի ու լուծվի պատերազմի տարիներին մարդկության դեմ կատարված չարագործությունների հարցը: 1943 թ. հոկտեմբերի 2-ի Մոսկովյան դեկլարացիայում ազդարարվեց երեք մեծ տերությունների (ՍՍՀՄ, Անգլիա, ԱՄՆ) վճռականությունը դատի տալ բոլոր նրանց, ովքեր մարդկության դեմ հանցագործություններ են կատարել: Մարդկայնության դեմ կատարած հանցագործությունների համար պատասխանատվության սկզբունքն ամրապնդվեց Միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրությունում, Նյուրնբերգի տրիբունալի դատավճռում և այլն:

Մեծ նշանակություն տալով մարդու հիմնական իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հարցերին, Սովետական Միության կառավարությունը մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի այդ կարևոր հարցը տեղ գտնի Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության մեջ: Ժողովրդական լայն զանգվածների ճնշման ներքո արևմտյան տերությունները հարկադրված եղան համաձայնվել մարդու հիմնական իրավունքների պաշտպանության վերաբերյալ սովետական առաջարկությունները մտցնել ՄԱԿ-ի կանոնադրության մեջ: Առանձնապես պետք է նշել Սովետական Միության նախաձեռնությամբ կանոնադրության մեջ տեղ գտած այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը, ռասայական, լեզվի, կրոնի և սեռի հատկանիշներով խտրականության անթույլատրելիության սկզբունքը: ՍՍՀՄ-ը և Ուկրաինյան առաջարկեցին կանոնադրության մեջ մտցնել աշխատանքի իրավունքի և կրթության իրավունքի վերաբերյալ համապատասխան դրույթներ, սակայն ԱՄՆ-ի, Անգլիայի և մի շարք այլ երկրների դիմադրության պատճառով այդ անել հնարավոր չեղավ: Սովետական պատվիրակությունների ջանքերով ՄԱԿ-ի կանոնադրության մեջ թեզ մը տեղեցրվեց «Բնակչության լիակատար ղրազվածությունը» հասնելու անհրաժեշտության մասին: Այսպիսով, մարդու իրավունքների պաշտպանության ասպարեզում պետությունների համագործակցության անհրաժեշտությունը տեղ գտավ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և հետագա զարգացում ստացավ այլ միջազգային վավերագրերում՝ Փարիզի հաշտության պայմանագրերում (1947 թ.), Ավստրիական պետական պայմանագրում (1955 թ.) և այլն:

Սովետական Միության նախաձեռնությամբ Ավստրիական պետական պայմանագրի մեջ մի շարք հոդվածներ մտցվեցին, որոնք վերաբերում են մարդու իրավունքների պաշտպանությանը: «Մարդու իրավունքները» (6) հոդվածը Ավստրիային պարտավորեցնում է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ապահովվի մարդու իրավունքները և բոլոր քաղաքացիների համար հիմնական ազատությունները հարգելը: 7-րդ հոդվ. վերաբերում է սլովենական և խորվաթական ազգային փոքրամասնությունների իրավունքներին և այլն:

Մարդու հիմնական իրավունքները հարգելու սկզբունքի ձևավորման հարցում կարևոր է հիշատակել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիան, որը հռչակում է անձի տարրական իրավունքները՝ բոլոր մարդկանց հավասարությունը առանց որևէ խրատականության, ապրելու, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք, քաղաքացիական և քաղաքական իրավունքներ ու ազատություններ՝ քաղաքացիության և ասպատանի իրավունք, գույքի տիրապետման իրավունք, ամուսնության իրավունք, խղճի և կրոնի ազատություն և այլն:

Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայի ընդունումը վկայություն էր այն բանի, որ մարդու հիմնական իրավունքները հարգելու սկզբունքը մի նոր առաջընթաց քայլ արեց իր զարգացման պրոցեսում: Դրանից հետո, ի զարգացումն վերահիշյալ դեկլարացիայի, ՄԱԿ-ի շրջանակներում մշակվեցին մի շարք միջազգային կոնվենցիաներ, ինչպես, օրինակ, դեմոկրատիկ հանցագործությունը կանխելու և նրա համար պատժելու կոնվենցիան (1948 թ.), կոնվենցիա կանանց քաղաքական իրավունքների վերաբերյալ (1952 թ.), լրացուցիչ կոնվենցիա ստրկությունը, ստրկավաճառությունը և ստրկությանը նման ինստիտուտների և սովորույթների վերացման վերաբերյալ, Կոնվենցիա կրթության ասպարեզում խտրականությունը վերացնելու մասին (1960 թ.), Կոնվենցիա աշխատանքի և զբաղմունքի ասպարեզում խտրականությունը վերացնելու մասին (1958 թ.), Դեկլարացիա զառույթային երկրներին և ժողովուրդներին անկախություն տալու վերաբերյալ (1960 թ.), Դեկլարացիա ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու մասին (1963 թ.), Կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու վերաբերյալ (1965 թ.): 1967 թ. արդեն պատրաստ էին մարդու իրավունքների վերաբերյալ երկու պակտերի նախագծեր՝ քաղաքացիական և քա-

ղաքական իրավունքների մասին պակաս և պակաս՝ տնտեսական, սոցիալական և կուլտուրական իրավունքների վերաբերյալ:

Այսպիսին է մարդու հիմնական իրավունքները հարգելու քվեզդրոնքի ձևավորման պրոցեսի պատկերը այսօրվա դրությամբ:

§ 11. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐԵՆՃՈՐՆԵ  
ԿԱՏԱՐՆԵՐԸ ՍԿՋՐՈՒՄԸ

Միջազգային պարտավորությունները պետությունները կողմից կատարելը միջազգային խաղաղության և անվտանգության կարևորագույն նախապայմաններից մեկն է, նա խաղաղ գոյակցության և համագործակցության հիմնական սկզբունքների թվին է պատկանում: Միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու սկզբունքը արտահայտված է լատիներեն *pacta sunt servanda* (պակտա սոնտ սերվանդա) ֆորմուլայում, որ նշանակում է՝ պետությունները պարտավոր են միջազգային պայմանագրերով կամովին ստանձնած պարտավորությունները կատարել: Հավատարմությունը միջազգային պայմանագրերով ըստանձնած պարտավորություններին վճռական նշանակություն ունի պետությունների միջև փոխադարձ վստահության միջոցով ստեղծելու, միջազգային իրավունքի նկատմամբ պետությունների հավատն ամրապնդելու և նորմալ ու բարեգրացիական հարաբերություններ հաստատելու համար: *Pacta sunt servanda* սկզբունքի զաղափարը ծագել է տակավին հին ժամանակներում և աստիճանաբար ամրապնդվել է միջազգային իրավական պրակտիկայում ու տեսության մեջ: Միջազգային իրավունքի զարգացման պրոցեսում այդ սկզբունքը բովանդակել է տարբեր դասակարգային իմաստ: Փեոզալները նրանում տեսնում էին վստալական պայմանագրերի սխտեմի հենարան, առևտրական բուրժուազիան՝ համաշխարհային շուկան շաղկապող և զաղութային ձեռքբերումները երաշխավորող պայմանագրերի հենարան: *Pacta sunt servanda* սկզբունքի իրականացումն ապահովվել է տարբեր բնույթի երաշխիքներով և անփոփոխ կերպով պահպանվել է որպես միջազգային իրավունքի անխախտ կանոն բոլոր ժամանակներում:

Միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու սկզբունքը իրավաբանորեն ամրապնդված է բաղձաթիվ պայմանագրերում, համաձայնագրերում, կոնվենցիաներում և այլ ակտերում: Մեր ժամանակներում այդ սկզբունքն ամրապնդված

է Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության մեջ և համարվում է միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից մեկը: Ինչպես արձանագրված է կանոնադրության պրեամբուլայում, ՄԱԿ-ի անդամ-պետությունները պարտավոր են հարգել պայմանագրերից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունները: *Pacta sunt servanda* սկզբունքը իրավաբանորեն ամրապնդված է Ամերիկյան պետությունների կազմակերպության կանոնադրության 14 հոդվ., Բանդունդի կոնֆեդանսի դեկլարացիայում և այլն:

ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի մշակած՝ պետությունների իրավունքների և պարտականությունների մասին դեկլարացիայում *pacta sunt servanda* սկզբունքին վերաբերող հոդվածում ասված է. «Յուրաքանչյուր պետություն պարտավոր է բարեխղճորեն կատարել իր պարտավորությունները, որոնք բխում են պայմանագրերից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից և չի կարող վկայակոչել իր սահմանադրության դրույթները կամ իր օրենքները՝ ի արգարացումն իր այդ պարտավորությունների չկատարման»: Միջազգային պարտավորությունները խստորեն կատարելու դրույթը բանաձևված է միջազգային պայմանագրերի մասին կոնվենցիայի 26 հոդվածում:

*Pacta sunt servanda* սկզբունքն իրականացնելուց հրաժարվելը միջազգային ղեկիկտ է, իսկ խախտման և դրանից բխող հետևանքների պատասխանատվությունը ընկնում է խախտում կատարած պետության վրա:

Սովետական պետությունը միշտ էլ հետևողականորեն կատարել է իր միջազգային պարտավորությունները, և անգամ թշնամիները հարկադրված են եղել ընդգծելու, որ Սովետական Միությունը միջազգային պարտավորությունները բարեխղճ ու ազնվորեն կատարելու լավագույն տիպար է:

Միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու *pacta sunt servanda* սկզբունքի իրավաբանական բովանդակության հարցի շուրջը միջազգային իրավաբանական գրականության մեջ միասնական տեսակետ չկա: Մի շարք գիտնականների (Գ. Քեյզեն, Գ. Գուդենհեյմ, Ժ. Սսել և ուրիշներ) կարծիքով *pacta sunt servanda*-ն սովորութային նորմա է: Դա ընդունելով որպես նախադրյալ, նրանք հետևություն են անում, որ միջազգային իրավունքի աղբյուրների մեջ առաջին տեղը պատկանում է ոչ թե միջազգա-



յին պայմանագրին, այլ սովորույթին, քանի որ առաջինն իր պարտագիր ուժը քաղում է սովորութային նորմայից: Փ. Սսելը պնդում է, որ միջազգային պայմանագիրը ոչ այլ ինչ է, քան «սովորութային կանոնների գրանցող», այն դեպքում, երբ սովորույթը հանդես է գալիս որպես միջազգային իրավակարգի նախասկզբնական և զբլխավոր աղբյուր: Բուրժուական այլ գիտնականներ ավելի հեռու են գնում, փորձելով *pacta sunt servanda* սկզբունքից դուրս մղել միջազգային հարաբերությունների մասնակիցների փոխադարձ համաձայնությունը այդ սկզբունքը կատարելու վերաբերյալ: Անգլիացի գիտնական Բրաչերլին գրում է. «Ասել թե *pacta sunt servanda* նորման հենվում է համաձայնության վրա, նշանակում է դուրս չգալ արատավոր շրջանակի սահմաններից»:

Միջազգային իրավունքի սովետական գիտնականները չեն բաժանում վերոհիշյալ դրույթները և գտնում են, որ *pacta sunt servanda*-ն և՛ սովորութային, և՛ կոնվենցիոն նորմա է: Սովետական հեղինակների այդ կոնցեսսիան հիմնավորվում է միջազգային իրավական բնույթի բազմաթիվ աղբյուրներով, որոնցում *pacta sunt servanda*-ն բանաձևված է որպես պոզիտիվ իրավունքի նորմա<sup>39</sup>:

Ընդգծելով այն, որ պետությունները պարտավոր են բարեխղճորեն կատարել իրենց միջազգային պարտավորությունները, պետք է նշել, որ միջազգային պայմանագիրը վավերական է համարվում և ենթակա է կատարման, եթե նա չի հակասում միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին, չի կնքվել ուժի կամ սպառնալիքի ներքո կամ խաբեությունով, և եթե պայմանագիրը կնքելու համար լիազորված անձը դուրս չի եկել իրեն տրված լիազորությունների շրջանակից<sup>40</sup>:

§ 12. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐՈՒՄ

Միջազգային իրավունքը հիմքեր չէր ունենա իրավունք կոչվելու, եթե նրա նորմերով սահմանված միջազգային իրավակարգը խախտողների համար բացակայեր պատասխանատվության սկզբունքի միջազգային իրավական պատասխանատվության սկզբունքի միջազգային իրավունքի մյուս սկզբունքները կմնային օդում կախված և պետությունների հարաբերությունները կկորցնեին իրենց միջազգային իրավական տեսքը, միջազգային իրավակարգի փո-

խարեն կթագավորեր միջազգային անարխիան, կամայականությունը, կարգն ու կանոնը իրենց տեղը կզիջեին քառսին:

Միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու սկզբունքը, որի մասին խոսվեց նախորդ պարագրաֆում, ինքնին ենթադրում է, որ այն խախտողը պետք է միջազգային իրավական պատասխանատվության ենթարկվի: Պետության կողմից իր միջազգային պարտավորությունները կատարելուց հրաժարվելը կամ միջազգային կարգ ու կանոնը խախտելը (միջազգային դելիկտ) կարող է արտահայտվել ինչպես ուրիշ սուբյեկտներին նյութական վնաս հասցնելու, այնպես էլ մյուս սուբյեկտի կամ սուբյեկտների իրավունքները խախտելու ձևով: Միջազգային իրավունքի ասպարեզում պատասխանատվության սուբյեկտներ են գլխավորապես պետությունները, սակայն այդ դերում կարող են հանդես գալ նաև միջազգային կազմակերպությունները, եթե վերջիններս չեն կատարում պետության կամ միջազգային կազմակերպության հետ կնքած պայմանագիրը: Արդի պայմաններում միջազգային իրավական պատասխանատվություն է սահմանված նաև ֆիզիկական անձերի համար: Վերջին դեպքում խոսքը վերաբերում է խաղաղության դեմ կատարած հանցագործությունների, ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար սահմանված պատասխանատվությանը:

Պատասխանատվության հարցը կարող է վրա հասնել ինչպես պետության անիրավազոր գործողությունների (ինչպես, օրինակ, զիմանագիտական իմունիտետից օգտվող անձանց անձեռնմխելիության խախտումը, սահմանների խախտումը և այլն), այնպես էլ պետության անիրավազոր անգործության հետևանքով, երբ պետությունը պատշաճ միջոցառումներ չի ձեռնարկում իր միջազգային պարտավորությունները կատարելու համար (օրինակ՝ իր համապատասխան օրգաններին չի հրահանգավորում միջազգային պայմանագրով սահմանված վարքագծի կանոններին հետևելու կամ ի կատարումն միջազգային պայմանագրի պահանջվող օրենսդրական ակտ չի հրապարակում):

Պետությունն իր գործունեությունն իրականացնում է համապատասխան մարմինների, այն է պետական իշխանության, պետական կառավարման և դատական մարմինների միջոցով: Հենց այս մարմինների անիրավազոր գործողությունների և անիրավազոր անգործության համար պետությունը միջազգային իրավական պատասխանատվություն է կրում: Պատասխանատվության հարցը ծագում է անկախ այն բանից, թե այդ օրգանների վարքագիծը ար-

<sup>39</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, էջ 267:

<sup>40</sup> Տե՛ս «Дипломатический словарь», 1961, т. II, էջ 468:

դարացվում է ներքին օրենսդրությամբ, թե՛ ո՛չ: Պետությունը պատասխանատու է նաև իր զինված ուժերի գործողությունների համար՝ պատերազմի ժամանակ, եթե այդ ուժերը խախտել են պատերազմի օրենքներն ու կանոնները: Հասալի 1907 թ. ցամաքային պատերազմի օրենքների և կանոնների վերաբերյալ կոնվենցիայի III հոդվածի համաձայն պետությունը պատասխանատվություն է կրում պատերազմի ժամանակ իր զինված ուժերի կազմի մեջ մտնող անձանց բոլոր գործողությունների համար: Պետությունը իր զինված ուժերի գործողությունների համար պատասխանատու է նաև խաղաղ ժամանակ, երբ այդ զինված ուժերը գտնվում են ուրիշ տերիտորիայում:

Սկզբունքորեն պետությունը պատասխանատու է իր տերիտորիայում միջազգային իրավունքի այլ սուբյեկտներին հասցված վնասի համար անկախ նրանից, թե ովքեր են այդ վնաս հասցնողները՝ սեփական քաղաքացիները, թե՛ օտարերկրացիները: Այդ անձիք անօրինաչափ-ապօրինի գործողությունների համար պատասխանատվության են ենթարկվում պետության կողմից, իսկ ինքը՝ պետությունը պատասխանատվություն է կրում այն սուբյեկտի առաջ, որին վնաս է պատճառված:

Միջազգային իրավունքը պետության պատասխանատվությունը չի բացառում նաև քաղաքացիական պատերազմի ժամանակ օտարերկրացիներին հասցված վնասի համար: Սակայն պատասխանատվության հարցը վերանում է, եթե վնաս հասցրած կողմին օտարերկրացու հայրենիքը ճանաչել է որպես պատերազմող կողմ: Քաղաքացիական պատերազմում օտարերկրացիներին հասցրած վնասի հատուցումը չի կատարվում, եթե պետությունը համանման հիմքով չի հատուցում իր սեփական քաղաքացիներին:

Միաժամանակ պետք է նկատել, որ երկրում ազգայնացում կատարելու կամ այլ սոցիալ-տնտեսական վերափոխությունների ղեկավարում օտարերկրացին չի հատուցվում այդ հանգամանքների հետևանքով կրած վնասների համար: Սակայն այդպիսի միջոցառումներ իրականացնող պետությունը սեփական հաշիցողությամբ կարող է օտարերկրացիներին հատուցել լիովին կամ մասնակի:

Պետությունների միջազգային իրավական պատասխանատվության ձևերը պայմանականորեն երեքն են՝ քաղաքական, նյութական և բարոյական: Բարոյական պատասխանատվությունը կարող է արտահայտվել ներողություն հայտնելու և որոշ արարողություն կատարելու ձևով: Այսպես, օրինակ, եթե շոշափվել է պետության արժանապատվությունն ու պատիվը, դիցուք, նրա դրոշակն ան-

պատվելու ձևով, ապա երկիրը, որտեղ անպատվությունը տեղի է ունեցել, պաշտոնապես ներողություն է խնդրում և վերականգնում դրոշակն իր տեղում: Պատասխանատվության այս ձևը երբեմն անվանում են սատիսֆակցիա-բավարարում, որն ըստ էության քաղաքական ակցիա է, ուստի և բարոյական պատասխանատվությունը, կարելի է ասել, քաղաքական պատասխանատվության տարատեսակն է:

Պատասխանատվության քաղաքական ձևի շրջանակները բավականին լայն են: Քաղաքական պատասխանատվությանն են վերաբերում միջազգային իրավունքի սուբյեկտների պատասխանատվության բոլոր ձևերը, որոնք վնասը նյութականով հատուցելու հետ կապված չեն:

Պետության նյութական պատասխանատվությունն արտահայտվում է նրանում, որ նա նյութապես հատուցում է միջազգային սուբյեկտներին հասցրած վնասը: Նյութական հատուցումը կարող է իրականացվել ռեստիտուցիայի և ռեպարացիայի ձևով: Եթե պետությունը պատասխանատվություն է կրում ռեստիտուցիայի ձևով, ապա նա պետք է բնականով վերագործնի այս կամ այն իրերը, իսկ եթե պատասխանատվությունը ռեպարացիայի կարգով է կատարվում, ապա պետք է հատուցի հասցված վնասի համար: Ռեպարացիան-հատուցումը կարող է լինել մասնակի և լրիվ: Երկրորդ համաշխարհային պատերազմում Գերմանիայի դաշնակիցների հետ կնքած հաշտության պայմանագրերով (1947 թ.) նախատեսված էր մասնակի հատուցում այն վնասների համար, որ հասցվել էր դաշնակից տերություններին հիտլերյան Գերմանիայի դաշնակիցների պատերազմական գործողությունների և դաշնակիցների տերիտորիաներն օկուպացնելու հետևանքով: Նույն հաշտության պայմանագրերը բովանդակում են հոդվածներ ռեստիտուցիայի վերաբերյալ: Գերմանիայի նախկին դաշնակիցները պետք է վերագործնեն իրենց տերիտորիայում գտնվող՝ Միավորված Ազգերից յուրաքանչյուրի տերիտորիայից տարած ամբողջ սեփականությունը:

Եթե ռեստիտուցիան հնարավոր չէ, այսինքն՝ եթե հնարավոր չէ վերագործնել սեփականությունը կամ վերականգնել մինչև իրավախախտում թույլ տալը իրերի գոյություն ունեցած վիճակը, ապա ռեստիտուցիան փոխարինվում է ռեպարացիայով<sup>41</sup>:

<sup>41</sup> Տե՛ս Գ. И. Тункин, Вопросы теории международного права, էջ 249—304; К. Б. Левин, Ответственность государств в современном международном праве», изд. «Международные отношения», 1966; «Дипло-

Միջազգային իրավական պատասխանատվության հարցը որոշելու համար մեկ միասնական համաշխարհային կենտրոն գոյություն չունի: Միջազգային հարաբերություններում չկա մի դատական մարմին, որը իրավունք ունենար քննարկելու պետությունների միջև եղած վեճերը և սահմաններ պետության պատասխանատվության հարցը առանց վիճող կողմերի համաձայնության: Պետություններն իրենք են, որ փոխադարձ համաձայնությամբ ուղիներ են փնտրում վեճերը պարզելու և պատասխանատվության հարցը լուծելու համար, ըստ որում այդ ուղիները պետք է լինեն խաղաղ, այդ է պահանջում ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդ. 3-րդ կետի բովանդակությունը: Անիրավազոր գործողությունների փաստը և պետության միջազգային իրավական պատասխանատվության հարցը լուծելու համար կողմերը կարող են դիմել խաղաղ բոլոր միջոցներին՝ անմիջական բանակցությունների, խաղը հանձնաժողովներ կամ միջնորդ դատարան ստեղծելուն, երրորդ պետության միջնորդությանը դիմելը և այլն:

Արդի միջազգային իրավունքը չի բացառում պետության պատասխանատվությունը միակողմանիորեն որոշելու հարցը: Երբ խախտում թույլ տված վիճող մյուս կողմի հետ համաձայնություն ձեռք չի բերվում, շատ դեպքերում տուժած պետությունը ինքնուրույնաբար սահմանում է պատասխանատվության փաստը և այն իրականացնելու համար ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ, բացառյալ ուժի և ուժի սպառնալիքի կիրառումը: Նրման դեպքերում երբեմն դիմում են ռետորսիաների: Ռետորսիաները դրանք ներգործման միջոցներ են, որոնք կիրառվում են մեկ պետության կողմից ընդդեմ մյուսի ի պատասխան վերջինիս կողմից ձեռնարկած անհիմն միջոցների, որոնք խփում են ռետորսիա կիրառող պետության տնտեսական շահերին: Ռետորսիաները իրավազոր գործողություններ են, շեն հակասում միջազգային իրավունքի սկզբունքներին և որոշակի միջոց են միջազգային համագործակցության ճանապարհին եղած խոչընդոտները վերացնելու համար: Այսպես, օրինակ, ի պատասխան սրտաքին առևտրի ասպարեզում մի շարք կապիտալիստական պետությունների՝ ՄՍՀՄ-ի նկատմամբ կիրառվող խտրականության սովետական կառավարությունը 1930 թ. հոկտեմբերի 20-ին որոշում ընդունեց այդ պետությունների համար հատուկ սահմանափակիչ ռեժիմ մտցնել ՄՍՀՄ-ի հետ առևտրական կապերի հարցում: 1945 թ. ի պատաս-

խան Շվեյցարիայում ներկայված սովետական քաղաքացիների և ռազմագերիների համար անտանելի պայմաններ ստեղծելուն սովետական կառավարությունը ցուցում տվեց դադարեցնել հայրենադարձության սովետական մարմինների տրամադրության տակ եղած շվեյցարական քաղաքացիներին Շվեյցարիա ուղարկելը:

Ռետորսիայից (ճնշամիջոց) պետք է տարբերել ռեպրեսալիան (փոխճնշամիջոց): Երբ պետությունը անիրավազոր, միջազգային իրավունքի տեսակետից անօրինական քայլերի է դիմում ուրիշ պետության շահերի նկատմամբ, այս վերջինը կիրառում է ռեպրեսալիա, այսինքն՝ իր նկատմամբ կիրառված անիրավազոր գործողություններին պատասխանում է նույնպես անիրավազոր գործողություններով: Օրինակ, երբ պայմանադիր մեկ կողմը չի կատարում համաձայնագրի պայմանները, մյուս կողմն էլ խախտում է համաձայնագիրը<sup>42</sup>:

Արդի միջազգային իրավունքը հատուկ պատասխանատվություն է սահմանում ագրեսիայի համար, որը բխում է շահարձակման ըսկզբունքից: Որպես իրավախախտող, ագրեսորը պատասխանատվություն է կրում ագրեսիա նախապատրաստելու և սանձազերծելու համար: Ընդամեն, պատերազմի իրավաբանական հետևանքները որոշվում են ոչ թե հաղթանակի փաստով, այլ ագրեսիայի համար պետության պատասխանատվությամբ: Ինչ վերաբերում է «հաղթողի իրավունքի» ինստիտուտին, ապա ժամանակակից միջազգային իրավունքը մերժում է ինչպես «պատերազմի իրավունքը», այնպես էլ «հաղթողի իրավունքը»:

Պետության պատասխանատվության ձևերը պայմանավորված են միջազգային իրավախախտման բնույթով և ծանրությամբ:

Միջազգային իրավունքի գրականության մեջ շարունակում է վիճելի մնալ այն հարցը, թե կարելի է, արդյոք, միջազգային քրեական պատասխանատվության ենթարկել միջազգային իրավունքի սուբյեկտին, որոշ հեղինակներ գտնում են, որ պետության քրեական պատասխանատվության հարց լինել չի կարող, ուրիշները կարծում են, որ միջազգային հանցագործություն կատարած պետությանը կարելի է ու պետք է քրեորեն պատժել: Ոմանք էլ գտնում են, որ հանցավոր կարող են լինել ոչ թե պետությունները, այլ կառավարությունները և քրեական պատասխանատվության

матический словарь», с. II, էջ 277—279, М. И. Лазарев, За ликвидацию военных баз США на чужих территориях, изд. НМО, 1959:

<sup>42</sup> Sd'a «Дипломатический словарь», 1964, 4. III, էջ 55:

պետք է ենթարկվեն այդպիսի կառավարության անդամները անհատապես:

Պրոֆ. Գ. Պ. Զաղորոժնու ասելով վերը նշված կարծիքների հեղինակները (զլխավորապես քրեագետները) ներպետական քրեական իրավունքի կատեգորիաները փորձում են փոխադրել միջազգային իրավունքի ասպարեզ, հաշվի չառնելով միջազգային հանցագործության սուբյեկտի և օբյեկտի միջազգային իրավունքում ճանաչված սպեցիֆիկ հասկացությունները: Ընարավոր է, որ «միջազգային հանրային քրեական իրավունք» կամ «միջազգային իրավական քրեական պատասխանատվություն» տերմինները,—գրում է Զաղորոժին,—այնքան էլ հաշող չեն, սակայն անկախ դրանից միջազգային իրավունքում գոյություն ունեն միջազգային հանցագործություն և միջազգային պատասխանատվություն սպեցիֆիկ հասկացությունները, որոնք սկզբունքորեն տարբերվում են ներպետական քրեական իրավունքում տեղ գտած համանուն հասկացություններից<sup>43</sup>:

Պետության միջազգային իրավական պատասխանատվության սկզբունքի հետ սերտորեն առնչվում է վաղեմության ինստիտուտը: Արդի միջազգային իրավունքի ոգուց բխում է, որ վաղեմության ժամկետը կիրառելի չէ միջազգային հանցագործությունների սուբյեկտների նկատմամբ, ինչպես, օրինակ, ռազմական հանցագործների նկատմամբ, որոնց պետք է հետապնդել ամենուրեք և պատժել խստորեն: Այդ սկզբունքին համապատասխան 1965 թ. մարտի 4-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը հրամանագիր ընդունեց «ընդդեմ խաղաղության և մարդկայնության հանցագործություններում մեղավոր անձերին և ռազմական հանցագործներին պատժելու մասին, անկախ հանցագործությունը կատարելու ժամանակից»: Այդ հրամանագիրը նախատեսում է, որ «նացիստական հանցագործները, որոնք մեղավոր են ընդդեմ խաղաղության և մարդկայնության ծանրագույն հանցագործություններում և ռազմական հանցագործություններում, ենթակա են դատի և պատժի անկախ հանցագործությունը կատարելուց հետո անցած ժամանակից»:

Սոցիալիստական երկրների ջանքերով և համաշխարհային հասարակական կարծիքի ներգործության շնորհիվ Գլխավոր ասամբլեայի XXIII նստաշրջանում 1968 թ. ընդունվեց միջազգային կոնվենցիա ռազմական հանցագործությունների և մարդկության

դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի անկիրառելիության մասին, որը փակում է նացիստական հանցագործներին պատասխանատվությունից ազատելու ճանապարհը:

Պետք է ենթադրել, որ վաղեմության ժամկետ չի կարող կիրառվել նաև այնպիսի միջազգային հանցագործությունների համար ինչպիսիք են գենոցիդը (ցեղասպանությունը), տերիտորիալ ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքի խախտման ճանապարհով ուրիշների տերիտորիաների զավթումը՝ անեքսիան<sup>44</sup>:

§ 13. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐ ԶԻՄՆԱԿԱՆ ՍԿՋՐՈՒՆԵՐՆԵՐԻ ԿՈՂԻՖԻԿԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսվում է, որ Գլխավոր ասամբլեան պետք է խրախուսի «միջազգային իրավունքի պրոպեհսիվ զարգացմանը և կոդիֆիկացմանը» (հոդ. 13, կետ 12): Այստեղից երևում է, որ արդի պայմաններում կարևոր նշանակություն ունի միջազգային իրավունքի կոդիֆիկացիան: Այդ նպատակով է, որ 1949 թ. ստեղծվել ու գործում է ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը: Վերջինս անցած տարիների ընթացքում զգալի գործ է կատարել միջազգային խաղաղության ու անվտանգության համար առաջնակարգ նշանակություն ունեցող ասպարեզների ուղղությամբ կոնվենցիաների նախագծերի մշակման հարցում:

Միավորված Ազգերի Կազմակերպության օրգաններում որոշակի քայլեր են ձեռնարկվել միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների կոդիֆիկացման բնագավառում: Այդ նպատակին է ծառայում Գլխավոր ասամբլեայի 1957 թ. դեկտեմբերի 14-ի 1236 (XII) բանաձևը, որով ասամբլեան «Կոչ է անում բոլոր պետություններին գործադրել բոլոր ջանքերը միջազգային խաղաղությունն ամրապնդելու և բարեկամական հարաբերություններ ու համագործակցությունը զարգացնելու, ինչպես նաև վեճերը խաղաղ միջոցներով լուծելու համար, ինչպես այդ պահանջում է Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությունը և նշված է սույն բանաձևում»: 1958 թ. դեկտեմբերի 10-ի 1301 (XIII) բանաձևով Գլխավոր ասամբլեան ՄԱԿ-ի անդամ-պետություններին

<sup>44</sup> Տե՛ս A. A. Есаиян, К проблеме давности в международном праве, «Բանբեր նրեանի համալսարանի», 1968 թ., № 2:

<sup>43</sup> Տե՛ս «Международное право», изд. «Международные отношения», 1966, էջ 183:

վոր է անում՝ «ապրել միասին Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության տառին ու ոգուն համեմատ».

Կազմակերպության բոլոր անդամներին համառորեն խնդրում է, մեծ շահով օգտվելով կանոնադրության 33 հոդվածից, դիմել Միավորված Ազգերի Կազմակերպությանը խաղաղ լուծելու պետությունների միջև բարեկամական և բարիգրացիական հարաբերություններին խոչընդոտող կամ միջազգային խաղաղությանը սպառնացող հարցերը<sup>45</sup>: Նույն ոգով է կազմված ՄԱԿ-ի անդամ պետությունների համագործակցության վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի 1960 թ. հոկտեմբերի 17-ի բանաձևը: 1962 թ. դեկտեմբերի 18-ին Գլխավոր ասամբլեան ընդունեց 1815 (XVII) բանաձևը, որի մեջ առավել ծավալուն և հանգամանորեն մշակված են «Պետությունների բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի ըսկզբունքները՝ Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան»: Այս բանաձևը հավաստում է, որ ՄԱԿ-ի կանոնադրությունն ընդունելուց հետո աշխարհում տեղի ունեցած հսկայական քաղաքական, տնտեսական, սոցիալական և գիտական փոփոխությունները ավելի ուժեղ են ընդգծում Միավորված Ազգերի Կազմակերպության նպատակների և սկզբունքների ու արդի պայմաններում նրանց կիրառման կենսական նշանակությունը: Բանաձևն արձանագրում է ազատության, հավասարության և սոցիալական արդարության վրա հիմնված միջազգային խաղաղությունը պաշտպանելու և ամրապնդելու, հետևապես պետությունների միջև խաղաղ և բարիգրացիական հարաբերությունների զարգացման հրատապությունն ու կարևորությունը, անկախ պետությունների տարաձայնություններից կամ զարգացման մակարդակից, կամ նրանց քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման բնույթից: Բանաձևում հատկապես ընդգծվում է այն համոզմունքը, որ ժողովուրդներին օտարերկրյա ստրկացմանը, տիրապետությանն ու շահագործմանը ենթարկելը խոչընդոտ է համընդհանուր խաղաղություն և համագործակցություն հաստատելու ճանապարհին:

Գլխավոր ասամբլեան իր այդ բանաձևում ծայրահեղորեն կարևոր է համարում, որ բոլոր պետությունները իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ մնան ցանկացած պետության տերիտորիալ անձեռնմխելիության կամ քաղաքական

անկախության դեմ ուղղված ուժի սպառնալիքից և նրա կիրառումից, որ զարգարհցվի սպառադինությունների մրցավազքը և իրականացվի համընդհանուր ու լիակատար գինաթափում՝ միջազգային էֆեկտիվ վերահսկողության ներքո: Բանաձևում արձանագրված է շատ նոր պետությունների ծագման նշանակությունը և այն ներդրումը, որ կարող են նրանք կատարել միջազգային իրավունքի պրոգրեսիվ զարգացման և կոդիֆիկացման մեջ:

Հենվելով իր իրավունքի վրա՝ քննարկելու համագործակցության ընդհանուր սկզբունքները միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու գործում և հանձարարականներ տալու միջազգային իրավունքի պրոգրեսիվ զարգացումն ու նրա կոդիֆիկացումը խրախուսելու նպատակով, Գլխավոր ասամբլեան գտնում է.

1. Միջազգային իրավունքի պրոգրեսիվ զարգացման և ազգերի միջև իրավակարգ հաստատելու համար առաջնակարգ նշանակություն ունեն պետությունների բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքները և դրանցից բխող պարտականությունները, որոնք նշված են Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության մեջ, այն է.

ա) սկզբունք, որի համաձայն պետություններն իրենց հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան որևէ պետության տերիտորիալ անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված, կամ Միավորված Ազգերի Կազմակերպության նպատակներին չհամապատասխանող մի որևէ այլ ասպարեզում ուժի սպառնալիքից և ուժի կիրառումից.

բ) սկզբունք, որի համաձայն պետություններն իրենց միջազգային վեճերը պետք է լուծեն խաղաղ միջոցներով և այնպես, որպեսզի սպառնալիքի չենթարկեն միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և վնաս չհասցնեն արդարությանը.

գ) կանոնադրությանը համապատասխան պարտականություններ՝ չմիջամտել որևէ պետության ներքին իրավասության մեջ մտնող գործերին.

դ) պետությունների պարտավորություններ՝ համագործակցելու մեկը մյուսի հետ, կանոնադրությանը համապատասխան.

ե) ժողովուրդների իրավահավասարության ինքնորոշման ըսկզբունք.

ֆ) պետությունների սուվերեն հավասարության սկզբունք.

ց) սկզբունք, որի համաձայն պետությունները պետք է բա-

<sup>45</sup> Տե՛ս «Международное право» (Сборник документов), 1964, т. 7, 10—11:

րեխղճորեն կատարեն կանոնադրութեանը համապատասխան ստանձնած պարտավորութիւնները:

Քանաձևի 2-րդ կետում Գլխավոր ասամբլեան որոշել է ՄԱԿ-ի կանոնադրութեան 13-րդ հոդվածին համապատասխան ձեռնամուխ լինել պետութիւնների բարեկամական հարաբերութիւններին և համագործակցութեանը վերաբերող միջազգային իրավունքի՝ Միավորված Ազգերի Կազմակերպութեան կանոնադրութեանը համապատասխանող սկզբունքների ուսումնասիրմանը, նրանց պրոգրեսիվ զարգացման ու կողիֆիկացման և առավել էֆեկտիվ կիրառման նպատակով:

Հաջորդ կետերում և ենթակետերում նշված են այդ սկզբունքների կողիֆիկացումն իրականացնելու պայմաններն ու ընթացքին վերաբերող հարցերը:

ԳԼՈՒԽ ԳՆԹԵՐՈՐԴ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՄ

- § 1. Միջազգային պայմանագրերի իրավունքի հասկացությունը:  
§ 2. Միջազգային պայմանագրի հասկացությունն ու իրավաբանական բնույթը: § 3. Միջազգային պայմանագրերը կնքելու կարգը և փուլերը: § 4. Միջազգային պայմանագրերի վավերականությունը: § 5. Միջազգային պայմանագրի գործողությունը: § 6. Միջազգային պայմանագրի գործողության դադարումը:

### § 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՄԻ ԶԱՅԿՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Պետութիւնների միջազգային իրավական պրակտիկայում մշակվել են համապատասխան նորմեր ու սկզբունքներ, որոնցով միջազգային իրավունքի սուբյեկտները ղեկավարվում են միմյանց միջև պայմանագրեր կնքելու ժամանակ: Պայմանագիրը, որպես միջազգային իրավունքի հիմնական աղբյուր, կնքվում է ոչ թե պատահական, սիստեմից զուրկ՝ եղանակով, այլ միջազգային-իրավական և սովորութային նորմերի մի որոշակի համակարգի հիման վրա: Այսպես, օրինակ, ամեն ոք չէ, որ կարող է պետութեան կամ կառավարութեան անունից միջազգային պայմանագիր կնքել, այդ կարող են անել համապատասխան իրավազորութիւն ունեցող անձերը: Միջազգային պայմանագիրը որոշակի կառուցվածք ունի, որը մշակվել է դարերի ընթացքում և որին հետևում են պետութիւնները իրենց միջազգային-իրավական պրակտիկայում և այլն:

Միջազգային պայմանագրեր կնքելու կարգին վերաբերող սկզբունքներն ու նորմերը մեկընդմիջտ սահմանված չեն պետութիւնների կողմից, դրանք փոփոխվում ու զարգանում են ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան: Սակայն միջազ-

գային պայմանագրերի իրավունքին հայտնի են նաև այնպիսի սկզբունքներ ու նորմեր, որոնք հարաբերական առումով գործում են հարառակ իրավունքի այդ բնագավառի հիմնական սկզբունքներն են կազմում, ինչպես, օրինակ, pacta sunt servanda ըսկզբունքը:

Այսպիսով, միջազգային պայմանագրերի իրավունքը ասկզբում նկատի ունենք այն սկզբունքների ու նորմերի համակցությունը, որոնցով պետությունները ղեկավարվում են միջազգային պայմանագրեր կնքելու ժամանակ: Միջազգային պայմանագրերի իրավունքը միջազգային հանրային իրավունքի կարևոր բնագավառներից մեկն է:

Միջազգային պայմանագրի աճող նշանակությունը, որպես միջազգային իրավունքի հիմնական աղբյուր, թելադրում է, որպեսզի մշակվեն և կողմնորոշվեն բոլոր պետությունների կողմից ընդունելի համապատասխան սկզբունքներ ու նորմեր, որոնց հետևողական կիրառումը նախադրյալ կհանդիսանար ապահովելու պայմանագրերի օրինաչափությունը թե՛ միջազգային իրավունքի և թե՛ ներպետական իրավունքի տեսակետից:

Պետությունների փոխհարաբերություններում միջազգային պայմանագրի աճող դերի մասին են խոսում հետևյալ թվերը. առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կապիտալիստական պետությունների հարաբերություններում գործող պայմանագրերի թիվը հասնում էր 8 հազարի: 1920—1946 թթ. Ազգերի լիգայում գրանցվել և հրատարակվել է 4838 միջազգային պայմանագիր: ՄԱԿ-ի քարտուղարությունում առ փետրվարը 1962 թ. գրանցվել էր 6064 պայմանագիր և համաձայնագիր<sup>1</sup>:

Այդ խնդրի իրականացման համար կարևոր նշանակություն ունի միջազգային պայմանագրերի իրավունքի գործող սկզբունքների և նորմերի կողմնորոշման, որով երկար ժամանակ է ինչ ըզբաղվում են առանձին գիտնականներ և միջազգային կազմակերպություններ:

Այս հարցով հատկապես զբաղվում է ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը, որը 1966 թ. 18—19-ը հուլիսի (փաստ. A/6348) մշակեց պայմանագրերի վերաբերյալ կոնվենցիայի նախագիծը՝ «Պայմանագրերի իրավունքի հողվածների նախագիծ» անվան տակ:

1969 թ. մայիսի 23-ին այդ նախագծի բազայի վրա ընդուն-

վեց միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիան<sup>2</sup>, որի հիմքում դրված են պետությունների պայմանագրային հարաբերությունների պրակտիկայում ձևավորված և Միավորված Ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ մարմնավորված նորմերն ու սկզբունքները, ինչպիսիք են՝ pacta sunt servanda, ազգերի իրավահավասարության և ինքնորոշման, բոլոր պետությունների սուվերեն հավասարության և անկախության, պետությունների կերքին գործերին չմիջամտելու, ուժի ըսպառնալիքն ու այն կիրառելն արգելելու և այլ սկզբունքներ:

Կոնվենցիան բաղկացած է 8 մասից, 85 հոդվածից, ունի 65-րդ և 66-րդ հոդվածների կիրառումից բխող դատաքննություն, արբիտրաժի և հաշտարար պրոցեդուրայի մասին հավելված: Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիան մշակած կոնֆերանսը միաժամանակ ընդունեց ղեկավարացիա:

Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիային համընդհանուր մասնակցության վերաբերյալ:

Դեկլարացիա պայմանագրեր կնքելու ժամանակ ռազմական, քաղաքական կամ տնտեսական ճնշում գործադրելն արգելելու մասին:

Բանաձև միջազգային պայմանագրերի իրավունքի Վիեննայի կոնվենցիայի 1-ին հոդվածի վերաբերյալ:

Բանաձև պայմանագրեր կնքելու ժամանակ ռազմական, քաղաքական կամ տնտեսական հարկադրանք կիրառելն արգելելու մասին կոնվենցիայի կապակցությամբ:

Բանաձև, որը վերաբերում է միջազգային պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայի 66-րդ հոդվածին և այդ կոնվենցիայի հավելվածին:

§ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՑԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԻՐԱՎԱՐԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅՔԸ

Միջազգային պայմանագիրը դա երկու կամ ավելի պետությունների համաձայնեցված կամարտահայտությունն է՝ քաղաքական-տնտեսական կամ այլ բնույթի հարաբերություններում ներանց փոխադարձ իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ: Միջազգային պայմանագիրը որոշակիորեն արտահայտված համաձայնություն է երկու կամ ավելի թվով պետությունների կամ միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև նրանց հա-

<sup>1</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, էջ 266—267:

<sup>2</sup> Առ 1/Վ—1970 թ. կոնվենցիան վավերացված և գործողության մեջ չէր:

մար փոխադարձ իրավունքների և պարտականությունների սահմանման, փոփոխման կամ դադարեցման վերաբերյալ:

Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 2-րդ հատ. 2) կետի համաձայն «պայմանագիր» նշանակում է պետությունների միջև գրավոր ձևով կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնություն, անկախ այն բանից, թե այդպիսի համաձայնությունը տեղ է գտել մեկ փաստաթղթում, երկու կամ մեկը մյուսի հետ կապված մի քանի փաստաթղթերում, ինչպես նաև անկախ նրա կոնկրետ անվանումից:

Ինչպես արդեն ասված է այս դասընթացի 2-րդ գլխում, պայմանագիրը միջազգային իրավունքի գլխավոր աղբյուրն է, նրանով է, որ սահմանվում են պետությունների վարքագծի կանոնները միջազգային ասպարեզում: Պայմանագիրը իրավաբանական պարտականություններ և իրավունքներ է ծնում նրա մասնակիցների համար: Նա միջազգային իրավունքի սուբյեկտների վրա պարտականություն է դնում նաև քաղաքական ու բարոյական իմաստով: Այդ տեսակետից պայմանագիր կնքած կողմերը այսպես թե այնպես իրենց դնում են միջազգային վերահսկողության ներքո:

Միջազգային իրավական պրակտիկայում և գիտության մեջ ընդունված է պայմանագիրը վավերական համարել, եթե պահպանված են հետևյալ պայմանները.

1. պայմանավորվող կողմերը պետք է իրավասու լինեն,
2. միջազգային պայմանագիր կնքելու համար լիազորված անձերի լիազորությունները պետք է պատշաճ լինեն,
3. լիազորված անձերը պետք է համաձայնվեն ազատորեն (պետք է բացառվի բռնությունը նրանց նկատմամբ),
4. պայմանագրի օբյեկտը պետք է համապատասխանի միջազգային իրավունքին:

Վերջին պայմանի վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնադրության 103-րդ հոդվածում ուղղակի ասված է. «Այն դեպքում, երբ կազմակերպության Անգամների պարտավորությունները ըստ սույն կանոնադրության հակասության մեջ գտնվեն մի որևէ այլ միջազգային համաձայնագրով նրանց ստանձնած պարտավորությունների հետ, գերազասելի ուժ ունեն ըստ սույն կանոնադրության պարտավորությունները»:

ՄԱԿ-ի կանոնադրության այդ դրույթին համապատասխան, 1969 թ. մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 43-րդ հոդվածում ասված է. «Պայմանագրի անվավերականությունը, զազարումը կամ

դեմոնստրացիան, մասնակիցներից որևէ մեկի նրանից դուրս գալը կամ նրա գործողության կասեցումը, եթե դրանք հետևանք են սույն կոնվենցիայի կամ հենց պայմանագրի դրույթների կիրառման, ոչ մի շափով չեն շոշափում պետության պարտավորությունը՝ կատարելու պայմանագրում գրված ամեն մի պարտավորություն, որը նրա համար ուժ ունի միջազգային իրավունքին համապատասխան՝ անկախ պայմանագրից»:

Միջազգային իրավունքի տեսության մեջ ներկայացուցչի համաձայնությունը ազատությունը որպես պայմանագրի վավերականության պայման վիճարկվում է: Սակայն միջազգային իրավական պրակտիկային հայտնի են դեպքեր, երբ ուժի կամ նրա կիրառման սպառնալիքի ներքո կնքված պայմանագրի վավերականությունը հարցականի տակ է դրվել: Այսպես, օրինակ, 1526 թ. Ֆրանսիական թաղավոր Ֆրանցիսկ I հրաժարվեց իսպանացիների մոտ գերության մեջ եղած ժամանակ Մագրիդում Կառլոս V հետ կնքած պայմանագրից, հայտարարելով, որ այդ պայմանագիրն ինքը կնքել է բռնության և հարկադրանքի ներքո: 1939 թ. հիտլերյան Գերմանիան բռնության և հարկադրանքի ներքո Չեխոսլովակիայի ներկայացուցիչներին ստիպեց ստորագրել պետության ինքնասույանությունը համադրող պայմանագիր, որը, իհարկե, չի կարող վավերական համարվել:

Պայմանագրի վավերականությունը վիճարկելի է, երբ այն կնքելու ժամանակ տեղի է ունեցել էական փաստական սխալ: Փաստական սխալի դեպքում սովորաբար պայմանագրում ուղղում է մտցվում: Պատմության մեջ այդպիսի բնույթի սխալներ տեղի են ունեցել սահմանների որոշման կապակցությամբ: 1783 թ. սիսլեյի թղթի 3-ին Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի միջև կնքված պայմանագրում նշված էր, որ սահմանն անցնելու է Սեն-Կրուա գետի հոսանքով, որպիսին բնության մեջ գոյություն չունի, և Ս. Լավրենտիոս գետի ջրբաժան գծից հարավ, սակայն այդպիսի ջրբաժան գիծ անցկացնելը անհնարին եղավ, վիճք շարունակվեց մինչև նոր պայմանագրի կնքելը: Իտալիայի հետ 1947 թ. կնքած հաշտության պայմանագրի Ֆրանսերեն տեքստի 3-րդ հոդվածում բաց թողած մի տողի փոխարեն սխալմամբ գրվել էր բոլորովին ուրիշ տող:

Ըստ միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի պայմանագիրը անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ սխալը (հոդ. 48-րդ), խաբեղը (հոդ. 49-րդ), պետության ներկայացուցչին կաշառելը (հոդ. 50-րդ), պետության



ներկայացուցչին հարկադրելը (հոդ. 51-րդ), ուժի կամ նրա կիրառման սպառնալիքով պետությունը հարկադրելը (հոդ. 52-րդ), պայմանագրի հակասումը ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմին (jus cogens):

Միջազգային պայմանագրի սուբյեկտներ են նախ և առաջ սուվերեն պետությունները: Պայմանագրում որպես կողմ կարող են հանդես գալ պետությունը և միջազգային կազմակերպությունը, կամ պետություններն ու միջազգային կազմակերպությունը և կամ հենց իրենք՝ միջազգային կազմակերպությունները: Պետությունները որպես միջազգային պայմանագրի սուբյեկտներ հանդես են գալիս ամենաբազմապիսի հարաբերություններում: Պետությունների միջև կնքված պայմանագրերը բազմաթիվ են: Պետության և միջազգային կազմակերպության միջև պայմանագրի օրինակ կարող են ծառայել ՄԱԿ-ի և նրա անդամ-պետությունների միջև կնքվող պայմանագրերը, որոնց հիման վրա նրանք որոշակի զինված կոնտինգենտներ են դնում ՄԱԿ-ի տրամադրության տակ՝ վերջինիս կանոնադրային նպատակների իրականացման համար: Միջազգային կազմակերպությունների միմյանց միջև կնքված պայմանագրերից են ՄԱԿ-ի և նրա մասնագիտացված հիմնարկությունների միջև կնքված պայմանագրերը:

Մասնակիցների թվի տեսակետից միջազգային պայմանագրերը լինում են երկկողմանի և բազմակողմանի (կոլեկտիվ): Օրինակ, երկկողմանի պայմանագրեր են ՍՍՀՄ-ի և առանձին սոցիալիստական երկրների միջև կնքված փոխադարձ օգնության և համագործակցության պայմանագրերը, բազմակողմանի՝ Վարշավայի պայմանագիրը, ՄԱԿ-ի կանոնադրությունը և այլն: Առանձին իրավաբան-միջազգայնագետներ բազմակողմանի որոշ պայմանագրեր անվանում են համընդհանուր պայմանագրեր: Դրանք այն պայմանագրերն են, որոնց մասնակցում են բոլոր պետությունները կամ պետությունների մեծամասնությունը, ինչպես, օրինակ, Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությունը: Այս համընդհանուր բազմակողմանի պայմանագրերի օբյեկտը բոլոր կամ պետությունների մեծամասնության համար հետաքրքրություններ կայացնող հարցեր են: Այդ իմաստով էլ նման պայմանագրերին մասնակցելու հնարավորություն պետք է ունենան բոլոր պետությունները անկախ նրանցում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական կարգի ու կառավարման ձևի: Այլ կերպ ասած՝ ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների լուսի տակ նման պայմանագրերը պետք է բաց լինեն այն բոլոր պետու-

թյունների համար, որոնք իրենց միջազգային հարաբերություններում հետևում են միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների ու նորմերի պահանջներին:

Միջազգային պայմանագրի օբյեկտ կարող են լինել պետությունների քաղաքական հարաբերությունները (խաղաղության, անվտանգության, շեղջրության, շահաբաժան, տեղիտղիաները փոխանակելու կամ զիջելու հետ կապված հարցերը և այլն), տնտեսական հարաբերությունները (արտաքին առևտրի, փոխառությունների, տնտեսական համագործակցության հարցերը և այլն), կուլտուրական հարաբերությունները, ատոլոգիայի հարցերը, իրավաբանական օգնությունը և այլն, այսինքն՝ այն ամենը, ինչի շուրջը միջազգային իրավունքի սուբյեկտները մտնում են իրավահարաբերությունների մեջ:

Պայմանագրերը լինում են տարբեր տեսակի՝ քաղաքական, տնտեսական, վարչա-իրավական, կուլտուրական և այլն:

Քաղաքական պայմանագրերից են դաշնակցային պայմանագրերը, փոխօգնության պակտերը, սեզիոնալ համաձայնագրերը, շահաբաժան և շեղջրության վերաբերյալ պակտերը, հաշտության պայմանագրերը և այլն:

Դաշինքի վերաբերյալ պայմանագրերով կողմերը պայմանավորվում ու փոխադարձաբար պարտավորվում են որոշակի քաղաքական կացության վրա հասնելու կապակցությամբ կամ որոշակի շահեր պաշտպանելու նպատակով հանդես գալ և գործել համատեղ: Դաշնակցային պայմանագրերն իրենց բնույթով լինում են ընդհանուր և հատուկ, ժամանակավոր և մշտական, պաշտպանական և հարձակողական, ըստ որում վերջին բնույթի դաշինքները, լինելով ազրեսիվ, չեն կարող օրինաչափ համարվել: Որպես կանոն, դաշինքի պայմանագրում արձանագրվում են այն հանգամանքները, որոնց վրա հասնելու դեպքում կողմերից մեկը պետք է մտնի պատերազմի մեջ, որը մղում է մյուս կողմը կամ պատերազմ սկսի ի պաշտպանություն իր դաշնակցի: Այդպիսի հանգամանքները միջազգային իրավունքում լատիններեն տերմինով անվանում են casus foederis (տառացիտրեն «դաշինքի դեպք»): Նրկատի ունենալով casus foederis-ի խիստ կարևորությունը, այն դաշինքի պայմանագրում բանաձևվում է շափաղանց հստակ, որպեսզի նրա շուրջը ապագայում վեճեր չծագեն: Չնայած դրան բիշ չեն դեպքերը, երբ կապիտալիստական պետությունների միջև վեճեր են ծագել դաշինքի պայմանագրով նախատեսված casus foederis-ի շուրջը: Նման վեճեր սովորաբար ծագում են այն ժա-

մանակ, երբ կողմերից մեկի համար դաշինքի պայմանագիրը գաղարում է հետաքրքրություն ներկայացնել:

Քիչ չեն դեպքերը, երբ իմպերիալիստական պետությունները իրենց ստեղծած ագրեսիվ բռնկներին տալիս են դաշինքի, ռեզիտնալ պակտի, համագործակցության պայմանագրեր և այլ անուններ, ինչպիսիք են ՆԱՏՕ-ն, ՍԵԱՏՕ-ն, ՍԵՆՏՕ-ն և այլն:

ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների կնքած դաշինքի պայմանագրերը ծառայել ու ծառայում են միջազգային խաղաղության և անվտանգության շահերին և լիովին համապատասխանում են ՄԱԿ-ի կանոնադրությանը ազդարարված նպատակներին: Դաշինքի պայմանագրի տարատեսակներից է փոխօգնության պակտը, որը պաշտպանական նշանակություն ունեցող պայմանագիր է և կիրառվում է ՍՍՀՄ-ի միջազգային իրավական պրակտիկայում: Այդպիսի պակտեր Սովետական Միությունը կնքեց՝ 1935 թ. մայիսի 2-ին Ֆրանսիայի, 1935 թ. մայիսի 16-ին Չեխոսլովակիայի հետ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո փոխադարձ օգնության պայմանագրեր ՍՍՀՄ-ը կնքել է սոցիալիստական գրեթե բոլոր պետությունների հետ:

Փոխօգնության ռեզիտնալ պայմանագրի օրինակ է Վարշավայի 1955 թ. պայմանագիրը: Ռեզիտնալ պայմանագրերի մեջ պետք է ներգրավվեն աշխարհագրական միեկնույն շրջանում գրտնրվող պետությունները: Ռեզիտնալ փոխօգնության պայմանագրերի օրինակափունքները բխում է ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ և 52-րդ հոդվածների դրույթներից: Հիմնական պահանջն այն է, որ ռեզիտնալ պայմանագրի օրչեկտը համապատասխանի Միավորված Ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին:

Խախտելով ՄԱԿ-ի կանոնադրության պահանջները, իմպերիալիստական ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները ռեզիտնալ կազմակերպության անվան տակ ստեղծել են Արևմտաեվրոպական միությունը, Հյուսիսատլանտյան պակտի կազմակերպությունը և ագրեսիվ բնույթի այլ կազմակերպություններ:

Հարձակման պայմանագրի էությունն այն է, որ կողմերից մեկը պարտավորվում է մենակ կամ այլ պետությունների հետ համատեղ շարժակվել պայմանագիր մյուս կողմի վրա: Այդպիսի պայմանագրեր մեծ չափով կնքվեցին առաջին համաշխարհային պատերազմից հետո: Սովետական Միության կողմից կնքած շարժակման պայմանագրերը բացի միմյանց վրա շարժակվելուց նախատեսում են նաև փոխադարձ պարտավորություն՝ շեղոթություն

պահպանել, եթե մյուս կողմը ենթարկվի երրորդ պետության հարձակմանը (սովետա-աֆղանական 24—06—1931 թ. շեղոթության և փոխադարձ շարժակման պայմանագիրը, սովետա-ֆինլանդական 21—01—1932 թ. շարժակման պայմանագիրը, սովետա-իտալական 2.09—1933 թ. շարժակման պայմանագիրը, սովետա-թուրքական 17—12—1925 թ. բարեկամության և շեղոթության պայմանագիրը և այլն):

1953 թ. յուրատեսակ բազմակողմանի շարժակման պայմանագիր կնքելու առաջարկություն արվեց Վարշավայի պայմանագրի մասնակիցների կողմից ՆԱՏՕ-ի անդամ-պետություններին: Այդ առաջարկությունը հաստատվեց 4.02—1953 թ. դեկլարացիայում, որի համաձայն առաջարկվում էր շարժակման պայմանագիր կնքել մեկ կողմից Վարշավայի պայմանագրի մասնակից պետությունների և մյուս կողմից՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության մասնակիցների միջև: Դեկլարացիայում միաժամանակ նշվում էր, որ ոչ պակաս նշանակություն կունենար երկու խմբավորումներին պատկանող պետությունների միջև շարժակման երկկողմանի պայմանագիր կնքելը:

Քաղաքական պայմանագրերից են շեղոթության պայմանագրերը, որոնց մասնակիցները պարտավորվում են շմսնակցել երրորդ պետության և նրանցից մեկի միջև ծագած պատերազմին կամ մի որոշակի տերիտորիա չվերածել պատերազմի թատերաբեմի կամ ռազմական բազայի: Հայտնի են շեղոթության երկկողմանի և բազմակողմանի պայմանագրեր, ըստ որում շեղոթությունը կարող է լինել տվյալ ռազմական կոնֆլիկտի ժամանակամիջոցում կամ մշտական:

Չեղոթությունը դա պետության քաղաքական և իրավաբանական կացություն է, որի համաձայն պետությունը չի մասնակցում ուրիշ երկրների միջև ծագած պատերազմին և ռազմական օգնություն չի ցույց տալիս նրանցից որևէ մեկին:

Մշտական շեղոթության բազմակողմանի պայմանագրերից են Վիեննայի 1815 թ. Մվենյարիայի շեղոթության մասին պայմանագիրը և 1955 թ. Ավստրիայի մշտական շեղոթության վերաբերյալ պայմանագիրը: Մշտական շեղոթությունը պետությանը պարտավորեցնում է շմսնակցել որևէ պատերազմի, սակայն մշտական շեղոթ պետությունը ինքնապաշտպանության իրավունք ունի:

Որպես երկկողմանի շեղոթության պայմանագիր կարելի է հիշատակել 13.04—1940 թ. սովետա-ճապոնական շեղոթության պակտը:

Ինչ վերաբերում է հաշտության պայմանագրերին, ապա դժբանքով իրավաբանորեն վերացվում է պատերազմական վիճակը կոմունիստների միջև և հաստատվում են քաղաքական ու այլ բնույթի հարաբերություններ: Այդպիսի պայմանագրերից են 1947 թ. փետրվարի 10-ին Փարիզի հաշտության կոնֆերանսում հիտլերյան Գերմանիայի նախկին զաշնակիցների հետ կնքած հաշտության պայմանագրերը, որոնք ուժի մեջ մտան նույն թվականի սեպտեմբերի 15-ին:

Տնտեսական բնույթի պայմանագրերը կարևոր տեղ են գրավում միջազգային հարաբերություններում, դրանք բազմապիսի և բազմաթիվ են: Նրանց տարատեսակներից են առևտրական պայմանագրերը: Տնտեսական պայմանագրերի նպատակներն ու ուղղությունը սերտորեն կապված են նրանց մասնակիցների ընդհանուր քաղաքական կուրսի հետ: Օտարերկրյա պետությունների հետ ՄԱԶ-ի կնքած տնտեսական պայմանագրերը կառուցված են իրավահավասարության և փոխադարձ շահավետության սկզբունքի վրա: Դրան հակառակ, իմպերիալիստական պետությունները և առաջին հերթին ԱՄՆ-ը տնտեսական պայմանագրերն օգտագործում են փոքր ու թույլ երկրներին տնտեսապես իրենց ենթարկելու, ներքին կյանքում և արտաքին քաղաքականության ասպարեզում նրանց ինքնուրույնությունից զրկելու համար:

Վարչա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա ըստեղծվում են միջազգային վարչական միություններ ու կազմակերպություններ: Ինչպես, օրինակ, 1875 թ. կոնվենցիան համաշխարհային փոստային միություն ստեղծելու մասին:

Նրկորոգ համաշխարհային պատերազմից հետո մեծ տարածում են ստացել կուլտուրական համագործակցության վերաբերյալ համաձայնագրերը, որոնք մեծ նշանակություն ունեն ժողովուրդների միջև համագործակցությունն ամրապնդելու համար: Պետությունների միջև կուլտուրական համագործակցություն հաստատելը բխում է ՄԱԿ-ի կանոնադրության պահանջներից, ըստ որի պետությունները պետք է միջազգային համագործակցություն իրականացնեն տնտեսական, սոցիալական, կուլտուրական և հումանիտար միջազգային պրոբլեմները կարգավորելու համար: Միջազգային կուլտուրական համագործակցություն ասելով մենք հասկանում ենք իրավահավասար և փոխադարձ շահավետ փոխանակում բոլոր երկրների նյութական և հոգևոր նվաճումների ասպարեզում՝ ի շահ խաղաղության և բարեկամության ամրապնդման բոլոր ժողովուրդների միջև: Հենց այդ նպատակով ու սկզբունքներով

Սովետական Միությունը կուլտուրական համագործակցության համաձայնագրեր է կնքել աշխարհի պետություններից մեծ մասի հետ, առանց որևիցե խտրականության: Մինչդեռ իմպերիալիստական տերությունները խանգարում են միջազգային կուլտուրական կապերի ընդլայնմանը, մասնավորապես սոցիալիստական երկրների հետ:

Պետությունների միջև կայացվող համաձայնությունները տարբեր կերպ են կոչվում: Մեկ միասնական, պետությունների կողմից ճանաչված կամ սահմանված անվանացանկ գոյություն չունի, բացակայում է մի որոշակի շահանիշ այն մասին, թե որ համաձայնությունը ինչպես պետք է անվանել: Այնուամենայնիվ միջազգային պրակտիկայում ճանաչված են համաձայնությունների հետևյալ անունները.

Պայմանագիր՝ միջազգային բազմապիսի երկկողմանի և բազմակողմանի համաձայնությունների ամենատիպական և ամենատարածված անվանումն է, ինչպես, օրինակ, փոխադարձ օգնության պայմանագիր, առևտրական պայմանագիր, հաշտության պայմանագիր և այլն:

Տրակտատ են անվանում, սովորաբար, այն բազմակողմանի համաձայնությունները, որոնցով կողմերի համար սահմանում են հարաբերություններ մի շարք հարցերի շուրջ՝ քաղաքական կամ տնտեսական բնույթի և այլն:

Պակտ են անվանում երկկողմանի կամ բազմակողմանի միջպետական համաձայնությունները քաղաքական հարաբերությունների մի որևէ ասպարեզում՝ շահարձակման պակտ, չեղոքության պակտ և այլն:

Համաձայնագրեր են անվանում այն միջպետական պակտերը, որոնք կնքվում են կառավարության անունից կամ նրա հանձնարարությամբ և որոնք, որպես կանոն, վավերացման ենթակա չեն: Համաձայնագրեր կնքվում են ամենաբազմապիսի հարցերի վերաբերյալ: Հնարավոր է, որ առանձին համաձայնագրեր ենթակա լինեն վավերացման, երբ այդ պահանջվում է կողմերի կամ կողմերից մեկի օրենսդրությամբ, ինչպես, օրինակ՝ ՄԱԶ-ի և ՄՅԶ-ն միջև 1965 թ. հունիսի 7-ին կնքված համաձայնագիրը Սկոպլե քաղաքի վերականգնման համար Սովետական Միության կողմից տեխնիկական աջակցություն ցույց տալու և այդ նպատակով վարկ տրամադրելու վերաբերյալ:

Կոնվենցիաներ սովորաբար անվանում են այն համաձայնությունները, որոնք կարգավորում են պետությունների հարաբերու-

թյունները հատուկ բնագավառներում: Ինչպես, օրինակ՝ միջկառու-  
վարական միջազգային վարչական միություններ հիմնադրելու վե-  
րաբերյալ կոնվենցիաները, հյուպատոսական կոնվենցիաները,  
բաղաբաղիության հարցերը կարգավորող կոնվենցիաները և այլն:  
Դեկլարացիաներ և հայտարարություններ. — Դրանք երկու  
կամ ավելի թվով պետությունների միջև տեղի ունեցած բանակ-  
ցությունների, հանդիպումների արդյունքներն ընդհանրացնող ակ-  
տեր են: Դեկլարացիաներում սովորաբար հռչակվում են միջազ-  
գային հարաբերությունների և միջազգային իրավունքի ընդհանուր  
սկզբունքներ: Երբեմն պետությունները հրապարակում են համա-  
տեղ կոմյունիկաներ, որոնք բովանդակում են ինչպես ընդհանուր  
սկզբունքներ, այնպես էլ կոնկրետ փոխադարձ պարտավորություն-  
ներ (օրինակ՝ 1965 թ. մայիսի 19-ի սովետա-հնդկական համա-  
տեղ կոմյունիկան):

Պետությունների համար փոխադարձ իրավունքներ և պար-  
տավորություններ կարող են սահմանվել նախաների փոխանակ-  
ման միջոցով, ընդամին նման դեպքերում նոտաները նույնարտ-  
վանդակ են լինում: (1933 թ. նոյեմբերի 16-ին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի  
միջև զրվանագիտական հարաբերություններ հաստատելու վերա-  
բերյալ համաձայնությունը ձեռք բերվեց նոտաների փոխանակ-  
ման միջոցով):

Միջազգային համաձայնությունների տեսակներից են այսպես  
կոչված կուլտուրիստները: Այսպես են կոչվում այն համաձայնա-  
գրիեր, որոնց համաձայն պետությունների միջև ծագած վեճի լու-  
ծումը հանձնվում է միջնորդ կամ միջազգային այլ դատարանի  
(1957 թ. մարտի 7-ին Թելավիայի և Նիդեռլանդների միջև կայացվեց  
կոմպրոմիս մի շարք սահմանային հատվածների նկատմամբ սու-  
վերենության վերաբերյալ վեճը ՄԱԿ-ի Միջազգային դատարանի  
լուծմանը հանձնելու մասին):

Միջպետական համաձայնությունները կարող են կայացվել  
արձանագրություններում, որոնցում պետությունները ֆիքսացնում  
են ամենաբազմապիսի բնույթի հարցերի շուրջը ձեռք բերած հա-  
մաձայնությունները: Այսպես, օրինակ, 1945 թ. փետրվարի 11-ին  
Ղրիմի կոնֆերանսում ստորագրված արձանագրությամբ սահման-  
վեցին ՍՍՀՄ-ի՝ Հեռավոր Արևելքում պատերազմին մասնակցելու  
պայմանները, կամ 1963 թ. սեպտեմբերի 16-ին արձանագրություն  
ստորագրվեց ՍՍՀՄ-ի և Կանադայի միջև 1956 թ. փետրվարի 29-

ին կնքված առևտրական համաձայնագրի գործողության ժամկետը  
երկարաձգելու վերաբերյալ:

Կանոնադրություն և ստատուս են անվանում սահմանադրա-  
յին նշանակություն ունեցող կոլեկտիվ միջազգային ակտերը՝  
ՄԱԿ-ի կանոնադրությունը, ՏՓԽ-ի կանոնադրությունը, ՄԱԿ-ի  
միջազգային դատարանի ստատուտը և այլն:

Երբեմն էլ պետությունների միջև կայացված համաձայնու-  
թյունները ուղղակի անվանում են ակտ, օրինակ, 1815 թ. Տ(20)  
նոյեմբերի Ակտը Շվեյցարիայի մշտական չեզոքությունը և տերի-  
տորիալ անձեռնմխելիությունը ձանաչելու և երաշխավորելու վե-  
րաբերյալ:

Պայմանագրերի կառուցվածքը և ձևը: Միջազգային պայմա-  
նագրերը հետևյալ մոտավոր կառուցվածքն ունեն. պրեամբուլա,  
հիմնական մաս և եզրափակիչ մաս: Միջազգային պայմանագրի  
պրեամբուլայում կամ ներածական մասում նշվում է, թե որ պե-  
տությունների միջև է կնքվում պայմանագիրը, ովքեր են նրանց  
անունից կնքում պայմանագիրը, արձանագրվում է, որ լիազոր-  
վածները փոխադարձաբար ստուգել են միմյանց լիազորությու-  
նները, հավաստվում է լիազորությունների պատշաճությունը: Պրե-  
ամբուլայում սովորաբար նշվում է պայմանագրի կողմերի հետա-  
պընդած նպատակը: Այս հանգամանքը կարևոր նշանակություն ու-  
նի ոչ միայն պայմանագրի պետությունների, այլև երրորդ պետու-  
թյունների համար, քանի որ երրորդ պետությունների համար միե-  
նույն չէ, թե ինչի՞ շուրջն են պայմանավորվում և ի՞նչ նպատակ-  
ներ են հետապնդում պայմանագրի մասնակիցները:

Պայմանագրի հիմնական մասում հորված առ հորված շարա-  
դրվում են կողմերի փոխադարձ իրավունքներն ու պարտավորու-  
թյունները ըստ սվյալ պայմանագրի:

Եզրափակիչ մասում նշվում է նրա գործողության մեջ մըտ-  
նելու կարգը, վավերագրերը փոխանակելու վայրը, պայմանագրի  
ժամկետը, այդ ժամկետը երկարաձգելու կարգը, նրանից հրա-  
ժարվելու կարգը, նրան միանալու կարգը՝ եթե պայմանագիրը  
բաց է:

Միջազգային պայմանագրերին երրորդ պետությունների միա-  
նալու հնարավորության տեսակետից պայմանագրերը լինում են  
փակ և բաց: Փակ են համարվում այն պայմանագրերը, որոնք  
կնքված լինելով երկու կամ ավելի թվով պետությունների միջև,  
չեն նախատեսում երրորդ պետությունների՝ այդ պայմանագրին  
միանալու հնարավորությունը: Իսկ բաց են համարվում այնպիսի-

ներք, որոնց կարող են միանալ երրորդ պետությունները՝ պայմանագրում նշված կարգով և նախատեսված պայմաններով: Փակ պայմանագրեր են երկկողմանի փոխօգնության պայմանագրերը, առևտրական պայմանագրերը, կուլտուրական փոխանակման համաձայնագրերը և այլն: Բաց պայմանագրերից են՝ Վարշավայի 1955 թ. պայմանագրերը, տնտեսական փոխօգնության խորհրդի վերաբերյալ 1949 թ. հունվարին Մոսկվայում կնքված համաձայնագիրը, Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությունը և այլն:

Կան նաև այսպես կոչված ներփակ համաձայնագրեր: Սրանք այն համաձայնագրերն են, որոնք նախատեսում են այդ համաձայնագրին որոշ երկրների միանալու հնարավորությունը, իսկ ուրիշների՝ ոչ: Այգպիսի ներփակ համաձայնագրերից են ԱՄՆ-ի նախաձեռնությամբ կնքված ազրեսիվ բլոկներ ստեղծելու մասին համաձայնագրերը (ՆԱՏՕ, ՍԵԱՏՕ և այլն): ԱՄՆ-ը և ազրեսիայի գծով նրա դաշնակիցներն ամեն ջանք գործադրում են, որպեսզի որքան հնարավոր է նոր երկրներ ներգրավեն այդ խմբավորումների մեջ, բացառությամբ սոցիալիստական պետությունների, և երբ Սովետական Միությունը փորձեց մտնել ՆԱՏՕ-ի կազմի մեջ՝ նրան մերժեցին:

Ձևի տեսակետից միջազգային պայմանագրերը լինում են գրավոր և բանավոր: Տիպական է և լայն շահով կիրառվում է միջազգային պայմանագրերի գրավոր ձևը, որը, իհարկե, գերազասելի է: Միջազգային պրակտիկային, թեկուզ սահմանափակ շահով, հայտնի են նաև բանավոր կամ, ինչպես ընդունված է ասել, ջենտլմենային պայմանագրեր: Սա տեղի ունի այն ժամանակ, երբ պետությունները հանդես են գալիս փոխադարձաբար պարտավորություններ և իրավունքներ ծնող բանավոր հայտարարություններով, հնարավոր է, որ այդ հայտարարությունները գրավոր տեսք ընդունեն, բայց չեն ստորագրվում որպես գրավոր պայմանագրեր: Վերջին բանավոր պայմանագրերից էր 1937 թ. Անգլիայի և Իտալիայի միջև կնքված համաձայնագիրը՝ Միջերկրական ծովի ստատուսի վերաբերյալ: Որպես ջենտլմենային պայմանագրի օրինակ կարելի է բերել 1698 թ. Պետրոս I և Օղոստոս II-ի միջև բանավոր կերպով ձեռնկերպված դաշինքը, 1934 թ. հունվարի 27-ին ՍՍՀՄ-ի և ՄԺՀ-ն միջև՝ փոխօգնության պայմանագիրը, 1946 թ. Լոնդոնում ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Զինատանի միջև ջենտլմենային համաձայնություն ձեռք բերվեց Անվտանգության խորհրդի ոչ մշտական վեց անդամներին ընտրելու ժամանակ դե-

կավարվել աշխարհագրական արդարացիության սկզբունքով և այլն:

Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի մոնվենցիայի 2 հոդ. 1-ին կետի ձ) ենթակետը նախատեսում է պայմանագրի գրավոր ձևը, շրջացառելով նաև բանավոր ձևը (հոդ. 3-րդ):

Միջազգային պայմանագրերի իրավունքում հատուկ տեղ է պրավում լեզվի հարցը: Մինչև XVII դարը միջազգային հարաբերություններում գերիշխում էր լատիներենը, XVII դարից, մասնավորապես XVIII դարում՝ ֆրանսերենը: Վերսալյան կոնֆերանսում ֆրանսերենի կողքին միջազգային լեզու ճանաչվեց անգլերենը: Միջազգային հարաբերություններում այժմ շատ ավելի օգտվում են անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներից: ՄԱԿ-ում պաշտոնական լեզուներ են ճանաչված ռուսերենը, անգլերենը, ֆրանսերենը, շինարենը և իսպաներենը:

Պայմանագիր կնքելու ժամանակ լեզվի հարցը լուծում են պայմանավորվող կողմերը: Երբ պայմանագրերը երկկողմանի են, ապա նրանք, որպես կանոն, կնքվում են կողմերի լեզուներով: Սովետական Միությունը ելնում է միջազգային հարաբերություններում բոլոր ժողովուրդների լեզուների հավասարությունից, այդ սկզբունքով էլ կնքում է երկկողմանի պայմանագրերը: Երբ պայմանագիրը բազմակողմանի է, ապա նրա մասնակիցները ընտրում են միջազգային հարաբերություններում ավելի շատ գործածվող լեզուներից մեկը:

Պայմանագրերը կրթման ունենում են հավելվածներ: Որպես հավելված կարող է լինել արձանագրությունը, որը պարզաբանում է պայմանագրում տեղ գտած այս կամ այն դրույթը: Պայմանագրին կարող են կցվել ցուցակներ՝ մատակարարման ենթակա ապրանքների կոնտինգենտների և այլնի վերաբերյալ: Պայմանագրին կարող է կցվել կողմերից մեկի դեկլարացիան՝ պայմանագրի առանձին հոդվածների դրույթների և սկզբունքների իր ըմբռնման վերաբերյալ: Բանակցությունների պրոցեսում կողմերը կարող են նոտաներ փոխանակել այս կամ հարցի շուրջը և այդ նոտաները դարձնել որպես պայմանագրի հավելվածներ: Պայմանագրին որպես հավելվածներ կցվում են քարտեզներ (սահմանների վերաբերյալ, և ըստ անհրաժեշտության նաև այլ նյութեր:

Կողմերի համաձայնությամբ հավելվածները կարող են դիտվել որպես պայմանագրի անկապտելի մաս, այս դեպքում նրանք պայմանագրին հավասար իրավաբանական ուժ ունեն:

Միջազգային պայմանագրեր կնքելու որոշակի կարգ գոյություն ունի, որը սահմանվում է ներպետական իրավունքի և միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերով: Պայմանագիր կնքելու իրավունքը պետության հիմնական իրավունքներից է: Պայմանագիր կնքելու իրավունքը մտնում է պետության իշխանության մարմինների առանձնաշնորհումների մեջ: Սահմանադրությամբ որոշվում է, թե կոնկրետ որ մարմինը ինչ բնույթի պայմանագիր կնքելու լիազորություն ունի: Ամենուրեք ընդունված կարգն այն է, որ պետության անունից պայմանագիր կնքելու իրավունքը վերապահված է պետության գլխին: Բացարձակ միապետության շրջանում միահեծանը միջազգային պայմանագրեր էր կնքում առանց որևէ վերահսկողության, պառլամենտական կարգերին անցնելու կապակցությամբ պետության գլխի այդ իրավասությունը սահմանափակվում է, և սահմանվում է օրենսդրական մարմինների որոշ վերահսկողություն: Բուրժուական երկրներում պառլամենտների վերահսկողության ֆունկցիան պահպանվում է այժմ էլ:

Միջազգային պայմանագիր կնքելու իրավունքը երբեմն հանձնարարվում է պետության այլ մարմինների: Այն երկրներում, որտեղ պայմանագիր կնքելու իրավունքը ըստ սահմանադրության վերապահված է բացառապես պետության գլխին, կառավարությունը և անգամ առանձին գերատեսչություններ նույնպես կարող են կնքել միջազգային համաձայնագրեր: Այդպիսի համաձայնությունները կոչվում են միջկառավարական համաձայնագրեր (Intergovernmental agreements), երբ կնքվում են կառավարությունների միջև և միջգերատեսչային համաձայնագրեր (interdepartmental agrments), երբ նրանք կնքվում են գերատեսչությունների միջև:

Ընդունված կարգն այն է, որ որպես կանոն կառավարություններն իրավասու չեն կնքել վավերացման ենթակա պայմանագրեր: Միջազգային պայմանագրեր կնքելու հանձնարարված իրավունքից օգտվում են բանակների և նավատորմերի հրամանատարները:

Նրանք ռազմական բնույթի համաձայնագրեր են կնքում (զինադադարի, կապիտուլյացիայի և այլն):

Միջազգային պայմանագիր կնքելու իրավունքը կարող է հանձ-

նարարվել նաև միջազգային կազմակերպությանը, նրա կանոնադրության շրջանակներում:

ՍՍՀՄ օրենսդրությամբ ՍՍՀՄ-ի անունից միջազգային պայմանագրերի կնքումը, վավերացումը և դեռնոսացիան նրա պետական իշխանության գերազույն մարմինների առանձնաշնորհումների մեջ է մտնում: 1938 թ. օգոստոսի 20-ի՝ ՍՍՀՄ միջազգային պայմանագրերի վավերացման և դեռնոսացման կարգի մասին օրենքով սահմանված է, որ ՍՍՀՄ սահմանադրության 49-րդ հոդ. «մ» կետին համապատասխան միջազգային պայմանագրերը վավերացնում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը: Վավերացման ենթակա են Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կնքած հաշտության պայմանագրերը, ազդեցիկից փոխադարձաբար պաշտպանելու պայմանագրերը, փոխադարձ չհարձակման պայմանագրերը, ինչպես նաև այն միջազգային պայմանագրերը, որոնց կնքման ժամանակ կողմերը պայմանավորվել են նրանց հետագա վավերացման շուրջ (հոդ. 2-րդ):

Վավերացված միջազգային պայմանագրերի դեռնոսացիան կատարվում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով (հոդ. 3-րդ)<sup>2</sup>:

ՍՍՀՄ վավերացման ոչ ենթակա պայմանագրերը սովորաբար կնքում է ՍՍՀՄ կառավարությունը:

Սովետական միութենական հանրապետությունների անունից միջազգային պայմանագրեր կնքելու են նրանց գերագույն սովետների նախագահություններն ու կառավարությունները:

Երբ պետության գլուխը ինքն անձամբ բանակցություններ չի վարում և պայմանագիր չի կնքում, ապա նշանակում է հատուկ ներկայացուցիչներ բանակցություններ վարելու և պայմանագիր կնքելու համար: Այդ ներկայացուցիչին կամ ներկայացուցիչներին տրվում է լիազորություն (լիազորագիր) պետության գլխի ստորագրությամբ և հաստատված պետական կնիքով: Լիազորությունը վավերացնում է արտաքին գործերի մինիստրը: Սովետական Միությունում նման լիազորությունը ստորագրում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահը և վավերացնում է (скрепляет—ստորագրություն է դնում) արտաքին գործերի մինիստրը:

Երբ պայմանագիրը կնքում է կառավարության գլուխը կամ

<sup>2</sup> Տե՛ս «Современное международное право», (Сборник документов), 1964, էջ 275:

արտաքին գործերի մինիստրը՝ հատուկ լիազորագիր սովորաբար չի պահանջվում, սակայն վավերացման ենթակա պայմանագրերը առանց հատուկ լիազորությունների կնքում է պետության գլուխը:

Միջկառավարական և միջգերատեսչային պայմանագրեր կնքելու համար լիազորություններ համապատասխանաբար տալիս են կառավարության և գերատեսչության գլուխները:

Պայմանագրի շուրջը բանակցություններ սկսելուց առաջ լիազորները փոխադարձաբար ստուգում են մեկը մյուսի լիազորությունները, որպիսի փաստը արձանագրվում է պայմանագրի պրեամբուլայում: Եթե պայմանագիրը բազմակողմանի է, ապա ստեղծվում է լիազորությունները ստուգող հանձնաժողով, որը ըստուգումների արդյունքների մասին զեկուցում է կոնֆերանսին:

Պայմանագրեր կնքելու համար լիազորված անձերը ընդունող երկրում օգտվում են անձի անձեռնմխելիության, իրենց կառավարությունների հետ ազատորեն կապ պահպանելու իրավունքից և այլն: Ներկայացուցիչների նկատմամբ ամեն կարգի բռնություն պետք է բացառվի: Լիազորները պարտավոր են գործել իրենց լիազորությունների սահմաններում միայն և իրենց տրված հրահանգներին համապատասխան:

Միջազգային պայմանագրերը կնքվում են կամ անմիջական դիվանագիտական բանակցությունների (որպես կանոն երկկողմանի պայմանագրերի դեպքում) կամ միջազգային կոնֆերանսներ հրավիրելու միջոցով: Սովորաբար յուրաքանչյուր լիազոր կամ պատվիրակություն բանակցությունների է ներկայանում ապագա պայմանագրի իր նախագծով: Միջազգային բազմակողմանի պայմանագրերի նախագծերն այժմ ավելի շատ նախապատրաստվում են Միավորված Ազգերի Կազմակերպության համապատասխան օղակներում և նրա մասնագիտացված հիմնարկություններում:

Պայմանագիրը կնքելու փուլերը: Պայմանագիր կնքելու առաջին փուլը այսպես կոչված նախակնքումն է՝ պայմանագրի կամ նրա առանձին հոդվածների տակ լիազորների անվանատուրքը զնելու միջոցով: Պայմանագրի նախակնքումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ միջազգային համաձայնագրի շուրջը բանակցությունների մասնակիցները լիակատար համաձայնության են եկել, սակայն պայմանագիրը կնքող կառավարությունների հավանության կարիք է զգացվում, կամ հավանության արժանացած պայմանագրի տեքստի պաշտոնական ստորագրումը հետաձգվում է մի որևէ պատճառով: Պայմանագրի նախակնքումը պարտադիր չէ: Համաձայնեցված տեքստի ստորագրումը կարող է ուղղակի հե-

տաձգվել, երբ մանավանդ կողմերի պայմանավորվածությունը ֆիկսացված է նիստերի արձանագրություններում: Երբ պայմանագրի վերջնական ստորագրմանը խոչընդոտող հանգամանքները վերացված են, տեղի է ունենում նրա ստորագրումը: Պայմանագրի եղբայրակիչ մասում որոշվում է նրա ավտենտիկությունը, այսինքն՝ լուծվում է այն հարցը, թե տեքստերից որը պետք է դիտվի որպես հիմնական բնագիր: Այսպիսի հարց ծագում է, երբ պայմանագիրը կազմվում է մեկից ավելի լեզուներով: Պայմանագիր կողմերը որոշում են, թե որ լեզվով կամ լեզուներով տեքստերն են համարվում բնագիր: Սովետական Միության պայմանագրային պրակտիկայում երկկողմանի պայմանագրերի երկու լեզվով օրինակներն էլ համարվում են ավտենտիկ, այսինքն՝ համարվում են բնագրեր և հավասարազոր են: Հայտնի են նաև այնպիսի դեպքեր, երբ պայմանագիրը գրվում է երկու լեզվով, սակայն լեզուներից մեկով գրված օրինակն է համարվում բնագիր, ինչպես, օրինակ, Ռուս-Ճապոնական 1905 թ. սեպտեմբերի 5-ի Միմոնեսեկի հաշտության պայմանագիրը կնքվել էր անգլերեն և ֆրանսերեն, բայց ավտենտիկ համարվեց ֆրանսերեն տեքստը:

Առաջնորդում բազմակողմանի պայմանագրերը կազմվում էին մեկ լեզվով, գերազանցապես ֆրանսերեն, իսկ այժմ՝ մի քանի լեզուներով, ընդամին բոլոր լեզուներով տեքստերն էլ բնագիր են համարվում, որով ընդգծվում է լեզուների հավասարությունը: ՄԱԿ-ի կանոնադրությունը կազմվել է ռուսերեն, չինարեն, ֆրանսերեն, անգլերեն և իսպաներեն լեզուներով և բոլոր տեքստերն էլ հավասարապես բնագիր են ճանաչված:

Երբ պայմանագրի բովանդակության շուրջը վեճեր են ծագում, ապա կողմերը իրավունք ունեն անվանակոչել այն տեքստը, որը պայմանագրով բնագիր է ճանաչված:

Միջազգային պայմանագրի իրավունքի նորմերով սահմանված է պայմանագրերը ստորագրելու որոշակի կարգ՝ ալտերնատ (լատ. alternare-հերթադայել), որի համաձայն տվյալ պայմանագիր կողմի համար նախատեսվող օրինակում այդ կողմի անունը, նրա լիազորների ստորագրությունը, կնիքը, ինչպես նաև այդ պայմանագրի կողմի լեզվով տեքստը գրվում են առաջին տեղում: Ստորագրությունների համար առավել պատվավոր տեղ է համարվում պայմանագրի տեքստի տակ ձախ կողմում, իսկ եթե ստորագրությունները հաջորդում են մեկը մյուսին՝ վերևի տեղը<sup>3</sup>:

<sup>3</sup> Տե՛ս «Дипломатический словарь», 4. I. 1960 թ., էջ 143, 39—40:

Այստեղից կիրառումը ընդգծում է կողմերի հավասարությունը: Երկկողմանի պայմանագրերում յուրաքանչյուր կողմ ստորագրում է իր օրինակի ձախ մասում, իսկ մյուս կողմը՝ նույն տողի վրա աջ կողմում: Եթե պետություններին ներկայացնում են պատվիրակություններ, ապա պատվիրակները ստորագրում են այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ նրանք հաստատված են իրենց պետության տված լիազորություն մեջ:

Քաղաքակրթական պայմանագրերի դեպքում լիազորների ստորագրությունները գրվում են մեկը մյուսի հետևից այբբենական կարգով, հիմք ընդունելով պետությունների անունները: Այբբենի հարցը լուծում են պայմանագրի մասնակիցները, պայմանագրի տեքստի ընդունման կարգը որոշվում է միջազգային կոնֆերանսներում:

**Վավերացում:** Միջազգային պայմանագրի կնքման հաջորդ փուլը ստորագրված միջազգային պայմանագիրը պետական իշխանության բարձրագույն մարմնի կողմից վավերացնելը՝ հաստատելն է: Վավերացումը ձևակերպվում է հատուկ ակտով, որը կոչվում է վավերագիր: Վավերագիրը կազմված է երեք մասից. 1. ներածական մասում նշվում է, որ վավերացնողը ծանոթացել է վավերացվող պայմանագրին, 2. հիմնական մաս, որը կարող է բովանդակել վավերացվող պայմանագրի ամբողջ տեքստը կամ միայն վերնագիրն ու պրեամբուլան, 3. եզրափակիչ մաս, որտեղ հայտարարվում է, որ պայմանագիրը վավերացվում և կատարվելու է տվյալ պետության կողմից: Վավերագիրը ստորագրում է պետության գլուխը և կնքվում պետական կնիքով:

Ստորագրված պայմանագրի վավերացումից հրաժարվելը չի դիտվում որպես անիրավազոր քայլ, սակայն չի թույլատրվում վավերացման պրոցեսում փոփոխություններ մտցնել ստորագրված պայմանագրի տեքստի մեջ կամ վավերացնել պայմանագրի հոգվածների մի մասը և չվավերացնել մյուս մասը: Սակայն թույլատրվում է անել վերապահումներ, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է քաղաքակրթական պայմանագրերին միանալուն:

Եթե պայմանագիրը երկկողմանի է, տեղի է ունենում վավերագրերի փոխանակում, ըստ որում այդ արարողությունը, որպես կանոն, կատարվում է այն կողմի մայրաքաղաքում, որի հողում չի ստորագրվել վավերացվող պայմանագիրը: Վավերագրերի փոխանակման արարողությունը ձևակերպվում է հատուկ արձանագրությամբ, որը ստորագրում են լիազորված անձնավորությունները: Երբ պայմանագիրը քաղաքակրթական է, ապա վավերագրերի փո-

խանակման հարցը այլ կերպ է լուծվում: Պայմանագիր կողմերը որոշում և արձանագրում են, թե մասնակիցներից որ պետությունը կամ պետություններն են ավանդապահ, որին պետք է ի պահ հանձնեն վավերագրերը:

Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 16-րդ, 76-րդ, 77-րդ հոդվածները կարգավորում են վավերագրերի փոխանակման, պայմանագրերի ավանդապահներ նշանակելու և ֆունկցիաներին վերաբերող հարցերը:

Եթե պայմանագրով այլ բան չի նախատեսված, ապա վավերագրերը ընդունելու, հաստատելու կամ միանալու վերաբերյալ փաստաթղթերը նշանակում են պետության համաձայնությունը պայմանագիրը իր համար պարտադիր լինելու մասին՝ պայմանագիր պետությունների միջև այդպիսի փոխանակելու, ավանդապահին հանձնելու կամ, եթե պայմանավորվել են այդպես, նրանց մասին պայմանագրի պետություններին կամ ավանդապահին ծանուցելու պահից:

Ավանդապահ (դեպոզիտարիա) կարող է լինել մեկ կամ մի քանի պետություն, միջազգային կազմակերպություն կամ այդպիսի կազմակերպության պիսավոր գործադիր պաշտոնական անձը: Ավանդապահի ֆունկցիաներն են՝ պայմանագրի բնագիրը և ավանդապահին հանձնված լիազորությունները պահելը, պայմանագրի բնագրից վավերացված պատճեններ հանելը, այդպիսի մասնակիցներին և այն պետություններին ուղարկելը, որոնք իրավունք ունեն պայմանագրի մասնակից դառնալու, պայմանագիրը Միավորված Ազգերի Կազմակերպության քարտուղարությունում գրանցելը և այլն:

Բերենք մի քանի օրինակ, 1921 թ. հոկտեմբերի 13-ին Ղարսում՝ Թուրքիայի և անգրկովկասյան հանրապետությունների միջև կնքված պայմանագրի վավերագրերը փոխանակվեցին Երևանում:

Վարչավայի 1955 թ. մայիսի 14-ի քաղաքակրթական պայմանագրով ավանդապահ պետությունը Ահաստանն է: Միջազգային մի շարք պայմանագրերի ավանդապահ-պետություն է ՍՍՀՄ-ը (Մոսկվայի 1929 թ. փետրվարի 9-ի արձանագրության, Ռումինիայի, Հունգարիայի, Բուլղարիայի և Ֆինլանդիայի հետ 1947 թ. փետրվարի 10-ին կնքած հաշտության պայմանագրերի, 1955 թ. մայիսի 15-ի Ավստրիական պետական պայմանագրի և այլն):

Երբեմն միջազգային պայմանագիրը, իր բնույթով չլինելով վավերացման ենթակա, պայմանագիր կողմերի որոշմամբ ներ-



կայացվում է կառավարություններին ի հավանություն: Կառավարության կողմից միջազգային պայմանագրի հաստատումը անվանում են «կոնֆիրմացիա»:

Բացառիկ չեն այն դեպքերը, երբ պետությունները հրաժարվել են վավերացնել ստորագրված միջազգային պայմանագրերը: Օրինակ, Ռուսաստանը չվավերացրեց Նապոլեոնի հետ 1806 թ. կրնքած պայմանագիրը, Արգենտինան՝ 1827 թ. Բրազիլիայի հետ ըստորագրած պայմանագիրը: 1920 թ. օգոստոսի 10-ին Թուրքիայի հետ Սերում կնքած պայմանագիրը նրա ոչ մի մասնակից չվավերացրեց և այլն:

Պայմանագիրը չվավերացնելը անիրավազոր քայլ չի դիտվում, սակայն այսպես թե այնպես բնութագրում է պետության վարքագիծը: ԱՄՆ-ը մինչև հիմա չեն վավերացրել Ժնևի 1925 թ. հունիսի 17-ի՝ պատերազմում հեղձուցիչ, թունավոր և նման այլ զազերի ու մանրէաբանական միջոցների օգտագործումն արգելելու մասին արձանագրությունը, որպիսի հանգամանքը ԱՄՆ-ի աղբյուրի վրա դիտավորությունների հատկանիշ է:

Սովորաբար պայմանագրերում չեն նշվում վավերացման և վավերագրերի փոխանակման ժամկետները, ուստի քիչ չեն դեպքերը, երբ պայմանագրերը վավերացվում են մեծ ուշացումներով: Արբիտրաժի վերաբերյալ Ֆրանս-Շվեյցարական 1925 թ. ապրիլի 6-ի պայմանագիրը Ֆրանսիան վավերացրեց 1934 թ. մարտի 9-ին, իսկ պոնոնգրաֆիկ հրատարակությունների տարածումն արգելելու մասին Ժնևի 1923 թ. սեպտեմբերի 12-ի կոնվենցիան՝ 1940 թ. մարտի 12-ին:

Բաց և բազմակողմանի պայմանագրերին միանալու որոշակի կանոններ են գործում: Նախ և առաջ բաց բազմակողմանի պայմանագրում նշվում են այն պայմանները, որոնց առկայության դեպքում այլ պետություններ կարող են միանալ այդ պայմանագրին: Այսպես, օրինակ, Վարշավայի (1955 թ. 14-ը մայիսի) պայմանագրի 9-րդ հոդվածում ասված է. «Սույն պայմանագիրը բաց է մյուս պետությունների միանալու համար, անկախ նրանց հասարակական և պետակազմ կարգից, որոնք պատրաստակամություն կհայտնեն սույն պայմանագրին մասնակցելու միջոցով նպաստելու խաղաղասեր պետությունների ջանքերի միավորմանը՝ խաղաղությունն ու ժողովուրդների անվտանգությունը ապահովելու նըպատակով: Այդպիսի միանալը ուժի մեջ կմտնի պայմանագրի մասնակից-պետությունների համաձայնությամբ՝ միանալու վերա-

բերյալ փաստաթուղթը ևեհական Ժողովրդական Հանրապետության Կառավարությանն ի պահ հանձնելուց հետո»<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է այսպես կոչված լայն միջազգային բազմակողմանի պայմանագրերին միանալու հարցին, ապա սկզբունքորեն նրանց միանալը պետք է ազատ լինի առանց խտրականության: Այդպիսին է Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների դիրքը: Բազմակողմանի կոնվենցիաներ կնքելու վերաբերյալ տեղի ունեցող կոնֆերանսներում արևմտյան տերությունները առաջ են քաշում այնպիսի ֆորմուլա, որի համաձայն այդպիսի կոնվենցիաներին մասնակցել կամ միանալ կարող են միայն ՄԱԿ-ի անդամները, կամ նրա մասնագիտացված հիմնարկությունների անդամները, կամ ՄԱԿ-ի միջազգային դատարանի ստատուսի մասնակիցները, ինչպես նաև այլ երկրներ, որոնց հատկապես կհրավիրի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան: Այդ խտրականությունն ուղղված է սոցիալիստական երկրների՝ Գերմանական Գեմոկրատական Հանրապետության, Կորեական Ժողովրդական Գեմոկրատական Հանրապետության, Վիետնամի Գեմոկրատական Հանրապետության դեմ, որոնք վերևում հիշատակված կազմակերպություններից ոչ մեկի անդամ չեն:

Միջազգային պայմանագրերի գրանցումը: ՄԱԿ-ի կանոնադրության 102-րդ հոդվածը Կազմակերպության անդամ պետություններին պարտավորեցնում է իրենց կողմից կնքած միջազգային ամեն մի պայմանագիր և համաձայնագիր գրանցել ՄԱԿ-ի քարտուղարությունում, որը հրատարակում է գրանցված բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը: Նույն հոդ. 2-րդ կետի բովանդակությունը նախազգուշացնում է, որ չգրանցված պայմանագրի և համաձայնագրի ոչ մի մասնակից Միավորված Ազգերի Կազմակերպության ոչ մի օրգանում չի կարող անվանակոչել այդպիսի պայմանագիրը կամ համաձայնագիրը: Քարտուղարությունում գրանցված պայմանագրերը հրատարակվում են ՄԱԿ-ի կողմից հրատարակվող ժողովածուներում:

Միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի՝ ՄԱԿ-ի քարտուղարությունում գրանցելու կարգը սահմանված է Գլխավոր Ասամբլեայի 1946 թ. դեկտեմբերի 14-ի 97 (I) բանաձևով, որի համաձայն գրանցման ենթակա են բոլոր պայմանագրերը, անկախ նրանից, թե ինչ անուն են կրում դրանք, եթե կողմերից թեկուզ մեկը Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ է: Գրանց-

<sup>4</sup> «Современное международное право» (Сборник документов), 1964, стр. 41.

ման ենթակա են 1945 թ. հոկտեմբերի 24-ից հետո, այսինքն՝ ՄԱԿ-ի կանոնադրությունն ուժի մեջ մտնելուց հետո կնքված միջազգային պայմանագրերը: Պայմանագրի գրանցումը կատարվում է միայն այն բանից հետո, երբ նա արդեն ուժի մեջ է մտել երկու կամ ավելի մասնակիցների միջև: Որպես կանոն, միջազգային պայմանագրերը հրապարակվում են նրանց մասնակիցների կողմից՝ պաշտոնական կառավարական հրատարակություններում, պարբերական մամուլում, ժողովածուներում և այլն: Մի շարք երկրների օրենսդրությամբ հրապարակված պայմանագրերը օրենքի ուժ ունեն: ՍՍՀՄ-ում վավերացման ենթակա պայմանագրերը հրապարակվում են «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն սովետի տեղեկագրում»: Սովետական Միությունում հրատարակվում է օտարերկրյա պետությունների հետ կնքած միջազգային գործող պայմանագրերի ժողովածուներ:

Միջազգային պայմանագրերը համապատասխան կարգով հրապարակելը կամ հայտարարելը կոչվում է պրոմուլգացիա:

Վերապահումներ: Միջազգային իրավունքի գիտության մեջ և պետությունների պայմանագրային սյրակտիկայում կարևոր տեղ է հատկացվում վերապահումներին, որ անում են պետությունները բազմակողմանի պայմանագրեր ստորագրելիս, վավերացնելու կամ բազմակողմանի պայմանադրերին միանալու ժամանակ: Խոսքը վերաբերում է այն բանին, որ սկզբունքորեն համաձայն լինելով պայմանագրին, պետությունը հայտնում է իր անհամաձայնությունը պայմանագրի այս կամ այն դրույթի հետ, կամ շարադրում է, թե ինքն ինչպես է հասկանում պայմանագրի այս կամ այն հոդվածի բովանդակությունը և այլն: Վերապահումները լայն կիրառում ունեն միջազգային պայմանագրային պրակտիկայում: Սովետական դոկտրինան և պրակտիկան խոսում են հօգուտ այն բանի, որ վերապահություն անելը չուրաքանչյուր պետության սովորեն իրավունքն է և դրա համար չի պահանջվում պայմանագրի մյուս մասնակիցների համաձայնությունը: Վերապահումների վերաբերյալ այդ կարծիքը լայն ճանաչում է ստացել միջազգային պրակտիկայում և գրականության մեջ, սակայն գոյություն ունի նաև այլ տեսակետ: Մեծ Բրիտանիան այն կարծիքին է, որ վերապահում կարելի է անել միայն պայմանագրի մյուս մասնակիցների համաձայնությամբ: Այդ կարծիքը պաշտպանում են բուրժուական առանձին իրավաբան-միջազգայնագետներ, ըստ որոնց վերապահում անողը չի կարող համարվել պայմանագրի մասնա-

կից, եթե մասնակիցներից թեկուզ մեկը անհամաձայնություն հայտնի արված վերապահությանը: Այդպիսի սրակտիկայի էր հետևում նաև Ազգերի լիգայի քարտուղարությունը:

Վերապահման վերաբերյալ տարակարծություն առաջացավ ՄԱԿ-ում: Գլխավոր Ասամբլեան հարցը հանձնեց Միջազգային դատարանի կոնսուլտատիվ եզրակացությունը: Հարցադրումն այսպիսին էր. վերապահում անող պետությունը կարող է համարվել էսովետներից մասնակից (խոսքը վերաբերում էր գենեցիդի հանցագործությունը կանխելու և նրա համար պատժելու մասին 1948 թ. օգոստոսի 10-ի կոնվենցիային), եթե այդ վերապահման դեմ առարկում են մեկ կամ մի քանի մասնակից-պետություններ: 1951 թ. մայիսի 28-ին միջազգային դատարանը տվեց դրական պատասխան, նշելով, որ վերապահումը պետք է համապատասխանի կոնվենցիայի առարկային և նպատակին: Միջազգային դատարանը իր եզրակացության մեջ միաժամանակ պարզաբանեց վերապահման իրավաբանական հետևանքների հարցը, մատնացույց անելով, որ եթե կոնվենցիայի որևէ մասնակից գտնում է, որ վերապահումը չի համապատասխանում կոնվենցիայի առարկային և նպատակին ու առարկում է նրա դեմ, ապա այդպիսի վերապահում արած պետությունը նա կարող է համարել կոնվենցիային ոչ մասնակից, իսկ եթե կոնվենցիայի մասնակից որևէ պետություն վերապահումը համարում է կոնվենցիայի առարկային և նպատակին համապատասխան, նա կարող է վերապահում արած պետությանը փաստորեն համարել կոնվենցիայի մասնակից:

Այսպիսով ստացվում է. վերապահում անելու իրավաբանական հետևանքն այն է, որ բազմակողմանի պայմանագրի այս կամ այն դրույթի վերաբերյալ, կամ այլ նկատառումով վերապահում արած պետության և մյուս մասնակիցների միջև պայմանագիրը գործում է, բացառությամբ այն մասնակցի կամ մասնակիցների. որոնք առարկում են արված վերապահման դեմ:

Միջազգային դատարանի վերոհիշյալ եզրակացությունը համապատասխան Գլխավոր Ասամբլեան 1952 թ. հունվարի 12-ին ընդունեց բանաձև, որի մեջ Գլխավոր քարտուղարին առաջարկվում էր 1948 թ. կոնվենցիայի վերաբերյալ վերապահումների հարցում իր պրակտիկան համաձայնեցնել միջազգային դատարանի եզրակացության հետ: Ապագա կոնվենցիաների հարցում, եթե այդ կոնվենցիաներով ավանդապահը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը լինի, նրան առաջարկվում էր շարունակել կատարել ավանդապահի ֆունկցիաները՝ վերապահումներ կամ առարկություններ

բովանդակող փաստաթղթերը իրեն ի պահ հանձնելու ժամանակ, չլուծելով այդ փաստաթղթերի իրավաբանական նշանակության հարցը, և շահագրգռված բոլոր պետություններին հաղորդել վերապահմանը կամ առարկությանը վերաբերող նշված փաստաթղթերի տեքստը՝ յուրաքանչյուր պետությանը թողնելով այդ հաղորդումից իրավաբանական բնույթի հետևություններ անելը<sup>5</sup>:

Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն պայմանագիրը ստորագրելու, վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու կամ նրան միանալու ժամանակ կարելի է բանաձևել վերապահում, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա) տվյալ վերապահումը արգելվում է պայմանագրով,

բ) պայմանագիրը նախատեսում է, որ կարելի է որոշակի վերապահումներ անել, որոնց թվին տվյալ վերապահումը չի պատկանում կամ

գ) «ա» և «բ» կետերի ներգործության տակ չընկնող դեպքերում՝ վերապահումն անհամատեղելի է պայմանագրի օբյեկտի և նպատակների հետ:

Կոնվենցիայի 20-րդ հոդվածը սահմանում է վերապահումներն ընդունելու և նրանց դեմ առարկելու կարգը, ըստ որում, եթե պայմանագիրը որոշակիորեն թույլատրում է տվյալ վերապահումը, ապա այն մասնակից մյուս պետությունների կողմից ընդունելու անհրաժեշտությունը չի զգացվում, եթե միայն պայմանագիրը այդպիսի ընդունում չի նախատեսում:

Եթե բանակցություններին մասնակցած պետությունների սահմանափակ քանակից և պայմանագրի օբյեկտից ու նպատակներից երևում է, որ պայմանագրի գործադրումն ամբողջովին նրա բոլոր մասնակիցների միջև էական պայման է, որպեսզի նրա մասնակիցներից յուրաքանչյուրի համար պայմանագիրը պարտադիր լինի, ապա վերապահումը պետք է ընդունվի բոլոր մասնակիցների կողմից:

Երբ պայմանագիրը միջազգային կազմակերպության սահմանադիր ակտ է, և եթե նրանում այլ բան չի նախատեսված, պահանջվում է, որպեսզի վերապահումը ընդունի տվյալ կազմակերպության իրավասու մարմինը: Այլ դեպքերում վերապահումն ընդունած պետությունը համարվում է պայմանագրի մասնակից այն պետության նկատմամբ, որն արել է տվյալ վերապահումը, եթե

պայմանագիրը ուժի մեջ է կամ երբ այդ պետությունների համար նա ուժի մեջ է մտնում:

Նույն 20-րդ հոդվածի «Ն» կետի համաձայն պայմանագիրը մյուս պետության առարկությունն ընդգեմ վերապահման չի խոչընդոտում պայմանագիրն ուժի մեջ մտնելուն այդ առարկող պետության և վերապահում արած պետության փոխհարաբերություններում, եթե առարկվող պետությունը որոշակիորեն չհայտարարի իր հակառակ մտադրության մասին: Հինգերորդ կետի համաձայն վերապահումը պետության կողմից համարվում է ընդունված, եթե նա առարկություն չանի վերապահման դեմ մինչև իրեն վերապահման մասին ծանուցելու պահից տասներկուերորդ ամսվա վերջը կամ մինչև այն ժամանակը, երբ համաձայնություն է հայտնել պայմանագիրն իր համար պարտադիր լինելու մասին, նայած այն բանին, թե այդ դատաններից որն է ավելի ուշ:

Պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայի 21-րդ հոդվածը սահմանում է վերապահման և նրա դեմ առարկությունները իրավաբանական հետևանքները: Մասնավորապես նշվում է, որ պետության կողմից արած վերապահումը չի փոխում պայմանագրի դրույթները մյուս մասնակիցների համար՝ նրանց փոխադարձ հարաբերություններում: Եթե վերապահման դեմ առարկած պետությունը չի առարկել իր և վերապահում արած պետության միջև ուժի մեջ մտնելու մասին, ապա դրույթը, որին վերաբերում է վերապահումը, չի կիրառվում այդ երկու պետությունների միջև այդ վերապահման գործողության ոլորտի շրջանակներում:

#### § 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային պայմանագրի վավերականության հարցը կարելի է որոշակիորեն լուծել ունի նախ և առաջ միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների անշեղ իրականացման տեսանկյան իմաստով: Որպեսզի միջազգային պայմանագիրը վավերական ճանաչվի, այն պետք է լիովին համապատասխանի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին և մյուս իմպերատիվ սկզբունքներին ու նորմերին: Այս տեսակետից ելնելով պայմանագիրը չի կարող վավերական համարվել, եթե այն կնքվել է ուժի կամ ուժի սպառնալիքի օգտագործմամբ: Ինչպես արդեն ասված է § 3-ում, պայմանագիրը պետք է արտահայտի կողմերի լիակատար իրավահավասարությունը: Անիրավահավասար պայմանագրերը վա-

<sup>5</sup> Տե՛ս «Дипломатический словарь», 1961, т. II, с. 421—422:

վերական համարվել շեն կարող: Միջազգային իրավունքում անիրավահավասար պայմանագրերն այն ապօրինի, անիրավաչափ «համաձայնագրերն» են, որ հզոր իմպերիալիստական տերութունները տարբեր ձևի ու կարգի հարկադրանքի ուժով փաթաթում են թույլ ու կախյալ երկրներին՝ հակառակ նրանց ժողովուրդների շահերի և կամքի: Անիրավահավասար պայմանագրերի ցայտուն օրինակ են կապիտուլյացիաների պետքի վերաբերյալ պայմանագրերը, «Մարշալի պլանի» հիման վրա կնքած համաձայնագրերը, այսպես կոչված փոխադարձ անվտանգության պայմանագրերը և այլն: Սովետական երկիրը չի ճանաչում անիրավահավասար պայմանագրի վավերականությունը, երբ և ում կողմից և ում հետ էլ որ նա կնքված լինի: Անիրավահավասար պայմանագրից հրաժարվելը լիովին իրավազոր քայլ է և չի կարող դիտվել որպես միջազգային իրավունքի խախտում: 1918 թ. Սովետական Ռուսաստանը առ ոչինչ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի թալանչիական պայմանագիրը, 1951 թ. Իրանը հրաժարվեց 1933 թ. Անգլիայի հետ կնքած ստրկացուցիչ պայմանագրից և այլն: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Սովետական Ռուսաստանը չեղյալ հայտարարեց ցարական կառավարությունների կողմից Արևելքի երկրների հետ կնքած անիրավահավասար պայմանագրերը, որոնք ստրկացուցիչ էին այդ երկրների համար:

Ինչպես ասվել է, փաստական սխալը կնքված պայմանագիրը վերանայելու կամ վերացնելու հիմք է հանդիսանում, մինչդեռ էթիպայմանագիրը կնքվել է խաբուսության կամ կաշառելու միջոցով, ապա այն վավեր ճանաչվել չի կարող:

Միջազգային պայմանագրերի իրավունքում տեսական և գործնական հետաքրքրություն է ներկայացնում սահմանադրական սահմանափակումների, այն է միջազգային պայմանագրի և սահմանադրական նորմերի հարաբերակցության հարցը: Յուրաքանչյուր երկրի սահմանադրությամբ որոշված է միջազգային պայմանագրեր կնքելու կարգը: Այսպես, օրինակ, ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների գործող հիմնական օրենքների՝ սահմանադրությունների համաձայն միջազգային պայմանագիր կնքելու իրավունքը ՍՍՀՄ պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների առանձնաշնորհությունների մեջ է մտնում: Միութենական հանրապետությունների իշխանության բարձրագույն մարմինները իրենց լիազորությունների շրջանակներում իրավունք ունեն համաձայնագրեր կնքել օտարերկրյա պետությունների հետ: Միջազգային պայմանագրերից պարտադիր կարգով

վավերացման ենթակա են «ՍՍՀՄ Միջազգային պայմանագրերի վավերացման և դեմոնստրացիայի կարգի մասին» 1938 թ. օգոստոսի 20-ի օրենքում նշվածները:

ԱՄՆ-ի 1787 թ. (հետագա լրացումներով) սահմանադրության համաձայն պրեզիդենտը «իրավունք ունի, սենատի խորհրդով և համաձայնությունով, կնքել պայմանագրեր՝ ներկա գտնվող սենատորների 2/3-ի համաձայնության պայմանով»: Միամասնակ սահմանված է որ «ոչ մի նահանգ չպետք է մտնի պայմանագրի, դաշինքի կամ կոնվենցիայի մեջ, առանց Կոնգրեսի համաձայնության... չպետք է համաձայնագիր կամ կոնվենցիա կնքի ուրիշ նահանգի կամ օտարերկրյա տերության հետ»: Սահմանադրությունը պրեզիդենտին իրավունք է վերապահում օտարերկրյա պետությունների հետ բազմազան հարցերի շուրջը վավերացման ոչ ենթակա համաձայնագրեր կնքել առանց սենատորների 2/3-ի համաձայնության:

Միջազգային պայմանագրեր կնքելու որոշակի շրջանակներ են սահմանված նաև մյուս երկրների սահմանադրություններով:

Միջազգային պայմանագրերի վավերականության հարցում պետության սահմանադրային դրույթների պահպանումը որոշիչ նշանակություն ունի: Միջազգային իրավունքի գիտության մեջ գերիշխում է այն կարծիքը, որ պետության սահմանադրային դրույթների խախտմամբ կնքված պայմանագրերը վավերական համարվել չեն կարող (Մ. Կապուստին, Ա. Ստոյանով, Ա. Գեֆտեր, Ա. Գորովցև, Լ. Կամարովսկի, Լ. Օպպենհեյմ և ուրիշներ):

«Թեպետև, — գրում է Լ. Օպպենհեյմը, — բայց միջազգային իրավունքի պետության գլուխը պայմանագիր կնքելու իրավունքն իրականացնող մարմին է, այդ իրավունքի օրենսդրական սահմանափակումները, այնուամենայնիվ, նշանակություն ունեն միջազգային իրավունքի համար: Պետության գլխի կամ նրա լիազորած ներկայացուցիչների կողմից սահմանադրական խախտումներով կնքած պայմանագրերը վավերական չեն և համապատասխան պետություններին միմյանց հետ չեն կապում, քանի որ, կնքելով այդպիսի պայմանագրեր, ներկայացուցիչները վերազանցել են իրենց լիազորությունները»:

Սահմանադրական սահմանափակումների նշանակության վերաբերյալ գիտնական-միջազգայնագետների հայացքները ընդհանրացվել են պայմանագրային իրավունքի նորմերի կոդիֆի-

<sup>5</sup> Л. Опенгейм, Международное право, т. I, п/т. 2, 1949, стр. 415.

կացմանը վերաբերող կոնվենցիաների նախագծերում: Դրանցից մեկը Գ. Լաուտերպախտի զեկուցմամբ՝ պայմանագրերի իրավունքի վերաբերյալ հոդվածների նախագիծն է, որն ընդունվել է ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից (18—1917—1966 թ.), որի 11-րդ հոդվածում ասված է. «Շահագրգռված կողմի հայեցողությամբ միջազգային պայմանագիրը կարող է անվավեր ճանաչվել, եթե այն կնքվել է իր սահմանադրական իրավունքում եղած սահմանափակումներին հակառակ»: Այդ դրույթը տեղ է գտել պայմանագրերի իրավունքի վերաբերյալ հոդվածների նախագծի 43-րդ հոդ., որտեղ նշված է, որ պայմանագիր կնքելու ժամանակ սահմանադրական նորմերի խախտված լինելը պետք է ազնվատես լինի<sup>7</sup>:

Նախագծի այդ դրույթը տեղ է գտել Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայի 46-րդ հոդվածում, հետևյալ խմբագրությամբ. «Պետությունն իրավունք չունի որպես իր համաձայնության անվավերականության հիմք անվանակոչելու այն հանգամանքը, որ սահմանագիրն իր համար պարտագիր լինելու մասին համաձայնությունը արտահայտված է ի խախտումն ներքին իրավունքի այս կամ այն դրույթի, որը վերաբերում է պայմանագիր կնքելու իրավասությանը, եթե միայն այդպիսի խախտումը չի եղել բացահայտ և չի վերաբերել նրա ներքին իրավունքի հատկապես կարևոր նշանակության նորմի»:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, միջազգային պայմանագրեր կնքելու վերաբերյալ սահմանադրական նորմերից շեղվելը կարող է հանգեցնել պայմանագրի անվավերականությանը, իրավաբանական ուժ չունենալուն: Անվավեր և իրավաբանական ուժ չունեցող պայմանագրեր կարող են դիտվել. սահմանադրական իրավազորությունը վերազանցելով կնքված պայմանագրերը, շվավերացված պայմանագիրը, ֆեդերացիայի անդամի կնքած պայմանագիրը, եթե միության սահմանադրությամբ նրան այդպիսի իրավունք վերապահված չէ, առանց պատշաճ լիազորության պետական մարմնի կամ ֆիզիկական անձի կնքած պայմանագիրը, երկրի ժողովրդին չներկայացնող «տիկնիկային» կառավարությունների՝ կնքած պայմանագրերը:

Երբ վերահիշյալ հանգամանքների ուժով միջազգային պայմանագիրը անվավեր է ճանաչվում, ապա, որպես կանոն, կողմերի

հարաբերություններում վերականգնվում է նախքան պայմանագրի կնքումը գոյություն ունեցած իրավիճակը, քանի որ պայմանագիր կնքող չորաքանչյուր պետություն պարտավոր է պահպանել պայմանագրերի իրավունքի նորմերով սահմանված կանոնները:

### § 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրերը լինում են ժամկետային և անժամկետ: Անժամկետ են հաշտության, որպես կանոն, պետական սահմանների վերաբերյալ պայմանագրերը: Անժամկետ են միջազգային կազմակերպություններ հիմնադրելու վերաբերյալ պայմանագրերը, ինչպես, օրինակ՝ ՄԱԿ-ի կանոնադրությունը, միջազգային դատարանի ստատուտը: Կան նաև այլ բնույթի անժամկետ միջազգային պայմանագրեր՝ ծովային իրավունքի վերաբերյալ 1958 թ. կոնվենցիան, Անտարկտիդայի մասին 1959 թ. պայմանագիրը, միջուկային զենքի փորձարկումն արգելելու վերաբերյալ Մոսկովայի 1963 թ. պայմանագիրը:

Միջազգային պայմանագրերի մեծ մասը ժամկետային է: Քաղաքական պայմանագրերը կնքվում են համեմատաբար երկար ժամկետով՝ 10, 15, 20, 30 տարով, հնարավոր են նաև այլ ժամկետներ: Սոցիալիստական երկրների հետ ՄՍՀՄ-ի կնքած փոխօգնության պայմանագրերի ժամկետը 20 տարի է, Զինատանի հետ՝ 30 տարի: Տնտեսական պայմանագրերի ժամկետները համեմատաբար կարճ են լինում՝ 1—5 տարի: Կան նաև պայմանագրեր, որոնք ձևական տեսակետից ժամկետային են, որովհետև նրանցում ժամկետ է նշված, բայց ըստ էության անժամկետ են: Դրանք իմպերիալիստական տերությունների կողմից ուրիշների տերիտորիաների վարձակալության պայմանագրերն են մինչև 99 տարի ժամկետով: Այսպես, օրինակ, 1947 թ. ԱՄՆ-ը Ֆիլիպինների տերիտորիան ռազմական բազաների համար վարձակալեց 99 տարի ժամկետով:

Միջազգային պայմանագիրը համարվում է ուժի մեջ մտած ստորագրելու պահից, եթե այդ նշված է պայմանագրում, վավերագրերը փոխանակելու կամ ի պահ հանձնելու պահից: Որպես կանոն, վավերացումը հետադարձ ուժ չունի, եթե հակառակը չի նախատեսված պայմանագրում: Հնարավոր է, որ պայմանագրում ուղղակի նշված լինի ուժի մեջ մտնելու ժամկետը կամ նշված լինի ուժի մեջ մտնելու այլ պայման:

<sup>7</sup> Տե՛ս «Курс международного права», 1967, т. II, с. 266—275:

Ժամկետային պայմանագրերում սովորաբար նշվում է ժամկետը երկարացնելու (պրոլանգացիա) կարգը: Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել այդ նպատակով հատուկ արձանագրություն ստորագրելու միջոցով կամ ավտոմատիկորեն՝ պայմանագրում նախատեսված ձևով: Վարչապետի (1955 թ.) պայմանագրերի 11-րդ հոդվածի համաձայն պայմանագրի ժամկետը լրանալուց մեկ տարի առաջ կեսական ժողովրդական Հանրապետության կառավարությունը (ավանդապահ) պայմանագրերը դենտոնացնելու մասին հայտարարություն չտված կողմի համար պայմանագրերը կըմընա ուժի մեջ հաջորդ տասը տարիների ընթացքում: Պետական սահմանի ռեժիմի, սահմանային հարցերի շուրջը համագործակցելու և փոխադարձ օգնություն վերաբերյալ սովետա-հունգարական 1961 թ. հոկտեմբերի 3-ի պայմանագրերը նախատեսում է, որ պայմանագրերը գործելու է յուրաքանչյուր հաջորդ հինգ տարիների ընթացքում, մինչև որ հերթական հնգամյա ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ պայմանագրի կողմերից մեկը չհայտարարի, որ ինքը հրաժարվում է պայմանագրից:

Միջազգային պայմանագրերի կատարումը երաշխավորող իրավական հիմք է հանդիսանում pacta sunt servanda (պայմանագրի կատարումն ինքնին ենթադրվում է) սկզբունքը: Սակայն նկատի ունենալով այն հանդամանքը, որ ազդեցիվ պետությունները ոտնահարում են միջազգային իրավունքի հանրաձայն ըսկզբունքները, այդ թվում pacta sunt servanda սկզբունքը, ինչպես նաև այն, որ միասնական միջազգային կենտրոնացված ապարատ չկա, որը կարողանար ապահովել միջազգային պայմանագրերի կատարումը, պետությունները մտահոգված են պայմանագրերի կատարումն ապահովող միջոցների հարցով:

Որպես պայմանագրի կատարումն ապահովող երաշխիք մինչև XVIII դարը միջազգային պրակտիկայում կիրառվում էր կրոնական երդումը: Կիրառվում էր նաև պատանդի և գրավի (մեծ արժեքներ, տերիտորիա) ինստիտուտները: Ավելի ուշ որպես պայմանագրի կատարման երաշխիք դիմում են օկուպացիայի ինստիտուտին, երբ մեկ պետության զինված ուժերը օկուպացնում են մյուս պետության տերիտորիայի մի որոշակի մասը: Վերսալյան պայմանագրի 429-րդ հոդ. համաձայն Անտանտի տերությունների զորքերը օկուպացրին Հոնոսից արևմուտք ընկած գերմանական տերիտորիան, որպեսզի այդ միջոցով Գերմանիային հարկադրեն կատարելու հաշտության պայմանագրի պայմանները: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայի օկուպացիա-

յի բնորոշ և սպեցիֆիկ կողմն այն էր, որ այն երաշխավորող բնույթ ունեւր ոչ միայն ազդեցիկ զոհերին հասցրած վնասի հատուցումն ապահովելու, այլև Գերմանիայի ապառազմականացումն ու ապանացիֆիկացումն ապահովելու, Գերմանիան զեմոկրատական և խաղաղասիրական պետություն դարձնելու, ազագայում գերմանական նոր ազդեցիկ կանխելու նպատակով:

Միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու համար կիրառում են նաև երաշխավորական պայմանագրեր, որի տակ հասկանում ենք համաձայնություն մի քանի պետությունների միջև՝ միջազգային հարաբերություններում ստեղծված կամ երաշխավորական պայմանագրով սահմանվող դրության պահպանման և կամ այլ պետությունների միջև կնքված պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով:

Առաջներում երաշխավորական պայմանագրերը, որպես կանոն, կնքվում էին մեծ տերությունների միջև թույլ երկրների վերաբերյալ: Երաշխավորման օբյեկտ էին հանդիսանում քաղաքական անկախությունը (1832 և 1863 թթ. պայմանագրերը Հունաստանի վերաբերյալ), տերիտորիալ ամբողջականությունը (1856 թ. պայմանագրերը Թուրքիայի վերաբերյալ), status quo—գոյություն ունեցող վիճակը պահպանելը (ռուս-ճապոնական 1910 թ. համաձայնագրերը Մանչուրիայի մասին), մշտական չեզոքությունը (Շվեյցարիա, Լյուքսեմբուրգ) և այլն: Այն պետությունները, որոնց իրավունքներն ու շահերը երաշխավորվում էին, իրենք չէին մասնակցում երաշխավորական պայմանագրին:

Միջազգային հարաբերությունների պատմությունը ցույց է տալիս, որ խոշոր կապիտալիստական պետությունները երաշխավորական պայմանագրերն օգտագործել են երաշխավորյալների ներքին գործերին միջամտելու համար: Քիչ են այն երաշխավորական պայմանագրերը, որոնք քննություն են բռնել պատմության առաջ:

Երաշխավորական պայմանագրերը էական փոփոխություններ են կրում XX դարում: Երևան են գալիս փոխադարձ երաշխավորության բաղադրականի պայմանագրեր (Լոկառնոյի 1925 թ. հոկտեմբերի 16-ի պայմանագիրը), երաշխավորության և չեզոքության երկկողմանի պայմանագրերը (ՄՍՀՄ-ի պայմանագրերը հարևան պետությունների հետ) և այլն:

Միջազգային պայմանագրերի կատարման երաշխիքներ են բովանդակում Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության VII գլխի հոդվածները, որոնք նախատեսում են խաղա-

դուժյան և անվտանգության ապահովման հետ կապված միջոցառումների իրականացում:

Որպես ընդհանուր կանոն միջազգային պայմանագիրը փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ է առաջացնում նրա մասնակիցների համար, սակայն հնարավոր է, որ միջազգային պայմանագիրը իրավունքներ նախատեսի երրորդ պետությունների համար: Օրինակ, բազմակողմանի բաց պայմանագրերը երրորդ պետություններին իրավունք են վերապահում միանալու պայմանագրին կամ նրա առանձին մասերին: Պայմանագիրը կարող է երրորդ տերությունը տրամադրել իրավազորություն՝ չպահանջելով միանալ պայմանագրին, ինչպես, օրինակ, միջազգային դատերի, ջրանցքների, նեղուցների ստատուտներին ոչ բոլոր պետություններն են մասնակից, բայց, որպես կանոն, նրանք նախատեսում են, որ երրորդ պետություններն էլ այս կամ այն շահով ու ձևով կարող են օգտվել այդ միջազգային ջրային ուղիներից:

Շատ ավելի բարդ է այն հարցը, թե պայմանագիրը կարող է արդյո՞ք պարտավորություններ դնել երրորդ պետության վրա: Հարցի բարդությունը կայանում է նրանում, որ շոշափում է պետության սուվերենությունը: Ընդհանուր սկզբունքն այն է, որ երկու կամ ավելի թվով պետություններ չեն կարող մի երրորդ պետությանը պարտավորեցնող որոշումներ ընդունել: Սակայն այս ընդհանուր սկզբունքից շեղումներ հնարավոր են՝ կապված միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման կամ խախտված խաղաղությունը վերականգնելու անհրաժեշտություն հետ: Որպես օրինակ կարող ենք բերել Գերմանիայի վերաբերյալ դաշնակից տերությունների միջև կնքված պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնց Գերմանիան չի մասնակցել, սակայն այդ ակտերի դրույթները պարտադիր են Գերմանիական հողում ձևավորված՝ նրա իրավահաջորդները հանդիսացող պետությունների համար: Կամ ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդ. 6-րդ կետի համաձայն կազմակերպությունը «...ապահովում է, որպեսզի նրա անդամ չհանդիսացող պետությունները գործեն» կազմակերպության սկզբունքներին համապատասխան, «որչափով այդ կարող է անհրաժեշտ լինել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը ապահովելու համար»:

Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայի 4-րդ՝ «Պայմանագրերը և երրորդ պետությունները» բաժինը ամբողջովին վերաբերում է վերևում արծարծված հարցին: Կոնվենցիայի 34-րդ հոդվածում որոշակիորեն ասված է, որ պայմա-

նագիրը երրորդ պետության համար, առանց նրա համաձայնության, չի ստեղծում պարտավորություններ և իրավունքներ: 35-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածները սահմանում են այն դեպքերը, երբ պայմանագիրը պարտավորություններ և իրավունքներ է նախատեսում երրորդ պետությունների համար, վերացնում կամ փոփոխում է նրանց պարտավորությունները կամ իրավունքները:

Սոցիալիստական երկրները էլնում են այն բանից, որ սկզբբունքսրին միջազգային պայմանագիրը չպետք է պարտավորություններ առաջացնի երրորդ պետությունների համար: Այդ ըսկզբբունքին համապատասխան Տնտեսական Փոխօգնության Խորհրդի կանոնադրության IV հոդ. 3-րդ կետում սահմանված է, որ «Խորհրդի բոլոր հանձնարարականներն ու որոշումները ընդունվում են միայն Խորհրդի շահագրգռված անդամ-երկրների համաձայնությամբ, ըստ որում յուրաքանչյուր երկիր իրավասու է իր շահագրգռվածությունը հայտնելու Խորհրդում քննարկվող ցանկացած հարցի վերաբերյալ»:

Գործնական կարևոր նշանակություն ունի միջազգային պայմանագրի մեկնաբանման հարցը: Միջազգային պայմանագրի մեկնաբանում ասելով հասկանում ենք պայմանագրի իսկական իմաստի սահմանումը, ամբողջ պայմանագրի կամ նրա առանձին հոդվածների՝ կողմերից յուրաքանչյուրի համար պարտադիր և միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով: Պայմանագրի մեկնաբանումը երկու հիմնական տեսակի է լինում. պաշտոնական կամ լեզալ (իրավաբանական ուժ ունեցող) և դոկտրինալ-գիտական (իրավաբանական ուժ չունեցող): Պաշտոնական մեկնաբանություն իր հերթին լինում է՝ 1) ավտենտիկ պայմանագրի կողմերի մեկնաբանություն, որը պայմանագրի կատարման պրոցեսում պարտադիր է նրանց համար և 2) դատական կամ կազուալ (գիտվածական) մեկնաբանում, սա այն մեկնաբանումն է, որ տալիս է արբիտրաժը կամ դատական մարմինը՝ շահագրգռված կողմերի խնդրանքով և իրավաբանական ուժ ունի այն գործի համար, որի կապակցությամբ տրվել է:

Չափազանցնելով դատական մեկնաբանության նշանակությունը, բուրժուական երկրները և միջազգային իրավունքի բուրժուական տեսությունը փորձում են ՄԱԿ-ի միջազգային դատարանը ճանաչել տալ որպես մի առյան, որի մեկնաբանությունները միջազգային բազմակողմանի պայմանագրերի, մասնավորապես ՄԱԿ-ի կանոնադրության վերաբերյալ պարտադիր լինեն բոլոր պետությունների համար: Մինչդեռ ՄԱԿ-ի կանոնադրությունը,

ինչպես ամեն մի պայմանագիր, կարող են մեկնաբանել նրա մասնակիցները, իսկ եթե կանոնադրության մեկնաբանման շուրջը իրավաբանական վեճեր են ծագել, ապա նրանք կարող են դիմել միջազգային դատարանին, որը նման դեպքերում տալիս է կոնսուլտատիվ բնույթի հզորակացություններ, որոնք ավտենտիկ և պարտադիր նշանակություն չունեն ՄԱԿ-ի անդամ-պետությունների համար: ՄԱԿ-ի միջազգային դատարանը կարող է ավտենտիկ մեկնաբանել իր ռեզյամենտը: Այս դեպքում նրա մեկնաբանությունը պարտադիր ուժ ունի ինչպես դատարանի, այնպես էլ դատավարությունում որպես կողմ հանդես եկող բոլոր պետությունների համար:

Հնարավոր է, որ պայմանագրի մասնակիցները նախապես որոշեն մեկնաբանման կարգը: Օրինակ, 1959 թ. դեկտեմբերի 1-ին Անտարկտիկայի վերաբերյալ պայմանագրի XI հոդ. 1-ին կետում սահմանված է՝ «Երկու կամ մի քանի պայմանավորվող կողմերի միջև սույն պայմանագրի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ որևէ վեճ ծագելու դեպքում Պայմանավորվող կողմերը խորհրդակցում են միմյանց միջև՝ վեճը բանակցությունների, հետաքննության, միջնորդության, հաշտվելու, արբիտրաժի, դատական քննության կամ այլ խաղաղ միջոցներով, նրանց սեփական ընտրությամբ, լուծելու նպատակով»<sup>8</sup>:

Միջազգային պայմանագրի դոկտրինալ-տեսական մեկնաբանությունը կատարում են միջազգային-իրավունքի ինստիտուտները, ֆակուլտետները, միջազգայնագետ-իրավաբանները: Դոկտրինալ մեկնաբանությունը թեպետև իրավաբանական ուժ չունի, սակայն կարող է նպաստավոր դեր խաղալ վիճող կողմերի միջև համաձայնության հասնելու համար:

Պայմանագրի մեկնաբանման եղանակները մի քանիսն են. 1. քերականական, 2. պատմական, 3. տրամաբանական և 4. սխտեմատիկ:

Քերականական մեկնաբանումն այն է, որ պայմանագրի, նրա հոդվածի այս կամ այն դրույթի իսկական իմաստը սահմանելու համար դիմում են տեքստի քերականական վերլուծության եղանակին: Պատմական մեկնաբանման դեպքում ուսումնասիրում և վերլուծում են այն պատմական հանգամանքները, որոնց պայմաններում կնքվել է տվյալ պայմանագիրը (դիվանագիտական գրազրույթներ, բանակցությունների կամ կոնֆերանսի փաստա-

թղթերը և այլն): Տրամաբանական մեկնաբանման էությունն այն է, որ մեկնաբանումը կատարվում է պայմանագրի հոդվածները մեկը մյուսի կամ այլ կարևոր միջազգային պայմանագրերի, օրինակ, ՄԱԿ-ի կանոնադրության դրույթների հետ համեմատելու միջոցով: Ինչ վերաբերում է սխտեմատիկ մեկնաբանմանը, ապա մեկնաբանման այս եղանակի դեպքում խնդիր է դրվում պարզելու միջազգային պայմանագրի քաղաքական իմաստը, նրա դրույթների համապատասխանությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորմերի հետ<sup>9</sup>:

Միջազգային պայմանագրի և ներպետական օրենքի միջև որոշակի կապ գոյություն ունի, թեպետև նրանք տարբեր կարգի իրավաբանական ակտեր են: Որոշ դեպքերում միջազգային պայմանագիրը պարտավորեցնում է իրականացնել առանձին օրենսդրական կամ արտաքին քաղաքական բնույթի միջոցառում: Այդպիսի դրույթներ բովանդակում են մասնավորապես հաշտության պայմանագրերը:

Միջազգային պայմանագրի և ներպետական օրենքի հարաբերակցության հարցի վերաբերյալ բուրժուական իրավագիտության մեջ և բուրժուական պետությունների պրակտիկայում մենք նկատում ենք տարասեռակցություն՝ միջազգային պայմանագրին առանցություն է տրվում ներպետական օրենքի նկատմամբ կամ ընդհակառակը և կամ ճանաչվում է նրանց հավասարությունը: Վերջին դեպքում նախապատվությունը տրվում է ժամանակի գործոնին՝ վերջին ակտը վերացնում է նախորդ սկզբունքով: Առաջնորված հարցի լուծումը շատ ավելի կախված է ներքին և արտաքին հանգամանքներից: Իմպերիալիստական պետությունների պրակտիկայում քիչ չեն դեպքերը, երբ ներքին օրենքներ են ընդունվում ի խախտումն միջազգային իրավունքի սկզբունքների և պայմանագրային պարտավորությունների: Բավական է հիշել ԱՄՆ-ում 1951 թ. ընդունված «Անվտանգության փոխադարձ ապահովման» վերաբերյալ շարաքաստիկ օրենքը, որը աղաղակող հակասության մեջ է գրտնդվում միջազգային իրավունքի հիմունքների հետ: Այդ օրենքի հիման վրա, մասնավորապես, ֆինանսավորվում է ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների դեմ ուղղված քայքայիչ գործունեությունը:

Սոցիալիստական երկրների միջազգային պայմանագրերն ու

<sup>8</sup> «Ведомости Верховного Совета СССР», 1961 г., № 31, стр. 329.

<sup>9</sup> Տե՛ս И. С. Перетерский, Толкование международных договоров, Госюриздат, 1959:



ներքին օրենքները որոշակի համապատասխանութեան մեջ են գտնվում և հազեցված են աշխատավորութեան շահերը երկրից դուրս ու նրա ներսում պաշտպանելու ոգով:

Այն առանձին դեպքերում, երբ ՍՍՀՄ միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով սահմանված են այլ կանոններ, քան ՍՍՀՄ ներքին օրենքներով, գործում են միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի կանոնները:

## § 6. ՄԻՉՍՁՅԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՅԱՐՈՒՄԸ

Պայմանագրի գործողութեան դադարումը կարող է վրա հասնել ինչպես իրավաբանորեն արդարացուցիչ, այնպես էլ շարժաբացնող հանգամանքների ուժով: Միջազգային պայմանագրի գործողութեան նորմալ դադարում պետք է համարել, երբ՝ 1) պայմանագրի ժամկետը լրացել է կամ նրանով սահմանված պարտավորությունները լրիվ կատարվել են, 2) կողմերի համաձայնութեամբ պայմանագիրը դադարում է գործել վաղապես: Բացի այդ պայմանագիր կողմը կարող է հրաժարվել պայմանագրից, եթե մյուս կողմը խախտել է այն և, վերջապես, պայմանագրից հրաժարվում են, եթե արմատապես փոփոխվել են պայմանագիրը կնքելու պահին եղած հանգամանքները:

Գործնականում միջազգային պայմանագրերը մեծամասամբ դադարում են գործելուց ավտոմատիկորեն, երբ դրանց ժամկետը լրանում է կամ երբ դրանք լիովին կատարվում են:

Միջազգային իրավունքի գիտության մեջ և պրակտիկայում կարևոր նշանակություն է տրվում պատերազմի ժամանակ պայմանագրի ճակատագրի հարցին, երբ նրա մասնակիցները պատերազմում են մեկը մյուսի դեմ: Երկար ժամանակ իշխել է այն կարծիքը, որ պատերազմը խզում է պատերազմող կողմերի միջև եղած պայմանագրերը: Սակայն բուրժուական հեղափոխությունների շրջանից սկսած վերաբերմունքն այդ հարցում փոխվում է: Բուրժուական պետությունների իշխող դասակարգերի շահագրգռվածությունը առևտրական և իրավաբանական հարաբերությունների ասպարեզում կայունություն պահպանելու մեջ թելադրում է առաջ քաշել նոր կոնցեպցիա, այն է՝ պատերազմը կասեցնում և ոչ թե վերացնում է պայմանագրերը կոմունիստների միջև: Երկար տարակարծիքություններից հետո XX դարում հաստատվեց և 1947 թ. հաշտության պայմանագրերում տեղ գտավ այն թեզը, ըստ որի պա-

տերազմի ժամանակ երկկողմանի պայմանագրերը լուծվում են և կարող են վերականգնվել պատերազմից հետո որոշակի ժամանակամիջոցում: Պատերազմը կասեցնում է բազմակողմ պայմանագիրը, եթե նրա բոլոր մասնակիցներն էլ ներգրավված չեն պատերազմի մեջ: Սակայն այստեղ կան որոշ նրբություններ: Հնարավոր է, որ պայմանագրի տեքստում նախապես նշված լինի, որ պատերազմի դեպքում նա պահպանելու է իր ուժը: Սահմանների վերաբերյալ երկկողմանի պայմանագրերը պատերազմի ժամանակ չեն լուծվում, նրանց գործողությունը կասեցվում է, և նրանց փոփոխությունը պետք է ձևակերպվի պատերազմը դադարեցնելուց հետո: Կան նաև այնպիսի պայմանագրեր, որոնք գործողության մեջ են, դրվում հենց պատերազմի կապակցությամբ: Որինակ՝ պատերազմի ժամանակ զենքի այս կամ այն տեսակի գործադրումը արգելելու մասին պայմանագրերը ո՛չ կասեցվում, ո՛չ էլ լուծվում են, այլ գործողության մեջ են պահվում հենց պատերազմի ընթացքում:

Պայմանագիրը կարող է վերանայվել նրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ: Այդ սկզբունքը հռչակվել է 1871 թ. Լոնդոնի կոնֆերանսում, որտեղ վերանայվեց 1856 թ. Փարիզում կնքված, Ռուսաստանի համար ստորագրուցիչ տրակտատը, որը մեծ վնաս էր հասցրել Ռուսաստանի սուլթանին իրավունքներին: Պայմանագրի վերանայումը կարող է վերաբերել ինչպես ամբողջ տեքստին, այնպես էլ նրա առանձին մասերին: Օրինակ, 1936 թ. Մոնտրեում վերանայվեց Լոզանի 1923 թ. կոնվենցիան և սեծովյան նեղուցների համար սահմանվեց նոր ստատուս: Կամ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի XVIII նստաշրջանը փոփոխություններ մտցրեց կանոնադրության 23-րդ, 27-րդ և 61-րդ հոդվածներում՝ Անվտանգության խորհրդի և տնտեսական ու սոցիալական խորհրդի անդամների կազմը ավելացնելու տնտեսական տակ:

Միջազգային պայմանագրի գործողությունը կարող է դադարել նրանում նախատեսված հանգամանքները վրա հասնելու կապակցությամբ: Օրինակ՝ Վարշավայի պայմանագրի (1955 թ.) 11-րդ հոդ. նախատեսվում է. «Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության սիստեմ ստեղծելու և այդ նպատակով կոլեկտիվ անվտանգության համակարգական Պայմանագիր կնքելու դեպքում, որին անշեղորեն ձգտելու են պայմանավորվող Կողմերը, սույն Պայմանագիրը կորցնելու է իր ուժը՝ համակարգական Պայմանագիրը գործողության մեջ մտնելու օրից»:

Վարշավայի պայմանագրի կազմակերպության անդամ-պի-

նորմա չէ, այլ արտակարգ ճշտում, որ գործադրվում է հատկապես քաղաքիկ դեպքերում: *Rebus sic stantibus* վերապահման անհրաժեշտությունը ծագում է այնպիսի սիտուացիայի վրա հասնելու կապակցությունում, որպիսին կողմերը չեն նախատեսել և չէին կարող նախատեսել պայմանագիրը կնքելու պահին: *Rebus sic stantibus* վերապահումը այժմ կիրառվում է սահմանափակ, ռեզիտնալ շրջանակներում, քանի որ չի ամրապնդված պետությունների մեծամասնության կողմից հանաչված մի որևիցե միջազգային իրավական ակտում:

Միջազգային իրավունքի սովետական գիտությունը գտնում է, որ միջազգային պայմանագրերի կատարումը խաղաղության և անվտանգության ապահովման անփոփոխ պայմանն է, իսկ *rebus sic stantibus* վերապահման կիրառումը օրինաչափ է միայն քաղաքիկ դեպքերում՝ հանգամանքների արմատական փոփոխման դեպքում<sup>11</sup>:

Հանգամանքների արմատական փոփոխման հետևանքով պայմանագրից հրաժարվելու քայլը երբեմն ամրապնդում են վաղեմության գործոնով: Միջազգային պայմանագրի գործողությունը դադարեցնելու համար որպես պատճառ վաղեմությանը դիմելը պետք է վիճելի համարել: Սկզբունքորեն պայմանագիրը կարող է գործել հավերժ, եթե սահմանված չէ նրա ժամկետը<sup>12</sup>, Սակայն, իհարկե, եթե հանգամանքների արմատական փոփոխումը հիմք կարող է ծառայել *rebus sic stantibus*-ի դիմելու ժամկետային պայմանագրերի հարցում, այդ նույնը կարող է կիրառվել նաև անժամկետ պայմանագրերի նկատմամբ:

Միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու օրինակ է Սովետական Միության պրակտիկան, որը ընդգծել են անգամ նրա հակառակորդները: Ղրիմի կոնֆերանսի արդյունքների վերաբերյալ հանդես գալով համայնքների պալատում, Ու. Զերչիլը խոստովանել է. «Երբեք ոչ մի կառավարություն իր պարտավորությունները չի կատարել ճշգրտորեն, անգամ ի վնաս իրեն, քան ուսական սովետական կառավարությունը»: ՄՍՀՄ կառավարության նախագահ Ի. Ստալինին հղած ուղերձում 1943 թ. փետրվարի 1-ին Զերչիլը գրել է. «Թորքերի հետ ունեցած վրույցի ժամանակ իմ սեփական փորձի հիման վրա հաղորդեցի, որ «Սո-

վետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը երբեք չի խախտել ո՛չ պարտավորությունները, ո՛չ պայմանագրերը...»<sup>13</sup>:

Միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերը հիմնականում արտացոլված են Վիեննայի 1969 թ. կոնվենցիայում, սրը դեռևս չի արտացոլում ժամանակակից միջազգային իրավունքի մի քանի կողմերը, սկզբունքներն ու տենդենցները, այդ պատճառով էլ ՄՍՀՄ-ը և սոցիալիստական մյուս երկրները ձեռնպահ մնացին կոնվենցիայի նախագիծը ամբողջովին վերցրած քվեարկելուց և հրաժարվեցին ստորագրել այն: Կոնվենցիայում մասնավորապես արտացոլված չէ արդի միջազգային իրավունքի կարևորագույն բնույթը՝ համապարփակության (универсальность) սկզբունքը, որը խոշոր պետություններին հնարավորություն կտար միանալու այդ կոնվենցիային: Համապարփակության սկզբունքի բացակայությունը խտրականության տարր է բովանդակում որոշ սոցիալիստական երկրների նկատմամբ:

<sup>13</sup> «Переписка председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании», 1957, стр. 89.

<sup>11</sup> Տե՛ս «Дипломатический словарь», 1964, т. III, էջ 34—35:

<sup>12</sup> Տե՛ս «Дипломатический словарь», 1960, т. I, էջ 473:

**ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱՎՈՒՆՔԸ**

§ 1. Քաղաքացիության հասկացությունը և նրա նշանակությունը միջազգային հարաբերություններում, § 2. Ազգաբաղաբաժնիություն և երկհաղաբաժնիություն, § 3. Օտարերկրացիների իրավական սեփուր, § 4. Մաղոու իրավունքների պաշտպանության պրոբլեմը, § 5. Ապաստանի իրավունք, § 6. Միջազգային պայքարը սեփապարտության դեմ:

**§ 1. ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՎԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Պետության տերիտորիայում բնակվող բոլոր անձերի համակցությունը նրա բնակչությունն է: Բնակչության հիմնական մասը կազմում են պետության քաղաքացիները: Բնակչության կազմի մեջ են մտնում օտարերկրացիները, ապաքաղաքացիները և երկքաղաքացիները: Բնակչության բոլոր մասերի իրավական վիճակը սահմանվում է պետության օրենսդրությամբ:

Քաղաքացիությունը դա ֆիզիկական անձի իրավական կապն է պետության հետ, որից բխում են նրա պարտականությունները պետության հանդեպ և իրավունքները պետության նկատմամբ: Անձը՝ որ պետության հետ կապված է, կամ ինչպես առում են, իրավաբանորեն որ պետությանը պատկանում է այդ պետությունն էլ պետա-իրավական իմաստով նրա հայրենիքն է: Դրանից հետևում է, որ անձ-քաղաքացին ամենուրեք օգտվում է իր հայրենի պետության պաշտպանությունից, եթե ուրիշ պետություններ խախտեն նրա իրավունքներն ու շահերը: Միաժամանակ անձը, որտեղ էլ որ գտնվելիս լինի, նրա վրա տարածվում է հայրենի օրենքի ներգործությունը:

Քաղաքացիությունը որպես իրավաբանական ինստիտուտ ձևավորվել է համեմատաբար ոչ հեռավոր անցյալում, նրան նախորդել է հպատակության ինստիտուտը, որը բնորոշ էր նախաբուրժուական ֆորմացիաներին: Հպատակությունը նույնպես անձի իրավաբանական կապ է պետության հետ, անձի պատկանելիությունը պետությանը, այն բնորոշ առանձնահատկությամբ, որ հպատակությունից բխում են անձի պարտականությունները պետության հանդեպ, մինչդեռ պետությունը այդ պարտականություններին համարժեք իրավունքներ չի տրամադրում անձ-անհատին: Ֆեոդալական կարգերում անձը միապետի հպատակն էր: Հպատակները չեն օգտվում, մասնավորապես, քաղաքական իրավունքներից:

Քաղաքացիության ինստիտուտը երևան եկավ բուրժուական կարգերի ձևավորման շրջանում: Բուրժուազիայի առաջ քաշած ժամանակի իմաստով գեմոկրատական լոզունգների մեջ քիչ հրապուրիչ չէր քաղաքացիության վերաբերյալ լոզունգը՝ «այսուհետև լիան հպատակներ, այսուհետ բոլորը քաղաքացիներն են հանրապետության»: Այս սկզբունքը, հասկանալի է, բուրժուազիան երբեք չտարածեց գաղութների բազմամիլիոն բնակչության վրա: Քաղաքացիների համար սահմանվող իրավունքների ու պարտականությունների հարաբերակցությունը խիստ հակասական է անձի սոցիալական վիճակի համեմատությամբ, այն իմաստով, որ ազդարարված քաղաքացիական իրավունքներից գործնականում օգտվում են ունեոր դասակարգերը, իսկ պարտականությունների հիմնական բեռը ընկնում է աշխատավորության վրա:

Քաղաքացիության ինստիտուտից բխող անձի իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը բնորոշ է սոցիալիստական հասարակարգին, որտեղ պետությունը չի բավարարվում ձևական իրավունքների և ազատությունների ազդարարումով, այլև ռեալ նյութական հնարավորություններ է ստեղծում դրանցից օգտվելու համար:

Քաղաքացիության հարցը իր նշանակությամբ դուրս է գալիս ներպետական շրջանակներից և շոշափում է միջազգային հարաբերությունների ասպարեզը: Օտարերկրացիների իրավական դրության, ազգային փոքրամասնությունների, երկքաղաքացիության և քաղաքացիության հետ կապված այլ հարցեր կարգավորվում են ոչ միայն ներպետական ակտերով, այլև միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով:

Մարդու հիմնական իրավունքները հարգելու, անձի սոցիալա-

կան միմյանի հետ կապված հարցերը զնալով ավելի մեծ տեղ են զբաղում միջազգային հարաբերություններում և միջազգային իրավունքում: Այդ մենք տեսնում ենք Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությունում և միջազգային իրավական ալլակտերում: Կանոնադրությամբ ՄԱԿ-ի ղլխավոր նպատակներին է իրախուսել և պարզացնել հարգանքը «... մարդու իրավունքների և բոլորի համար հիմնական ազատությունների նկատմամբ՝ անկախ ուսույթի, սեռի, լեզվի և կրոնի տարբերության» (Տոգ. 2, կ. 3): Միջազգային տնտեսական և սոցիալական համագործակցության սուպարեզում ՄԱԿ-ի խնդիրների մեջ որոշակի տեղ է հատկացված մարդու իրավունքների և ազատությունների հարցին: Կանոնադրության 55 հոդվածը սահմանում է, որ Միավորված Ազգերի Կազմակերպությունը կոչված է աջակցելու:

ա) կենսամակարդակի բարձրացմանը, բնակչության լիակատար ղբաղվածությունը և տնտեսական ու սոցիալական առաջադիմության և զարդացման պայմաններին:

բ) տնտեսական, սոցիալական, առողջապահության մարզերում միջազգային պրոբլեմների կարգավորմանը... կուլտուրայի և կրթության ասպարեզում միջազգային համագործակցությունը:

գ) մարդու իրավունքների և բոլորի համար հիմնական ազատությունների բնզհանուր հարգմանը և պահպանմանը, անկախ ուսույթի, սեռի, լեզվի և կրոնի տարբերության:

Մարդու իրավունքների, սոցիալական ու տնտեսական սուպարեզիմության վերաբերյալ գրույթներ կան ՄԱԿ-ի կանոնադրության, ալլ հոդվածներում, որոնց հիման վրա Կազմակերպության համապատասխան մարմինները կատարում են հետադրություններ, կոորդինացնում մասնագիտացված հիմնարկությունների գործունեությունը, նախապատրաստում են հանձնարարականներ, կոնյունցիաների նախագծեր և ալլն:

Կանոնադրության 60-րդ հոդ. համաձայն մարդու իրավունքների ու ազատությունների իրախուսման, տնտեսական և սոցիալական ասպարեզներում առաջադիմության և ղարդացման համար համագործակցություն կազմակերպելու պատասխանատվությունը ղրված է Գլխավոր ասամբլեայի և նրա ղեկավարության ներքո գործող Տնտեսական և սոցիալական խորհրդի վրա:

ՄԱՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների ֲաղաֆայիտրյունը: Քաղաքացիությունը սոցիալիստական երկրներում նոր սրակի ու բովանդակություն է ձևոք բերել, որը պայմանավորված է արտադրության միջոցների ու գործիքների հանրային սոցիա-

լիստական սեփականության վրա կառուցված հասարակության սոցիալ-տնտեսական բնույթով: Սոցիալիստական երկրներում արտադրության միջոցների ու գործիքների սեփականատերը ալլաատավորների պետությունն է, իշխանության աղբյուրը ինքը՝ ժողովուրդն է: Դրան համապատասխան էլ, սոցիալիստական երկրներում, կարգավորվում են քաղաքացիության հետ կապված հարցերը:

ՄԱՀՄ-ում քաղաքացիության հարցերը կարգավորվում են ՄԱՀՄ սահմանադրության 21-րդ, միութենական հանրապետությունների սահմանադրությունների համապատասխան հոդվածներով և 1938 թ. օգոստոսի 19-ի՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացիության վերաբերյալ օրենքով: Սովետական Միությունում սահմանված է միասնական քաղաքացիություն: «ՄԱՀՄ քաղաքացիների համար սահմանվում է միասնական միութենական քաղաքացիություն:

Միութենական Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում է ՄԱՀՄ-ի քաղաքացի» (ՄԱՀՄ սահմանադրության 21-րդ հ.): Հայկական ՄԱՀ 1937 թ. սահմանադրության 17-րդ հոդ. համաձայն «Հայկական ՄԱՀ յուրաքանչյուր քաղաքացի հանպիսանում է ՄԱՀՄ քաղաքացի»:

Անհրամշտ է նշել, որ առ այսօր օրենսդրականորեն չի յուծված միութենական հանրապետության քաղաքացիության հարցը, մասնավորապես ՀԱՄՀ քաղաքացիության վերաբերյալ մինչև հիմա հանրապետության օրենսդիրը համապատասխան իրավարանական ալկա չի բնղունել:

1938 թ. օգոստոսի 19-ի օրենքով սահմանված է, որ ՄԱՀՄ քաղաքացիներ են հանդիսանում բոլոր նրանք, ովքեր առ 7-ը նույնմբերի 1917 թ. Եղել են նախկին Ռուսաստանյան կալսրության հալատակներ և ղեն կորցրել սովետական քաղաքացիությունը, և նրանք, ովքեր օրենքով սահմանված կարգով ձևոք են բերել սովետական քաղաքացիություն:

Մինչև 1936 թ. սահմանադրության բնղունելը գործող օրենքներով ՄԱՀՄ տերիտորիայում բնակվող յուրաքանչյուր անձ, ով ղեր սուպարեզի իր օտարահալատակությունը, ավտոմատիկորեն համարվում էր սովետական քաղաքացի: Ալլժմ յուրաքանչյուր որ կարող է սովետական քաղաքացիություն ձևոք բերել միայն իր խնղրանբով: 1938 թ. օգոստոսի 19-ի օրենքով սահմանված կարգով:

Սովետական քաղաքացիություն ձեռք բերելու և քաղաքացիություն կորցնելու պայմանները հետևյալներն են.

Սովետական քաղաքացիություն ձեռք են բերում ի ծնե, «արյան իրավունքի» հիման վրա, որը նշանակում է սովետական քաղաքացիներից սերված ու ծնված անձը սովետական քաղաքացի է: Այս մասին ուղղակի հիշատակված չէ 1938 թ. օգոստոսի 19-ի օրենքում, սակայն օրենքի 6-րդ հոդվածի՝ «մինչև 14 տարեկան հասակի երեխաները հետևում են ծնողների քաղաքացիությանը» դրույթից բխում է, որ սովետական քաղաքացիների երեխաները սովետական քաղաքացիներ են անկախ ծննդավայրից:

Գործող օրենսդրությունն ուղղակի պատասխան չի տալիս նաև օտարերկրացի-երեխային սովետական քաղաքացու կողմից որդեգրելու և սովետական երեխային օտարերկրացիների կողմից որդեգրելու դեպքում երեխայի քաղաքացիությունը որոշելու հարցին:

Պրակտիկան խոսում է հօգուտ այն բանի, որ որդեգրումը ավտոմատիկորեն չի փոխում որդեգրվողի քաղաքացիությունը:

Քաղաքացիության վերաբերյալ 1938 թ. օրենքով օտարերկրացիներին և ապաքաղաքացիներին, անկախ ազգության և ասայի, ՍՍՀՄ քաղաքացիության մեջ են ընդունում նրանց խնդրանքով՝ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը կամ միութենական հանրապետության Գերագույն սովետի նախագահությունը, որի տերիտորիայում նրանք ապրում են: Այժմ գործող օրենսդրությամբ արտասահմանում բնակվող անձերին ՍՍՀՄ քաղաքացիության մեջ է ընդունում ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը, բւտ որում դիմումները ներկայացվում են Սովետական Միության ղեսպանական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների միջոցով:

Քաղաքացիության վերաբերյալ ՍՍՀՄ օրենսդրությանը համապատասխան լուծվեց էստոնական, կատվիական և կիտվական սովետական սոցիալիստական հանրապետությունների քաղաքացիներին ՍՍՀՄ քաղաքացի համարելու հարցը: Նույն ձևով կարգավորվեց Բեսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի բնակչության քաղաքացիական պատկանելիության հարցը:

Անցած համաշխարհային պատերազմից հետո ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը ընդունեց մի քանի հրամանագիր, որոնց հիման վրա սովետական քաղաքացիության մեջ վերականգնրվելու արտոնյալ պայմաններ սահմանվեցին առ 7-ը նոյեմբերի 1917 թ. դրությամբ նախկին Ռուսաստանյան կայսրության հպա-

տակների, նախկինում սովետական քաղաքացիության մեջ հղած անձերի և նրանց երեխաների համար, ովքեր ապրում էին Չինաստանի, Ճապոնիայի, Ֆրանսիայի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի, Բուլղարիայի և Բելգիայի տերիտորիաներում: Սովետական քաղաքացիությունը վերականգնելու ցանկություն ունեցող վերոհիշյալ կատեգորիայի անձերը պետք է սահմանված ժամկետում գրավոր դիմեն ՍՍՀՄ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններին, ներկայացնելով նախկին Ռուսաստանյան կայսրության հպատակ լինելու կամ սովետական քաղաքացիության մեջ նախկինում հղած լինելու մասին համապատասխան հիմք: Ներկայացված փաստաթղթերի բավարար լինելու դեպքում այդ անձանց տրվում էր բնակչության սովետական վկայագիր<sup>1</sup>:

1946 թ. հոկտեմբերի 19-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը հրամանագիր ընդունեց նաև հայրենադարձվող հայերի համար: Այդ հրամանագրի համաձայն արտասահմանից Հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձող հայազգի անձերը «ՍՍՀՄ քաղաքացիներ են ճանաչվում Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն ժամանելու պահից»<sup>2</sup>:

1938 թ. օգոստոսի 19-ի օրենքի 4-րդ հոդվածի համաձայն սովետական քաղաքացիությունից դուրս գալը կատարվում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության թույլտվությամբ:

ՍՍՀՄ քաղաքացու ամուսնությունը սովետական քաղաքացիություն չունեցող անձի հետ չի փոխում նրա քաղաքացիությունը:

Երեխաների քաղաքացիության հարցը կարգավորվում է այսպես. եթե երկու ծնողներն էլ ընդունում են սովետական քաղաքացիություն կամ երկուսն էլ դուրս են գալիս սովետական քաղաքացիությունից, մինչև 14 տարին չլրացրած երեխաներն ավտոմատիկորեն հետևում են ծնողների քաղաքացիությանը, 14—18 տարեկան երեխաների քաղաքացիության հարցը լուծվում է նրանց համաձայնությամբ, իսկ 18 տարին լրացածների քաղաքացիության հարցը կարգավորվում է ընդհանուր հիմունքներով:

ՍՍՀՄ քաղաքացիությունից զրկելը բւտ 1938 թ. օրենքի, կարող է կատարվել՝ ա) դատարանի դատավճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում, բ) ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հատուկ հրամանագրի ուժով: ՍՍՀ Միության և միութենա-

<sup>1</sup> Տե՛ս «Международное право в избранных документах», 1957, հ. I, էջ 142—145:

<sup>2</sup> Տե՛ս А. А. Есаян, Некоторые вопросы советского гражданства, 1966:

կան հանրապետությունների քրեական օրենսդրության հիմունքները (1958 թ.) և դրա հիման վրա ընդունված՝ միութենական հանրապետությունների քրեական օրենսգրքերը հողվածներ չեն բովանդակում այս կամ այն հանցավոր արարքի համար սովետական քաղաքացիությունից դատավճռով զրկելու մասին, ուստի և 1938 թ. օգոստոսի 19-ի՝ քաղաքացիության վերաբերյալ օրենքի 2-րդ հոդվածի ա) կետը գործնական նշանակություն չունի:

Քաղաքացիության վերաբերյալ սոցիալիստական մյուս երկրների օրենսդրությունները նույնպես ելնում են բոլոր քաղաքացիների իրավահավասարության սկզբունքից՝ անկախ ռասայի, ազգության, սեռի տարբերության: Սոցիալիստական երկրներում, որպես կանոն, ի ծնե քաղաքացիության հարցը կարգավորվում է «արյան իրավունքի» սկզբունքով, իսկ «հողի իրավունքը» կիրառվում է այն դեպքում, երբ ծնողներից մեկը օտարերկրացի է, երբ երեխան ծնվել կամ գտնվել է տվյալ սոցիալիստական պետության հողում, սակայն ծնողներն անհայտ են կամ անհայտ է ծնողների քաղաքացիությունը: Որոշ առանձնահատկություններ կան արմատավորմամբ (натурализация) քաղաքացիության մեջ ընդունելու հարցում: Օրինակ՝ պահանջվում է տվյալ երկրում բնակության որոշ ժամանակ (Բուլղարիայում՝ 5, Չեխոսլովակիայում՝ 5 տարի), քաղաքացիություն հայցողը չպետք է այլ պետության քաղաքացի լինի (Ռումինիա, Լեհաստան), սահմանված է հավատարմության երդում (Չեխոսլովակիա) և այլն:

Քաղաքացիությունից զուրս գալը թույլատրվում է Լեհաստանում՝ Պետական խորհրդի, Բուլղարիայում և Ռումինիայում՝ սրբադարազատության մինիստրի, Չեխոսլովակիայում և Հունգարիայում՝ ներքին գործերի մինիստրի կողմից: Քաղաքացիությունից զրկել կարող են. Ռումինիայում՝ ժողովրդական Մեծ ժողովի նախագահությունը, Բուլղարիայում՝ Մինիստրների խորհուրդը, Լեհաստանում՝ Պետական խորհուրդը և այլն: Ամուսնության կապակցությամբ քաղաքացիության հարցը կարգավորելիս շափանիչ է ընդունվում այն, որ ամուսնական ակտը չի աղղում ամուսինների քաղաքացիության վրա: Չեխոսլովակյան օրենքով Չեխոսլովակիայի հանրապետության քաղաքացու հետ ամուսնացող օտարուհին ձեռք է բերում ամուսնու քաղաքացիությունը, եթե մարդային ազգային կոմիտեն համաձայն է նրա խնդրանքին:

\* \* \*

Պետության քաղաքացիների այսպես կոչված ֆունդը հիմնա-

կանում համարվում է բնական ճանապարհով, երբ անձիք քաղաքացիություն են ձեռք բերում, հասկանալի է, անկախ իրենց կամքի, պետության օրենքի ուժով: Անձի քաղաքացիությունը ըստ հրեյնդի կարգավորելիս աշխարհի պետությունները որպես շափանիչ են ընդունում երկու հիմնական սկզբունքներից մեկն ու մեկը, առանձին դեպքերում կիրառում են երկու սկզբունքի համակցությունը: Այդ սկզբունքներն են. տերիտորիալ, այսպես կոչված հողի իրավունք (jus soli) և ազգային-արյան իրավունք (jus sanguinis): Հողի իրավունքի երկրների օրենսդրությամբ յուրաքանչյուր ոք, ով ծնվել է տվյալ երկրի տերիտորիայում, համարվում է նրա քաղաքացին, անկախ նորածնի ծնողների քաղաքացիությունից: Քաղաքացիության հարցում տերիտորիալ սկզբունք կիրառում են այն երկրները, որոնք շահագրգռված են իրենց քաղաքացիների քանակն աճելացնել ի հաշիվ այլ պետությունների քաղաքացիներից ծնված երեխաների, որոնց ծնողները այս կամ այն պատճառով, մեծ մասամբ գաղթականները, ստիպված են ժամանակավոր կամ մշտական բնակություն հաստատել հողի իրավունքի այդ երկրում: Տերիտորիալ սկզբունքը կիրառվում է գլխավորապես Ամերիկյան մայր ցամաքում և հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

«Արյան իրավունքի» երկրների օրենսդրությամբ յուրաքանչյուր ոք, ով ծնվել է տվյալ պետության քաղաքացիներից, համարվում է նրա քաղաքացին՝ անկախ ծննդավայրից:

Ազգային սկզբունքը կամ արյան իրավունքը կիրառում են հիմնականում այն երկրները, որոնցից կատարվում է կամ կատարվել է արտագաղթ և որոնք շահագրգռված են ներգաղթի և իրենց քաղաքացիների հայրենիք վերադառնալու մեջ:

Քաղաքացիություն ձեռք են բերում արմատավորմամբ (натурализация): Արմատավորումն այն է, որ պետությունը քաղաքացիություն է տալիս օտարերկրացուն կամ ասլաքաղաքացուն նրանց խնդրանքով: Արմատավորման պայմանները սահմանվում են պետության ազգային օրենսդրությամբ: Կապիտալիստական երկրներում կիրառվում են որոշակի սահմանափակումներ քաղաքական, սոսալական, ազգային, կրոնական հատկանիշներով, գոյության միջոցներ չունենալու պատճառաբանությամբ և այլն: ԱՄՆ-ի օրենսդրությամբ արմատավորմամբ քաղաքացիություն ձեռք բերելու համար պահանջվում է նախնական դիմում, ապա երկու տարի անցնելուց հետո պետք է կրկնել դիմումը: Նախնական դիմում ներկայացնելու համար պահանջվում է 18 տարեկան լի-

նել, իսկ վերջնական դիմում ներկայացնելու համար անձը ԱՄՆ-ում պետք է ապրած լինի 5 տարի և բավականաչափ տիրապետի անգլերեն լեզվին: Արմատավորմամբ քաղաքացիություն ձեռք բերելու խնդրանքը կարող է մերժվել, եթե դիմողը «գոյություն ունեցող կարգի» թշնամի է, եթե խնդրատուն ծառայական կամ գործարար կապեր չունի ԱՄՆ-ի հետ:

Արմատավորմամբ անգլիական քաղաքացիություն ձեռք բերելու համար պահանջվում է. հնգամյա բնակություն մետրապոլիտանում կամ «անդրծովյան տիրություններում», անգլերեն լեզուն բավականաչափ իմանալ, «յավ բարոյականություն» և դիմում Անգլիայում մշտական բնակություն հաստատելու մասին:

Ֆրանսիայում պահանջվում է, որպեսզի քաղաքացիություն ձեռք բերել ցանկացող անձը 18 տարեկան լինի, բավականաչափ ֆրանսերեն իմանա, Ֆրանսիայում ապրած լինի ոչ պակաս հինգ տարի, վարի «ճիշտ և առողջ ապրելակերպ» և ունենա գոյություն միջոցներ:

Արմատավորմամբ քաղաքացիություն ձեռք բերելը կարող է կապված լինել ամուսնության հետ, երբ ամուսիններից մեկը և հիմնականում կինը օտարերկրացի է: Մինչև XX դարը բուրժուական երկրների մեծամասնության օրենսդրությամբ կինը, ամուսնանալով օտարերկրացու հետ, ավտոմատիկորեն ձեռք էր բերում նրա քաղաքացիությունը: Առանձին երկրներում. օրինակ, Բրազիլիայում, երկրի քաղաքացու ամուսնությունը օտարերկրացու հետ վերջինիս հաղորդում է իր քաղաքացիությունը: Բրազիլիայում անշարժ սեփականություն ունեցող և նրա տերիտորիայում բնակվող օտարերկրացին ամուսնանալով բրազիլուհու հետ ձեռք էր բերում բրազիլական քաղաքացիություն: Բրազիլական քաղաքացու հետ ամուսնացած օտարուհին ավտոմատիկորեն ձեռք էր բերում Բրազիլական քաղաքացիություն:

Ամուսնության դեպքում կնոջ քաղաքացիության կարգավորման նման եղանակի հիմքում ընկած էր կնոջ անիրավահավասար վիճակը կապիտալիստական երկրներում:

Աշխարհում տեղի ունեցած սոցիալական տեղաշարժերը և մասնավորապես Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով կնոջը Ռուսաստանում լիակատար իրավահավասարություն տալը որոշակիորեն ներգործում են բուրժուական երկրների օրենսդրության վրա՝ ամուսնացած կնոջ քաղաքացիությունը փոխելը նրա ցանկությունից կախվածության մեջ դնելու իմաստով: Այժմ բուրժուական երկրներում գործող օրենսդրությամբ (ԱՄՆ, Ֆրանսիա,

Ռեզիա և այլն) ամուսնության կապակցությամբ կնոջ քաղաքացիությունը փոխելը կարող է տեղի ունենալ նրա հատուկ դիմումի հիման վրա: Այսպես, օրինակ, օտարերկրացու հետ ամուսնացող ֆրանսուհին պահանջում է իր քաղաքացիությունը, եթե կամուրջի շնորհիվ, որ հրաժարվում է ֆրանսիական քաղաքացիությունից, իսկ եթե օտարուհին է ամուսնանում ֆրանսիացու հետ՝ ձեռք է բերում ֆրանսիական քաղաքացիություն ամուսնության պահից, սակայն, եթե օտարուհու ազգային օրենքը թույլատրում է պահպանել իր քաղաքացիությունը, նա իրավունք ունի մինչև ամուսնությունը հայտարարել, որ հրաժարվում է ֆրանսիական քաղաքացիությունից: Առանձին երկրների օրենսդրությամբ երկրի քաղաքացուհին, եթե արտասահմանում ամուսնանում է օտարերկրացու հետ և երկար ժամանակ ապրում է հայրենական պետությունից դուրս, կորցնում է իր քաղաքացիությունը (Դանիա, Նորվեգիա):

Ամուսնության կապակցությամբ քաղաքացիությունը պահպանելու կամ փոխելու հարցում կնոջ համար իրավահավասար վիճակ ապահովելու հարցը տեղ է գտել առանձին միջազգային ակտերում, 1933 թ. Միջամերիկյան կոնֆերանսը Մոնտեվիդեոյում կնոջ քաղաքացիության վերաբերյալ կոնվենցիա ընդունեց, որի մեջ արձանագրվեց մասնակից-պետությունների պարտավորությունը քաղաքացիության ասպարեզում մեկ կամ մյուս սեռին պատկանելու հիման վրա տարբերություն չսահմանելու 1934 թ. Սովետական Միությունը Ազգերի լիգայի քննարկմանը նման առաջարկություն ներկայացրեց, սակայն մերժում ստացավ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի XI նստաշրջանում հավանության արժանացավ ամուսնացած կնոջ քաղաքացիության վերաբերյալ կոնվենցիան, որը պահանջում է կնոջը տղամարդուն հավասար իրավունքներ վերապահել քաղաքացիության հարցում: Այդ կոնվենցիայի 1-ին հոդ. սահմանում է. օտարերկրյա պետության քաղաքացու հետ ամուսնանալու, ամուսնալուծության, ինչպես նաև ամուսնու քաղաքացիությունը փոխելու դեպքում կնոջ քաղաքացիությունն ավտոմատիկորեն չի փոխվում: Կոնվենցիայի մասնակիցները համաձայնվել են, որ քաղաքացու կողմից այլ պետության քաղաքացիություն ընդունելը կամ քաղաքացիությունից հրաժարվելը չեն խոչընդոտի, որպեսզի նման քաղաքացու կինը պահպանի իր քաղաքացիությունը (հոդ. 2): Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն մասնակիցները համաձայնվել են, որ իրենց

քաղաքացիներին որևէ մեկի հետ ամուսնացած օտարուհին կարող է իր խնդրանքով ձեռք բերել ամուսնու քաղաքացիությունը՝ արմատավորման հատուկ պարզեցված ձևով<sup>3</sup>։

Քաղաքացիության ձեռք բերումը կապված է նաև որդեգրության հետ։ Խոսքը վերաբերում է այն բանին, թե ինչպես պետք է կարգավորվի երեխայի քաղաքացիության հարցը, երբ՝ 1) պետության քաղաքացին որդեգրում է երեխայի, որը քաղաքացիություն չունի կամ 2) այլ պետության քաղաքացի է։ Ընդհանուր կանոնն այն է, որ նման դեպքերում երեխան ձեռք է բերում որդեգրողի քաղաքացիությունը, ըստ որում պետք է պահպանվեն և՛ որդեգրողի, և՛ որդեգրվողի ազգային օրենքի պահանջները։ Երբ այդ երկու օրենսդրությունների միջև էական տարբերություններ կան, անխուսափելիորեն վեճեր են ծագում շահագրգռված պետությունների միջև։

Քաղաքացիության մեջ կարող են փոփոխություններ տեղի ունալ, երբ տերիտորիան մեկ պետությունից փոխանցվում է մյուսին։ Նման դեպքում փոխանցվող տերիտորիայի բնակչության քաղաքացիության հարցի լուծման դեմոկրատական եղանակը օպտացիան է, այսինքն՝ ազատորեն ընտրելու երկու պետություններից մեկի քաղաքացիությունը՝ պահպանել նախկին պետության քաղաքացիությունը կամ ընդունել այն պետության քաղաքացիությունը, որին տերիտորիան փոխանցվում է։ Քաղաքացիության ընտրությունը կատարվում է, որպես կանոն, անհատական դիմումների միջոցով, եթե անձը ընտրում է իր նախկին քաղաքացիությունը, ապա սովորաբար ժամանակ է տրվում իր քաղաքացիության պետություն վերաբնակվելու համար, ըստ որում պահպանվում են օպտանտի գույքային իրավունքները։

Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ուս-թուրքական պայմանագրի XII հոդվածի և Ղարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի՝ Քուրդիայի և անգրկովկասյան հանրապետությունների միջև կնքված պայմանագրի 13-րդ հոդվածի համաձայն մինչև 1918 թ. Ռուսաստանի մասը կազմող և Քուրդիայի սովերենության ներքո ճանաչված տերիտորիաների յուրաքանչյուր բնակիչ իրավունք ուներ, եթե կամենար, դուրս գալ թուրքական քաղաքացիությունից, աղատորեն հեռանալ Քուրդիայից և վերցնել հետը իր իրերը, իր գույքը կամ

դրանց արժեքը<sup>4</sup>։ Օպտացիա էր նախատեսված Անդրկարպատյան նկրահնայի վերաբերյալ 1945 թ. հունիսի 29-ի սովետա-չեխոսլովակյան պայմանագրով։ Պայմանագրի համաձայն Չեխոսլովակիայի տերիտորիայում (Սլովակիայի շրջաններում)՝ ապրող ուկրաինական և ռուսական ազգության անձերը և Անդրկարպատյան Ուկրահնայի տերիտորիայում ապրող սլովակյան և չեխական ազգության անձերը իրավունք ստացան ընտրելու Սովետական Միության կամ Չեխոսլովակիայի քաղաքացիություն։ Օպտացիայի համաձայնությունը ստանալու օրից հաշված՝ 12 ամսվա ընթացքում օպտանտները պետք է վերաբնակվեին այն պետություն, որի քաղաքացիությունն են ընտրել։ Նրանք կարող էին իրենց հետ վերցնել ամբողջ շարժական գույքը, իսկ մնացող անշարժ գույքի համար օպտանտները պետք է փոխհատուցում ստանային։

Մինչև XVIII դարը տերիտորիայի փոխանցման ժամանակ ավտոմատիկորեն փոխվում էր փոխանցվող տերիտորիայի բնակչության քաղաքացիությունը (տրանսֆերտ), ավելի ճիշտ՝ հպատակությունը։

Քաղաքացիությունից զրկելու շարժառիթները տարբեր են լինում։ Սոցիալիստական երկրներում անձին քաղաքացիությունից զրկելը բացառիկ ակտ է և գլխավորապես վերաբերում է սոցիալիստական պետության քաղաքացիության բարձր պատիվը արատավորող անձերին։ Օրինակ՝ Չեխոսլովակյան քաղաքացիություն ձեռք բերելու և կորցնելու վերաբերյալ 1949 թ. հուլիսի 13-ի օրենքի համաձայն ներքին գործերի մինիստրությունը կարող է զրկել քաղաքացիությունից արտասահմանում գտնվող անձերին, եթե նրանք զբաղվել կամ դբաղվում են Չեխոսլովակյան պետության նկատմամբ թշնամական կամ նրա շահերին վնասող գործունեությամբ։

Կապիտալիստական երկրներում քաղաքացիությունից զրկելը ուղղված է տուաչին հերթին իշխանության գլուխ կանգնած քաղաքական շրջանների հակառակորդների դեմ։ Այսպես վարվեց՝ Նուսատանում իշխանության գլուխ անցած «սե գնդապետների» խունտան՝ արտասահմանում գտնվող իր քաղաքական հակառակորդներին զրկելով քաղաքացիությունից։

Քաղաքացիություն ձեռք բերելու մասնակի եղանակներից է ուկրաինացիան (քաղաքացիություն վերընդունելը), այսինքն՝ տրվյալ պետության քաղաքացիությունը նորից ընդունելը։ Որպես կա-

<sup>3</sup> Տե՛ս «Современное международное право» (Сборник документов), 1964, էջ 286—287։

<sup>4</sup> Տե՛ս «Документы внешней политики СССР», հ. III, էջ 601, հ. IV, էջ 425։



նոն ռեինտեգրացիայի արտոնյալ պայմաններ են սահմանվում այն անձանց համար, ովքեր գաղթել են երկրից և վերադարձնում են հայրենիք, օտարերկրացու հետ ամուսնանալու կապակցությամբ հայրենական պետության քաղաքացիությունը կորցրած այրիացած կամ ամուսնալուծված կանանց համար և այլն: Այսպես, օրինակ, Սովետական Հայաստանի քաղաքացիության վերաբերյալ ղեկիտինախագծի (1922 թ.) 3-րդ հոդվածի համաձայն Հայաստանի քաղաքացիներ էին համարվում... օտարականների հետ ամուսնացած՝ հետագայում այրիացած կամ ամուսնալուծված, նախկինում Հայաստանի քաղաքացի հանդիսացած կանայք, եթե նրանք ցանկություն հայտենեն վերընդունել հայկական քաղաքացիություն, աչք այրիացած կամ ամուսնալուծված կանանց երեխաները...»:

## § 2. ԱՊԱՔԱՂԱՔԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԿՔԱՂԱՔԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Ապաքաղաքացիությունը (ապոլիդիզմ, ապատրիդիզմ) անձի այնպիսի վիճակ է, երբ նա որևէ պետության քաղաքացի չէ: Ապաքաղաքացիությունը վրա է հասնում տարբեր պետությունների օրենսդրությունների կոլիզիայի հետևանքով, երբ անձը դուրս է գալիս կամ զրկվում է մի պետության քաղաքացիությունից և ձեռք չի բերում մի այլ պետության քաղաքացիություն: Ապաքաղաքացիության վիճակ կարող է վրա հասնել ամուսնության կապակցությամբ: Եթե հայրենական պետության օրենքով կնոջ ամուսնությունը օտարերկրացու հետ ավտոմատիկորեն նրան զրկում է քաղաքացիությունից, իսկ ամուսնու երկրի օրենքը քաղաքացիություն չի հաղորդում ամուսնության ղեպքում, ապա օտարերկրացու հետ ամուսնացած կինը կդառնա ապաքաղաքացի: Ապաքաղաքացու վիճակ է առաջանում ապաքաղաքացի ծնողներից ծնված երեխայի համար, քաղաքացիությունն անհայտ ծնողներից ծնված անձի համար, ինչպես նաև այն ունձանց համար, ովքեր քաղաքացիությունից զրկվել են դատավճռով կամ հատուկ կառավարական ակտերի ուժով:

Ապաքաղաքացիների զգալի դանդաղաներ առաջացան առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ կապված վտարանդիության և առանձին ղեպքերում բնակչությանը դանդաղաներն արտագաղթեցնելու հանգամանքի հետ: Ապաքաղաքացիության իրա-

վիճակ ստեղծվեց հայ գաղթականների համար, ովքեր զրկվեցին թուրքական հպատակությունից (քաղաքացիությունից), սակայն ձեռք չբերեցին որևէ պետության քաղաքացիություն:

Ապաքաղաքացիները-ապատրիդները օգտվում են սահմանափակ իրավասություններով՝ համեմատած պետության քաղաքացիների հետ, որի տերիտորիայում ապրում են: Քաղաքացիություն չունեցող անձը ենթարկվում է այն պետության օրենքներին, որի տերիտորիայում ապրում է, չի օգտվում ընտրական և այլ իրավունքներից, որպիսիք արամադրվում են քաղաքացիներին: Ապաքաղաքացին չի օգտվում նաև միջազգային համաձայնագրերով օտարերկրացիներին տրվող իրավունքներից և, վերջապես, նա չի կարող օգտվել որևէ պետության դիվանագիտական պաշտպանությունից:

Մինչև 1938 թ. օգոստոսի 19-ի քաղաքացիության վերաբերյալ օրենքը ապաքաղաքացիությունը որպես անձի իրավիճակ ՍՍՀՄ-ում չէր ճանաչվում, և ով չէր ապացուցի իր օտարահպատակությունը, դիտվում էր որպես սովետական քաղաքացի: 1938 թ. օրենքի 8-րդ հոդվածի համաձայն նա, ով ՍՍՀՄ քաղաքացի չէ և ապացուցներ չունի օտարերկրյա քաղաքացի լինելու մասին, համարվում է առանց քաղաքացիության անձ: ՍՍՀՄ-ում ապաքաղաքացիները ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն, սակայն օգտվում են սովետական քաղաքացիների համար սահմանված մնացած իրավունքներից:

Կապիտալիստական երկրներում ապաքաղաքացիների համար որոշակի սահմանափակումներ են մտցված աշխատանքային օրենսդրության, սոցիալական ապահովվածության, բնակության վայր ընտրելու և այլ ասպարեզներում:

Ապաքաղաքացիության վերացումն ու սահմանափակումը եղել են մի շարք միջազգային կոնֆերանսների քննարկման առարկա: Այդ հարցը քննարկվեց Հաագայի 1930 թ. կոնֆերանսում, սակայն մասնակիցները գործնական արդյունքների չհասան: Ապաքաղաքացիության պրոբլեմով զբաղվել է Միավորված Ազգերի Կազմակերպության միջազգային իրավունքի հանձնաժողովը, որը մշակեց երկու կոնվենցիայի նախագիծ. 1) ապագայում ապաքաղաքացիության ղեպքերը կրճատելու վերաբերյալ, 2) ապագայում ապաքաղաքացիությունն արմատախիլ անելու վերաբերյալ: Այդ նախագծերի հիմքում տրված է «հողի իրավունքի» սկզբունքը: Առաջին կոնվենցիայի նախագծի 1-ին հոդվածում ասված է. որ անձը, եթե այլ կերպ չի կարող քաղաքացիություն ունենալ, քա-

<sup>5</sup> Տե՛ս А. А. Есаян, Некоторые вопросы советского гражданства, էջ 47:

դաքացիին է այն պետություն, որի տերիտորիայում ծնվել է: Անհայտ ծնողներից ծնված երեխան, որի ծննդավայրը պարզ չէ, համարվում է այն պետության տերիտորիայում ծնված, որտեղ գրանցվել է: Կոնվենցիաների նախագծերում նշված է, որ ուրիշ պետության քաղաքացիություն ընդունելու կապակցությամբ քաղաքացիությունը կորցնելը, քաղաքացիությունից հրաժարվելը, ինչպես նաև քաղաքացիությունից զրկելը կարող են տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ ավելի անձը ձեռք է բերել այլ քաղաքացիություն:

Հիշատակված երկու կոնվենցիաների նախագծերում էլ արտացոլված է միջազգային իրավունքի առաջնությունը ներպետական իրավունքի նկատմամբ, չնայած նրան, որ քաղաքացիության սյուրբլնմի կարգավորումը առաջին հերթին պետության ներքին իրավասության մեջ մտնող հարց է: Պետության ներքին իրավասության մեջ ներխուժելը ցայտուն կերպով արտահայտված է Ապաղայում ապաքաղաքացիությունը կրճատելու վերաբերյալ կոնվենցիայի նախագծի 11-րդ հոդվածում, ըստ որի նախատեսվում է ՄԱԿ-ի շրջանակներում ստեղծել այնպիսի մարմին, որը, երբ ինքը անհրաժեշտ համարի, ապաքաղաքացիների անունից հանդես գա կառավարությունների և դատարանի առաջ: Այս դատարանն էլ պետք է հիմնադրվի Միավորված Ազգերի Կազմակերպության շրջանակներում, և նա իրավասու է լինելու որոշումներ կայացնելու կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ և որոշումներ է կայացնելու բոլոր այն անձանց բողոքների վերաբերյալ, ովքեր պնդում են, որ քաղաքացիությունից զրկվել են ի խախտումն կոնվենցիայի դրույթների<sup>6</sup>:

Ապաքաղաքացիության իրավիճակի հակապատկերը երկվադամացիությունն է: Վերջինս այնպիսի իրավիճակ է, երբ անձը միաժամանակ երկու և ավելի պետության քաղաքացի է (բիպատրիդ): Երկքաղաքացիությունը կամ, ինչպես երբեմն ասում են, քաղաքացիության կոմուլյացիան (կուտակումը) կարող է ծագել մասնավորապես այն դեպքում, երբ «արյան իրավունքի» երկրի քաղաքացիներից երեխան ծնվում է «հողի իրավունքի» երկրի տերիտորիայում: Օրինակ՝ Չեխոսլովակյան քաղաքացիներից ԱՄՆ-ում ծնված երեխան ի ծնե միաժամանակ կլինի և չեխոսլովակյան և ամերիկյան քաղաքացի: Երկքաղաքացիություն կառաջանա կնոջ ամուսնությունից օտարերկրացու հետ, եթե վերջինիս ազգային

սրենքը կնոջն ավտոմատիկորեն հաղորդում է ամուսնու քաղաքացիությունը, իսկ կնոջ հայրենական օրենքը ավտոմատիկորեն չի ազատում քաղաքացիությունից: Երկքաղաքացիություն առաջանում է նաև այն դեպքում, երբ անձը առանց ազատվելու իր քաղաքացիությունից արմատավորման կարգով ընդունում է նոր քաղաքացիություն: Եթե երկքաղաքացին արմատավորման կարգով ընդունի մեկ այլ պետության քաղաքացիություն, կամ եթե երկրաքաղաքացի կլինի ամուսնանա օտարերկրացու հետ, որի հայրենական պետությունը կնոջն ավտոմատիկորեն հաղորդում է ամուսնու քաղաքացիությունը, ապա վրա կհասնի անձի եռաքաղաքացիություն:

Երկքաղաքացու իրավական վիճակի բարդությունը կայանում է նրանում, որ նա հանդես է գալիս որպես երկու հայրենիք-պետության քաղաքացի և պարտավոր է իր քաղաքացիական պարտականությունը կատարել հայրենիքի հանդեպ, մասնավորապես ծառայի նրա զինված ուժերի շարքերում: Դրությունն էլ ավելի է բարդանում, երբ երկքաղաքացու հայրենիքները պատերազմում են միմյանց դեմ: Երկքաղաքացին, լինելով նրանցից մեկի զինված ուժերի շարքերում, ապամա հանդես է գալիս որպես դավաճան մյուս հայրենիքի նկատմամբ՝ այստեղից բխող հետևանքներով: Պրակտիկայում երրորդ պետությունը իր հայեցողությամբ երկքաղաքացուն դիտում է նրա հայրենիքներից մեկի կամ մյուսի քաղաքացին: Որոշ դեպքերում կիրառվում է այսպես կոչված «էֆեկտիվ քաղաքացիության» շարժանիշը: Օրինակ՝ Միավորված Ազգերի Կազմակերպության միջազգային դատարանի և միջազգային իրավունքի հանձնաժողովում անդամության համար առաջադրված երկքաղաքացին համարվում է այն պետության քաղաքացին, որտեղ օգտվում է իր քաղաքացիական և քաղաքական իրավունքներից:

Երկքաղաքացիության իրավիճակը միջազգային մասշտաբով վերացնելու ուղղությամբ բազմաթիվ քայլեր են ձեռնարկվել, սակայն հարցը վերջնականապես մինչև հիմա չի լուծված: Երկքաղաքացիությունը կրճատելու և վերացնելու վերաբերյալ կնքվել են երկկողմանի համաձայնագրեր և կոնվենցիաներ: XIX դարի 60-ական թվականին երկքաղաքացիության հարցի շուրջ կնքվեցին, այսպես կոչված, բանկրոսիտյան պայմանագրեր (Բանկրոսիտը քաղաքական գործիչ էր, ԱՄՆ-ի դեսպանորդը Բեռլինում), Հյուսիս-գերմանական միության և Հարավգերմանական պետությունների և ԱՄՆ-ի միջև, որոնց հիման վրա փոխադարձաբար ճանաչում

<sup>6</sup> Տե՛ս «Современное международное право» (Сборник документов), 1964, էջ 288—292:

էին գերմանական վտարանդիների կողմից ԱՄՆ-ում ձեռք բերած քաղաքացիությունը և ամերիկյան վտարանդիների՝ Գերմանիայում ձեռք բերած քաղաքացիությունը: Նման բնույթի պայմանագիր ԱՄՆ-ը կնքեց Մեծ Բրիտանիայի հետ, որի համաձայն կողմերից մեկը ձանաչում էր իր քաղաքացիների արմատավորումը մյուս կողմի տերիտորիայում և չպետք է նրանց զիտեր որպես իր հոգատակներ, եթե նրանք այնտեղ ապրել են 5 տարուց ավելի<sup>7</sup>:

1930 թ. Հաագայի կոնֆերանսներում փորձեր կատարվեցին կողմիֆիկացնելու միջազգային իրավունքը, այդ թվում կարգավորելու երկքաղաքացիության հարցերը: 1930 թ. ապրիլի 12-ին կոնվենցիա ստորագրվեց քաղաքացիության վերաբերյալ օրենքների կոլիզիայի մի քանի հարցերի մասին, որի առանձին դրույթներում խոսվում էր երկքաղաքացիության շուրջ: Կոնվենցիայի պրիամբուլայում հռչակվեց, որ «չուրաքանչյուր անձ պետք է քաղաքացիություն ունենա, ըստ որում միայն մեկ քաղաքացիություն», պետք է ձգտել, որպեսզի «վերացվեն ինչպես ապաքաղաքացիության այնպես էլ երկքաղաքացիության ղեպերը»: Այնուհետև նշվում էր, որ սիտություններից մեկը, նաև որի քաղաքացին է անձը, չպետք է հովանավորի նրան, երբ նա բնակվում է մյուսի տերիտորիայում և այլն: Կոնվենցիան միաժամանակ հաստատում էր, որ չուրաքանչյուր պիտություն ինքնուրույնաբար, ներքին օրենսդրությամբ սահմանում է, թե ով է իր քաղաքացին:

1930 թ. միաժամանակ արձանագրություն ստորագրվեց պինվորական պարտականության վերաբերյալ՝ երկքաղաքացիության մի քանի ղեպերում: Այդ արձանագրությունը նախատեսում էր, որ երկու կամ ավելի պետության քաղաքացի հանդիսացող անձը, որը ասյրում է այդ պետություններից մեկում և նրա հետ փաստորեն ավելի է կապված, մնացած բոլոր պետություններում ազատվում է գինվորական պարտականություններից:

Երկքաղաքացիության պրոբլեմով զբաղվում է ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը: Զեկուցող նշանակված հանձնաժողովի անդամը ներկայացրել է երկու կոնվենցիայի նախագիծ.

1) երկքաղաքացիության ղեպերը կրճատելու մասին և 2) ապազայում երկքաղաքացիությունը վերացնելու մասին<sup>8</sup>: Այդ կոնվենցիաների նախագծերի բովանդակությունը հետևյալն է.

<sup>7</sup> Տե՛ս «Дипломатический словарь», т. I, էջ 159:

<sup>8</sup> Տե՛ս «Законодательство СССР и международные соглашения по вопросам гражданства», М., 1964:

պետությունները համաձայնվում են ձեռնպահ մնալ իրենց տերիտորիայում շնչված երեխային քաղաքացիություն տալուց: Եթե անձը ընդունում է այլ պետության քաղաքացիություն, ապա կորցրնում է իր ունեցած քաղաքացիությունը: Եթե պետության օրենսդրությունը նախատեսում է քաղաքացիության ձեռք բերում՝ ամուսնության կամ որդեգրման հետևանքով, ապա այդպիսով քաղաքացիության ձեռք բերելուն պետք է հետևի այն քաղաքացիությունը կորցնելը, որ ունեին շահագրգռված անձերը առաջ: Ըստ նախագծերի՝ տերիտորիաներ գիջելու վերաբերյալ պայմանագրերը պետք է դրույթներ բովանդակեն, որպեսզի փոխանցվող տերիտորիայի բնակիչները չընկնեն երկքաղաքացիության իրավիճակի մեջ: Այդ նախագծերը առայժմ քննարկման չեն ներկայացվել:

Այսպիսով, երկքաղաքացիության պրոբլեմի միջազգային իրավական կարգավորումը տակավին չի լուծվել:

1956—1958 թթ. ՄՍՀՄ-ը կոնվենցիաներ կնքեց Ալբանիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, ԿԺԴՆ-ն, ՄժՀ-ն, Լեհաստանի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի հետ, որոնք նախատեսում են երկքաղաքացիության ղեպերի վերացումը՝ շահագրգռված անձերի կամավոր բնտրության հիման վրա: Ըստ այդ համաձայնագրերի պայմանագիր մեկ կողմի տերիտորիայում բնակվող անձը եթե կամենում է մնալ պայմանագիր մյուս կողմի քաղաքացիության մեջ, այդ մասին դիմում է ներկայացնում վերջինիս դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը՝ համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց մեկ տարվա ընթացքում: Եթե անձը բնակվում է հրրսրդ պետության տերիտորիայում, ապա դիմում է ներկայացնում այն պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը ում քաղաքացիության մեջ կամենում է մնալ: Դիմումներ ներկայացնում են շափահասները: Այդ համաձայնագրերով շափահասներ են համարվում 18 տարին բուրբած անձերը կամ դրանից փոքրերը, եթե ամուսնացած են:

Անշափահաս երեխան հետևում է ծնողների քաղաքացիությանը, եթե երկու ծնողներն էլ միևնույն քաղաքացիությունն ունեն, կամ ծնողներից մեկի քաղաքացիությանը, եթե ծնողներից կենդանի է մեկը:

Եթե ծնողներից մեկն ունի կամ ընտրում է պայմանագիր կողմերից մեկի քաղաքացիությունը, իսկ երկրորդը՝ մյուս, ապա նրանց անշափահաս երեխաների քաղաքացիությունը որոշվում է ծնողների համաձայնությամբ, որը պետք է արտահայտվի նրանց

համատեղ դիմումի մեջ: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում երեխաները պահպանում են այն կողմի քաղաքացիությունը, որի տերիտորիայում նրանք բնակվում են:

Անշափահաս երեխան, որի ծնողներից մեկը բնակվում է կողմերից մեկի տերիտորիայում, իսկ երկրորդը՝ մյուսի, պահպանում է այն ծնողի քաղաքացիությունը, որի դաստիարակության տակ նա դասվում է, եթե այդ առթիվ բացակայում է ծնողների համաձայնությունը:

Երրորդ պետության տերիտորիայում բնակվող երեխան պահպանում է այն կողմի քաղաքացիությունը, որի տերիտորիայում ինքը կամ նրա ծնողները մշտապես բնակվել են մինչև արտասահման մեկնելը:

Մահացած ծնողների կամ այն ծնողների երեխան, որոնց բնակավայրը անհայտ է, պահպանում է այն կողմի քաղաքացիությունը, որի տերիտորիայում նա բնակվում է, սակայն 14 տարին լրացրած երեխաները կարող են քաղաքացիություն ընտրել ինքնուրույնաբար:

Առանձին համաձայնագրեր դրույթներ են պարունակում ապագայում երկքաղաքացիության իրավիճակի գոյանալը կանխելու վերաբերյալ, որը հիմնականում վերաբերում է խառն ամուսնությունից ծնված երեխաների քաղաքացիության հարցին: Ապագայում երեխաների երկքաղաքացիություն առաջանալու դեպքում նրանց քաղաքացիության հարցը լուծվում է ծնողների համաձայնությամբ, որը պետք է արտահայտվի համատեղ դիմումում: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում երեխան կհամարվի այն կողմի քաղաքացին, ում տերիտորիայում ծնվել է: Եթե երեխան ծնված լինի երրորդ պետության տերիտորիայում՝ կհամարվի այն կողմի քաղաքացին, ում տերիտորիայում մշտապես բնակվել են ծնողները մինչև արտասահման մեկնելը:

Համաձայնագրերը կարգավորում են նաև այն երկքաղաքացիների հարցը, ովքեր սահմանված ժամկետում դիմում չեն ներկայացնի քաղաքացիություն ընտրելու մասին: Երկքաղաքացիների քաղաքացիությունը կարգավորելու վերաբերյալ սովետա-կո-

րեական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն այն անձիք, ովքեր սահմանված ժամկետում դիմում չեն տա քաղաքացիություն ընտրելու վերաբերյալ, կհամարվեն բացառապես քաղաքացին այն պայմանագիր կողմի, որի տերիտորիայում նրանք բնակվում էին: Քաղաքացիություն ընտրելու մասին չդիմած՝ երրորդ պետության տերիտորիայում բնակվող անձերը համարվում են այն կողմի քաղաքացին, որի տերիտորիայում մշտապես բնակվել են արտասահման մեկնելուց առաջ:

Երկքաղաքացիությունը վերացնելու վերաբերյալ համաձայնագրերը միաժամանակ սահմանում են, որ կողմերից մեկի տերիտորիայում բնակվող՝ մյուս կողմի քաղաքացիությունն ընտրած անձը դիտվելու է որպես օտարերկրացի:

1956 թ. մայիսի 22-ին Հարավսլավիայի և ՍՍՀՄ-ի միջև կրնքված կոնվենցիան որոշ առանձնահատկություններ ունի: Կոնվենցիան կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնց պայմանագիր հրկու կողմերն էլ համարում են իրենց քաղաքացիները. որ չավել այդ անձի կողմերից մեկի կամ մյուսի տերիտորիայում են ապրում: Կոնվենցիան չի կիրառվում այն անձանց նկատմամբ, ովքեր, լինելով պայմանագիր կողմերից մեկի քաղաքացին, ձեռք են բերել մյուս կողմի քաղաքացիությունը առանց իրենց առաջվա քաղաքացիությունից դուրս գալու թույլտվության, պայմանով, որ այդ անձինք մշտապես բնակվում են պայմանագիր այն կողմի տերիտորիայում, որի քաղաքացիությունն ունեցել են առաջ: Այսպիսի անձինք համարվում են այն պայմանագիր պետության քաղաքացին, որի տերիտորիայում մշտապես բնակվում են: Միաժամանակ սահմանվում է, որ 16 տարին լրացրած անշափահասները կարող են դիմում տալ և պահպանել մյուս կողմի քաղաքացիությունը, եթե նրանք կամենում են իրենց նկատմամբ չկիրառել կոնվենցիայում տեղ գտած մյուս դրույթները:

1963 թ. հունվարի 21-ին ՍՍՀՄ և Հունգարիայի կառավարությունների միջև կնքված կոնվենցիայի համաձայն, եթե ծնողներից մեկը ՍՍՀՄ քաղաքացի է, մյուսը՝ հունգարական, ապա նրանց երեխաները ծնողների համաձայնությամբ կա՛մ սովետական, կա՛մ հունգարական քաղաքացիներ են: Բացի այդ կողմերը պարտավորվել են՝ Հունգարիան սովետական քաղաքացիներին իր քաղաքացիության մեջ չի ընդունի առանց ՍՍՀՄ իրավասու մարմինների համաձայնության և ընդհակառակը:

Երկբազաքացիության իրավիճակը վերացնելու վերաբերյալ համապատասխան համաձայնագրեր են կնքվել մյուս սոցիալիստական երկրների միջև, ինչպես նաև սոցիալիստական երկրների և առանձին կապիտալիստական երկրների միջև:

Փախստականներ և «փոխադրված անձեր»: Այս հասկացությունները միջազգային իրավունքի մեջ են մտել XX դարում:

Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների հետևանքով մարդկությանը բաժին ընկած արհավիրքների սև ցանկում առկա են գտել այսպես կոչված «փախստական» և «փոխադրված անձ» հասկացությունները: «Փախստական» տերմինը միջազգային իրավունք մտավ: առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո: Այդ տերմինի տակ նկատի ունեն այն անձանց, ովքեր պատերազմի ժամանակ կամավորաբար հեռացել են հակառակորդի օկուպացրած կամ վտանգի տակ գտնվող տերիտորիաներից կամ արտաքսվել են այդ տերիտորիաներից ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների կարգադրությամբ:

Գաղթականների հոծ զանգված առաջացավ թուրքական իշխանությունների վարած գենոցիդի քաղաքականության պատճառով՝ 1914—1920 թթ., որի հետևանքով հայ ժողովուրդը զանգվածային կոտորածի ենթարկվեց, սվինների ներքո տեղահան արվեց հայրենի երկրից, իսկ մի մասն էլ ազատվեց կոտորածից՝ դիմելով վտարանդիության: Այս փախստականների հիմնական մասրան ընկավ ապաքաղաքացիության իրավիճակի մեջ:

Ականավոր նորվեգական գիտնական և հասարակական գործիչ Նանսենի նախաձեռնությամբ Ազգերի լիգան 1922 թ. կիրարկության մեջ դրեց «Նանսենյան անձնագրերը», որոնք տրվում էին իրենց երկրներից օրինական փաստաթղթեր շունեցող փախստականներին: Նանսենյան անձնագիր ներկայացնող փախստականը կարող էր թույլտվություն ստանալ մուտք գործելու այս կամ այն երկիրը: Պետությունը, որին դիմում էր փախստականը, վիզա էր դնում Նանսենյան անձնագրի վրա կամ Նանսենյան անձնագիրը դիտում էր որպես իրավաբանական ուժ ունեցող փաստաթուղթ, որի հիման վրա այդ պետության հյուպատոսական մարմինները, Նանսենյան անձնագիրը ներկայացնելու դեպքում, խնդրատուին տալիս էին նոր փաստաթուղթ, որն իրավունք էր տալիս անցնելու պետական սահմանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ փախըս-

տականների կատեգորիային ավելացավ «փոխադրված անձերի» կատեգորիան: «Փոխադրված անձեր» են համարում իրենց երկրներից հիտլերյան Գերմանիայի կողմից բռնություններ արված հետ փոխադրված անձերի պրոբլեմը հանդուս էր այն բանին, որ պետությունը շուտափույթ միջոցներ ձեռնարկվեին այդ մարդկանց հայրենիք վերադառնալու համար: Այդ նպատակով համաձայնագրեր կնքվեցին՝ 1945 թ. փետրվարի 11-ին ՍՍՀՄ, Անգլիայի և ԱՄՆ-ի միջև, 1945 թ. մարտի 13-ին ՍՍՀՄ-ի և Բելգիայի, 1945 թ. հունիսի 29-ին ՍՍՀՄ-ի և Ֆրանսիայի միջև: Այդ համաձայնագրերով կողմերը պարտավորվեցին հայրենադարձել իրենց յուրիսդիկցիայի ներքո գտնվող բոլոր փոխադրված անձերին:

Փոխադրված անձերի պրոբլեմով զբաղվել է ՄԱԿ-ը: 1946 թ. (12/12 և 15/12) Գլխավոր Ասամբլեան ընդունեց երկու բանաձև, ըստ որոնց պրոբլեմի հիմնական խնդիրը փոխադրված անձերին հայրենիք վերադարձնելն է:

ՍՍՀՄ-ը մինչև վերջ կատարեց փոխադրված անձերի վերաբերյալ կնքած համաձայնագրերը և Գլխավոր Ասամբլեայի բանաձևերը: Սակայն արևմտյան տերություններն ամեն կարգի խոչընդոտներ հարուցեցին ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների քաղաքացիների հայրենադարձությանը: Իմպերիալիստական տերությունները փոխադրված անձանց օգտագործում են որպես էժան բանվորական ուժ, բանեցնելով ամենաժանր աշխատանքներում: Առանձին կապիտալիստական երկրներում փոխադրված անձանց անվան տակ քողարկվում են ամեն կարգի հանցագործներ՝ մասնավորապես ֆաշիստական օկուպանտների հետ համագործակցած հանցավոր տարրեր: Իմպերիալիստական պետությունները այդ կարգի տարրերից ստեղծում են տարբեր կոմիտեներ և օգտագործում ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների դեմ լրր-տեսական ու քայքայիչ գործունեության համար: Այդ քայքայիչ խմբերը Ֆինանսավորվում են ԱՄՆ-ի կողմից, այսպես կոչված «անվտանգության փոխադարձ ապահովման» ծրագրով:

Իմպերիալիստական տերությունների պահանջով ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 1946 թ. դեկտեմբերի 15-ին բանաձև ընդունեց փախստականների գործերով միջազգային կազմակերպություն ստեղծելու մասին, որը 1951 թ. փոխարինվել է Փախստականների գործերով գերագույն կոմիտեի վարչությունով: Այդ կազմակերպությունները գործել են փոխադրված անձերի հայրենադարձությունը կանխելու ուղղությամբ:

Փոխադրված անձերը կապիտալիստական երկրներում շեն օդովում քաղաքական ու քաղաքացիական իրավունքներից, սակայն արտաքին տեսքի համար 1951 թ. մի քանի պետություն (Ավստրալիան, Բելգիան, Դանիան, ԳՅՀ-ը, Ֆրանսիան, Անգլիան և այլն) ժնեում կոնվենցիա ստորագրեցին փախստականների իրավական վիճակի մասին՝ փոխադրված անձերին դասելով փախստականների շարքը: Կոնվենցիան այդ անձանց տրամադրում է այն նույն իրավունքները, ինչ-որ օտարերկրյա քաղաքացիներին, իսկ առանձին հարցերի բնագավառում հավասարեցնում է տեղական քաղաքացիներին:

ՍՍՀՄ-ը այդ կոնվենցիայի մասնակից չէ:

1951 թ. ՄԱԿ-ը կոնվենցիա մշակեց փախստականների ստատուսի վերաբերյալ, Կոնվենցիան մասնավորապես նախատեսում է փախստականների ազատ տեղաշարժումը, նրանց համապատասխան ձևի փաստաթղթեր տալը, որոնց հիման վրա նրանք կարող են երկրից երկիր փոխադրվել: Կոնվենցիան ուժի մեջ մտավ 1955 թ., 22 պետությունների փոխհարաբերություններում: ՍՍՀՄ-ը այդ կոնվենցիային չի մասնակցում:

Սովետական Միությունը պայմաններ է ստեղծել փոխադրված անձերի հայրենադարձության համար: Սովետական կառավարությունը անհրաժեշտ նախապայմանների ապահովեց նաև այն անձանց հայրենադարձության համար, ովքեր երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ զերի են ընկել կամ համազորակցել են զերմանական օկուպանտների հետ: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1955 թ. նոյեմբերի 17-ի հրամանագրով պատասխանատվությունից ազատված են արտասահմանում գրտնրվող սովետական այն քաղաքացիները, ովքեր 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ զերի են հանձնվել թըշնամուն կամ ժառայել են զերմանական բանակում, ոստիկանությունում և հատուկ զերմանական կազմավորումներում<sup>9</sup>:

### § 3. ՅԱՐԵՐԿՐԱՑՄԵՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱԿԱՆ ՌԵՃԻՄԸ

Օտարերկրացի են համարվում տվյալ պետության տերիտորիայում գտնվող այն անձերը, ովքեր այլ պետության քաղաքացիներ են, բայց տվյալ երկրի քաղաքացիություն չունեն:

Օտարերկրացիների մուտքը և տվյալ երկրում նրանց մնալու

<sup>9</sup> Տե՛ս «Дипломатический словарь», т. II, էջ 504—505:

կարող սահմանվում է ներպետական օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով:

Հին ժամանակներում օտարերկրացիները զուրկ էին տարրական իրավունքներից: Առևտրի զարգացումը և նրանում պետությունների շահագրգռվածությունը քայլ առ քայլ որոշակի իրավական վիճակ են ապահովում օտարերկրացի վաճառականի համար: Սկզբում դա ուներ մասնավոր բնույթ, վաճառականը դտնվում էր տեղացի հյուրընկալողի պաշտպանության և հովանավորության ներքո: Հետագայում վաճառականների իրավական պաշտպանությունը ձեռք է բերում միջազգային իրավական բնույթ, և այդ նրպատակով կնրվում են համապատասխան միջազգային պայմանագրեր:

Կապիտալիստական կարգերի հաստատման և միջազգային առևտրի զարգացման կապակցությամբ աստիճանաբար մեղմացվում են օտարերկրացիների համար կիրառվող սահմանափակումները: XX դարի սկզբին պետություններից մեծ մասում, որպես կանոն, պահպանվում են օտարերկրացիների համար կիրառվող սահմանափակումները զխավորապես քաղաքական իրավունքների և որոշ շահիով ծովեզրյա նավաղնացության, ձկնորսության, դատական ծախսերը հոգալու ասպարեղներում: Այդ ժամանակ օտարերկրացիների իրավական ռեժիմի հարցում կիրառվում էր տերիտորիալ սկզբունքը, որ նշանակում է օտարերկրացիները լիովին ենթարկվում էին տեղական օրենքին, իսկ իրավունքների հարցում զրեթե հավասարեցվում էին տեղացիներին, ընդհուպ մինչև բնություններին մասնակցելու իրավունքը (Բելգիա):

Օտարերկրացիների իրավական վիճակը կարգավորող նորմերի համակցությունը սահմանելիս պետությունները փոխադարձության սկզբունքով կիրառում են ազգային ռեժիմ կամ ամենամեծ առավելությունների ռեժիմ և կամ հատուկ ռեժիմ, այսինքն՝ որոշակիորեն ստույգ սահմանված իրավունքների համակցություն:

Նրբ Ա և Ե պետությունները պայմանավորվում են մեկը մյուսի քաղաքացիների համար կիրառել ազգային ռեժիմի սկզբունք, ապա դա նշանակում է, որ Ա պետությունը Ե-ի քաղաքացիներին տրամադրելու է իրավունքների այն ամբողջությունը, որից օգտրվում են իր սեփական քաղաքացիները և ընդհակառակը՝ Ե պետությունը Ա պետության քաղաքացիներին պետք է նույն սկզբունքով տրամադրի այն իրավունքները, որոնցից օգտվում են իր՝ Ե-ի քաղաքացիները իրենց հայրենիքում: Եթե ազգային ռեժիմ կիրառող պետությունները սոցիալ-տնտեսական կարգերի տեսակետից

համառոտ են, ապա նրանց քաղաքացիները փոխադարձաբար կօգտվեն գրեթե նույն իրավունքներից, իսկ եթե պայմանադիր կողմերից մեկը սոցիալիստական պետություն է, մյուսը՝ կապիտալիստական, ապա, բնականաբար, սոցիալիստական երկրում գտնվող բուրժուական պետության քաղաքացին կօգտվի ավելի մեծ ծավալի իրավունքներից (աշխատանքի իրավունք, կրթության իրավունք, սոցիալական ապահովության իրավունք և այլն), քան թե սոցիալիստական պետության քաղաքացին բուրժուական պետությունում, քանի որ բուրժուական հասարակարգում անձը օժտված չէ այնպիսի լայն իրավունքներով, ինչպես սոցիալիստական երկրներում:

Ամենամեծ առավելությունների ուժեղացում կիրառման դեպքում պայմանադիր կողմերը պարտավորվում են մեկը մյուսի քաղաքացիներին տրամադրել իրավունքների այն առավելագույնը, որը տրամադրվել է կամ ապագայում կարամադրեն մի որևէ երրորդ պետության քաղաքացիների:

Եթե պետությունները պայմանավորվում են կիրառել հատուկ ուժեղացում սկզբունք, ապա այդ դեպքում պայմանագրով նախապես սահմանվում է իրավունքների այն ծավալը, որից կողմերից մեկի քաղաքացիները օգտվելու են մյուսի տերիտորիայում:

Օտարերկրացիներ ասելով լայն առումով նկատի ունենք օտարերկրյա և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձերին: Պետությունները, կիրառելով վերևում նշված ուժեղացումներից մեկը կամ մյուսը, այն փոխադարձաբար կիրառում են միմյանց և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձերի նկատմամբ:

ՄՍՀՄ-ում և սոցիալիստական մյուս երկրներում օտարերկրացիների համար, որպես կանոն, կիրառվում է ազգային ուժեղացումը ոչ միայն միջազգային համաձայնագրերի ուժով, այլև ներպետական օրենսդրությամբ: Սոցիալիստական երկրներում օտարերկրացիների իրավունքների սահմանափակումը առաջապահական, ազգային, սեռի, լեզվի, կրոնի հատկանիշներով բացառվում է: Օտարերկրացիների իրավական ուժեղացում սահմանելիս սկզբունքորեն ղեկավարվում են փոխադարձության սկզբունքով: Այստեղից հետևում է, որ օտարերկրացիները սոցիալիստական պետություններում չեն կարող օգտվել ավելի իրավունքներից, քան տեղական քաղաքացիները: Մյուս կողմից, եթե խախտվում են սոցիալիստական երկրների քաղաքացիների իրավունքները այս կամ այն պետության կողմից, ապա ռետորսիայի կարգով կարող են կիրառվել պատասխան սահմանափակիչ միջոցառումներ տվյալ

խախտում կատարած պետության քաղաքացիների նկատմամբ:

Սոցիալիստական պետությունների սահմանադրություններով օտարերկրյա քաղաքացիների համար նրաշխարհում է սեփական քաղաքացիների համար սահմանված հիմնական իրավունքներից և ազատություններից օգտվելու հնարավորություն (խոսքի, մամուլի, ժողովների, դավանանքի ազատության... աշխատանքի իրավունք, կրթության իրավունք, ձրի բժշկական օգնություն և այլն):

Միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան օտարերկրացիները սոցիալիստական երկրներում չեն օգտվում բնորական իրավունքներից և չեն կրում պիսվորական պարտականություններ: Նրանք օգտվում են անձի, բնակարանի անձեռնմխելիության, գաղտնի գրադրության իրավունքից, օժտված են քաղաքացիական և քաղաքացիական-դատավարական իրավունակությամբ, սոցիալիստական պետությունների քաղաքացիներին համահավասար, բացառությամբ օրենքով հատկապես նախատեսված դեպքերից: Պետական անվտանգության նկատառումներով օտարերկրացիների համար որոշ սահմանափակումներ են մտցված, ինչպես, օրինակ, երկրի առանձին շրջաններում ներանց տեղաշարժերն արգելված է, կամ չեն կարող զբաղվել որոշ պրոֆեսիաներով: Սովետական Միությունում օտարերկրացիները չեն կարող աշխատել որպես նավաստի և նրա ավագ օդնական, ռադիոօպերատոր, նավի մեխանիկ և դեկապետ, չեն կարող լինել սովետական օդանավի անձնակազմի անդամ և այլն:

Օտարերկրացիների մուտքը սոցիալիստական երկրներ և մնալը կատարվում է թույլտվությամբ: Օտարերկրացիները կարող են Սովետական Միություն գալ ՄՍՀՄ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների միջոցներով: Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների միջև կայացված համաձայնությունների հիման վրա խմբակային տուրիստների համար վերացված է վիզաներ տալու կարգը, և նրանք ժամանում են պայմանադիր սոցիալիստական պետություն իրենց ներքին ազգային անձնագրերով: Սովետական տերիտորիա մուտք գործելու պարզեցված եղանակ է սահմանված նաև օտարերկրյա առևտրանավորի նավաստիների և առանձին դեպքերում սահմանամերձ բնակիչների համար: Երբ օտարերկրյա առևտրանավոր գտնվում է սովետական նավահանգստում, նրա նավաստիները կարող են ափ իջնել և գտնվել նավահանգստի և նավահանգստային քաղաքի տերիտորիայում՝ հատուկ անցագրերով, որոնք տրվում են նավահանգստում, վերահսկիչ-անցագրային կետում: Այդ

օտարերկրյա նավաստիները միաժամանակ պետք է ներկայացնեն իրենց ազգային փաստաթղթերը՝ վրան ամրացրած փաստաթղթի տիրոջ յուսանկարը: Սահմանամերձ շրջանի բնակիչները կարող են կարճ ժամկետով անցնել սովետական սահմանը և մնալ որոշակի վայրում, ներկայացնելով ՍՍՀՄ-ի և համապատասխան պետության միջև կայացված համաձայնագրով սահմանված ձևի վկայական:

Երկար ժամանակով Սովետական Միության ժամանող օտարերկրացիները պետք է գրանցվեն համապատասխան մարմնում և ստանան բնակության վկայագիր: Հասնելով մուտք գործելու վիզայում նշված վայրը, օտարերկրացին պահանջում է միլիցիայի վարչության վիզաների և գրանցումների բաժնում, որտեղ այդպիսի բաժին չկա՝ միլիցիայի բաժնում: Օտարերկրացին պարտավոր է իր բնակավայրը փոխելու վերաբերյալ տեղյակ պահել, և այդ մասին նշում է կատարվում նրա բնակության վկայագրի վրա: Նոր բնակավայրում օտարականը պետք է նույնպես պահանջի: Կարճ ժամանակով ՍՍՀՄ ժամանող օտարերկրացիները (տուրիստներ, տարբեր պատվիրակությունների անդամներ և այլն) գրանցվում են, սակայն բնակության վկայագիր չեն ստանում:

ՍՍՀՄ օրենսդրությամբ ՍՍՀՄ-ում մշտական բնակություն ունեցող օտարերկրացիներ են համարվում նրանք, ովքեր օրինական կարգով բնակվում են սովետական տերիտորիայում և ոչ պակաս քան 18 ամիս ՍՍՀՄ-ում զբաղվում են օրենքով շարժված ցանկացած գործունեությամբ: ՍՍՀՄ-ում գտնվող մնացած բոլոր օտարերկրացիները համարվում են ժամանակավոր բնակվողներ<sup>10</sup>:

ՍՍՀՄ-ից օտարերկրացիների մեկնելու թույլտվությունը ձևակերպվում է ազգային անձնագրի կամ նրան փոխարինող այլ փաստաթղթի վրա մեկնման վիզայի գրառում կատարելու միջոցով, եթե այլ կարգ չի սահմանված համապատասխան պետության հետ ՍՍՀՄ-ի կնքած համաձայնագրով<sup>11</sup>:

Մինչև Սովետական Մոնղոլիաստանի Հանրապետությունների Միության կազմավորումը օտարերկրացիների իրավական ռեժիմը կարգավորվում էր առանձին անկախ սովետական հանրապետությունների օրենսդրությամբ և նրանց կողմից առանձին երկրների հետ կնքված միջազգային համաձայնագրերով: Հայաստանում օ-

տարերկրացիների իրավական դրուժյունը կարգավորվում էր շՄՄՀ 1922 թ. սահմանադրության 7-րդ հոդվածի և «օտարերկրացիների իրավունքների ու պարտականությունների մասին» Հայաստանի կառավարության ընդունած 15 կետից բաղկացած հատուկ ակտի հիման վրա<sup>12</sup>: Այժմ օտարերկրացիների իրավական ռեժիմը Սովետական Միությանում կարգավորվում է ՍՍՀՄ օրենսդրությամբ<sup>13</sup>:

Կապիտալիստական աշխարհի պետությունների մեծ մասի օրենքներով օտարերկրացիների մուտքը և մնալը կատարվում է թույլտվությամբ: Սակայն ԱՄՆ-ը հասել է այն բանին, որ առանձին երկրների հետ ունեցած հարաբերություններում ամերիկյան քաղաքացիների մուտքն այդ երկրները կատարվում է առանց վիզայի, որի հետևանքով ամերիկյան քաղաքացիները դրված են արտոնյալ վիճակում այդ երկրների քաղաքացիների համեմատությամբ:

Կապիտալիստական պետությունների օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սովորաբար օտարերկրացիներին փոխադարձաբար տրամադրում են ազգային ռեժիմ, այսինքն՝ քաղաքական և քաղաքացիական իրավունքների տեսակետից ձևականորեն հավասարեցվում են տեղական քաղաքացիներին, սակայն, ինչպես ասվել է վերևում, օտարերկրացիները ընտրելու և ընտրվելու իրավունքից չեն օգտվում: Նրանք պարտավոր են շմիջամտել օտարերկրյա պետության ներքին քաղաքական կյանքին, շմասնակցել տեղական քաղաքական կուսակցություններին և կազմակերպություններին: Օտարերկրացիներն ազատվում են զինվորական ծառայությունից ինչպես կանոնավոր բանակում, այնպես էլ քաղաքացիական աշխարհազորում, ռեզիզիցիաներից, զինվորական պարհակից և ռազմական նպատակների համար զանձվող ամեն կարգի հարկերից ու տուրքերից:

Յուրաքանչյուր պետություն ազատ է օտարերկրացիներին իր երկիր մուտք գործելու թույլտվություն տալու-չտալու հարցում, սահմանելով օտարերկրացիների ապրելու հատուկ կանոններ: Կապիտալիստական մի շարք երկրներ կնքել են համաձայնագրեր միմյանց քաղաքացիների մուտքի համար պարզեցված կանոններ սահմանելու վերաբերյալ: Եվրոպայի կապիտալիստական պետու-

<sup>10</sup> См. А. М. Богуславский, А. А. Рубанов, Правовое положение иностранных в СССР, М., 1959, էջ 17—19:

<sup>11</sup> См. նույն տեղում:

<sup>12</sup> См. А. А. Есаян, Некоторые вопросы советского гражданства, 1966, էջ 51—68:

<sup>13</sup> См. «Международное право», изд. «Юридич. литература», 1964, էջ 162:



Պլանների կեքած համաձայնագրերի համաձայն այդ պետությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի, Ավստրալիայի և Կանադայի քաղաքացիները իրավունք ունեն մուտք գործել եվրոպական երկրների տերիտորիա առանց վիզաների, ունենալով միայն ազգային արտասահմանյան անձնագիր: Փախստականներն ու ապաքաղաքացիները պետք է ունենան 1951—1954 թթ. կոնվենցիաների հիման վրա տրված ինքնության հատուկ վկայագրեր: Քարածխի և պողպատի եվրոպական միավորման երկրների ածխի և մետալուրգիական արդյունաբերության բանվորները պետք է ունենան հատուկ տարանցիկ թերթիկ:

Պետությունը կարող է առանց որևէ պատճառաբանության արտաքսել օտարականին:

Օտարերկրացու շահերի և իրավունքների պաշտպանությունը իրականացնում է նրա հայրենիքի հյուպատոսական ներկայացուցչությունը: Սեփական քաղաքացիների շահերի և իրավունքների պաշտպանության իրավունքը պետության համար չի կարող հիմք հանդիսանալ այլ պետությունների ներքին գործերին միջամտելու համար: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ իմպերիալիստական պետություններն իրենց քաղաքացիների իրավունքների պաշտպանության պատրվակով միջամտել են այլ պետությունների ներքին գործերին:

Մի շարք իմպերիալիստական պետությունների օրենսդրական և հատկապես վարչական պրակտիկան հակասության մեջ է զբոսնում օտարերկրացիների իրավական դրությանը վերաբերող միջազգային իրավունքի ճանաչված դրույթների հետ: Այսպես, օրինակ, 1951 թ. ԱՄՆ-ում, ի փոփոխումն 1948 թ. օրենքի, նոր կարգ մտցվեց, որի համաձայն ամերիկյան բանակ են ղորակաչվում երկրում մշտապես բնակվող օտարերկրացիները: 1952 թ. փետրվարի 23-ին և ապրիլի 2-ին ԱՄՆ-ին հղած նոտաներում ՍՄԶ կառավարությունը հայտարարեց, որ նման կանոնները հակասում են ընդհանուրի կողմից ճանաչված միջազգային սովորույթներին և միջազգային իրավունքի սկզբունքներին<sup>14</sup>:

Օտարերկրացիների մուտքը սահմանափակելու և երբեմն էլ այսպես կոչված «անցանկալի» օտարերկրացիների մուտքը կանխելու մասին ակտերով իմպերիալիստական պետությունները դիմում են խտրականության՝ ռասայական, ազգային հատկանիշներով: «Անցանկալի» օտարերկրացիների շարքն են դասում առաջա-

ղեմ մտավորականներին, խաղաղության կողմնակիցներին: 1950 թ. ԱՄՆ-ում ընդունված Մակկարեն-Վուդի օրենքը անսահմանափակ իրավունքներ է տալիս վարչական մարմիններին օտարերկրացիների մուտքի, նրանց վտարման ու կալանավորման հարցերում: 1955 թ. ԱՄՆ-ի պետական ղեկավարամենտը սահմանափակումներ մտցրեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող սովետական քաղաքացիների համար, ընդլայնվեց այն վայրերի ցանկը, որտեղ սովետական քաղաքացիների մուտքն արգելվում է: ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի աշխատանքները լուսարանելու նպատակով ԱՄՆ ժամանող սովետական թղթակիցներին տալիս են այսպես կոչված «Շ-2» վիզաներ, որոնցով տեղաշարժեր թույլատրվում է միայն Նյու-Յորքի կենտրոնական մասում: Այդ սահմանափակումները խտրականության ակտեր են սովետական քաղաքացիների նկատմամբ:

Իրականացնելով խտրականություն այլ պետությունների քաղաքացիների նկատմամբ, ԱՄՆ-ը ձգտում է արտոնյալ պայմաններ ստեղծել իր սեփական քաղաքացիների համար ուրիշ պետությունների տերիտորիաներում: ԱՄՆ-ը հատկապես արտոնյալ պայմաններ է ստեղծել արտասահմանում տեղաբաշխած զինված ուժերի անձնակազմի համար, որի վրա, ՆԱՏՕ-ի զինված ուժերի ստատուսի վերաբերյալ 1951 թ. հունիսի 19-ի Կոնվենցիայի համաձայն, ըստ էության, չեն տարածվում տեղական օրենքները:

#### § 1. ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՐՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈՒԵՍՏ

Մարդու իրավական վիճակին վերաբերող հարցերը վաղուց դուրս են եկել ներպետական շրջանակներից և մտել են միջազգային հարաբերությունների ոլորտը ու այս կամ այն չափով կարգավորվում են միջազգային իրավունքի նորմերով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդու իրավունքների պաշտպանության պրոբլեմով պետությունները զբաղվել են ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ ռեգիոնալ կազմակերպությունների շրջանակներում: Այդ պրոբլեմի շուրջ ընդունվել են մի շարք միջազգային իրավական ակտեր, որոնք կարևոր նշանակություն ունեն մարդու հիմնական իրավունքները հարգելու սկզբունքի ձևավորման հարցում: Այդ ակտերից է Մարդու իրավունքների համընդհանուր ղեկավարացիան, որն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում 1948 թ. դեկտեմբերի 10-ին: Գեկկարացիան ընդունվել է ՄԱԿ-ի

<sup>14</sup> Տե՛ս «Известия», 4-րդ ապրիլի 1952 թ.:

կանոնադրության 1-ին հոդ. 3-րդ կետին և 55 հոդվածի առաջին մասին Մարզու իրավունքների համընդհանուր օրենքի մարզու իրավունքների վերաբերյալ առաջին միջադեպին էրազական փաստաթուղթն է, որն ընդգծում է մարզու իրավունքները և հիմնական ազատությունները բոլորի կողմից հարգելու անհրաժեշտությունը և բովանդակում է այդ իրավունքների և ազատությունների ցանկը: Դրանք են. անձի տարրական իրավունքները. բոլոր մարդկանց հավասարությունը առանց որևէ խտրականության, ապրելու իրավունքը, ազատության և անձի անձնամասնավորության իրավունքը, պատվի, համբավի և բնակարանի անձնամասնավորության իրավունքը, յուրաքանչյուր մարդու իրավունքը անաչառ դատարանում պաշտպանելու իր իրավունքը (Տ. Տ. 1—12):

Այդ ցանկում հատուկ տեղ է հատկացված քաղաքացիական և քաղաքական իրավունքներին ու ազատություններին, այն է՝ քաղաքացիության և ապաստանի իրավունք, զույգի տիրապետման, ամուսնանալու իրավունք, մտքի, խղճի և կրոնի ազատություն, համոզմունքների, խաղաղ ժողովների և ասոցիացիաների մասնակցություն, համընդհանուր հավասար բնտրական իրավունք՝ զաղտնի քվեարկություններ (Տ. Տ. 14—21):

Մարզու իրավունքների համընդհանուր ղեկավարացիան ազդարարում է մարզու սոցիալ-տնտեսական իրավունքներ՝ աշխատանքի իրավունք և համասար աշխատանքի համար հավասար վարձատրություն, արհեստակցական միություններ ստեղծելու իրավունք, հանգստի և սոցիալական ապահովության իրավունք, կրթության և հասարակության կուլտուրական կյանքին մասնակցելու իրավունք (Տ. Տ. 22—27): Դեկլարացիան պարտավորեցնում է այդ իրավունքներն ու ազատությունները հարգել և պահպանել ամենուրեք. ինչպես ՄԱԿ-ի անդամ պետություններում, այնպես էլ նրանց յուրիսդիկցիայի ներքո գտնվող տերիտորիաներում:

Մարզու իրավունքների համընդհանուր ղեկավարացիայի ընդունումն արդյունք էր միջազգային հարաբերություններում տեղի ունեցած պատմական փոփոխությունների՝ վեմոկրատիայի, խաղաղության և սոցիալիզմի ուժերի աճի: Իմպերիալիստական պետություններն անկարող գտնվեցին կանխելու այդ ղեկավարացիայի ընդունումը: Սակայն նրանք արեցին ամեն ինչ, որպեսզի Մարզու իրավունքների համընդհանուր ղեկավարացիան հռչակվեր որպես ձեռնարկական փաստաթուղթ, որը կոնկրետ միջոցառումներ չի բովանդակում մարզու իրավունքների ու ազատությունների իրականացումն ապահովելու համար: Չնայած եղած թերություններին, Մար-

քանքների համընդհանուր ղեկավարացիան որոշակի օժանդակ մատուցում է կապիտալիստական և զազուծացված երկրների ժողովուրդներին՝ մարզու ղեմոկրատական իրավունքներն ու ազատությունները ճանաչելու և հարգելու համար մղած պայքարում:

Մարզու իրավունքների համընդհանուր ղեկավարացիայի դրույթներն ունեն հանձնարարականի բնույթ, Դեկլարացիայի հիման վրա պետք է մշակվեն մարզու իրավունքների վերաբերյալ իրավական տեսակետից պարտադիր ակտեր: Մարզու իրավունքների համընդհանուր ղեկավարացիայի ընդունման օրը՝ դեկտեմբերի 10-ը Գլխավոր Ասամբլեան հռչակել է մարզու իրավունքների օր: Մարզու իրավունքների պաշտպանության հարցում ՄԱԿ-ի ձեռնարկած միջոցառումների մեջ կարևոր նշանակություն ունի նաև 1959 թ. նոյեմբերի 20-ին Սովետական Միության նախաձեռնությամբ Դիխավոր Ասամբլեայի ընդունած Երեխայի իրավունքների ղեկավարացիան, որը հռչակել է երեխայի պաշտպանության հատուկ իրավունքը և սահմանում է այնպիսի պայմաններ ստեղծել, որպեսզի ապահովվի երեխայի ֆիզիկական և մտավոր նորմալ զարգացումը: Դեկլարացիան հատկապես ընդգծում է, որ երեխան պետք է դաստիարակվի «փոխըմբռնման, հանդուրժողականության, ժողովուրդների միջև բարեկամության, խաղաղության և համընդհանուր եզրալրության ոգով»:

Երեխայի իրավունքների ղեկավարացիան ազդարարում է 10 հիմնական սկզբունքներ, որոնք պետք է հիմք հանդիսանան երեխայի ֆիզիկական ու մտավոր զարգացումն ապահովելու համար: Դեկլարացիան կազմված է բավականին հանգամանորեն, ընդհուպ մինչև այն, որ նրա 7-րդ սկզբունքը նախատեսում է, որ «երեխայի համար պետք է ապահովվի խաղերի և զվարճանքների լիակատար հնարավորություն»<sup>15</sup>:

1948 թ. դեկտեմբերի 10-ի Մարզու իրավունքների համընդհանուր ղեկավարացիայի դրույթներին համապատասխան Գլխավոր Ասամբլեան հանձնարարեց Մարզու իրավունքների հանձնաժողովին մշակել մարզու իրավունքների միասնական պակտի նախագիծ, նշելով, որ տնտեսական, սոցիալական և կուլտուրական ասպարեզներում իրավունքներ չունեցող մարդը գործնականում չի կարող օգտվել իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից:

Իմպերիալիստական տերությունները, առանձնապես ԱՄՆ-ը և Անգլիան ամեն կերպ խոչընդոտեցին Պակտի նախագիծը մար-

<sup>15</sup> Տե՛ս «Современное международное право» (Сборник документов), 1964, էջ 265—268:

դու սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ կետեր մըտցրնելու, սակայն հասնել իրենց նպատակին չկարողացան: Այնուամենայնիվ նրանք հասան այն բանին, որ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան որոշում ընդունեց մշակելու ոչ թե մեկ միասնական պակտի, այլ երկու՝ առանձին-առանձին պակտերի նախագծեր: Իմպերիալիստական պետությունների այդ քայլի նպատակն էր ձգձգել պակտի ընդունումը, թույլ շտալ, որ մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ իրավաբանորեն պարտավորեցնող միջազգային ակտ ընդունվի: Ի հակակշիռ այդ դիտավորությունների Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս պետությունները կարողացան Գլխավոր Ասամբլեայի 543 (V) բանաձևի մեջ մտցնել տալ դրույթներ, որոնց համաձայն մարդու իրավունքների վերաբերյալ երկու պակտերի նախագծերն էլ պետք է միաժամանակ հաստատվեն Գլխավոր Ասամբլեայում և բաց լինեն պետությունների կողմից ստորագրելու համար: Արդեն մշակված նախագծերը հիմնականում համապատասխանում են մարդու իրավունքների առաջադիմական զարգացումը խրախուսելու նպատակին: Նրանք նախատեսում են պետությունների իրավաբանական պարտավորություններ՝ պահպանելու մարդու բոլոր հիմնական, այդ թվում սոցիալ-տնտեսական, իրավունքներն ու ազատությունները և հատուկ հոգված ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ:

Սովետական Միության նախաձեռնությամբ պակտերի նախագծերի մեջ մտցված են նաև այլ առաջադիմական դրույթներ՝ հատուկ օրենքներ ընդունելու միջոցով արդելիլ խտրականությունը որևէ հատկանիշով, արգելիլ ազգային, ռասայական կրոնական թշնամանքի պրոպագանդան ու բորբոքումը, ազգային փոքրամասնություններին իրավունք վերապահել օգտվելու մայրենի լեզվից, կանանց համար տղամարդկանց հավասար իրավունքներ սահմանել քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի բոլոր առկարելներում, ներառյալ պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը և այլն<sup>16</sup>:

ՄԱԿ-ի կանոնադրությամբ ազդարարված է կնոջ իրավահավասարությունը: Այդ դրույթին համապատասխան 1953 թ. մարտի 21-ին Գլխավոր Ասամբլեան ընդունեց կոնվենցիայի նախագիծ կնոջ քաղաքական իրավունքների վերաբերյալ, որն ուժի մեջ է մտել

<sup>16</sup> Տե՛ս «Международное право», изд. «Международные отношения», 1966, էջ 269—270:

1954 թ. հուլիսի 7-ից: Կոնվենցիայի մասնակից են ՍՍՀՄ-ը, Ուկրաինական ՍՍՀ-ն և Քելոտուական ՍՍՀ-ն:

Կոնվենցիան մշակել է Կանանց իրավունքների հանձնաժողովը: Դա ՄԱԿ-ի ընդունած առաջին միջազգային իրավական փաստաթուղթն է, որով սահմանվում են կնոջ քաղաքական իրավունքները տղամարդու համահավասար: Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվել են առանց խտրականության կնոջը տրամադրել հետևյալ իրավունքները.

1) Ազգային օրենքով սահմանված ընտրովի բոլոր մարմիններում ընտրելու և ընտրվելու իրավունք:

2) Պաշտոններ զբաղեցնել պետական ու հասարակական ծառայության մեջ և կատարել պետական ու հասարակական բոլոր ֆունկցիաները, որոնք սահմանված են ազգային օրենքով<sup>17</sup>:

Այժմ աշխարհի պետություններից մոտավորապես 80-ում կնոջը տղամարդուն հավասար ընտրական իրավունքներ են տրված, ըստ որում այդ երկրներից մեծ մասում կանայք ընտրական իրավունք են ստացել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Առ այսօր կապիտալիստական առանձին երկրներում սահմանափակումներ են մտցված կանանց համար (9 երկրում՝ Շվեյցարիա, Իրաք և այլն, կանայք ընտրական իրավունքից շեն օգտվում):

Մարդու իրավունքների պաշտպանության պրոբլեմի կենտրոնական հարցերից է պայքարը ստրկության և ստրակավաճառության դեմ: Ստրկավաճառությունն արգելելու հարցը առաջին անգամ քննարկվել է Վիեննայի կոնգրեսում, օրտեղ 1815 թ. փետրվարի 9-ին դեկլարացիա ընդունվեց ստրկ-նեգրերի վաճառքը վերացնելու մասին: Այս քայլի հիմքում ընկած էր ոչ թե մարդասիրությունը, այլ այն, որ Անգլիան, հանդես գալով հարցադրման նախաձեռնողի դերում, ձգտում էր կանխել ստրուկ նեգրերի վաճառքն ու փոխադրումն ԱՄՆ, որտեղ ստրուկներին օգտադործում էին բամբակի պլանտացիաներում և խփում Անգլիայի մենաշնորհ դիրքերին բամբակի համաշխարհային շուկայում: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը որոշ լրացումներ է արվել ստրկավաճառությունն արգելելու վերաբերյալ կոնվենցիային, սակայն հարցը իր բուն էությունը վերջնականապես չի լուծվել, հիմնովին չի արգելվել ստրկությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստրկություն-

<sup>17</sup> Տե՛ս «Современное международное право» (Сборник документов), 1964, էջ 277—279:

նը, ստրկավաճառութիւնը և հարկադիր աշխատանքի բոլոր ձե-  
վերն արդիւելու հարցը դարձել է ՄԱԿ-ի քննարկման առարկան:

Բանն այն է, որ մեր օրերում քայքայուած ստրկութիւնն ան-  
գամ արմատախիլ չի արված, ինչպես, օրինակ, Սաուդյան Արա-  
բիայում: 1963 թ. Սաուդյան Արաբիայում կառավարական դեկրե-  
տով սահմանվեց ստրուկների նոր սակագին: Ստրկավաճառները  
մեկ տղամարդ ստրուկը կարող են վաճառել 250 անգլիական  
ֆունտ ստեյնզով, իսկ կին ստրուկը՝ 350 ֆունտով: Կառավա-  
րութիւնը պարտավորվել է ստրկավաճառներին հատուցել ստրուկ-  
ների հին ու նոր արժեքի տարբերութիւնը<sup>18</sup>: ՄԱԿ-ի Տնտեսական  
և Սոցիալական խորհրդի Ստրկութեան հարցերի հատուկ կոմի-  
տեն արձանագրեց, որ ստրկութիւնը, անգամ ամենաանսթղծ ձե-  
քով, շարունակում է գոյութիւն ունենալ մի շարք պետութիւննե-  
րում: Հաշվի առնելով անցյալի այդ խայտառակ վերապրուկի ան-  
հետաձգելի վերացման անհրաժեշտութիւնը, Գլխավոր Ասամբ-  
լեան բոլոր պետութիւններին հանձնարարեց միանալ Ազգերի լի-  
գայի շրջանակներում 1926 թ. սեպտեմբերի 25-ին ընդունված  
կոնվենցիային, ըստ որի պետութիւնները պարտավորվել են դա-  
դարեցնել ստրկավաճառութիւնը և մեկը մյուսին օգնել ստրկա-  
վաճառութեան դեմ մղվող պայքարում: Կոնվենցիայում նշվում էր.  
որ պայմանագիր կողմերը «շարունակելու են ստրկութեան պրո-  
գրեսիվ վերացումը»:

Ստրկութեան դեմ պայքարի համար ժնկում 1956 թ. օգոս-  
տոս-սեպտեմբերին ՄԱԿ-ի հրավիրված Կոնֆերանսը սեպ-  
տեմբերի 7-ին ընդունեց Լրացուցիչ կոնվենցիա ստրկութիւնը,  
ստրկավաճառութիւնը և ստրկութեանը նման ինստիտուտների և  
սովորույթների վերացման վերաբերյալ<sup>19</sup>: Կոնվենցիան մասնա-  
կիցներին պարտավորեցնում է պատժել այն անձանց, ովքեր մեղա-  
վոր կճանաչվեն հետևյալ հանցագործութիւնները կատարելու հա-  
մար.

- 1) ստրուկների փոխադրումը մեկ երկրից մյուսը, տրանս-  
պորտային ինչ միջոցներով էլ որ լինի,
- 2) ուրիշ անձի ստրուկ դարձնել կամ ուրիշ անձին՝ իրեն կամ  
այդ ուրիշ անձից կախվածութեան մեջ գտնվող անձին ստրկութեան  
տալու հակելը,
- 3) ուրիշ անձին՝ իրեն կամ այդ ուրիշ անձից կախվածութեան

<sup>18</sup> Տե՛ս «Известия», 8-րդ հոկտեմբերի 1963 թ.:

<sup>19</sup> Տե՛ս «Сборник действующих договоров...», вып. XIX, № 798, էջ  
146—153:

մեջ գտնվող անձին անազատ վիճակի մեջ դնելու հակելը (պարտ-  
քային ստրկութիւն, ճորտային վիճակ, կանանց և երեխաների  
առուժախը),

4) խեղումը, սարուկի կամ անազատ վիճակում գտնվող անձի  
խարանելը այրելով կամ այլ ձևով, որպէսզի նշվի այդպիսի վիճա-  
կը կա՛մ պատժելու նպատակով, կա՛մ մի որևէ այլ պատճառով,

5) այդպիսի ռճրագործութիւններ կատարելու փորձը, նրան-  
ցում հանցակցելը, ինչպես նաև այդպիսի ռճրագործութիւններ  
կատարելու համար զազտնի դավադրութեանը մասնակցելը:

Կարևոր նշանակութիւն տալով մարդու իրավունքների մի-  
ջազգային իրավական պաշտպանութեանը, Սովետական Միու-  
թիւնը մասնակցում է ստրկութեան վերաբերյալ 1926 թ. կոնվեն-  
ցիային և 1956 թ. Լրացուցիչ կոնվենցիային ստրկութիւնը, ըս-  
տըրկավաճառութիւնը և ստրկութեանը նման ինստիտուտների և  
սովորույթների վերացման վերաբերյալ:

Ստրկութեան քողարկված տարատեսակն է հարկադիր աշխա-  
տանքը՝ իր բազմաթիվ ձևերով: Այդ պատճառով էլ ծագեց աշխա-  
տանքի միջազգային կարգավորման անհրաժեշտութիւնը, որի հա-  
մար Աշխատանքի միջազգային կազմակերպութիւնը 1930 թ. մը-  
շակեց Կոնվենցիա հարկադիր կամ պարտադիր աշխատանքի վե-  
րաբերյալ: Կոնվենցիան հռչակեց հարկադիր աշխատանքի բոլոր  
ձևերի վերացման անհրաժեշտութիւնը հնարավոր կարճ ժամա-  
նակամիջոցում: Սովետական Միութիւնը այդ կոնվենցիայի մաս-  
նակիցն է:

Մարդու իրավունքները և հիմնական ազատութիւնները հար-  
գելու միջազգային իրավական սկզբունքի ձևավորման և ամրա-  
պնդման ասպարեզում ձեռնարկված կարևոր քայլերից է ռասա-  
լական խտրականութեան բոլոր ձևերը վերացնելու վերաբերյալ  
Միավորված Ազգերի Կազմակերպութեան ղեկավարացիան, որն ըն-  
դունվել է 1963 թ. նոյեմբերի 20-ին<sup>20</sup>: Ռասայական հատկանիշ-  
ներով խտրականութեան բոլոր ձևերը վերացնելու մասին ղեկա-  
րացիան գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախութիւն  
տալու վերաբերյալ 1960 թ. Գլխավոր Ասամբլեայի ընդունած ղեկ-  
լարացիայի, ինչպես նաև Մարդու իրավունքների համընդհանուր  
ղեկլարացիայի (1948 թ.) տրամաբանական շարունակութիւնն է:

Ռասայական խտրականութեան բոլոր ձևերը վերացնելու վե-  
րաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպութեան ղեկլարացիան

<sup>20</sup> «Современное международное право» (Сборник документов), 1964,  
էջ 268:

հուշակի է աշխարհի բոլոր մասերում ռասայական խտրականությունը նրա բոլոր ձևերով ու դրսևորումներով անհապաղ վերացնելու անհրաժեշտությունը, որի համար առաջարկվում է ձեռնարկել ներպետական և միջազգային բնույթի անհրաժեշտ միջոցառումներ: Գեկլարացիայի 4-րդ հոդվածը պահանջում է որպեսզի բոլոր պետությունները էֆեկտիվ միջոցներ ձեռնարկեն վերացնելու կառավարությունների և մյուս հանրային իշխանությունների ռասայական քաղաքականությունը և վերացնեն այն օրենքներն ու կանոնները, որոնք ծնում են ռասայական խտրականություն, օրենքներ հրապարակեն այդպիսի խտրականությունն արգելելու մասին և ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ ռասայական խտրականության հանգեցնող նախապաշարումների դեմ պայքարելու համար, անհապաղ վերջ տան կառավարությունների և այլ հանրային իշխանությունների ռասայական սեգրեգացիայի և ապարտեիդի քաղաքականությանը (հոդ. 5):

Վերոհիշյալ գեկլարացիայի հիման վրա 1965 թ. դեկտեմբերի 21-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան հավանություն տվեց Ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու վերաբերյալ կոնվենցիային, որը պետությունների միջազգային իրավական պարտավորությունների ձեռք հաստատեց Ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության 1963 թ. նոյեմբերի 20-ի գեկլարացիայի հիմնական սկզբունքները և նախատեսում է անհրաժեշտ միջոցառումներ այն իրականացնելու համար:

Ըստ կոնվենցիայի ռասայական խտրականություն նշանակում է ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշով ամեն մի խտրություն, բացառիկություն, սահմանափակում կամ նախապատվություն» սահմանելն ու իրականացնելը:

Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվել են ոչ միայն արգելել, խափանել և վերացնել ռասայական խտրականությունը նրա բոլոր ձևերով ու դրսևորումներով, այլև ապահովել բոլոր մարդկանց իրավահավասարությունը օրենքի առաջ առանց ռասայի, մաշկի գույնի, ազգային և էթնիկական ծագման խտրության: Կոնվենցիայում տեղ են գտել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք հուշակված են Մարդու իրավունքների համընդհանուր գեկլարացիայում:

Ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու վերաբերյալ 1965 թ. դեկտեմբերի 21-ի կոնվենցիան նախատեսում է

ստեղծել ռասայական խտրությունը վերացնելու հարցերով հատուկ կոմիտե, բաղկացած 18 փորձագետներից, որոնք ընտրվում են Կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից շորս տարի ժամանակով: Կոմիտեն, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջոցով, Գլխավոր Ասամբլեային ամենամյա հաշվետվություն է ներկայացնելու իր գործունեության վերաբերյալ և կարող է առաջարկություններ ու հանձնարարականներ անել՝ Կոնվենցիայի մասնակից պետություններից ստացված զեկուցումներն ու ինֆորմացիաները ուսումնասիրելու հիման վրա:

## § 5. ԱՊՕՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆԷՔ

Ապաստանի իրավունք նշանակում է իր հայրենիքում կամ այլ երկրում դիտական կամ քաղաքական գործունեության համար հետապնդվող օտարերկրացուն մուտք գործելու և պետության տերիտորիայում ապրելու իրավունք տալ, նրա համար երաշխավորելով դեմոկրատական իրավունքներ և մարդու հիմնական ազատություններ և անարգել մեկնելու իրավունք: Իր քաղաքական համոզմունքների և գործունեության համար հետապնդվող և հայրենիքից հեռացած անձը կոչվում է քաղաքական վտարանդի:

Ապաստանի իրավունքը սահմանվում է ներքին օրենքով կամ միջազգային համաձայնագրով: Ապաստանի իրավունքը որպես միջազգային իրավունքի ինստիտուտ երևան է գալիս բուրժուական հեղափոխությունների դարաշրջանում, և առաջին անգամ հուշակվեց Ֆրանսիայում: Ավստրիային պատերազմ հայտարարելու մասին 1792 թ. ապրիլի 20-ի դեկրետում նշված էր, որ ֆրանսիական ազգը ապաստան է տալիս այն բոլոր օտարերկրացիներին, ովքեր կհրաժարվեն նրա թշնամիների գործից և կկանգնեն նրա դրոշակի ներքո: Ֆրանսիայի 1793 թ. սահմանադրության 120-րդ հոդվածում ամրապնդվեց այդ իրավունքը:

Քաղաքական վտարանդիներին շնաննելու սկզբունքը աստիճանաբար արմատավորվում է միջազգային իրավունքում և սիտությունների պրակտիկայում:

Ինչպես իրավական ամեն մի ինստիտուտ, այնպես էլ ապաստանի իրավունքի ինստիտուտը դասակարգային բնույթ ունի: Այդ սկզբունքը նոր-նոր ճանաչվել էր բոլորի կողմից և «ապաստանի իրավունքի միջնաբերթ» հանդիսացող Անգլիան ու Շվեյցարիան զրոհի անցան նրա դեմ: Գլխական կոմունիզմի հիմնադիր Կառլ

Մարքսը առաջիններից էր, որ իր վրա զգաց ապաստանի իրավունքի դասակարգային բնույթը: «Պրուսական դեսպանությունն ուղղակի պահանջով և գրգման ներքո ես Ֆրանսիայից վտարվեցի 1845 և 1849 թթ. և Բելգիայից 1948 թվականին»<sup>21</sup>, գրել է նա:

ՍՍՀՄ-ում և սոցիալիստական մյուս երկրներում ապաստանի իրավունքը հետևողականորեն իրականացվում է իր դեմոկրատական էությունով: ՍՍՀՄ սահմանադրության 129-րդ հոդվածով «ՍՍՀՄ-ն ապաստանի իրավունք է վերապահում օտարերկրյա քաղաքացիներին, որոնք հետապնդվում են աշխատավորների շահերը պաշտպանելու, կամ գիտական գործունեության, կամ ազգային-ազատագրական պայքարի համար»: Նույն հատկանիշներով օտարերկրացիներին ապաստանի իրավունք է վերապահվում ՀՍՄՀ սահմանադրության 104 հոդվածի համաձայն: ՍՍՀՄ-ում ապաստանի իրավունքից օգտվող անձանց տրամադրված են սովետական քաղաքացիների գրեթե բոլոր հիմնական իրավունքները. աշխատանքի իրավունք, հանգստի իրավունք, կրթության իրավունք և այլն: Քաղաքական վտարանդիները օգտվում են խոսքի, մամուլի և հրատարակության, քաղաքական և կրոնական համոզմունքների, ժողովների և միությունների ազատությունից՝ սովետական քաղաքացիներին համահավասար:

Սոցիալիստական մյուս երկրներն ապաստանի իրավունք են տալիս հասարակական առաջադիմության համար պայքարի, աշխատավորների շահերի պաշտպանության, խաղաղության համար գործունեության, գիտական ու կուլտուրական գործունեության համար պայքարի, ազգային ազատագրության համար հետապնդվող անձանց:

Իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալիստական պետություններից մեծ մասում օրենքներ են ընդունված քաղաքական վտարանդիների մուտքը սահմանափակելու ուղղությամբ: Ապաստանի իրավունքի պրոբլեմը հատկապես սրվեց երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդած շրջանում՝ կապված մի քանի երկրներում ֆաշիստական կորգերի հաստատման և այդ պատճառով անդի ունեցած մասսայական քաղաքական վտարանդիության հետ:

Իմպերիալիզմի ընդհանուր Լգնամամի շրջանում ապաստանի իրավունքի պրոբլեմն այնչի է սրվում: Մի կողմից մեծանում է ռևոլյուցիայի հետապնդումներից առաջացած քաղաքական վտարանդիությունը, մյուս կողմից՝ կապիտալիստական պետությունն-

որ խորացնում են ապաստանի իրավունքի դեմ ուղղված սահմանափակումները: Այսպես, օրինակ, 1950 թ. սեպտեմբերի 23-ին ԱՄՆ-ում ուժի մեջ մտավ Մակարեն-Վուդի օրենքը, որը նախատեսում է բոլոր «կասկածելի օտարերկրացիներին» երկրից վտարել, երկիր չթողնել, համակենտրոնացման ճամբարներում պահել միայն «զաղտնի ինֆորմացիայի» հիման վրա:

ԱՄՆ-ը և իմպերիալիստական մյուս պետությունները դոները լայն բացում են սեակցիոն և հանցավոր տարրերի համար: 1951 թ. հոկտեմբերի 10-ին ԱՄՆ-ում օրենք ընդունվեց «այսպես կոչված անվտանգության փոխադարձ ապահովման վերաբերյալ», որի համաձայն տարեկան 100 միլիոն դոլլար է տրամադրվում ֆինանսավորելու «Սովետական Միությունում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Բուլղարիայում և Ալբանիայում ապրող ջոկովի յուրաքանչյուր անձի... կամ այդ երկրներից փախած անձերին, կամ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունը պաշտպանող դինված ուժերի ստորաբաժանումներում նրանց միավորելը, կամ այլ նպատակների» ֆինանսավորման համար:

Ապաստանի իրավունքը չի տարածվում տեղաբնակների և ռազմական հանցագործների վրա: Դեռևս 1937 թ. Ազգերի լիգայի շրջանակներում ստորագրվեց «կոնվենցիա տեղաբնակից կանխելու և նրա դեմ պայքարելու վերաբերյալ»: Այդ կոնվենցիան նախատեսում էր տեղաբնակական ակտերի մատնակիցներին ձեռքբաղել և հանձնել: Իմպերիալիստական տերությունները ձախողեցին այդ կոնվենցիայի վավերացումը և նա ուժի մեջ չմտավ:

ԱՄՆ-ում և կապիտալիստական այլ պետություններում ապաստանում են երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ՍՍՀՄ-ի և Արևելյան Եվրոպայի երկրներում ծանրագույն հանցագործություններ կատարած պատերազմական հանցագործները: ԱՄՆ-ը և մյուսները հրաժարվում են այդ հանցագործներին հանձնել այն երկրների դատին, որոնց տերիտորիայում նրանք հանցագործություն են կատարել: Պատերազմական հանցագործներին չհանձնելը միջազգային իրավունքի նորմերի, մասնավորապես, 1943 թ. հոկտեմբերի 30-ի «Հիտլերականների կատարած զագանությունների համար պատասխանատվության մասին զեկլարացիայի» և 1945 թ. օգոստոսի 8-ի «Շտանցբի» եվրոպական երկրների գլխավոր պատերազմական հանցագործներին դատական հետապնդման և պատժելու վերաբերյալ համաձայնագրի, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1946 թ. փետրվարի 13-ի «պատերազմա-

<sup>21</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XXV, стр. 83.

կան հանցագործներին հանձնելու և պատժելու մասին բանաձևի» և Գլխավոր Ասամբլեայի 1947 թ. հոկտեմբերի 31-ի «պատերազմի հանցագործներին և դավաճաններին հանձնելու մասին» բանաձևի գոնհիկ խախտում է հանդիսանում: Այդ ակտերի համաձայն պատերազմական հանցագործները պետք է ձերբակալվեն և հանձնվեն այն երկրներում դատելու համար, որտեղ կատարել են հանցագործությունը:

Ապաստանի իրավունքի հարցը տեղ է դրել մի շարք միջազգային ակտերում: Այդ հարցին է նվիրված մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայի 14-րդ հոդվածը, որտեղ ասված է. «1. Յուրաքանչյուր մարդ հետապնդումից ապաստան հայցելու և այդ ապաստանից օգտվելու իրավունք ունի այլ երկրներում:

2. Այդ իրավունքը չի կարող օգտագործվել, երբ հետապնդվում է իսկապես ոչ քաղաքական հանցագործություն կատարելու հիման վրա, կամ արարքի համար, որը հակասում է Միավորված Ազգերի Կազմակերպության նպատակներին և սկզբունքներին»:

Կան կոնվենցիաներ, որոնք հատկապես նվիրված են ապաստանի իրավունքի կիրառմանն առանձին երկրների փոխհարաբերություններում: Գրանցից են Ամերիկյան պետությունների Հավանայի VI միջազգային կոնֆերանսում ստորագրված ապաստանի վերաբերյալ կոնվենցիան (20-ը փետրվարի 1928 թ.), միջամերիկյան VII կոնֆերանսում Մոնտեվիդեոյում ստորագրված քաղաքական ապաստանի վերաբերյալ կոնվենցիան (26-ը դեկտեմբերի 1933 թ.): Ապաստանի իրավունքով զրազվել է Միջազգային իրավունքի ինստիտուտը, որն իր 44-րդ նստաշրջանում (5—12-ր սեպտեմբերի 1950 թ.) ընդունել է մի ծավալուն բանաձև «Ապաստանն ըստ միջազգային հանրային իրավունքի» վերնադրով: Այս բանաձևի 1-ին հոդվածում տրված է ապաստանի հետևյալ բնորոշումը. «ապաստան» տերմինը նշանակում է հովանավորություն, որը պետությունը արամագրում է իր տերիտորիայում կամ այդ պետության սրևէ մարմնին ենթակա մի այլ տեղում, այդպիսի հովանավորություն փնտրող անձին»: Բանաձևի կարևոր դրույթներից մեկն այն է, որ «պետությունը, որը, իրականացնելով իր մարդասիրական պարտքը, իր տերիտորիայում ապաստան է տրամադրում՝ ոչ մի միջազգային պատասխանատվություն չի կրում» (հոդ. 2)<sup>22</sup>:

Պետությունները փոխադարձ կարիք ու անհրաժեշտություն են զգում հանցագործությունների դեմ պայքարի և մեղավորներին պատժելու համար, մտնալանդ որ կան ոճրագործություններ, որոնք իրենց վտանգավորությամբ շոշափում են բոլոր կամ մեկից ավելի պետությունների շահերը: Այդ հանգամանքներն էլ անհրաժեշտաբար առաջ են բերել պետությունների համագործակցությունը՝ ոճրագործությունների դեմ միջազգային պայքար մղելու ասպարեզում: Ոճրագործությունների դեմ միջազգային պայքարի էֆեկտիվ միջոցներից է հանցագործներին հանձնելու կամ, ինչպես ընդունված է միջազգային տերմինով ասել, էքստրադիցիայի ինստիտուտը:

Հանցագործների հանձնման տակ հասկանում ենք հանցագործին պետության կողմից, ում տերիտորիայում նա գտնվում է, մյուս պետությանը հանձնելը պատասխանատվության ենթարկելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար: Հանցագործին հանձնելու վերաբերյալ միջազգային իրավունքում հանրաձանաչ նորմա չկա, ուստի այն իրականացվում է շահագրգռված պետությունների միջև կարված հատուկ համաձայնագրերի հիման վրա: Այդպիսի համաձայնագրերի կնքումը տարածում ստացավ XIX դարում: Հանցագործներին հանձնելու հարցը կարգավորվում է ինչպես միջազգային համաձայնագրերով, այնպես էլ ներքին օրենսգրքությամբ:

Ըստ գործող արևելասկայի հանցագործին հանձնելու պահանջը ներկայացվում է դիվանագիտական ձևապարհով: Հանցագործին հանձնելու պահանջ կարող է ներկայացնել այն պետությունը, որի տերիտորիայում կատարվել է հանցագործությունը, որի քաղաքացին է հանցագործը, որը տուժել է հանցագործությունից: Հանցագործին հանձնելու մասին պահանջների կոլեկիա առաջանալու դեպքում հարցը լուծում է այն պետությունը, ում ուղղված է պահանջը, ըստ որում սովորաբար առաջնություն են տալիս այն պետությանը, որի տերիտորիայում կատարվել է հանցագործությունը:

Հանցագործներին հանձնելու հարցում պետությունները ղեկավարվում են հետևյալ սկզբունքներով.

- Հանցագործին հանձնելը կատարվում է այն դեպքում, եթե՝ 1. Կատարված արարքը պատժելի է ինչպես հանձնողի, այնպես

<sup>22</sup> Տե՛ս «Международное право в избранных документах», 1959, т. I, էջ 188—195:

էլ հանցագործին հանձնելու մասին պահանջ ներկայացրած պետութեան օրենքով (նույնութեան սկզբունք), 2. հանձնված հանցագործը պետք է պատժվի այն շարժառիթներով, ինչ շարժառիթներով պետությունը պահանջել է հանձնել հանցագործին (մասնագիտացման սկզբունք):

Պետությունը, ումից պահանջում են հանձնել հանցագործին, կարող է մերժել, եթե՝ 1) հանցագործությունը կատարվել է իր տերիտորիայում, 2) իր օրենքի համաձայն հետապնդում չի կարող հարուցել կամ դատավճիռը չի կարող ի կատար ածել վաղեմության ժամկետն անցնելու պատճառով, կամ այլ օրինական հիմքի պատճառով, 3) կատարված հանցագործության համար, որի կապակցությամբ հանցագործին հանձնելու պահանջ է ներկայացված, իր տերիտորիայում օրինական ուժի մեջ մտած դատավճիռ է կայացվել կամ որոշում՝ գործը կարձելու մասին, 4) էրկրներից մեծ մասն օրենքներով սեփական բազաբացիները հանձնման ենթակա չեն: Այս սկզբունքից բացառություն են կազմում պատերազմական հանցագործները:

Պատերազմական հանցագործների նկատմամբ չի տարածվում նաև վաղեմության ինստիտուտը:

1957—1958 թթ. Սովետական Միությունը իրավաբանական փոխօգնության վերաբերյալ պայմանագրեր է կնքել առանձին սոցիալիստական երկրների հետ, որոնցում մասնավորապես սահմանված են քրեական հանցագործներին հանձնելու պայմաններն ու կարգը: Այսպես, օրինակ, ՍՍՀՄ-ի և ԳԴՀ-ի միջև իրավաբանական փոխօգնության վերաբերյալ կնքած պայմանագրի 56-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն «հանձնումը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք երկու պայմանավորվող կողմերի օրենսդրությամբ պատժելի են և որոնց կատարման համար օրենքով նախատեսվում է ազատազրկման պատիժ մեկ տարուց ավելի ժամկետով կամ ավելի ծանրագույն պատիժ...»:

Հանցագործին հանձնելու պահանջը մերժելու պայմանները շարադրված են պայմանագրի 57-րդ հոդվածում<sup>23</sup>:

Միջազգային պայքար է հայտարարված զենոցիդի դեմ, որի վերաբերյալ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունվել է հատուկ կոնվենցիա: Գենոցիդի (ցեղասպանություն) հանցագործությունը կանխելու և նրա համար պատժելու մասին կոնվենցիան ստույգ կիրառվում սահմանում է այդ արարքի հանցակազմը: Կոնվենցիայի

համաձայն զենոցիդի տակ պետք է հասկանալ այն գործողությունները, որոնք կատարվել են որևէ ազգային, էթնիկական կամ կրոնական խումբ որպես այդպիսին լիովին կամ մասնակիորեն ոչնչացնելու մտադրությամբ: Դրանք են.

1. Այդպիսի խմբի անդամի սպանությունը:

2. Այդպիսի խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքներ կամ մտախանգարում պատճառելը:

3. Որևէ խմբի համար կյանքի կանխամտածված այնպիսի պայմաններ ստեղծելը, որոնք նախատեսում են այդպիսի խմբի լիակատար կամ մասնակի ֆիզիկական ոչնչացում:

4. Միջոցառումներ, որոնք այդպիսի խմբում մանկածնությունը կանխելու նպատակ ունեն:

5. Երեխաների բռնի հանձնումը մարդկային մի խմբից մյուսին:

Կոնվենցիան նախատեսում էր, որ պատժելի է ինչպես զենոցիդը, այնպես էլ զենոցիդի նպատակով դավադրությունը, ուղղակի և հրապարակային սպորանքը զենոցիդ կատարելու համար և դժնոցիդին հանցակցելը:

Կոնվենցիայի IV հոդվածը նախատեսում է, որ զենոցիդ և ներան հարակից հանցագործություններ կատարած անձերը պետք է պատժվեն անկախ այն բանից նրանք սահմանադրության համաձայն պատասխանատու կառավարողներ, պաշտոնատար, թե մասնավոր անձեր են<sup>24</sup>:

Միջազգային պայքար է մղվում նաև հանրության բարոյական հիմքերի դեմ ուղղված հանցագործությունները կանխելու և ոճրագործներին պատժելու համար: Այդպիսի հանցագործություններից են պոռնկության մղելը և պոռնոգրաֆիկ հրատարակությունների տարածումը: Պոռնկության և պոռնոգրաֆիկ հրատարակությունների դեմ պայքարելու համար կնքվել են մի շարք միջազգային կոնվենցիաներ: 1921 թ. սեպտեմբերի 30-ին ժնևում կնքած կոնվենցիայի համաձայն պետությունները պարտավորվեցին կանխել տնային ծառայողների վարձող գրասենյակի միջոցով հասարակաց տրների համար կանանց հավաքագրումը, ինչպես նաև մասնավորապես Ամերիկայի Միացյալ Նահանգների գաղթել ցանկացող կանանց հավաքագրումն այդ նպատակով: Կոնվենցիան պարտավորեցնում էր քրեական պատասխանատվության ենթարկել կանանց պոռնկության մեջ ներգրավող և կանանց ու երեխաների առևտրով

<sup>24</sup> Տե՛ս «Современное международное право» (Сборник документов), 1964, էջ 274—277:

<sup>23</sup> Տե՛ս «Логоворы об оказании правовой помощи...», 1959, էջ 50:



դրազվող անձանց: Ժնևի 1933 թ. հոկտեմբերի 11 կոնվենցիան այդ վերջին դրույթի գործողությունը տարածեց շափահաս կանանց առևտրի վրա, եթե այդ կատարվում է անգամ նրանց համաձայնությամբ: Չափահաս կանանց առևտրի դեմ պայքարելու վերաբերյալ Ժնևի կոնվենցիայով (11/10—1933 թ.) պետությունները պարտավորվեցին փոխադարձաբար միմյանց իրավաբանական օգնություն ցույց տալ մասնավորապես կանանց և երեխաների պրոֆեսիոնալ վաճառականների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու միջոցով:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1950 թ. մարտի 21-ին Նյու-Յորքում ստորագրվեց նոր կոնվենցիա Մարդկանցով առևտրի և պոստկոնվենցիաներ երրորդ անձերի կողմից շահագործելու դեմ պայքարի վերաբերյալ: Այս նոր կոնվենցիան փոխաբիսնեց բոլոր նախորդները: Այս վերջին կոնվենցիան մասնակիցներին պարտավորեցնում է միմյանց ցույց տալ իրավաբանական օգնություն, ներառյալ հանցագործներին հանձնելը և ներքոհիշյալ հանցագործություններում մեղավոր անձանց պատժելը:

1. Կավատությունը, ուրիշ անձի պոստկոնվենցիան հակելը կամ դայթակղեցնելը, թեկուզ և անգամ նրա համաձայնությամբ:

2. Ուրիշ անձի պոստկոնվենցիան շահագործելը թեկուզ և անգամ նրա համաձայնությամբ:

3. Պոստկատուն պահելը կամ այդպիսիք կառավարելը, կամ պոստկատունը գիտակցարար ֆինանսավորելը կամ ֆինանսավորմանը մասնակցելը:

4. Վարձով տալը կամ շենքը, կամ այլ կառույց, կամ այդպիսինի մասը վարձելը, եթե հայտնի է, որ դրանք պետք է օգտագործվեն երրորդ անձանց կողմից պոստկոնվենցիայի դրազվելու նպատակով:

5. Այդպիսի հանցագործություններ կատարելու փորձը, նրանցում մասնակցելը, այլև նրանց կատարման համար զաղտնի դավադրությունը մասնակցելը:

Սոցիալիստական երկրներում պոստկոնվենցիան սոցիալական արմատները վերացված են: Սակայն այդ հանցագործությունների դեմ միջազգային պայքարին աջակցելու նպատակով ՄՍՀՄ-ը միացել է 1950 թ. Կոնվենցիային, վերապահում անելով, որ իրեն պարտավորված չի համարում Կոնվենցիայի 22-րդ հոդվածով, որը նախատեսում է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի պարտադիր չլուրիսգրկիցիան կոնվենցիան մեկնաբանելու և կիրառելու հետ կապված վեճերով:

Միջազգային պայքար է սահմանված նաև պոստկոնվենցիայի հրատարակություն պատրաստելու և նրա առևտրով զբաղվելու համար: 1910 թ. մայիսի 4-ի կոնվենցիայի և 1923 թ. սեպտեմբերի 12 կոնվենցիայի համաձայն պետությունները պարտավորվել են քրեական հետապնդում հարուցել և պատժել այն անձանց, ովքեր մեղավոր են պոստկոնվենցիայի ստեղծագործություններ, ֆիլմեր, բացիկներ, նկարներ պատրաստելու, պահելու, ներմուծելու, տրանզիտի, արտահանման և նրանց իրացման մեջ:

Կապիտալիստական երկրներում տարածված հանցագործություններից է թմրադեղի վաճառքը, որի դեմ նույնպես միջազգային պայքար է մղվում: 1936 թ. հունիսի 26-ին Ժնևում կնքված կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվել են քրեական հետապնդում հարուցել այն անձանց նկատմամբ, ովքեր զբաղվում են թմրամիջոցները ապօրինաբար պատրաստելու, պահելու, տրանզիտի, արտահանման, վաճառքի ու զեման գործով:

1961 թ. ՄԱԿ-ի շրջանակներում մշակվել է թմրամիջոցների վերաբերյալ միասնական կոնվենցիա, որը կոչված է փոխադրվելու այդ հարցի վերաբերյալ եղած կոնվենցիաները: ՄՍՀՄ-ը ստորագրել է այդ միասնական կոնվենցիան:

Պետությունները համադրածակցում են նաև դրամանենդուսիան դեմ մղվող պայքարում, որի վերաբերյալ հատուկ կոնվենցիա է կնքվել Ժնևում 1929 թ. ապրիլի 20-ին: Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվել են պատժել բոլոր նրանց, ովքեր՝

1. Որևէ ձևով նենգափոխելով նմանեցնում կամ կեղծում են դրամանիշները:

2. Խաբելու միջոցով տարածում են նենգափոխված կամ կեղծված դրամանիշները:

3. Ընդունում, ստանում կամ ներմուծում են տարածելու իրենց համար ակնհայտորեն նենգափոխված կամ կեղծված դրամանիշները:

4. Փորձում են կատարել նշված պատժելի արարքներից մեկի ու մեկը կամ դիտավորյալ մասնակցություն են ունենում նրանց կատարմանը:

5. Խաբելությամբ պատրաստում, ընդունում կամ ստանում են իրենց համար պարագաներ կամ այլ առարկաներ, որոնք իրենց հատկանիշներով նախատեսված են դրամանիշները նենգափոխելու կամ կեղծելու համար:

Կոնվենցիան մասնակից-պետություններին պարտավորեցնում է դրամանենգներին քրեական պատասխանատվության ենթարկել:

անկախ այն բանից, թե որ երկրի գրամանիշներն են նենգափոխված կամ կեղծված:

Կարևոր նշանակություն ունի միջազգային պայքարը տեղորդմի դեմ: Միջազգային տեղորդմի ասելով հասկանում են պետության գլխի, կառավարության գլխի կամ անդամների, դիվանագիտական ներկայացուցիչների և պետության այլ պաշտոնատար անձանց սպանությունը կամ նրանց դեմ ուղղված այլ ոտքնձգություններ, որոնք կազմակերպում է օտարերկրյա պետությունը ուրիշ պետության ներքին կամ արտաքին քաղաքականության վրա ազդելու, միջազգային բարգոյություններ ստեղծելու կամ պատերազմ հրահրելու նպատակով: Միջազգային տեղորդմը իմպերիալիստական տերությունների դիվանագիտության զինանոցի դատապարտելի միջոցներից մեկն է:

Նկատի ունենալով միջազգային տեղորդմի վտանգավորությունը խաղաղության և ժողովուրդների անվտանգության համար, փորձեր են կատարվել այդ վտանգավոր հանցագործությունն զեմ մղվող պայքարում պետությունների համագործակցությունը կազմակերպելու ուղղությամբ: 1937 թ. նոյեմբերի 16-ին Ազգերի լիգայի խորհուրդը հասուկ միջազգային կոնվենցիա ընդունեց տեղորդմը կանխելու և պատժելու վերաբերյալ, որը նախապատրաստել էր փորձագետների կոմիտեն՝ ՄՍՀՄ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և մի քանի այլ երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կոնվենցիայի մասնակից-պետությունները պարտավորվում էին պատժել տեղորդման գործունեության մեջ մեղադրվող անձանց, ովքեր կատարել են՝

1. Հանցափորձ պետության գլխի կամ պետական և հասարակական ծառայության մեջ գտնվող անձանց կյանքի և առողջության դեմ:
2. Իրավախախտ ակտեր պետական կամ հասարակական գույքի դեմ:
3. Կատարել են մի շարք մարդկանց համար վտանգավորություն ստեղծող գործողություններ:
4. Պատրաստել, պահել և որևէ մեկին մատակարարել են զենք և տեղորդմի այլ միջոցներ:
5. Կեղծ, կրճատել և վերագրել են կեղծ անձնագրեր նրանց հասցե ք փաստաթղթեր:
6. Նախապատրաստել են տեղորդման ակտեր, զրգել տեղորդմի և որևէ ձևով օգնել են տեղորդմանը:

Կոնվենցիան կողմերին պարտավորեցնում էր փոխադարձաբար միմյանց իրավաբանական օգնություն ցույց տալ միջազգային տեղորդմի դեմ մղվող պայքարում:

Կոնվենցիան ստորագրեց 24 պետություն, այդ թվում ՄՍՀՄ-ը: Թեպետև չվավերացվելու պատճառով այս կոնվենցիան ձևակապորին ուժի մեջ չմտավ, այնուամենայնիվ կարևոր դեր խաղաց միջազգային տեղորդմը դատապարտելու հարցում:

Նրկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղորդմը շարունակում է մնալ որպես իմպերիալիստական պետությունների ագրեսիվ քաղաքականության գործիք, ուստի և միջազգային պայքարը նրա դեմ պահպանում է իր արդիականությունն ու կարևոր նշանակությունը:

Ժամանակակից միջազգային իրավունքում տեղորդմը դիտվում է որպես ծանր միջազգային հանցագործություն, իսկ պետության կողմից տեղորդմը խրախուսելը՝ որպես անուղղակի ագրեսիայի տեսակներից մեկը և հանցագործություն ընդդեմ խաղաղության ու ժողովուրդների անվտանգության: 1953 թ. ՄԱԿ-ին ագրեսիայի բնորոշման մասին ներկայացված սովետական նախագծում նշվում է, որ «անուղղակի ագրեսիա կատարած պետություն կձանաչվի, որը... խրախուսում է քայքայիչ գործունեությունը (տեղորդման ակտեր, դիվերսիաներ և այլն) ընդդեմ ուրիշ պետության»: ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովում 1954 թ. ընդդեմ խաղաղության և մարդկության հանցագործությունների օրենսգրքի նախագծում նման հանցագործությունների շարքն է դասված «որևէ պետության իշխանությունների կողմից այլ պետության մեջ տեղորդման ակտեր կատարելու նպատակով կազմակերպված գործունեություն թույլատրելը»:

Միջազգային տեղորդմը անհամատեղելի է միջազգային իրավունքի այնպիսի սկզբունքների հետ, ինչպիսիք են ուրիշ պետության ներքին գործերին չմիջամտելու, ազգերի ինքնորոշման և սուվերենության սկզբունքները<sup>25</sup>:

<sup>25</sup> См. «Дипломатический словарь». 1964. т. III, с. 351—353.

ՅՈՒՐԱԿՈՒՅՑՈՒՆ

Ներածություն . . . . . 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Միջազգային իրավունքի ծագումն ու զարգացումը

§ 1. Միջազգային իրավունքի ծագումը . . . . .	5
§ 2. Ստրկատիրական հասարակարգի միջազգային իրավունքը . . . . .	7
§ 3. Ֆեոդալական հատարակարգի միջազգային իրավունքը . . . . .	15
§ 4. Ֆեոդալիզմի քայքայումը և միջազգային իրավունքի բուրժուական սկզբունքների ու ինստիտուտների ձևավորումը . . . . .	23
§ 5. Բուրժուական միջազգային իրավունքը . . . . .	31
§ 6. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և ժամանակակից միջազգային իրավունքի ձևավորումը . . . . .	44
§ 7. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո միջազգային իրավունքում տեղի ունեցած հիմնական փոփոխությունները . . . . .	55

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ժամանակակից միջազգային իրավունքի կուրյունն ու նրա աղբյուրները

§ 1. Միջազգային իրավունքի հասկացությունը . . . . .	74
§ 2. Միջազգային լանդային իրավունքի առանձնահատկությունները . . . . .	83
§ 3. Միջազգային իրավունքի աղբյուրները . . . . .	92
§ 4. Միջազգային իրավունքի սխտեմը և կողիֆիկացիայի հարցերը . . . . .	100

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Տարբեր սոցիալական կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցությունը և միջազգային իրավունքը

§ 1. Հակադիր հասարակական սխտեմի պետությունների խաղաղ գոյակցության լեռնիշյան ուսմունքը և նրա զարգացումը ՍՄԿԿ XX—XXIII համագումարների որոշումներում ու ծրագրում . . . . .	105
§ 2. Խաղաղ գոյակցությունը և միջազգային իրավունքը . . . . .	116

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

Սոցիալիստական Երկրների համագործակցության միջազգային իրավական ձևերը

§ 1. Սոցիալիստական պետությունների միջև հարաբերությունները նոր, բարձր տիպի միջազգային հարաբերություններ են . . . . .	129
§ 2. Սոցիալիստական պետությունների քաղաքական համագործակցության միջազգային իրավական ձևերը . . . . .	142
§ 3. Սոցիալիստական պետությունների տնտեսական և գիտա-տեխնիկական համագործակցության միջազգային իրավական ձևերը . . . . .	155
§ 4. Սոցիալիստական պետությունների համագործակցության այլ ձևերը . . . . .	167

ԳԼՈՒԽ ՇԻՆԳԵՐՈՐԴ

Ազգային-ազատագրական շարժումը և միջազգային իրավունքը

§ 1. Ազգային-ազատագրական շարժումը և գաղութատիրական սխտեմի փլուզումը . . . . .	174
§ 2. Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի նոր պետությունների ձևավորումը ժողովուրդների ինքնորոշման իրավունքի գործնական իրականացումն է . . . . .	181
§ 3. Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացման եղանակները . . . . .	185
§ 4. Պաշտոնատիրություն և նեոպաշտոնատիրության ձևերն ու մեթոդները . . . . .	199
§ 5. Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների համագործակցության միջազգային իրավական ձևերը . . . . .	200
§ 6. Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների հետ ՍՄՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների համագործակցության միջազգային իրավական ձևերը . . . . .	206

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Արդի միջազգային իրավունքի սուբյեկտները

§ 1. Միջազգային իրավունքի սուբյեկտների հասկացությունը և տեսակները . . . . .	213
§ 2. Պետությունները որպես միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտներ . . . . .	230
§ 3. Սովետական միութենական հանրապետությունները միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտներ են . . . . .	225
§ 4. Ազգերի և ժողովուրդների միջազգային իրավասուբյեկտությունը . . . . .	228
§ 5. Միջազգային կազմակերպությունների իրավասուբյեկտությունը . . . . .	231
§ 6. Պետություններին ճանաչելը . . . . .	233
§ 7. Պետությունների իրավահաջորդությունը . . . . .	242

ԳԼՈՒԽ ՅՈՑԵՐՈՐԴ

Արդի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները

§ 1. Խաղաղ գոյակցության սկզբունքը	252
§ 2. Ուժի և ուժի սպառնալիքի կիրառման արգելումը (չհարձակման սկզբունքը)	259
§ 3. Միջազգային վեճերը խաղաղ կերպով լուծելու սկզբունքը	268
§ 4. Պետական օտվերենությունը հարգելու սկզբունքը	271
§ 5. Տերիտորիալ անձեռնմխելիության սկզբունքը	274
§ 6. Պետությունների իրավահավասարության սկզբունքը	276
§ 7. Պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը	280
§ 8. Ազգերի ինքնորոշման և իրավահավասարության սկզբունքը	283
§ 9. Զինաթափման սկզբունքը	288
§ 10. Մարդու հիմնական իրավունքները հարգելու սկզբունքի ձևավորումը	295
§ 11. Միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու սկզբունքը	299
§ 12. Պատասխանատվության սկզբունքը միջազգային իրավունքում	300
§ 13. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների կողմնակցման պրոբլեմը	307

ԳԼՈՒԽ ՈՒՓԵՐՈՐԴ

Միջազգային պայմանագրերի իրավունք

§ 1. Միջազգային պայմանագրերի իրավունքի հասկացությունը	311
§ 2. Միջազգային պայմանագրերի հասկացությունն ու իրավաբանական բնույթը	313
§ 3. Միջազգային պայմանագրեր կնքելու կարգը և փուլերը	326
§ 4. Միջազգային պայմանագրերի վավերականությունը	337
§ 5. Միջազգային պայմանագրերի գործողությունը	341
§ 6. Միջազգային պայմանագրերի գործողության դադարումը	348

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Բնակչությունը և միջազգային իրավունքը

§ 1. Քաղաքացիության հասկացությունը և նրա նշանակությունը միջազգային հարաբերություններում	354
§ 2. Ապաքաղաքացիություն և երկրազաքաքցիություն	366
§ 3. Օտարերկրացիների իրավական ուժի մը	376
§ 4. Մարդու իրավունքների պաշտպանության պրոբլեմը	383
§ 5. Ապաստանի իրավունք	391
§ 6. Միջազգային պայքարը ոճրապարտության դեմ	395

Պրոֆ. Ե Ս Ք Յ Ա Ն  
ԱՂԱՍԻ ԱՐԵԱՍԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՍՈՐԵՔԱՑ

Առաջին մաս

Հրատարակության է ներկայացել իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնը

Հրատ. խմբագիր՝ Ա. Մ. Գաբրիելյան  
 Նկարիչ՝ Հ. Ն. Գործակալյան  
 Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովասափյան  
 Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Յավրյան

ՆՈՒՏՎԱԾ ՎՐԻՓԱԿՆԵՐ

Եջ	Տող	Տպված է	Գեուք է (ԵՆԻ)
14	9 վ.	ամբողջանուր	համբողջանուր
41	12 ն.	ընթացքում:	ընթացքում:
50	1 վ.	մեկն էր:	մեկն էր:
110	2 ն.	սոցիալիստական	սոցիալական
180	3 վ.	պատրվակով:	պատրվակով:
197	18 վ.	և դա նրանք կհամարեն	որը նրանք կհամարեն
		սպանալից՝ որը	սպանալից՝ որը
268	14 վ.	լուծելու	լուծելու:
337	7 վ.	առաքիչող	առաքիչող
353	6 ն.	խոշոր	բոլոր
397	15 վ.	նախատեսում էր:	նախատեսում է:

Գ. 8037

Վ Ֆ 07432

Պատվեր 3037

Տպարանակ 5000

Հանձնված է արտադրության 18/XII 1970 թ.:

Մատրագրված է տպագրության 22/IV 1971 թ.:

Քուղթ՝ 60x90 1/16: Տպադր. 25,37 մամուլ:

Հրատ. 21,6 մամուլ: Գինը՝ 90 կոպ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն:

Երևան, Արտվյան փող. № 52:

Երևանի համալսարանի տպարան:

Երևան, Արտվյան փող. № 52: